ԱՆԵԾՔԻ և ՕՐՀՆԱՆՔԻ ԺԱՆՐԸ ՀԱՅ ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅԱՆ ՄԵՋ

ՀՍՍՀ
ԱԿԱԴԵՄԻԱ

АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР
ИНСТИТУТ АРХЕОЛОГИИ И ЭТНОГРАФИИ

САРКИС АРУТЮНЯН

ЖАНР ПРОКЛЯТИЙ И ПОЖЕЛАНИЙ В АРМЯНСКОМ ФОЛЬКЛОРЕ

ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЯНСКОЙ ССР
ЕРЕВАН 1975

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՍԱՐԳԻՍ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՆԵԾՔԻ ԵՎ ՕՐՀՆԱՆՔԻ ԺԱՆՐԸ ՀԱՅ ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Ա 54981

ՀԱՅԿ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԱԿԱԴԵՄԻԱՅԻ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԱ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1975

8 Ар Ф
Հ 42

Աշխատությունը նվիրված է հայ բանագիտության մեջ տակավին չուսումնասիրված անեծքների և օրհնանքների կիրառական, ոճաբանական և տիպաբանական հետազոտությանը։

Առաջին գլխում բանահյուսական վկայությունների ու հին արևելյան սեպագիր, հայ միջնադարյան վիմագիր արձանագրությունների, ձեռագրերի հիշատակարանների, տնտեսական զանազան գործարքների, օրհնության ու բանադրանքի թղթերի և գրավոր այլ աղբյուրների հիման վրա քննված և արժեքավորված են անեծք-օրհնանքների ժողովրդական հնագույն ըմբռնումները ու իրավաբանական կիրառությունները։ Երկրորդ գլխում վերլուծված են ու համակարգված հայկական անեծք-օրհնանքների ոճաբանական հատկանիշները, նրանց կառուցվածքային, կիրառական, իմաստային տիպերն ու խմբերը։

Հ $\frac{077}{703(02)-75}$ 35—74
© Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն. 1975.

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ՑԱՆԿՈՒԹՅԱՆ ՀՄԱՅԱԿԱՆ ԲԱՆԱՁԵՎԵՐԸ

Մեր այսօրվա լեզվում, մանավորապես ժողովրդական-խոսակցականում, տակավին լայն շրջանառության մեջ են անեծքները, օրհնանք-բարեմաղթությունները, երդումները, հիշոց-հայհոյանքներն ու փաղաքշական խոսքերը, որոնք, ինչպես ընդհանուր, այնպես էլ հայ լեզվաբանության մեջ վաղուց հորջորջվել են «ցանկության խոսքեր» *անունով**:

Անվանումը գալիս է այն ընդհանուր գաղափարից, որ ընկած է հիշյալ տեսակի խոսքերի հիմքում. դա մի բան անելու կամ լինելու ցանկությունն է: Այս ընդհանուր հատկանիշով հանդերձ, նշված տեսակները տարբերվում են ցանկության սովորական խոսքերից այնու, որ ունեն ավանդական պատկերավոր բանաձևերի *բնույթ և դարերի ընթացքում ժողովրդի բերանին փոխանցվելով իբրև կենդանի խոսքեր, հարատևել են սերնդից-սերունդ, կրած անհրաժեշտ փոփոխություններով հանդերձ, միշտ պահպանել ավանդական պատկերավոր բանաձևերի կերպարանքը:*

Դրանով էլ անեծքները, օրհնանքներն ու բարեմաղթությունները, երդումներն ու հայհոյանքները, ինչպես նաև փաղաքշական խոսքերը ձեռք են բերել բանահյուսական նկարագիր և հիմնովին սահմանազատվել ցանկության սովորական խոսքերից:

Այս ավանդական բանաձևերի իմաստային ընդհանրությունը՝ մի բան անելու կամ լինելու ցանկությունը, ունի նաև իր քերականական դրսևորման միասնական եղանակը: Ինչպես հիշյալ բանաձևերում, այնպես էլ ցանկության սովորական շատ խոսքե-

* Մ. Աբեղյան, *Բայի եղանակներն արևելյան աշխարհաբարում*, «Արարատ», 1912, էջ 177:

յում, բայց դրվում է բղձական եղանակով. «Մահի դուռը գնաս» (ՀԺՀ VIII, 140), «Գետնին հատակը էջնաս» (ԲԳ 331), «Հերդ անիծեմ», «Արևդ կանանչի» («Մշակ». 1881, № 53), «Քարի վրա գնաս՝ քարը կանանչի» (ԲՄԿ 184), «Քարով գնաս, քարով գաս» (ԱՀ XI 121), «Աստուծ գիտենա» (ԲՄԿ 197), «Օխտ տանդ ցավ վրես գա թե...» (ԷԱԺԱ 143), «Մուրազս փորս մնա, թե...» (ԷԱԺԱ 142), «Հոգիդ ուտեմ», «Կյանքիդ մեռնեմ» և այլն:

Այս ընդհանրություններով հանդերձ, ցանկության բանահյուսական խոսքերը տարբերվում են միմյանցից, և այդ տարբերակող հատկանիշներն էլ հենց դառնում են դրանց ժանրային ինքնության բնորոշ գծերը:

Ցանկության բանաձևերի ժանրային ստորաբաժանման առաջին տարբերակիչ գիծը պետք է փնտրել ցանկության արտահայտած նպատակի մեջ:

Նայած թե ինչ նպատակ է հետապնդում ցանկության տվյալ խոսքը, ըստ այդմ էլ կարելի է որոշել նրա ժանրային պատկանելությունը: Անեծքների, օրհնանք-բարեմաղթությունների, ինչպես նաև հմայական աղոթքների ու երդումների մի մասի գլխավոր նպատակը դրանց ենթակա անձանց, առարկաների կամ իրադրությունների վիճակի փոփոխության ցանկությունն է. մինչդեռ հիշոց-հայհոյանքների և փաղաքշական խոսքերի նպատակն է՝ դրանց ենթակա անձանց սոսկ արժանապատվությունը վիրավորելու կամ փաղաքշելու ցանկությունը:

Այսպես. երբ մեկը մյուսին անիծում է ասելով. «Գյուլլախորով ըլնես», «Ըմրիդ խերը չտեսնես» կամ «Դատածդ բարձիդ տակն ուտես» (ԷԱԺԱ 135), ապա անիծողը ցանկանում է փոխված տեսնել դիմացինի առողջ վիճակը մահվամբ կամ հիվանդությամբ: Իսկ երբ մեկը օրհնում է մյուսին ասելով. «Ժողված հողդ ծիլ-ծիլ ոսկի դառնա» (ԷԱԺԱ 130), «Հացդ անպակաս ըլնի» (ԷԱԺԶ 334) կամ «Թուրդ կտրուկ ըլլի» (ԺԱԲ 119), ապա օրհնողը ցանկանում է օրհնվողի սովորական կամ չքավոր վիճակը փոխված տեսնել հարստությամբ ու առատությամբ կամ էլ ուժով ու շնորհքով:

Այսպես նաև այն երդումներում, որոնց բաղադրիչները անեծքներ են: Դրանց մեջ երդվողը անեծքի պայմանով («Իմ տղի արև մեռնի, թե...», ԷԱԺԶ 337, «Անհաղորդ մեռնիմ, թե...», «Աստծու ըղաքին մեռնիս ըլիմ, թե...», ԱՀ XI 117) ցանկություն է հայտնում փոխել իր որդու առողջ վիճակը մահով կամ իր անմե-

ղությունը՝ մեղապարտությամբ, որպեսզի դրանով ապացուցի դիմացինին իր անմեղսակցությունը: Իսկ հմայական աղոթքներն իրենց նպատակով կոչված են փոխելու հմայվող անձի, կենդանու, առարկայի և այլնի տվյալ վիճակը մեկ ուրիշով, ասենք. կյանքը՝ մահով, հիվանդությունն՝ առողջությամբ, ատելությունը՝ սիրով կամ ընդհակառակը, շենը՝ ավերակով, երաշտն՝ անձրևով, չբերությունը՝ պտղաբերությամբ և այլն:

Մինչդեռ հայհոյանքների ու փաղաքշական խոսքերի նպատակից դուրս է առարկաների ու երևույթների վիճակի փոփոխությունը:

Երբ մեկը հայհոյում է մյուսին ասելով՝ «Ես քու պաքու պառեկ…», «Ես քու հոր գերեզմանը…», «Ես քու պաշտածը…» և այլն, ապա հայհոյողը նպատակ է դնում վիրավորել դիմացինի համար նվիրական անձանց կամ զգացմունքները: Նրան, տվյալ դեպքում, չի հետաքրքրում դիմացինի նվիրական զգացմունքների կամ հարազատների վիճակը, դրա վատթարացումը կամ լավացումը: Հայհոյողը շահագրգռված է միայն անպատվել դիմացինի այն ամենը, ինչ թանկագին ու սուրբ է գիտակցվում:

Ճիշտ նման նպատակ են հետապնդում նաև փաղաքշական խոսքերը: Երբ մեկը մյուսին ասում է. «Հոգիս հոգուդ փոխ ըլնի», «Լուսաղբյուր բերնիդ ու էրեսիդ մեռնիմ» (ԷԱԺԱ 144—145), «Քու ցավը տանիմ», «Քու ջանին մեռնիմ» (ԹՄԿ 209), ապա խոսողը նպատակ ունի ոչ թե փոխելու փաղաքշվող անձի վիճակը, այլ պարզապես ցանկանում է լոկ իր լավ, անձնազոհ վերաբերմունքը ցույց տալ դիմացինին, շոյել, փաղաքշել նրա ինքնասիրությունը:

Այս հատկանիշների պատճառով ցանկության բանաձևերի նշված երկու խմբերի միջև սկզբունքային տարբերություն է նկատվում. անեծքները, օրհնանքները, երդումների մի մասն ու հմայական աղոթքները գործ ունեն առարկաների ու երևույթների շարժման, փոփոխության, նրանց վիճակների ամբողջական կամ մասնակի փոխակերպման հետ, մի պարագա, որը մեծապես նպաստել է խոսքի այդ տեսակների գործնական լայն կիրառությանը: Մինչդեռ հայհոյանքներն ու փաղաքշանքները դիպչում են առարկաների ու երևույթների արտաքին կողմերին միայն և ոչինչով չեն տեղաշարժում ու փոփոխում դրանց վիճակը: Այդ պատճառով էլ հայհոյանքներն ու փաղաքշանքի խոսքերը մարդկային ջղագրգիռ հոգեվիճակների բանավոր արտահայտություններ լինելուց բացի, ուրիշ ոչ մի գործնական կիրառություն չեն ունեցել կյանքում:

Անեծքներին, օրհնանք-բարեմաղթություններին, երդումներին և հմայական աղոթքներին ենթակա առարկաների վիճակների փոփոխության ցանկությունը միաժամանակ ենթադրում է պարտադիր հավատ այդ ցանկության իրականացման նկատմամբ։ Յուրաքանչյուր անիծող, օրհնող, երդվող, աղոթող, ինչպես նաև դրանց ենթակա անձ հավատացել է անեծքի, օրհնանքի, երդման ու հմայական աղոթքի կատարմանը կամ իրագործմանը։ Այդ հավատը գալիս է խոսքի հմայական ներգործության ենթադրյալ զորության հավատալիքից։ Վերջինս, որ հատուկ է աշխարհի բոլոր ժողովուրդների հոգեբանությանը, անկախ նրանց քաղաքակրթական աստիճանից, մարդկային խոսքի որոշ տեսակներին, հատկապես ցանկության խոսքերին, վերագրում է ինքնաբերաբար ազդելու կամ իրագործվելու գերբնական կարողություն։

Ցանկության բանաձևերից գերբնական-հմայական զորություն է վերագրվում միմիայն անեծքներին, օրհնանք-բարեմաղթություններին, երդումներին և հմայական աղոթքներին։ Մնացածները, այսինքն՝ հիշոց-հայհոյանքներն ու փաղաքշական խոսքերը զուրկ են հմայական ներգործության զորությունից. դրանց իրագործմանը ո՛չ ասացողներն են հավատում, ո՛չ էլ ենթակա կողմերը. դրանք թողնում են սոսկ տհաճ կամ հաճելի տպավորություն։ Մինչդեռ անեծք-օրհնանքների ու երդում-աղոթքների իրագործմանը հավատում են շատերը, որի հետևանքով էլ առաջանում է երկյուղ դրանց նկատմամբ. վախենում են, ավելորդաբար, դրանց ենթարկվելուց և հաճախ խուսափում են զուր տեղը անիծել, երդվել, աղոթել և այլն։ Այս արմատական տարբերությունը, հավանաբար, առաջանում է դարձյալ ցանկության բանաձևերի նպատակների տարբերությունից։ Երբ խոսքի ցանկալի նպատակն է շրջել, փոխել տվյալ ենթակա առարկայի վիճակը, այսինքն մի որակը փոխարինել մեկ ուրիշ որակի, ապա այս հեղաշրջման բաղձանքը պետք է անհրաժեշտորեն վերը բացատրված պատճառով ենթադրեր նաև հավատալիք դրա իրականացման նկատմամբ։ Շարժման, փոփոխման ցանկությունը, իր այդ բնույթի պատճառով, նախնադարյան մարդու հոգեբանության մեջ վերաճում է իրականության, և մարդն հավատում է այդ տեսակի ցանկության կատարմանը։ Խոսքի ակտիվ, փոփոխող, շրջող ցանկալի գործողությունը ընկալվում է իբրև գերբնական մի ներքին զորությամբ կատարվող իրողություն։ Մինչդեռ առարկաների ու երևույթների սոսկ արտաքին կողմերի հետ գործ ունեցող ցանկության խոսքե-

րը, որոնց գործողության մեջ բացակայում է առարկայի վիճակի հեղաշրջման նպատակը, որպիսիք են, դիցուք, հայհոյանքներն ու փաղաքշական բանաձևերը, չեն ստեղծում հավատ իրենց գերբնական կատարման, իրագործման նկատմամբ։ Ցանկության այդ կարգի խոսքերում բացակայում է հմայական ներգործության կարծեցյալ զորությունը, որը և զրկում է դրանք հմայական նպատակներով օգտագործելու հնարավորությունից*։

Անեծքները, օրհնանք-մաղթանքները, երդումներն ու հմայական աղոթքները, ընդհակառակը, նշված պատճառով ունեն իրենց մեջ արտահայտված ցանկության իրագործման գերբնական հնարավորություն. հետևաբար և հմայական ներգործման անկասելի զորություն։ Այդ հիմունքով էլ դրանք դառնում են հմայական խոսքեր և լայնորեն կիրառվում, ինչպես խոսքի ու գործողության հմայություններում, այնպես էլ կյանքի տարբեր բնագավառներում։

Այստեղից էլ նրանց կիրառական արժեքն ու նշանակությունը։ Այդ հանգամանքն էլ մեզ հիմք է տալիս անեծքները, օրհնանք-մաղթանքները, երդումներն ու կապքի հմայական աղոթքներն անվանելու հմայական-կիրառական բանահյուսություն։

Ներկա ուսումնասիրության նպատակն է այդ բանահյուսության տեսակներից հետազոտել անեծքների և օրհնանքների տիպերն ու կիրառությունները։

---

* Ցանկության խոսքերից որոշ չափով տարբերվում են սպառնալիքի բանաձևերը, որոնց բայերը դրվում են պայմանական եղանակով, հակառակ անեծքների, օրհնանքների, երդումների, հայհոյանքների ու փաղաքշանքների ըղձական եղանակով դրսևորվելուն։ Բացի եղանակային տարբերությունից, սպառնալիքի բանաձևերը տարբերվում են հայհոյանքներից ու փաղաքշական բանաձևերից և այնու, որ նպատակ ունեն փոխել սպառնալիքի ենթակա անձի կամ առարկայի վիճակը վատթարացնելով, մի բան, որ յուրահատուկ է անեծքներին։ Բայց դրանք անեծքների և առհասարակ մյուս հմայական բանաձևերի նման չեն ներշնչում սպառնալիքի իրագործման այն գերբնական զորության հավատը, որ յուրահատուկ է անեծքներին և հմայական այլ բանաձևերի։ Սպառնալիքը անեծքի նման ևս կարող է երկյուղ ներշնչել դիմացինին, բայց դա ոչ թե ինքնին իրագործվող գերբնական պատժի երկյուղն է, այլ պարզապես սպառնացող անձի ներշնչած իրական պատժի երկյուղը, կախված սպառնացողի բնավորությունից ու հոգեբանությունից։ Սպառնալիքի բանաձևերն, հետևաբար, չունեն հմայական զորություն, ուստի և հայհոյական և փաղաքշական բանաձևերի նման դուրս են մեր ուսումնասիրության ոլորտից։

ԱՌԱՋԻՆ ԳԼՈՒԽ

ԱՎԱՆԴԱԿԱՆ ԸՄԲՌՆՈՒՄՆԵՐՆ ՈՒ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. ԱՆԵԾՔՆԵՐԻ ԵՎ ՕՐՀՆԱՆՔՆԵՐԻ ՀՄԱՅԱԿԱՆ ԶՈՐՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՏԸ

1. Անեծքների և օրհնանքների ամենահին և տարածված ըմբռնումը դրանց գերբնական զորության հավատն է։ Ըստ այդ հայացքի, անեծքներում և օրհնանքներում արտահայտված ցանկությունները կարող են հիշյալ զորության շնորհիվ ուզած պարագաներում իրագործվել։ Այս հավատալիքը հավաստող վկայություններ են մինչև օրս էլ հարատևող առասպելական զրույցներն ու ավանդությունները։

Սասունում պատմվող մի ավանդությամբ՝ Մասիսն ու Արագածը, որ շատ սիրով քույրեր են եղել, գժտվում են։ Վրա է հասնում Մարութա լեռը և փորձում հաշտեցնել քույրերին։ Երբ այդ չի հաջողվում, նա թողնում հեռանում է և անիծում, որ Մասիսն ու Արագածն իրարից բաժանվեն և երբեք միմյանց չհանդիպեն։ Մասիսն անիծում է Արագածին, որ ամբողջ տարին վիշտը նրա սրտից դուրս չգա, արցունքն էլ՝ աչքերից։ Արագածն իր հերթին անիծում է Մասսին, որ երբեք նրա գագաթին մարդ չբարձրանա ու մատաղ չմորթվի։ Ըստ ավանդության՝ այդպես էլ լինում է. Արագածի արցունքից՝ կատարին լիճ է գոյանում, Մասսի գագաթին էլ մարդ չի բարձրանում ու մատաղ չի մորթում, և երկուսն էլ ընդմիշտ մնում են միմյանցից հեռու[1]։ Ղարաբաղում պատմվող մի

---

[1] Ս. Ղանալանյան, *Ավանդապատում*, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1969, էջ 10—11։

այլ ավանդությամբ՝ Դաղստանի լեռն ու Մռավ լեռը վիճելիս, Դաղստանի լեռը ձեռքի ափսեն զայրացած շպրտում է Մռավի վրա։ Մռավն անիծում է նրան ասելով. «Գլխիդ ձյունը երբեք չհալչի»։ Այդպես էլ լինում է[2]։ Ժողովրդական ավանդություններով՝ Հին Նախիջևանի Իլան Դաղում (=Օձասար) օձեր ու վիշապներ են բնակվել Նոյի անեծքի հետևանքով[3]։ Խնձորեսկ գյուղի մոտ գտնըվող սարը ժայռը մուրճով տաշելու համար, քարն անիծում է տաշողին և կուրացնում[4]։

Մարդկանց և կենդանիների քարանալու մասին Հայաստանում պատմվող ավանդական շատ առասպելներով ու զրույցներով, քարանալու պատճառը եղել է աստծու, սրբի կամ հմայական զորությամբ օժտված որևէ անձի (մեծ մասամբ հոգևոր բարձր դասից) պատժելու նպատակով տված անեծքը։

Շապին-Գարահիսարի Թամզարա գյուղաքաղաքի ճանապարհին գտնվող «Քույր ու եղբայր» ժայռը նախապես եղել է կենդանի քույր ու եղբայր, որոնք անգիտությամբ ամուսնացել են միմյանց հետ և արժանացել աստծու անեծքին ու քարացել[5]։ Քղիի Աժդահա սարը, ըստ ավանդության, եղել է մի հսկա վիշապ, որ հարձակվում է ոչխարը կիթ բերած հովվի, հոտի և կթվորների վրա։ Հովիվն աղերսագին դիմում է հոտը պաշտպանող Փիրի (ոգի) օգնությանը, խոստանալով 12 խոյ մատաղել։ Հովվի խնդիրքն անմիջապես կատարվում է. վիշապը տեղնուտեղը քարանում է։ Հովիվը տատանվում է իր խոստումը կատարել և իսկույն ոչխարների ու կթվորների հետ քարանում է[6]։ Վիպական այս սյուժեն՝ վտանգի ժամանակ հովվի մատաղ խոստանալը, վտանգն անցնելուց հետո հրաժարվելը մատաղից կամ ոչխարի փոխարեն միջատ կամ այլ պիղծ կենդանի զոհաբերելը շատ է տարածված ավանդություններում, որին անմիջապես հաջորդում է աստծու կամ հովանավորող սրբի անեծքը, և հոտն ու հովիվը անեծքի ազդեցությամբ քար են դառնում։ Նման ավանդություն է պատմվում Տամշադինի Մուրղուզ լեռան կատարին գտնվող քարերի[7], Սեբաստիայի Իշխանի ուխտավայրի մոտ եղած քարերի, որոնք իբր ուղտեր և ուղտապան են

2 Անդ, էջ 15։
3 Անդ, էջ 11։
4 Անդ, էջ 14—15։
5 Անդ, էջ 22—23։
6 Անդ, էջ 27—28։
7 Անդ, էջ 61։

Ձղել[8], Արնոս լեռան, Վասպուրականի Սոքան և Ծափանց գյուղերի միջև, Խարբերդի հարավ-արևելքում, Քղիի Խարապեկ և Հեռլանկի գյուղերի միջև գտնվող քարերի[9] մասին։ Այդ միևնույն սյուժեին է հարում նաև հոտ արածեցնող հովվից որևէ մեկի (սուրբ, ճգնավոր, մուրացկան) կաթ կամ որևէ բան խնդրելու և մերժվելու առթիվ արված անեծքի և դրա հետևանքով հոտի ու հովվի քարանալու առասպելական մոտիվը, որ հանդես է գալիս Հայոց ձորի Պահանց գյուղից Բութ տանող ճանապարհին գտնվող քարերի[10], Վարանդայի Լուսավորչի քերծում և Խազազի լեռան վրա եղած քարերի մասին[11] պատմվող և այլ ավանդություններում։

Ծաղիկների ու բույսերի մասին պատմվող առասպելական ավանդություններով՝ բույսերն ու ծաղիկներն իրենց այս կամ այն հատկանիշը ձեռք են բերել որևէ մեկի անեծքի հետևանքով։

Մանուշակը եղել է մի գեղեցիկ, բայց «խաբարբզիկ» աղջիկ։ Մայրը շատ խրատելուց հետո, երբ տեսել է աղջիկն անուղղելի է, անիծել է. «Ջուլերն ընկնես, լեզուդ ծոծրակովդ դուրս գա»։ Մանուշակն անմիջապես ծաղիկ է դարձել՝ լեզուն ծոծրակից դուրս եկած։ Հիսուսը ճանապարհից հոգնած նստում է մի թփի տակ հանգստանալու։ Մանուշակը չճանաչելով նրան, բողոքում է, որ հեռու նստի։ Քրիստոսն անիծում է. «Դեռ չզորացած՝ չորանաս»։ Անեծքը բռնում է. դրանից էլ մանուշակը բացվելուց հետո շուտով թառամում է։ Քրիստոսը մանուշակի մոտից անցնելիս, վերջինս ասում է. «Հեռացի՛ր մոտիցս՝ չխենթանաս հոտիցս»։ Քրիստոսը վայրացած անիծել է. «Լեզուդ տակիցդ դուրս գա»։ Անեծքն իրականացել է, որի համար էլ մանուշակի գլուխը միշտ մնում է խոնարհված[12]։

Անեծքի ազդեցության զորության հետևանքով են երբեմն բացատրվել այս կամ այն տեղանվան ծագման պատճառը։ Լոռվա Ախտալի տեղանունն, ըստ ավանդության, ծագել է մի վարդապետի անեծքի հետևանքով։ Վարդապետն անիծել է, որ տվյալ տեղա-

8 Անդ, էջ 67։

9 Անդ, էջ 68, 69, 75, 76։

10 Անդ, էջ 69։

11 Անդ, էջ 57։ Անեծքից քարանալու մասին մի շարք այլ ավանդություններ տե՛ս նույն տեղում, էջ 53, 54, 55, 60, 66, 80, 107։

12 Ա. Ղանալանյան, Ավանդապատում, էջ 112։ Վարդի և մանուշակի, «Հարսի լեզու» կոչված բույսի, արջի, կապկի, օձի, կրիայի, տատրակի անեծքով կերպարանափոխվելու, ինչպես նաև ծխախոտի տերևների անընդհատ այրվելու, ջորու անծին մնալու, ճնճղուկի դժվարությամբ քայլելու հատկանիշները անեծքով ձեռք բերելու մասին պատճառական ավանդություններ տե՛ս նույն տեղում, էջ 112—113, 118, 120, 123, 126—128, 130, 134, 142։

վայրի բնակիչներն ախտավորվեն: Անեծքը կատարվում է, բոլորը ախտից մեռնում են, և տեղավայրը այդ օրվանից մնում է Ախտալի[13]:

Սալմաստի Խաշինոց գյուղի անունը ավանդությամբ ծագել է ս. Սարգսի անեծքից: Երբ պարզվել է, որ իր պահ տված որբերին գյուղացիները խաշել կերել են, ս. Սարգիսը անիծում է, որ դրանք բոլորը խաշվեն: Անեծքը կատարվում է, և գյուղն էլ անվանվում է Խաշինոց[14]: Բալուի Հավավ գյուղանունը, ավանդությամբ, ծագել է հետևյալ դիպվածից. երբ Թադեոս առաքյալը գալիս է այդտեղ քարոզելու, տեղացի հեթանոսները նրան ծաղրելու համար շան նման «հա՛վ-հա՛վ» են անում: Առաքյալն անիծում է, և նրանք սկսում են խոսելիս անընդհատ «հա՛վ-հա՛վ» անել, որից և մնում է տեղանունը[15]:

Զանգեզուրի Տրծենավանքի և Սասնո Գոմքի Ճկույթ վանքի հիմնարկման ավանդություններով՝ ռեսից ու մելիքից շարունակ նեղվող վանահայրը կամ քահանան անիծում են ռեսին (=մելիքին), և անեծքը կատարվում է: Անեծքից ազատվելու համար նրանք երկար դեգերում են աշխարհից-աշխարհ, և ի վերջո Երուսաղեմից և Հռոմից բերում են Պետրոս առաքյալի ճկույթը և դրա վրա շինում հիշյալ վանքերը[16]: Մի ավանդությամբ՝ բոշաները ծագել են անեծքի հետևանքով. վարդապետն անիծել է թշնամուց կաշառված սարկավագներին, ասելով՝ «Սևերեսնե՛ր, գնացեք, էլ մարդկանց մեջ չերևաք»: Սարկավագները սևացել են, հեռացել մարդկանցից, դարձել թափառաշրջիկ մաղ ու կողով գործող[17]: Մի շարք սնահավատական ավանդություններով քաջքերը եղել են սովորական մարդկանց զավակներ, որոնք Քրիստոսի կամ հրեշտակի անեծքի հետևանքով աներևութացել են և դարձել ոգիներ[18]:

Ժողովրդական առասպելներում ու զրույցներում առանձնապես շեշտվում է հայրական անեծքի ազդեցության զորությունը: Մեր հին առասպելախառն վեպում՝ Վիպասանքում, Արտաշես թագավորը անիծում է իր որդուն՝ Արտավազդին, ասելով. «Եթէ դու յորս հեծցիս յԱզատն ի վեր ի Մասիս, զքեզ կալցին քաջք, տարցին

---

13 Ա. Ղանալանյան, Ավանդապատում, էջ 182:

14 Անդ, էջ 188—189:

15 Անդ, էջ 200:

16 Անդ, էջ 231, 256:

17 Անդ, էջ 399:

18 Անդ, էջ 356—357:

յԱզատն ի վեր ի Մասիս. անդ կայցես, և զլոյս մի տեսցես»: Հոր անեծքը բռնում է, և Արտավազդին քաջքերը բռնտում են Մասսի վիհերից մեկում[19]: «Սասնա ծռեր» ժողովրդական վեպում ևս Դավիթն անիծում է որդուն՝ Մհերին.

— Մհե՛ր, որ տո̈ւ խեն ձի կռիվ արիր,
Ջի ամանչըցրիր մընչ խալխին,
Կանչիր եմ քաղցրիկ Աստված,
Քո̈ մոտեն ժառանգ չընկնի տո̈ւրս,
Քե մահ չըլնի, չուր Քրիստոս կա̈ դատաստան[20]:

Կատարվում է դարձյալ հոր անեծքը. որդին մնում է անմահ ու անժառանգ:

Հայրական անեծքի նկատմամբ վախի ու երկյուղածության մի արտահայտություն է Բենսեի (Ս. Մովսիսյան) Բուլանըխից գրառած «Հավլումի թուր» հեքիաթում հոր և որդու միջադեպը: Հայրը սպառնում է որդուն անեծքով. «Գնա՛ զիմ թուր բէ, թե չէ՝ զքըզի կանիծեմ հուր հավիտյան»: Որդին վախենալով հոր սպառնալիքից գնում բերում է հոր թուրը[21]:

Հայրական անեծքի զորության հավատալիքն արտահայտվել է նաև «Մոր անեծքը օրհնենք է, հոր անեծքը անեծք է» ժողովրդական ասացվածքում, ուր մոր անեծքի համեմատ շեշտվում է հայրական անեծքի ազդեցության մեծ ուժը:

Մինչև օրս էլ մեր ժողովրդի ընդերքում հարատևող կենդանի հավատալիք է՝ մեկի գլխին եկող փորձանքի ու պատուհասի պատճառը համարել որևէ մեկի կողմից, որևէ տեղ ու ժամանակ նրան տրված անեծքը: Կամ, եթե մեկը մյուսին վնաս կամ վատու-

---

19 «Մովսիսի Խորենացւոյ պատմութիւն Հայոց», Աշխատութեամբ Մ. Աբեղեան և Ս. Յարութիւնեան, Տփղիս, 1913, էջ 191—192:

20 «Սասնա ծռեր», հատ. Ա, խմբագրեց Մ. Աբեղյան, աշխատակցությամբ Կարապետ Մելիք Օհանջանյանի, Երևան, 1936, էջ 43—44:

21 «Հայ ժողովրդական հեքիաթներ», հատ. X, Երևան, 1967, էջ 395: Համշենցի հայերի մեջ գոյատևող մի ավանդությամբ, ջրհեղեղի ժամանակ մայրը իրեն փրկելու համար կանգնում է երեխայի օրորոցին, որպեսզի չխեղդվի: Հայրը գալիս է, խփում գցում է կնոջը և օրորոցը ուսին դրած փրկում երեխային: Դրա համար էլ, ըստ ավանդության, մոր անեծքը չի բռնում, այլ հորն է բռնում (ԱՀԶ 128): Ժողովրդի հայացքով, ուրեմն, այն խոսքն է զորավոր, որը երախտիք ունի տվյալ անձի կամ առարկայի նկատմամբ:

թյուն է արել, և հետագայում ինքն է ենթարկվում վնասի կամ փորձանքի, ապա դա ևս համարվում է նախկինում վնասվողի անեծքի հետևանքը։ Եվ այդ ոչ միայն անհատների կյանքում, այլև ամբողջ հասարակության։ Հավատում էին, թե որևէ բնական կամ հասարակական պատուհասի (կարկտահարություն, հեղեղումներ, երաշտ, երկրաշարժից գյուղերի և քաղաքների կործանումներ, պատերազմներ և այլն) պատճառը որևէ ազդեցիկ մեկի (մեծ մասամբ հոգևոր բարձր կոչմամբ), որևէ ժամանակ տվյալ համայնքին ուղղված անեծքն է եղել։ Օրինակ, Վաղարշապատի մի շարք գյուղերում, մասնավորապես Ալիբեկլուում, հավատում էին, թե 1904 թվականի ռուս-ճապոնական պատերազմի պատճառը եղել է ցարական կառավարության կողմից 1903 թվականին հայ եկեղեցական գույքի և կալվածքների բռնագրավման առթիվ կաթողիկոսի ու ժողովրդի տված անեծքը[22]։ Վայոց ձորի բնակիչների մեջ պահպանված մի ավանդությամբ (որն առկա է նաև Ստ. Օրբելյանի Պատմության մեջ) Վայոց ձորի Մոզ քաղաքի կործանման պատճառը Ստեփանոս եպիսկոպոսի անեծքն է եղել[23]։ Այժմյան Ղուկասյանի շրջանի Ղազանչի գյուղի բնակիչների մեջ, որոնք Ալաշկերտից նախկինում գաղթածներ են, տարածված է այն հավատալիքը, թե այդ գյուղի վրա ծանրացած է մի ավանդական անեծք, ըստ որի այդ գյուղի բնակիչները միշտ էլ հասնելու են մեծ հարստության և ապա այն աստիճանի են աղքատանալու, որ ունեցվածքը բարձելու են մի աքաղաղի վրա ու գյուղից հեռանալու։ Հավատում են, թե միշտ էլ այդպես է եղել. գյուղն հաճախակի հասել է ծայրահեղ ծաղկման և հաճախակի էլ՝ ամայացել։

Մակուի հայերի կարծիքով, կոտորածների ժամանակ իրենց քաղաքի հայկական թաղամասի գլխովին բնաջնջման պատճառը եղել է Վարդան զորավարի անեծքը։ Երբ հայերը թողել են Մակուի թուրքական թաղամասը, ուր կառուցված էր Ս. Վարդանի եկեղեցին, և բնակություն հաստատել նոր թաղամասում, բնակիչներից մեկը երազում տեսնում է Վարդան զորավարին, որը բողոքում է իրեն (=եկեղեցին) անօրենի ձեռքը թողնելու դեմ, սպառնում է շութը դնել ու վարել նոր թաղամասի հայերի տուն ու տեղը։ Եվ վրա հասնող կոտորածներին կուլ է գնում ամբողջ հայությունը[24]։

---

22 Իմ ազգագրական-բանահյուսական հավաքածուից։

23 Ե. Լալայան, Շարուր-Դարալագյազի գավառ, «Ազգ. հանդես», XII գիրք, էջ 249։

24 Ա. Ղանալանյան, Ավանդապատում, էջ 243։

Ոչ միայն ժողովրդի ընդերքում է մնացել այդ հավատալիքը, այլև թափանցել է գրականություն, մանավորապես միջնադարյան մատենագրության մեջ, ինչպես իրեն հատուկ խորաթափանցությամբ նկատել է Մ. Աբեղյանը[25]: Միջնադարյան մեր նշանավոր մատենագիրներից շատերը, լինելով ուսյալ և կիրթ մարդիկ, այդուամենայնիվ հայոց պատմության անցյալ կամ ժամանակակից աղետալի անցքերը պատճառաբանել են մեղքով կամ անեծքով: Ներսես Մեծ կաթողիկոսը, ըստ Փավստոսի, Գնելի սպանության առթիվ խստագույնս դատապարտելով Արշակ թագավորին՝ անիծում է. «Եւ կործանումն՝ որ բերանով մարգարէին ածի ի վերայ ձեր, ըմպել ազգիդ Արշակունեաց զլեղին բաժակն, արբջիք արբեսջիք և կործանեսջիք, և այլ մի՛ ևս կանգնեսջիք... Այլ դու Արշա՛կ, փոխանակ զի զգործս Կայէնի գործեցեր, զանէծսն Կայէնի զգեցջիր. անկջիր կենդանւոյն ի թագաւորութենէդ քումմէ, և չարչարեսցիս առաւել քան զՏիրան զհայրն քո, և դառն մահուամբ զկեանս քո յերկրէս մեծ նեղութեամբ վճարեսջիր»[26]:

Կատարվում է Ներսեսի անեծքը. Շապուհը խորամանկությամբ բանտարկում է Արշակին, և վերջինս շարունակ շղթայակապ տառապելուց հետո ի վերջո ինքնասպան է լինում:

Ղազար Փարպեցին պարսից Վռամ թագավորի կողմից հայոց Արշակունյաց թագավորության կործանման փաստը պատճառաբանում է Ներսես Մեծի Արշակ թագավորին և առհասարակ Արշակունիներին տված անեծքով («Քանզի եկեալ հասեալ էր ի վերայ նոցա նզովք սրբոյ առն Աստուծոյ Ներսէսի՝ անկանել նոցա ընդ լծով չար ծառայութեան հեթանոսաց»)[27]: Եվ ոչ միայն Փարպեցին, այլև հետագայի մատենագիրներից ու բանաստեղծներից շատերը հայ ժողովրդի գլխին եկող քաղաքական բոլոր աղետների պատճառը տեսնում էին Ներսես Մեծի անեծքի մեջ, որ, նրանց կարծիքով, ընդմիշտ ծանրացել էր հայոց ճակատագրի վրա: Ներսես Շնորհալին, միջնադարի այդ լուսամիտ ու բազմաշնորհ մարդն անգամ XII դարում հավատում էր, թե Ներսես Մեծի և ուրիշների իրենց ժողովրդի զավակների գլխին թափած անեծքի հետևանքով

25 Մ. Աբեղյան, *Հայոց հին գրակ. պատմություն, II գիրք, Երևան, 1946, էջ 115—116:*

26 *«Փաւստոսի Բուզանդացւոյ պատմութիւն Հայոց», Վենետիկ, 1832, էջ 120:*

27 *«Ղազարայ Փարպեցւոյ Պատմութիւն Հայոց եւ Թուղթ առ Վահան Մամիկոնեան», աշխատութեամբ Գ. Տեր-Մկրտչեան և Ստ. Մալխասեան, Տփղիս, 1904, էջ 22—26:*

է, որ «աններելի եղև բարկութիւն աստուծոյ այսքան երկար ժամանակս, բառնալով զթագաւորութիւն և զիշխանութիւն և մատնելով ի սուր և ի գերութիւն, և ցրուելով ըստ հրէական տոհմին ի ստրկութիւն և ի ծառայութիւն ամենայն ազգաց»[28]։

Եվ անեծքի հմայական զորության նկատմամբ ունեցած այդ հավատն է պատճառը, հարկավ, որ Շնորհալին իր «Ողբ Եդեսիոյ» կենդանաշունչ պոեմում, ավերված ու խողխողված Եդեսիան դիմառնող որդեկորույս որբևայրի տիկնոջ բերանով, անեծքների մի հորդաբուխ հեղեղ է թափում Եդեսիան ավերող Հալեպի ամիրա Զանգիի գլխին, նրա ողջ ազգն ու տակը ոչնչացնելու, կործանելու հույսով[29]։

Անի քաղաքի կործանման պատճառն էլ, մի ավանդական զրույցով, որ առաջ է բերում Աբրահամ Կրետացին, եղել է Հովհաննես Պլուզ վարդապետի անեծքը։ Ըստ այդ զրույցի, անեցիներն այնքան էին հղփացել ու լկտիացել, որ ոչ աստված էին ճանաչում, ոչ եկեղեցի, իրենց ամբողջությամբ հանձնել էին ցոփ ու զեխ կյանքի։ Սուրբ հոգու դրդմամբ Հովհաննես վարդապետը գալիս է Անի, բազմաթիվ փորձությունների գնով համոզում անեցիներին ետ կանգնել իրենց արարքներից. Նրանք խոստանում են, բայց ի վերջո ծաղր ու ծանակի են ենթարկում վարդապետին ու իր պատգամները։ «Եւ տեսեալ զայս ամենայն վարդապետն Յօհաննէս, ել ի վերայ բարձր բլրի միոյ՝ և անէծ զքաղաքն... Եւ յանկարծակի էջ սաստիկ բարկութիւն Աստուծոյ, և սկսաւ քաղաքն շարժիլ՝ և տապալիլ պարիսպքն»։ Կործանվում է Անին, իսկ բնակիչներն էլ տարագրված ցրվում են աշխարհով մեկ[30]։

Գրիգոր Դարանաղցին վիրավորանքի ու հալածանքի արժանանալով կաֆացիներից, մի գրավոր անեծք-բանադրանք է հղում Կաֆա։ Բանադրանքն ընթերցվում է Կաֆայի մեծ եկեղեցում և նույն գիշերն իսկ «հուր անկանելով յայնմ եկեղեցոջն եւ եկեղեցոյ շինուածոցն ոչինչ վնասելով, այլ զամենայն հանդերձեղէն և զգրեանսն ամենայն այրել էր հուրն այն»։ Եվ ոչ միայն այդ. կաֆացիների գլխին, Դարանաղցու հավաստումով, նույն օրերին մի առավել մեծ արհավիրք է ծանրանում։

---

28 «Թուղթ ընդհանրական. Արարեալ երից երանեալ սուրբ Հայրապետին մերոյ տեառն Ներսիսի Շնորհալւոյ», Էջմիածին, 1865, էջ 425—426։

29 «Ողբ Եդեսիոյ քաղաքի», Կալկաթա, 1832, էջ 66 և հտն.։

30 «Պատմութիւն Անի քաղաքին, զոր գրեալ է Աբրահամու րաբունապետի և բանի սպասաւորի և առաջնորդին Թրակիոյ», Վաղարշապատ, 1870, էջ 108 (տե՛ս հեղինակի «Պատմութիւն անցիցն իւրոց և Նատր շահին պարսից» գրքում)։

«Յաւուրսն յայնոսիկ ի բազմառատ լիութեան գոլով ի քաղաքին և ամենայն աշխարհին, յանկարծակի եղեւ սով սաստիկ և սպառեալ եղեւ ամենայն բարութիւն քաղաքին»[31]: Այդ սովն ու սրա վերահաս երաշտը վերանում են միայն այն ժամանակ, երբ Դարանաղցին խղճահարվելով, հատուկ գիր է գրում կաֆացիներին, «զի արձակել ի կապանաց անիծիցն»: Եվ Դարանաղցու ասելով «յորժամ տարեալ զգիր արձակմանցն և օրհնութեանցն ի Կաֆայ քաղաք, և յորժամ ընթերցան... եւ առժամայն տեղեաց երկին զանձրեւ սաստիկ յոյժ, եւ յայնմ հետէ դադարեցան ամենայն ցասմունք պատահարաց»[32]:

Ժողովրդական ու կրոնական զրույցներով, ուրեմն, անեծքն ամենուրեք իրականանում է. այն իրականանում է ամենից առաջ իրեն առանձնահատուկ հմայական ներքին զորության պատճառով:

2. Հմայական նման ներքին զորությամբ են օժտված նաև օրհնանք-բարեմաղթությունները: Դրանց մեջ բարի ցանկության իրականացման հույսը դրվում էր ոչ թե որոշակի նպատակային գործունեության վրա, այլ սոսկ խոսքի հմայական ներգործության ուժի: Այդ պատճառով էլ ժողովրդական շատ սովորություններով, որևէ կարևոր ձեռնարկումից առաջ, գործող անձը ստանում է տվյալ գործով շահագրգռվածի կամ տնօրինողի օրհնությունը. նորապսակները ամուսնությունից առաջ ստանում են ծնողների ու հարազատների օրհնությունն ու մաղթանքը, զորավարն ու զորքը մարտից առաջ՝ աշխարհիկ կամ հոգևոր առաջնորդի օրհնությունը, որսորդն ու ձկնորսը և պատահականության վրա խարսխվող որևէ այլ գործ նախաձեռնող, ձեռնարկումից առաջ ստանում է հարազատների ու բարեկամների բարեմաղթությունը և այլն: Այդ ամենը կատարվում է նախաձեռնվող գործի հաջող ընթացքի ու ելքի հաստատ հավատով:

Օրհնության ու բարեմաղթության հմայական զորության իրականացման հավատալիքը գեղարվեստական ցայտուն ձևերով դրսևորվել է դարձյալ ժողովրդական ավանդությունների մեջ, որոնց սովորաբար մեծ հավատ են ընծայում:

Իջևանի շրջանի Կոթի գյուղի մոտ գտնվող «Ս. Սարգսի ջուր» կոչված աղբյուրն, ըստ ավանդության, փորել է տվել ս. Սարգիսը՝ բերդում իր պատսպարած հայ գերիներին ծարավից փրկելու

31 «Ժամանակագրութիւն Գրիգոր վարդապետի Կամախեցւոյ կամ Դարանաղցւոյ», Երուսաղեմ, 1915, էջ 94:

32 Անդ, էջ 97:

համար։ Երբ աղբյուրը բխել է, ս. Սարգիսը խաչակնքել է ու օրհնել, ասելով. «Ով որ գա էս ջրիցն երեսովը տա, ինչ հիվանդություն ունենա, թողնելու ա»[33]։ Ըստ ավանդության՝ կատարվում է ս. Սարգսի օրհնությունը, և այդ ջուրը օժտվում է բուժիչ հատկություններով։

Եղևնին, սոսին, գիհին ավանդություններով նախազգուշացնում են Քրիստոսին վերահաս աղետից կամ նրան իրենց ճյուղերով պատսպարում թշնամիների հետապնդումից։ Ի հատուցումն, Քրիստոսը օրհնում է, որ այդ ծառերը միշտ դալար մնան. կատարվում է Քրիստոսի օրհնությունը, և այդ ծառերը միշտ կանաչ են մնում[34]։ Լոշտակի մասին պատմում են, որ մի վարդապետ ունենում է Լոշտակ անունով մի փոքրավոր, որին սաստիկ տանջում է։ Վերջինս վրեժ լուծելու մտադրությամբ՝ վարդապետի քնած ժամանակ կանթեղից ձեթ է լցնում մորուքին և վառում։ Վարդապետը զարհուրած արթնանալով անիծում է Լոշտակին. «Գետինը մտնես»։ Լոշտակն իսկույն գետին է մտնում։ Բայց զղջալով իր տված անեծքից՝ վարդապետը միաժամանակ օրհնում է, ասելով. «Ամենայն հիվանդության դեղ լինես». կատարվում է օրհնանքը, և լոշտակը դառնում է բազում հիվանդությունների բուժամիջոց[35]։

Մի հրաշապատում ավանդությամբ՝ Հայր Աբրահամի մոտ հյուր է գալիս հրեշտակը։ Աբրահամը, հրեշտակին հյուրասիրելու նպատակով, մորթում է հորթը։ Երեկոյան, երբ կովը վերադառնում է նախիրից և բառաչելով կանչում է հորթին, հրեշտակը պահանջում է հորթի կաշին ու ոսկորները, օրհնում, և հորթն իսկույն վերակենդանանում է և ոտի կանգնում[36]։

Քրիստոսը երբ գրկանոց է լինում տիրամոր գրկին, տիրամայրը աղանձ է ուտում, որպեսզի կաթը քաղցրանա։ Քրիստոսը մորն հարցնում է, թե ի՞նչ է կերել, որ կաթն այդպես քաղցր է։ Տիրամայրը ճիշտ կերածը չի ասում, այլ ասում է, թե առվույտ է կերել։ Քրիստոսը օրհնում է առվույտը ասելով. «Թող մին տարի վարեն, օխտը տարի հարեն» (=հնձել)։ Ըստ ավանդության, ճիշտ այդպես էլ կատարվում է Քրիստոսի օրհնանքը[37]։

Գոմեշի լող տալու հատկությունը, ավանդության համաձայն,

---

33 Ա. Ղանալանյան, *Ավանդապատում*, էջ 103։

34 *Անդ*, էջ 114—115։

35 *Անդ*, էջ 118—119։

36 *Անդ*, էջ 116—117։

37 *Անդ*, էջ 119—120։

վերագրվում է Նոյի օրհնությանը: Ջրհեղեղի ժամանակ, երբ Նոյն իր տապանն է առնում բոլոր կենդանիներին, գոմեշին մոռանում է: Հանկարծ տեսնում է, որ ջուրը ճողփելով ու խեղդվելով տապանին է մոտենում գոմեշը: Նոյը խղճահարվելով օրհնում է նրան, որ լող տալով ազատվի: Կատարվում է օրհնությունը, և գոմեշը այդ օրվանից լող է սովորում[38]:

Ավանդությամբ՝ ատաղձագործը գոգը փող լցրած գնալիս հանդիպում է Քրիստոսին: Վերջինս հարցնում է, թե ի՞նչ է գոգինը: Ատաղձագործը խաբում է, թե տաշեղ է: Քրիստոսն օրհնում է, ասելով. «Աստված ձեր տաշեղին բարաքյաթ տա»: Ապա ճանապարհին հանդիպում է մի կաշեգործի՝ գոգը ներկ լցրած: Նույն հարցով Քրիստոսը դիմում է նրան. կաշեգործը պատասխանում է, թե փող է տանում: Դարձյալ օրհնում է Քրիստոսը, ասելով. «Աստված ձեր փողին բարաքյաթ տա»:

Ավանդության հավաստմամբ օրհնանքը կատարվում է, որի արդյունքն է՝ «Դուրգարի տաշեղն է շատ, դաբաղի՝ փողը» տարածված ասացվածքը[39]:

Մեկ այլ ավանդությամբ՝ կռապաշտները ծեծում են Եղիա մարգարեին և ստիպում ուրանալ աստծուն: Եղիան հրաժարվում է: Հանկարծ հայտնվում է Քրիստոսը և օրհնում. «Եղիա՛, թող քո արցունքները ջավահիր դառնան ու ծավալվեն երկրից-երկիր»: Այդպես էլ լինում է: Ըստ ավանդության՝ ջավահիրը Եղիա մարգարեի արցունքներից է առաջացել[40]:

3. Ինչպես անեծքների, այնպես էլ օրհնանքների հմայական զորությանը հավատող ավանդությունների, զրույցների և հավատալիքների մեջ, անեծքին և օրհնանքին ինքնահատուկ հմայական ներգործության զորությունից բացի, կարևոր արժեք է տրված նաև անիծողին ու օրհնողին, այսինքն՝ հմայող անձին, հատկապես նրա հասարակական, կրոնական, ընտանեկան կշռին ու դիրքին: Նկատենք, որ անիծողների ու օրհնողների ճնշող մեծամասնությունը ամենից առաջ աստված ու սրբեր են և կրոնավորներ: Աստված՝ վերացական ըմբռնմամբ անիծող կամ օրհնող շատ հազվադեպ է երևան գալիս ավանդություններում. դրա փոխարեն մեծ տեղ են գրավում Քրիստոսը, հրեշտակներն ու սրբերը, որոնք հանդես են գալիս իբրև որոշակի անհատականություններ, հաճախ որոշակի

38 Անդ, էջ 126—127:

39 Անդ, էջ 402:

40 Անդ, էջ 348:

շահագրգռություններով։ Դրանց անեծքն ու օրհնանքն անմիջապես
կատարվում են։ Կատարվում են նաև բոլոր հոգևորականների
(կաթողիկոս, եպիսկոպոս, վարդապետ, քահանա, ճգնավոր) ա-
նեծք-բանադրանքներն ու օրհնանք-բարեմաղթությունները։ Ապա,
երկրորդաբար, անիծող ու օրհնող անձանց մեջ կարևոր տեղ են
բռնում հայրերը՝ մեծ մասամբ թագավոր (Արտաշես, Դավիթ),
մայրերը և սկեսուրները, երբեմն նաև նահապետները (Նոյ), մար-
դիկ, որոնք իշխող դիրք ունեն հասարակության մեջ ու ընտանի-
քում։ Այդ բոլոր ավանդությունների ու զրույցների մեջ պահպան-
վել է կրոնական ու աշխարհիկ առաջնորդների հմայական բացա-
ռիկ զորության վաղնջական հավատալիքը, այն, որ տվյալ հա-
սարակության, համայնքի, գերդաստանի կամ ընտանիքի առաջ-
նորդը ամենից առաջ կախարդ է, քուրմ՝ հմայական անսահմանա-
փակ զորությամբ օժտված։ Մասնավորապես Քրիստոսի մասին
պատմվող ավանդություններում երևան են գալիս հին եբրայական
ցեղերից մեկի հոգևոր առաջնորդի հմայական բացառիկ զորու-
թյան վաղնջական գծերը։ Քրիստոնյա հմայող կրոնավորների
կերպարների տակ հանդես են գալիս հեթանոսական ու դրանից էլ
վաղ շրջանի պաշտոնական դյութերը, քրմապետերն ու քրմերը։ Եվ
վերջապես, թագավոր հայրերի՝ Արտաշեսի և Դավթի անեծքներում
պահպանվել են թագավորների ու գերդաստանի հոր հմայական
բացառիկ զորության հինավուրց արձագանքները, այնպես, ինչ-
պես մոր ու սկեսրոջ դյութական խոսքերի իրագործման փաստի
մեջ՝ մայրիշխանության շրջանից սերող տոհմում կնոջ խաղացած
հմայական մեծ դերի վերապրուկները։ Բայց ավանդությունների
ու զրույցների մի խումբ կա, ուր թվում է, թե հմայական խոսքի
իրականացման մեջ անիծողի հասարակական դիրքը ոչ մի արժեք
չունի։ Այդպիսիք են, օրինակ Մասիսի ու Արագածի, Դաղստանի լե-
ռան ու Մռավի, Գորիսի Շորձորում եղած ագռավաքարի, Մար-
տունու շրջանի Վարդենիկ գյուղի աթարի ամրոցի և Խնուսի Պը-
ղըրխանե գյուղի խոտի դեզի քարանալու, ջրաղացպանի կրիա
դառնալու մասին պատմվող ավանդությունները, ուր անիծողնե-
րը անձնավորված լեռներ են, աղքատ-մուրացկաններ, սովորական
մի պառավ և այլն, որոնք, թվում է թե, հասարակության մեջ ա-
ռանձին կշիռ ու արժեք չունեն։

Անձնավորված լեռների՝ Մասիսի, Արագածի, Մարութա և Մռավ
լեռների կերպարներով ի հայտ են գալիս արդեն աստվածացող
լեռների ոգիները, որոնք անիմիստական աշխարհըմբռնման առա-

վել ուշ ժամանակների արգասիք լինելով, բնույթով մոտենում էին արդեն մարդկանց վրա իշխող աստվածներին, համայնական ներգործության արտակարգ զորությամբ օժտված։

Ագռավ պահող և քարացնող պառավի դիմագծերում նշմարվում են վաղնջական ժամանակներից սերող համայնության վարպետ ներկայացուցիչ վհուկին յուրահատուկ գծեր, որ այնքան ցայտուն ու որոշակի երևան են գալիս ժողովրդական հեքիաթների կախարդ պառավների կերպարներում։ Իսկ անիծող մուրացկաններն արդեն իրենց ազգագրական բաղադրությամբ առավել բարդ են. նրանք մի կողմից խտացնում են ուշ ժամանակներում, մասնավորապես միջնադարում պաշտոնական կրոնից հալածվող դերվիշացած վարպետ համայնքների դիմորոշ գծերը, մյուս կողմից՝ ինչքից զուրկ ծպտյալ ճգնավորների հատկանիշները, մարդիկ, որոնք ուշ միջնադարում արդեն առանձնապես սերտ չէին կապված պաշտոնական եկեղեցուն և արդարություն էին որոնում ու քարոզում։ Այստեղից էլ մուրացկանների մեծ մասի բարոյական բարձր արժանիքների ընդգծվածությունը, և, միաժամանակ, նրանց համայնական արտակարգ զորությունից երկյուղելը, որ մինչև հիմա էլ հարատևում է ժողովրդի մեջ։ Այնպես որ, ժողովրդական ավանդություններով ու զրույցներով իրականացող անեծքի ու օրհնանքի հեղինակները տարբեր դարաշրջանների հասարակության և բնության վրա տնտեսապես ու բարոյապես իշխող անհատներն են, որոնց խոսքն անցել է ոչ միայն մարդկանց, այլև աստծու մոտ, և նրանք մյուս բոլոր մարդկանց համեմատությամբ օժտված են մենաշնորհ համայնական-գերբնական զորությամբ։

Այս ըմբռնմանը տրամագծորեն հակադիր է անեծքների և օրհնանքների ժողովրդական կենցաղավարումը, որով, սակավ բացառությամբ, էական խտրություն չի դրվում անիծող կամ օրհնող անձանց, հատկապես նրանց հասարակական դիրքի ու վիճակի միջև։ Ճիշտ է, կրոնական անձանց ու ծնողների անեծքին ու օրհնանքին, վերը բացատրված պատճառով, մեծ արժեք է տրվել, բայց ընդհանուր առմամբ անեծքն ու օրհնանքը ժողովրդի յուրաքանչյուր մարդու սեփականությունն է, ամեն ոք, յուրաքանչյուր պարագայում կարող է անիծել, օրհնել կամ բարեմաղթել և միաժամանակ ինքը ենթարկվել դրանց։ Եվ ոչ միայն անիծել կամ օրհնել է ամեն ոք, այլև հավատացել տվյալ անեծքի կամ օրհնանքի համայնական զորությանը, նրա կատարմանը կամ իրականացմանը։

Ժողովրդական մի քանի ավանդական զրույցների մեջ պահ-

պանվել է սովորական մահկանացուների անեծքի ներգործուն զորության հավատալիքը։ Սևանա լճի մասին պատմվող մի ավանդությամբ, աղբյուրի ակը չփակող հարսին միաբերան անիծել են հեղեղումից փախչող համագյուղացիները, և նրանց անեծքը կատարվել է։ Բերդի պարիսպը կանգուն մնալու համար նրա մեջ կենդանի մարդ դնելու տարածված ավանդական մի պատումով, պատի մեջ շարվող որբ աղջկա անեծքով ագռավ է դառնում որբին որմնադիրներին վաճառող պառավ մորաքույրը[41]։

Ժողովրդի մարդու տված անեծքի կամ օրհնության իրականացման մասին զանազան «եղելություններ» են պատմում։ Անեծքի իրականացման մեջ, ժողովրդական ըմբռնումներով, անիծող անձը էական դեր չի խաղում, այլ կարևորն ու վճռականը անեծքի իրավացիությունն է, արդարացիությունն այն դրդապատճառների, որոնք անիծողին անեծքի են մղել։ Դրա լավագույն ապացույցն է «Նահախ (=անիրավ) անեծքը չի գնա» ասացվածքը[42]։ Վերջինիս տրամաբանական զարգացումն է. «Անիրավ անեծք իր տիրուն է» ասացվածքը[43], ըստ որի անիրավացի անեծքը ոչ միայն չի ներգործում անիծվողին, այլ նույնիսկ իր անիրավացիության պատճառով կարող է անդրադառնալ անիծողին և վնասել։ Այս միևնույն գաղափարը փոքր այլ ձևով փոփոխված գտնում ենք ժողովրդական «Անեծքն անիծողին կը դառնա» և «Անե՛ծք, անե՛ծք, ո՞ւր ես էթըմ։—Անըծողի ծոցն եմ էթըմ» ասացվածքներում[44]։ Սրանց մեջ թեպետ չի ակնարկվում անեծքի անիրավացի բնույթը, սակայն դրանք նախորդ հավատալիքի զարգացումն են ու ընդհանրացումը։ Անեծքի ըմբռնման մեջ արդեն վերացել է անիրավացիի ու արդարացիի սահմանները, և անեծքն, ըստ այդ ըմբռնման, բոլոր դեպքերում ներգործում է սոսկ անիծողին։ Նման հայացքը, կարծում ենք պատմական ուշ ժամանակաշրջանի մտածողության արգասիք է, մասնավորապես քրիստոնեական բարոյախոսության, որն, ինչպես արտահայտված ենք գտնում եկեղեցական մի քանի կանոններում, արգելում էր հմայությունն ու թովչությունն՝ առհասարակ[45]։ Ավելին, միջնադարյան Եվրոպայում, մասնավորապես

41 Անդ, էջ 80, 210։

42 Ա. Ղանալանյան, Առածանի, Երևան, 1960, էջ 302։

43 Անդ։

44 Անդ։

45 «Կանոնագիրք հայոց», Ա, աշխատասիրությամբ Վազգեն Հակոբյանի, Երևան, 1964, էջ 237, 354։

Գերմանիայում, Անգլիայում և Ֆրանսիայում, եկեղեցական ու պետական հատուկ օրենքներով պատժի ու տուգանքի են ենթարկվել այն անհատները, ովքեր անիծել են[46]։

Անեծքի և օրհնանքի ազդեցության մասին ժողովրդի մեջ առկա է նաև մեկ այլ պատկերացում, ըստ որի անեծքն ու օրհնանքը ազդեցության երկակի բնույթ ունեն. դրանք կարող են միաժամանակ ներգործել ինչպես անիծվողին ու օրհնվողին, այնպես էլ անիծողին և օրհնողին։ Այս պատկերացման մարմնացումներն են. «Օխնանքն ու անիծքը էրկու բերնանի թուր է, համ դեսն է կտրում, համ դենը» և «Անեծքը երկու բերնանի սուր է» ասացվածքները[47]։

Անեծքի և օրհնանքի ազդեցության ուժի այս երկվական ըմբռնումն արդյունք է դարձյալ քրիստոնեական այն բարոյախոսության, թե մեկին չար կամ բարի կամեցողը ինքն ևս իր կամեցածի ձևով կփոխհատուցվի։

Անեծքների մասին ժողովրդի մեջ առկա մեկ այլ պատկերացման համաձայն, անեծքի հմայական զորությունը ժամանակի ու տարածության նկատմամբ անտարբեր է։ Ըստ այդ ըմբռնման՝ անեծքը կարող է մեկի գլխին կախված մնալ մինչև իր կյանքի վերջը, ինչպես Մհերի գլխին հոր անեծքը. կարող է մի գերդաստանի տրված անեծքը հարատևել ու սպառնալ հաջորդ սերունդներին ևս, որից էլ ծագում են «էս մարդն անիծված է» կամ «էս տան վրեն անեծք կա» դարձվածները։ Եվ, վերջապես, անեծքի հմայական զորության սնահավատքով՝ անեծքը կարող է դարեր շարունակ կախված մնալ մի ամբողջ ժողովրդի գլխին, ինչպես, դիցուք, հայկական միջնադարում Ներսես Մեծի անեծքի հավատալիքը։ Ուշագրավ է բուլղարական մի հավատալիք, ըստ որի՝ անեծքը յոթ տարի մնում է օդի մեջ կախված և ամեն ակնթարթ կարող է ընկնել անիծվածի վրա[48]։

Այդպես, ուրեմն, անեծք-օրհնանքների մասին ժողովրդի մեջ առկա ավանդություններով, զրույցներով ու հավատալիքներով

---

46 Գերմանիայում, օրինակ, անեծքի համար անխտիր պատժի են ենթարկվել մեծերն ու փոքրերը, տղամարդիկ ու կանայք, հարուստներն ու աղքատները։ Ռիխարդ Թագավորը անիծողին տուգանել է մեկ շիլլինգով, կրկնվելու դեպքում ավելի խիստ պատժի է ենթարկել։ Ֆրանսիայում Ֆիլիպ Ավգուստը անիծողներին ենթարկել է 20 շիլլինգ տուգանքի։ Իսկ Լյուդովիկոս 9-րդը այդ օրենքը տարածել է կայսրության ենթակա մյուս վասալ երկրների վրա (տե՛ս *Karl Scheible.* Deutsche Stich-und Hieb-Worte, Straßburg—London, 1885, էջ 37—38։

47 Ա. Ղանալանյան, *Առածանի*, էջ 302։

48 *Karl Scheible*, Deutsche Stich-und Hieb-Worte, էջ 38։

խոսքի հմայական զորության հավատալիքի նկատմամբ պահպանված ենք գտնում երկու հիմնական վերաբերմունք, որոնք արգասիք են պատմական տարբեր դարաշրջանների մտածողության։ Մեկն այն է, երբ առանձնահատուկ հմայական ուժ և իրագործվելու հատկություն է վերագրվել միայն սոցիալապես ու բարոյապես իշխող առանձին անհատների անեծքին կամ օրհնանքին, որ պատմականորեն արդյունք էր հասարակության գույքային ու սոցիալ-դասակարգային շերտավորումների և անիմիստական ուշ շրջանի զարգացած մտածողության։ Իսկ մյուսը՝ անեծք-օրհնանքների ավանդական կենցաղավարման մեջ հարատևող ըմբռնումներն են, որոնց համաձայն յուրաքանչյուր ոք անիծող և օրհնող է, յուրաքանչյուր մարդու անեծք կամ օրհնանք օժտված է հմայական անկասելի զորությամբ։ Ճիշտ է, այդ ըմբռնումների վրա նշմարվում են ուշ շրջանի քրիստոնեական աշխարհայացքի հետքեր, բայց ընդհանուր առմամբ դրանք վաղնջական ժամանակների արգասիք են, սերում են նախնադարյան համայնական հասարակարգից, պահպանվել են ուշ շրջանի ըմբռնումներին զուգահեռ, համակերպվել դրանց, հարատևել ու հասել են մեր օրերը։

2. ԳՐԱՎՈՐ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀՆՈՒՄ

Ա. ՍԵՊԱԳԻՐ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

4. Անեծքներն ու օրհնանքները, ենթադրյալ հմայական զորության պատճառով, վաղ պատմական ժամանակներից ի վեր օգտագործվել են զանազան վերահաս վտանգներից ապահով մնալու, պահպանվելու համար։ Անեծք-օրհնանքների այս կիրառական դերը դրսևորված ենք գտնում ամենավաղ գրավոր հուշարձաններում, մասնավորապես հին արևելյան սեպագիր արձանագրություններում։

Անեծք-օրհնանքների դասական նմուշներն իրենց գործնական կիրառությամբ լավագույն ձևով հանդես են գալիս ասուրա-բաբելական սեպագիր հիշատակարաններում, թեպետ դրանց վաղնջական արտահայտություններն առկա են տակավին հեթիթական սեպագիր դաշնագրությունների երդմնական բանաձևերում[49]։

[49] Տե՛ս „Politische Dokumente aus Kleinasien. Die Staatsverträge in akkadischer Sprache aus dem Archiv von Boghazköi. Von Ernst F. Weidner“, Leipzig, 1923.

Ասուրա-բաբելական սեպագիր հուշարձաններից, որոնք թվագրվում են մեր թվականությունից առաջ երկրորդ հազարամյակի վերջերին և առաջին հազարամյակի սկզբներին, անեծք-օրհնանքների նմուշների օգտագործմամբ հատկապես աչքի են ընկնում շինարարական բովանդակությամբ արձանագրությունները։

Դրանք, մեծ մասամբ, ոճաբանական կառուցվածքով բաղկացած են երեք գլխավոր մասերից. ա) նախաբանից. բ) միջնամասից և գ) վերջաբանից: Բովանդակությամբ նախաբանները սովորաբար լինում են շինարար թագավորի տիտղոսավորումն ու սերնդաբանությունը (Ադադնիրարի, թագավոր ամենակալ, թագավոր հզոր, թագավոր Ասորեստանի, որդի Արիք-Դեն-Իլուի՝ թագավոր Ասորեստանի, որդի Էնլիլնիրարի՝ թագավոր Ասորեստանի). միջնամասերը կազմում են արձանագրության բուն բովանդակությունը, այսինքն՝ նվիրված են թագավորի շինարարական գործունեության նկարագրությանը, իսկ վերջնամասերը՝ սովորաբար, մաղթանքի և անեծքի բանաձևեր են։ Ընդ որում, մաղթական բանաձևերը հիմնականում պատգամներ են ուղղված գալիք թագավորներին, տվյալ հուշարձանը պահպանելու և նորոգելու բուն ակնկալիքներով («Ինձնից հետո եկող գահաժառանգը, ծովապատնեշը փլելու դեպքում, պարտավոր է նորոգել և իմ կոթողն ու պատվանդանը իր տեղը դարձնել: Այն ժամանակ Աշուրն ու Ադադը նրա աղոթքը կլսեն»)։ Իսկ անեծքներն ուղղված են բոլոր նրանց և այն թագավորներին, ովքեր կհանդգնեն ոչնչացնել տվյալ հուշարձանն ու շինարար թագավորի անունը («Նա, ով ոչնչացնի իմ կոթողն ու իմ անունը, թող Աշուրը, իմ տերը, կործանի նրա կարգը, թող Ադադը իր չարիքի կայծակով կործանի նրա երկիրը և թող նա սով բերի նրա երկրին», ARAB I 32)։

Հարկավ, ոչ բոլոր շինարարական արձանագրություններն են ավարտվում նման վերջաբանով։ Լինում են կամ սոսկ գալիք թագավորին ուղղված մաղթական բանաձևով կամ էլ սոսկ անեծքի բանաձևով ավարտվող արձանագրություններ, կամ, որ քիչ է պատահում, մաղթանքի ու անեծքի իսպառ բացակայության դեպքեր։ Այդուհանդերձ, բնորոշն ու տարածվածը նշված կառուցվածքային սխեման է։

Մանրամասնությունների մեջ չմտնելու համար նշենք միայն, որ ասուրա-բաբելական արձանագրություններում մաղթանք-անեծքները հիմնականում կիրառվում են տվյալ շինարարական, պաշտամունքային կամ մշակութային հուշարձանի, ինչպես նաև

արձանագրության հեղինակ թագավորի անվան հիշատակը պահպանելու նպատակով:

Այսպես.

Ադադնիրարի 2-րդը հիմնովին վերանորոգելով և ընդլայնելով Քուլայի տաճարը, նրա վրա կանգնեցնում է հուշասյուն՝ արձանագրությամբ, որ ավարտվում է հետևյալ ցանկության խոսքերով. «Թող ապագա արքան վերականգնի նրա (տաճարի —Ս. Հ.) ավերակները և իմ հուշասյունը վերադարձնի իր տեղը: (Այն ժամանակ) Աշուրը և Քուլան կլսեն նրա աղոթքները: Բայց եթե մեկը ոչնչացնի իմ անունը և հուշասյունը, թող Աշուրն ու Քուլան վերացնեն նրա իշխանությունը և ոչնչացնեն նրա անունն ու ժառանգներին երկրից» (ARAB I 116, ընդգծումներն իմն են—Ս. Հ.): Աշուրնասիրպալը ջրանցք է անցկացնում և ապարանք է շինել տալիս: Այդ առթիվ կանգնեցրած արձանագրության կոթողի մեջ նա իր բարի ու չար ցանկության խոսքերն է ուղղում գալիք թագավորներին:

«Թող ապագա արքան,—գրում է նա,—վերականգնի սրա ավերակները, թող վերադարձնի իմ անունն ու արձանագրությունն իր տեղը: (Այնժամ) Աշուրը՝ մեծ տերը և Իշտարը՝ պատերազմների և մենամարտերի տիրուհին, կլսեն նրա աղոթքները: Բայց ով ջնջի իմ անունը, թող Աշուրն ու ...(՞) ցասումով նայեն նրան, ոչնչացնեն նրա թագավորությունը, խլեն նրանից գահը, նրան կապկապած թշնամու առաջ դնեն և ջնջեն նրա անունն ու ժառանգներին աշխարհից» (ARAB I 186, ընդգծումներն իմն են—Ս. Հ.):

Արիք Դեն Ըլուն տաճար է շինել տալիս, հուշասյուն կանգնեցնում արձանագրությամբ և գալիք թագավորներին ավանդում դրանք քանդվելու դեպքում վերականգնել, հուշասյունը յուղով օծել, դրան հաճախ զոհ մատուցել և այն իր տեղը դարձնել: «Եվ Շամաշը միշտ կլսի նրա աղոթքները»: Իսկ «ով որ իմ հուշասյունը ջարդի, փորձի այն ջարդել՝ իմ Շամաշը, իմ տերը թող կործանի նրա թագավորությունը և սով բերի նրա երկրին» (ARAB I 25, ընդգծումն իմն է—Ս. Հ.):

Աշուրնասիրպալը Իշտարի տաճարը վերականգնելով դնում է հուշասյուն արձանագրությամբ, որն ավարտվում է գալիք թագավորներին ուղղված հետևյալ ցանկություններով:

«Օ՜, դո՛ւ, ապառնի արքա թագավորների մեջ... երբ դու տեսնես այս պատկերը (կոթողը—Ս. Հ.) վերականգնիր եղած ավերածու-

թյուններ և այն մի գրի արկից անպաշտպան տեղում: Դու չպետք է ջնջես իմ անունը, որ արձանագրված է (դրա վրա), բայց դու կարձանագրես քո սեփական անունն իմ անվան կողքին և կվերականգնես այն իր տեղում և կվերականգնես այս տաճարի ավերակները: (Այնժամ) Աշուրը՝ մեծ տերը, Շամաշը՝ երկնքի և երկրի դատավորը, և Իշտարը՝ Կիդմուրիի թագուհին, կլսեն նրա աղոթքները և անսպառ կերկարացնեն նրա օրերը: Թագավորների պատերազմում, ռազմի դաշտում նրանք կկատարեն նրա սրտի բոլոր ցանկությունները: Իսկ ով ջնջի իմ անունը և արձանագրությունը և իր սեփականը գրի (դրա տեղում) կամ տանի այս հուշարձանը և մի այլ տեղ դնի, կամ ջրի մեջ գցի, կամ կրակի մեջ այրի, կամ հողով ծածկի, կամ գնդանում պահի, թող Աշուրը՝ մեծ տերը և Ադադը՝ երկնքի և երկրի տիրակալը, և Այրան (Գիրա)՝ փոթորկի և ավերածությունների աստվածը, ոչնչացնեն նրա թագավորությունը, խլեն նրա գահը, շղթայակապ անեն նրան թշնամու առաջ, կարիք, սով և քաղց առաջացնեն նրա երկրում և ջնջեն նրա անունն ու ժառանգներին երկրից» (ARAB I 192—193, ընդգծումները իմն են—Ս. Հ.) և այլն:

Ինչպես պարզ երևում է բերած օրինակների ընդգծված տողերից, թագավորների մտահոգության առարկան այլ բան չէ, քան իրենց շինած ու վերականգնած տաճարների, բարձրացրած կոթող-արձանագրությունների խնամքն ու պահպանությունը, ինչպես նաև իրենց անվան ու հիշատակի անձեռնմխելիությունն ու պահպանությունը: Եվ իրենց այդ բաղձանքն իրագործելու համար նրանք վկայակոչում են ցանկության բարի և չար խոսքերը՝ բարեմաղթությունններն ու անեծքները, զուգադրում իրենց նպատակներին, ապավինելով նրանց հմայական ներգործուն զորությանը, իբրև հմայական պահպանության ամենազոր միջոցի: Կիրառական նման դեր է վերապահված ասուրա-բաբելական արձանագրությունների գրեթե բոլոր մաղթանք-անեծքներին:

5. Ուրարտական արձանագրությունները, որոնք գրության ձևերից բացի, հեթիթական և ասուրա-բաբելական գրչության հին արվեստից ժառանգեցին նաև ոճա-արտահայտչական ավանդները, իրենց մեջ պահպանել են անեծքի, մասամբ և օրհնանք-բարեմաղթության նմուշներ:

Անեծքներն ուրարտական արձանագրություններում նույն նպատակով են օգտագործվել, ինչ ասուրա-բաբելականում, այսինքն՝ շինարարական, կրոնական, մշակութային հուշարձանները

պահպանելու համար։ Ուրարտական սեպագիր քարակոփ արձանագրությունները ուրարտական գրության ձևավորման վաղ այգաբացից սկսած (9-րդ դար մ. թ. ա.) մինչև արևամուտը (6-րդ դար մ. թ. ա.) ոճաբանական կառուցվածքով ենթարկված են, սակավ բացառությամբ, տրաֆարետային միասնական ձևերի[50]։ Դրանք պայմանավորված են մեծ մասամբ արձանագրությունների բովանդակությամբ։ Հաղթանակներին նվիրված արձանագրությունները, օրինակ, ձևաբանորեն բաղադրվում են կառուցվածքային երեք միավորների. նախաբանի, միջնամասի և վերջաբանի։ Բովանդակությամբ նախաբանները աստվածներին ուղղված դիմումներ են կամ նվիրաբանական խոսքեր։ Միջնամասերը կազմում են արձանագրությունների բուն բովանդակությունը, իսկ վերջաբանները կամ անեծքներ են, կամ էլ թագավոր հեղինակի անվան հիշատակություն՝ տիտղոսավորմամբ ու ծննդաբանությամբ։ Նախաբաններն ու վերջաբանները, սովորաբար, քարացած բանաձևեր են, թագավորների անունների փոփոխությամբ։ Տիպաբանական-կառուցվածքային այս բաղադրիչները առանձին կամ տարբեր հարակցումներով երևան են գալիս նաև շինարարական և պաշտամունքային բովանդակությամբ արձանագրություններում։ Անկախ այդ ամենից, անեծք պարունակող ուրարտական սեպագիր արձանագրություններում, անեծքով, սովորաբար, բոլորվում է արձանագրության բովանդակությունը։ Անեծքները ճնշող մեծամասնությամբ դրվում են իբրև վերջաբան, որը և պայմանավորում է նրանց հմայական-կիրառական դերը։ Անեծքը սեպագիր արձանագրություններում առհասարակ գրության բովանդակության հետ ներքին կապ ու աղերս չունի։ Նրա առկայությունը կամ բացակայությունը ոչինչ չի ավելացնում կամ պակասեցնում արձանագրության բուն բովանդակությանը. այն անկախ մի միավոր է, իր հմայական ինքնուրույն դերով և սոսկ արտաքուստ—ձևաբանորեն է աղերսվում արձանագրությանը։

Այսպես հատկապես ռազմական հաղթարշավներին նվիրված բոլոր արձանագրությունների անեծքները, ուր վերջիններս ուղղված են սոսկ տվյալ արձանագրությունը ոչնչացումից պահպանելու նպատակին։ Իսկ այդ նպատակը թելադրված է այն երկյուղով, թե գրավոր հիշատակարանի ոչնչացմամբ մեկ ուրիշը կարող է դիտավորյալ իրեն վերագրել այն մեծագործությունները, որոնց

[50] УКН 93 և հաջ.։

միակ վկան է մնում տվյալ արձանագրությունը: Ուստի և արձանագրության հեղինակ հանդես եկող միապետ թագավորը վերջում դնում է անեծքը, սպառնալիքով, թե «Ով այս արձանագրությունը ջարդի, ով փախցնի, ով թաղի, ով ջուրը գցի, ով տեղափոխի, ով արևից թաքցնի, ով որևէ մեկին ստիպի դրանք անել, ասի՝ «Ոչնչացրու» (արձանագրությունը), ով ուրիշին ասի՝ «Ես եմ արել» (այդ գործերը), թո՛ղ նրան Խալդին, Թեյշեբան, Շիվինին չթողնեն երկրի վրա (ինչպես նաև) ոչ (նրա) անունը, ոչ (նրա) սերմը» (УКН 134, № 20):

Գրեթե նույն բովանդակությունն ունեն Իշպուինիի որդի Մենուայի անեծքները իր կատարած ռազմական ու շինարարական մեծագործությունների առնչությամբ:

«Մենուան ասում է. ով այս արձանագրությունը ոչնչացնի, ով ջարդի, ով որևէ մեկին ստիպի այդ անել, ով ուրիշին ասի՝ «Ես եմ նվաճել Լուխիունի քաղաքը», թո՛ղ Խալդի, Թեյշեբա, Շիվինի աստվածները, (բոլոր) աստվածները ոչնչացնեն նրան արևի տակից»[51].

Այսպես և ուրարտական մյուս թագավորների՝ Մենուայի որդի Արգիշտիի (УКН, № 127 VIII № 128 A_3), Սարդուրի 2-րդի (УКН № 156, АЦ+АI, № 158), Ռուսա 2-րդի (УКН №№ 280, 281) և ուրիշների անեծքները:

Եթե ռազմական հաղթություններին նվիրված արձանագրություններում անեծքն ուղղված է սոսկ գրավոր հիշատակարանը պահպանելու նպատակին, ապա շինարարական և պաշտամունքային արձանագրությունների մի մասում անեծքները կիրառված են նաև տվյալ կառույցների (կոթողներ, ջրանցքներ, տաճարներ), ինչպես և դրանց հետ առնչվող գույքի, ունեցվածքի (այգի, մատաղացու եզներ և այլն) պահպանության նպատակով: Այս կարգի անեծքները ավելի շատ են մերձենում արձանագրությունների բուն բովանդակությանը: Այսպես, Իշպուինին Մուսասիրում կառուցում է Խալդի աստծուն նվիրված տաճար, առջևը կոթող կանգնեցնում: Այդ առթիվ գրված արձանագրության մեջ անեծքն ուղղված է կոթողը ջարդել ցանկացողին:

«Ով այս կոթողը այստեղից դուրս գցի, ով ջարդի, ով մեկին ստիպի այդպես անել, ասի՝ «Գնա, ոչնչացրու», թող Խալդին, Թեյշեբան, Շիվինին, Արդինի (Մուսասիր) քաղաքի աստվածները բնաջնջեն (նրա) սերմը երկրի երեսից» (УКН № 19):

---

51 УКН, № 30. տե՛ս նաև №№ 36, 40, 43, 44, 45, 47, 57, 61, 92 С և այլն:

Մենուան Խալդի աստծու պատվին պաշտամունքային արձանագրություն է կանգնեցնում և դրա հակառակ երեսին թողնում հետևյալ հիշատակարանը.

«Մենուան, Իշպուինիի որդին ասում է. Խալդի աստծուն ես մի հոյակապ (՞) արձանագրություն կանգնեցրի: Arşuniuini քաղաքի այն արձանագրությունը, այն կոթողը (՞) և այն արձանագրությունը, (որոնք) ես այստեղ (՞) կանգնեցրի, ով դրանք ոչընչացնի, ով ջարդի, ով թաքցնի, ով ուրիշին ստիպի անել դրանք, թող Խալդի, Թեյշեբա, Շիվինի աստվածները (և) երկրային աստվածությունները (՞) (կամ երկրի աստվածը) բնաջնջեն նրան և նաև (նրա) սերմը երկրի երեսից» (УКН № 99): Այսինքն, անեծքով ապահովում է կանգնեցրած արձանագրության անվտանգությունը:

Սարդուրի 2-րդի Արմավիրից հայտնաբերված մի կիսատ արձանագրություն, որ հավանաբար նվիրված է ամրոցի կառուցմանը, ունի ամրոցի անվտանգությունն ապահովող հետևյալ անեծքը.

«Սարդուրին ասում է. Ով այս ամրոցը լքի, ով քանդի, ով այս կերտվածքներից որևէ բան վնասի (՞), ով այս կերտվածքներից որևէ բան փչացնի, ով այս արձանագրությունը ոչնչացնի, ով ջարդի, ով թաքցնի, ով ուրիշին ստիպի այդ անել, ասի «Գնա, ոչնչացրու», թող Խալդի, Թեյշեբա, Շիվինի աստվածները, (բոլոր) աստվածները նրան ամբողջ սերնդով բնաջնջեն արևի տակից» (УКН № 169):

Մենուայի Վանում գտնվող մի արձանագրությունում, որ հավանաբար գրվել է զոհ մատուցելիք անասուններին փարախ շինելու կապակցությամբ, ասված է.

«Մենուան ասում է. Ով (մատաղացու) եզներին այդտեղից տանի, ով դրանց որևէ այլ տեղ տանի, ով անասուններին այդտեղից հափշտակի, ով այս արձանագրությունը ջարդի, ով ուրիշին ստիպի այդ բաներն անել, թող Խալդի, Թեյշեբա, Շիվինի աստվածները նրան բնաջնջեն արևի տակից» (УКН № 63):

Ինչպես տեսնում ենք, երկու դեպքում էլ անեծքը հանդես է գալիս իբրև նյութական արժեքները պահպանելու միջոց, լինի այդ արժեքը մշակութային հուշարձան, թե անշարժ կամ շարժական ունեցվածք, միևնույն է, կարևորն այն է, որ խոսքի հմայական զորությունը, որի արտահայտություններից մեկն է անեծքը, տվել է հասարակական մեծ արժեք, և այնքան խորն է եղել այդ հավատալիքը, որ անեծքը գրանցվել է գրավոր և պարտադրվել գալիք

սերունդներին։ Սակայն այստեղ էական է մեկ ուրիշ հանգամանք. անեծքները ուրարտական սեպագրերում մեծ մասամբ վերաբերում են արձանագրությունների պահպանությանը և քիչ չափով միայն գույքին կամ ունեցվածքին։ Ընդ որում, գույքապահպան անեծքներում ևս գրեթե պարտադիր հիշատակվում է նաև տվյալ արձանագրության պահպանությունը (տե՛ս УКН №№ 63, 169)։

Այս դեպքում, ըստ երևույթին, առկա է կուլտուր-պատմական մեկ ուրիշ երևույթ, այն է՝ գրի, գրավոր հիշատակարանի պաշտամունքը հնում։ Ինչպես ամեն մի կարևոր հայտնագործություն նախապատմական կամ վաղ պատմական ժամանակներում իր արդյունքով դառնում էր իր իսկ հայտնաբերած մարդու համար պաշտամունքի առարկա, այնպես էլ գիրն ու գրությունը։ Եվ այդ, գալով միանալով արդեն խոսքի պաշտամունքին, տալիս է մի նոր որակ՝ **գրավոր խոսքի հմայական զորության հավատ** և գրավոր խոսքի պաշտամունք, որ այնուհետև տեսնում ենք գրեթե բոլոր հնագույն կուլտուրական ժողովուրդների կենցաղում։ Գրի կամ գրավոր խոսքի պաշտամունքի բացահայտ դրսևորումներ են ուրարտական մշակույթում պաշտամունքային-նվիրաբերական արձանագրությունները։ Դրանք, անկախ իրենց բովանդակությունից, նվիրաբերվում են աստվածներին, հատկապես ուրարտական գերագույն աստվածությանը՝ Խալդիին։ Այսինքն՝ արձանագրությունը, գիրը, իբրև նվիրական բան, նվիրաբերվում է աստվածներին, որ հավանաբար սկզբնապես գերբնական զորությունների պատվին կոթողներ կանգնեցնելու ավանդի վերաիմաստավորումն է, գրի ու գրության հետ առնչված։ Դրանք, սովորաբար, սկսվում են հետևյալ և նման կարգի բանաձևով. «Խալդի աստծուն, տիրոջը, Սարդուրիի որդի Իշպուինին և Իշպուինիի որդի Մենուան բարձրացրին այս արձանագրությունը» (УКН №№ 21, 22, 24 տե՛ս նաև №№ 65, 127 A_3, 156 AII+AI)։ Այդ կարգի արձանագրությունների մեջ պատահում են այնպիսիները, որոնք բովանդակությամբ շատ սեղմ են ու աղքատ՝ սոսկ նվիրաբերման փաստի ու դրանից ակնկալվող ցանկալի դրական հետևանքի հիշատակմամբ։

Այսպես. Վանում Խալդի աստծուն նվիրված արձանագրությունն ունի հետևյալ բովանդակությունը.

«Խալդի աստծու զորությամբ, Խալդի աստծուն՝ տիրոջը, Իշպուինիի որդի Մենուան այս արձանագրությունը բարձրացրեց»։ Սրան հաջորդում է նվիրաբերող թագավորի՝ Մենուայի մակդրավոր տիտղոսավորումը. «Խալդի աստծու մեծությամբ Իշպուինիի որդի Մե-

սատն. հզոր թագավորը, մեծ թագավորը, Բիայնիլի երկրի արքան. Տուշպա քաղաքի կառավարիչը» (УКН № 101)։

Գրեթե նույն բովանդակությունն ունեն Մենուայի Խալդիին (УКН №№ 102, 105. 107, 108), Թեյշեբային (№ 103), Էլիպուրիին (№ 104), Խալդիին և Հուբային (№ 106) նվիրված արձանագրությունները։ Այդպիսիք են նաև Իշպուինիի որդի Մենուայի՝ Շիվինի աստծուն (УКН № 93), Խալթուինի աստծուն (№ 94) նվիրած արձանագրությունները, որ, սակայն, արձանագրող թագավորի տիտղոսավորմանը փոխարինել են մաղթական սեղմ բանաձևեր։ Այս կարգի սեղմ բովանդակությամբ արձանագրությունները, ըստ էության մեկ նպատակ են ունեցել. արձանագրությունը, իբրև սուրբ և նվիրական հիշատակ, նվիրաբերել աստվածներին, որոշ դեպքերում բարիքի փոխհատուցման շեշտված ակնկալիքներով։ Այն մաղթանքները, որ հաջորդում են նվիրաբերման բանաձևերին («Թող Շիվինի աստծուց Մենուային՝ Իշպուինիի որդուն (և) Ինուշպուային՝ Մենուայի որդուն կյանք, ուրախություն, մեծություն լինի» УКН № 95. տե՛ս նաև № 96) հենց վկայում են նման ակնկալիքի մասին։ Իսկ Ռուսայի որդի Արգիշտիի հետևյալ արձանագրությամբ (УКН № 276) այդ ցանկությունը արտահայտված է բացահայտ։

«Խալդի աստծուն՝ տիրոջը, Ռուսայի որդի Արգիշտին այս արձանագրությունը բարձրացրեց իր **կենաց համար**» (ընդգծումն իմն է—Ս. Հ.)։ Այսինքն՝ արձանագրությունները նույն նպատակով են նվիրաբերվել աստվածություններին, ինչ տաճարներն ու պաշտամունքային այլ կերտվածքները, զենքերն ու զրահները (որ ընդունված սովորույթ էր ուրարտական թագավորների շրջանում), զոհաբերվող մարդիկ ու անասունները, որոնք իրենց հերթին օժտված են գերբնական հմայական զորությամբ և հենց դրանով՝ աստվածներին նվիրաբերվելու արժանի։

Այդ, գրի ու գրավոր հուշարձանների նվիրական լինելու հանգամանքը առավել է զորացնում գրավոր ձևով արտահայտված անեծքների և բարեմաղթությունների հմայական ազդեցության հավատալիքը։ Ուստի և պատահական չէ, որ վաղնջական գրավոր հուշարձաններում (հեթիթական, ասուրա-բաբելական և ուրարտական սեպագիր արձանագրություններ) առատորեն երևան են գալիս մարդկային քաղաքակրթական մտքի այդ նախնական պտուղները։ Հարկավ, մարդկային գրավոր աշխույժի այգաբացին անեծք-օրհնանքների հանդես գալը գրավոր հուշարձաններում մի կողմից խոսում է կյանքում նրանց խաղացած կրոնա-հմայական բացա-

ուկ գերի մասին, մյուս կողմից, սակայն, նրանց գրավոր գրանցումը առավել է հզորացնում ու մեծացնում դրանց ազդեցության հմայական զորությունը վաղ պատմական մարդու հավատալիքներում: Դրանցման փաստն իսկ վկայում է դրանց ազդեցության ուժը առավել զորեղ ու մշտական դարձնելու մասին:

Ուրարտական արձանագրություններում, անեծքներից բացի, թեպետ քիչ թվով, հանդիպում են նաև օրհնանք-բարեմաղթություններ, որ այնքան առատ են ու սովորական ասուրա-բաբելական գրավոր աղբյուրներում[52]:

Դրանք հանդես են գալիս նվիրաբերական արձանագրություններում, և, ինչպես ասվել է արդեն, սրբազան նվիրաբերման առթիվ աստվածներից ակնկալվող փոխհատուցման ցանկությունն են իրենց մեջ մարմնավորում բարեմաղթությամբ:

Այսպես. Իշպուինիի արձանագրություններից մեկում վկայված է, որ երբ, իր որդի Մենուան և Մենուայի որդի Ինուշպուան Տուշպայի առաջ կառուցել են Խալդի աստծուն նվիրաբերված տաճար և զոհեր են մատուցել նրա պատվին: Դրան հաջորդում է հետևյալ մաղթական բանաձևը, որով և ավարտվում է արձանագրությունը.

«Թող Խալդի աստծուց, թող Խալդի աստծու դարպասներից կյանք (ու) մեծություն լինի Սարդուրիի որդի Իշպուինիին, Իշպուինիի որդի Մենուային և Մենուայի որդի Ինուշպուային» (УКН № 18):

Խութուինի աստծու պատվին Մենուան արձանագրություն է կանգնեցնում. այդ փաստի հիշատակությանը հաջորդում է ներքոբերյալ մաղթական բանաձևը.

«Թող Խութուինի աստծուց Իշպուինիի որդի Մենուային (և) Մենուայի որդի Ինուշպուային կյանք, ուրախություն, մեծություն լինի» (УКН № 94):

Արգիշտիի որդի Սարդուրին Արմավիրում խաղողի այգի է տնկում և այլ գործեր կատարում (հավանաբար Խալդի աստծու

---

52 Գ. Մելիքիշվիլին ժխտում է ուրարտական արձանագրություններում օրհնանք-բարեմաղթությունների առկայությունը (տե՛ս նրա «Урартские клинообразные надписи», էջ 107): Ըստ երևույթին ասուրա-բաբելական արձանագրություններին յուրահատուկ անեծքի և օրհնանքի զուգակից գործածության ավանդի ուրարտական սեպագրերում բացակայելու հանգամանքն է ստիպել գիտնականին այդպես պնդելու: Մինչդեռ նվիրաբերական արձանագրությունների մի փոքր մասը ավարտվում է բացահայտ մաղթական բանաձևերով (տե՛ս УКН №№ 18, 94, 95, 171, 172, 276 և այլն), որոնց վրա ըստ երևույթին սույն հեղինակը ուշադրություն չի դարձրել:

պատվին)։ Արձանագրությունն ավարտվում է հետևյալ մաղթանքով.

«Թող Խալդի աստծուց, Խալդի աստծու դարպասներից Արգիշտիի որդի Սարդուրիին կյանք, մեծություն, ողորմածություն, հզորություն, ուրախություն, uaniše, երջանիկ, ուրախ օրեր siprugini լինի» (УКН № 172, տե՛ս նաև № 171)։

Ուրարտական այս մաղթանքները, անշուշտ, չունեն պահպանական այն նշանակությունը, ինչ անեծքները, կամ ասուրա-բաբելական արձանագրությունների օրհնանք-մաղթանքները։ Ասուրա-բաբելական թագավորական արձանագրություններում օրհնանքները մեծ մասամբ կոչեր են, ուղղված ապագա թագավորներին տվյալ շենքն ու կառույցը պահպանելու և վերանորոգելու համար[53], այսինքն՝ ունեն պահպանական բնույթ և գործածվում են անեծքների զուգահեռ։ Մինչդեռ ուրարտականում մաղթանքներն օգտագործվում են տվյալ նվիրաբերության կամ բարեգործության դիմաց կյանք ու բարիքներ ստանալու հույսով։ Այստեղ մաղթանքի և՛ հեղինակը, և՛ ակնկալվող ներգործության առարկան ինքը՝ բարեմաղթող թագավորն է։ Իսկ թագավորական խոսքին, ինչպես հայտնի է, հնում գյութական մեծ զորություն էր վերագրվում, հետևաբար և նրա տված անեծքն ու մաղթանքը, ըստ հին հավատալիքների, օժտված էին կատարման անկասելի ուժով։

Ուրարտական միապետների գերբնական աստվածային զորությունն են վկայում գերագույն աստվածությանն ուղղված արձանագրությունների սկզբնամաս-բանաձևերը, ուր թագավորներն իրենց հորջորջում են Խալդի գերագույն աստծու զորությամբ օժտված («Խալդյան զորությամբ Մենուան», կամ «Խալդյան մեծությամբ Մենուան» «Խալդյան մեծությամբ Սարդուրին»), կամ էլ իրենց կատարած գործերը աստծուն են վերագրել, ըմբռնելով իբրև աստվածային գործողություններ։ Այսպես. ուրարտական գրեթե բոլոր միապետները (և ոչ միայն ուրարտական) իրենց ռազմական գործողությունները համարել են Խալդի գերագույն աստծու կատարած գործեր։ Այդպես էլ հաճախ սկսում են նրանք իրենց հաղթանակներին նվիրված արձանագրությունները։

«Խալդի աստվածը իր զենքով (արշավանքի) ելավ. նա հաղթեց Ուիտերուխի ցեղին, հաղթեց Լուշա ցեղին, հաղթեց Կատարզա ցեղին։ Խալդին հզոր է, Խալդի աստծու զենքը՝ հզորագույն»

[53] УКН, էջ 108։

(УКН № 21), կամ՝ «Խալդի աստվածը իր զենքով (արշավանքի) եկավ, նա հաղթեց Էրիկուախի երկրին, հաղթեց Լուխիունի քաղաքին, տապալեց (նրանց) Մենուայի առջև: Խալդին հզոր է, Խալդի աստծու զենքը՝ հզորագույն» (УКН № 30): Այդպես և այլուր:

Քանի որ ուրարտական միապետներն հանդես են գալիս իբրև գերագույն աստծու զորությամբ օժտված և նրա կամքի ու գործերի իրագործողներ[54], բնականաբար նրանց խոսքը ևս պետք է օժտված լիներ գերբնական աստվածային զորությամբ, իրագործվելու հմայական հատկությամբ: Այդ հավատալիքն է, անշուշտ, առկա բոլոր արձանագրություններում, և հատկապես այնտեղ, ուր կան անեծքներ կամ մաղթանքներ: Եվ պատահական չէ, որ անեծքները հաճախ դրվել են անմիջապես թագավորների բերանին, իբրև նրանց կողմից արտաբերված հմայական անմիջական խոսքեր (հմմտ. «Մենուան ասում է. ով այս արձանագրությունը ոչնչացնի...» УКН №№ 29, 30, 36, 37, 40, 43, 44, 57, 61) «Արգիշտին, Մենուայի որդին ասում է. ով այս արձանագրությունը ոչնչացնի, ով ջարդի...» և այլն (УКН №№ 127 VIII, 128 A_3, 130): «Սարդուրին ասում է. ով այս արձանագրությունը դեն գցի ով թաքցնի» և այլն (УКН №№ 156 AII+AI, 158), «Ռուսան, Արգիշտիի որդին ասում է. ով այս արձանագրությունը ոչնչացնի, ով ջարդի...» և այլն (УКН №№ 280, 281):

6. Հին արևելյան սեպագիր արձանագրություններից ժամանակագրորեն վերջինը, որ պահպանել է անեծքի և օրհնանքի նմուշներ՝ Դարեհ 1-ինի հին պարսկերեն բեհիսթունյան հուշակավոր տա-

---

54 Միապետ թագավորի աստվածային հմայական զորությամբ օժտված լինելու հայացքը ցայտուն ու որոշակի գծերով դրսևորված է ասուրա-բաբելական գրավոր աղբյուրներում: Դրանց մեջ հաճախ միապետ թագավորը հորջորջվում է իբրև գերագույն աստծու քուրմ: Սալմանասար 3-րդն, օրինակ, իրեն կոչում է «Սալմանասար՝ թագավոր բոլոր ժողովուրդների, Քուրմ Աշուրի, թագավոր հզոր» և այլ տիտղոսներով (ARAB I 201 և այլուր): Թիգլաթպալասար 1-ինը իրեն հռչակում է «Գերագույն քուրմ» տիտղոսով (ARAB II 201): Սարգոնը ևս իրեն անվանում է Աշուրի քուրմ (ARAB II 56) և այլն:

Եթե նման հորջորջումները վկայում են աշխարհիկ թագավորի միաժամանակ հոգևոր գերագույն տիրակալ լինելու պատմական իրողությունը, իսկ հնում, ինչպես հայտնի է, գերագույն քուրմը նաև գլխավոր հմայողն ու կախարդն էր, ապա բնական է, որ գերագույն աստծու (Աշուրի) քուրմ կամ «գերագույն քուրմ» հռչակված թագավորները, բացի թագավորներին առանձնահատուկ հմայական օժտվածությունից, օժտված լինեին նաև գերագույն քրմի հմայական վիթխարի կարողություններով:

բնգրությունն է, որի վրա գտնում են ուրարտական արձանագրությունների ուժական ազդեցություն[55]։

Բեհիսթունյան արձանագրությունը նվիրված է պարսից Աքեմենյան հարստության Վշտասպայի որդի Դարեհ I-ինի արշավանքներին, նրա նվաճած կամ նրան ենթակա երկրներում բռնկված ապստամբությունների ու դրանց դաժան ճնշման պատմությանը։

Արձանագրությունը, հետևաբար, բնույթով հաղթանակների տարեգրություն է, ինչպես այդ կարգի ասուրա-բաբելական և ուրարտական սեպագիր արձանագրությունները։

Դարեհ I-ինի տարեգրությունը բաղկացած է 5 հիմնամասից։ Առաջին մասի սկզբում թագավորը ներկայացնում է իրեն և իր արքայական տոհմը.

«Ես՝ Դարեհս, մեծ թագավորս, արքայից արքան, թագավոր պարսից, թագավոր երկրների, որդին Վիշտասպայի, թոռը Արշամայի, Աքեմենյան։

Խոսում է Դարեհ արքան. Իմ հայրը Վիշտասպան է, Վիշտասպայի հայրը՝ Արշաման է, Արշամայի հայրը՝ Արիյարամնան է, Արիյարամնայի հայրը՝ Գայսպիսն է, Գայսպիսի հայրը՝ Հաքեմանիսն է։

Խոսում է Դարեհ արքան. Այդ պատճառով էլ մենք Աքեմենյաններ ենք կոչվում, հնուց ի վեր մենք փորձված ենք, հնուց ի վեր մեր տոհմերը թագավորներ են եղել։

Խոսում է Դարեհ արքան. Իմ ութ տոհմերը անցյալում եղել են թագավորներ, ես՝ իններորդն եմ, շատ երկար ժամանակներից ի վեր մենք թագավորներ ենք։

Խոսում է Դարեհ արքան. Աուրամազդայի զորության շնորհիվ ես թագավոր եմ, Աուրամազդան ինձ իշխանություն շնորհեց» (Spiegel 3)։

Այնուհետև թվարկվում են Դարեհին ենթակա 23 երկրների անունները, նշվում դրանց Դարեհին հարկատու լինելը։ Ապա՝ այս և հաջորդ բաժիններում պատմվում է Դարեհին տոհմակից Կամբյուզի բարձրացման, նրա նվաճումների, Գաումատա մոգի կողմից նրա իշխանության գրավման և ապա իրեն՝ Դարեհի բարձրացման, այդ անիրավ մոգից օրինական իշխանության նախլման և իր թագավորության հաստատման մասին։ Շարունակությունը արդեն

[55] Տե՛ս УКН, էջ 114։

նվիրված է Դարեհի արշավանքների, նորանոր երկրների նվաճումների և այնտեղ բռնկված ապստամբությունների չարաչար ճնշումների պատմությանը:

4-րդ բաժնից սկսած՝ ամփոփվում են նախորդ բաժիններում պատմվող կռիվների, ապստամբությունների ճնշումների արդյունքները:

Դարեհը մղել է 19 ճակատամարտ, բոլորը շահել է և ապստամբ թագավորներին գերել ու սպանել: Դրանից հետո գալիս է արձանագրության վերջնամասը, որը և հետաքրքրում է մեզ:

Հիշյալ բոլոր փաստերի ու իրադարձությունների մասին պատմելուց հետո Դարեհը դիմում է իրենից հետո եկող թագավորին հետևյալ պահանջներով ու պայմաններով:

«...(Այս տախտակը) կարող է քեզ հայտնել այն, ինչ ես կատարել եմ: Ուստի այս արքունի հրամանը մի՛ թաքցնի, եթե դու այս հրամանը չթաքցնես, այլ նույնը ժողովրդին հայտնես, այնժամ թող Աուրամազդան քո բարեկամը լինի, քո տոհմը (ընտանիքը) թող բազմանա և դու երկար ապրես:

...Եթե դու այս հրամանը թաքցնես և ժողովրդին չհայտնես՝ այնժամ թող Աուրամազդան քեզ սպանի, քո տոհմը բնաջնջի:

...Դու, որ ինձնից հետո այս տախտակը դու պիտի կարդաս, այն, ինչ ես գրել եմ (իմ գրածը) կամ այս պատկերը՝ դու մի ջարդիր, այլ այնքան երկար կապրես դու, պահպանի՛ր այն:

...Եթե դու այս տախտակը կամ այս պատկերը տեսնում ես ու դրանք չես ջարդում, այլ որքան դու դրանց կյանքը երկար պահպանես, այնժամ թող Աուրամազդան քո բարեկամը լինի, թող քո տոհմը բազմանա: Երկար ապրիր և ինչ որ դու կատարես՝ թող Աուրամազդան քո... հաջողի (՞):

...Եթե դու այս տախտակը կամ այս պատկերը, որ տեսնում ես՝ ջնջես, նույնկերպ այդքան երկար թող քո տոհմը մնա անփոփոխ, չպահպանվի, այնժամ թող Աուրամազդան քեզ զարկի, քո տոհմը թող բնաջնջվի, ինչ որ դու գործես՝ թող Աուրամազդան կործանի» (*ընդգծումները իմն են—Ս. Հ.*)[56]:

---

56 Այս անեծք-օրհնանքներին հաջորդում է § 18—19-ը (ըստ Ֆր. Շպիգելի) և արձանագրության վերջին 5-րդ մասը, որ պատմվում է դարձյալ խռովարար ու ապստամբ թագավորների և նրանց պարտությունների մասին, հաղորդումներ, որոնց, ըստ երևույթին, հաջորդել է գալիք թագավորին ուղղված պայմանով անեծք կամ օրհնանք, որ եղծված լինելու պատճառով չի ընթեռնվել (հմմտ. 4-րդ մասի § 19, էջ 37, 5-րդ մասի § 3, էջ 39, § 6, էջ 41):

Այսպես, տեսնում ենք, որ Դարեհ առաջնի բեհիսթունյան տարեգրության եզրափակիչ անեծքի և բարեմաղթության բանաձևերը միևնույն նպատակն են հետապնդում, ինչ ասուրա-բաբելական և ուրարտական արձանագրությունների համապատասխան բանաձևերը։ Այսինքն, դրանք ուղղված են աշխարհակալ Դարեհի կատարած գործերի հիշատակի պահպանությանը, արձանագրության և բարձրաքանդակների անձեռնմխելիությանը։ Այլ կերպ ասած՝ դրանք հետապնդում են պաճպանական նպատակներ[57]։

Տեսնում ենք, դարձյալ, որ Դարեհի հին իրանական սեպագիր տարեգրությունը գրեթե միևնույն կառուցվածքն ունի, ինչ ասուրա-բաբելական արձանագրությունները. երկուստեք ավարտվում են գալիք թագավորներին ուղղված պայմանով անեծք-օրհնանքի բանաձևերով։ Բացի այդ, հին իրանական անեծք-օրհնանքների բանաձևերը, ասուրա-բաբելականի նման երբեմն ընդմիջարկվում են պատմական հիշատակություններով։ Ուրիշ կերպ չէր էլ կարող լինել, քանզի բեհիսթունյան տարեգրության հին պարսկերեն սեպագիր օրինակի կողքին փորագրված են նույնի ասուրերեն և էլամերեն օրինակները, որն ինքնին խոսում է ասուրա-բաբելական գրական ազդեցության փաստի մասին։

Անեծքներին և օրհնանք-բարեմաղթություններին ինքնին առանձնահատուկ հմայական զորության վրա, այդպիսով, ասուրա-բաբելական, ուրարտական և հին պարսկական թագավորական

57 Ինչպես այս բեհիսթունյան, այնպես էլ Դարեհ 1-ինի պերսեպոլիսյան արձանագրությունների մեջ հանդիպում են նաև գրական-բանահյուսական այլ ժանրերի տարրեր, որոնք հետագայում, արևելյան ժողովուրդների գրականության մեջ զարգացած, լայն տարածում և ընդունելություն գտան։ Այդպիսիք են, օրինակ, խրատներն ու բարոյախոսությունը, որոնց նախանմուշներից են գալիք թագավորներին ուղղած Դարեհ 1-ինի հետևյալ բարոյախոսական պատգամները. «Դո՛ւ, որ ինձնից հետո պիտի դառնաս թագավոր՝ այն մարդը որ դրուժան (ստախոս) է կամ խռովարար (՛), նրա նկատմամբ բարեկամարար մի՛ խորհիր, նրան խիստ պատժով պատժիր (՛)», (Spiegel, էջ 35)։ Ահա և Դարեհ 1-ինի Պերսեպոլիսի Նախշի Ռուստամ կոչված արձանագրության վերջնամասը (գրված ըստ Շպիգելի՝ Դարեհ 1-ինի թագավորության վերջին տարիներին, մոտավորապես 490 թ. մ. թ. ա.), որն խրատական խոսք է Աուրամազդային վերագրված. «Ո՛վ մարդ, Աուրամազդայի պատվերն այս է. չարիք մի՛ խորհիր, ուղիղ ճանապարհից մի՛ խոտորվիր, մի՛ մեղանչիր (՛) (Spiegel, էջ 53)։ Նշված և այլ ժանրերի գրական սկզբնավորումն, սակայն, պետք է փնտրել ոչ այլուր, քան այս նախնական գրավոր հուշարձաններում։ Այս սուղ ու մյուս տողերով արձանագրությունների մեջ խրատների ներթափանցումը վկայում է հին պարսիկների բանավոր ավանդության մեջ նրանց խիստ տարածված լինելու մասին։

արձանագրություններում, հին հավատալիքներով ավելանում է ևս երկու կարևոր զորացնող հանգամանք. մեկը՝ անեծք-օրհնանքները թագավորի կողմից անելու պարագան է, թագավոր, որ օժտված է խոսքի ու գործի հմայական անսահմանափակ ուժով, մյուսը՝ անեծք-օրհնանքների գրանցվելու, գրավոր կերպարանք, հետևաբար և հմայական նոր ուժ ու երանգ ստանալու իրողությունն է: Այս երկու կարևոր գործոնի շնորհիվ էլ, ահա՛, հմայական պարզ խոսքերը՝ անեծք-օրհնանքները հին սեպագիր արձանագրություններում ձեռք են բերում կրոնա-հմայական բացառիկ արժեք, դառնում հոգևոր ու նյութական մշակույթի նմուշների պահպանության զորավոր միջոցներ և հարատևող կենդանի հավատալիքների զորությամբ՝ պարտադրվում գալիք սերունդներին:

Այս միևնույն ավանդական սովորույթն, այնուհետև, անցնում է ասորեստանցիներին և ուրարտացիներին հաջորդած մյուս ժողովուրդների գրական կենցաղին, մասնավորապես հայերին, որոնք իրենց գիրն ու գրականությունն ստեղծելով քրիստոնեական շրջանում, այդ ավանդը շարունակեցին պահպանել իրենց գրավոր հուշարձաններում նոր իմաստավորմամբ, կրոնական նոր հավատալիքներով ու ըմբռնումներով զորացած:

Բ. ՎԻՄԱԳԻՐ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

7. Հայ միջնադարյան վիմագիր արձանագրությունները, որոնք սկզբնավորվում են 5-րդ դարից ի վեր, ասուրա-բաբելականի և ուրարտականի նման հաճախ ավարտվում են անեծքի կամ օրհնանք-մաղթանքի ավանդական բանաձևերով: Նկատենք, նախ, որ անեծքով կամ օրհնանք-մաղթանքով ավարտվում են մեծ մասամբ շինարարական և նվիրատվական արձանագրությունները, որոնք նվիրված են տվյալ նյութական-մշակութային հուշարձանի (եկեղեցի, ժամատուն, մատուռ, խորան, խաչքար, բերդ և այլն) շինարարությանը, այն կառուցել տվողին, ներդրած նյութական միջոցներին, տվյալ վանքին կամ եկեղեցուն արված նրա նվիրատվություններին (գյուղեր, կալվածքներ, անշարժ կամ շարժական գույք, եկեղեցական հանդերձանք և սպասքեղեն, ձեռագրեր և այլն) և ի վերջո այդ բոլորի դիմաց նվիրատվողին կամ նրա հարազատների հոգու փրկության դիմաց, իբրև փոխհատուցում, տարվա որոշ ծիսական օրերին ժամ կամ պատարագ մատուցելու պարտադիր պահանջներին:

Անեծքը կամ օրհնանքը, որոնցով սովորաբար բոլորվում է արձանագրությունը, մեծ մասամբ ուղղված է նվիրատվական շենքերը, կալվածքներն ու գույքը եկեղեցուց խլողին կամ օտարողին և տվյալ հուշարձանը շինողի ու գույք նվիրատվողի և նրա հարազատների հոգու փրկության համար ժամ կամ պատարագ մատուցելուց հրաժարվողներին:

Ոճաբանական կառուցվածքով՝ շինարարական և նվիրատվական վիմագիր արձանագրությունները հիմնականում բաղկացած են. I շինողի կամ նվիրատուի տոհմագրությունից և հասարակական դիրքի հիշատակումից. II շինարարական կառուցվածքի կամ նվիրաբերած գույքի և կալվածքների (այդ երկուսը երբեմն միասին վերառած) հիշատակումից և թվարկումից. III շինարարության կամ նվիրատվության նպատակի հիշատակությունից. IV նվերներն օտարողին, նպատակը չկատարողին կամ կատարողին ուղղված անեծքի, օրհնանքի, կամ, որ հաճախ է պատահում, և՛ անեծքի, և՛ օրհնանքի բանաձևերից:

Ոճաբանական կառուցվածքի այս միասնությունը, հարկավ, միշտ նույնը չի մնում, երբեմն տարբեր արձանագրություններում խախտվում է ու փոփոխվում, բայց բնորոշն ու առանձնահատուկը վերոհիշյալն է մնում:

Բերենք մի քանի բնորոշ օրինակ.

1040 թ. Աբլղարիբ Մարզպանը Անիում իր ծնողների և հարազատների համար շինել է տալիս մի հանգստարան, թողնելով ներքոբերյալ արձանագրությունը.

«Ի ՆՁԹ թուականիս ես Աբլղարիբ հայոց մարզպան, որդի Գրիգորո եւ թոռն Ապուղամրի հայոց իշխանաց, թէպէտ եւ անտես էի ի հաւրէ իմէ յաղագս կրսերութեան, այլ հարկեցա ի ծնողական սիրոյն եւ շինեցի զայս հանգըստարան հաւր իմո Գրիգորո եւ եղբաւր իմո Համզէ եւ քեռ իմո Սեդաի եւ շինեցի մենակ: Բ: զաւրբ Ստեփաննոս եւ զաւրբ Քրիստափոր եւ պայման քահանայիցդ այս է. որ զամէն ուրբաթ ի սուրբ Ստեփաննոսն ժամն իմ մաւրն Շուշանա արասցեն եւ պշաբաթն իմ հաւրն Գրիգորո եւ ի սուրբ Քրիստափոր զամէն ուրբաթ իմ քեռն Սեդաի եւ պշաբաթն իմ եղբաւրն (ա)արնէն Համզէի եւ առաջաւորացն ուրբաթին եւ աղցացն ուրբաթանոյն փոխան յարձակաւորքն արասցեն: Ը: աւր: Արդ եթէ ոք ի քահանայից եկեղեցեացդ զայդ ժամդ խափանէ եւ կամ պղերգա եւ ար անցնէ մեղուեալ լիցի ի հաւրէ եւ յորդւո եւ ի սուրբ հոգւոյն եւ ՅԺԸ: Հայրապետացն եւ բաժին նորա ընդ Յուդաի մատնչին առցէ. իսկ կատարիչ գրո ... օհնեալ լիցի» (Օրբելի, Դիվան 1, 33, № 97):

1272 թ. Տարսայիճ իշխանը Սիսիանի շրջանի ներկայիս Դարաբաս կոչվող գյուղում կառուցում է Աստվածածնի եկեղեցին և փորագրել տալիս հետևյալ արձանագրությունը.

«Յուսով ամենակալին Աստուծոյ ես Տարսայիճս իշխանաց իշխան որդի մեծին Լիպարտին, և ամուսին իմ Մինախաթուն դուստր մեծին Դաւլին, կողմնակալ յայսմ նահանգի՝ զոր ետ մեզ Աստուած ի Բարկուշատայ մինչ ի դաշտն Դվնայ, շինեցաք Աստուածածինս ի հալալ արդեանց մերոց ի փրկութիւն հոգւոյ և յերկայնութիւն կենաց մերոց. տուաք ի պէտս սպասաւորաց Սոմակայ տափին հողն, Նահատակին հողն, և Ներքին Մաղկոցն ի Շնհեր, ի Տաթևայ լուսագին. և կատարի ի տարին :Ժ: ժամ. :Ե: յայտնութեան :Ե: զատկին, վասն իմ Տարսայիճիս և Մինայխաթունին. Եթէ ոք ի մերոց կամ յաւտարաց խափանեսցէ զահմանեալս մեր. :ՅԺԲ: հայրապետաց նզոված է» (Ս. Բարխ., դիվան 2, 114, № 336):

1266 թ. Հասան Ջալալ Դոլան, Գանձասարի վանքը կառուցելուց հետո շինել է տալիս նաև եկեղեցու ժամատունը, հիշատակ թողնելով հետևյալ արձանագրությունը. «Կամաւն ամենակալին Աստուծոյ ես Ջալալ Դաւլաս որդի Վախտանգայ կողմանցն Արցախայ և ամուսին իմ Մամքան թոռն Բաղուց թագաւորին, և հարազատ որդին իմ Աթաբակն յետ կատարման եկեղեցւոյս հիմնարկեցաք ժամատունս և բազում աշխատութեամբ աւարտեցաւ, զոր և հայցեմ անմոռաց յիշել յաղաւթս ձեր. փոքր ընծայ տուի զՄառգեղն իւր չարեքտարովն, զՃռանց իւր սահմանովն: Դարձեալ ես Աթաբակս ընծայեցի յաւժարութեամբ ոսկետառ աւետարան և պատուական սուրբ նշան, զՔրիստափորն և զմեր հայրենի Հարաւակուռն զԲլրին իւր սահմանովն. և սահմանեցին զխաչի ութաւրեքն պատարագել զՔրիստոս: Եւ եթէ Քրիստոսադաւան ոք հանել ջանայ, ի փառացն Աստուծոյ մահով և կենաւք նզոված է, և յիշատակ նորա մի՛ յիշեսցի առաջի Աստուծոյ. և թէ մահմեդական ոք զհողն հանէ այս եկեղեցւոյս, առ հասարակ նզոված յԱստուծոյ և ի մարգարէից» (Մ. Բարխ., Արցախ, 174—175: Ընդգծումներն իմն են—Ս. Հ.):

1222 թ. Դավիթ իշխանը կալվածքներ, եկեղեցական հանդերձներ ու սպասքեղեն է նվիրում Աստվածածնի եկեղեցուն:

«Թւ. ՈՀԱ: Ես՝ Դաւիթ իշխան, որդի Շոթուկայ գնեցի զՈռնակ, Գոմուց կէսն եւ շինական մի ի Հալալաշինի, մշակն, կմնածուխ, եւ զսպիտակ սուրբ նշան և Բ շուրջառ ընծայեցի յԱստուածածինս: Եւ

առաջնորդ սուրբ ուխտիս տէր Յոհաննէս եւ միաբանքս էտուն զսուրբ Գրիգորի տունն, որ հետ եղիական՝ զշաբաթն եւ զկիւրակէն զե-կեղեցիքս զշաբաթն այրն խնձ՝ Դաւթի եւ Կարճկա եւ զկիւրակէ այրն Սարգսի եւ Շնըբարքին: Արդ, որ զմեր բնծայս հանէ յայս եկեղեցոյս Յուդաի եւ Կաէնի մասնակից լիցի եւ մեր մեղացս տէր է առաջի Քրիստոսի ամէն» (Ղաֆ., Սանահին, 108: Ընդգծումն իմն է—Ս. Հ.):

Հայ վիմագիր արձանագրություններում անեծք-օրհնանքների կիրառության ձևերի քննարկմանն անցնելուց առաջ, տեսնենք սեպագիր և վիմագիր արձանագրությունների կառուցվածքաբանական հատկանիշները:

Գ. ԱՆԵԾՔՆԵՐԻ, ՕՐՀՆԱՆՔՆԵՐԻ ԵՎ ՍԵՊԱԳԻՐ ՈՒ ՎԻՄԱԳԻՐ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

8. Ասուրա-բաբելական և ուրարտական սեպագիր, ինչպես և հայկական վիմագիր արձանագրություններում հանդիպող անեծքներն ու օրհնանքները, անկախ իրենց բովանդակությունից, ունեն կառուցվածքային միևնույն յուրահատկությունը: Դրանք բաղկացած են երկու էական բաղադրիչներից. ոռոշակի պայմանից և բուն անեծքից կամ օրհնանքից. ընդ որում պայմանը միշտ նախորդում է անեծքին ու օրհնանքին, և վերջիններս վկայակոչվում են այդ պայմանի առնչությամբ միայն: Ահա դրանց կառուցվածքը տարբեր արձանագրություններում:

Արձանա-գրություն	Պայման	Անեծք-օրհնանք
1	2	3
ասուրա-բաբելական	1. Ով որ այս կոթողը խախտի իր տեղից կամ ջնջի իմ անունը և իր անունը գրի, կամ այն փոշով ծածկի, կամ այն ջուրը նետի, կամ այն կրակով վառի, կամ դնի մի այնպիսի տեղ, որ ոչ ոք չկարողանա տեսնել—	Թող Իշտարը՝ կռվի և ճակատամարտերի տիրուհին խախտի նրա կանանց սիրելու առնականությունը, թող նա (=Իշտարը) նրան իր թշնամիների կողմից ենթարկի հուզընկալս բանտարկության (ARAB II 227)։
	2. Ով այս (արձանագրությունը) վերցնի կամ իմ անվան փոխարեն իր անունը գրի՝	Թող Աշուրն ու Բելիթը զայրույթով ու կատաղությամբ կործանեն նրան և բնաջնջեն նրա անունն ու սերմը երկրից (Otto Weber, Literatur der Babylonier und Assyrer, Leipzig, 1907, էջ 29)։

1	2	3
Ուրարտական	1. Ով այս արձանագրությունը ոչնչացնի, ով ջարդի, ով որևէ մեկին ստիպի այդ անել,	1. Թող Խալդի, Թեյշեբա, Շիվինի աստվածները, (բոլոր) աստվածները ոչնչացնեն նրան արևի տակից (УКН 153, № 29):
	2. Ով այս արձանագրությունը ոչնչացնի, ով ջարդի, ով որևէ մեկին ստիպի այդ անել, ասի. «Գնա, ոչնչացրու», ով ուրիշին ասի. «Ես եմ արել (այդ բոլորը)», ով այստեղից որևէ բան տանի որևէ տեղ պահի՝	2. Թող Խալդի, Թեյշեբա, Շիվինի աստվածները, (բոլոր) աստվածները ոչնչացնեն նրան, (նրա) ընտանիքը, նրա սերնդի սերունդը արևի տակից (УКН 232, № 127, VIII):
	3. Ով այս արձանագրությունը ջնջի, ով ջարդի, ով տեղից դուրս գցի, ով թաղի, ով ջուրը գցի, ով ուրիշի ասի. «Ես եմ (այդ ամենը) արել», ով անունս ջնջի՝ իր անունը դնի, լինի Բիաինիլի աշխարհի բնակիչ, թե թշնամի աշխարհի բնակիչ,	3. Թող Խալդի, Թեյշեբա, Շիվինի աստվածները, (բոլոր) աստվածները աշխարհում չթողնեն ոչ (նրա) անունը, ոչ ընտանիքը, ոչ սերունդը (УКН 345, № 281):
	4. Ով առևանգի	4. Թող ոչնչացնեն նրան Խալդի, Թեյշեբա, Շիվինի աստվածները, (բոլոր) աստվածները արևի տակից (УКН 313, № 167):
Հայկական	1. Արդ, որք հակառակ կան և հանել ջանան	1. քակեսցին տունք և որդւովք և ազգայնովք. նզովեսցին ի վարձէ Աստուածածնէն և 318 հայրապետաց և ջնջեսցին յայսմ կենաց (Մ. Բարխ., Այրար., 37):
	2. Ով խափանէ յառաջնորդաց կամ յիմոց կամ յաւտարաց եւ դայս գիրն ի սուրբ կաթողիկէիս հանել ջանա...	2. դատի ի Քրիստոսէ եւ իմ մեղացըս եւ իմ որդոյն մեղացն տէր է (Օրբելի, Դիվան 1, 39, № 108):
	3. Ով դայգիրն խափանէ,	3. 318 հայրապետացն անիծած է (Մ. Բարխ., Այրար. 375):
	4. Ով հանել ջանայ իմոց կամ աւտարաց, եղբարց կամ եղբայր որդաց,	4. նա մեր մեղացն տէր լինի, 318 հայրապետաց նզոված լիցի. կատարողքն աւրհնին Աստուծոյ, (Ղաֆ., Սանահին, 190, № 186):
	5. Արդ եթէ ի մեծաց կամ ի փոքունց յիմոց կամ յաւտարաց զարդիւնքս մեր հանել կամ խափանել ջանա իսկ որք հաստատուն պահեն	5. մեղաց մերոց պարտական եղիցի յատենին մեծի աւրհնին յԱստուծոյ (Օրբելի, Դիվան 1, 36, № 104):
	6. Որք հաստատ պահեն՝	6. աւրհնին յԱստուծոյ (Ղաֆ., Սանահին, 132, № 53):
	7. Եթէ ոք յիմ ազգէ լինի, եթէ այլ ուստեք որ զհիշատակս մեր հաստատուն պահէ	7. աւրհնի յամենակալ բանէն Աստուծոյ (Օրբելի, Դիվան 1, 28, № 84):

Անեծք-օրհնանքների այս տիպը՝ այսինքն՝ որոշակի պայմանով անեծք-օրհնանքները, որ ընդհանրական են բոլոր հին արձանագրություններին (և ոչ միայն արձանագրություններին) իրենց հերթին ենթադրում են որոշակի իրադրություն, որից կամ որի առնչությամբ էլ ծագել ու վկայակոչվել են դրանք։ Եթե հետևելու լինենք որոշակի պայմանով անեծք-օրհնանքների տրամաբանական կառուցվածքին, կտեսնենք, որ դրանք կառուցված են պայմանի և հետևանքի տրամաբանական պատճառակցության վրա։ Անեծք-օրհնանքի որոշակի պայմանը հանդես է գալիս իբրև տրամաբանական պայման (=պատճառ), որին էլ հետևում է անեծք-օրհնանքը, իբրև պարտադիր հետևանք։

Երբ անեծք-օրհնանքի որոշակի պայմաններն ասում են.

I «Ով այս արձանագրությունը ոչնչացնի, ով ջարդի, ով որևէ մեկին ստիպի այդ անել, ով ուրիշին ասի. «Ես եմ նվաճել Լուխիունի քաղաքը...»

կամ՝

II «Ով այս գեղս հանել ջանայ յայս եկեղեցւոյս, կամ զիմ յիշատակն խափանէ, ով որ իցէ որ լինիցի...».

և կամ՝

III «Արդ եթէ որ ի մեծամեծաց կամ ի փոքունց զսուրբ Ստեփանոս կամ զիւր ժողովրդոցն ի սուրբ ուխտէն ի Մարմաշինոյ շորթել ջանա՝...», ապա դրանց տրամաբանորեն հետևում են տվյալ պայմանների զանցառուներին կամ կենսագործողներին ուղղված անեծքներն ու օրհնանքները, որ են.

I «Թող Խալդի, Թեյշեբա, Շիվինի աստվածները, (բոլոր) աստվածները նրան ոչնչացնեն արևի տակից» (УКН 154, № 30)։

II «Ի ծննդոցն Ադամայ եղիցի նզովեալ» (Մ. Բարխ., Արցախ, էջ 350)։

III «ՅԺԸ-իցն նզովեալ եղիցին և նոցա յանցանացն որոց յիշատակս է համարս [տան] առաջի ահեղ ատենին Քրիստոսի. Կատարիչքն աւրհնին յԱստուծոյ» (Օրբելի, Դիվան, 1, 17, № 58)։

Որոշակի պայմանի և անեծք-օրհնանքի տրամաբանական պատճառակցական միասնությունը դեռևս կառուցվածքային այդ երկու բաղադրիչներով չի ավարտվում. անեծք-օրհնանքին նախորդող պայմաններն ինքնին արդեն հետևանք ու արդյունք են մեկ այլ պատճառի կամ իրադրության։ Այդ պայմանները ծագել են

որոշակի իրադրություններից և դարձել միջնորդ-կապակցող օղակներ բուն իրադրության և անեծք-օրհնանքների միջև: Վերը հիշատակված անեծք-օրհնանքների պայմաններին, օրինակ, նախորդում են հետևյալ իրադրությունները.

I Մեհունան դուրս է գալիս արշավանքի, նվաճում Երիկուախի երկիրը, գրավում Լուխիունի քաղաքը, այն դնում հարկի տակ և դրա հիշատակն հավերժացնելու նպատակով գրել է տալիս այդ արձանագրությունն ու վերոբերյալ պայմանն առաջադրում:

II Պարոն Ումեկի որդի Ճարը Հով գյուղն իր շրջակայքով և 4000 կարմիր դուկատ է նվիրում Գետիկի Աստվածածին եկեղեցուն, որի դիմաց միաբանները պատարագ են սահմանում նրա և ծնողների հիշատակին: Այս իրադրությունները խախտողների դեմ պայման է առաջադրվում, որին բնականորեն հաջորդում է անեծքը:

III Բարսեղ արքեպիսկոպոսը Մարմաշենի վանքի ուխտին է նվիրում Ս. Ստեփանոս եկեղեցին իր կալվածքներով և այն խափանողների ու իրագործողների համար պայման է դնում անեծքով և օրհնանքով:

Հետևաբար, անեծք-օրհնանքների տրամաբանությունն ամբողջանում է ոչ միայն դրանց նախորդող որոշակի պայմանների առկայությամբ, այլև այդ պայմաններն հարուցող իրադրություններով:

Այլ կերպ ասած՝ արձանագրությունները, ինքնին առած, իրենց բոլոր բաղադրիչներով կազմում են տրամաբանական մի ամբողջություն, ուր բոլոր մասերն ունեն իրենց հիմքն ու ելակետը: Այդ պատճառով էլ անեծք-օրհնանքների կիրառության տեսակներն ու նպատակները քննելիս հարկ է ամենից առաջ պարզել տրամաբանական երեք միավորների՝ **իրադրության**, դրանից բխող **պայմանի** և դրան անմիջապես հետևող **անեծք-օրհնանքների** տեսակներն ու նրանց մեջ եղած հարաբերությունները:

Անեծք-օրհնանքներով արձանագրություններում վերոնշյալ եռանդամ կառուցվածքի ծայրանդամները, այսինքն՝ **իրադրությունն** ու **անեծք-օրհնանքի բանաձևերը** բնույթով, սովորաբար, անկախ միավորներ են, որոնք տրամաբանորեն միմյանց են հարակցվում անեծք-օրհնանքների **որոշակի պայմանի**, այսինքն կառուցվածքի միջնանդամի շնորհիվ միայն:

Այսպես.

Իրադրություն	Պայման	Անեծք-օրհնանք
է 1. Մշտական նվաճում - Դիտունեի երկիրը՝ Շուշիլու թագավորանիստ քաղաքով: Թագավորը հանձնված է, խոնարհված Մենուայի առջև. վերջինս շնորհում է նրան կյանքը, ծանր հարկի տակ դնում, վերցնելով մեծ քանակությամբ ոսկի և արծաթ: Ապա երկու այլ թագավորների Մենուան հիշյալ երկրից վտարում է:	Մենուան ասում է. Ով այս արձանագրությունը ոչնչացնի, ով ջարդի, ով ուրիշին ստիպի այդպես անել, ով ուրիշին ասի. «Ես եմ (այդ ամենն) արել»՝	Թող Խալդի, Թեյշեբա, Շիվինի աստվածները,(բոլոր) աստվածները ոչընչացնեն նրան արևի տակից (УКН 158, № 36):
2. Խալդի աստծու զորությամբ Մենուան, Իշպուինիի որդին այս ջրանցքն անցկացրեց. Նրա անունը «Մենուայի ջրանցք է»: Խալդի աստծու մեծությամբ Մենուան՝ թագավոր հզոր, թագավոր մեծ, թագավոր Բիայնիլի երկրի, Տուշպա քաղաքի կառավարիչ:	Մենուան ասում է. Ով այս արձանագրությունը ոչնչացնի, ով ջարդի, ով որևէ մեկին ստիպի այդպես անել, ով ուրիշին ասի. «Ես եմ այս ջրանցքն անցկացրել»՝	Թող Խալդի, Թեյշեբա, Շիվինի աստվածները,(բոլոր) աստվածները ոչընչացնեն նրան արևի տակից (УКН 169, № 43):
5. Կամաւն Աստուծոյ ես Գրիգոր փոխեցի զիմ հոգն, զինչ որ հաստատուն կայր զնեցի եւ փոխեցի. եւ ետու հիշատակ սուրբն եկեղեցւոյս:	Որ խափանել ջանայ՝	մեր մեղացն տէրն է (Ս. Բարխ., Դիվան 2, 37, № 81):
6. Կամաւն Աստուծոյ ես Մայրանս, որդի պարոն Աղբուղի ավի իմ հայրենացն զՇահնաձոր ի սուրբ ուխտս Գանձասարայ՝ Առաջնորդութեամբ Տէր Եղիային. սորա ետուն տարուան Գ. ժամ.	Ով զայս հայրենիքս հանէ յեկեղեցւոյս՝	Դաժմէ հայրապետացն նզոված է (Ս. Բարխ., Արցախ, էջ 177):

Տեսնում ենք, ուրեմն, որ առանց միջնանդամի՝ պայմանի, իրադրություններն ու անեծք-օրհնանքները ոչնչով չեն աղերսվում միմյանց: Հետևաբար, երկու ծայրանդամների կապի տրամաբանական հանգույցը անեծք-օրհնանքների պայմանի մեջ է:

Արդ, ի՞նչ են իրենցից ներկայացնում անեծք-օրհնանքների պայմանները:

9. Դիտենք նախ տիպաբանական տեսակետից: Ձևով անեծք-օրհնանքների պայմանները գործողություններ են, մեծ մասամբ պայմանական բնույթի («Ով ոչնչացնի իմ արձանագրությունն ու անունը» (ARAB II 24), «Ով այս արձանագրությունը ոչնչացնի, ով ջարդի» (УКН, 258, № 130), «Եթէ որ զհիշատակս խափանէ» (Օրբելի, Դիվան 1, 3, № 1), «Որք յաւժար կամաւք կատարեն զխնդիրս իմ» (Ղաֆ. Սանահին, 116, № 33, և այլն):

Քանակով բաղկացած են լինում սովորաբար մեկ կամ մի քանի համանիշ պայմանական գործողություններից: Մեկ գործողությամբ պայմաններն անվանում ենք **պարզ** պայմաններ, իսկ մեկից ավելի գործողություն ունեցողները՝ **ընդարձակ** պայմաններ: Հետևաբար, անեծք-օրհնանքների պայմանները քանակով բաժանվում են տիպաբանական երկու մեծ խմբի 1. **պարզ** և 2. **ընդարձակ** տիպերի:

Հին սեպագիր արձանագրությունների անեծք-օրհնանքների պայմաններին պարզ տիպը բնորոշ չէ, գերակշռում է ընդարձակը: Մինչդեռ, միջնադարյան հայ վիմագիր արձանագրությունների պայմաններին, ընդհակառակը, ավելի առանձնահատուկ է պարզ տիպը, ընդարձակը համեմատաբար քիչ գործածությամբ: Պարզ տիպի զարգացման միտումն հայկական արձանագրություններում այնքան է տիրապետող, որ հաճախ օրհնանքի, մասամբ և անեծքի պայմանները համառոտվում են, ձուլվում օրհնանքին կամ անեծքին և վերածվում մեկ ամբողջության («Կատարիչքն աւրհնին, խափանիչքն դատին»[58], «Կատարիչք գրոյս աւրհնեալ եղիցին»[59], «Կատարիչքն աւրհնեցին ի Քրիստոսէ»[60], «Կատարիչք գրոյս աւրհնին յԱստուծոյ եւ խափանողքն դատին ի տեառնէ ամենայն»[61] և այլն):

Նման դեպքերում անեծք-օրհնանքների կապը իրագրության հետ դառնում է խիստ անմիջական, և իրագրությունը վերածվում է անեծքի կամ օրհնանքի անմիջական պատճառի: Այս կարգի անեծք-օրհնանքները սոսկ ձևական առումով անվանում ենք **պայմանազուրկ**, թեպետ դրանց իմաստի մեջ իրականում պայմաններն առկա են:

Պայմանական գործողությունները, իրենց տիպերից անկախ, իրագրությունների հետ ունեցած իմաստային փոխհարաբերության

58 **Մ. Բարխ.,** *Արցախ 169:*
59 **Օրբելի,** *Դիվան 1, 47, № 134:*
60 **Ղաֆ.,** *Սանահին 184, № 175:*
61 **Ղաֆ.,** *Հաղբատ 147, № 6:*

տեսակետից, բաժանվում են և երկու խմբի՝ **դրականի** և **բացասականի**: Երբ պայմանների գործողությունները իմաստով համադիր են իրադրությանը, նման գործողություններն անվանում ենք **դրական** պայմաններ, իսկ երբ հակադիր են իրադրությանը՝ **բացասական** պայմաններ: Այսպես.

Ադադնիրարի 1-ինը շինել է տալիս մի ջրապատնեշ, կանգնեցնում է արձանագրությամբ կոթող և ավանդ է թողնում գալիք թագավորներին՝ այն ավերվելու դեպքում վերականգնել: Այս իրադրության գաղափարին **համադրվում** է պայմանական գործողությունը. «Թող (նա) վերականգնի ավերակները և վերակառուցի, թող վերադարձնի իր տեղը իմ կոթողն ու իմ հիմնած գլանը»: Եվ այս պայմանին անմիջապես հետևում է **մաղթանքը** «(Այն ժամանակ) Աշուրն ու Ադադը կլսեն նրա աղոթքը»: Շարունակության մեջ միևնույն իրադրության գաղափարին **հակադիր** պայման է առաջադրվում. «Իսկ ով կկործանի իմ կոթողն ու անունը», և սրան անմիջապես հետևում է **անեծքը**. «Թող Աշուրը՝ իմ տերը, վերացնի նրա իշխանությունը, թող Ադադն իր չար կայծակով ոչնչացնի նրա երկիրը և սով բերի նրա երկրին, իրեն, նրա բանակին և ժառանգներին, թող գերեզման փչեցնի նրան, և թող նա ի վիճակի չլինի իր հակառակորդների առաջ կանգնելու. թող նրա երկիրը ավերակների վերածի» (ARAB I 32):

Դավթի որդի Ռուբենը Անիի մայր տաճարին ձիթհանք է նվիրում, փոխարենը խոստանում են տարեկան 5 օր պատարագ մատուցել հոր՝ Դավթի հոգու համար: Այս իրադրության գաղափարին **հակադիր** պայմանն ասում է. «Արդ եթէ ի մեծաց կամ ի փոքունց, յիմոց կամ յաւտարաց զարդիւնքս մեր հանել կամ խափանել ջանա...». և դրան անմիջապես հետևում է **անեծքը**. «մեղաց մերոց պարտական եղիցի յատենին մեծի»:

Նույն իրադրության գաղափարին **համադիր** պայմանն ասում է. «իսկ որք հաստատուն պահեն» և սրան անմիջապես հաջորդում է **օրհնանքը**՝ «աւրհնին յԱստուծոյ» (Օրբելի, Դիվան 1, 36, № 104):

Այդպես և բոլոր տեղերում: Այնպես որ, բոլոր արձանագրություններում անխտիր (և ոչ միայն արձանագրություններում, այլ ընդհանրապես) իրադրությանն համադիր կամ **դրական** պայմանները միշտ ենթադրում են **օրհնանք-մաղթանքներ** և ընդհակառակը, իրադրությանը հակադիր կամ **բացասական** պայմաններին միշտ հետևում են **անեծքները**: Եվ դրական ու բացասական այս երկու տիպերի միջոցով է, ահա, իրադրությունն իմաստաբանորեն

աղերսվում անեծք-օրհնանքներին, դառնում նրանց վկայակոչման կանխապատճառը:

Դրական պայմանական գործողությունն իր վրա է վերցնում իրագրության դրական միտումը և այն փոխանցում օրհնանքմաղթանքին, իսկ բացասական պայմանական գործողությունը՝ բացասական միտումը և այն փոխանցում անեծքին: Այս առումով դիտելիս, տեսնում ենք, որ պայմանները ոչ այլ ինչ են, քան իրագրության բուն իմաստն ու նպատակը կրողներ, որոնք մի կողմից հենվում են ու պատճառակցվում իրագրությանը, մյուս կողմից այդ պատճառակցումը փոխանցում են անեծք-օրհնանքներին և իրենք դառնում են այդ երկուսի միջև տրամաբանական կապի մի սերտ, փոխանցիկ օղակ:

Դրական ու բացասական պայմանները, անկախ պարզ կամ ընդարձակ բնույթից, իրենց վրա են վերցնում սովորաբար իրագրության կամ մի մասն ու մի գաղափարը միայն, կամ էլ ամբողջ իրագրությունը, կամ նրա նպատակներն ու գաղափարները: Այս տեսակետից պայմանները բաժանվում են երկու խմբի. 1. Իրագրության մասնակի կրող պայմաններ և 2. Իրագրության ամբողջական կրող պայմաններ:

Մասնակի պայմաններով անեծք-օրհնանքները առավել յուրահատուկ են հին սեպագիր արձանագրություններին: Ասուրա-բաբելական և ուրարտական շինարարական արձանագրություններում անեծք-օրհնանքների պայմաններն իրենց վրա են վերցնում իրագրության սոսկ մեկ կողմը միայն, այն է՝ կառուցած տվյալ հուշարձանի կամ արձանագրության պահպանության գաղափարը: Այսպես. Սարգոնը պալատ շինել տալուց հետո արձանագրությամբ ավանդում է գալիք թագավորին. որ նա «թող վերականգնի այս պալատի ավերակները, գտնի իմ արձանագրությունը, յուղով օծի. գինի զոհաբերի աստվածներին և վերականգնի իր տեղում: Եվ Աշուրը կլսի նրա աղոթքները: Իսկ ով ոչնչացնի իմ արձանագրությունն ու անունը, թող Աշուրը՝ մեծ տերը, ավերի նրա թագավորությունը, ջնջի նրա անունն ու ժառանգներին երկրից. եվ թող նա գութ չունենա նրա նկատմամբ» (ARAB II 24—25):

Կամ՝ Աշուրնասիրպալը Կալահում կառուցում է պալատ և կանգնեցնում հուշասյուն արձանագրությամբ, հետևյալ պայմանով. «Ով որ այս կարդի (արձանագրության—Ս. Հ.) խոսքերին համապատասխան կգործի, չի փոխի իմ արձանագրության բառերը, թող Աշուր ու Էնլիլ (Բել) մեծ աստվածները, որ մեծացրին

իմ թագավորությունը, թող մեծացնեն նրա իշխանությունը բոլոր երկրներում. թող նա կառավարի ուժի, զորության և մեծության մեջ, թող նրան բաժին հանեն աշխարհի չորս մասերից, թող առատություն, լիություն և բերրիություն լինի նրա երկրում:

Բայց ով չգործի այս կոթողի խոսքերին համապատասխան և փոխի այս արձանագրության բառերը, կամ ջարդի այս արձանը, կամ տեղափոխի այն. կամ կեղտոտ քուքով այն անարգի, կամ գետնի մեջ թաղի, կամ կրակի բոցերի մեջ վառի, կամ գցի ջուրը, կամ տեղադրի այնպես, որ անասունները վրայով քայլեն, կամ նախիրն անցնի, կամ արգելի մարդկանց տեսնել և կարդալ իմ արձանագրության բառերը. կամ պղծի իմ հուշարձանը այնպես, որ ոչ ոք չկարողանա տեսնել կամ կարդալ այն. կամ այդ աղետների պատճառով՝ ուղարկի մի ոխերիմ թշնամի կամ մի չար հակառակորդ, կամ մի որևէ կենդանի էակ և ստիպի նրան տանել այդ. կամ աղավաղի կամ ջնջի (արձանագրությունը), կամ փոխարինի դրա իմաստը մի այլ բառով, կամ իրենը գրի և խորհուրդ անի իր սրտի հետ ավերելու այս իմ պատկերը կամ փոխելու (արձանագրության) բառերը՝ լինի դա գրիչ թե մարգարե, թե մի այլ մարդ, և նա ասի իրեն. «Ավերիր այս պատկերը, այստեղ գրված խոսքերին համապատասխան այդ չպետք է արվի», և նա լսի այդ խոսքերը. կամ ով չար դավադրություն նյութի և ուղղի իմ գործի և իմ պատկերի (արձանագրության) դեմ և ասի. «Ես չեմ ճանաչում դրան. անշուշտ նրանք վերջ են տվել սրա գործունեությանը (դեմքը դեպի հանգիստը թեքել) թագավորության մեջ ավերել նրա պատկերը, ջարդուփշուր արել և փոխել նրա բերանի խոսքերը», և կամ որևէ մեկը իմ պատկերի դիմաց մի չարագործություն անի, *թո՛ղ Աշուրը, մեծ տերը, Աստվածների աստվածը, ճակատագրերի աստվածը անիծի նրա ճակատագիրը, ոչնչացնի նրա գործերը և մի չար անեծքով հիմքից արմատախիլ անի նրա թագավորությունը և նրա ժողովուրդն էլ ոչնչացնի. և թող աղետ, կարիք, սով և քաղց բերի նրա երկրին...»* (ARAB *I 175—176*):

Տեսնում ենք, ուրեմն, թե՛ բարեմաղթությունների և թե՛, մանավանդ, անեծքների պայմանները, անկախ իրենց ծավալից, ուղղված են սոսկ շինարարական տվյալ հուշարձանի կամ արձանագրության պահպանությանը: Այդպես են նաև ուրարտական անեծքների պայմանները («Ով այս արձանագրությունը ջարդի, ով փախցնի, ով թաղի, ով ջուրը գցի, ով տեղափոխի, ով արևից թաքցնի, ով որևէ մեկին ստիպի դրանք անել, ասի. «Ոչնչացրու», ով ուրիշին ասի. «Ես եմ արել» (այդ գործերը), թող Խալդին» և այլն.

«Ով այս ամրոցը լքի, ով քանդի, ով այդ կերտվածքներից որևէ բան վնասի, ով այս կերտվածքներից որևէ բան փչացնի, ով այս արձանագրությունը ոչնչացնի, ով ջարդի, ով թաքցնի, ով ուրիշին ստիպի այդ անել, ասի. «Գնա՛, ոչնչացրու», թող Խալդի, Թեյշեբա...» և այլն (УКН, 134, 315, № 20, № 169)։

Մինչդեռ հայ միջնադարյան արձանագրություններում առկա են թե՛ մասնակի և թե՛ ամբողջական խրագրությունների պայմանները։ Այսպես. Տարսայիճի դուստր Ասփին իր սեփական միջոցներով շինել է տալիս Խթրավանքի բեմի սեղանը և եկեղեցուն նվիրում կալվածքներ, փոխարենը պատարագ ստանալու նպատակով։ Այս խրագրության ամբողջական գաղափարը փոխանցվում է հետևյալ բացասական պայմանին. «Թէ ոք ի մերոց կամ յաւտարաց զայս յայս եկեղեցւոյս հանէ կամ զպատարագն խափանէ» (Մ. Բարխ., Արցախ, 195)։

Կամ՝ Հրանուշ թագուհին եկեղեցի և նշխարատուն է շինել տալիս և նվիրում Սանահնի վանքին, ժամ առնելու նպատակով։ Այդ խրագրությանն հաջորդում է հետևյալ պայմանը, ուր ներառված է ողջ խրագրությունը։ «Եւ եթէ ոք զնորաշէնքն ի Սանահնէս հանէ, կամ զիմ ժամն խափանէ» (Ղաֆ., Սանահին, 187, № 179)։

Կան արձանագրություններ էլ, ուր միայն խրագրության մի մասն է փոխանցվում անեծք-օրհնանքի պայմանին։

Հաղբատի առաջնորդ Համազասպի եղբայր Գրիգորը ս. Նշանին է նվիրում իր հոգեբաժին գյուղը, որի դիմաց միաբանները պատարագ են խոստանում մատուցել։ Խրագրությանն հաջորդող պայմանի մեջ, սակայն, ներառվում է միայն խրագրության մի մասը (պատարագ մատուցելու գաղափարը միայն)։ «Արդ, եթէ ոք զաւրն և զժամն խափանէ», որին հետևում է անեծքը (Ղաֆ., Հաղբատ, 178, № 46)։

Ջնելանց Մելիքը ձիթհանք է նվիրում Սանահնի Աստվածածնի եկեղեցուն՝ փոխարենը պատարագ ստանալու պայմանով։ Սակայն, անեծքի պայմանի մեջ սոսկ խրագրության մի մասն է հիշատակվում, այսինքն՝ միայն նվիրատվության գաղափարը։ «Արդ ով ձիթհանքն ի վանիցս հանէ» (Ղաֆ., Սանահին, 139, № 64)։ Այսպես և ուրիշ տեղեր։

Սակայն հայ վիմագիր արձանագրություններին առավել բնորոշը՝ ամբողջական խրագրությունների պայմաններն են[62]։

62 Այս առթիվ դիտելի է նաև այն, որ հայկական արձանագրություններում հաճախ այդ պայմաններն այնքան ընդհանուր ձևով են առաջադրված, որ միայն

Այսպես, ուրեմն, տեսնում ենք, որ անեծք-օրհնանքների որոշակի պայմանները, որոնք պայմանական մեկ կամ մի քանի դրական կամ բացասական գործողություններ են, հանդես են գալիս իբրև իրենց ծնող իրագրությունների կրողներ: Դրանք իրագրության դրական կամ բացասական միտումը մասնակի կամ ամբողջական ձևով փոխադրում են օրհնանքին կամ անեծքին և դրանով իսկ վերածվում օրհնանքի և անեծքի բուն նպատակի: Այսինքն՝ այդ պայմանական գործողությունները տրամաբանորեն լինելով իրագրության և անեծք-օրհնանքների կապակցող օղակը, միաժամանակ հանդիսանում են վերջիններիս բուն նպատակը, որոնց առիթով ու կապակցությամբ էլ հենց վկայակոչվում են հմայական այդ բանաձևերը:

Արդ, հարկ է տեսնել անեծք-օրհնանքների նպատակների տեսակները, այսինքն այն, թե ի՛նչ նպատակներով են հին դրավոր հուշարձաններում վկայակոչվել անեծք-օրհնանքները, որով կլուսաբանվեն հմայական այդ պարզ բանաձևերի կիրառության ձևերն ու նշանակությունը:

10. Հին սեպագիր արձանագրություններում, ինչպես տեսանք արդեն, անեծքի գրեթե բոլոր բանաձևերն ուղղված են տվյալ արձանագրությունների, այնտեղ հիշատակված գործերի ու անունների և շինարարական հուշարձանների պահպանության նպատակին: Պահպանական այս դերն այնուհետև ավանդաբար փոխանցվում է միջ-

---

դրանցով դժվար է որոշել իրագրությունը: Դրանց մեջ բացակայում է իրագրության առարկայական կողմը և այն լրացվում է սոսկ մտքի զորությամբ: Այսպես, Վախթանգի որդի Զաքարիան և կինը՝ խորիշահն Աշտարակից այգի են գնում և նվիրում Հովհաննավանքին: Միաբանները խոստանում են Բեդրոս Թագավորի տոնին վեց օր ժամ կատարել: Այս իրագրությանը հաջորդում է հետևյալ հակիրճ պայմանով անեծքը. «Ով խափանէ՝ դատի ի տեառնէ» (Ղաֆ., Հովհաննավանք, 105, № 55): Տուած անունով մեկը նվերներ է տալիս Սանահնի ուխտին, որի համար միաբանները խոստանում են պատարագ մատուցել: Դրան հաջորդում է «Ով խափանէ՝ դատի ի տեառնէ» պայմանով անեծքը (Ղաֆ., Սանահին, 157, № 121): Թե «ով խափանէ» պայմանը իրագրության մեկ կողմին է վերաբերում, թե երկու՝ դժվար է ասել. հավանաբար և՛ նվիրատվության խափանողին է վերաբերում, և՛ պատարագ խափանողին: Այսպիսի ընդհանուր բնույթի պայմաններով անեծքներ տե՛ս Մ. Բարխ., Արցախ, էջ 374, 384—385, 386 և այլն: Մոտավորապես այսպիսի բնույթ ունեն պայմանազուրկ կոչված անեծք-օրհնանքները («Կատարողք աւրհնին ի Քրիստոսէ, հակառակքն դատին յԱստուծոյ» (Օրբելի, Դիվան 1, 66, № 204), «Կատարիչքն աւրհնին Աստուծոյ եւ խափանողքն դատին» (Մ. Բարխ., Դիվան 2, 22, № 35 և այլն), որոնք ավելի որոշակի իմաստ ունեն, քան նախորդները:

նազարյան հայ վիմագիր արձանագրությունների անեծքներին ու օրհնանքներին, բովանդակության հիմնովին փոփոխությամբ:

Նախ նկատենք, որ հայկական արձանագրություններում գրեթե իսպառ բացակայում են[63] նյութական ու մշակութային հուշարձանների, ինչպես նաև դրանք կառուցել տվողների անվան ու մեծագործությունների հեղինակային անվտանգությունն ու պահպանությունն ապահովող անեծք-օրհնանքները, ինչ բնորոշ է ու առանձնահատուկ ասուրա-բաբելական և ուրարտական գրավոր հիշատակարաններին: Հայկական արձանագրությունների անեծք-օրհնանքների նպատակները (պայմանական գործողությունները)՝ լինելով իրադրությունների ամբողջական կամ մասնակի կողմեր, իրենց էությամբ շոշափում են իրադրությունների բուն բովանդակությունը, և անեծք-օրհնանքները վկայակոչվում են հենց այդ ամբողջական կամ մասնակի բովանդակությունը պահպանելու համար: Այսինքն՝ հայկական արձանագրություններում անեծք-օրհնանքներն ուղղված են արձանագրությունների բուն բովանդակության կամ հիմնական գաղափարի պահպանությանը, այնինչ ասուրա-բաբելական և մասնավորապես ուրարտական սեպագրերում դրանք ավելի շատ նպատակ են հետապնդում պահպանել հուշարձանի և արձանագրության արտաքին անվտանգությունը: Հայ վիմագիր արձանագրությունների անեծք-օրհնանքների այս էական առանձնահատկությամբ էլ պայմանավորված է նրանց կիրառական նշանակությունը:

Արդեն նշվել է, որ անեծք-օրհնանքներ ունեցող հայ վիմագիր արձանագրությունների մեծ մասը շինարարական-նվիրատվական բովանդակություն ունի. ընդ որում շինարարական կոչվածներն էլ ըստ էության նվիրատվական են, քանզի այդ շինարարական կառույցների մեծ մասը նվիրատրվել է այս կամ այն վանքին, եկեղեցուն, միաբանությանը: Եվ նման բովանդակությամբ արձանագրություններում անեծք-օրհնանքներն ուղղված են տվյալ նվիրատվության (անկախ նրա տեսակից) պահպանությանը: Քանի որ

---

63 Ասում ենք «գրեթե», որովհետև այդուամենայնիվ հայկական արձանագրություններում առանձին դեպքերում հանդիպում են անեծք-օրհնանքներ, որոնք ուղղված են նաև արձանագրության պահպանության նպատակին: Այսպես. Իվանե Օրբելյանի Սանահնի վանքին արված նվիրատվական արձանագրության մեջ նվիրատվությունը պահպանելու համար ուղղված ընդարձակ անեծքին հաջորդում է նաև արձանագրության անվտանգությունն ապահովող հետևյալ անեծքը. «Եվ որ մեր յիշատակարանն ջնջէ, ջնջեալ լինի ի դպրութենէն կենաց» (Ղաֆ., Սանահին, 189, № 184):

շինարարական-նվիրատվական արձանագրությունները պահպանվել են հիմնականում կրոնա-պաշտամունքային կառույցների (եկեղեցի, վանքեր, մատուռներ, խաչքարեր և այլն) վրա, իրենց բովանդակությամբ և գաղափարով հոգևոր-պաշտամունքային բնույթ ունեն։ Դրանցում հիշատակված շինարարական կառույցների, կալվածքների, անշարժ ու շարժական գույքի, սպասքների և այլնի նվիրատվությունը կատարվել է անհատ մարդկանց կողմից եկեղեցիներին ու վանքերին։ Իսկ կրոնա-պաշտամունքային հաստատություններին արված նվիրատվությունները մեծ մասամբ անպարտք ու անհատույց չէին։ Նվիրատուն պարտավորեցնում էր նվիրատվությունն հանձնառող հոգևորականներին՝ նվիրատվության դիմաց իր հանգուցյալ հարազատների և մահվանից հետո՝ իր հոգու փրկության համար տարվա որոշ ծիսա-կրոնական տոներին որոշակի թվով ժամ կամ պատարագ մատուցել։ Ահա այս նյութական-հոգևոր գործարքի, որ հայ վիմագիր արձանագրությունների ճնշող մեծամասնության հիմնական բովանդակությունն է կազմում, պահպանության նպատակին են ուղղված անեծք-օրհնանքները։

Հայ վիմագիր շինարարական-նվիրատվական արձանագրությունների անեծք-օրհնանքների նպատակները բովանդակությամբ բաժանվում են երեք հիմնական խմբի.

1. Նվիրատվության պահպանությունը ապահովող կամ օտարումը կանխող նպատակներ։

2. Նվիրատվության դիմաց ակնկալվող փոխհատուցման (ժամ, պատարագ) պահպանության նպատակներ։

3. Ե՛վ նվիրատվության, և՛ դրա դիմաց ակնկալվող փոխհատուցման պահպանությունն հետապնդող նպատակներ։

Երկրորդ հիմնախումբն ու առաջինի մի մասը պատկանում են մասնակի իրագրությամբ պայմանների տիպին, իսկ երրորդն ու առաջին հիմնախմբի մի մասը՝ ամբողջական իրագրությամբ պայմանների տիպին։ Տեսնենք յուրաքանչյուր հիմնախումբ առանձին։

II. Առաջին հիմնախումբ.— Նվիրատվության պահպանությունն ապահովելու կամ օտարումը կանխելու, ինչպես նաև նվիրատվական գործարքն անձեռնմխելի պահելու նպատակով անեծք-օրհնանքների կիրառությունը հայ վիմագիր արձանագրություններում համեմատաբար փոքր տեղ է գրավում։ Այդ նպատակով կիրառվում են կամ սոսկ անեծքներ, կամ և՛ անեծքներ, և՛ օրհնանքներ միասին։

Հիշյալ նպատակին ուղղված անեծք-օրհնանքներով նվիրատվու-

թյունները մեծ մասամբ կատարում են թագավորները, իշխանները, հոգևոր բարձր կոչումներով եկեղեցականները՝ կրոնական հաստատությունները ամրապնդելու, բարվոքելու միտումով, հիմնականում առանց փոխհատուցման ակնկալիքների։

1397 թ. Գրիգոր վարդապետը սեփական միջոցներով ջրաղաց և հողեր է գնում և ընծայում Սյունյաց Տանձատափի ս. Աստվածածնի եկեղեցուն՝ անեծքի հետևյալ պայմանով. «Արդ որք խլել եւ հանել ջանան մեր մեղացն պարտական լինին եւ դատին յԱստուծոյ» (Ս. Բարխ., Դիվան 2, 41, № 96)։

1345 թ. Սյունյաց Լոր գյուղում Սարգիսն ու Ամիր Հասանը եկեղեցի են շինում և նրան նվիրում իրենց հոր՝ Նահապետի «Հալալ» արդյունքով գնած հողամասը, և այդ նվիրատվությունը հաստատում անեծքով ու երդմամբ. «Ով որ հակառակ լինի դատի Աստուծոյ... ով որ էլ ուզէ մասն զՈւզափ առնու» (Ս. Բարխ., Դիվան 2, 109, № 321)։

Արցախի Հիրհեր գյուղի հասարակությունը և տանուտեր Ղասումը արտ են նվիրում ս. Գրիգորիսի եկեղեցուն և պայման դնում. «Ով քակէ, նզովեալ եղիցի յԱստուծոյ» (Մ. Բարխ., Արցախ, 104)։

Գրիգոր Պահլավունու կին տիկին Շուշանիկը 994 թ. Անիում կուղպակ է նվիրում ս. Գրիգոր եկեղեցուն և դնում հետևյալ պայմանը. «Իսկ որ հակառ գա յիմոց կամ յաւտարաց: 3ԺԸ: իցն նզոված է հոգով եւ մարմնով» (Օրբելի, Դիվան 2, 32, № 94)։

Հովհաննես քահանան սեփական միջոցներով կալվածքներ է գնում և նվիրում Տաթևի ս. Աստվածածնի եկեղեցուն և դնում անեծք՝ հետևյալ պայմանով. «Արդ որ ոք հակառակ կամ խափանող լինի՝ որոշեալ լիցի ի սուրբ Աստուածածնէս եւ յիւր միածնէն եւ իմ մեղացն պարտական լիցի» (Ս. Բարխ., Դիվան 2, 33, № 64)։

1345 թ. Գրիգոր անունով մեկը կալվածքներ է փոխանակում, գնում և ապա նվիրում Տաթևի եկեղեցուն՝ հետևյալ պայմանով. «Որ խափանել ջանայ՝ մեր մեղացս տէրն է» (Ս. Բարխ., Դիվան 2, 37, № 81)։

Նվիրատվական հիշյալ արձանագրությունների անեծքների նպատակ-պայմանները («Որք խլել և հանել ջանան», «Ով որ հակառակ լինի», «Որ հակառ գա յիմոց կամ յաւտարաց», «Որ ոք հակառակ կամ խափանող լինի», «Որ խափանել ջանայ») արտահայտում են իրավական որոշակի ըմբռնումներ, որոնց իսկական էությունը երևան է գալիս դրանց պատճառ հանդիսացող իրադրությունների հետ ունեցած հարաբերությունների մեջ։ Նվիրատու

զույք կամ կալվածքներ նվիրելով, փաստորեն դրության իրավական տերն է, նա հօժար կամքով իր ունեցվածքից օտարում է որոշ մաս և այն հատկացնում տվյալ վանքին կամ եկեղեցուն: Նվիրատվական այդ գործարքին իրավաբանական ձևակերպում տալու համար, ահա, նվիրատուն իր կատարած նվիրատվական դրական գործողությանը հակադիր գործողություն կատարողի առջև պայման է դնում անեծքով: Եվ պայմանն ու անեծքը միասին վերածվում են տվյալ նվիրատվական գործարքի օրինականության ու անձեռնմխելիության պահպանող իրավաբանական ներգործման ու պարտադրման միջոցի՝ մի յուրօրինակ սանկցիայի, որն հասարակական կիրառմամբ հենվում է ոչ թե օրենսդրական մարմնական պատժի ցուցումի, այսինքն՝ պետական հարկադրանքի, այլ սոսկ խոսքի գերբնական-հմայական զորության հավատալիքի վրա. ուրիշ խոսքով, այն ունի սոսկ բարոյական ներգործության արժեք, որը, սակայն, հմայական հավատալիքների հասարակական համընդհանուր տիրապետության պայմաններում ներգործման առավել զորավոր ուժ ուներ, քան օրենսդրության նյութական-առարկայական ներգործության ու պարտադրման միջոցները:

Թագավորներն ու իշխանները, եկեղեցական բարձրաստիճան հոգևորականները, որոնք երկրում ու իրենց տիրույթներում ունեին անսահմանափակ իշխանություն և կառավարում էին իրավաբանական ընդունված կանոններով ու դատաստանագրքերով, կրոնական-հոգևոր հաստատություններին արած իրենց նվիրատվություններին վերաբերող արձանագրություններում ու հրովարտակներում, դարձյալ իբրև ներգործման ու պարտադրման սանկցիա, օգտագործում են անեծքն ու օրհնանքը:

Այսպես. Իվանե Օրբելյան սպասալարը ուխտի գալով Սանահին, իր նախնիների Սանահնին նվեր տված կալվածքները, գյուղերն ու քաղաքները վերստին նվիրում է Սանահնին, և նվիրատվությունը խախտողների դեմ («Ով որ յանդգնի և հանել ջանայ սուրբ Աստուածածնէս մեր ուխտ վախմ կամ թագաւորաց, կամ փաթուղէկնաց, կամ եպիսկոպոսաց, կամ ազատաց, կամ շինականաց») սանկցիա է դնում հետևյալ անեծքը. «ՅԺԸ հայրապետաց նզովեալ եղիցի, պատիժն Յուդայի և Կայենի առցէ, սուրբ Աստուածածնի խռովանքին դայ, յաւէտն մինչև ի նեռն անիծած է, Քրիստոսի դատաստանին մեղ պարտական լինի և սեւերես» (Ղաֆ., Սանահին, 189, № 184):

Սարգիս և Վրթանես եպիսկոպոսները 1241 թ. շինում են Ար-

ցախի Գոշավանք կոչված եկեղեցին: Տեր Սարգսի վախճանվելուց հետո Վրթանես եպիսկոպոսը իր «հալալ» արդյունքով բազմաթիվ կալվածքներ է նվիրում եկեղեցուն և պայման դնում («Ով որ այս սահմանէս յետ առնէ կաթուղիկոս կամ իշխան կամ հայրապետ») անեծքով. «երեք սուրբ ժողովոյն նզոված եղիցի, յԱստուծոյ և յամենայն սրբոց անիծեալ, մասն և բաժին ընդ Յուդայի առցէ» (Մ. Բարխ., Արցախ 81):

Անիի առաջնորդ Բարսեղ արքեպիսկոպոսը 1239 թ. իր սեփական ժառանգությունից Մարմաշենի սուրբ ուխտին է շնորհում ս. Ստեփանոս եկեղեցին իր կալվածքներով: Այս նվիրատվությունը պահպանելու նպատակով սրբազանը պայման է դնում անեծքով և օրհնանքով: Ընդ որում անեծքի դեպքում պատժի պայման է առաջադրում («Արդ եթէ ոք ի մեծամեծաց կամ ի փոքունց զսուրբ Ստեփանոս կամ զիւր ժողովրդոցն ի սուրբ ուխտէն ի Մարմաշինոյ շարժել ջանայ՝ ՅԺԸ-իցն նզովեալ եղիցին և նոցա յանցանացն որոց յիշատակս է համարս տան առաջի ահեղ ատենին Քրիստոսի»), իսկ օրհնանքի դեպքում՝ խրախուսանքի պայման («Կատարիչքն արհնին յԱստուծոյ», Օրբելի, Դիվան 1, 17, № 58):

Այս կարգի արձանագրությունները, որոնց հեղինակները աշխարհիկ կամ հոգևոր իշխանավորներ են, բնույթով մերձենում են օրենսդրություններին, դրանք իրավական որոշակի կարգ են սահմանում և այդ կարգը խախտողների դեմ պատիժ են դնում անեծքով: Օրինապահպանության նպատակներին ուղղված անեծք-օրհնանքների կիրառություններ կտեսնենք փոքր-ինչ հետո:

Այս հիմնախմբի նվիրատվական արձանագրություններում հանդիպում են այնպիսիք, որոնց խրագրությունների մեջ թեպետ հիշատակվում են նվիրատվության դիմաց ակնկալվող փոխհատուցման ձևերը, սակայն անեծքների պայմանների մեջ դրանք չեն հիշատակվում: Այսինքն՝ անեծքի պայմաններն իրենց վրա են վերցնում խրագրության սոսկ մի մասը, և անեծքն իբրև սանկցիա առաջադրվում է խրագրության սոսկ մի մասին: Սրանք էլ հենց այս հիմնախմբում պատկանում են մասնակի խրագրությամբ պայմաններով անեծքների տիպին:

1507 թ. պարոն Աղբասարի որդի Սայտանը Գանձասարի ս. ուխտին է նվիրում Տանձաձոր կոչված կալվածքը: Միաբանները պարտավորվում են այդ նվիրատվության դիմաց տարեկան երբ «ժամ» տալ: Նվիրատվական այս գործարքը վավերացնող իրավաբանական պայմանի մեջ, սակայն, ապահովվում է միայն նվիրատվու-

թյան անձեռնմխելիության պահպանությունը. «Ով զայս հայրենիքս հանցէ յեկեղեցւոյս ԳՃԺԸ հայրապետացն նզոված է» (Մ. Բարխ., Արցախ, 177): Այստեղ ոչինչ չի ասվում նվիրատուի սահմանված պարտավորության, այսինքն՝ տարեկան երեք «ժամ» մատուցելու մասին:

1222 թ. Դավիթ իշխանը սեփական միջոցներով կալվածքներ է գնում. դրանց հետ միասին շարժական ու անշարժ գույք և եկեղեցական սպասներն է նվիրում Սանահնի ս. Աստվածածնի եկեղեցուն: Միաբանները պարտավորվում են ս. Գրիգորի տոնի շաբաթ ու կիրակի օրերը Դավթի և նրա հարազատների համար պատարագ մատուցել:

Սակայն գործարքը վավերացնող իրավաբանական հետևանքի մեջ դարձյալ նվիրատուի պարտավորությունները չեն հիշատակվում: Այստեղ նշվում է միայն նվիրատվությունը օտարողի հնարավոր գործողությունը, որի դեմ էլ ուղղվում է բարոյական պատիժը՝ անեծքը:

«Արդ, որ զմեր ընծայս հանէ յայս եկեղեցւոյս Յուդայի և Կայենի մասնակից լիցի եւ մեր մեղացս տէր է առաջի Քրիստոսի» (Ղաֆ., Սանահին, 108, № 15): Այսինքն՝ անեծքն ապահովում է սոսկ նվիրատվության պահպանությունը:

986 թ. Դավթի որդի Ռուբենը Անիի մայր տաճարին է նվիրում սեփական ձիթհանքը՝ իր բոլոր արդյունքներով: Եկեղեցու սարկավագներն ու սպասավորները, ի հատուցումն այդ ընծայի, խոստանում են տարեկան հինգ օր պատարագ մատուցել Ռուբենի հոր՝ Դավթի հիշատակին:

Գործարքը վավերացնող իրավաբանական հետևանքն ասում է. «Արդ, եթէ ի մեծաց կամ ի փոքունց յիմոց կամ յաւտարաց զարդիւնքս մեր հանել կամ խափանել ջանա՝ մեղաց մերոց պարտական եղիցի յատենին մեծի: Իսկ որք հաստատուն պահեն՝ աւրհնին յԱստուծոյ» (Օրբելի, Դիվան 1, 36, № 104):

Դարձյալ, ուրեմն, իրավաբանական հետևանքն ուղղված է նվիրատվությանն օտարողի դեմ, իսկ օրհնանքի կամ խրախուսանքի իրավաբանական հետևանքը՝ նվիրատվությունը պահպանողին. նվիրատուի զանցանքի հնարավորությունը, երկու հետևանքի դեպքում էլ հաշվի չի առնված:

Այս կարգի արձանագրությունները, ուր պատժի կամ խրախուսանքի պայմանների մեջ նվիրատվական գործարքի միայն մեկ կողմն է ապահովվում, սակավաթիվ են: Այս երկկողմանի գոր-

ծարքի միայն մեկ կողմը, այսինքն՝ սոսկ նվիրատվության պահպանությանն ապահովող անեծք-օրհնանքներով արձանագրությունները ըստ երևույթին նվիրատվական պայմանագրերի հատվածներ են, որի երկրորդ կողմի՝ նվիրառուի ստանձնած պարտավորության կատարումն ապահովող մասն, հավանաբար, գրանցվել է հատուկ մատյաններում և պահվել է նվիրառու վանքերում ու եկեղեցիներում իրագործվելու համար։ Այդ մասին՝ փոքր-ինչ հետո։

12. **Երկրորդ ենթախումբ**.—Այս ենթախմբի անեծք-օրհնանքների իրավաբանական պայմանները ուղղված են սոսկ նվիրատվության դեմ ակնկալվող կամ խոստացվող փոխհատուցման տեսակների պահպանությանը։ Այլ խոսքով՝ հակառակ նախորդ ենթախմբի, այստեղ պատիժը կամ խրախուսանքն ուղղվում է նվիրատվական գործարքի երկրորդ կողմի՝ նվիրառուի խոստացած պայմանների պահպանության նպատակին։

1249 թ. Հաղբատի միաբանության առաջնորդ Համազասպի եղբայր Գրիգորը սեփական փողով գնած գյուղն, իր հոգու փրկության համար, նվիրում է Հաղբատի ս. Նշանին։ Նվիրառու միաբանությունը ընդունելով նվերը սահմանում է բոլոր եկեղեցիներին պարտադիր՝ Գրիգորի և նրա կենակից Մամքանի անուններով նոր կիրակի օրերին պատարագ մատուցել։

Այս գործարքի պահպանությանն ուղղված պատժի իրավաբանական պայմանը, սակայն, միակողմանի է և նպատակ ունի պահպանել սոսկ նվիրառուի պարտավորությունը. «Արդ, եթէ ոք զաւրն եւ զժամն խափանէ՝ ի յարքայական սեղանոյն Քրիստոսի զրկեալ եղիցի եւ իմ մեղացս պարտական է առաջի Աստուծոյ» (Ղաֆ., Հաղբատ, 177, № 46)։

1197 թ. Գրիգոր վարդապետ Տուտեորդին Սանահնի ս. Աստվածածնի եկեղեցուն է նվիրում եկեղեցական սպասներ, հանդերձներ և գրքեր, որոնց դիմաց պարտավորեցնում է միաբաններին ս. Գրիգորի տոնին մինչև աշխարհի վերջը եղբայրաժամ մատուցել։ Նվիրառուների պարտավորությունը պահպանելուն էլ ուղղում է իր անեծք-պատիժը Տուտեորդին. «Որ խափանէ, հայր կամ եկեղեցպան, նզոված է յԱստուծոյ» (Ղաֆ., Սանահին, 111, № 20)։

1348 թ. Շապադինը սեփական փողով գնում և Անիի ս. Առաքելոց եկեղեցուն է վերադարձնում ս. Ստեփանոս եկեղեցին իր կալվածքներով, որ շորթել էին նրանից։ Ապա նույն եկեղեցուն է նվիրում կալվածք և կուղպակ իր, կնոջ և որդու հիշատակի հա-

մար: Այս մեծ նվիրատվության դիմաց եկեղեցու սպասավորները պարտավորվում են ամեն տարի 12 օր պատարագ մատուցել, ընդ որում՝ 4 օր Շապադինին, 4 օր կնոջը՝ Ավագ Խաթունին և 4 օր էլ որդուն՝ Հովհաննեսին:

Նվիրատուներին պարտադրվող այս կարգը պահպանելու նպատակով խրախուսանքի պայման է առաջադրվում օրհնանքով, և պատժի պայման՝ անեծքով. «**կատարողքն** աւրհնին յԱստուծոյ, **հակառակքն** դատին յԱստուծոյ» (Օրբելի, Դիվան 1, 29, № 86):

1217 թ. Սանահնի միաբանության առաջնորդ Գրիգոր վարդապետը ս. Աստվածածնի եկեղեցուն է նվիրում մի մեծ խաչ, 13 գիրք և այլ արժեքներ: Դրա դիմաց պարտավորություն է դրվում («գրեցաւ բնձ») ս. Բարսեղի տոնին ամեն տարի պատարագ մատուցել Գրիգոր վարդապետի համար: Եկեղեցու նվիրատու սպասավորներին խրախուսանքի և պատժի պայման է դրվում օրհնանքով և անեծքով. «Որք յաւժար կամաւք կատարեն զխնդիրս իմ՝ աւրհնին յԱստուծոյ, իսկ թէ որ խափանել ջանայ՝ նզովս առցէ յԱստուծոյ յամենայն սրբոց» (Ղաֆ., Սանահին, 116, № 33):

1217 թ. Վաչուտյան Վաչե իշխանը իր տիկնոջ Մամախաթունի հետ միասին միաբանում են Հովհաննավանքին, բազում ընծաներ են նվիրում եկեղեցուն՝ նորակերտ քավարանի շինության համար: Այդ նվերների դիմաց միաբանները կարգ են հաստատում ամեն տարի ս. Ղազարի տոնին՝ Վաչեի, իսկ Խաչգյուտի օրը՝ Մամախաթունի համար պատարագ մատուցել, մինչև Քրիստոսի երկրորդ գալուստը:

Այս գործարքը հաստատուն պահելու համար վկայակոչված անեծքով պատժի իրավաբանական հետևանքը վերաբերում է միայն նվիրատուի պարտավորություններին. «**Եւ որք չառնեն** (այսինքն պատարագը չկատարեն—Ս. Հ.)՝ դատին ի Քրիստոսէ» (Ղաֆ., Հովհաննավանք, 82, № 15):

Ուրիշ կերպ չէր էլ կարող լինել, որովհետև նվիրատուի ընծաները գնացել են շինարարության ծախսերի վրա, և արդյունքը՝ նորակերտ քավարանը, արդեն կատարված փաստ է՝ եկեղեցու սեփականությունը, և այն օտարելու վտանգ չկա: Հետևաբար, պատժի իրավաբանական հետևանքը տարածվում է միայն գործարք կնքող երկրորդ կողմի՝ նվիրատուի վրա, որի հանձնառության կատարումը վերաբերում է ապագային: Եվ պատահական չէ, որ վանք, եկեղեցի կամ դրանց հարակից ու օժանդակ շենքեր (գավիթ, կամար, սյուն, խորան և այլն) նվիրատվության կարգով շինողների և նվի-

րատուի մեջ կնքված գործարք-արձանագրություններում՝ պատժի սանկցիան տարածվում է միայն նվիրատուի վրա։

Այսպես. նույն Հովհաննավանքի նվիրատվական մի քանի արձանագրություններում (Ղաֆ., Հովհաննավանք, 88—90, № 26, 27, 28, 29) մի խումբ նվիրատուներ կաթողիկե եկեղեցու շինության համար միաբանությանն են ընծայում ոսկի և զանազան ինչք, որի դիմաց նվիրառու միաբանները վճռում են տարվա տարբեր օրերին նվիրատուների համար պատարագ մատուցել։ Արձանագրությունները վավերացնող անեծքների պայմաններն ուղղված են միայն նվիրատուների հնարավոր զանցառության դեմ. «Ով չառնէ՝ նզովի Քրիստոսէ» (№ 26), «Ով չառնէ՝ դատի ի տեառնէ» (№ 28), «Եւ որք չառնեն՝ դատին ի Քրիստոսէ» (№ 29)։

1181 թ. Կյուրիկե դուստր Մարիամ Բագրատունին Սանահնի Ամենափրկչի ժամատանը սյուն է կանգնեցնում և ս. Նշան ու եկեղեցական սպասներ նվիրում ս. Աստվածածնին, որի դիմաց միաբանները պարտավորվում են եղբայրաժամ տալ, իսկ մահվանից հետո՝ մահվան տարելիցին և վարդավառին պատարագ մատուցել։ Անեծքի պայմանը թեպետ ընդհանուր բնավորությամբ, բայց ըստ էության ուղղված է նվիրատուների պարտավորության խախտման դեմ. «Որ խափանէ՝ նզոված է յԱստուծոյ և յամենայն սրբոց» (Ղաֆ., Սանահին, 114, № 28)։

1040 թ. Աբլղարիպ մարզպանը Անիում իր հոր՝ Գրիգոր Պահլավունու, քրոջ և եղբոր հիշատակին հանգստարան և երկու մատուռ (սենյակ) է շինել տալիս ս. Ստեփանոսի և ս. Քրիստափորի անուններով։ Դրա դիմաց պարտավորեցնում է քահանաներին ամեն ուրբաթ ս. Ստեփանոսում և շաբաթ՝ ս. Քրիստափորում իր հոր, եղբոր և քրոջ հիշատակներին ժամ կատարել։ Այս գործարքը վավերացվում է անեծքի պատժով ու օրհնանքի խրախուսանքով, որոնց պայմանները դարձյալ միակողմանի են և վերաբերում են սոսկ նվիրառուներին. «Արդ եթէ ոք ի քահանայից եկեղեցեացդ զայդ ժամդ խափանէ եւ կամ պղերգա եւ աւր անցնէ, նզովեալ լիցի ի հաւրէ եւ յորդւո եւ ի սուրբ հոգւոյն եւ ՅԺԸ հայրապետացն եւ բաժին նորա ընդ Յուդայի մատնչին աղցէ։ Իսկ կատարիչ գրոյս՝ աւրհնեալ լիցի» (Օրբելի, Դիվան 1, 33, № 97)։

1217 թ. Հասան տիկինը վերստին նորոգել է տալիս Անիի ս. Աստվածածնի եկեղեցին (որն հետագայում կոչում են նրա անունով՝ Հասանի եկեղեցի)։ Եկեղեցու սպասավորները դրա դիմաց

պարտավորվում են տարեկան երեք օր պատարագ մատուցել. մեկը՝ Հռոմ տիկնոջը, մեկը որդուն՝ Ջենիշահին և մյուսն էլ՝ հավանաբար հարսին (եղծված է): Արձանագրությունը վավերացված է սոսկ եկեղեցու սպասավորներին ուղղված խրախուսանքի և պատժի պայմաններով. «**Կատարողք** աւրհնին ի Քրիստոսէ, **հակառակքն** դատին յԱստուծոյ» (Օրբելի, Դիվան 1, 66, № 204):

Տեսնում ենք, ուրեմն, այս հիմնախմբում բացի շինարարական նվիրատվություններից, կան նաև գույքի նվիրատվության դեպքեր, որոնք, ակայն, կատարվել են հիմնականում տվյալ հոգևոր հաստատության հայրերի կողմից իրենց վանքերին, հետևաբար և նվիրատվությունը ետ վերցնելու վտանգը էական չի եղել, այլ նվիրատուին հուզել է իր հոգու փրկության ապահովումը, ուստի և հոգ է տարվել ապահովելու ժամ կամ պատարագ մատուցելու պարտավորությունը:

Այս հիմնախմբում առանձին տեղ են գրավում սոսկ օրհնանքի բանաձևով վավերացվող նվիրատվական գործարքները: Սրանց ճնշող մեծամասնության մեջ վանքերին ու եկեղեցիներին տրված նվերների դիմաց խոստացվել է որոշ թվով «ժամի» կամ պատարագի մատուցում: Եվ նվիրառուի ստանձնած պարտավորության կատարումը հորդորելու և խրախուսելու համար էլ ահա առաջադրվում են օրհնանք-բարեմաղթությունները:

1240 թ. Վահրամի և Քրդի մայր Դուդան միաբանելով Սանահնի ս. Աստվածածնին՝ նվերներ է տալիս («էտու արդիւնս»), որի դիմաց Սանահնի ուխտի առաջնորդ Ավետիս վարդապետը պարտավորվում է ս. Սանդուխտի տոնին նվիրատուի համար երկու պատարագ մատուցել: Այս պարտավորությունը հաստատուն պահելը հորդորվում ու խրախուսվում է օրհնանքով («**Որք հաստատ պահեն՝ աւրհնին յԱստուծոյ**» (Ղաֆ., Սանահին, 132, № 53):

1291 թ. Զնելանց Մելիքը կնոջ՝ Մամայի, և հոր՝ Մխիթարի հետ միասին Սանահնի ս. Աստվածածնին են նվիրում թանկարժեք խաչ և այլ արժեքներ («այլ արդիւնս»): Միաբանները պարտավորվում են նրանց համար տարեկան մեկական պատարագ մատուցել: Այս հանձնառության կատարումն ապահովելու նպատակով առաջադրվում է «Կատարողքն աւրհնին Աստուծոյ» մաղթանքը (Ղաֆ., Սանահին, 153—154, № 116: Նույնատիպ օրհնանքներով ապահովվող գործարքներ են նաև էջ 155, 164, 166: Ղաֆ., Հաղբատ, էջ 159, 160—161, 162, 165, 168, 178—179, 191, 192—193, 194, 196, 197—198, 199, 200, 202, 212, 213, 226, 227, 228: Ղաֆ.,

Հովհաննավանք, էջ 87, 91, 99—100, 103, 104 և այլուր եղածները):

1231 թ. Աթանասը իր գանձագին տունը նվիրում է Անիի ս. Աստվածածնի կամ Խամրուշենց եկեղեցուն: Եկեղեցու սպասավորները դրա դիմաց պարտավորվում են («սորա պարտին») ամեն վարդավառի Աթանասի համար պատարագ մատուցել: Եվ այդ պարտավորության կատարումն ապահովելու նպատակով խրախուսվում է օրհնանքով. «Կատարող զրոյս աւրհնի յԱստուծոյ» (Օրբելի, Դիվան I, 51, № 143):

Տեսնում ենք, ուրեմն, որ օրհնանք-բարեմաղթությունն առանձին վերցրած ևս հաճախ է հանդես գալիս նվիրատվական գործարքներում իբրև նվիրատվության դիմաց պարտադրվող բարոյական հատուցման իրագործումն ապահովող ներգործության միջոց: Եվ հարկ է ընդգծել, որ անեծք-օրհնանքների զուգադիր կիրառության դեպքում ևս, միշտ և ամենուրեք օրհնանքը վերաբերում է միմիայն նվիրատվության դիմաց ստանձնած պարտավորության կատարմանը, այն խրախուսելու և հորդորելու բարոյական ներգործման եղանակով: Սա էլ հենց կազմում է նվիրատվական գործարքներում օրհնանք-բարեմաղթությունների կիրառության բուն նպատակը:

13. **Երրորդ հիմնախումբ**.—Այս հիմնախմբի անեծք-օրհնանքների՝ պատժի և խրախուսանքի պայմաններն ուղղված են նվիրատվության և դրա դիմաց պարտադրվող կամ ակնկալվող փոխհատուցման տեսակների պահպանությանը: Եթե նախորդ երկու հիմնախմբում անեծք-օրհնանքների պայմաններն ուղղված էին նվիրատվական գործարքի մե՛րթ այս, մե՛րթ այն կողմի պահպանությանը, հետևաբար և կրում էին միակողմանի բնույթ, ապա այս հիմնախմբում, ի տարբերություն նախորդների, պատժի և խրախուսանքի իրավաբանական հետևանքները նպատակ ունեն պահպանել գործարքի երկու կողմն էլ, և՛ նվիրատվությանը, և՛ դրա փոխհատուցմանը: Այս հիմունքով էլ սույն հիմնախումբը պատկանում է **ամբողջական** իրագրությամբ անեծք-օրհնանքների պայմանների տիպին:

1251 թ. Ջալալ Դոլայի կինը՝ Մամքան թագուհին շինել է տալիս Վաճառ գյուղաքաղաքի եկեղեցին և կալվածք է նվիրում դրան: Իբրև փոխհատուցում պարտավորեցվում է եկեղեցու սպասավորներին՝ հինգ պատարագ մատուցել Մամքանին, ծննդյան ութ օրերին էլ՝ նրա ծնողներին, իսկ իր մահվանից հետո՝ իրեն:

Այս նվիրատվությունն ու փոխհատուցումը ապահովելու համար, Մամքանը առաջադրում է պատժի հետևյալ պայմանը. «Ով որ զտուածս հանէ կամ զժամս խափանէ՝ դատի յԱստուծոյ և ի սրբոց» (Մ. Բարխ., Արցախ, 184)։

Տարսայիճ իշխանի դուստրը՝ Ասփեն իր միջոցներով շինում է խաթրավանքի բեմի սեղանը և կալվածքներ է նվիրում եկեղեցուն։ Դրա դիմաց պարտավորեցնում է եկեղեցու սպասավորներին՝ ծննդյան, տեառնընդառաջի, զատկի, վարդավառի, աստվածածնի և ս. խաչի տոների շաբաթ և կիրակի օրերը իրեն պատարագ մատուցել։

Գործարքի այդ երկու կողմի՝ նվիրատվության ու փոխհատուցման անվտանգությունը ապահովելու նպատակով, պատժի իրավաբանական հետևանք է առաջադրվում անեծքով. «Թէ ոք ի մերոց կամ յաւտարաց զայս յայս եկեղեցւոյս հանէ, կամ զպատարագն խափանէ՝ ի փառաց որդւոյն Աստուծոյ որոշեալ եղիցի» (Մ. Բարխ., Արցախ, 195)։

1206 թ. Սմբատի որդի Խալաթը իր հայրենի Քանաքեռ գյուղից այգի է գնում և նվիրում Հաղարծնի վանքին։ Միաբաններն ի հատուցումն պարտավորվում են ծաղկազարդի երկրորդ զալստյան ժամը նվիրել Խալաթին։ Նվերի ու պարտավորության անձեռնմխելիությունը ապահովելու նպատակով պատիժ է առաջադրվում հետևյալ պայմանով. «Ով զայգին աստից հանցէ կամ զիմ ժամն խափանէ՝ իմ մեղաց տէր է և Յուդայի մասնակից եղիցի» (Մ. Բարխ., Արցախ, 367)։

Անիի հռչակավոր մեծատուն Տիգրան Հոնենցը 1215 թ. կառուցում է Անիի նշանավոր Ս. Գրիգորի եկեղեցին, պարսպապատում, բազում ոսկով, արծաթով ու թանկարժեք ակնեղենով զարդարում եկեղեցու ներսն ու սպասեղենը, վանականների և իշխանների համար կից բնակարաններ է շինում, բազմաթիվ գյուղեր, կալվածքներ, անշարժ ու շարժական գույք է գնում և նվիրում Ս. Գրիգոր եկեղեցուն և բազում նվերներով ճոխացնում ու գեղեցկացնում այն։ Այդ ամենի դիմաց նա պարտավորեցնում է պատարագող քահանաներին, «որ անխափան պատարագ մատչի վասն արեւշատութեան տերանց իմոց Շահնշահի եւ որդոց իւրոց, եւ վասն թողութեան մեղաց իմոց»։ Այդ ճոխ նվերներն ու պարտավորված փոխհատուցումը օրինական դարձնելու և պահպանելու համար, Հոնենցը պատիժ ու խրախուսանք է սահմանում անեծքի ու օրհնանքի հետևյալ պայմաններով.

«Արդ. թէ ոք ի մեծաց կամ ի փոքունց. յիմոց կամ աւտարաց զորինչ արձանագրիս է խափանել ջանա կամ թէ իւք չարէ յարդեանցս որ ի սմա հաստատեալ է. կամ զյիշատակ զմեղուցեալ ծառայիս Աստուծոյ խափանէ զինչ և իցէ պատճառաւք. *այնպիսին որոշեալ լինի ի փառացն որդոյն Աստուծոյ եւ պատիժս զԿաենի և զՅուդայի ժառանգեսցէ ի գլուխ իւր եւ երեք սուրբ ժողովոցն եւ :Ի: գասուց հրեշտակաց նզովեալ եղիցի եւ մեր մեղացս համարս տացեն առաջի Աստուծոյ.* Եւ կատարաւղքն եւ հաստատողն պահողքն *աւրհնին յԱստուծոյ» (Օրբելի, Դիվան 1, 63, № 188):*

1279 թ. Վարդան վարդապետն ու Մխիթարիչը Հովհաննավանքին հնձան և թանկարժեք գույք են նվիրում: Միաբանները խոստանում են տարեկան 12 ժամ կատարել, վեցը՝ վարդապետի և վեցը՝ Մխիթարիչի համար: Նվիրատուները նվերներն ու պարտավորությունը անխախտ պահելու նպատակով գործարքն օրհնականացնում են անեծքի ու օրհնանքի բանաձևերով. «Արդ, եթէ ոք յառաջնորդաց կամ ի պատրոնաց յափշտակել ջանայ զընծայս մեր յեկեղեցոյս. *նզովեսցի մարդն այն յԱստուծոյ եւ, յերից սուրբ ժողովոցն, եւ մեր եւ բովանդակ ազգի մերս մեղացն պարտական եղիցին ի ահեղ հրապարակին:* Կատարիչք գրոցս *աւրհնին յԱստուծոյ:* Եւ որք խափանեն՝ *դատին ի Քրիստոսէ» (Ղաֆ., Հովհաննավանք, 107, № 57):*

Այս հիմնախմբում են դասվում նաև այն անեծք-օրհնանքները, որոնց իրավաբանական պայման-պահանջները ընդհանուր վերացական բնույթ ունեն և հավասարապես վերաբերում են թե՛ նվիրատվության պահպանությանը և թե՛ նվիրատու կողմերի պարտավորությունների կատարմանը, հարկավ, եթե այդպիսիները որոշակիորեն չեն սահմանափակվում գործարքի սոսկ մեկ կողմի պահպանությամբ: Դրանք են, ինչպես արդեն նշել ենք, «Եւ կատարիչքն աւրհնին յԱստուծոյ, ով խափանէ՝ դատի ի տեառնէ» (Ղաֆ., Սանահին, 155), «Կատարիչք գրոյս աւրհնին յԱստուծոյ եւ խափանողքն դատին ի տեառնէ ամենայն» (Ղաֆ., Հաղբատ, 147) և նմանները:

14. Անկախ այս երեք հիմնախմբերից, մեր մինչև այժմ քննած նվիրատվական արձանագրությունները մեծ մասամբ կազմված են նվիրատուի անունից, և նվիրառուն հիշատակվում է կամ հարևանցիորեն, սոսկ իբրև նվիրատուի հանձնառու («Եւ պարոնին սպասաւորք սորա», Օրբելի, Դիվան 1, 29. «Եւ սպասաւորք սորա փոխարէն հատուցեն մեզ», Անդ, 58. «Սարկաւագն եւ այլ սպասաւորքն

հատուցին մեզ», Անի, 36. «Եւ սպասաւորք խոստացան», Ղաֆ., Հովհաննավանք, 107. «Եւ առաջնորդ սուրբ ուխտիս տէր Համազասպ եւ եղբարքս սահմանեցին», Ղաֆ., Հովհաննավանք, 91. «Եւ միաբանքս զծառայարգարին զերկրորդ զատկեան ժամն ինձ ետուն», Մ. Բարխ., Արցախ, 367. «Եւ հաստատեցին ինձ», Ղաֆ., Սանահին, 128 և այլն), կամ էլ նվիրատու կողմը բնավ հանդես չի գալիս և նրա իրավական պարտավորությունը առաջադրվում է նվիրառուի կողմից իբրև վերջինիս բացարձակ կամքի արտահայտություն: Այդպիսի բնույթ են կրում մեծ մասամբ թագավորների, իշխանների, զորավարների, կաթողիկոսների կամ հոգևոր առաջնորդների նվիրատվական գործարքները, որ նվիրառու եկեղեցական սպասավորների կամքն առանձնապես հաշվի չի առնվում: Այսպես օրինակ, Ասլղարից Փաշլավունին Սուրբ Հակոբի եկեղեցին նվիրում է Գեորգ երեցին՝ որդոց որդի: Դրա դիմաց նվիրատուն պարտավորեցնում է («Եւ եդի լուծ») տարեկան վեց օր իր մոր՝ Շուշանի համար ժամ կատարել: Իր դրած այդ պարտավորության կատարումն ապահովելու համար նվիրատուն գործարքն օրինականացնում է անեծքով. «Եթէ որ զայդ ժամդ խափանէ: ՅԺԸ: իցն նզովեալ լիցի: Եւ եթէ որ այս գրոյս հակառ գա կրկին անիծիցդ պարտական լիցի» (Օրբելի, Դիվան 1, 49, № 137): Այսինքն՝ պարտադրվում է սոսկ նվիրատուի կամքը, որ թելադրված էր նաև նրա տված նվերի մեծությունից և իր իշխող դիրքից:

Զաքարիա ամիրսպասալարը 1210 թ. Հաղբատի ուխտին բազում գյուղեր ու կալվածքներ է նվիրում, հին գյուղերը փոխում է նորերով և այլն, և այդ բոլորի դիմաց միաբաններին պարտավորեցնում է («Եւ եդի լուծ ի վերա սոցա»), որ մեծ եկեղեցու ավագ խորանից իր՝ Զաքարիայի համար «մինչ ի գալուստն Քրիստոսի» անխափան պատարագ մատուցեն: Իր այդ գործարքին իրավաբանական ուժ և իր կամքը կատարել տալու համար, Զաքարիան սանկցիա է դնում անեծքով. «Եթէ հակառակի որ եւ զմեր յիշատակս խափանել ջանա, յիմոց կամ յաւտարաց, մեծ կամ փոքր, ի վրաց կամ ի հայոց Լաւռէու տէրանց, յեպիսկոպոսաց, ի քահանայից կամ յաշխարհականաց, գնէ կամ զՀաղբան յետ առու եւ զիմ պատարագն խափանէ, նզովի յամենակալ բերանէն Աստուծոյ եւ աւանդեալ հոգի նորա սատանա եղիցի» (Ղաֆ. Հաղբատ, 169, № 37):

Նվիրատուի նման պարտավորեցումը նվիրառուին, իրավա-

բանական յուրահատուկ գիծ է՝ նվիրատվական գործարքներում կի-րառվող[64]:

Սոսկ նվիրատուի անունից կազմված արձանագրություններից բացի, թեպետ քանակով քիչ, հանդիպում են նաև այնպիսիք, ո-րոնք կազմված են միայն նվիրատուի կամ էլ և՛ նվիրատուի, և՛ նվիրառուի կողմից, մեկի ակտիվ պարտավորեցմամբ, մյուսի նույնքան ակտիվ համաձայնությամբ:

Տեսնենք նախ մեկը, ապա՝ մյուսը:

Ա. «Կամաւն ամենակալին Աստուծոյ, ես տէր Յովհաննէս, ա-ռաջնորդ սուրբ ուխտիս Հաղբատայ յլմամբ եղբարցս ընկալաք սիրով զտէր Գրիգոր եպիսկոպոս Տարսոնա, որ եկն յերկրպագու-թիւն սուրբ Նշանիս եւ ետ ընծայ եկեղեցւոյս սպիտակ... պր նա-փորտ ի վայելումն եղբարցս եւ խնդրեաց ի մէնջ միաբան եւ եղ-բայր լինել մեզ: Եւ մեք ըստ յաւժար կամաց նորա սահմանեցաք զսուրբ Աստուածածնայ աւրն զվերափոխմանն զերրորդ աւուրն պատարագն, որ յամէն եկեղեցիքս իւր ծնողացն առնեն՝ Բարսեղ և Թագթի, եւ սնուցողացն՝ տէր Բարսղի եւ Հոփփսիմէ, եւ յետ վախ-ճանի նորա՝ իւր լիցի: Կատարողքն աւրհնին ի տեառնէ» (Ղափ., Հաղբատ, 178—179, № 48):

Այսինքն՝ նվիրատվության գործարքը և դրա դիմաց պար-տադրվող հատուցումը և այն իրականացնելու նպատակով գրված մաղթանք-բանաձևը շարադրված է նվիրառուի կողմից: Նույն երևույթն է առկա նաև հետևյալ արձանագրություններում.

Բ. «Ի թվին ՉԺԶ (1267): Շնորհիւն Աստուծոյ, Մխիթար քա-հանա, որդի Աւշինին, սնուցած տէր Յովհաննէսի, ետ արդիւնս ի շինութեանս սրահայարկ ի դուան կաթողիկէիս: Եւ մեք, տէր Յո-վաննէս, կամակցութեամբ եղբարցս, սահմանեցաք Բ (2) պատա-րագ բախտաւորին ի տաւնին Պարաւնէի: Կատարիչքն աւրհնին Յաստուծոյ» (Ղափ., Հաղբատ, 202, № 70):

Գ. «Անուամբ բարերարին Աստուծոյ... հարսն Գարբանեցոյ եւ որդիք իւր Վաչէ եւ Ծիթլասան միաբանեցան Հաղբատա եւ նուիրե-ցին ընծայս սուրբ Նշանիս: Եւ մեք՝ տէր Յովանէս կամակցու-թեամբ եղբարցս սահմանեցաք նոցա զսուրբ Գրիգորին ուրբաթըն աւրն պատարագ զամէն եկեղեցիքս: Կատարիչքն աւրհնին յԱստու-ծոյ» (Ղափ., Հաղբատ, 212, № 94):

---

64 Տե՛ս Ф. А. Брокгауз, И. А. Ефрон, Энциклопедический словарь, том X, СПб., 1893, стр. 140.

Այսպես, ուրեմն, արձանագրության հեղինակ է հանդես գալիս գործարքի երկրորդ կողմը՝ նվիրառուն, որը շեշտում է հատկապես իր հանձն առած պարտավորությունը և նրա իրագործման ապահովումը։ Եվ բնավ էլ պատահական չէ, որ նվիրառուի անունից գրված գործարքներում օրհնանքի կամ անեծքի բանաձևը ուղղված է սոսկ նրա հանձնառած պարտավորության կատարման նպատակին, քանզի գործարքի մյուս կողմն արդեն կատարված փաստ է և, բացի այդ, նվերներն այնպիսին են, որոնք նվիրատուի ժառանգների կողմից վեճի առարկա չէին կարող դառնալ։ Մինչդեռ նվիրառուի պարտավորությունը գալիքին էր վերաբերում, հետևաբար և հարկ ուներ իրավաբանական ապահովության։ Բայց տվյալ դեպքում սա չէ էականը, այլ այն, որ նվիրատվական գործարքի երկրորդ՝ հանձնառու կողմը հանդես է գալիս իբրև կենդանի պարտավորվող, իբրև իրավաբանորեն գործող կողմ, որ արձանագրությունների մեծ մասում իբրև այդպիսին չէր նկարագրվում, այլ սոսկ հիշատակվում էր, ինչպես այստեղ նվիրատուն։ Եվ եթե սոսկ նվիրատուի կամ սոսկ նվիրառուի կողմից գրված արձանագրությունները հիշյալ տեսակետից միակողմանի են, չեն նկարագրում մե՛րթ մեկ, մե՛րթ մյուս կողմի կենդանի գործունեությունը, ապա գործարքների հաջորդ խումբը այդ իմաստով լիակատար է և հանդես է բերում նվիրատու և նվիրառու կողմերին իրենց իրավաբանական պարտավորությունների շարժուն ու կենդանի դրսևորումներով։

15. Այսպես. 1054 թ. Սողոմոնի որդի Հովհաննեսը 20 դահեկան է նվիրում Անիի Խամբուշենց եկեղեցուն և պարտավորեցնում քահանաներին, որ ամեն տարի երկու օր անխափան ժամ անեն։ Քանի ինքը կենդանի է, մեկ ժամը՝ հորը նվիրեն, մյուս ժամը՝ մորը, իսկ իր մահից հետո, մեկ ժամ իրեն մատուցեն, մեկ ժամ՝ կնոջը՝ Ջահրային։

Այս իրադրության իրավաբանական վավերացումը, սակայն, կատարում է ո՛չ թե նվիրատուն, ինչպես տեսել ենք մինչև այժմ, այլ նվիրառուն՝ Խամբուշենց եկեղեցու Մովսես երեցը. «Արդ, եթէ ես Մովսէս կենաւք կամ մահուամբ զայս ժամս խափանեմ, տէրն եղիցի մեղացս Յովհաննիսի» (Օրբելի, Դիվան 1, 51, № 144)։

1229 թ. Վաչեի կին Մամախաթունը Անիի իր գանձագին ձիթհանքը նվիրում է Սանահնի Ս. Աստվածածնին, դրա փոխարեն միաբաններին պարտավորեցնելով իրենց հիշատակի օրը՝ սուրբ Գևորգի տոնին իր անունով պատարագ մատուցել, իսկ գալիք կի-

բակին՝ ամուսնու: Այս պարտավորեցումը վավերացնելու նպատակով պայման է դնում անեծքով. «Ով խափանէ՝ մեր խղճին տէր է առաջի Աստուծոյ»:

Նվիրատվական այս գործարքը հաստատվում է միաբանության առաջնորդ Գրիգոր վարդապետի կողմից և օրինական ուժ ստանում: «Ես՝ Գրիգոր վարդապետ, առաջնորդ սուրբ ուխտիս եւ միաբանքս հաստատեցաք: Զանի որ հրաման խափանել» (Ղաֆ., Սանահին, 134, № 58):

Սրանք ձևով արդեն վերածվում են մաքուր իրավաբանական փաստաթղթերի և բնույթով մոտենում պայմանագրերին, որոնց առավել հաջող դասական նմուշները տեսնում ենք ստորև բերված օրինակներում:

1214 թ. Սմբատի որդի Վասակն իր կնոջ՝ Ափայի հոգու համար այգիներ ու կալվածքներ է նվիրում «ամէն շահ ու զէնով» Սանահնի Ս. Աստվածածնին: Եվ իր նվիրատվությունը իրավաբանորեն վավերացնելու համար պայման է դնում անեծքով. «Ով զիմ տուեալս յԱստուածածնէս հանէ, ի սուրբ հայրապետացն նզովեալ է եւ Յուդայի մասնակից»: Բայց սրանով դեռ չի ավարտվում արձանագրությունը: Շարունակության մեջ Վասակի նվիրատվության ընդունող միաբանները վկայում են նվիրատուի իրենց պարտավորեցնելու մասին և իրավաբանորեն հաստատում են իրենց ստանձնած պարտավորության կատարման ապահովությունը, գրելով. «Ընկալաք մեք՝ առաջնորդ սուրբ ուխտիս Փիլիպոս հայր եւ Գրիգոր վարդապետ, ամէն միաբանութս, զՎասակա խընդիրն եւ հաստատեցաք Ափային զամէն եկեղեցիքս մինչ ի կատարած աշխարհի, զվարդավառն, բարէկենդան կիւրակէ աւրն: Զանի որ հրաման խափանել. ով յանդգնի՝ զվերոգրեալ նզովն առնու: Կատարողք զրոյց աւրհնին յԱստուծոյ» (Ղաֆ., Սանահին, 122, № 45):

1215 թ. Համազասպյան Սմբատի որդի Սարգիսն ընկնում է պատերազմում և նրան թաղում են Սանահնի Ս. Աստվածածնի եկեղեցու բակում: Հավանաբար դրա դիմաց Սարգսի որդի Սմբատն ու կինը՝ Աղաւար, կալվածքներ են նվիրում իր «շահ ու զէնով» եկեղեցուն և դրանք օտարողի դեմ պայման են դնում անեծքով. «Ով զայն հանէ յԱստուածածնէս, Գ սուրբ ժողովոյն նզովեսցի յԱստուծոյ»:

Այս գործարքն իր լիարժեք կերպարանքն է ստանում արձանագրության շարունակության մեջ, ուր միաբանները, այսինքն՝

նվիրատուները, շարադրում են իրենց պարտավորությունը և այն հաստատում անեծքով:

«Ես Հայր եւ վարդապետ Գրիգոր, Վարդան եւ ամէն միաբանքս տուաք զամէն եկեղեցիքս քառասնից տասնին զերկու եկեղեցին Սմպատայ եւ զայլն Սարգսի: Ով խափանէ զվերագրեալս՝ նզովս առցեն» (Ղաֆ., Սանահին 174, № 155):

Սա փաստորեն պայմանագիր է կնքված երկու կողմերի միջև, յուրաքանչյուրի պարտականության հիշատակությամբ և դրանց իրավաբանական հաստատմամբ:

Արձանագրությունների այս տեսակը, ինչպես տեսնում ենք, կառուցվածքով տարբերվում է նախորդներից. դրանց մեջ իրադրությունը երկփեղկված է երկու մասի. արձանագրության առաջին մասը վերագրված է նվիրատուին և վերարտադրում է նվիրատվության տեսակն ու փաստը (երբեմն և նպատակը), այս և անեծքով ապահովվում դրա անձեռնմխելիությունը: Երկրորդ մասը վերագրված է նվիրառուին, նրա հանձնառած պարտավորությունը, որի կատարումն ապահովվում է դարձյալ անեծքով: Որոշ արձանագրությունների երկրորդ՝ նվիրառուին վերագրվող մասում (տե՛ս Ղաֆ., Սանահին, №№ 58, 47) հաստատվում է միայն 1-ին մասում նվիրատվության դիմաց դրվող պարտականությունը և դրա անխափան կատարման խոստումը: Այս յուրահատուկ կառուցվածքով էլ արձանագրությունների հիշյալ տեսակը վերածվում է տիպիկ պայմանագրային գործարքի, մի յուրօրինակ նվիրատվական պայմանագրի, ուր կողմերի փոխհամաձայնությունը հենվում է նվիրատուի տված նվերի և նվիրառուի՝ դրա դիմաց հանձնառած պարտավորության կատարման վրա: Նվիրատվական արձանագրությունների այս խումբը, որ իրավաբանորեն նախորդ հիմնախմբերի գործարքների առավել զարգացած ու կատարյալ տեսակն է (սոսկ ըստ ձևի և ոչ թե պատմականորեն) գրեթե նույնանում է վանական-նվիրատվական կալվածագրերին:

16. Վանքերին ու եկեղեցիներին նվիրվող կալվածքների գրավոր գործարքների կամ պայմանագրերի պատմական բավական նմուշներն առկա են Ստեփանոս Օրբելյանի «Պատմություն նահանգին Սիսական» գրքում[65], որ անվանապես կոչվում են «կտակ... դաշամբք», «կտակ վճռի» (էջ 59) «կտակ... պայմանաւ», «վճիռ պայմանի» (էջ 66, 73) կամ պարզապես «կտակ»: Տեսնենք օրինակներով:

65 «Պատմութիւն նահանգին Սիսական, արարեալ Ստեփաննոսի Օրբէլեան արքեպիսկոպոսի Սիւնեաց», Հ. Բ., Փարիզ, 1859:

Սյունյաց Աշոտի որդի Սմբատ իշխանը Գեղամա գավառի սեփական Կակոյբ գյուղը իր շրջակա սահմաններով նվիրում է Սյունյաց տեր Հակոբ եպիսկոպոսին, իր ու հարազատների հոգու համար:

Հիշյալ նվիրատվությունն անձեռնմխելի դարձնելու նպատակով Սմբատ իշխանը սանկցիա է դնում անեծքով. «Արդ՝ չկայ այլ ուրուք իշխանութիւն, ոչ մեր եւ ոչ զաւակաց մերոց եւ այլ ումեք իշխել ի վերայ գեղոյս այս, և կամ հանել զանդիս զայս ի սուրբ խաչէս և ի սուրբ աթոռոյս. ապա թէ ոք ընդ հակառակն ելանիցէ՝ այնպիսին դատապարտեալ լիցի յԱստուծոյ ամենակալէն. եւ բաժին նորա ընդ Յուդայի և ընդ այլ խաչահանուացն, եւ դատին մի՛ յաղթեսցէ, զերն մի՛ ժառանգեսցէ, այլ որդւովք իւրովք եկցէ ի խաւարն արտաքին»:

Եվ ապա դիմում է տեր Հակոբին, որ նա է դրանց տերն ու իշխանը, և որ իրենց հոգին նրան ու ս. խաչին է հանձնված:

Պայմանագրի այս առաջին մասին հաջորդում է երկրորդը՝ նվիրատուի ու նվիրառուի կնիքներն ու հաստատումը և նվիրառուի պարտավորության ստանձնումն ու դրա կատարման հավաստումն անեծքով:

«Գրեցի զայս վճիռ ես Սմբատ իմով ձեռամբս, եւ կնքեցի իմով սովորական մատանեաւս, եդի ի վերայ եւ զտիրական մատանիս Տեառն Յակոբայ ի թուականիս Հայոց 369» (=920 թ.):

Այսինքն՝ նվիրատվական գործարք-պայմանագիրը երկու կողմերից հաստատվել է կնիքով, մի պարագա, որ չէր կարող արտացոլվել վիմագիր արձանագրություններում և չի էլ արտացոլվել:

Դրան հաջորդում է նվիրառու կողմի՝ իբրև վկայի, նվիրատվության փաստի հավաստումը, դրա ապահովության սանկցիավորումը անեծքով և ապա նվիրառուի ստանձնած պարտավորությունն ու դրա կատարման հանձնարարումը գալիք եպիսկոպոսներին. «Ես Տէր Յակոբ հաստատեցի իմով ձեռամբս զվճիռս զայս. եւ վկայ եմ հոգեշատուր պարգեւացս տեառն Սմբատայ՝ որդւոյ Աշոտի Սիւնեաց տեառն, որ երետ զիւր սեպհական գիւղն զԿակոյս ի սուրբ եկեղեցիս. եւ մի՛ ոք իշխեսցէ հակառակ կալ այսմ այժմ և կամ յետ ժամանակաց. ապա թէ յանդգնի՝ նզովեալ լիցի յԱստուծոյ և յամենայն սրբոց և ի սուրբ հայրապետացն և ի մէնջ. և դատապարտեալ գացի առաջի ահեղ ատենին Քրիստոսի. եւ բաժին նորա ընդ անհաւատս լիցի յանշէջ գեհենին: Եւ որ զկնի մեր կարգիք յաթոռ պարտաւորեն եք անմոռաց կատարել զյիշատակ տեառն Սմբատայ եւ հայցել թողութիւն մեղաց նորա: Եւ ամ յամէ մին քա-

ուսումն առնել նմա: Գրեցաւ այս վճիռ իմով ձեռամբս եւ կնքեցաւ իմով սովորական մատանեաւ ի կամս Աստուծոյ» (Օրբելյան, Պատմ., Բ, 10—11):

Սա, վիմագիր պայմանագրի հետ համեմատած, հարկավ, մանրամասների մեջ ունի տարբերություններ, բայց ընդհանուր ոգով ու կառուցվածքով գրեթե նույնանում է նրանց:

1085 թ. Սենեքերիմ թագավորը մի «վճիռ պայման»-ով (=պայմանագիր) Սյունյաց առաջնորդ Գրիգոր եպիսկոպոսի օրոք հայրապետանիստ Տաթևի սուրբ ուխտին է նվիրում Արիտ գյուղը իր կալվածքներով, արոտավայրերով, իր և իր հարազատների հոգիների փրկության համար: Դրա դիմաց իբրև փոխհատուցում սահմանում է, որ («եւ կարգեցի») տարեկան քառասունք կատարել հարազատների և իր մահվանից հետո՝ իր հոգու համար: Այդ նվիրատվությունն ու կարգադրված պարտավորությունը անսասան պահելու նպատակով սանկցիա է դնում անեծքով և օրհնանքով. «Արդ եթէ ոք ընդ հակառակս ելանէ կամ խափանել մտածէ կամ յափշտակել յանդգնի կամ քաշ ումեք, կամ ի բանսարկութիւն մտաբերէ շրջել զմեր արդիւնդ ի սուրբ եկեղեցւոյդ, այնպիսին մի՛ գտցէ ողորմութիւն յԱստուծոյ մի՛ յայսմ աշխարհի եւ մի՛ ի հանդերձելումն. այլ անէծք յափշտակողացն եկեսցէ ի վերայ նորա, և մեղք մեղապարտիցն եւ նզովք չարագործացն, որպէս Կայենին եւ Յուդային և Արիոսին եւ հոգեմարտին Մակեդոնին եւ Նեստորի երկաբնակին եւ Լեւոնի հռոմայեցւոյն և որ այլ նմանիք նոցա. եւ հաստատիչքն օրհնեալ եղիցին յԱստուծոյ ամենակալէն և յամենայն սրբոց»:

Այս անեծք-օրհնանքին հաջորդում են նախ՝ նվիրատուի և նրա հարազատների վկայությունը («Գրեցաւ իմով ձեռամբս Սենեքերիմայ՝ որդւոյ Սեւադայի ի կամս Աստուծոյ. ես Շահանդուխտ վկայ եմ իմ եղբօրս Սենեքերիմայ հաստատուն արարածիս եւ վճռիս. որ ետուն ի Տաթեւոյ սուրբ առաքելայքն. Աստուած շնորհասցէ արասցէ սուրբ եկեղեցւոյն. որ խափանել մտածէ՝ զգրեալ անէծքն ժառանգեսցէ: Եվ հաստատիչքն օրհնեալ եղիցին. ես Գրիգոր՝ Սենեքերիմայ որդիս ու իմ եղբարքս վկայ եմք այս անսուտ և հաստատուն տրոյս և հրամանացս...»), ապա նվիրառուի՝ Սյունյաց Գրիգոր եպիսկոպոսի նվիրատվության ընդունման հավաստումը, դրա դիմաց սահմանված պարտավորության ստանձնումն ու անխափան կատարելու պայմանն՝ անեծքով. «Եւ արդ եթէ մեք և եթէ որ զկնի մեր յաջորդին ի սուրբ յաթոռս հայրապետաց, և կամ տանս այլ առաջնորդք վանականք, աւագ երէց, եկեղեցական և այլ կարգա-

«որք՝ յեղեալ քաղաքացոց ծուլանան, եւ զինչ և իցէ պատճառաւ՝ միով աւուրբ պակասումն առնեն՝ թող թէ այլ աւելորդ խափանեն՝ անփոխելւոյ լիցին ի Քրիստոսէ Աստուծոյ, և ջնջեսցին անուանք նոցա ի դպրութենէ կենաց. և մի՛ կատարեսցի յիշատակ նոցա առաջի սուրբ սեղանոյ զենմանն Քրիստոսի և անթողութիւն լիցի յարդար դատաստանէն յանկաշառ ատենին», և այլն (Օրբելյան, Պատմ., Բ, 66—69):

Այս ձեռագիր պայմանագրերից պարզվում է երկու բան. նախ՝ այն, որ ձևով ու կառուցվածքով նույնանում են վիմագիր պայմանագրերին, բաղկացած են նրանց նման երկու մասից՝ նվիրատուի և նվիրառուի տուրքի և առքի երկկողմանի համաձայնությունից, և ապա այն, որ սրանք առավել ընդարձակ են ու հանգամանալից, քան վիմագիր պայմանագրերը: Միաժամանակ, բերված և այլ ձեռագիր պայմանագրերում առկա են նվիրատվության և նվիրառության գործարքը վկայող անձինք, այսինքն՝ վկաներ, որ չկային մեր քննարկած վիմագիր պայմանագրերում: Բայց մեր ձեռքի տակ եղած նվիրատվական վիմագիր արձանագրություններից մեկում հիշատակված է նաև այդ պարագան:

Մինաս վարդապետը գնում է Խրատացը այգին, որի բահրան Հաղբատի ս. Նշանին են նվիրում: Այդ գործարքը վավերացվում է, նախ Մինաս վարդապետի անեծքով («Ով որ հակառակի սրբոցանէ՝ կապած լինի») և ապա վկայի հետևյալ ցուցումով. «Ես Փուլատ Բէկս տեսայ, այլ վերըստին հաստատեցի: Ինչ մարդ խափանել ջանայ՝ նզովեալ եղիցի» (Ղաֆ., Հաղբատ, 218, № 107):

Նախ՝ նկատենք, որ մեր քննարկած նվիրատվական բոլոր գործարքները, բացառությամբ առաջին հիմնախմբի արձանագրությունների մի մասի, ուր բնավ չեն հիշատակված նվիրառու կողմի պարտավորությունները, իրենց մեջ ներփակված ունեն պայմանագրի գրեթե բոլոր էական տարրերը: Դրանց մեջ գործարքին մասնակից մեկ կողմի բերանով միայն (մեծ մասամբ նվիրատուի) հիշատակվում են նվերների տեսակները, նվիրատուրքը, նվիրառուի ստանձնած պարտավորությունն ու ամբողջ գործարքի կամ նրա մեկ կողմի պարտավորության վավերացումը անեծք-օրհնանքներով: Այս պարագան մեզ հիմք է տալիս ենթադրելու, որ 2-րդ և 3-րդ հիմնախմբերի գործարքները, համառոտված պայմանագրեր են, առանց վկաների հիշատակության, որ սովորաբար վիմագիր պայմանագրերում բացակայում է: Իսկ ինչ վերաբերում է առաջին հիմնախմբի նվիրատվական գործարքներին, ապա դրանք բնույթով նվիրագրեր կամ ընծայագրեր են, որոնք հա-

տատվել են ու կնքվել վկաների կողմից: Այդ են ցույց տալիս միջնադարյան ձեռագրերում պահպանված հին նվիրատվական կալվածագրերի՝ կամ «սիգելների» նմուշները:

17. Սիգելները կամ վանական-նվիրատվական կալվածագրերը, բնույթով ոչ այլ ինչ են, քան եթե առաջին հիմնատիպի մեջ մտնող վիմագիր նվիրատվական արձանագրությունների տարբերակներ: Դրանք կառուցվածքով նույնանում են վիմական նվիրատվական գործարքներին, միայն մեկ էական տարբերությամբ: Վիմագիր նվիրատվական գործարքներում, ինչպես տեսել ենք, չհաշված հազվադեպ բացառությունները, վկաների հաստատման մասին գրեթե ոչ մի խոսք չկա: Մինչդեռ ուշ շրջանի բոլոր նվիրատվական կալվածագրերն անխտիր ավարտվում են վկաների անուններով և կնիքների հիշատակությամբ:

Կալվածագրերն սկսվում են նվիրատուի անվան և նվիրատվության մանրամասն հիշատակմամբ: Դրանց հաջորդում է նվիրատվությունն անձեռնմխելի պահելու նվիրատուի հավաստիացումը: Իսկ վերջինս իրավաբանորեն հաստատելու համար պայման է դրվում անեծք-օրհնանքով: Դրանով ավարտվում է գործարքի բնագիրը և ներքևում ավելացվում վկաների անուններն ու կնիքները՝ երբեմն այսպիսի և նման ծանուցմամբ. «Այս եղև ներքոյգրեալ մարդկանց գիտութեամբն և վկայութեամբն» (Աբր., Կալվածագրեր, 38): Բերենք միայն երեք օրինակ:

Ա. 1184 թ. (Կ. Ղաֆադարյանի ճշտմամբ՝ 1214 թ., որ ավելի հավանական է) Զաքարե սպասալարն ու իր եղբայր Իվանե աթաբեկը Ոռնակ, Ոռնակա Գոմ, Վաշխ, Հալալաշեն և այլ գյուղեր ազատում են հարկերից և դրանք իրենց բոլոր կալվածքներով, անշարժ ու շարժական գույքով նվիրում Սանահնի Ս. Աստվածածնի վանքին հավերժալ հրամանով ու անեծք-մաղթանքով: «Անդառնալի հրամանաւ մեր չիշխե վանք (=ոք) հակառակէք ոչ իմոց և ոչ աւտարաց, ոչ ազատաց, և ոչ ազատորդաց անտքնի (=յանդգնի) ու հակառակել կամենայ կամ իմոց կամ աւտարաց Գ սուրբ ժողովոյն անիծած է և իմ մեղաց տէր է առաջի Աստուծոյ. և պատիժն Կայենի և վարձքն Յուդայի առնու, հետ խաչհանողացն տանջեսցի, ի անշէջ գեհենանին մաշեսցի. Կորխայ և Բէհեզիցն լիցի մասնակից, յանձն մինչև ի Նեռն անիծած է, զպատիժն Յուդայի առցէ և ուրացողացն լինի դասակից և պսակակից. կատարողքն յաղաշանացս աւրհնին կամակցութեամբն Աստուծոյ և հակառակողքն պատիժս կրեսցեն:

Այսպէս գրեցաւ Ս-րապիլ սարգաւագի ձեռամբս: Ես ման-

տատուրթուխուցէս Համազասպ որդի Սարգսի, տէրս Ազնկու վկայ պարոն Շահանշահի հրամանաւս. Ես Բումբէս տէրս Աւզաւրվայ վկայ եմ...» և շարունակվում է ևս հինգ վկայի անուն (Մատ., ձեռ. № 3031, էջ 56—61)։

Բ. «Պատճառ գրոյս այս է. թվին ՌՃԼԷ (1688) ապրիլի ամսոյ Ի (20)։

Ես Ղօչիկէնց Հայրապետի որդի Յակոբս, ես իմ կամաւս և իմ կենդանութեամբս և իմ առողջ ժամանակիս, իմ հայրենիքի Սալաղունիս արտն, որ է Ը(8) սոմարէն տեղ, ավի Սուրբ Նախավկայի վանիցն վախմն, յիշատակ իմ ծնօղաց և եղբարց հոգոյն։ Տվի իւր չորս սարհատովն. առաջին սարհատն է՝ Դիլանչու Բունիաթի արտըն. երկու սարհատն է՝ Դօլվաթխօջէնց Նազարի արտն. երեք սարհատն է՝ Ամիրի արտն. չորս սարհատն է՝ քանտալն, որ և կատարեալ եղև չորս կողմի սարհատքն։ Այս արտս, որ ես իմ կամաւս ավի, սորա կողմանէն ոչ ում խօսք և կամ իլաղայ չկայ. ո՛չ եղբօր և ո՛չ եղբօր որդոց. ո՛չ քվէր և ո՛չ նոցա որդոցն, թոռանցն և ծոցն. ո՛չ ազգի և ո՛չ բարեկամի և ոչինչ վարիսի և կամ զուրիաթի, բնաւ և ամենևին ոչ ում խօսք և կամ իլաղայ հարկ չկայ և չինի Սուրբ Նախավկայի առաջնորդին և միաբանին հետ, որ ես Հայրապետի որդի Յակոբս իմ յօժար կամաւն ավի Սուրբ Նախավկային վախմն։ Ով ոք որ իմ ազգայնոցէն, իմ զուրիաթէն և աւլատէն ողջ և դառէ յայսմ բանիս հակառակի, այլ և այլ անէ. այս արտիս կողմանէն Սուրբն Նախավկայուցն դաւի անէ, ԳՃԺԸ (318) հայրապետաց նզովեալ լինի և ամենայն դատաստանաւ քէհասապ լինի և սէվերէս Քրիստոսի դատաստանն գնայ. ապայ՝ յայսմ բանիս չհակառակողքն աւրհնեալ լինին ի Քրիստոսէ և յԱստուծոյ ամէն *(կնիք «Յակոբ»)։*

Ես՝ Տէր Մարգարէս վկայ եմ (կնիք). Ես՝ Անդրիազի որդի Սուքիասս վկայ եմ (կնիք). Ես Աղի Նօքար Զիալս վկայ։ Եւ Տէր Մարգարի որդի Մաղաքիս գրեցի, վկայ եմ» (Աբր., Կալվածագրեր, 33—34, № 20)։

Գ. «Պատճառ գրոյս այս է. թուին ՌՃԾԷ (1708). փետրվարի մէկ. որ ես Դիլաքի որդի Մահտեսի Անտոնս ես իմ կամաւս և իմ կէնդանութեամբս և իմ առողջ ժամանակիս իմ առած դարպինտի զուքանն ավի մեր Աթոռ Սուրբ Ստեփաննոսի վանքին վախմ, ինձ հոգոյ բաժինի տեղ, որ քրէհով տան քրէհն մեր վանքի միաբանին ուտին և վայելէն, որ ի ժամ սուրբ պատարագին զիս և իմ ծնօղքն յիշեն և յիշատակեն։ Այս իմ աշխատանօք գնած զուքանս, որ ավի մեր վանքին վախմ, սորայ կողմանէն ոչ ում խօսք կամ իլա-

գայ չկայ. ո՛չ եղբօր և ո՛չ քվեր, ո՛չ որդոց և ոչ՛ դստերանց, ո՛չ թոռանց և ո՛չ ծոռց (ծոռանց), ոչ ում խօսք և իլաղայ հարկլըղ չկայ և չլինի մեր վանքի առաջնորդին և միաբանին հետ. որ ես՝ Մահտեսի Անտոնս իմ կենդանութեամբս իմ ղուքանն վախմ արարի մեր վանքին: Հարգան. թէ յետ իմ մեռանելուն իմ որդ(ոց)է և դստերէ, թոռնէ և ծոնէ (ծոռնէ) յանդգնի և այս իմ տված վախմիս կողմանէն յակառակի և մեր վանքի միաբանէն դափ անէ. ԳՃԺԸ. (318) հայրապետաց նզովեալ լինի և սէվերես առ Յիսուսի Քրիստոսի դատաստանն գայ:

Այս եղև ներքոյ գրեալ մարդկանց գիտութեամբն և վկայութեամբն»: Հաջորդում է վկաների անվանաշարքը (Աբր. Կալվածագրեր, 129, № 101):

Տեսնում ենք, ուրեմն, որ այս սիգել-կալվածագրերը բնույթով ու բովանդակությամբ նույնն են, ինչ I հիմնախմբի վիմագիր ընծայագրերը: Եվ ապա, անեծք-օրհնանքները նվիրաբերական կալվածագրերում ևս նպատակ են հետապնդում նվիրատվության անձեռնմխելիության իրավաբանական պահպանությունը, ճիշտ այնպես, ինչպես առաջին հիմնախմբի նվիրատվական վիմագիր գործարքներում: Նվիրատվական կալվածագրերում անեծք-օրհնանքների պայմաններն իրենց նշանակությամբ ծածկում են բուն հրագրության ամբողջ իմաստը, այսինքն՝ դառնում են հրագրության ամբողջական կրողներ, որով և՛ պատժի, և՛ խրախուսանքի անեծք-օրհնանքներով սանկցիաները դառնում են ամբողջ գործարքի իրավաբանական կողմը ապահովող նորմաներ: Այնուհետև. վիմագիր ու ձեռագիր նվիրատվական գործարքների ուսումնասիրությունից պարզվում է, որ դրանք իրենց կառուցվածքով բաժանվում են երկու գլխավոր տեսակների 1. նվիրատուի անունից կազմած նվիրագրերի կամ ընծայագրերի, որպիսիք են վիմագիր գործարքների ճնշող մեծամասնությունն ու կալվածագրերը, և 2. նվիրատուի և նվիրառուի անուններից կազմված պայմանագրերի, որոնցից վիմագիր արձանագրություններում հազվադեպ են հանդիպում: Վիմագիր նվիրագրերը տարբերվում են ձեռագրերից այնու, որ դրանք չունեն վկաների շարքն ու կնիքները, որոնք ավելորդ ջանք ու տեղ չգրավելու նպատակով, դիտավորյալ դուրս են թողնվել վիմագիր արձանագրություններից:

Վիմագիր բոլոր նվիրատվական արձանագրություններն, այդպիսով, իրենց դրսևորման ձևերի տարբերություններով հանդերձ, էությամբ իրենցից ներկայացնում են իրավաբանական վավերագրեր, որոշակի՝ նվիրատվական գրավոր գործարքներ, կապված

վանական սեփականատիրության կոնկրետ դրսևորումների հետ: Դրանք, անկախ ձևական տարբերություններից, բնույթով նույնանում են դրչագիր նվիրատվական գործարքներին: Եվ անեծքներն ու օրհնանքները երկու դեպքում էլ իրավաբանական միևնույն ֆունկցիան են կատարել, այսինքն՝ վկայակոչվել են նվիրատվական գործարքների մերթ մեկ, մերթ մյուս, իսկ ավելի հաճախ՝ երկու կողմերի պարտավորությունների կատարումն ապահովող բարոյական պատժի և խրախուսանքի իրավաբանական դերերում:

Անեծք-օրհնանքների իրավաբանական այս կիրառությունն այնուհետև դրսևորված ենք գտնում վիմագիր արձանագրությունների մի ուրիշ տեսակի՝ **օրենսդրական** արձանագրությունների մեջ:

18. Բացի նվիրատվական-շինարարական արձանագրություններից, հայ միջնադարյան վիմագիր հուշարձաններում զգալի թիվ են կազմում այն արձանագրությունները, որոնցով տվյալ երկրի, քաղաքի, համայնքի, հասարակության, միաբանության համար աշխարհիկ կամ հոգևոր իշխանավորների կողմից որևէ կարգ, օրենք կամ կանոն է **սահմանվում և պարտադրվում** տվյալ հասարակական միավորին՝ ի պահպանություն կամ ի գործադրություն:

Այդ բնույթի արձանագրություններն անվանում ենք **օրենսդրական**, նկատի առնելով նրանց նպատակն ու բովանդակությունը: Նախորդ՝ նվիրատվական-շինարարական արձանագրություններն, իրենց հիմքով ևս որոշ չափով օրենսդրական էին, քանզի նվիրատվության դիմաց ակնկալվող փոխհատուցման պարտադրմամբ փաստորեն որոշ կարգ էր սահմանվում պատարագ կամ ժամ մատուցելու վերաբերյալ: Տարբերությունն այն էր, որ սահմանված կարգը վերաբերում էր սոսկ նվիրատվությամբ ստացած տվյալ վանքին կամ միաբանությանը և հիմնվում էր նվիրատուի համաձայնության վրա, մինչդեռ օրենսդրական արձանագրություններում կարգն ու օրենքը սահմանվում է հասարակական առավել լայն միավորների համար և առանց այդ կարգի ու օրենքի ենթակաների կամքի հաշվառման: Բայց և այնպես, ինչպես արդեն նշվել է, արքայական և իշխանական նվիրատվական արձանագրությունների մեջ հատկապես, կան երկրորդ սկզբունքի խախտման դեպքեր, երբ բացառվում է նվիրատուի կամքի հաշվառումը և թե՛ նվիրատվությունը, և թե՛ նրա հատուցումը պարտադրվում է նվիրատուին անվերապահորեն, սոսկ նվիրառուի կամքով: Սրանք բնույթով արդեն մոտենում են օրենսդրական արձանագրություններին, մանավանդ, երբ նվիրատվությանն ու պարտադրվող հատուց-

մանր զուգահեռ, հոգևոր առաջնորդը կամ աշխարհիկ իշխանը օրենքի ուժ ստացող որևէ արտոնություն կամ կարգ է սահմանում:

Այսպես, օրինակ. Սյունյաց արքեպիսկոպոս Ստեփանոս Օրբելյանը 1326 թ. Վաղաձնի վանքին կալվածքներ է նվիրում և վանքն ազատում ամենայն հարկից: Եվ տված նվերների անձեռնմխելի և սահմանած օրինակարգն անխախտ պահելու նպատակով արքեպիսկոպոսը անեծքով պատժի պայման է դնում «Արդ յայսմհետէ չունի ոք հրաման յաթոռակալաց կամ այլ իշխողաց զմեր տվածս ի սուրբ ուխտէս հանել կամ խափանել ջանա, մեր մեղացն պարտական լիցի եւ յերից սուրբ ժողովոյն որոշեսցի, մասն եւ բաժին զՅուդային եւ զխաչողացն առցէ» (Ս. Բարխ., Դիվան 2, 101, № 289):

Կամ. Պետրոս Գետադարձ կաթողիկոսը 1036 թ. Աշնակի այգին իր բոլոր հարմարություններով նվիրում է Ապլղարիպ Պահլավունուն: Վերջինս դրա դիմաց կաթողիկոսին է նվիրում իր շինած Ս. Փրկչի եկեղեցին կից ապարանքներով: Կաթողիկոսը նվերը պահպանելու և որոշակի կարգ սահմանելու նպատակով պայման է դնում անեծքով և օրհնանքով. «Արդ եթէ ոք զապարանսդ զոր շինեալ է Ապլղարիպա առ սուրբ Փրկչիս եւ կամ զոր ինչ տուեալ է ի պէտս եկեղեցւոյս եւ որոշէ ոք եւ կամ յապարանսդ բնակի եւ զեկեղեցւոյդ հոգսդ զոր ինչ պիտո լինի եւ երկիւղի Աստուծոյ՝ ոչ հոգա, ի սուրբ Լուսաւորչէն եւ ի նորին աթոռակալացն մինչեւ զմեզ յամենեցուն նզովեալ լիցի, իսկ կատարիչ գրոյս՝ աւրհնեալ լիցի» (Օրբելի, Դիվան 1, 48, № 135):

Այս կարգի արձանագրությունները, որ նվիրատվական և օրենսդրական իրավաբանական միավորների խառնուրդ են, մի տեսակ փոխանցիկ օղակ են դառնում նվիրատվական գործարքների և օրենսդրական կանոնների միջև: Եվ հենց այս խառն բնույթի արձանագրությունների մեջ էլ նկատվում է անեծք-օրհնանքների կիրառական դերի շրջադարձը նվիրատվության ու փոխհատուցման պարտավորության պահպանումից դեպի օրինապահպանությունը: Այստեղ էլ հենց առավել է ընդգծվում անեծք-օրհնանքների իրավաբանական կարևոր արժեքն ու նշանակությունը:

Տեսնենք օրենսդրական արձանագրությունների օրինակներով:

Նախ նկատենք, որ նվիրատվականների նման օրենսդրական արձանագրություններում ևս անեծք-օրհնանքները կիրառվում են և՛ առանձին-առանձին, և՛ միասին՝ զուգադիր ձևով. ընդ որում, ավելի տարածված է վերջին կիրառությունը:

Գանձասարի Աղվանից Պետրոս կաթողիկոսը շինել է տալիս Ամարասի Ս. Գրիգորի եկեղեցին, վերականգնում Ամարասի արքեպիսկոպոսական աթոռը և Վարանդայի ու Քոչիզայի պառակտված եպիսկոպոսական աթոռները միացնում է իրար և կենտրոնը դարձնում Ամարասը։

Այս նոր սահմանված եկեղեցա-վարչական կարգը պահպանելու համար կաթողիկոսը անեծքով դնում է հետևյալ պայմանը. «Ով ոք զայս վիճակս բաժանել և զոք նստուցանել այլ տեղի, եթէ կաթուղիկոս իցէ կամ եպիսկոպոս Տէր զայնպիսին՝ նզովեալ եղիցի ՅԺԸ հայրապետացն, ընդ խաչահանուացն դասեսցի, Յուդայի մասնակից եղիցի» (Մ. Բարխ., Արցախ, 104)։

Այսինքն՝ անեծքը դառնում է կաթողիկոսի սահմանած կանոնա-իրավական օրինակարգը բարոյական պատժի երկյուղի ուժով պահպանելու միջոց։

Անիի առաջնորդ Տեր Սարգիսը ամուսնության նոր կարգ է հաստատում. ըստ այդմ, պսակի թույլտվություն ստանալու պարտականությունը, որ մինչ այդ դրված էր հարսի հարազատների վրա, նա փոխում և դնում է փեսայի հարազատների վրա, որպեսզի բռնի ամուսնություն (հավանաբար առևանգմամբ) չկատարվի («Եւ այլ բռնապսակ առնել ոչ ունի ոք իշխանութիւն»)։

Պսակադրման այս նոր սահմանված կանոնին օրինականության կենսական ուժ տալու համար Տեր Սարգիսը պատիժ է դնում անեծքով. «Որ զգրեալս մեր խափանէ ի յիմոց կամ յաւտարաց :Գ: հարիւր :ԺԸ: հայրապետացն նզովել եղիցի» (Օրբելի, Դիվան 1, 19, № 62)։

Անիի Մխիթար եպիսկոպոսը երկրաշարժի ցասումը կանխելու նպատակով կիրակի օրերին Անիի փողոցային առևտուրը դադարեցնել է տալիս («բարձաք զկիւրակէի վաճառն ի փողոցէ»)։

Իր այս նոր սահմանած օրենքը հաստատուն պահելու համար, Մխիթարը պայման է դնում անեծքով. «Որ այս գրիս հակառակ կայ, թէ մեծ թէ փոքր՝ Կաղաքիս մեղացն տէր է» (Օրբելի, Դիվան 1, 24, № 76)։

Դարձյալ՝ անեծքով բարոյական պատիժ է սահմանվում օրինազանցների դեմ։

Ուշագրավ են հատկապես Անիի եկեղեցական ու աշխարհիկ հարկերին վերաբերող վիմագիր արձանագրությունները, որ առավել շեշտված է ի հայտ գալիս անեծք-օրհնանքների իրավաբանական արժեքը։

Անեցի բաժրար Միլենց Սարգիսն իր տեր Շահնշահի հիշատակի և նրա զավակ Զաքարիայի ու եղբայրների երկայնակեցության համար վերացնում է Ս. Գրիգոր եկեղեցու մեծ ու փոքր բաժերը: Այս տնտեսական առանձնաշնորհումը անխախտ պահելու նպատակով բաժրարը դիմում է անեծքի և օրհնանքի ներգործության զորությանը. «Եթէ որ զյիշատակս խափանէ,—գրում է նա,—նզովեալ եղիցի յամենակալէն Աստուծոյ. հաստատուն պահողք աւրհնին յԱստուծոյ» (Օրբելի, Դիվան 1, 3, № 6):

Անիի արքեպիսկոպոս Գրիգորը 1216 թ. վերացնում է մեռելների հոգևոր սպասարկման դիմաց գանձվող հարկերը («բարձի զայս հարկս յամենուստ մինչև ի կատարած յաւիտենից»): Այս օրենքն անխախտ պահելու նպատակով նա բարոյական պատիժ ու խրախուսանք է սահմանում՝ անեծքով և օրհնանքով. «Եթէ որ զգրեալս իմ խափանել ջանա՝ դատապարտական լիցի ի տեառնէ, իսկ որ հաստատուն պահէ՝ աւրհնեսցի յԱստուծոյ եւ յամենայն սրբոց և մեզ աղաւթս առնեն կենդանեաց եւ մեռելոց» (Օրբելի, Դիվան 1, 14, № 53):

Դարձյալ Անիի առաջնորդ տեր Գրիգորը վերացնում է Շիրակի գյուղերից գանձվող հացի, իսկ Անիի եկեղեցիներից՝ մորթու հարկերը և կարգադրում. «Զունի որ իշխանութիւն պահանջել մինչ ի գալուստն Քրիստոսի»: Բայց արքեպիսկոպոսն այդ կարգադրությամբ չի բավարարվում, քանզի դեռ այն բավարար իրավաբանական հիմունք չունի՝ սահմանած օրինակարգը պահպանելու համար: Ուստի հիշյալ նպատակով նա դիմում է նորից անեծքի և օրհնանքի ներգործման զորությանը՝ գրելով. «Ապա եթէ որ խափանել ջանա՝ նզովեալ եղիցի յԱստուծոյ, կատարիչ յիշատակիս աւրհնեսցին յԱստուծոյ եւ յամենայն սրբոց» (Օրբելի, Դիվան 1, 16, № 56):

Անիի դաղմաչի Մխիթարը Իվանեի որդի պարոն Աղբուղի հրամանով վերացնում է Անիի ջրաղացների հարկը: Այս նոր օրենքը հաստատուն պահելու համար պատժի և խրախուսանքի պայման է դրվում անեծքով և օրհնանքով. «Եթէ որ ի մեծաց կամ ի փոքունց զայս արձանս խափանէ, մարդն էն նզովեալ եղիցի ՅԺԸ հայրապետացն, մասն և բաժին զՅուդային և զԿայենին առցէ եւ որ հաստատ պահէ աւրհնին յԱստուծոյ» (Օրբելի, Դիվան 28, № 85):

Անիի մի այլ դաղմաչի՝ Պապկա որդի Գեշը, իր տերերի, հավանաբար՝ Աղբուղի հրամանով, վերացնում է քասանիկ կոչված հարկը: Հիշյալ օրինագծի իրավական ներգործությունը հարատև

768—6

դարձնելու նպատակով դարձյալ պատժի ու խրախուսանքի պայմանն է դրվում անեծքով և օրհնանքով. «Ով որ զայս արձանս խափանէ՝ դատի յԱստուծոյ, մասն և բաժին զՅուդային առցէ. հաստատուն պահողքն աւրհնին յԱստուծոյ» (Օրբելի, Դիվան 1, 30, № 88)։

Վերոբերյալ երկու տեսակի հարկերի վերացման պատճառն, հավանաբար, Իվանեի որդի Աղբուղի 1301 թ. Անի գալը և քաղաքը բնակիչներից նոսրացած ու հարկերից աղքատացած տեսնելն էր, որի մասին վկայում է մի այլ արձանագրություն (Օրբելի, Դիվան I. 28, № 84)։ Այդ վիճակը բարվոքելու համար Աղբուղան վերացնել է տալիս հետևյալ երեք հարկերը՝ եզի հազրը, կովի համրեքն և ոչխարի աղլահակը։ Հիշյալ օրենքը անխափան կիրառելու նպատակով, օրենսդիրը խրախուսանքի ու հորդորի պայման է դնում օրհնանքով. «Եթէ ով յիմ ազգէ լինի. եթէ՝ այլուստեք որ զյիշատակս մեր հաստատուն պահէ՝ աւրհնի յամենակալ բանէն Աստուծոյ»։

1269 թ. Անիի դագմաչիները վերացնում են Անիի քահանաներից գանձվող բաժը և կարգադրում. «Զանի որ իշխանութիւն բաժ ուզէլ»։ Եվ այս օրենքին ու արգելման կարգադրությանը իրավաբանական զորություն հաղորդելու համար պատժի և խրախուսանքի սանկցիա են դնում անեծքով և օրհնանքով. «Ով այլ խաւսք... կամ աղման անէ բաժ ուզելու՝ 3ԺԸ հայրապետացն նզոված է. հաստատուն պահողք աւրհնին յԱստուծոյ» (Օրբելի, Դիվան 1, 24, № 75)։

Անեծք-օրհնանքների, իբրև իրավաբանական սանկցիայի կիրառության ցայտուն դրսևորումն ենք գտնում վիմագիր մի քանի կանոններում։

1220 թ. Անիի առաջնորդ տեր Սարգիսը ազատում է քաղաքի քահանաներին «իրիցակնոջ մուտք» կոչված հարկից։ Այս կանոնը խախտողների դեմ նա խիստ պատիժ է սահմանում. «Եպիսկոպոս որ այժմ եւ կամ զկնի մեր յաջորդութեան յուզէ յիրիցանոցս մինչեւ զայն փողն կամաւ կամ ակամա. եւ քահանա որ պատառիչ լինի ուխտիս եւ աւգնութիւն տա, ի կարգէն լուծեալ լիցի»։

Ուրեմն, ընդհուպ մինչև եպիսկոպոսներին ու քահանաներին կարգալույծ անելը, այսինքն՝ կանոնա-իրավական պատիժ։ Սակայն արքեպիսկոպոսը սոսկ դրանով չի բավարարվում։ Կանոնաիրավական պատժի սանկցիային հետևում է հոգևոր-բարոյականը, որ առավել ուժգին ու ահազդու է հնչում միջնադարյան ականջներին, քան առաջինը։ Հոգևոր առաջնորդը ամենայն խստությամբ ազդարարում է. «Արդ եթէ ոք այսմ հաստատ պարգեւացս հակառակ գտցի, եթէ յառաջնորդաց եթէ յիշխողաց եթէ ի բնաւորաց.

յերից սուրբ ժողովոյն նզովեալ եղիցին յոգի եւ ի մարմին, մասնակից եւ գեհենակից եղիցի սատանայի եւ Կաենի. եւ արաց նորա ամենայն»։

Սրան անմիջապես հաջորդում է հիշյալ կանոնի մի նոր կետ ևս («Իրիցակին յորտեղ վախճանի՝ այն տանն երէցն չունի հրաման յԱստուծոյ մուտք յուզելու մեծ կամ փոքր»), որ հավանաբար մոռացության հետևանքով է բնագրից դուրս մնացել, որին հետևում է այս օրհնանքը. «Կատարիչք հրամանացս աւրհնեսցին ի Քրիստոսէ Աստուծոյ մերոյ» (Օրբելի, Դիվան 1, 17, № 57)։ Այսինքն՝ օրենքը կիրառողների նկատմամբ խրախուսանքի և հորդորի իրավաբանական ներգործման միջոցի սահմանում։

Անեծք-օրհնանքի նման կիրառության մի այլ արտահայտություն է նաև հետևյալ վիմագիր կանոնը քահանա ձեռնադրելու մասին. «Որ թէ ոք յեպիսկոպոսաց կամ յառաջնորդաց կաշառաւք կամ անմիրու երէց առնէ կամ առանց ճշգիւ և յոյժ ընտրութեան՝ դատի յԱստուծոյ, եւ ընդ նզովաւք լինի յերիս սուրբ ժողովոյն, մասն զՅուդային և զԿայենին առցէ։ Կատարողքն աւրհնին յԱստուծոյ» (Օրբելի, Դիվան 1, 15, № 54)։

Այստեղ արդեն իսպառ բացակայում է կանոնա-իրավական պատիժը և հանդես են գալիս սույն կանոնն արգելողի նկատմամբ բարոյական պատժի, իսկ գործադրողի նկատմամբ՝ խրախուսանքի իրավաբանական սանկցիաները, ինչպես տեսանք այլուր։

19. Անեծք-օրհնանքների այս միևնույն կիրառությունն այնուհետև գտնում ենք արքայական-իշխանական հրովարտակներում և կաթողիկոսական կոնդակներում։ Խոսքը վերաբերում է մասնավորապես օրենսդրական հրովարտակներին և կոնդակներին, որոնցով որոշ կարգ ու օրենք էր սահմանվում։ Հիշյալ բնույթի հրովարտակներն ու կոնդակները բովանդակությամբ նույնանում են քննարկված օրենսդրական վիմագիր արձանագրություններին, որոնցից շատերն ինքնին ոչ այլ ինչ են, քան միևնույն արքայական-իշխանական հրովարտակների կամ կաթողիկոսական կոնդակների համառոտություններ՝ քարերի վրա փորագրված։ Այնպես որ խոսքը վերաբերում է ո՛չ այնքան բովանդակության բնույթով տարբեր, որքան գրության տարբեր ձևերով գոյատևող հուշարձաններին։

Արքայական հին հրովարտակներից մեկը պահպանված ենք գտնում Սանահնի Քաթուկում։ Ըստ այդմ՝ Աշոտ Ողորմածի որդի Սմբատ Բագրատունի հայոց թագավորը 979 թ. գալով իր հոր և մոր շինած «աստուածաշէն-թագաւորաշէն» Սանահնի վանքը, շատ

է հավանում այն և ի նշան այդ սիրո «հաստատեցի զսա աթոռ եպիսկոպոսութեան,— ասում է նա,— և սահմանեցի զվիճակ սուրբ Աստուածածնիս»։ Թագավորը Խաչիկ կաթողիկոսի միջոցով Սանահնի եպիսկոպոս է հաստատել տալիս Եսայի վանականին։ Այս հաստատում է Սանահնի ուխտին ենթակա վիճակն ու տիրույթները («եւ անդառնալի հրամանաւ մերով և գրով ետու վիճակ և երկիրս զայս Սանահնիս»), որ են վերին և ներքին Տաշիրքը մինչև Բազումի լեռների, Գուգարաց աշխարհի և Տփխիսի սահմանները. Նիգ գավառի սահմանով մինչև Կայենո սահմանը և Ծաղկոցի սահմանները՝ մինչև Շիրակ։

Այս եկեղեցա-վարչական և տիրույթային օրենքը անխախտ և հաստատուն պահելու նպատակով Սմբատ թագավորը դնում է հետևյալ պայմանով անեծքը. «Եւ արդ, եթէ ոք իմ հրամանացս և տուեալ սիգիլիս հակառակի և կորէ, և խափանել ջանայ, ի թագաւորաց կամ իշխանաց և ի կաթողիկոսաց զիմ հաստատեալ վիճակի, թագաւորին հայոց Սմբատայ, երեք հարիւր տասն և ութ հայրապետացն նզովեալ եղիցի» (Ղափ., Սանահին, 190, № 188)։ Ուշագրավ է, որ, ինչպես վկայված է Քոթուկում, սույն հրովարտակը փորագրված է եղել նաև քարի վրա իբրև վիմագիր արձանագրություն («Գրէ կոնդակ և արձան յաւիտենական թագաւորական հրամանաւ»), որի պատճառով էլ պրոֆ. Ղաֆադարյանն այն տեղադրել է իր գրքում։ Սա ցույց է տալիս ևս, որ վիմագիր արքայական հրաման-օրենքները սկզբնապես հենց այդպիսի հրովարտակներ են եղել։

Ամենայն հայոց կաթողիկոս Գրիգորիոսը 1466 թ. հատուկ կոնդակով Սանահնի առաջնորդ է նշանակում Բարսեղ եպիսկոպոսին։ Կաթողիկոսը նախազգուշացնում է Սանահնի ուխտի միաբաններին, բարձրաստիճան հոգևորական պաշտոնյա նշանակելու իր հրամանի վերջնական լինելը. «Եւ մի ոք իշխեսցէ հակառակիլ դմայ և բարձր հրամանի սուրբ աթոռոյս»։ Եվ այդ հրամանը անխախտ պահելու նպատակով նա առաջադրում է հետևյալ պայմանով անեծք-օրհնանքը. «Այնպիսիքն, որ հակառակին դըմայ՝ եղիցին ի ներքոյ դատապարտութեան և բարկութեան Աստուծոյ և պատժոյ. յաւէժն մինչև ի Նեռն նզովեալ եղիցի, որք հակառակութիւն արասցէ դըմա։ Իսկ հնազանդեալ դորա և հրամանիս մեր աւրհնեալ լիցին յԱստուծոյ և յամենայն սրբոց և մենջ» (Մատ., ձեռ. № 3031, էջ 174—175)։

1577 թ. Առաքել կաթողիկոսի կոնդակով՝ վերստին Տաշրաց

երկրի գյուղերը հաստատվում են Սանահնի վիճակի մեջ, և Բարսեղ արքեպիսկոպոսն էլ առաջնորդ է կարգվում:

Այս օրենքը հաստատ ու անխախտ պահելու համար կաթողիկոսը պայման է դնում անեծքով. «Եւ ով ոք ճակառակի այս հրամանին նզովեալ է յԱծէն մինչ ի Նեռն և յաւուրն յառաջին. միջին և վերջին» (Մատ., ձեռ. № 3031, էջ 195—197):

1610 թ. Միքայել կաթողիկոսը կոնդակով դիմում է Սանահնի ուխտին հպատակ գյուղերի քահանաներին ու տանուտերերին և վերստին հաստատում թեմի և վիճակի սահմանները, որոնք մինչև ինքը եղած կաթողիկոսները «թէմ և վիճակ էին հաստատել և անիծօք փակել անդառնալի. մեք զայն տեսաք և վերստին հաստատեցաք»: Անեծքով անդառնալի փակված այդ օրինակարգը կաթողիկոսը ոչ միայն հրամանով է պարտադրում իր հպատակներին («Այլ չունի ոք իշխանութիւն, որ հակառակի և ներհակութիւն անէ՝ ոչ հայրապետաց, ոչ եպիսկոպոսաց, ոչ ազատորդաց, ոչ տանուտերաց, ոչ քահանայից, ոչ ռամկաց»), այլև ինքն էլ այդ սահմանված կարգը անդառնալի ու վերջնական դարձնելու նպատակով վավերացնում է անեծքով. «Եթէ ոք անտգնի և խափանել ջանայ՝ նզովեն Կայենի առցէ, զվարձս Յուդայի և խաչահանվանաց առցէ և ինքն ի կենաց գրոցն ջնջեսցի» (Մատ., ձեռ. № 3031, էջ 227—231):

Սանահնի և Հաղբատի միջև ծագած վիճակների սահմանային վեճերի առթիվ Հակոբ կաթողիկոսը 1656 թ. մի կոնդակով ճշտում է վիճակների սահմանները և այն դարձնում պարտադիր օրենք երկու միաբանությունների համար: Այդ օրենքն անխախտ ու վերջնական դարձնելու նպատակով կաթողիկոսն այն վավերացնում է անեծքով. «Այսուհետև թէ ոք հակառակի ընդդիմանալով հրամանաց առաջնոցն և մեր, բաժանել կամ հանել կամ խափանել զայս սահմանադրութիւնս, ինքն լիցի դատապարտեալ ի հրամանէն Աստուծոյ և տացէ պատասխանի առաջի ահեղ ատենին»: Իսկ օրենքը կատարողներին խրախուսում է բարեմաղթություններով. «Բայց կատարողք հրամանաց մերոց արժանին Յաստուծոյ և յամենայն սրբոց նորա և ի մէնջ» (Մատ., ձեռ. № 3031, էջ 316—317):

Այսպիսով տեսնում ենք, որ եթե նվիրատվական բոլոր կարգի գործարքներում (ընծայագիր, կալվածագիր, պայմանագիր) անեծք-օրհնանքները ուղղված են գործարքի այս կամ այն կողմի կամ երկու կողմերի նյութական ու բարոյական պարտավորությունների իրավաբանական պահպանությանը, ապա օրենսդրական վիմագիր արձանագրություններում, արքայական հրովարտակներում,

կաթողիկոսական կոնդակներում, որոնք առանձին օրենքներ ու կանոններ են, անեծք-օրհնանքներն ապահովում են տվյալ օրենքի կամ կանոնի իրավաբանական տևական ներգործության զորությունը:

Երկու դեպքում էլ անեծք-օրհնանքների կիրառական դերը նույնն է մնում, այն է՝ իբրև բարոյական պատժի ու խրախուսանքի իրավաբանական ներգործման միջոցներ, իբրև կրոնական հավատալիքների հիման վրա ձևավորված հասարակական լայն շրջանառություն ունեցող իրավաբանական սանկցիաներ:

Այդ երկու տարբեր բնույթի իրավաբանական հուշարձաններում անեծք-օրհնանքների տարբերությունը ոչ թե նրանց կիրառական դերի մեջ է, այլ սոսկ կիրառական նպատակների: Նվիրագրերում ու կալվածագրերում անեծք-օրհնանքներով ապահովվում է հիմնականում նվիրատրված նյութական արժեքների անձեռնմխելիությունը, նվիրատվական որոշ գործարքներում՝ նվերների դիմաց նվիրառուի հանձնառած պարտավորությունների կատարումը, նվիրատվական պայմանագրերում ու նմանակերպ գործարքներում՝ և՛ նվերների անձեռնմխելիությունը, և՛ նվիրառուի ստանձնած պարտավորության անխախտ կատարումը, իսկ օրենսդրական արձանագրություններում, հրովարտակներում ու կոնդակներում՝ օրենսդիր անձի կամքի՝ իբրև օրենքի, անվերապահ կատարումը:

Դ. ՁԵՌԱԳՐԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ

20. Հայոց հին գրավոր հուշարձանները, որտեղ բավականաչափ կիրառություն են գտել անեծք-օրհնանքները՝ ձեռագրերի հիշատակարաններն են: Հիշատակարաններում և, մանավանդ, դրանց կից պատմական ժամանակների հիշատակագրություններում առկա են բազմաթիվ օրհնանք-մաղթանքներ, ապա և անեծքներ, որոնք գործածվել են տարբեր նպատակներով:

Նկատենք նախ, որ միջնադարյան ձեռագրերի հիշատակարաններն ու հիշատակագրությունները բուն ձեռագրերի նկատմամբ առանձին մաս և ամբողջություն են կազմում: Դրանք իրենց ներքին թեմատիկ բաղադրությամբ բաժանվում են՝ ա) ավանդականորեն պարտադիր մասեր, որոնք անմիջապես աղերսվում են ձեռագրին, հատկապես նրա ձևավորման հետ առնչվող արտաքին հանգամանքներին (գրչի, ծաղկողի և ստացողի մասին կենսագրական տվյալներ, գրչության տեղին և ժամանակին վերաբերող

հիշատակություններ. տվյալ գրչագրի ստեղծման և այն նվիրելու, հանձնելու կամ վաճառելու մասին տարբեր բնույթի վկայություններ և այլն).

բ) ավանդականորեն ու պարտադիր մասեր, որոնք բնավ չեն առնչակցվում ձեռագրերին: Դրանք գլխավորապես գրիչների ժամանակի պատմա-քաղաքական և սոցիալ-կենցաղային անցուդարձերի մասին եղած հաղորդումներն են:

Անեծք-օրհնանքները, ահա, հիշատակարանների այն բաղադրիչներից են, որոնք հիմնականում աղերսվում են ձեռագրերի արտաքին հանգամանքներին: Այս աղերսակցության տեսակների պարզաբանումն էլ հենց կբացահայտի անեծք-օրհնանքների կիրառական նշանակությունը ձեռագրերի հիշատակարաններում:

Արդ, որո՞նք են ձեռագրերի այն արտաքին հանգամանքները, որոնց կապակցությամբ վկայակոչվել են անեծք-օրհնանքները:

Ամենից առաջ՝ ձեռագիրը գրողի, ստացող-պատվիրատուի և նվիրատուի կատարած աստվածաշնորհ ու մարդամեծար գործի բարոյական գնահատումն է օրհնանք-բարեմաղթությունների զանազան բանաձևերով: Միջնադարյան-քրիստոնեական աշխարհայացքին բնորոշ միաստվածության սուբստանցի նկատմամբ մարդանհատի ու նրա կատարած գործի անխնա նսեմացումը, որ ցայտունորեն դրսևորված ենք գտնում հայերեն ձեռագրերի հիշատակարաններում հենց իրենց գրիչների ու ծաղկողների կատարած գործերի առնչությամբ, հատուցվում է ինչ-որ չափով գալիք ընթերցողներին ու ձեռագիրն ընդօրինակողներին ուղղած աղերսանքով, ուր կոչ է արվում հիշել ձեռագիր գրողին, ծաղկողին, պատվիրատու-ստացողին կամ նվիրատուին, իրենց աղոթքներում օրհնել նրանց, և իրենք էլ օրհնված կլինեն աստծուց և սրբերից:

Կատարած գործի բարոյական փոխհատուցման այս ակնկալիքն ու ցանկությունը, որ ոչ այլ ինչ էր, քան եթե աստվածային մեծությունից ճզմված անհատականության գոյության մի երկչոտ հավաստիացում, առաջ է բերում ահա, հիշատակարաններում առկա օրհնանք-բարեմաղթությունների բազմաթիվ դրսևորումները: Դրանք, անկախ իրենց թվական գերակշռությունից, կիրառական առումով մեկ միասնական նպատակ են հետապնդում, ուստի և օրինակների կուտակումներից խուսափելու համար կբերենք միայն մի քանի նմուշ, որոնք լիովին պատկերացում կարող են տալ հիշատակարաններում առկա օրհնանք-բարեմաղթությունների ճնշող մեծամասնության կիրառական դերի մասին:

Սկզբից նկատենք, որ մաղթանքները հիշատակարաններում մեծ մասամբ առաջադրվում են գրիչների կողմից:

Ահա մի գրիչ (Մկրտիչ), որն ավարտելով «հոգեհամճար և գերիմաստ րաբունապետ» Եսայի Նչեցու պատվիրած Լամբրոնացու սաղմոսների մեկնությունը, իր բարի ցանկության խոսքն է ուղղում գրչագրից ապագա օգտվողներին կամ ընդօրինակողներին, խնդրելով, որ նրանք իրենց մաքրամատույց աղոթքներում հիշեն գրչագիրն ստացող հոգևոր հայր Եսայուն «զոր տէր Յիսուս խաղաղական կենաւք պահեսցէ՝ զնա յաստի, և զկնի ելիցն յաշխարհէ՝ ի դասս սրբոց վարդապետացն ընկալցի ի խորանսն լուսեղէնս և անթառամ պսակաւքն պսակեսցէ, հանդերձ ծնողօք իւրովք և ամենայն արեան մերձաւորաւք, յարազուարճ բերկրիլ յանտրտում ուրախութիւնն» (Խաչ., ԺԴ հիշատակ., 7): Կամ՝ մեկ ուրիշը (Զաքարայ), որ ավետարանը գրելով մահտեսի Սամվելի տված թղթով, դիմում է ընթերցողներին բարի ցանկությամբ, թե «Ով որ կարդայք կամ տեսանէք՝ աստուած ողորմի ասացէք Սամուէլ մահդասին, յիշատակ բարի առաջի աստուծոյ յետ աստի կենացս՝ յաւուրն համաաատի ի տիեզերաժողով ատենին» (Խաչ., ԺԵԲ հիշատակ., 134):

Մի այլ գրիչ (Ստեփանոս), 1464 թ. ավարտելով ճաշոցը, դիմում է գրչագրից գալիք օգտվողներին ու ընդօրինակողներին, իրենց աղոթքներում հիշելու ձեռագիրն ստացող վարդապետին (Դանիել), նրա ծնողներին, եղբայրներին և մյուս հարազատներին, իրեն՝ «փծուն գրչին» և իր ծնողներին, իրենց միաբաններին, ձեռագիրը կազմողին (Տեր Հովհաննես), իր երախտավոր հորը, որ կոկել է ձեռագրի թուղթը: Ապա գրիչը մաղթական խոսք է ուղղում իր ծնողներին. «Աստուած ողորմի իւրեն (հորը՝ Ս. Հ.) և մաւրն իմոյ էմինին, որ բազում չարչարանաւք յուսով և սիրով և անչափ տառապանաւք ծառայեաց ինձ, Քրիստոս աստուած միայն հարիւրապատիկ հատուցանէ իւրեանն և ընդ կանանցն իւղաբերիցն դասակից և պսակակից առնէ, և ձեզ յիշողացդ և մեզ յիշեցելոց ողորմեսցի Քրիստոս աստուած, ամէն, եղիցի» (Խաչ., ԺԵԲ հիշատակ., 215):

Մեկ ուրիշը (Կարապետ) խնդրում է «լի բերանով աստուածողորմի» ասել ձեռագիր Մաշտոցն ստացող Հովհաննես քահանային, ինչպես և հիշել իրեն՝ «զանպիտան գրիչս» Կարապետին ու ծնողներին, «Եւ աստուած ձեզ ողորմեսցի» (Խաչ., ԺԵԲ հիշատակ., 259):

Ահա մի այլ գրիչ (Խաչատուր քահանա) Կտուց անապատում,

1462-ին ավարտելով Յայսմաւուրքը, առաջին հերթին հիշատակում է մի խումբ կրոնավորների անուններ, որոնք իրենց աշխատանքներով օգնել են իրեն գլուխ բերելու այդ ծանր գործը: Եվ գրիչն իր օրհնության առաջին խոսքն ուղղում է այդ «մինչէն եղբարցս», ասելով. «զվարձս վաստակոց իւրեանց ի Քրիստոսէ առցեն ի միւս անգամ գալուստն»: Ապա դիմելով Յայսմաւուրքից օգտվողներին, խնդրում է հիշել իրենց աղոթքներում իր հոգեհոր՝ Ստեփանոս վարդապետին, և նրա ուսուցիչ Թոմա վարդապետին ցանկանալով, որ «տէր աստուած զվարձս բարեաց վաստակոց իւրոց տացէ նմա ի գալստեանն»: Գրիչն հիշատակում է նաև իր գործին բազում աշխատությամբ օժանդակած Հովհանն քահանա Արծկեցուն և բարեմաղթում, թե «տէր աստուած տացէ նմա վարձս բարեաց վաստակոց իւրոց»: Եվ ի վերջո Խաչատուր գրիչը նշելով, որ Յայսմաւուրքը հանձնված է Մարմետ գյուղաքաղաքի Ս. Ստեփանոսի վանքին, հիշատակում է նրա եպիսկոպոսի, վարդապետի և քահանաների, ինչպես նաև շրջակա գյուղերի տանուտերերի անունները և ցանկանում, որ նրանք ու իրենց զավակները միշտ շեն ու լի պահեն Ս. Ստեփանոսի վանքը և նմանների համար առաջադրում է հետևյալ բարեմաղթությունները. «Աջն հայրական աւրհնեսցէ զամենեսեան առհասարակ զձեզ, ինն դասք հրեշտակքն աւրհնեն զձեզ, երկոտասան առաքեալքն աւրհնեն զձեզ, ԻԴ (24) մարգարէքն աւրհնեն զձեզ, վեշտասան հայրապետքն աւրհնեն զձեզ, դասք մարտիրոսացն աւրհնեն զձեզ, խումբք նահատակացն աւրհնեն զձեզ, հոյլք ճգնաւորացն աւրհնեն զձեզ, հարսունք Քրիստոսի՝ սուրբ կուսանքն աւրհնեն զձեզ: Այլ և սուրբ Աստուածածնի բարեխաւսութեամբն և Յովհաննու կարապետի և սրբոյն Ստեփանոսի Նախավկային, միածին որդին՝ տէր մեր Յիսուս Քրիստոս՝ աւրհնեսցէ զձեզ և զորդիս ձեր. հոգով և մարմնով, տանամբ և տեղաւք, զարմաւք և զաւակաւք» (Խաչ., ԺԵԴ հիշատակ., 180—183):

Գրիչ Թադեոսը օրհնության խոսք է ուղղում Աբրահամ Մսըրցի նորընծա քահանային («Աստուած աւրհնէ զինքն, զիր որդիքն, ողորմեսցի Քրիստոս աստուած իւր ննջեցելոց հոգոյն») այն բանի համար, որ նա ավետարանը գրելիս, «բազում անգամ աշխատեցաւ հետ ի մեզ, ի մարմնաւոր պիտոյիցս ծառայութիւն անելով» (Խաչ., ԺԵԴ հիշատակ., 329) և այլն, և այլն:

Այսպես, տեսնում ենք, որ ձեռագրերի հիշատակարանների օրհնանք-մաղթանքների մեծ մասը գրչի կողմից ձեռագրի հետ որևէ ձևով (ամենահեռավոր կերպով անգամ) առնչվող անձանց ուղղած ցանկության բարի խոսքեր են, որոնց նպատակն, ինչպես արդեն

տանել են, ձեռագրեր գրելու գործի խրախուսանքն ու գնահատումն է:

Ձեռագրերի հիշատակարանների օրհնանք-բարեմաղթությունների կիրառական դերը սոսկ վերոհիշյալով չի սպառվում: Կան օրհնանքներ, քանակով թեպետ քիչ, որ ձեռագրերի պահպանության նպատակն են հետապնդում:

Ահա մի օրհնանք ճաշոցը գրող գրչից (Դավիթ)՝ քահանաներին և ժողովրդին ուղղած, այդ նույն ճաշոցը պահպանելու նպատակով. «Աստուած զայն քահանայն և զայն ժողովուրդն աւրհնէ, որ խնամով պահէ զսայ, և մի իշխեսցին իմոյքն ծախել և կամ հանել ի դրանէ սուրբ եկեղեցւոյս, այլ պաշտօնէից սորա լիցի սայ» (Խաչ., ԺԵԱ հիշատակ., 493):

Կամ հետևյալները՝ դարձյալ միևնույն նպատակին միտված.

«Եւ որ զսուրբ Աւետարանս լաւ կու պահէ ի դուռն սուրբ տաճարիս և սուրբ Յո. ան... և յամէն օր զճրագն անխափան կու վառէ և զխունկն ծխէ, աստուած ի միւս անգամ գալստեանն լուսեղէն պսակին արժանի արասցէ, հանգերձ ծնողաւքն և ազգականօքն զերկնից արքաութիւն ժառանգէ» (Խաչ., ԺԵԲ հիշատակ., 296):

Ավետարանի մի ուրիշ գրիչ պատվիրում է գալիք մարդկանց, որ վտանգավոր և նեղ ժամանակի դեպքում «որ գայ և հասանէ չարն» (նկատի ունի օտարերկրյա ասպատակություններն ու ավերածությունները), թող ավետարանը «հանեն և թագուցանեն ի յամրոցին՝ մինչև անցանէ բարկութիւն... Իսկ խնամով պահողքն օրհնին յաստուծոյ և ամենայն սրբոց» (Խաչ., ԺԵԲ հիշատակ., 388):

Այս նպատակով գրված օրհնանքները և՛ բնույթով, և՛ կիրառությամբ խիստ մերձենում են ասուրա-բաբելական արձանագրությունների մաղթանքներին և ունեն որոշ իրավաբանական ֆունկցիա[66]:

Օրհնանք-բարեմաղթությունների իրավաբանական կիրառությունն առավել ցայտուն դրսևորումներ է գտնում ձեռագրերի նվիրատվական գործարքներում կամ նվիրագրերում:

21. Ձեռագրերի հետ առնչվող մյուս արտաքին հանգամանքը, որի մեջ երևան են գալիս օրհնանքներն ու անեծքները, ձեռագրերի

---

66 Մի քանի հիշատակարաններում ձեռագիր գրքերի պահպանակները կամ չգրված թերթերը պահպանելու նպատակով գրիչները անեծքներ են առաջադրել: Օրինակ. «Ով որ որ զպահարան գրոցս կտրէ... նա ինքն ջնջի ի դպրութենէ կենաց» (Խաչ., ԺԵԲ հիշատակ., 322): «Ով որ զայս թղթերս կտրէ, թէ գիր չկայ ի ներս՝ աստուած զնա կտրէ ընդ մէջ» (Խաչ., ԺԵԱ հիշատակ., 243) և այլն:

նվիրատվական, մասամբ և առուծախային գործարքներն են, որոնք լայնորեն ընդգրկվել են ձեռագրերի հիշատակարաններում[67]։

Ինչպես հայտնի է, ձեռագիր ստացող պատվիրատուն, կամ այն այլ ձևերով սեփականած մեկը, երբեմն նույն ինքը գրիչը, ձեռագիրը նվիրում է տվյալ հոգևոր հաստատությանը (վանք, եկեղեցի, միաբանություն և այլն) կամ վերջինիս ներկայացնող հոգևոր անձին, իր կամ հարազատների հիշատակի համար։ Նվիրատրվող առարկան, այսինքն՝ ձեռագիրը, նվիրատվության ժամանակ նախատեսված տեղում անձեռնմխելի կամ նվիրատվության գործարքն անխախտ պահելու նպատակով այն իրավաբանորեն վավերացվում է անեծք-օրհնանքներով, ճիշտ այնպես, ինչպես վիմագիր կամ նվիրատվական այլ գործարքներում[68]։

Ահա ձեռագրերի նվիրատվության այդ փաստաթղթերը գրվել ու գրվել են ոչ այլուր, քան նվիրատվության առարկաների՝ ձեռագրերին կից հիշատակարաններում։

Տեսնենք ձեռագրերի նվիրատվության գործարքներն՝ ըստ նրանցում կիրառված անեծք-օրհնանքների նպատակների։

---

67 Վերջիններիս մեջ հիշատակության կարգով մեկ-մեկ հանդիպում են նաև ձեռագրերին ոչնչով չաղերսվող առևտրական այլ գործարքներ ևս (տե՛ս Խաչ., ԺԴ հիշատակ., 8, № 9, 95, № 128 գ, 444, № 535 բ), որոնք պատահականորեն են սպրդել հիշատակարանները, հավանաբար, որևէ տեղ արձանագրվելու անհրաժեշտությամբ միայն։

68 Պետք է նկատի ունենալ, սակայն, որ ոչ բոլոր ձեռագրերի նվիրատվություններն են գործարքների վերածվել և անեծք-օրհնանքներով վավերացվել։ Հիշատակարաններում կան արձանագրված ձեռագրերի նվիրատվության փաստեր, երբ նվիրատուն կամ նվիրառուն ոչ մի պայման չեն առաջադրել կամ ընդունել։ Այսպես, օրինակ, Գրիգոր գրիչը 1469-ին ավետարան է գրում և նվիրում Գորիի Բերձո գյուղի Ս. Լուսավորչի վանքին, որի դիմաց խնդրում է միայն աղոթքներում հիշել ծնողներին, հարազատներին և ուսուցիչներին (Խաչ., ԺԵԲ, հիշատակ., 291)։ Ավետիսն ու իր որդի Խոջա Զատեն 1470-ին գնում են մի ավետարան և շուրջառ ու նվիրում Ս. Ստեփանոսի եկեղեցուն, ի հիշատակ իրենց և ծնողների (Անդ, 299)։ 1476 թ. Արաղն ու իր կինը ավետարան են գրել տալիս և նվիրում Երևանի Կաթողիկե եկեղեցուն, խնդրելով միայն աղոթքներում հիշել իրենց ու զավակներին (Անդ, 398) և այլն։

Սա ապացույցն է այն իրողության, որ ոչ բոլոր նվիրատվություններն են առհասարակ հատուկ գրավոր գործարքներով վավերացվել, այսինքն՝ վերածվել իրավաբանական փաստաթղթի, այլ շատերը միայն գրանցվել են նվիրառու վանքերում ու եկեղեցիներում առկա հատուկ հիշատակարաններում, մաղթանքի մի ընդունված բանաձևով («Աստուած ողորմի») գոհացնելով նվիրատուին։ Այդ մասին խոսք կլինի փոքր-ինչ հետո։

Ձեռագրերի նվիրատվության գործարքների հնչող մեծամասնության մեջ անեծք-օրհնանքները նպատակ են հետապնդում նվիրատվության առարկան նախատեսված տեղում անխախտ ու անձեռնմխելի պահել: Այդ նպատակով առաջադրվող անեծքի և օրհնանքի բանաձևերն անվանում ենք նվիրատվության պահպանության անեծք-օրհնանքներ:

Ստեփանոս կրոնավորը 989 թ. գրել է տալիս մի ավետարան[69] և իբրև հիշատակ թողնում Նորավանքին, հետևյալ պատգամով և անեծքով. «Եւ արդ մի՛ ոք իշխեսցէ ի բանէն Աստուծոյ հեռացուցանել զսա իւիք պատճառանաւք ի Նորավանից սուրբ եկեղեցւոյս. եւ թէ ոք յանդգնի որոշել զայս աւետարանս ի սուրբ խորանէս, յափշտակողն ի փառաց որդւոյն Աստուծոյ որոշեալ լիցի իբր սատանայ, նզովեալ յոգի եւ ի մարմին ընդ անհաւատ սեղանակողոպտոն եղիցի դատապարտեալ յորդւոյն Աստուծոյ» (Գար. կաթ., Յիշատակարանք, 156, № 70):

Ներսես վարդապետը 1179 թ. «հալալ արդեամբ» գնում է «Մեկնիչ տեսլեանն» («Մեկնութիւն նշմանն Յովհաննու») և նվիրում Ս. Կարապետի վանքին՝ անեծք-պայմանով. «Ով ոք գողանա և կամ ծախէ՝ մասն Յուդայի և պատիժն Կայենի առցէ», (Գար. կաթ., Յիշատակարանք, 480, № 219):

1206 թ. Խարպալեն ավետարան է ստանում և նվիրում Գրիգոր Նյուսացու վանքին և այն վավերացնում հետևյալ պայմանի անեծքով. «Արդ մի՛ ոք իշխեսցէ հանել զսա ի դրանէ սորին. եթէ յանդգնի, զպատիժն Կայենի առցէ և զմասն Ուդայի և Քրիստոսի խաչահանողացն, ամէն: Եղիցի, եղիցի» (Գար. կաթ., Յիշատակարանք, 734, № 323):

1236 թ. Նացվալը ավետարան է նվիրում Անիի կաթողիկե եկեղեցուն և բաղում աղերսանքներից հետո պայման է դնում անեծքով. «Արդ, մի՛ ոք իշխեսցէ զսայ հեռացուցանել ի սուրբ կաթողիկէէն կամ եպիսկոպոս կամ երեց կամ յիմ ազգականաց կամ յաւտարաց ջանա զսայ հանել ի կաթողիկէէն, եղեցի նա մերժեալ և հեռացեալ ի յաւիտենից ուրախութենէն և մատնեալ ի ձեռն սատանայի, և երկու կենաւքս նզովեսցի ի սմանէ» (Գար. կաթ., Յիշատակարանք, 907, № 413):

1310 թ. Մամախաթունը սեփական արդյունքով ավետարան է գրել տալիս և ընծայում Ուշիի Ս. Սարգսի վանքին՝ դնելով հետևյալ

---

69 Խոսքը վերաբերում է Երևանի Մաշտոցի անվան մատենադարանի փղոսկրյա կազմով հռչակավոր ավետարանին:

անեծքը. «Մի ոք իշխեսցէ հանել և հեռացուցանել ի վկայարանէ սուրբ զաւրավարին, և թէ ոք հանդգնի գողանալ, կամ ծախել, կամ այլ ինչ պատճառ՝ դատի յաստուծոյ և մեր մեղացն տէր լինի» (Խաչ., ԺԴ հիշատ., 66, № 89):

Վասիլ Խարասարցին 1432 թ. Երուսաղեմի Ս. Հակոբի վանքին է նվիրում սեփական ավետարանը և դնում հետևյալ պայմանը. «Արդ. մի ոք իշխեսցէ հանել զսա ի սուրբ Յակոբայ կամ գողանալ կամ ծախել: Եւ որ ոք յանդգնի և հանէ՝ զպատիժն զԿայենի և զՅուդայի մատնչին և զխաչահանուացն ընկալցի. և խնամով պահողն աւրհնի յաստուծոյ և ի սուրբ Յակոբայէն» (Խաչ., ԺԵԱ հիշատ., 431):

Այսինքն՝ նվիրատվության առարկան եկեղեցուց հանողին կամ օտարողին անեծք է ուղղվում, իսկ այն խնամքով պահողին՝ օրհնանք: Երկու դեպքում էլ նպատակը նույնն է՝ նվիրատվական առարկայի նվիրական վայրում պահպանելը: Նույնը տեսնում ենք նաև մի այլ հիշատակարանում, ուր Ոստա Ատոմը ավետարանը նվիրելով Ս. Ստեփանոսի վանքին, այն տեղում անձեռնմխելի պահելու նպատակով անեծք է դնում, իսկ խնամքով պահպանողին՝ օրհնանք («Եւ այնոքիկ, որ սրտացաւաբար խնամարկու լինին սուրբ Աւետարանիս՝ նա վարձատրին ի Քրիստոսէ աստուծոյ մերոյ, որ է աւրհնեալ յաւիտեանս» (Խաչ., ԺԵԲ հիշատակ., 22)[70]:

Նվիրատվական այս կարգի հիշատակագրությունները, ուր նվիրատվության դիմաց ոչ մի փոխհատուցում չի ակնկալվում, նույնանում են, ինչպես արդեն տեսել ենք, սովորական նվիրագրերին՝ միայն մեկ վերապահությամբ: Եթե սովորական վիմագիր նվիրագրերում անեծք-օրհնանքներն ուղղվում էին նվիրատվության առարկայի, ինչպես նաև գործարքի անձեռնմխելիությանն ապահովելու նպատակին, ապա հիշատակարանային նվիրագրերում անեծքը գլխավորապես հետապնդում է նվիրատվական առարկայի՝ ձեռագրի նվիրական վայրում անձեռնմխելիությունն ապահովող նպատակներ, որ արտահայտված ենք գտնում «Թէ ոք յանդգնի որոշել զայս Աւետարանս ի սուրբ խորանէս», «Ով ոք գողանա կամ ծախէ», «Մի ոք իշխեսցէ հանել զսա ի դրանէ սորին», եթե ոք «Ջանա զսայ հանել ի կաթողիկէէն», «Թէ ոք հանդգնի գողանալ կամ ծախել», «Ով որ յանդգնի լրբենի դիմաւք տէր ելանէ, կամ գրաւական դնէ, կամ ծախէ» (Խաչ., ԺԴ հիշատակ., 163), «Որ թէ յանդգնի և հանէ ծախե-

70 Ձեռագրեր խնամքով պահողին ուղղած օրհնանքով նվիրագրեր տե՛ս էջ 67 № 93, էջ 90 № 120, էջ 133 № 174բ, էջ 227 № 274ա, էջ 449 № 573:

ղով կամ գրաւելով» (Խաչ., ԺԴ հիշատակ., 332), «Եթէ ոք յանդգնի ծախել և կամ հեռացուցանել» (Խաչ., ԺԴ հիշատակ., 384), «Եւ եթէ ոք յանդգնի և հեռացուցանէ» (Խաչ., ԺԵԱ, հիշատակ. 510), «Ով որ դիմադարձ լինի ու առնու ու ծախէ» (Խաչ., ԺԵԲ հիշատակ., 434) և այլ անեծքների պայմաններում:

Իրավաբանական կիրառությամբ, ուրեմն, անեծքներն ու օրհնանքները ձեռագրերի նվիրատվության անհատույց գործարքներում նույն դերն են կատարում, ինչ վիմագիր ու ձեռագիր նման նվիրագրերում, այն է՝ հանդես են գալիս իբրև նվիրատվության անձեռնմխելիությունը տեղում ապահովող պատժի ու խրախուսանքի միջոցներ:

Անհատույց նվիրագրերից բացի, անեծք-օրհնանքները ձեռագրերի հիշատակարաններում հանդես են գալիս նաև նվիրատվության հատուցվող գործարքներում: Դրանք ևս բնորոշվում են ճիշտ այնպես, ինչպես վիմագիր համապատասխան գործարքները, այսինքն՝ ձեռագիր ստացողը, ունեցողը, երբեմն նաև ինքը՝ գրիչը, իրենց սեփականություն կազմող այս կամ այն ձեռագիրը նվիրում են որևէ եկեղեցու կամ վանքի՝ դրա դիմաց որոշ քանակությամբ ժամ կամ պատարագ մատուցելու պարտավորության հատուցումով:

Ձեռագրերի նվիրատվության հատուցվող գործարքները նախորդ տիպի համեմատությամբ քանակով քիչ են և իրավաբանական բնույթով պատկանում են կամ առաջին հիմնախմբի երկրորդ ենթախմբին (անեծք-օրհնանքն ուղղվում է սոսկ նվիրատվության պահպանությանը) կամ երկրորդ հիմնախմբին (սոսկ ժամի կամ պատարագի փոխհատուցման պահպանությանը) կամ էլ երրորդ հիմնախմբին (և՛ նվիրատվության առարկայի, և՛ դրա դիմաց ժամ կամ պատարագ մատուցելու պարտավորության պահպանությանը):

Տեսնենք յուրաքանչյուրն օրինակներով.

Մերշին, Տնգիկն ու Մարգարեն ավետարան են նվիրում Թումա քահանային, ծաղկազարդի կիրակի օրը նվիրատվության դիմաց անխափան ժամ կատարելու պայմանով: Նվիրատուների դրած անեծքն ապահովում է սոսկ նվիրատվության անձեռնմխելիությունը («Մի ոք իշխեսցէ հանել զսա ի Թումա երիցուէն... Եւ եթէ ոք յանդգնի ու աւելի պակաս առէ և կամ յիշատակարան փորէ՝ կապած և դատապարտած լինի յաստուծոյ...» (Խաչ., ԺԴ հիշատակ., 43):

Իվանե Որոտան իշխանի դուստր Թուխթանին Երևանի Ս. Աստվածածնի վանքին ավետարան է նվիրում, փոխարենը տարեկան ե-

րեք օր ամուսնու՝ Ամատայի և իր մահից հետո՝ իրեն հոգու համար պատարագ ստանալու պայմանով: Գործարքը վավերացնող անեծք-օրհնանքով («Կատարիչք ուրհնին յԱստուծոյ և խափանիչքն դատին ի տեառնէ») ապահովվում է միայն նվիրատու կողմի հանձնառության կատարումը (Խաչ., ԺԴ հիշատակ., 375):

Հատուցվող նվիրատվական գործարքներում քանակով համեմատաբար շատ են թե՛ նվիրատվության անձեռնմխելիությունը և թե՛ դրա դիմաց խոստացվող փոխհատուցման իրագործումն ապահովող անեծք-օրհնանքները:

1223 թ. Սարգիս վաճառականը ավետարան է գնում և նվիրում Մեծ կողմանց եպիսկոպոսարանին: Վերջինիս սպասավորները պարտավորվում են Ս. Սարգսի տոնին նրա հիշատակի համար ժամ կատարել: Նվիրատուի պարտավորությունը կատարելու և նվիրատվության անձեռնմխելիությունն ապահովելու համար նվիրատուն դնում է հետևյալ պայմաններով անեծքները. «**Որ խափանէ**, նորա ազգի յանցանացն պարտական եղիցի, և որ **զայս Աւետարանս յեպիսկոպոսարանէս հանել ջանայ** ի յառաջնորդաց կամ յիշխանաց, հանեալ եղիցի նա յարքայութենէն Աստուծոյ և որոշեալ հոգով և մարմնով ի սուրբ երրորդութենէն և նզովեալ եղիցի ՅԺԸ հայրապետէն» (Գար. կաթ., Յիշատակարանք, 829, № 379, տե՛ս նաև 882, № 405):

Գրիգորը ավետարան է նվիրում Գաղխայի Ս. Գևորգ եկեղեցուն, որի դիմաց պարտավորեցնում է իր որդի Սեթեկի հոգու համար տարեկան երկու ժամ կատարել: Գործարքի պայմանների իրագործումն ապահովելու նպատակով՝ նվիրատուն նվիրառուի պարտավորության կատարման դիմաց օրհնանք է առաջադրում («կատարողքն ւորհնին յԱստուծոյ»), իսկ իր նվեր-հիշատակն անձեռնմխելի պահելու համար՝ անեծք («Ով յանդգնի ի հանել ջանայ յեկեղեցոյն, դրաւէ, կամ ծախէ, կամ գողանայ՝ զվարձն Յուդայի առնու...», Խաչ., ԺԴ հիշատակ., 372): Սրան հաջորդում են գործարքին ականատես վկաների անունները: Կան նույն բնույթի գործարքներ ևս, որոնք գրված են նվիրատու և նվիրառու կողմերի անունից, և ձևով վերածվում են պայմանագրերի (տե՛ս օրինակ, Գար. կաթ., Յիշատակարանք, 556, № 247, 910—912, № 414):

22. Ձեռագրերի հիշատակարանների նվիրատվական գործարքներում անեծքները երբեմն ուղղվում են **գործարքի անձեռնմխելիության պահպանության** նպատակին, որով արդեն իրավաբանական կիրառության մեկ այլ դեր են ստանձնում: Հիշյալ նպատակը երևան է գալիս հատկապես անհատների միջև կնքված նվիրատվական

գործառնություններում, երբ հիմքեր կարող էին առաջանալ նվիրատուի հարազատների ժառանգական իրավունքը նվիրատրվող առարկայի վրա տարածելու համար:

Այսպես. Սարգիս եպիսկոպոսը հոժար կամքով Ներսես Շնորհալու «Թուղթ ընդհանրականի» ձեռագիրը նվիրում է իր աշակերտ Մարտիրոս աբեղային և այդ նվիրատվության օրինականությունը վավերացնում է անեծքով: «Արդ.—գրում է նա,—եթէ ի մերոց սուտ ազգականաց կամ յաստարաց հակառակին այսմ հայրէնատուր աւանդութեանս (այսինքն՝ նվիրատվությանը—Ս. Հ.) նայ այնպիսիքն մասն և բաժին զՅուդային և զխաչահանուացն առցեն և ընդ անիծիւք եղիցին» (Խաչ., ԺԵԱ հիշատակ., 185):

Կամ՝ Սահակ միայնակյացը եպիսկոպոսների վկայությամբ իր սեփական ավետարանը նվիրում է տեր Կարապետ եկեղեցպանին և դնում հետևյալ պայմանով անեծքը. «Այլ ումէք դաւի չկա, ոչ եղբաւր, ոչ ազգականի, այլ աստուծով և տեառն Մաթէոսի և իւր սուրբ եպիսկոպոսացն բանս հաստատ է: Որք հակառակին այս բանիս՝ զանէծս Կայենի և Յուդայի մատնչի և զԱրիոսի առցէ» (Խաչ., ԺԵԱ հիշատակ., 307):

Եթե նախորդ գործարքներում անեծքին ու օրհնանքին հանձնվում էր նվիրատվության առարկայի կամ դրա դիմաց ստանձնած պարտավորության կատարման իրավաբանական հոգածությունը, ապա այստեղ նույնատիպ անեծքներին պարտադրվում է իրավաբանական ակտի (գործողության) պահպանության հոգսը: Ուրիշ խոսքով՝ գործարքի առարկայական տարրերից անեծքի իրավաբանական ազդեցության զորությունը փոխանցվում է գործարքի ամբողջ երեվույթին, մեծացնելով իր տեսադաշտը:

Այս կարգի գործարքները ձեռագրերի հիշատակարաններում քանակով քիչ են:

23. Աննշան թիվ են կազմում նաև հիշատակարաններում թափանցած ձեռագրերի առքի և վաճառքի գործարքները, որոնց մեջ անեծքները դարձյալ հիմնականում ուղղված են գործարքի անձեռնմխելիության պահպանությանը, այսինքն՝ իրավաբանական նույն դերն են կատարում, ինչ նվիրատվական գործարքների նախորդ խմբի անեծքները:

Այսպես. Մկրտիչ Սոցին գալով Բջնի, իր սեփական վաստակով գնած ավետարանը վաճառում է Երեմիա աբեղային, դնելով հետևյալ պայմանն ու անեծքը. «Այսաւրէ վեր ոչ իմ, ոչ իմ ազգա-

կանաց, ոչ այլ մարդոց դաւի չկայ հետ սացան։ Ով յանդգնէ և դաւի անէ՝ յերից սուրբ ժողովոյն որոշեալ լիցի, և զիւրն ոչ ժառանգեսցէ, և մասն Յուդայի ն առցէ (Խաչ., ԺԵԱ հիշատակ., 421)։

Եվ կամ՝ Ստեփանոս Թավրեժեցին 1410 թ. սեփական ավետարանը 500 դահեկանով վաճառում է Աբրահամ աբեղային, դնելով հետևյալ անեծքով պայմանը. «Ով որ խօսի կամ դաւէ անէ՝ դատի յաստուծոյ և ամենայն սրբոց նորայ» (Խաչ., ԺԵԱ հիշատակ., 109)։

24. Սրանք են մոտավորապես անեծք-օրհնանքների հիմնական կիրառությունները ձեռագրերի հիշատակարաններում։ Ինչպես շարադրվածից է պարզվում՝ անեծք-օրհնանքները գրեթե իրավաբանական նույն դերն են կատարում այստեղ, ինչ վիմագիր արձանագրություններում կամ նվիրատվական այլ գործարքներում։ Իսկ արտաքին-ձևական տեսակետից հիշատակարաններում առկա գործարքները մի յուրահատկությամբ տարբերվում են մնացած կարգի գործարքներից։ Այդ այն է, որ ձեռագրերի նվիրատվության, մասամբ և առ ու վաճառքի գործարքներն անմիջապես աղերսվում են նվիրատվության կամ առուծախի առարկաներին՝ ձեռագրերին, նրանց հիշատակարանների միջոցով։ Նվիրատվության առարկայի հետ գործարքի այդ անմիջական ֆիզիկական կապի պատճառով էլ գործարքի կամ նրան ենթակա առարկաների՝ ձեռագրերի գործարքային պահպանությանն ուղղված անեծքներն ու օրհնանքներն իրենց հմայական ներգործող զորությամբ դառնում են հենց այդ ձեռագրերի պահպանությունն առհասարակ ապահովող գործոններ։ Ուրիշ խոսքով, գործարքի պահանջներով սահմանափակված առարկայի պահպանությունը տվյալ առարկային անեծք-օրհնանքների մշտապես կառչած լինելու հետևանքով, ժամանակի մեջ վերածվում է տվյալ առարկայի բացարձակ պահպանության։ Այս տեսակետից էլ, ահա, ձեռագիր հիշատակարանների նվիրատվական գործարքներում հանդես եկող անեծք-օրհնանքները վերջին հաշվով կատարում են գրեթե պահպանական նույն դերը, ինչ ասուրա-բաբելական և ուրարտական սեպագիր արձանագրությունների անեծք-օրհնանքները։ Այսինքն՝ երկուստեք գրեթե առկա է հմայական բանաձևերի և բնագրերի միջև միևնույն հարաբերությունը։ Ինչպես սեպագիր հուշարձաններում անեծք-օրհնանքները ներքնապես, այսինքն՝ բովանդակությամբ կապված չեն արձանագրության բուն իմաստին և մեծ մասամբ կոչված են ապահովելու նրանց արտաքին անվտանգությունը, այնպես էլ ձեռա-

գրերի հիշատակարանները և նրանցում առկա հմայական պարզ խոսքերը, ինչ առումով էլ նրանք գործածվելիս լինեն, ներքնապես չեն աղերսակցվում ձեռագրի բովանդակությանը և մեծ մասամբ, ինչպես տեսանք, ուղղված են ձեռագրի արտաքին կողմերի պահպանությանը։ Այս տեսակետից միջնադարյան վիմագիր արձանագրությունները հակադրվում են երկուսին էլ. նրանց մեջ անեծք-օրհնանքները տրամաբանորեն բխում են արձանագրությունների բուն բովանդակությունից և կոչված են ապահովելու հենց այդ բովանդակության ամբողջական կամ առանձին մասերի մասնակի կատարումը։

Բացի այդ, քննարկված նվիրատվական բոլոր կարգի գործարքների համար պետք է նկատի ունենալ նաև հետևյալը.

25. Բոլոր նվիրատվությունները, ինչպես տեսանք, կատարվել են անհատ մարդկանց կամ մի խումբ հարազատների կողմից, անկախ նրանց դասային պատկանելությունից, հոգևոր հաստատություններին։ Դրանք բոլորը կրոնական-հոգևոր նվիրատվություններ են, որ կատարվել են միմիայն հոգևոր նպատակներով։ Եվ այդ հոգևոր նվիրատվությունները անկախ այն բանից, թե տրվել են հատուցվող պայմանների պարտադրումով, թե անհատույց, միևնույն է, բոլորն էլ ըստ էության մեկ գլխավոր նպատակ են հետապնդել, այն է՝ **նվիրատուի կամ նրա հարազատների հոգու փրկության ապահովումը**[71]։ Այդ են ապացուցում նվիրատվությունների մեծ մասին ուղեկցող և նրանց նպատակը բացահայտող հետևյալ բանաձևերը. «Տվի վախմ... յիշատակ հոգո իմո» (Ղաֆ., Սանահին, 145), «Ետու յԱստուածածինս զարգինս վասն հոգո իմոյ» (Անդ, 121), «ետու զիմ դրամագին այգին... ի քաւութիւն հոգոյ իմո» (Անդ, 156), «վասն փրկութեան հոգո իմո և զուգակից իմ Ճոխին» (Օրբելի, Դիվան 1, 50), «արարաք արդիւնս բազումս ի փրկութիւն հոգոց մերոց» (Ղաֆ., Հովհաննավանք,

71 Կան, հարկավ, նաև այնպիսի նվիրատվություններ, որ մեռած հարազատների հոգու փրկության նպատակին զուգահեռ արտահայտվել են նաև կենդանի մերձավորների արևշատության ցանկությունը («տվաք... մեր մեռելոցն հոգւոյն և մեր արեւշատութեան»—Ղաֆ., Սանահին, 106, «Որ անխափան պատարագ մատչի վասն արեւշատութեան տերանց իմոց Շահնշահի և որդոց իւրոց, և վասն թողութեան մեղաց իմոց»—Օրբելի, Դիվան 1, 63, «էտու զԱրծուէրայնն... վասն Յովանիսի արեւշատութեան և ինձ մեղաց թողութեան»—Ղաֆ., Հաղբատ, 151) և այլն, որոնք այդուամենայնիվ իշխող ու բնորոշը չեն վանական նվիրատվությունների նպատակներին։

106), «Նուիրեցի... վասն տառապեալ հոգւո իմո» (Բարխ., Դիվան 2, 33), «շինեցաք... ու տվաք... ի փրկութիւն հոգո մերո եւ ծնողաց մերոց» (Անդ, 109) և այլն:

Այդ են վկայում նաև նվիրագրերում հաճախ հիշատակվող նոմանու պարտադրվող պատարագները: Բայց առավել ուշագրավ են ձեռագրերի հիշատակարաններում շատ հաճախ, իսկ վիմագիր արձանագրություններում երբեմն հանդիպող նվիրագրերին կից այն բանաձևերը, ուր հոգ է տարվում նվիրատուի կամ նրա հարազատների հիշատակի պահպանության մասին: Այսպես. (խոսքը ձեռագրերի մասին է) «ստացան զսայ և հալալ արդեանց իւրեանց և ետուն յիշատակ ի Յաւան (=Եաւշ) սուրբ Աստուածածին» (Խաչ., ԺԵԲ հիշատակ., 12—13), «ետու զսուրբ Աւետարանս... յիշատակ հոգւոյ իմոյ» (Անդ, 21, 22), «...Ու եդի ինձ յիշատակ ի սուրբ Յակոբ ի յԵրուսաղէմս» (Անդ, 28), «...եւ եդիր յիշատակ ի սուրբ Աստուածածնիս դուռն (Անդ, 67), «յիշատակ առ դուռս սուրբ Աստուածածնին՝ Խոճայ Աղիզի» (Անդ, 111), «ետու զսուրբ Աւետարանս և զարծաթի ակին իմ յիշատակ ի սուրբ Գրիգոր եկեղեցին» (Անդ, 227), «Ու յիշատակ կու դնեմ ի սուրբ Յակոբ եկեղեցին» (Անդ, 268), «...տուաք ընծայ զսուրբ Աւետարանս Սումբեց Աստուածածնին» (Անդ., 280), «...տուաք զսուրբ Աւետարանս... ի դուռն Տիեզերաց սուրբ Աստուածածնին, յիշատակ մեզ և ծնողաց մերոց» (Անդ, 325), «...եդիր զայս սուրբ Աւետարանս ի դուռն սուրբ Աստուածածնիս յիշատակ իմ հոգուս» (Անդ, 434) և այլն:

Նույնը հանդիպում ենք նաև վիմագիր նվիրագրերում. «ետու Բ շուրջառ մախմուր յիշատակ ինձ և ծնողացն իմոց» (Ղաֆ., Սանահին, 167), «...տվի յիշատակ ինձ և ծնողաց իմոց» (Ղաֆ., Հովհաննավանք, 102, 107), «...շինել տվի, յիշատակ ինձ և ծնողաց իմոց եւ կողակցին իմ» (Ղաֆ., Հաղբատ, 149) և այլն:

Հոգևոր հաստատություններին նվիրատվություններով հիշատակ թողնելու այս ձգտումն, այնուհետև առավել շեշտված ձևով երևան է գալիս վանքերի ու եկեղեցիների նվիրատվական մատյաններում, ուր գրանցվում է յուրաքանչյուր նվիրատուի տված ընծայի անունը, նրա կամքն ու ցանկությունը: Ձեռքի տակ ունենք Ս. Պողոսի եկեղեցուն մատուցած նվիրատվությունների գրանցման մատյանը[72], ուր, եթե նվիրատվությունը փոխհատուցումներով չի

72 Երևանի Մաշտոցի անվան Մատենադարան, կաթող. դիվան, թղթապ. № 1, վավ. 6:

պարտադրված, ապա գրեթե բոլոր աշխարհիկ նվիրատուների նվերների դիմաց գրված է նրանց կամքը՝ նվերն իբրև հիշատակ տալը:

Այսպես. «Աստուած ողորմի Խանոնց Խաղաղին, ալաջայ ղադիփիա ծածկոց մի ետու յիշատակ: Աստուած ողորմի Ջալաբոնց Ջիրաքին, ղադիֆայ վարագոյր մի Բ ծածկոց, այլ խորանացն ղումաշ ետ յիշատակ:

Աստուած ողորմի Ամիրղաջին՝ վարագոյր մի ետ յիշատակ. չիթ՝ ասաղանին, չիթ ծածկոց մի (էջ 4):

Աստուած ողորմի տէր Պօղոսին՝ Ասմաւուրք մի ետ յիշատակ իւր հոգոյն:

Աստուած ողորմի Խոջայ Աստմին, ճաշու գիրք մի ետ յիշատակ» (էջ 5) և այլն:

Բոլոր նվիրատվություններից առաջ անխտիր, նվիրատու եկեղեցու ներկայացուցչի կողմից գրված է «Աստված ողորմի» մաղթական բանաձևը, որ, ինչպես տեսել ենք, նվիրատուից՝ նվիրատուին ուղղված խրախուսանքի ու գոհունակության մի բարի խոսք է:

Բայց դառնանք բուն խնդրին: Ի՞նչ հիշատակներ են դրանք, որ արձանագրված են գրեթե բոլոր կարգի հոգևոր նվիրատվական գրություններում: Դրանց մի մասի պատասխանն իսկ տրված է հիշատակների մասին եղած բանաձևերում:

Վերոբերյալ օրինակներում կան այնպիսիք, որոնց մեջ բացահայտ երևան է գալիս այդ հիշատակների բնույթը: «Ետու զսուրբ Աւետարանս... յիշատակ հոգոյ իմոյ», «եդիր զայս սուրբ Աւետարանս ի դուռն սուրբ Աստուածածնայ յիշատակ իմ հոգույս», «Աստուած ողորմի տէր Պօղոսին Ասմաւուրք մի ետ յիշատակ իւր հոգոյն» բանաձևերը կամ հետևյալները. «...տուի... զսուրբ աւետարանս... իմ որդւոյն՝ Սեթեկին հոգոյն յիշատակ» (Խաչ., ԺԴ հիշատակ., 372), «...զսուրբ գիրքս.. շնորհեաց Աստուածածնին... ընծայ յաւիտենական, յիշատակ և բարեխաւս հոգոյ իւրոյ» (Խաչ., ԺԵԱ հիշատակ., 113), «տուի զսուրբ աւետարանս... եկեղեցոյն ընծայ, յիշատակ հոգոյ իմոյ և իմ ծնաւղացն» (Անդ, 228) և այլն, ցույց են տալիս ոչ այլ ինչ, քան այն, որ այդ նվեր-հիշատակները սովորական չեն, այլ կրոնական-հոգևոր և ըստ էության հանդես են գալիս իբրև հոգու փրկության նյութական գրավականներ: Դրանցով, քրիստոնեական սոցիալական ըմբռնումների համաձայն, այս աշխարհի նյութական արժեքների միջոցով ապահովվում էր

հոգու փրկությունն անդրաշխարհում: Հետևաբար, եկեղեցիներին ու վանքերին տրվող այդ ընծա-հիշատակները իրավաբանական տեսակետից հանդես են գալիս որպես հոգու նյութական յուրօրինակ փրկագին: Դրանց անօրինական օտարումն ու հափշտակումը նվիրատուն դիտում է իբրև իր և հարազատների հիշատակի վերացում, որ ջերմեռանդ հավատացյալի հայացքով այլ բան չէր, քան իր և հարազատների հոգիների փրկության հույսի խափանում և հոգիների հավիտենական կործանման դատապարտում: Ահա թե ինչու նվիրատուներն այնքան շահագրգռված են այդ նվեր-հիշատակների, կամ այլ կերպ ասած՝ հոգու փրկագների մշտական պահպանությամբ: Եվ հիշյալ նպատակն իրագործելու համար նրանք ապավինում են խոսքի հմայական ներգործության զորությանը՝ անեծք-օրհնանքներին, դրանք դարձնելով իրենց հոգու փրկագները ապահով ու անձեռնմխելի պահելու իրավաբանական միջոցներ:

Հիշատակի պահպանության այս միևնույն հայացքն է առկա նաև հին արևելյան սեպագիր հուշարձաններում, ուր արձանագրության հեղինակ թագավորը մտահոգված է տվյալ նյութական կամ գրավոր հուշարձանի, իբրև սեփական հիշատակի, պահպանությամբ: Վերջինս թելադրված էր ոչ միայն միապետ-բռնակալի սին փառասիրությամբ, այլ առավել ևս հիշատակի հեթանոսական-կրոնական հավատալիքներով: Հիշատակը գիտակցվում է իբրև անհատի կրոնա-բարոյական գոյության կանխապայման, իսկ հիշատակի ոչնչացումը նշանակում էր տվյալ անհատի բարոյական կործանում կամ մահ: Հին Արևելքի ստրկատեր միապետների կանգնեցրած հուշասյուներն ու սեպագիր հիշատակագրությունները, ահա, հետապնդում էին հենց նրանց հիշատակի հավերժացումը, ուստի և մտահոգություն՝ այդ հիշատակի պահպանության համար: Կրոնա-հմայական հավատալիքների համատարած գոյության պայմաններում, հիշատակի պահպանության իրավաբանական լավագույն միջոցներ էին դառնում հմայական չար ու բարի խոսքերը՝ անեծքներն ու օրհնանքները, որոնք ժամանակի ու տարածության անսահմանության մեջ պահպանում էին իրենց ներգործման մշտական զորությունը:

Ե. ԱՌՈՒԾԱԽԻ ԳՈՐԾԱՐՔՆԵՐ

26. Անեծք-օրհնանքների գրավոր կիրառությունը, սակայն, սոսկ վիմագիր արձանագրությունների ու ձեռագրերի հիշատա-

կարանների շրջանակներում չի սահմանափակվում: Այն երևան է գալիս տնտեսական և մշակութային այլևայլ բնագավառներում:

Բացի նվիրատվական գործարքներից, անեծք-օրհնանքները լայն կիրառություն են ունեցել նաև առքի և վաճառքի տնտեսական գործարքներում:

Առքի և վաճառքի անեծքով վավերացվող գործարքների նմուշներ են հետևյալները.

«Կամաւն Աստուծոյ ես՝ պարոն Սարգիս, որդին իմ՝ Միտիչս, թոռն իմ Մարգարէ Շահիջանն իմ աչքու նէրքին դեհէն Ը (8) առու ծախեցինք ի վերայ պարոն Վասակի որդոյն պարոն Տէր Բարսեղ եպիսկոպոսին: Ջահրատն այն առուն է, որ խնծորին մէջն է: Ով յետ վազէ՝ ՅԺԸ հայրապետացն անիծած է, Աստուածածնէն կապած է:

Ես Ակոպը էրեցս վկայ եմ, Տէր Գրիգորս վկայ եմ, Տէր Առաքէլս վկայ եմ, պարոն Շանշէն վկայ, Գուզալն, Կարապետն վկայ են, Հովանէսն վկայ, պարոն Ղուսէն վկայ է» (Մատ., ձեռ. № 3031, էջ 222—223):

1654 թ. Թաթարի որդի Բաբան և նրա եղբայրներ՝ Օթանդիլն ու Զաքարեն իրենց կամքով վարելահողեր են վաճառում Սանահնի առաջնորդ Սարգիս եպիսկոպոսին՝ հավաստիացնելով. «այլ օչում դաւի չկայ. ոչ իմոց և ոչ օտարաց և ոչ ազգականաց»: Միաժամանակ պայման են դնում անեծքով, թե «Ով ոք հակառակի, յետ ու առաջ տայ՝ Գ (3) սուրբ ժողովոյն նզովեալ եղիցի»: Սրան հետևում է նաև գործարքը այլոց կողմից վիճարկվելու դեպքում պատասխանատվությունը վաճառողի վրա վերցնելու հավաստիացումը. «Ու թէ այլ տեղաց բան պատահի՝ դաւի անող լինի, պարոն Տէրն իր հոգին տէր այ, դաւու ջուղապն ես տամ»: Գործարքը փակվում է վկաների վկայություններով (Մատ., ձեռ. № 3031, էջ 345—347):

Տալավերեցի Թումանն ու իր որդի Թաղրի Վերմիշը իրենց այգին վաճառում են Սանահնի առաջնորդ Բարսեղ եպիսկոպոսին: Գործարքին հաջորդում են վկաների հինգ անուններ, և այն վավերացվում ու ավարտվում է հետևյալ անեծքով. «Ով այլ հակառակի կամ դաւի անէ, որդի կամ ազգական կամ պարոն, ՅԺԸ հայրապետաց անիծած է, մեր մեղացն տեր է» (Մատ., ձեռ. № 3031, էջ 221—222) և այլն:

Ինչպես տեսնում ենք, առքի և վաճառքի գործարքները ձևով և կառուցվածքով նույնանում են նվիրատվական գործարքներին, հատկապես նվիրագրերին: Եվ այդ այն պատճառով, որ ինչպես

նվիրագրերում նվիրատուն, այնպես էլ այստեղ՝ վաճառողը, հանդես են գալիս իբրև գործարքի առավել ակտիվ նախաձեռնող կողմ. նվիրատվության կամ վաճառվող կալվածքի վիճարկումն ու օտարումը կարող է հենց իրենց կամ իրենց հարազատների կողմից լինել, ուստի և ամենից առաջ իրենք են շահագրգռված ու պատասխանատու նվիրատվության ու վաճառքի գործարքները հաստատուն պահելու մեջ: Ուստի և գործարքը կազմվում է նախաձեռնող կողմի անունից, և անեծքի սանկցիան ևս նրա կողմից է առաջադրվում: Բայց երբ գործարքի երկրորդ կողմի վրա ևս որոշակի պարտավորություն է դրվում, ապա գործարքը կնքվում է պայմանագրերի օրինակով, երբ նվիրատուն պարտավորվում է նվիրատվության դիմաց ժամ կամ պատարագ մատուցել[73]:

Առքի և վաճառքի գործարքներում անեծքն հիմնականում երկու գործնական նպատակ է հետապնդում.

---

73 Առքի և վաճառքի հին գործարքներում պայմանագրեր հազվադեպ են հանդիպում: Եվ այդ այն դեպքում, երբ գնողը որոշ պարտավորություն է իր վրա վերցնում: Սանահնի Քոթուկում հանդիպում են առքի և վաճառքի պայմանագրի երկու հետաքրքիր նմուշ:

Վրաց Թահմազ Բեկը իր ձորտ Սուլխանի հետ գալիս է Սանահին: Սանահնի առաջնորդ Սարգիս եպիսկոպոսը Թահմազ Բեկից գնում է ձորտին իր երեք զավակներով: Այդ առթիվ գրված պայմանագրի մեջ վաճառող կողմ Թահմազ Բեկը պայման է դնում անեծքով. «Ով որ յետ ու առաջ տայ՝ Բագրատունեցոնց արէնտէր լինի». միաժամանակ հավաստիացնում է թե. «Ով որ Սուլխանին դաւեքար լինի՝ գայ, մեզանից ուզէ, մենք մեր հալալ արտիւ ծախեցի, հախն առայ, այլ օչում դաւի չկայ. վկայ են այս բանիս» (բերվում են վկաների անունները): Դրան հաջորդում է գործարքի մյուս կողմի՝ ձորտին գնող Սարգիս եպիսկոպոսի հանձնառությունը. «Ես Սարգիս եպիսկոպոսս գնեցի Սուլխանն իր Բ (2) որդովն մէկ դստրովն: Ապա թէ Սանահին կենան՝ վանքին ղուլուղ անեն, օչում հետ բան չունին: Թէ գնան՝ ազատ եմ արել դորն որ գնան. աչով հետ նհանց բան չունի. Աստուած իրանց բանն աջողէ. Ամէն» (Մատ. ձեռ. № 3031, էջ 370—371):

Ուրեմն, Սարգիս եպիսկոպոսի առնտուրը սովորական առևտրական գործարք չէ, որ կարիք չի ունենում, սովորաբար, գնողի կողմից հավաստիացումների ու պարտավորվածության: Նա ձորտին գնում է իբրև ապրանք, այսինքն՝ կատարում է առևտրական գործարք, բայց քանի որ նրան չի պահում իբրև այդպիսին, այլ ազատ է արձակում, ուստի և պարտավորվում է իր գնման անսովոր առարկայի անվտանգությունն ու ապահովությունն հոգալ: Եվ նա իրավաբանորեն հավաստում է, «Թէ գնան, ազատ եմ արել դորն որ գնան. աչով հետ նհանց բան չունի». ուրիշ կերպ ասած, գնողի պարտավորվածությունը անհրաժեշտորեն թելադրում է գործարքը իրականացնել պայմանագրով, ուր որոշակի դրսևորվում են գործարքի երկու կողմերի առանձնած պարտավորությունների պատկերը: Սարգիս եպիսկոպոսի կողմից ձորտագնման և ձորտին ազատ արձակելու մասին մի այլ պայմանագիր տե՛ս նույն ձեռագրի 372—373 էջերում:

ա) **գործարքն անխախտ ու հաստատուն պահելը**, որ տեսանք ձեռագրերի հիշատակարանների նվիրատվական մի քանի գործարքներում: Հիշյալ նպատակը երևան է գալիս անեծքների հետևյալ պայման-բանաձևի մեջ. «Ով որ յետ ու յառաջ տայ» (տե՛ս Մատ. ձեռ. № 3031, էջ 381, 383, 390, 395, 419, 423, 424, 428, 429 և այլուր), «Ով յետ վարէ» (ձեռ., № 3031, էջ 322—323), այսինքն, թե ով որ զղջա և ետ պահանջի կամ ետ տա վաճառքի ու գնման առարկան: Մյուսը՝

բ) **առքի ու վաճառքի առարկայի անձեռնմխելիության պահպանությունն է**, որ արտահայտություն է գտել անեծքների հետևյալ պայման բանաձևերում. «Ով որ հակառակի և հանել ջանա սոցանէ, եթէ իմոց կամ ատարաց (Մատ., ձեռ. № 3031, էջ 420, 422), «Ով որ յանդգնի և հակառակի և եթէ մերոց և եթէ այլոց հանել ջանայ՝ նզովք առցէ» (ձեռ., № 3031, էջ 406), «Ով հակառակի ու դատի անէ» (ձեռ., № 3031, էջ 386, 417), «Ով որ մեր ծախածիս հակառակութիւն անէ (ձեռ. 3031, էջ 404), «Եթէ ոք հակառակի կամ յանդգնի մեր տուած հայրենացս առնուլ ջանայ կամ խլել» (ձեռ. № 3031,; էջ 400, 415) և այլն: Որովհետև վաճառքի առարկա գույքի կամ կալվածքի վիճարկողն ու օտարողը մեծ մասամբ կարող էին լինել վաճառողի հարազատներից կամ օտարներից ոմանք, ուստի և անեծքներն ուղղվում են նրանց դեմ («եթէ իմոց կամ ատարաց», «եթէ մերոց և եթէ այլոց» և այլն):

Առևտրական գործարքի, իբրև նվիրատվական փաստաթղթերի, անխախտությունը և վաճառված-օտարված առարկայի օտարումը պահպանելու և ամրապնդելու այս նպատակը, որ հետապնդում են առքի և վաճառքի գործարքներում վկայակոչված անեծքները, դարձյալ կիրառված են բարոյական նախազգուշացված պատժի՝ իրավաբանական սանկցիայի իմաստով[74]:

74 Հարկ է նշել, սակայն, որ ոչ բոլոր առևտրական գործարքներում են անեծքները պարտադիր կարգով կիրառվել: Կան զգալի թվով առքի ու վաճառքի գրավոր գործարքներ, դարձյալ անհատների կողմից հոգևոր հաստատությունների հետ կնքած, ուր իսպառ բացակայում են անեծքները (տե՛ս Արր., Կալվածագրեր, էջ 112, 114, 116, 139, 140, 141, 147 և այլուր: Մատ. ձեռ. № 3031, էջ 378, 380, 396): Նման գործարքներում վաճառված առարկայի իրավական անձեռնմխելիությանը այլևս չի վավերացվում անեծքով, այլ պարզապես դրա ռեալ իրավական պատասխանատվությունն իր վրա է վերցնում վաճառողը այսպիսի և նման հավաստիացումով. «Հարցահ յետ ժամանակաց եղբօրէ կամ քվերէ, որդէ կամ դստերէ, զոմէ կամ յաւտէ, վարիսէ կամ շվատարէ, դաւինի դուս գայ,

Զ. ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԲԱՆԱԴՐԱՆՔԻ ԹՂԹԵՐ

Օրհնանքներն ու անեծքները հին գրավոր հուշարձաններում ունեցած օժանդակ կիրառություններից բացի, վերաճած ու ծավալված ձևերով եկեղեցական գրականության մեջ հանդես են գալիս իբրև ուրույն գրական տեսակներ, որոնք անվանվում են, սովորաբար՝ «թուղթ օրհնութեան» *կամ* «կոնդակ օրհնութեան»[75] *և* «թուղթ անիծից» *կամ* «թուղթ բանադրանաց»[76]:

Գրական այս երկու տեսակն էլ օգտագործվել են եկեղեցական բարձրաստիճան հոգևորականների, մասնավորապես կաթողիկոսների և թեմերի առաջնորդ եպիսկոպոսների կողմից իրենց ենթակա հոգևորականների կամ աշխարհականների նկատմամբ:

27. *Օրհնության թղթերը կամ կոնդակները այլ բան չեն, քան ծավալուն օրհնություններ, ավելի ճիշտ՝* օրհնաբանություններ, *որոնք հոգևոր առաջնորդի կողմից, ըստ նրա ճարտասանական ունակության, իսկ հաճախ էլ՝ ընդունված ու պարտադիր բանաձևերով, գրանցվում են թղթի վրա և հղվում այս կամ այն եկեղեցական կամ աշխարհիկ անձին, տեղական հասարակությանը, նրանց կատարած լավ, բարի և խրախուսանքի արժանի գործունեության կամ նրանց միշտ հնազանդ ու իրենց ենթակա պահելու համար: Դրանց մեջ տվյալ անհատի կամ հանրության կատարած բարի ու օգտակար գործը խրախուսելու, ինչպես նաև նրանց հլու հնազանդ պահելու նպատակով հոգևոր առաջնորդը օրհնության մի ամբողջ տարափ է թափում գործող անձի ու նրա հարազատների, ինչպես նաև ամբողջ հասարակության գլխին, ցանկանալով կյանք, արև, արքայություն, հոգու փրկություն և ամենայն բարիք:*

Օրհնության թղթերը կամ գրերը կառուցվածքով, սովորաբար, բաղկացած են լինում երեք հիմնական մասերից. ա) օրհնողի՝ օրհնվողին ուղղված մաղթական դիմումից, բ) օրհնաբանության բուն նպատակից կամ բովանդակությունից, ուր շարադրվում է

կամ բան ասող լինի հետ Գրիգոր վարդապետին, Սուրբ Նախավկային, ես Աստուածատուրի որդի Ըստեփանոս օհտիցն գամ և ջուղապ տվողն ես լինիմ» (Արր., Կալվածագրեր, 148): Կամ. «Ով որ դաւի անէ՝ ջուղապի տվաւղն ես ըլիմ» (Մատ. ձեռ. № 3031, էջ 378):

75 *«Դիվան հայ պատմության», գիրք Է, հրատ. Գյուտ ք. Աղանյանց, Թիֆլիս, 1908, էջ 69:*

76 *Անդ, էջ 114, 115:*

հաճախ օրհնվողի կատարած լավ կամ բարի գործը և գ) բուն օրհնությունից կամ օրհնաբանությունից, որով ավարտվում են օրհնաթղթերը:

Այսպես. 1684 թ. Եղիազար կաթողիկոսը օրհնագիր (օրհնության կոնդակ) է հղում Աբրահամ և Կիրակոս քահանաներին՝ էջմիածնի նվիրակ վարդապետին լավ ընդունելու և նրա միջոցով Էջմիածնին մեկ ձի և գոմշաձագ նվիրելու առթիվ: Կոնդակն սկսվում է սովորական դիմումով և հետևյալ մաղթական բանաձևերով. «Շնորհք ընդ ձեզ և խաղաղութիւն յԱստուծոյ Հօրէ, և ի տեառնէ մերմէ Յիսուսէ Քրիստոսէ և ի սրբոյ Հոգւոյն կենարարէ և առատածաւալ պարգևատուէ ամէն: Զօր աւրհնութիւն աստուածային և աղօթք սուրբ Լուսաւորչին և սուրբ Կարապետին և սրբոյն Ստեփաննոսի Նախավկային և ամենայն սրբոց երկնաւորաց և երկրաւորաց եկեսցէ և հանգիցէ ի վերայ ձեր: Եւ աւրհնեսցէ զձեզ տէր Աստուած մեր ի յերկնէ և ի յերկրէ, ի ծովէ և ի ցամաքէ, ի հրեշտակաց և ի մարդկանէ, ի հրեղինաց և ի հողեղինաց և յամենայն գոյականէ, ամէն»:

Սրանց հաջորդում է կոնդակի երկրորդ մասը, այսինքն՝ օրհնաբանության բուն նպատակն ու բովանդակությունը: Ապա հետեվում է վերջին՝ երրորդ մասը՝ բուն օրհնաբանությունը, որով և եզրափակվում է կաթողիկոսի օրհնագիրը: Ահա այն ամբողջությամբ.

«Եւ զոր ինչ նուէրք որ Սուրբ Աթոռիս արել էք, բարերարն Աստուած միոյն Ռ-ապատիկ հատուցէ ձեզ և փոխանակ հոգէբաժնացն ձերոց, ձեր հոգին լուսոյ բաժին առնէ, և Քրիստոս իւր տեսութեանն արժան առնէ: Եւ որք պաշտօն պատարագ և սաղմոսերգութիւնք կատարի ի Սուրբ Աթոռն, ձեզ և ննջեցելոց ձերոց մասն և բաժին լիցի: Աստ ուրախութեամբ և անփորձ կենօք պահեսցէ և յետ աստեցս ելանելոյ զերկնից արքայութեան արժանի արասցէ զձեզ և ննջեցելոցն ձեր, ամէն»[77]:

Սիմեոն կաթողիկոսը 1772 թ. օրհնության թուղթ է հղում Ղազախի տանուտերերին և ժողովրդին, նրանց ուղարկած թղթերի և ընծայած «հոգեվոր պտուղի»՝ յուղի, պանրի և մատաղացուի առթիվ:

Օրհնաթուղթն սկսվում է ողջույն-դիմումով և հետևյալ մաղ-

77 Մաշտոցի անվ. Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 5, վավ. 50:

թանքներով. «որոց (այսինքն՝ տանուտերերին և ժողովրդին—Ս. Հ.) լիցի Տէր խնդալ մշտագուարճ ցնծութեամբ և ուրախութեամբ հանապազ, Ամէն: Շնորհք, սէր և խաղաղութիւն Ամենասրբոյ Երրորդութեան իջեալ հանգիցէ ի վերա ձեր և ձերայնոցն և ընդ ձեզ բնակեսցի, և լցուսցէ ամենայն բարութեամբ: Ամէն»:

Թղթի միջին կամ երկրորդ մասը բուն բովանդակությունն է՝ տանուտերերի թուղթն ու ընծաներն ստանալու մասին:

Վերջին՝ երրորդ մասը օրհնությունների շարան է՝ ուղղված տանուտերերին ընծաների համար:

«Եւ օրհնաբանեցաք զպտղատու որդիսդ մեր. զորս Տէր Աստուած օրհնելով օրհնեսցէ և զօրացուսցէ, և վարձահատոյց եղիցի, և միշտ ի շինութեան և յաջողութեան պահեսցէ, ընչիւք և ստացուածովք լցուսցէ և ամենայն ապրանաց ձերոց զաճումնականութիւնս տացէ, հոգւով և մարմնով և ամենայն առաքինութեամբ զարդարեսցէ և զհոգիս ննջեցելոցն ձերոց լուսաւորեսցէ»[78]:

Պետք է նկատի ունենալ, սակայն, որ կառուցվածքային հիշյալ առանձնահատկությունը բոլոր դեպքերում չէ, որ նույնությամբ պահպանվում է: Երբեմն օրհնագրերը բաղկացած են լինում սոսկ երկու մասից. օրհնվողներին ուղղած մաղթական դիմումից և բուն օրհնաբանությունից: Այդպիսին է օրինակ Հաղբատի առաջնորդ Ավետիս եպիսկոպոսի 1675 թ. օրհնագիրն՝ ուղղված Դավիթ քահանային և Գրիգոր սարկավագին: Օրհնագիրն սկսվում է հիշյալ անձանց ուղղած մաղթական դիմումով: Հաջորդ և վերջին մասը բուն օրհնաբանությունն է, բաղկացած պատկերավոր օրհնանքների մի ամբողջ շարանից:

Ահա այն. «Շնո՜րհք ընդ ձեզ եւ խաղաղութիւն, յԱստուծոյ Հօրէ եւ ի Տեառնէ մերմէ Յիսուսէ Քրիստոսէ, եւ ի Սուրբ Հոգւոյն կենարարէ, եւ մարդասէր բարերարէ: Օրհնութիւն Հօր, պահպանութիւն Որդոյ, և նախախնամութիւն ամենասուրբ Հոգոյն, միշտ և հանապազ ի վերայ ձեր լիցի, եւ զարդարեսցէ զձեզ հոգով և մարմնով, տամբք և տեղօք, զարմօք եւ զաւակօք, որդովք և դստերօք, սիրելեօք և բարեկամօք, վարօք և վաստակօք, այգեստանօք և բուրաստանօք եւ ամենայն գոյականօք, Ամէն:

Այլեւ արեգակն արդիւնարար ծագեսցի ի վերայ ձեր, եւ լուսինն լրացեալ հովանի լիցի, եւ ամենայն առաւօտու նոր օրհնութիւն տացի ձեզ, եւ ամենայն երեկոյի պահպանութիւն ի Տեառնէ

78 Մաշտոցի անվ. Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 4, վավ. 9:

նղիցի ի վերայ ձեր, Ամէն: Այլեւ փրկեսցէ եւ ազատեսցէ զձեզ ամենայն փորձանաց, յերեւելից և յաներեւութից, յանօրինաց, յանիրաւաց, ի չարաց, ի պատրանաց, ի սուտ եղբարց, ի ընկերաց, ի մարդադէմ գազանաց, ի յանիրաւ պահանջողաց, ի քարասիրտ բռնաւորաց և ամենայն յորոգայթից հոգւոյ և մարմնոյ, Ամէն»[79]:

Այս և նման կարգի օրհնագրերից օրհնության պատճառի գրավոր հիշատակման բացակայությունն, հարկավ, չի նշանակում, թե դրանք առհասարակ առարկայական դրդապատճառ չեն ունեցել: Ընդհակառակն, ըստ երևույթին այդ դրդապատճառը օրհնող և օրհնվող կողմերի համար այնքան բացահայտ է եղել, որ հարկ չի զգացվել այն կրկնելու օրհնագրի մեջ, իբրև ինքնին հասկանալի մի իրողություն:

Օրհնության թղթերում ու կոնդակներում հանդիպում են նաև մասերի մեր նշած օրինաչափ համամասնության խախտման տարբեր ձևեր ևս, որոնք տվյալ դեպքում էական չեն:

Կարևորն այն է, որ օրհնության բոլոր թղթերի նպատակն է ցանկության բարի և գրավոր խոսքով ապահովել եկեղեցու շահն ու օգուտը, լինի այն արտահայտված անմիջական նյութական արժեքներով, թե կրոնա-վարչական հնազանդության կամ օրենսդրական ենթակայությունը ապահովող կոչերով ու պարտադրումներով:

Այս տեսակետից ուշագրավ է այն պարագան, որ օրհնաթղթերը եկեղեցական նվիրատվական գործողություններում դիտվել են իբրև նվիրատվությունների դիմաց տրվող մի յուրօրինակ փոխհատուցում, երբ նվիրատուն իր ընծան տալիս է օրհնության թուղթ ստանալու ակնկալիքով:

1799 թ. հավանաբար Էջմիածնի կաթողիկոսի նվիրակը, Պոլսում կազմում է առանձին էսնաֆությունների և եկեղեցիների տված գանձանակների (նվիրագրամ) և առանձին անհատների կողմից արված նվիրատվությունների ցուցակը և ներկայացնում կաթողիկոսին: Պարզվում է, որ հիշյալ երկու կարգի նվիրատվություններն էլ կատարվել են կաթողիկոսական օրհնագրեր ստանալու հույսով[80]: Ինչպես երևում է կաթողիկոսին ուղղած խնդրա-

79 Անդ, թղթ. 1, վավ. 30:

80 «Այսորիկ ստորագրեալքս են էսնաֆաց և կամ յայլևայլ եկեղեցաց առ ի հասեալ գանձանակսն, որոց օրհնութեան թուղթսն խնդրեն...

Այսորիկ ստորագրեալքս են կտակք, որ ետուն ընդ այլևայլ արդեանց, որոց օրհնութեան թուղթսն խնդրեն բազմաւ սիրով».—գրում է կաթողիկոսին յուրաքան-

գրից, կաթողիկոսը մերժել է ամանց նվիրատվության դիմաց օրհնության թուղթ հղել։ Մինչդեռ նվիրակը ներկայացնելով մերժվածների լրացուցիչ ցուցակը «երես անկեալ» խնդրում է կաթողիկոսին որպեսզի նա դրանց ևս օրհնագրեր շնորհի, քանզի հավատացյալները «ջերմեցեալք եղեն առաջնով գրեցեալ թղթովքն. և ահա մինչև ցայժմ նովին ջերմութեամբն 25 տեղ ի մէջ էնաֆաց նորոգ գանձանակ հաստատեցաւ, և ակն ունիմ ևս աճիլ աստուծով և յերկնաչու աղօթիւքդ»։

Ուրեմն՝ կաթողիկոսական օրհնության թղթերը մեծապես շահագրգռել են հավատացյալների ջերմեռանդ զգացմունքները, և նրանք՝ խրախուսվելով ու ոգեշնչվելով դրանցից, նորանոր նվիրատվություններ են կատարել եկեղեցուն։ Ահա թե ինչու է այդքան պաղատագին թախանձում Հոգևոր հայրապետին օրհնության թղթերի համար եկեղեցական նվիրատվություններ գանձող նվիրակը։

Այստեղից հետևում է, որ Հոգևոր հովվի օրհնագրերը իրենց ցանկության բարի խոսքերով հմայական ազդեցության բացառիկ զորություն են ունեցել հավատացյալների աչքում, մարդիկ, որոնք այդ բարի խոսքերի կատարման խոր հավատով տոգորված, ձգտել են անգամ իրենց սուղ միջոցներից նվիրաբերումներ հանել եկեղեցուն, նման օրհնագրերի արժանանալու մեծ հույսով։ Իսկ եկեղեցին իր հերթին օգտվելով օրհնաթղթերի այդ բացառիկ ազդեցությունից, օգտագործել է այն իր նյութական ու բարոյական շահերն ամրապնդելու և ապահովելու համար։

Տեսնում ենք, ուրեմն, որ օրհնության թղթերը էապես նույն դերն են կատարել կյանքում, ինչ օրհնանքները, այն տարբերությամբ, սակայն, որ օրհնագրերն իրենց գրավոր և օրհնողի կրոնավոր հեղինակություն լինելու պատճառով ազդեցության առավել

չյուր խամը նվիրատվությունների մասին նվիրակը։ Ավելին. բերված երկու կարգի նվիրատվական ցուցակներում էլ, յուրաքանչյուր նվիրատուի դիմաց, շեշտվում է հատկապես նրա օրհնության թուղթ ստանալու ցանկությունը։ Բերենք մեկական օրինակ յուրաքանչյուր ցուցակից. 5. «Ալաճաճի էնաֆաց գանձանակն, որ ի ՌՄԽԶ թուին մերոյ և յապրիլի մօէն մինչև ի ՌՄԽԷ թին և յապրիլի մուտն առ ի ձեռամբ հարազատ և մտերիմ գանձապետի՝ Իսահակ Աղային և որդւոյն իւրոյ Աբրահամին 86 ղուռուշ և 20 փարայ, որոյ օրհնութեան թուղթն խնդրեն սերտ սիրով»։ 2. «Սամաթիու, ձեռամբ տէր Յովսէփին, մահտեսի Գայիանէ բարեաւր Նէնէն վասն հանգուցեալ առն իւրոյ՝ մահտեսի Կիրակոսին և վասն ինքին 20 ղուռուշ հոգեբաժին ետ, **որոյ օրհնութեան թուղթն խնդրէ սերտ սիրով**» (ընդգծումներն իմն են—Ս. Հ.)։ Մաշտոցի անվ. Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 9, վավ. 6, էջ 1, 4։

տևական ու մեծ զորություն են ունեցել, քան սովորական բանավոր օրհնանք-մաղթանքները: Իսկ իրենց նպատակային նեղ կիրառությամբ օրհնության թղթերը եկեղեցու նյութական օգուտն ապահովելու և բարոյական շահերն ամրապնդելու միջոցներ են, որոնք իրենց իրավաբանական բնույթով, իբրև խրախուսանքի և շահագրգռության ձևեր, մոտավորապես նույն դերն են կատարում, ինչ գրավոր հուշարձաններում նույն նպատակով կիրառվող օրհնանք-բարեմաղթությունները:

28. «Թուղթ անիծից» կամ «Թուղթ նզովից և բանադրանաց» կոչված գրությունները հոգևոր առաջնորդների կողմից իրենց հպատակ հոգևորականներին կամ աշխարհականներին ուղղած եկեղեցու կամ ընդհանուր հասարակական շահերը վնասող արարքների գրավոր դատապարտումն են անեծքներով ու չարաբանությամբ: Դրանք եկեղեցու հայրերի, մասամբ և գրագետ աշխարհականների բերաններին հաճախակի շրջող քրիստոնեական ոգով ու ըմբռնումներով տոգորված նզովք-բանադրանքների շարան են, ուղղված որոշակի անձանց կամ հասարակության, նրանց կատարած վատ ու դատապարտելի գործերի առթիվ:

Անեծքի կամ բանադրանքի թղթերը օրհնագրերի նման ևս կառուցվածքով բաղադրվում են երեք գլխավոր մասերի. ա) դիմում բանադրվողին՝ պարսավանքով և անեծքով, բ) չարաբանությամբ բանադրվողի կատարած արարքների հիշատակում և գ) անեծքների ու սպառնալիքների շարք՝ ուղղված բանադրվողին և նրա համախոհներին:

Ոճաբանական այս սխեման ևս տարբեր դեպքերում նույնությամբ չի պահպանվում և ենթակա է փոփոխությունների:

Այստեղ առաջ կբերենք բանադրանքի մի քանի նմուշ, վերառած Դավիթ կաթողիկոսի թղթերից, աթոռակալական մի ժամանակաշրջանի (1801—1808 թթ.), որ աչքի է ընկնում Դավիթ և Դանիել կաթողիկոսների կուսակիցների գահակալական սուր կռիվներով: Բնական է, որ նման մի խառն ժամանակաշրջանում ավելի հաճախակի հանդես գային անեծքի կամ բանադրանքի թղթերը:

Դավիթ կաթողիկոսը 1803 թ. ապրիլին բանադրանքի թուղթ է հղում Ալաշկերտի Ս. Բարդուղիմեոս վանքի առաջնորդ Խաչատուր եպիսկոպոսին, որ համաձայնվել էր Ուչքիլիսում էջմիածնին հակաթոռ կաթողիկոսություն հիմնել: Կրկին չարաբանությամբ ու

սպառնալիքներով առլեցուն բանադրական թուղթը վերջանում է հետևյալ անեծքով. «Եւ եղիցիս կապեալ ի յերկինս և ի յերկրի, և անիծեալ և նզովեալ յամենասուրբ երրորդութենէն, և սրբոյ Իջման տեղւոյս նորին, ի սրբոյ Լուսաւորչէն, և համօրէն սրբազան հայրապետաց և ի մէնջ: Ընդունողք քո և հաղորդողք ընդ քեզ, եղիցին և նորա մասնակից պատժոցդ» (Դիվան է, 117):

Նույն կաթողիկոսը, նույն թվականի մայիսին բանադրանքի թուղթ է ուղարկում Մշո Ս. Կարապետ վանքի Հովհաննես Գլգլ և Հովհաննես Ավրոնցի եպիսկոպոսներին՝ անեծքներով ու սպառնալիքներով դատապարտելով էջմիածնին հակաթոռ կաթողիկոսություն հաստատելու գործում նրանց մասնակցությունը: Բանադրանքի այդ թղթից քաղվածաբար բերենք անեծքի մի քանի նմուշ, ցույց տալու համար դատապարտման այն ահավորությունը, որ գրել է իր չարաբանական խոսքում կաթողիկոսը, հակառակորդներին պատժելու նպատակով:

«...զանէծս ի Քրիստոսէ ընկալջիք, որ վասն ձեզապիսի դայթակղեցուցչաց և կապեալ ըստ պարանոց յանցանաց ձերոց իբրև զերկանաքար ի խորս ծովու կորստեան ընկղմեսջիք: Եւ զի՝ անօրինակ յանցանօք յանցեալք և որոմն չար եղեք յագարակի Տեառն ի բանաւոր հօտ նորին, նմին իրի՝ տէրն ագարակի քաղեսցէ այսօր ի ձեռն իմ զձեզ ի միջոյ ընտիր ցորենոյ, և ի հուրն անշէջ մատնեալ անօրինակ տանջանօք տանջեսցէ ի յայրել մշտնջենապէս... փշրեսջիք զօրութեամբ և շնորհօք սորին և հոսեսջիք իբրև փոշի ի հողմոյ և յանդունդս սուզեսջիք»:

Ապա՝ բանադրանքի թուղթն ավարտվում է հետևյալ անեծքներով.

«Եւ եղիջիք նզովեալք, անիծեալք յամենասուրբ երրորդութենէ ի Հօրէ, ի յՈրդւոյ, և ի սրբոյն Հոգւոյն, ի Լուսաւորչէն մերմէ, և ի սրբազան հայրապետացն դասուց: ...Աղօթք ձեր այսուհետև ի մեղս և ի յանէծս ձեզ դարձցին: Ընդունողքն զձեզ, խօսողք և հաղորդողք ընդ ձեզ, նոքին ևս ընդ ձեզ համաթուեալ, մասնակից և պատժակից լիցին ըստ ձեզ: Եւ յոչ անսալն ձեր բանիցս, և յոչ զգաստանալն ձեր սրտօք, պատելոց են զձեզ յայնժամ յեղակարծս անակնունելի պատուհասք աննահանջելիք և անճողոպրելի, գուբք և որոգայթք, և անզերծ և անելի արգելանք, և իբրև զտարափս անձրևաց տեղալոց ի գլուխս ձեր. արիւն ձեր ի գլուխս ձեր լիցի» (Դիվան է, 150—152):

Այսպիսի չար նզովքով ու անեծքով դատապարտելը բարոյա-

կան պատիժ դիտելուց բացի ուղեկցվել է նաև իրական-մարմնական պատիժներով: Հիշյալ բանադրանքներում կաթողիկոսը ոչ միայն բավարարվել է անեծքներով, այլև կարգալույծ է արել բանադրվողներին. «Զանիք յայսմհետէ դուք հրաման զկարգ պաշտելոյ, կարգաւոր անուանելոյ, յեկեղեցի մտանելոյ, ի հոտս Քրիստոսի խառնելոյ, և կամ քրիստոնեայ անուանելոյ»—հրամայում է կաթողիկոսը Հովհաննես Գլգլ և Հովհաննես Ավրոնցի եպիսկոպոսներին:

Նույն կերպ է վարվում Դավիթ կաթողիկոսը նաև Ս. Բարդուղիմեոս վանքի առաջնորդ Խաչատուր եպիսկոպոսի հետ, ազդարարելով. «...ես ահա բարձու հրամանաւ քահանայապետական իշխանութեանս, և անդառնալի բանիւ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի մերկացուցանեմ զանառակ և զյանցաւոր զորդիդ կորստեան յամենայն աստիճանաց, և ի կարգաց և ի սուրբ հոգւոյն շնորհաց յեպիսկոպոսութենէդ, ի վարդապետութենէդ, ի քահանայութենէդ, ի դպրութենէդ և ի քրիստոնէական սուրբ հաւատոյ» (Դիվան Է, 116):

Անեծքի մի այլ թղթում (Դիվան Է, 174) բանադրելով Մշո Ս. Կարապետի Մկրտիչ և Մարտիրոս վարդապետներին՝ Դանիել հակաթոռ կաթողիկոսին գործակցելու համար, Դավիթ կաթողիկոսը միաժամանակ հրամայում է նրանց արտաքսել սուրբ եկեղեցուց (Դիվան Է, 176):

Իրական մարմնական պատժի և անեծքով կրոնա-բարոյական պատժի ցանկության նման համադրումը, որ երևան է գալիս բանադրանքի այլ թղթերում ևս, վկայում է այն, որ հիշյալ երկու կարգի պատժի ձևերը բանադրողի կողմից համազոր են գիտակցվել և մարմնավոր պատժի այն ձևը, որ իրենից է կախված եղել՝ անհապաղ կիրառել է, իսկ բարոյականը, որ անկախ է եղել իրենից՝ ցանկացել է միայն, այն էլ հոգու ամբողջ խստությամբ հավատալով և հավատ ներշնչելով ունկնդիրներին՝ դրա պարտադիր կատարմանը:

Ավելին, իրական-մարմնական պատիժն ու պատժի ցանկության խոսքը բանադրանքի թղթերում երբեմն հասնում են նույնացման:

Այսպես, Դավիթ կաթողիկոսը բանադրանքի թուղթ հղելով Աւեթլու գյուղի հասարակությանն առ այն, որ նա պատսպարել է էջմիածնից մյուռոն գողացած Հակոբջանին, հանդուրժել և հովանավորել է ամուսնատեր կնոջ ապօրինի պսակը ոմն Հովհաննեսի հետ՝ կատարված Ոսկան երեցի ձեռքով, և միաժամանակ դիմա-

դրել հիշյալ անձանց էջմիածնի հոգևոր իշխանության իրավասությանը հանձնելուն, նզովում է գող Հակոբջանին, ապօրինի պսակվածներին և այդ պսակը կատարող Ոսկան երեցին, ինչպես նաև գյուղի բնակիչներին այն բանի համար, «որք չեղեն նոցա ապստամբ և կշտամբող»։

Ուշագրավն այն է, որ կաթողիկոսն իր բանադրական խոսքին տալիս է պատժի գործողության ձև և հանդես է գալիս առաջին դեմքով իբրև պատժիչ անձ։

«Քարկոծեմ և սպանանեմ,—գրում է նա,—ոչ զգալի քարամբք, այլ աներևոյթ սրով բանին Աստուծոյ... և իբրև **գնեխնայ անդամ հատանեմ յառողջ անդամոց սրբոյ եկեղեցւոյն Քրիստոսի, և որոշեմ ի սուրբ հօտից նորին,** և անլոյծ կապանօք կապեալ յերկինս և յերկրէ, մատնեմ զնոսա ի կորուստ յաւիտենից և ի հուրն անշիջելի և ի յայրումն մշտատևէս ընդ հօրն իւրեանց սատանայի՝ հոգւով և մարմնով» (Դիվան է, 315. ընդգծումն իմն է—Ս. Հ.)։

Ինչպես տեսնում ենք, կաթողիկոսը ոչ մի տարբերություն չի դնում անձամբ իր կողմից կիրառվող կրոնա-վարչական պատժի (ընդգծված տողերն ակնարկում են Ոսկան երեցին կարգալույծ անելու և եկեղեցուց հեռացնելու մասին) և իր ցանկացած աստվածային պատժի միջև, երկուսն էլ համարելով միմյանց համազոր և իրար պայմանավորող՝ իր իրավասությանը միանգամայն ենթակա իրողություններ։

Այսպիսի նույնացումներն արդյունք են սեփական խոսքի հմայական զորության հավատալիքի գերագնահատման, որ երևան է գալիս, դիցուք, բանադրանքի այնպիսի տարածված մի բանաձևում, որպիսին է. «եւ անլոյծ կապանօք ի յերկինս և ի յերկրի կապեալ կաշկանդեմք զչիքդ և զլկտիդ» (Դիվան է, 117)։

Այստեղ արդեն քրիստոնեական եկեղեցու հայրն հանդես է գալիս իբրև խսկական կախարդ, իբրև մի հեթանոս քուրմ, որ իր հմայական զորությամբ իշխում է բնության ուժերի վրա և սպառնում է իր չար խոսքի ուժով դաժանորեն պատժել դիմացինին։

Հոգևոր առաջնորդների խոսքի հմայագործական զորությունը դրսևորվում է նաև այն հանգամանքի մեջ, որ բանադրվող անձը կամ հասարակությունը, երբ բանադրանքի ազդեցությամբ զղջում է իր արարքներից, արժանանում է բանադրող հոգևորականի թողությանը կամ անեծքի արձակմանը։ Այս դեպքում, դարձյալ, հոգևոր առաջնորդը կատարում է նույն հմայական դերը, ինչ շամա-

նը, կախարդը կամ քուրմը քաղաքակրթության զարգացման առաջին ստորին աստիճաններում, երբ հմայողը կարող էր հմայվածին ուզած դեպքում արձակել չար հմայության անտեսանելի կապանքներից։

Ահա, քրիստոնյա կրոնական առաջնորդի խոսքի հմայական ներգործության այս հավատալիքն է, որ տիրապետող ուժ է դառնում ժողովրդական համայն զանգվածների վրա, նրանց վախ ու երկյուղ ներշնչելով բարձրաստիճան հոգևորականի հմայական խոսքի զորության նկատմամբ։

Եվ երբ նկատի ենք առնում այն սաստող ու սանձահարող դերն ու նպատակը, որ հետապնդում են անեծքի կամ բանադրանքի թղթերը վերոհիշյալ իրական պատժի և բանավոր պատժի սպառնացման հմայական հավատալիքի պատճառով, պարզ է դառնում այն գործնական կարևոր արժեքը, որ ունեցել են և ունեն մասամբ բանադրանքի թղթերը, որոնց միջոցով հոգևոր հովիվը ամրապնդել և ապահովել է իր սեփական իշխանությունը ստորադրյալների և հոտի նկատմամբ։ Ուրիշ խոսքով, բանադրանքի թղթերը գործնականում վերջին հաշվով նույն պահպանական դերն են կատարում, ինչ անեծքները, քանզի դրանք գրականորեն զարգացած ու ոճաբանված անեծքներ են, ուղղված հոգևոր իշխանության մշտակա անսասանության պահպանմանը։

3. ԱՆԵԾՔ-ՕՐՀՆԱՆՔՆԵՐԻ ԿԱՊԸ ՀՄԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԵՎ ՆՐԱՆՑ ԿԻՐԱՌԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Արդ. որո՞նք են անեծք-օրհնանքների պահպանության հմայական միջոցների վերածման ներքին դրդապատճառները։

Հարցին պատասխանելուց առաջ, հարկ է տեսնել անեծք-օրհնանքների և հմայությունների փոխառնչությունները։

29. Հմայական արարողությունները մարդու որոշակի նպատակներին հոգեբանորեն ու ձևաբանորեն հաջորդող կանխամտածված գործողություններ են, գերբնական զորության շնորհիվ տվյալ նպատակն իրագործելու համար։

Հոգեբանական-ձևաբանական այս միևնույն կառուցվածքն է գրեթե առկա որոշակի պայմաններով անեծք-օրհնանքներում։ Այստեղ ևս անիծողը կամ օրհնողը հմայողի նման իր առաջ դնում է որոշակի նպատակ, որի իրագործման համար վկայակոչում է

այս կամ այն օրհնանքն ու անեծքը: Այնպես, ինչպես հմայողն իր նպատակի կենսագործումն ակնկալում է հմայական արարողությունից մակաբերվող գերբնական զորությունից, նույնպես և անիծողն ու օրհնողն իրենց նպատակի իրագործման հույսը դնում են վկայակոչված անեծքների և օրհնանքների ներգործման գերբնական-հմայական ուժի վրա:

Այսպես. երբ մեկը ամբողջ ամսվա ընթացքում դրամով ապահովված լինելու նպատակով նորալուսինը տեսնելուն պես դրամ է ցույց տալիս լուսնին, ապա հմայական այդ արարողությունից նա ակնկալում է իր ցանկության գերբնական իրականացումը: Սա ձևաբանական կառուցվածքով ու ըմբռնմամբ ճիշտ նույնն է, ինչ դիցուք, այն, երբ Հին Արևելքի միապետներից մեկն իր արձանագրությունն ու հիշատակը անձեռնմխելի ու հավերժ պահելու, կամ, ասենք, միջնադարյան հայ եկեղեցու նվիրատուն իր նվիրատվությունները կամ դրանց դիմաց խոստացված պատարագի կատարումը ապահով պահելու նպատակով վկայակոչում է անեծքներ ու օրհնանքներ՝ դրանց գերբնական զորությունից ակնկալելով իր ցանկության իրականացումը:

Այսպիսի նույնությունները տանում են նախնական հմայությունների և որոշակի պայմանով անեծք-օրհնանքների սեմատիկ-ձևաբանական նույնացման: Պարզագույն կամ նախնական հմայությունները ձևաբանորեն բաղկացած են պայման-իրադրություններից կամ որոշակի նպատակից և հմայական արարողություններից. ճիշտ նույն կերպ էլ որոշակի պայմանով անեծք-օրհնանքները կառուցվածքով բաղադրվում են պայման-նպատակից և անեծք-օրհնանքներից: Այսինքն՝ երկու դեպքում էլ կառուցվածքների առաջին անդամները՝ պայման-նպատակներն իրենց բնույթով նույնանում են միմյանց, մինչդեռ երկրորդ անդամները՝ հմայական արարողությունները և անեծք-օրհնանքները սոսկ համընկնում են իրար: Ուրիշ կերպ ասած, երկրորդ անդամները ձևով համապատասխանելով իրար, բովանդակությամբ ու բնույթով տարբերվում են միմյանցից, որը և հենց կազմում է հմայության այդ երկու բնագավառների (գործողության և խոսքի հմայություն) տարբերակիչ գծերից մեկը:

Ո՞րն է այդ տարբերությունը. ամենից առաջ այն, որ մեկը՝ հմայական արարողությունը, գործողություն է, իսկ մյուսը՝ անեծք-օրհնանքները, սոսկ խոսք են: Առաջին դեպքում կանխադրված ցանկությունը կամենում են իրականացնել սիմվոլային հմայա-

կան արարողության միջոցով, մինչդեռ երկրորդ դեպքում՝ հմայական խոսքի, բանաձևի միջոցով։

Նախորդ քննությունների ժամանակ բազմաթիվ ժողովրդական զրույցների օրինակներով տեսանք, որ ժողովուրդը հավատացել է անեծք-օրհնանքների կատարմանը, նրա պարտադիր իրագործմանը։ Եթե անեծքն ու օրհնանքը ժողովրդի հայացքով աներկբայորեն կատարվել են, այսինքն՝ վերածվել են գործողության, ուրեմն, առանձնապես տարբերություն չի դրվել պարտադիր իրականացող հմայական պարզ խոսքերի և հմայական արարողությունների միջև. ուստի և հմայական խոսքն ու արարքը հավասարազոր են գիտակցվել։

Նախնական հմայություններն իրենց բնույթով ստորաբաժանվում են երկու խմբի. ա) դրական հմայության և բ) բացասական-արգելական հմայության կամ տաբուի։

Որոշակի պայմանով անեծք-օրհնանքները ոչ միայն իրենց կառուցվածքով են նույնանում նախնական երկանդամ հմայություններին, այլ, ինչպես արդեն ցույց ենք տվել (տե՛ս պրֆ. 9), նաև՝ բնույթով։ Պայմանով անեծք-օրհնանքներում դրական պայմանը («որք յուժար կամաւք կատարեն զխնդիրս իմ») միշտ ենթադրում է օրհնանք բարեմաղթություն («աւրհնին յԱստուծոյ»), իսկ բացասական պայմանը («Թէ ոք խափանել ջանայ»)՝ անեծք («նզովս առցէ յԱստուծոյ և յամենայն սրբոց»)։ Ուրիշ կերպ ասած՝ հմայական պարզ խոսքերի երկանդամները բնույթով հավասարակշռում են միմյանց, ճիշտ այնպես, ինչպես նախնական դրական հմայություններում դրական նպատակը (որպեսզի հորթի գլուխն ամուր լինի)՝ հմայական արարողությանը (հորթի գլխին աղաքար են քսում), կամ տաբուներում արգելական նպատակը (որպեսզի հագուստի տերը չմեռնի)՝ արարողության արգելքին (նրա հագուստը շրջված չեն ծալում)։

Ուրեմն, հմայության հիշյալ երկու տեսակի (խոսքի և գործողության) դեպքում էլ երկանդամների միջև կա համապատասխանություն կամ համանմանություն։ Հիշյալ նմանությամբ հանդերձ, պայմանով անեծք-օրհնանքները պարզագույն հմայություններից, սակայն, տարբերվում են ոճաբանական մի կարևոր առանձնահատկությամբ։ Նախնական դրական և բացասական հմայություններում ընտրիր հմայության նպատակն ու արարողությունը միմյանց հաջորդում են ուղղակի կամ հաստատուն հարաբերությամբ. մի որոշակի նպատակով (երկար մազ ունենալու համար) կատա-

րում են որոշակի հաստատուն գործողություն (բաղնիքում երկար մազ ունեցողի գլուխը լվացած ջրից իրենց գլուխն են լվանում) կամ որոշակի երևույթ կանխելու համար (գորտնուկ չհանելու նպատակով) հրաժարվում, խուսափում են որոշակի գործողության կատարելուց (գորտերին քար չեն գցում): Մինչդեռ պայմանով անեծք-օրհնանքների երկանդամների միջև հիշյալ որոշակի ու հաստատուն հարաբերությունը բացակայում է: Ինչպես ցույց է տալիս անվանումը (պայմանով անեծք-օրհնանք) նպատակի և անեծք-օրհնանքի միջև եղած հարաբերությունը պայմանական է: Մի նպատակ, դիցուք, Աշուրնասիրպալ թագավորի կառուցած պալատն ու հուշասյունը նորոգ ու կանգուն պահելը արտահայտվում է պայմանական ձևով («ով որ այս կոթողի խոսքերին համապատասխան կգործի, չի փոխի իմ արձանագրության բառերը»), որի իրագործման դեպքում վկայակոչվում է բարեմաղթությունը («Թող Աշուր ու Էնլիլ մեծ աստվածները... մեծացնեն նրա իշխանությունը բոլոր երկրներում...»): Այդպիսի պայմանական հարաբերությամբ են միմյանց կապված նաև չար նպատակի կանխումն ու անեծքը՝ պայմանով անեծքներում («ով զայս հայրենիքս հանցէ յեկեղեցւոյս՝ ԳԾԺԸ հայրապետացն նզոված է»): Ուրիշ կարգի հարաբերություն չէր էլ կարելի պատկերացնել անեծք-օրհնանքների և այն պայման-նպատակների միջև, որոնց կատարման պայմանով են միայն վկայակոչվել դրանք:

Պարզագույն հմայությունների և պայմանով անեծք-օրհնանքների ոճաբանական այս տարբերությունը, սակայն, սոսկ արտաքին ձևական նշանակություն չունի: Եթե անգամ պայմանով անեծքների բանաձևերը շրջելով փոխակերպենք տաբուներին հիշեցնող ժխտական ձևերի, շարադասական ինչ կարգով էլ այդ անելու լինենք, միևնույն է, ժխտական ձևերի տակ շրջված բանաձևը կպահի դարձյալ իր պայմանական բնույթը[81]: Հետևաբար, պայմանով անեծքների ներքին յուրահատկությունը հենց նրանց պայմանական բնույթի մեջ է, որով և դրանք տարբերվում են սահմանական ժխտական ձևերով տաբուներից:

---

81 Հմմտ. «Նա՝ ով ոչնչացնի իմ կոթողն ու անունը, թող Աշուրը՝ իմ տերը, կործանի նրա կարգը» բանաձևը վերածված հետևյալ պայմանական-ժխտական ձևափոխումների հետ. «Որպեսզի Աշուրը՝ իմ տերը, չկործանի նրա կարգը, թող նա իմ կոթողն ու անունը չոչնչացնի» կամ՝ «Աշուրը՝ իմ տերը չի կործանի նրա կարգը, եթե նա իմ կոթողն ու անունը չոչնչացնի»: Այդպես և բոլոր պայմանով անեծքների ժխտական ձևերում:

Նույնն ենք տեսնում նաև պայմանով օրհնանք-մաղթանքների բանաձևերում: Այստեղ ևս, ինչ ձևով էլ փոխակերպելու լինենք պայմանով օրհնանք-մաղթանքները, միևնույն է, նրանք դարձյալ պահպանելու են իրենց պայմանական նկարագիրը:

Նախնական դրական հմայությունների և պայմանով օրհնանք-մաղթանքների, ինչպես նաև տաբուների և պայմանով անեծքների ոճաբանական հիշյալ տարբերությունը պայմանավորված է նրանց որոշակի կիրառությամբ:

Եթե նախնական հմայություններում (դրական կամ բացասական՝ միևնույն է) որևէ նպատակի իրագործումը կամ կանխում-արգելումը, միշտ էլ ենթադրում է հմայական որոշակի ավանդականորեն պարտադիր գործողության կատարում կամ արգելում, ապա պայմանով անեծք-օրհնանքներում հիշյալ ավանդական որոշակիությունը բացակայում է: Վերջիններիս մեջ և՛ պայման-նպատակն է հարափոփոխ, և՛ անեծք-օրհնանքը. այլ կերպ ասած, միևնույն անեծքը կամ օրհնանքը կարող է վկայակոչվել տարբեր նպատակներով, ինչպես որ միևնույն նպատակով կարող են կիրառվել տարբեր անեծք-օրհնանքներ:

Դրական հմայություններում դրական նպատակի և դրական գործողության, ինչպես նաև տաբուներում արգելվող երևույթի և արգելվող գործողության միջև առկա այդ ավանդական որոշակիությունն է պատճառն, ահա, որ երկանդամի հարաբերությունը մի դեպքում դրսևորվում է դրական-հաստատական, իսկ մյուս դեպքում ժխտական հաստատուն ձևերով, առանց որևէ պայմանի, քանզի այն անհերքելի իրողություն է, քարացած ավանդական օրենք: Մինչդեռ պայմանով անեծք օրհնանքներում յուրաքանչյուր դեպքում և՛ պայման-նպատակը կարող է փոխվել, և՛ անեծք-օրհնանքը. նրանց մեջ առկա հարաբերությունը պայմանական է, փոփոխական: Այդ է պատճառը, որ ոճաբանական ինչ փոփոխության էլ ենթարկելու լինենք պայմանով անեծք-օրհնանքները, դրանք միշտ էլ իրենց բուն պայմանական նկարագիրը չեն կորցնում:

Այս էական տարբերությամբ հանդերձ, պայմանով անեծք-օրհնանքները, սակայն յուրաքանչյուր նպատակային կիրառության դեպքում ունեն հարաբերական որոշակիություն: Դրանք միշտ, տվյալ պայման-նպատակի առնչությամբ ունեն հմայական որոշակի ազդեցություն և այդ որոշակի զորության շնորհիվ էլ կանխում կամ իրագործում են տվյալ նպատակը:

Պայմանով անեծքն, օրինակ, կիրառության յուրաքանչյուր

դեպքում ինքնին տաբուացիա է, հմայական արգելակում, սահմանափակում։ Սպառնացող անեծքը կանխում, արգելում է տվյալ պայմանի խախտումը։ Պայմանով նպատակի և անեծքի փոխհարաբերությունը պատկերացնելու համար բավական է այսպիսի մի այլաբանություն։ Եթե պայմանը պատկերացնենք մի սահման, նպատակը՝ սահմանը խախտող մի անձնավորություն, իսկ անեծքը՝ սահմանի վրա աչալուրջ կանգնած, հզոր զենքով զինված մի սահմանապահ, ապա կտեսնենք, որ սահմանը խախտողի ամեն մի քայլ ենթակա է սահմանապահի հսկողությանը, իսկ սահմանը փոքր ինչ խախտելու դեպքում՝ խախտողը անհապաղ կենթարկվի սահմանապահի ահարկու զենքի մահաբեր կրակին։ Այսինքն, անեծք-սահմանապահը միշտ որոշակիորեն սահմանափակած ունի սահմանը խախտել կամեցող նպատակի գործունեությունը, որն ամեն պահ ենթակա է չարաչար պատժի։

Անեծքի հենց նման սահմանափակող, արգելակող դերը վերածվում է հմայական արգելքի կամ տաբուի։ Ուրեմն, անկախ սովորական տաբուների և պայմանով անեծքների ոճաբանական տարբերությունից, վերջիններս ըստ էության տաբուներ են, միայն պայմանական բնույթի։ Եթե սովորական տաբուներում երկանդամի միջև ոչ մի լարվածություն չկա դրանց քարացած, ավանդական բնույթի պատճառով, ապա պայմանով անեծքներում, ընդհակառակը, պայմանի և անեծքի միջև առկա է մի ներքին ծայրահեղ լարվածություն։ Յուրաքանչյուր դեպքում անեծքի պայմանը կարող է խախտվել անցանկալի նպատակի կողմից, և այն ժամանակ կիրագործվի անեծքը, այսինքն՝ վրա կհասնի սպառնացող պատիժը։ Բայց քանի որ պայմանի գլխին մեկընդմիշտ ծանրացած է անեծքն իր վիթխարի հմայական զորությամբ, որից սոսկում են մարդիկ, ուստի և պայմանը երբեք չի խախտվում և չար նպատակը չի իրագործվում։ Ուրեմն, նպատակը միշտ ձգտում է խախտել պայմանը, իսկ սպառնացող անեծքը միշտ կանխում, չեզոքացնում է այդ վտանգն իր ահարկու պատժով։ Լարվածությունն առաջանում է այս ներքին ձգտման ու չեզոքացման հիման վրա. ուրիշ խոսքով, երկանդամի իմաստաբանական հավասարակշռությունը պահպանվում է այս ներքին հակադիր ձգտումների հետևանքով։

Այստեղից էլ պարզ է դառնում անեծքի պահպանական դերն ու նշանակությունը, որ նա ունի պայմանների հետ ունեցած կապակցությունների մեջ։

30. Պայմանով անեծքների տրամաբանական այս միևնույն

կառուցվածքն է առկա իրավաբանական բոլոր օրենքներում: Դրանք կառուցված են հենց տրամաբանական և նպատակային միևնույն սկզբունքի վրա: Բոլոր իրավաբանական կանոններն ու օրենքները հնուց մինչև օրս, անկախ իրենց հոգևոր կամ աշխարհիկ բնույթից, եղել են օրենսդիր մարմնի կամքի արտահայտություն: Դրանք որոշակի հարաբերությունների սահմանումներ են, որոնք նպատակ ունեն կարգավորելու կյանքի տվյալ բնագավառը:

Օրենսդիր մարմնի կամքի այդ արտահայտությունները տվյալ հասարակության պարտադրելու և պահպանելու նպատակով կիրառվում են հարկադրանքի իրավաբանական ներգործման միջոցներ, այսպես կոչված սանկցիաներ, որոնք այլ բան չեն, քան օրենքն ու կանոնը խախտողների դեմ ուղղված պատժի սպառնալիքներ: *Սանկցիան յուրաքանչյուր օրենքի անհրաժեշտ տարրն է կազմում, օրենք, որը չի կարող չհիմնվել պետական հարկադրանքի վրա*[82]:

Ահա, օրենքները, իրենց հարկադրանքի սանկցիաների բնույթով ու կառուցվածքով, նույնանում են պայմանով անեծքներին: Անեծքների պայմաններն այլ բան չեն, քան անիծողի կամքի արտահայտություն, նրա կողմից սահմանված մի կարգ, որն համապատասխանում է օրենքին կամ կանոնին: Իսկ անիծողի կամքը, այսինքն նրա սահմանած կարգը պահպանելու համար վկայակոչված պատժի սպառնալիքը՝ անեծքը, բնույթով նույնանում է իրավաբանական սանկցիային: Այս երկուսի տարբերությունն այն է միայն, որ եթե իրավաբանական կանոններում և օրենքներում օրենսդիր մարմնի կամքը խախտողների դեմ առաջադրվում են մարմնական կամ նյութական պատժի սպառնալիքներ, ապա պայմանով անեծքներում՝ այդ միևնույն նպատակով առաջադրվում են կրոնա-բարոյական պատժի ձևեր, որոնք կրոնա-հմայական հավատալիքների համատարած տիրապետության պայմաններում, իրենց ներգործման զորությամբ պակաս չէին մարմնական պատժի սպառնալիքներից:

Այս նույնության պատճառով էլ, ահա, հնում, հատկապես հոգևոր հաստատությունների (տաճարներ, վանքեր, եկեղեցիներ) և նրանց տիրույթների, ծիսական ու պաշտամունքային առարկաների հետ առնչվող բոլոր կարգի գրություններում ու գործարքներում,

---

82 *Брокгауз Ф., Ефрон И.*, Энциклопедич. словарь, том XII, СПб., 1894, էջ 177, Большая Советская Энциклопедия, том 38, էջ 64:

պայմանով անեծք-օրհնանքները պարտադիր կարգով կիրառվել են իբրև իրավաբանական օրենքի ու սանկցիայի ձևեր:

Հարկ է նկատի ունենալ, որ իրավաբանական կիրառական արժեքով անեծքն ու օրհնանքը բնավ էլ չեն համասարակշռում միմյանց: Անեծքն իր չար ցանկությամբ ու չարաբանությամբ առավել ազդեցիկ ու զորեղ է ներգործում մարդկանց, քան օրհնանքն ու բարեմաղթությունը: Առաջինը կապվում է գերբնական չար ուժերի, հետևաբար և չար հմայության հետ, որից սովորաբար մարդիկ ավելի շատ են երկյուղում, քան բարի ոգիներից, որոնց հետ է աղերսվում օրհնանք-բարեմաղթությունը: Հետևաբար, անեծքի և օրհնանքի գործնական կիրառության դեպքում ևս երևան է գալիս ցանկության խոսքի այդ երկու տեսակների հոգեբանական ներգործման զորության տարբերությունը: Այնտեղ, ուր հարկ է լինում խիստ ու կտրուկ ներգործման միջոցների դիմել, իսկույն վկայակոչվում են չար ու վնասակար անեծքները, իբրև բարոյական (մեր ըմբռնմամբ, իհարկե) պատժի ձևեր: Իսկ օրհնանք-բարեմաղթությունները, ընդհակառակը, վկայակոչվում են միայն իբրև իրավարարի կամքի իրագործմանը նպաստող բարոյական ներգործման օժանդակ միջոցներ: Եվ ինչպես արդի իրավաբանական ըմբռնումներում պատիժն ավելի խիստ ու ներգործուն ուժ ունի և ժամանակի մեջ առավել տևական է, քան խրախուսանքն ու հորդորը, ճիշտ այդպես էլ անեծքն ու օրհնանքն են հարաբերվում միմյանց: Անեծքն առավել մեծ ուժով ու տևական է ներգործում մարդկանց վրա, քան օրհնանք-բարեմաղթությունը: Անեծքն ինքը էությամբ այլ բան չէ, քան խիստ ու դաժան պատժի ցանկություն, քան սոսկ խոսքով արտահայտած պատիժ, իսկ հների հայացքով արտաբերված խոսքի և իրական եղելության միջև ոչ մի տարբերություն չկար. արտաբերված խոսքը հմայական հավատալիքներով նախապաշարված մարդու համար նույն ինքը եղելությունն էր, արդեն կատարված գործողությունը: Եվ, ահա, թե ինչու էր երկյուղն այնքան մեծ անեծքի նկատմամբ: Մինչդեռ մաղթանքը, թեպետ ևս կատարված իրողություն գիտակցվող, լավ ու հաճելի եղելություն էր, որի առկայությունը լավ էր, բացակայությունն՝ առանձնապես եղած վիճակի կորուստ չէր նշանակում: Իսկ անեծքի իրականացումը նշանակում էր առկա սովորական վիճակի փոփոխումը դեպի վատթարագույնը, ասենք՝ կյանքից դեպի մահ, կամ մարմնական ու հոգևոր զարհուրելի տառապանքներ, որ ինքնին չէր կարող երկյուղ ու սարսուռ առաջ չբերել:

Այս հոգեբանական-տրամաբանական և հավատալիքային հիմունքներով էլ անեծքն ու օրհնանքը նույնանում են պատժի ու խրախուսանքի մերօրյա իրավաբանական ըմբռնումներին և հենց այդ նույն իմաստներով էլ կիրառվել են հին ու միջին դարերում և, հավանաբար, դրանից էլ դեռ շատ առաջ՝ մարդկային-հասարակական իրավական փոխհարաբերությունների մեջ, որոնց մի մասը տեսանք վերևում:

ԵՐԿՐՈՐԴ ԳԼՈՒԽ

ԱՆԵԾՔՆԵՐԻ ԵՎ ՕՐՀՆԱՆՔՆԵՐԻ ՏԻՊԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

1. ՀԱՅԿԱԿԱՆ ԱՆԵԾՔ-ՕՐՀՆԱՆՔՆԵՐԻ ԲՆՈՒՅԹՆ ՈՒ ՈՃԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐԸ

1. Անեծքներն ու օրհնանքներն **ուղղակի** *խոսքեր են ուղղված մեկնումեկին. «Կպրե կարաս պատիս», «Ծամդի կտրեմ՝ ծոցդի դնեմ» (ԷԱԺԶ 308), «Բերնիցդ դուս գա՝ ծոցդ թափի» (ՀԺՀ VI, 139), «Բարով ուրախութենով սրտիդ մուրազին խասնիս» (ԱՀ XIX, 114), «Օջախդ հաստատ մնա» (ԷԱԺԶ 333), «Խաչը քեզ ու տանդ բարեխոս ըլնի» (ԷԱԺԶ 130) և այլն։*

Դրանք, հետևաբար, բացի **խոսողից** *(անիծող և օրհնող) ենթադրում են նաև* **խոսակից** *(անիծվող և օրհնվող)։ Այս յուրահատկության պատճառով էլ անեծք-օրհնանքները հանդես են գալիս մեծ մասամբ իբրև խոսողի՝ խոսակցին ուղղած կենդանի խոսքեր։ Սակայն, դրանք ոչ թե երկխոսություններ են, ուր պարտադիր է նաև խոսակցի ներկայությունն ու խոսքը, այլ ճնշող մեծամասնությամբ՝ միախոսություններ, սոսկ խոսողի կողմից արտաբերվող։ Դրանց մեջ խոսողից՝ որևէ ցանկություն է ուղղվում խոսակցին։ Որքան էլ այդ ցանկությունը կախված է խոսողի կամքից, այնուամենայնիվ այն արդյունք է արտաքին որոշակի դրդապատճառների։*

Անիծվողը կամ օրհնվողը, մինչև անեծքի կամ օրհնանքի ենթարկվելը, դիմացինի նկատմամբ կատարում է որևէ վատ կամ լավ արարք։ Անիծող-օրհնողը վերջինիս պատասխանում է ցանկության չար կամ բարի խոսքերով։ Նախորդ վատ կամ լավ արարքի, վարքագծի հեղինակը այժմ դառնում է անեծք-օրհնանքին ենթակա առարկա։

Խոսող՝ կամ անիծող-օրհնող անձի ցանկության ուժը կախված է խոսակցի՝ անիծվող-օրհնվողի, իր նկատմամբ մինչ այդ կատարած արարքի բնույթից։ Եթե խոսակցի կատարած քայլը եղել է վատ ու վնասակար, ապա խոսողի հոգեբանական արձագանքը դառնում է այդ արտաքին ազդակին համապատասխան, և դրա արդյունք ցանկությունն էլ լինում է չար ու վնասակար, որի բանավոր դրսևորումն է **անեծքը**։ Եվ ընդհակառակը, երբ խոսակցի արարքը լավ է և օգտակար, խոսողի ցանկությունն էլ համապատասխանաբար լինում է բարի և բանավոր արտահայտվում **օրհնանք-բարեմաղթության** տեսքով։ Որքան բարձր է անիծող-օրհնողի հոգեկան գրգռվածության աստիճանը, նույնքան չար կամ բարի են նրա տված անեծքներն ու օրհնանքները։ Այնպես որ խոսողն ու խոսակիցը, արարքն ու դրա դիմաց հանդիպակացվող ցանկությունը, հոգեկան գրգիռն ու ցանկության խոսքերը, ինչ-որ չափով զուգակշռում են միմյանց, և անեծք-օրհնանքները դառնում են առարկայական իրականությամբ պատճառաբանված անիծող-օրհնողի անձնական-հոգեկան ապրումների արտահայտություններ։

Անեծք-օրհնանքները, որքան էլ իրականության մեջ առարկայական հիմքեր ունեցող երևույթներ են, այդուամենայնիվ մնում են հոգեբանական իրակություններ։ Դրանք արդյունք են արտաքին ազդակներից հարուցվող հոգեկան գրգռի։ Այդ գրգիռն այնքան բուռն է և զորեղ, որքան ուժեղ են արտաքին առարկայական գրգռումները։ Անեծքը, մասամբ և օրհնանքը, արտաբերվում են միշտ էլ նյարդային-հոգեկան զորեղ հուզումների դեպքում։ Մարդ դիմում է անեծքի այն ժամանակ, երբ որևէ մեկն իր վատ արարքով նրան հասցնում է ծայրահեղ ջղագրգռություն, և նա անելիք չի գտնում, քան իր վրդովմունքն ու զայրույթը արտահայտել անեծքների բուռն տարափով։ Եվ ընդհակառակը, մեկի չափազանց լավ ու օգտակար արարքը կամ վարքագիծն առաջ է բերում մարդու մեջ բուռն ցնծություն, և նա իր ոգևորությունն ու ուրախությունն արտահայտում է լավ արարքի հեղինակին ուղղված ջերմ, բարեբանական օրհնանք-մաղթանքներով[1]։ Երկու դեպքում էլ առկա են

---

[1] Այդ պատճառով էլ միմյանց անիծելիս կամ օրհնելիս, հաճախ, անիծողն ու օրհնողը չեն բավարարվում անեծքի կամ օրհնանքի սոսկ մեկ բանաձևով։ Նրանք իրենց գրգռված հոգեվիճակները հանդարտեցնում են անեծք-օրհնանքների բուռն տարափով, իմաստով կամ ձևով որևէ կերպ միմյանց աղերսվող անեծք-օրհնանքների ամբողջական շարքեր արտաբերելով։

հոգեկան աֆեկտիվ գրգիռները և, բնականաբար, անեծք-օրհնանքները դառնում են նման հոգեվիճակների արտահայտություններ։ Այստեղից էլ՝ նրանց էմոցիոնալ-զգայական նկարագիրը։

Անեծք-օրհնանքները, թեպետ դարերի ընթացքում ավանդական բանաձևերի տեսքով փոխանցվում են սերնդից-սերունդ և յուրաքանչյուր սերնդի բերանին որոշ փոփոխություններով հիշողությամբ ընկալվում են ու վերարտադրվում, այդուամենայնիվ, դրանք օգտագործման յուրաքանչյուր դեպքում վերարտադրվում են կենդանի հույզով ու անկեղծ ներշնչանքով։

Անեծք-օրհնանքների քարացած ավանդական նկարագիրը ոչնչով չի խանգարում մարդու լարված հոգեվիճակները ճշմարիտ ու անկեղծ արտահայտելու նրանց ներքին հնարավորությանը։ Հոգեկան համապատասխան պոռթկումների յուրաքանչյուր դեպք իր մարմնավորումն է գտնում անեծք-օրհնանքների համապատասխան բանաձևերում, և վերջիններս՝ անկախ իրենց քարացած ավանդական ձևերից, կենդանանում են, միաձուլվում մարդու հոգեկան ելևէջներին և մի ներքին ստեղծագործական խմորումով վերածվում անձնական ջղագրգիռ ապրումների թարմ ու անկեղծ արտահայտությունների[2]։ Այս տեսակետից էլ անեծք-օրհնանքները սերտ մոտենում են առավել քնարական բանահյուսությանը, իրենց մեջ ունենալով նաև դրամատիզմի շեշտված տարրեր։

2. Անեծքները[3] լինելով աֆեկտիվ հոգեկան գրգիռների բանավոր արտահայտություններ, արդյունք են առարկայական որոշակի դրդապատճառների։ Միշտ էլ անիծվողի կոնկրետ արարմունքը, խոսքը կամ վարքագիծն է անիծողի մոտ առաջ բերում անեծ-

---

2 Դրանք մոտենում են լեզվական սովորական արտահայտչամիջոցներին, միայն այն տարբերությամբ, որ կիրառվում են ոչ միշտ ու ամենուրեք, այլ առանձնահատուկ հոգեվիճակներ արտահայտելու համար և հատուկ նպատակներով. այլ կերպ ասած, ունեն խիստ սահմանափակ և որոշակի նպատակային կիրառություններ։

3 Անեծքն հայերենում ունի մի քանի հոմանիշներ. եկեղեցական գրական-լեզվում նաև՝ նզովք, բանադրանք, երբեմն հունարեն՝ անաթեմա: Ժողովրդական խոսակցականում, երբեմն և առանձին բարբառներում նաև՝ կռածմունք, պղեծք կամ պղիծանք (տե՛ս Հր. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հտ. I, էջ 193. Ստ. Մալխասյանց, Հայերեն բացատրական բառարան, հտ. II և IV)։ Անեծք բառն Աճառյանը ծագած է համարում հնդեվրոպական նախալեզվի neid— նախատել, հանդիմանել արմատից։ Ստուգաբանությունը որքան էլ ճշմարտամոտ, այնուամենայնիվ չի համոզում, քանզի բառի այլ լեզուների ժառանգներն իրենց թե արտաքին հնչյունական կազմով և թե նշանակությամբ հայերենից զգալի տարբերվում են։

քով չարաբանելու ցանկությունը։ Նորմալ հոգեվիճակում գտնվող մարդը երբեք, առանց որոշակի պատճառի, չի անիծում։

Այդ պատճառով էլ յուրաքանչյուր անեծք, իր կոնկրետ իմաստով, պայմանավորված է անիծվողի տվյալ պահի որոշակի վարքագծով, խոսքով կամ արարքով։ Այսպես, օրինակ, երբ մեկը մյուսին չի լսում, նրան տալիս են հետևյալ անեծքը. «Օցը ընգաճիտ տա» (ԳԱԹ, Քամ. II—89), այսինքն՝ ականջդ խայթի։ Մեկ ուրիշը, երբ գոռոզամտում ու կոտրատվում է, ասում են. «Քիթդ վեր ընգնի» (ԳԱԹ, Քամ. II—89), այսինքն թե՝ հպարտ կեցվածքդ խոնարհվի։ Կամ, երբ մեկը հակաճառում ու դիմադարձ է կատարում, անիծում են, ասելով. «Պերանդ բանվի» (ԱՀ IX, 196) և այլն։

Այս և նման կարգի անեծքներում, ուրեմն, որոշակի տարկայական հասկացություններով չարաբանության է արժանանում դիմացինի հենց այն հատկանիշը, որով նա վշտացրել կամ վիրավորել է անիծողին։ Կոնկրետացման այս ձգտումը առավել ցայտուն ու որոշակի է դրսևորվում այն անեծքներում, ուր անիծվողի խոսքին, արարքին կամ ցանկությանը անիծողը պատասխանում է նույն հասկացություններով։

Դիցուք, մեկը հոգի է հայհոյում, իսկ քանի որ ժողովրդի մարդու հայացքով դա վիրավորանք էր գիտակցվում, ուստի հայհոյողին ցանկանում են հոգու կորուստ՝ «Հոգիդ դժողքի փայ դառնա» (իմ հավաք.). մյուսը, ասենք, ուտելու համար է աղմկում կամ շատ է ուտում, անիծում են՝ ուտելուց մեռնել. «Ուտես ու փորեդ բլքի (երանի թե) չելնի, իշալլահ» (իմ հավաք.). կամ դիցուք, երեխան քնել է ուզում և դրա համար լաց է լինում ու բողոքում, արժանանում է հաճախ մոր անեծքին. «Քնես ու չելնես, բլքի» (իմ հավաք.) և այլն։

Այսպիսի տարկայական կոնկրետացումները առավել ուղղակի են դրսևորվում այն դեպքերում, երբ անեծքի շարժառիթ են դառնում անիծվողի սոսկ խոսքերը։ Անիծողն անմիջապես կառչում է դիմացինի ասած խոսքից և վերջինիս համանմանությամբ կազմում իր անեծքը և ուղղում դիմացինին։ Նման անեծքները թողնում են երբեմն բառախաղերի կամ կրկնաբանությունների տպավորություն։

Այսպես. երբ մեկը, դիցուք, որդին՝ մորը «մա՛» կամ «մա՛յր» է ասում և շատ կրկնելուց գրգռում է մորը, վերջինս զայրացած անիծում է. «Մարմրիս»։ Երբ նույն կերպ «քույր» կամ «հայր» են ասում, անիծում են՝ «Քրքրիս» կամ «Հարհրիս»։

Այդպես և «ախպար» (եղբայր), «կնիկ», «ամա՞ն» (ձայնարկություն) «հաց», «ջուր» բառերի դիմաց համապատասխանաբար ասում են. «Ախպար ցավերու կաս», «Կնկոխս, թեպեդ (գլուխ) ի վար տնկվիս», «Աման ցավի կաս», «Հաց ցավի գաս», «Ջուր ցավի գաս» (տե՛ս ԱՀ IX 194—196):

Կամ երբ մեկի արտասանած «մեծ» ածականով նախադասությունը շատ է գրգռում դիմացինին, վերջինս դարձյալ ի պատասխան դրա, «մեծ» բառով անեծք է կազմում և ուղղում իրեն զայրացնողին. «Մենծ քար իյնա թեբեիդ» (ԱՀ IX 196), «Մեծ ցավի ռաստ գաս» կամ «Մեծ գրողի ռաստ գաս» (իմ հավաք.) և այլն:

Այս երեք և, մասնավորապես, վերջին խմբի անեծքները վերածվում են դիմացինի գործողության, վարքագծի և, մանավանդ, խոսքի ուղղակի և ակտիվ պատասխանների: Այս դեպքերում է, որ անեծքներն իրենց մեջ ներքուստ պարունակում են երկխոսությունների տարրեր[4]:

Անեծքների դիմացինին ուղղված ակտիվ պատասխաններ դառնալու այս միտումն է պատճառն, անշուշտ, որ երբեմն դրանք իրենց մեջ այնքան որոշակի են արտացոլում անիծվողի անձն ու ձգտումները, որ առանց բանահավաքների օժանդակ վկայությունների էլ, սոսկ իմաստից, կարելի է ենթադրել, թե տվյալ անեծքն ի՛նչ առիթով և ո՛ւմ է ասվել:

Այսպես. 1. «Օխտը գրողի գաս» (ԺԱԲ 122), 2. «Դեղին դանակ ուտես» (ԶԺԲ 66), 3. «Ղամեն (դաշույն) սրտումդ խրվի» (ՀԺՀ VI 141), 4. «Թուր (վերք) էղնի քու լեզվի ծեր, պապանձվի բերանդի» (ԷԱԺԶ 313), 5. «Սատկիս, ջուր տվող մի չելլի» («Բազմավեպ», 1902, 479), 6. «Զյանտու (ձայն) փյուրիտ (փոր) քեշվը» (ԱՈՒ 124), 7. «Աղ ու հացս աճկերդ բռնի, ծնկներդ ծալի» (ԶԺԲ 65) և այլն վկայում են այն, որ 1—4 անեծքներն ասվել են, հավանաբար, ի պատասխան անիծվողների «օխտ», «դեղին», «ղամա», «թութ» բառերով կազմված վրդովմունք հարուցող խոսքերի: Իսկ 5—7 անեծքները՝ պատասխան են ա՛յն որոշակի իրադրու-

4 Ժողովրդի բանավոր կենցաղում հանդիպում են երբեմն երկխոսական անեծքներ. դրանք հատկապես երևան են գալիս փոխադարձ լեզվակռիվների ժամանակ, երբ մեկը անիծում է մյուսին. վերջինս նույն անեծքը դարձնում է նրան, իր կողմից մի բան էլ վրան ավելացնելով: Օրինակ, մեկն ասում է. «Գետինը մտնես», մյուսն անմիջապես պատասխանում է. «Գետինն էլ մտնես ու սև հողն էլ գլխիդ քաշես». կամ. «Ճակիս, ծակտիս, դեղին ջրերն էլնին վրայեդ էրթան», որին պատասխանում են՝ «Ճակիս լե, ծակտիս լե, շան պես լե սատկիս, որ էդմալ խոսքեր չխոսաս», և այլն: Վերոհիշյալ անեծքների տեսակներն, ահա, մասամբ մտնում են այս երկխոսական անեծքների տիպին:

թյունների, երբ դիմացինը (գուցե հարազատներից մեկնումեկը) հրաժարվել է ջուր տալ անիծողին (5), երբ դիմացինը (գուցե դարձյալ հարազատներից) լալով ճչացել կամ բարձր ձայնով գոռացել է անիծողի վրա (6), երբ մեկը կա՛մ անպատվել է անիծողի աղ ու հացը, կա՛մ պարզապես ամարդություն արել (7)։

Անեծքների՝ որոշակի իրադրությունների անմիջական դրդումներից ծագած լինելն են դարձյալ վկայում այն ստեղծագործությունները, որոնց մեջ արդեն բացահայտ ու աներկբայորեն երևան են գալիս անեծքի առարկա դարձած իրավիճակներն ու անձինք։

Այսպես. «Ժուռումոռ մեռնիս» (ԷԱԺՁ 313), «Խոկ (խակ) մեռնիս, խոկ սատկիս» (ԲԳ 331), «Չի հասնըս ու չի պըտղըս» (ԱՈՒ 126) անեծքներից անմիջապես երևում է, որ դրանք ուղղված են եղել անչափահասներին։ «Տըլոծ (տված) կըթիս (կաթ) հարամ նը քիղ» (ԱՈՒ 128) անեծքից պարզ նկատվում է, որ մայրն է անիծում սեփական զավակին. «Լեշըդ գա» (ԲԳ 73), «Ծուռիտ (ոտ) կըտռը (կոտրվել), չը կանըս իգո» (գալ) (ԱՈՒ 127), «Էրթալդ էղնի, գալդ չըղնի» (իմ հավաք.) անեծքներն ըստ իմաստի ասվել են տանից հեռացողներին կամ ճանապարհորդներին. «Փորըդ լիքը տենուս՝ կողքըդ դարդակ» անեծքն այլ մարդու չի ուղղված, քան դեռատի կնոջը և այլն։

Հարկավ, ոչ բոլոր անեծքներն են իրենց իմաստի մեջ նման պարզորոշությամբ կամ թեկուզև գուշակելի ակնարկներով մատնանշում իրենց կոնկրետ դրդապատճառները։ Ընդհակառակը, դրանք մեծ մասամբ բնույթով այնպիսի չարամաղթություններ են, որ շատ դժվար, հաճախ էլ անհնար է իմաստներից ենթադրել դրանց վկայակոչման որոշակի շարժառիթները։ Այդ հանգամանքը պայմանավորված է մասամբ անեծքների բանաձևային ավանդական բնույթով, մասամբ էլ նրանց էական հատկանիշներով։ Բայց դա չի նշանակում, թե անեծքների մեծամասնությունը ծագմամբ հոգեբանական որոշակի դրդումների արգասիք ու արտահայտություն չէ։

Յուրաքանչյուր անեծք իր ծագումնաբանական հիմքով միշտ էլ խարսխվել է հոգեկան որոշակի ջղագրգիռ ապրումների վրա, դառնալով դրանց բանավոր արտահայտությունը։ Բայց անիծվող անձի ոչ ամեն արարք կարող էր անիծողի ներքնաշխարհում առաջ բերել այնպիսի փոթորկումներ, որոնք իրենց բանավոր արտահայտությունների մեջ կարողանային ներառել նաև անեծքի դրդապատճառի (անիծվողի գործի ու վարքագծի) որոշակի առարկայա-

կան կողմերը: Անիծողի ու անեծքի նպատակը բնավ այդ չէ, այլ միայն անիծվողի ներկա վիճակը մի վատթարագույնով փոխարինելը: Իսկ դա անիծողին մղում էր չարամաղթությամբ ամեն մի վատ բան ցանկանալ դիմացինին, չմտահոգվելով բնավ, թե այդ չարաբանությունն իր մեջ արդյո՞ք արտահայտում է իր հակառակորդի արարքների առարկայական հատկանիշները: Այդ է մի կողմից պատճառը, որ անեծքը շատ բանաձևեր ասվում են ամենատարբեր առիթներով և իմաստներով չեն առնչվում իրենց դրդապատճառների առարկայական կողմերին: Օրինակ, երբ ասվում է, թե «Արևդ մեռնի», «Բոյըդ սև գերեզմանը դնեմ», «Հորդ հոգին շուն դառնա» (իմ հավաք.), «Աստծու հուր կրակին գաս» (ՀԺՀ VI 141), «Մորու թերի (թուփի) տակին շվաք անես» (ԱՀ XI 124) և այլն, ապա բնավ էլ չի հասկացվում, թե նույն և նման անեծքները ո՛ւմ են ուղղված, ի՛նչ առիթներով կամ ի՛նչ իրական դրդումով են ասվել: Դրանք կարող են ուղղվել ամենատարբեր անձանց, ամենատարբեր առիթներով: Այստեղ արդեն, մյուս կողմից, դեր է խաղում նաև անեծքների հին ու ավանդական բնույթը: Լինելով պատրաստի բանաձևեր, անեծքները սերնդից-սերունդ դառնում են մարդկային համապատասխան հոգեվիճակներ արտահայտելու կաղապարներ: Բնականաբար, դրանք իրենց մեջ կարողանում են ներառնել տարբեր դրդումներից հարուցված հոգեկան ջղագրգիռ նապաների ընդհանուր իմաստը և միևնույն կաղապարը կարող է վերածվել տարբեր հոգեվիճակների արտահայտության:

Այսպես, օրինակ. «Կայենի կոտոշ հանիս» (ԷԱԺԶ 313), «Աստծու ղալաքին (ցասում) գաս» (ՀԺՀ VI), «Կետնին տակը անիս» (ԱՀ IX 195), «Ջար սաթի գաս» («Բազմավեպ», 1902, 479), «Գրողը տանի քիզ» (ԲՄԿ 187), «Տունդ շիվան ընկի» («Բազմավեպ», 1902, 479), «Օրերդ մթան անցնես» (ԵԱ 134) և բազմաթիվ նմանները, որոնք գալիս են դարերի խորքից, կարող են ջղագրգռության տարբեր պահերի, տարբեր մարդկանց կողմից ասվել յուրաքանչյուր մեկին՝ ուզած առիթով:

Այնպես որ, բացի որոշակի առիթով ու որոշակի անձանց ուղղված անեծքներից, կան նաև ընդհանուր բնավորությամբ անեծքներ, որոնք կիրառական ոչ մի սահմանափակման չեն ենթարկվում և մեծ մասամբ հին են ու ավանդական:

Անեծքներն, ուրեմն, իրենց դրդապատճառների արտահայտության եղանակով բաժանվում են երկու գլխավոր տեսակի.

1. Երբ անեծք հարուցող պատճառները, անիծող ու անիծվող

768—9

անձինք, ուղղակի կամ անուղղակի ձևով երևան են գալիս անեծքների բանաձևերում.

2. Երբ թե՛ անեծքի դրդապատճառները և թե՛ անիծող ու անիծվող անձինք անեծքներում բնավ հանդես չեն գալիս:

3. Օրհնական բանաձևերը բնույթով բաժանվում են երկու խմբի՝ օրհնանքների և բարեմաղթությունների: Բարեմաղթությունները կամ, ինչպես սովորաբար ընդունված է կոչել՝ մաղթանքները, էությամբ նույնանալով օրհնանքներին, այդուհանդերձ տարբերվում են մի քանի երկրորդական հատկանիշներով:

Առաջին տարբերակիչ գիծն այն է, որ օրհնանքներն ունեն ընդհանուր բարեբանության բնավորություն, և նրանց կիրառությունը ծիսակենցաղային որոշակի միջավայրով չի սահմանափակվում: Ամեն ոք ցանկացած անձնավորությանը կարող է օրհնել, առանց արտաքին պայմանականություններով կաշկանդվելու: Այստեղից էլ բխում է օրհնանքների բովանդակության ընդհանուր իմաստը:

Մինչդեռ մաղթանքները իրենց բնույթով ու բովանդակությամբ խիստ որոշակի են և մեծ մասամբ աղերսվում են ծիսակենցաղային որոշակի սովորույթների, առնչվում են դրանց առիթով և կիրառվում վերջիններիս պահանջները բարեբանական խոսքերով բավարարելու համար: Այս հանգամանքով է պայմանավորված ժողովրդական մաղթանքների շեշտված կիրառական բնույթն ու իմաստների կիրառական որոշակիությունը:

Մաղթանքների այս նպատակային կիրառություններով, հարկավ, պետք է բացատրել նրանց խոսքի ուղղակի ու անմիջական բնույթը: Մինչ օրհնանքներն օժտված են բանաստեղծական խոսքի պատկերավոր արտահայտություններով, մաղթանքները մեծ մասամբ ուղղակի խոսքեր են և ցանկության սովորական արտահայտություններ:

Օրհնանքների ու բարեմաղթությունների նշված տարբերությունները պայմանավորված են նաև նրանց ծագումնաբանությամբ, որ դրսևորված ենք գտնում այդ երկու բառարմատների ստուգաբանական նշանակության և իմաստաբանության զարգացման մեջ:

Օրհնանք, օրհնություն, օրհնել բառերի արմատն է օրհն, որն ըստ Աճառյանի, ծագում է պահլավերեն afrinam—օրհնեմ, գովեմ ձևից: Այն կազմված է a նախամասնիկով fri—սիրել, հարգել, գո-

վարանել արմատից: Իրանական մյուս լեզուներում բառն ունի հետևյալ զուգահեռները. զենդ.՝ *afrinami*—օրհնեմ, աղոթեմ, *fri*—աղոթք, *frima*—օրհներգություն, սոգդիերեն՝ āfrīvan—օրհնություն, պահլավերեն՝ *afrin*—գովեստ, գովաբանություն, *nafrin*—անեծք. պրսկ.՝ *afrin*, *afarin* آفرین—գովեստ, կեցցե, نفرین անեծք[5]: Այս ծագումով իրանական բառի նախաարմատը հնդեվրոպական նախալեզվի *prei-pri*—դուր գալ, հաճել, բարեկամանալ ձևն է, որից սանսկրտ. *Priyate*—սիրել և հնդեվրոպական այլ լեզուների նույն կամ մերձիմաստ այլ բառեր[6]: Այստեղ կարևորն այն է, որ օրհնել բառի ստուգաբանական նշանակությունը կապվում է մարդու առավել ներքին զգայական ապրումներին, հոգեկան անձնական տվայտանքներին, այն է՝ մեկին սիրելու, գովելու, գովաբանելու հետ: Մինչդեռ մաղթանք բառի ստուգաբանական իմաստը այդպես չէ:

Նկատենք նախ, որ մաղթանք հին հայերենում, այսինքն՝ գրաբարում, նշանակել է աղոթք, աղաչանք, բարեխոսություն, աղերսանք, խնդրվածք, որից էլ մաղթել—աղաչել, աղերսել, բարեխոսել, աղոթել, աղոթքով խնդրել[7]: Մինչդեռ նոր գրական հայերենում մաղթել նշանակում է մեկին մի լավ բան ցանկանալ, որից էլ բարեմաղթել, բարեմաղթություն:

19-րդ դարի բանահավաքների և մեր կողմից բառը հենց այս վերջին նշանակությամբ է գործածված: Բառի արմատն է մաղթ, որն ըստ Աճառյանի ծագել է հնդեվրոպական նախալեզվի *m|th* (իմա՝ *meldh*) արմատից: Վերջինից են ծագում լիթվաներեն *maldyti*—շարունակ աղաչել, բախանձել, *malda*—աղոթք, աղաչանք, ռուս. МОЛЮ, МОЛИТЬ—աղոթել. հին սլավ. *molja*, *moliti*,

---

5 Ուշագրավ է, որ միջին ու նոր պարսկերենում օրհնանքի և անեծքի արմատը նույնն է՝ فرين—frin, որը a նախածանցի հավելումով վերածվում է գովեստի. գովասանքի, օրհնության, մինչդեռ ن—na ժխտականի հավելումով, հակառակ իմաստն է արտահայտում՝ անեծք (տե՛ս Ա. Աբրահամյան, Պահլավերեն-պարսկերեն-հայերեն-ռուսերեն-անգլերեն բառարան, Ե., 1965, էջ 67, 114): Այսինքն՝ պարսկերենում անեծքի և օրհնանքի միևնույն բառային արմատ ունենալը և ժխտական մասնիկով միմյանցից տարբերակվելը խոսում է միևնույն երևույթի հակադիր ըմբռնումների մասին:

6 Տե՛ս Հր. Աճառյան, Հայերենի արմատական բառարան, հատ. VI, էջ 1617—1618:

7 Տե՛ս «Նոր բառգիրք հայկազեան լեզուի», հատ. II, Վենետիկ, 1837: Ստ. Մալխասյանց, Հայերեն բացատրական բառարան, հատ III, Երևան, 1944:

լեհերեն modla—կուռք, տաճար, ընդհանուր սլավոնական ձևն է modliti, որ և շրջված է molditi ձևից[8]:

Ըստ Յուլիուս Պոկորնու՝ հնդեվրոպական meldh արմատը նշանակել է «աստվածությանն ուղղված ծիսական խոսք»[9]:

Տեսնում ենք, ուրեմն, որ մաղթանք, մաղթել բառը, թե՛ իր նախնական իմաստով, իբրև աստվածությանն ուղղած աղոթք, աղաչանք, բարեխոսություն, աղերսանք, խնդրվածք և թե՛ իր հետագույն նշանակությամբ՝ իբրև մեկին լավ բանի կամեցողություն, լավ բանի ցանկություն, հակառակ օրհնանքի, առավել արտաքին-առարկայական հանգամանքների հետ է կապվում: Մինչ օրհնանքն իր ստուգաբանական նշանակությամբ սրտի ու փաղաքշանքի հետ է առնչվում, մաղթանքը առավելապես՝ խնդրելու, աղերսելու, միջնորդելու հետ:

Այստեղից էլ ժողովրդական օրհնանքների ջերմ ու հուզաթաթավ երանգը, հետևաբար և բանաստեղծական շունչն ու պատկերավորությունը և ժողովրդական բարեմաղթությունների համեմատաբար զուսպ ու չափավոր, ուստի և սակավ պատկերավոր ու սակավ բանաստեղծական նկարագիրը: Այսպես. կիրառական ընդհանուր բնավորությամբ ու բանաստեղծական պատկերավոր արտահայտչամիջոցներով օժտված օրհնանքներ են հետևյալները. «Կոներդ կանաչեն» (ՀԺԱ 8), «Արևդ կանաչի» («Մշակ», 1881, № 53), «Գրկումդ վարդ մանիշակ բուսնի, որ ուրախանաս» (ԷԱԺԱ 144), «Օջախըդ հաստատ մնա» (ԷԱԺՁ 333), «Մեկդի հազար էղնի» (ԷԱԺՁ 325), «Բերնիդ շաքար ըլի» (ԹՄԿ 181), «Ձեռդ քսես դաստեմ չոր խոտ՝ կանանչ դառնա» (ԷԱԺՁ 330), «Ցող բռնես՝ ոսկի դառնա» (ՀԺԱ 11), «Փուշ բռնես՝ վարթ դառնա» (ԹՄԿ 184), «Ջոր գետնին որ ոտ դնես՝ կանանչի» (ԷԱԺԱ 145), «Ջորն էրթաս՝ կանանչի, կանանչդ ծլի, ծաղկի» (ԷԱԺԱ 132), «Ջրի պես երկեն արև ըլնիս» (ԷԱԺԱ 132), «Ջրանաս, ճղքճըռտես» (ՀԺԱ 10), «Ծառի պես ծաղկիս, ծաղկի պես ֆոռ տաս» (ԱՀ XI 119), «Ծլիս, ծաղկիս, վարթ բոլորիս» (ԹՄԿ 182) և այլն:

Սրանց, կիրառական ոլորտի իմաստով, հակադրվում են այն բարեմաղթությունները, որոնք ուղղվում են ծիսա-կենցաղային

---

8 Տե՛ս Հր. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, IV հատոր, էջ 769—770:

9 Julius Pokorny, Indogermanisches etymologisches Wörterbuch, I Band, Bern und München, 1959, էջ 722:

սովորույթներին և ասվում են միմիայն դրանց առիթով: Ահա բնորոշ օրինակների մի խումբ.

«Բարով մաշես» (նոր հագուստ հագնողին, ԺԱԲ 120), «Բարով էրթաս, բարով գաս» (ճամփորդին, ԷԱԺԶ 331), «Շեն մնաս, շենու պայծառ մնաս» (եկեղեցու զանձանակը փող գցողին կամ սեղանատիրոջը, ԱՀ IX 194), «Իրար հետ հալիվորեք, պառավեք» (նորապսակներին, ԷԱԺԶ 335), «Անումով հարս դառնաս, բարով-խերով իմ տարսը դառնաս» (նորահարսին, ԱՀ XI 119), «Աստված հորով-մորով պահի» (նորածնի կնունքին, ԱՀ XVI 38), «Ուրախությունով ամահատիկ հընի, ուրախությունով ատամ խանես, բախտավոր հընես, հորով-մորով հընես» (երեխայի ակռահատիկի առթիվ, ԱՀ XVI 44), «Սուրբ հոգվով մխիթարիք» (հանգուցյալի հարազատներին, ՀԱ 132), «Տերը լուսավորե հոգին» (նույնը, ՀԱ 132), «Ջեր առջևքը տղա ըլի» (նորապսակներին, ԱՀ XI 119), «Ուրախ հարսանիք ընի» (հարսանքավորներին, ԷԱԺԱ 132), «Տաբոցը մյուս որդուդ ըլի» (նորապսակի հորը, «Մեղու Հայաստանի», 1885, № 73) և այլն:

Օրհնանքները և մաղթանքները, սակայն, այս երկու զուգադիր խմբերով չեն սահմանափակվում: Կան օրհնական քազմաթիվ բանաձևեր, որոնք դժվար է վերագրել այս կամ այն խմբին: Դրանք մասամբ ընդհանուր բնավորությամբ օրհնանքներ են, որոնք կիրառվում են ծիսական մաղթանքների հետ ծիսական որոշակի սովորությունների ժամանակ, արտահայտելով տվյալ միջավայրի ընդհանուր նպատակն ու տրամադրությունները: Եվ ընդհակառակը, դրանք մասամբ էլ նպատակային մաղթանքներ են, որոնք օգտագործվում են ընդհանուր բնավորությամբ օրհնանքների հետ կյանքի առօրյա հարաբերություններում, արտահայտելով օրհնվողի տվյալ վիճակի յուրահատկությունը:

Այսպես, օրինակ. «Աստծու աջողությունը վրեդ ըլի» (ԱՀ IX 252) օրհնանքը ընդհանուր բնույթ ունի, որ կարող է ասվել ուզած մարդուն, ուզած առիթով: Սակայն բանահավաքը այն գրառել է իբրև նորածնին ուղղած տատմայրի մաղթանք. այսինքն, օրհնանքը կապվել է նորածնին լողացնելու և կյանքի բարեմաղթության ծիսա-կենցաղային որոշակի սովորույթի հետ:

Կամ «Էրկանարև ըլնաս» (ՀԺՀ VII 119) օրհնանքը կարող է կիրառվել նպատակային մաղթանքների հետ ամենատարբեր ծիսական սովորույթների՝ դիցուք, ծննդի, կնունքի, հարսանքի ժամանակ նորածնին կամ փեսային օրհնելիս:

«Կանաչ ու կարմիր օրով ապրես» (ԱՀ XI 121) օրհնանքն, օրինակ, ըստ բանահավաքի գրանցման, ասվել է նոր տուն շինողին: Մինչդեռ այն կարող է ասվել ցանկացած մարդկանց, ցանկացած պարագաներում: Այսպես և «Օխտը որթով սեղան նստես» (ՋԺԲ 64), «Սիմոն ծերունու տարիք գտանես» (ԹՄԿ 183), «Հայր Աբրահամու օխնեթքն առնես» (ԱՀ XIX 114), «Սրտիդ մուրազին հասնիս» (ԲԲ 546) և շատ նմանները:

Եվ ընդհակառակը, շատ նպատակային մաղթանքներ կարող են գործածվել ուրիշ առիթներով: Այսպես. «Քրիստոս տերն օրհնե հանդ ու հանդաստանդ» (ԷԱԺԱ 133) մաղթանքը, որ հավանաբար սկզբնապես ասվել է երկրագործին՝ աշխատանքի ժամանակ, ընդհանրացել և ասվել է ունեցվածքի տեր ուրիշ մեկին, ուրիշ ժամանակ: Կամ «Հիսուս քեզ մին ղուշ վերթի տա» (ՀԺՀ VII 117) մաղթանքը կարող է ասվել և՛ նորապսակին, և՛ ուխտավոր ամուլ կնոջը, և՛ առհասարակ ամեն մի նոր ամուսնացած մարդու: «Հալալ էղնի քզի իմ տված ամակ» (ԷԱԺՁ 328) մաղթանքը, որ բանահավաքը գրանցել է իբրև մոր՝ պանդխտությունից մեկնող որդուն ուղղած բանաձև, կարող է նույնությամբ ասվել մոր կողմից՝ պսակվող աղջկան կամ զորակոչված որդուն: «Քու տերը քու գլխից անպակաս ըլի» (ԱՀ IX 226) ծիսական մաղթանքը, որը ըստ բանահավաքի ասվել է տաշտադրեքին փեսացուի հորը, նույնությամբ հարսանքի ժամանակ կնքահայրն ասում է նորահարսին, և առհասարակ ամեն ոք, ամեն պարագայում կարող է ասել ամուսնացած ամեն մի կնոջ և այլն:

Օրհնանքների և մաղթանքների նման փոխադարձ գործածությունները, ինչպես նաև դրանց հաճախ միմյանց շատ նմանվելը, մեծ դժվարություն է առեղծում օրհնանքը մաղթանքից զատելիս կամ տարբերակելիս: Դրա պատճառներից մեկն էլ այն է, հավանաբար, որ վաղապես նպատակային մաղթանքները բերանացի ավանդման պատճառով, ժամանակի ընթացքում կորցնում են իրենց որոշակիությունն հատկանշող շատ ըմբռնումներ և վերածվում ընդհանուր բնույթի մաղթանքների և հաճախ շփոթվում օրհնանքների հետ:

Այսուհանդերձ, վերը բացատրված հատկանիշների հաշվառումով կարելի է դեռևս որոշ չափով տարբերակել օրհնանքները մաղթանքներից և խոսել դրանց յուրահատկությունների մասին:

4. Անեծքներն և օրհնանքներն իրենց ոճաբանական կառուցվածքով ճիշտ մեծամասնությամբ ուղղակի, որևէ պայմանի հետ

շաղերսվող ցանկության սովական խոսքեր են («Բոյդ թաղեմ», «Արևդ մեռնի», «Աստված բարի բախտ տա», «Մշո սուլթան սբփ Կարապետ քեզի քոմագ էղի» և նմանները): Բայց և՛ անեծքների, և՛ օրհնանքների մեջ մի փոքրիկ խումբ կա, որ շեղվում է վերոհիշյալ ոճաբանական առանձնահատկությունից և կառուցված է պայմանի ու հետևության հարաբերության վրա. «Մի խոսք մի ուրիշ խոսքով պայմանի տակ դրվելով՝ դառնում է ենթադրված պայմանի հետևությունը», որով ցանկալի գործունեությունը դառնում է պայմանական[10]: Այդ կարգի բանաձևերը անվանում ենք պայմանով անեծք-օրհնանքներ: Դրանցից են.

Անեծքներ

1. «Էն օրն ընկնես, *որ շունը ձեռիցդ հաց չառնի»* (ՀԺԱ 4)
2. «Հենց դժարանաս, *որ բամբակով ջուր տան»* (ԱՀ XI 124)
3. «Էն դղամ (այնքան) ապրես, *որ ասեղը տնգես ու շվաք անես»* (ԱՀ XI 123):
4. «Էնդար (այնքան) ապրես, *որ բողոճ դառնաս»* (ԱՀ XI 123):
5. «Հըմալ (այնպես) մաշիս՝ *յոթ ասղան թել էղնիս»* (ԷԱԺՋ 313):
6. «Մե էնենցի ձեռ ինես՝ *գիշեր-ցերեկ օր-արև չըտանաս, քի ընի թոնիր վառի»* (ԷԱԺՋ 315):
7. «*Անխեր, անմեր մնաս,* որ խոր, մոր կառը (արժեք) իմանաս» (ԷԱԺՋ 310):
8. «Ով դրանց ջոկի իրարից, *աստված էլ նրանց ջոկի, նրա մուրազը փորումը մնա»* (ՊԵԺԱ 58):

Օրհնանքներ

1. «Ով միզ համար չար ուզե՝ *աստուձ նրան բարի տա»* (ԹՄԿ 184):
2. «Ինչ որ իս քեզմեն պակսեցրի՝ *աստուձ ավելցնե»* (ԹՄԿ 182):
3. «Ուր գնաս՝ *աստված բանիդ-գործիդ հաջողություն տա»* (ԷԱԺՋ 335):
4. «Ինչ բանի ձեռդ մեկնես՝ *ստանաս»* (ԱՀ IX 239):
5. «Որ չոր տեղովն անցկենաս՝ *կանանչի»* (ԱՀ IX 239):
6. «Ինչ նրան օր ա պըկասել՝ *աստոձ բաշխի իր ըրեխանցը»* (ԱՀ XI 120):
7. «Քանի աշխարհք կա՝ *օճաղդ շեն ու հաստատ մնա»* (ԷԱԺԱ 133):
8. «Աչքդ ինչ բանի որ ընկած ա, *էն էլ քեզ դամաթ ընի»* (ՊԵԺԱ 197):

Նշված բանաձևերի ընդգծված տողերը պայմաններ են, որոնց հաջորդում են դրանց հետևությունները՝ չար (անեծքի դեպքում) և

10 Տե՛ս Մ. Աբեղյան, *Հայոց լեզվի տեսություն*, Երևան, 1965, էջ 579:

ջարի (օրհնանքի դեպքում) ցանկությունները: Պայմանները, ինչպես բերված, այնպես էլ այլ պայմանական բանաձևերում, սովորաբար, ցույց են տալիս ենթադրական հիմունքը, քերականորեն երկրորդական խոսքեր են, որոնք լրացնում են՝ պայմանավորում, գլխավոր խոսքերի՝ հետևությունների բովանդակությունը: Բերված օրինակներում և, ինչպես առհասարակ անեծքի և օրհնանքի բանաձևերում, թե՛ պայմանի և թե՛ հետևության գործողությունները դրված են ըղձականով: Դրանց մեջ պայմանն ու հետևությունը պատկերացվում են իբրև փափագվող բաղձանք, իբրև ցանկալի հիմունք և հետևություն: Բայց կան անեծքի պայմանական բանաձևեր, որոնց մեջ կա՛մ պայմանը, կա՛մ էլ հետևությունը դրվում են այլ եղանակներով, դիցուք, սահմանականով կամ ենթադրականով:

«Ինչ արել ես՝ *քու աղաքը գա*» (*ԱՀ XI 123*), «Ինչ որ ինձ անում իս, *թող քու հոգուն գեմ գա*» (*ԹՄԿ 189*), «*Սուրբը թե զորք (զորություն) ունի՝* ինզ կը վերցնե» (*ԷԱԺԱ 138*) *և այլն:*

Առաջին երկու անեծքներում պայմանական գործողությունները դրված են սահմանականի վաղակատարով և ներկայով, իբրև կատարված և կատարվող իրակություններ:

Թեպետ պայմանների հետևությունները, իբրև գլխավոր խոսքեր, դրված են ըղձականով և պայմանի ու հետևության ընդհանուր զուգվածքին տալիս են բաղձանքի բնավորություն, բայց պայմանների կատարված ու կատարվող փաստ լինելը ավելի անմիջական ու կենդանի է դարձնում անեծքների տպավորությունը:

Երրորդ օրինակում՝ պայմանը ըղձականով է, հետևությունը՝ ենթադրականով: Պայմանն ու հետևությունն այստեղ հանդես են գալիս իբրև կարելի, հնարավոր, քանզի պայմանի հետևության իրականացումն ապագայում կարող է ենթադրվել:

Պայմանով օրհնանքները հատկապես բնորոշ են սեղանի կամ կենաց բարեմաղթություններին, երբ հատուկ բանաձևումներով առաջարկում են խմել այսինչի կամ այնինչի կենացը:

«Էս էլ՝ էն ծառի կենացը, վուր ջրի ափին բուսում է ու անջուր չորնում է» (ԹՄԿ 221): «Էս էլ՝ էն արեգակի կենացը, վուր սառած մարթուն կու տաքցնե ու չի էրի» (ԹՄԿ 221): «Էս էլ՝ աստուձ կինք տա նրան, ով ումը կու սիրե» (ԹՄԿ 222): «Էս էլ՝ աստվաձ կինք տա միր դուշմընին, միր լավութինը տեսնե» (ԹՄԿ 222): «Էս էլ՝ աստվաձ կինք տա նրան, ով վատը կու տեսնե՝ լավը կոսե» (ԹՄԿ 222) և այլն:

Պայմանով անեծքներն ու օրհնանքները թեպետ արդի ժողովրդական բանահյուսության մեջ սակավադեպ են, հնում սակայն, ունեցել են գործնական ընդարձակ կիրառություն։ Այդ են վկայում հին արևելյան սեպագիր, հայ միջնադարյան վիմագիր արձանագրությունները, միջնադարյան ձեռագրերի հիշատակարանները, եկեղեցու հայրերի օրհնության և բանադրանքի թղթերը, առևտրա-տնտեսական գրավոր զանազան գործարքները և այլն, որտեղ ի հայտ են գալիս պայմանով անեծք-օրհնանքների իրավաբանական լայն կիրառությունները[11]*։*

Այստեղ հարկ է միայն նկատել, որ պայմանով անեծքները իրենց կառուցվածքային տիպով նույնանում են երդումներին, իսկ փոքր-ինչ զարգացած ձևով՝ նաև երդվեցումներին։ Կան երդումների երկու հիմնախումբ՝ Երդում-անեծքով *և* Երդում-վկայակոչումով, *որոնք, անկախ իրենց բնույթի տարբերությունից, ունեն միևնույն կառուցվածքը։*

Երդում-անեծքով	Երդում-վկայակոչումով
«Թե սուտ կը խոսիմ՝ *երկու կտոր ըլլամ*» (*իմ հավաք.*)։	«*Քու արևը*՝ թե ես խաբար եմ» (*իմ հավաք.*)։
«Թե դու տանիցն ես գալի՝ *ես աստծու պատժին գամ*» (*ՊԵԺԱ 70*)։	«*Մեր ախպերությունը վկա*, որ ասածներս քոմմա դրուստ են» (*ՊԵԺԱ 327*)։
«Ով բառում մի ավել-պակաս խոսք ա խառնում՝ *որդու առաջը գա*» (*ՊԵԺԱ 232*)։	«*Հորս գերեզմանը վկա*, թե ես տեսել եմ» (*իմ հավաք.*)։

Ինչպես պայմանով անեծք-օրհնանքների դեպքում, այնպես էլ երդումների հիշյալ հիմնախմբերում, երդման բանաձևերը կառուցված են պայմանի և հետևության զոդվածքով. ընդգծված խոսքերը երդման պայմաններ են, մի տարբերությամբ, սակայն, որ անեծքներով երդումների դեպքում պայմանները նախադաս են իրենց հետևություններին, իսկ վկայակոչմամբ երդումների դեպքում՝ վերջադաս։ Դա միայն շարադասական արժեք ունի և ըստ էության չի փոխում պայմանի և հետևության հարաբերության բնույթը, մանավանդ, որ երդման երկու հիմնաձևերի դեպքում էլ զոդվածքում երբեմնակի պայմանների տեղափոխություն է կա-

---

11 *Այդ խնդրին է նվիրված սույն աշխատության I գլուխը, ուր հանգամանալից քննարկված են պայմանով անեծք-օրհնանքների կիրառական հատկանիշները՝ իրենց բոլոր հնարավոր դրսևորումներով։*

տարվում՝ կախված երգվողի տրամաբանական կամ անհատական առոգանական շեշտից («Ճրագի հետ հանգչիմ՝ թե սուտ ասիմ», «Թե ես խաբար եմ՝ արևս վկա»):

Պայմանով անեծքները նույնանում են երգումների հիշյալ երկու ձևերին ոչ միայն կառուցվածքով, այլ անեծքով երգումների դեպքում՝ նաև բնույթով: Թե՛ պայմանով անեծքների և թե՛ անեծքով երգումների դեպքում պայմանի հետևությունը պարտադիր անեծք է. տարբերությունը միայն պայմանի և անեծքի բայական գործողության բնույթի մեջ է: Եթե պայմանով անեծքներում պայմանները մեծ մասամբ ընդհանուր, վերացական հասկացություններ են («էն օրն ընկնես», «էնքան ապրես», «Ինչ արել ես»), որոնք որոշարկվում են միայն իրենց հետևություն-անեծքներով, ապա երդման պայմաններն, ընդհակառակն, որոշակի իրադրություններ են կամ որոշակի իրադրության պայմաններ («Թե սուտ կը խոսիմ», «Թե ես տեսել եմ», «Թե դու տանիցն ես գալի»), որոնք այլևս որոշարկման կարիք չունեն իրենց հետևություն-անեծքով կամ վկայակոչումով: Բացի այդ, եթե պայմանով անեծքներում և՛ պայմանը, և՛ անեծքը ուղղված է դիմացինին՝ անիծվողին, ապա երդման դեպքում՝ և՛ պայմանի, և՛ անեծքի կրողը երդվողն ինքն է: Այստեղ արդեն ի հայտ է գալիս անեծքի և երդման ժանրային տարբերությունը: Երդման դեպքում անեծքի իրագործման հնարավորությունը սահմանափակվում է որոշակի իրադրության պայմանով, որի վերացման դեպքում միայն կարող է իրագործվել անեծքը: Մինչդեռ պայմանով անեծքի դեպքում՝ պայմանն արդեն չի սահմանափակում անեծքի իրագործումը. պայմանն այստեղ սոսկ ձևա-ոճական արժեք ունի:

Այսուհանդերձ, պայմանով անեծքների բանաձևերը իրենց տրամաբանական կառուցվածքով անցման օղակ են անեծքներից երդումներին, և երդումները, իբրև առավել բարդ տրամաբանական զոդվածքներ, սերում են պայմանով անեծքներից: Այդ իրողությունը երևան է գալիս հատկապես հին գրական հուշարձաններում պայմանով անեծքների կիրառության ժամանակ, երբ անեծքների պայմաններն արդեն կապվում են որոշակի իրադրությունների հետ: Դրանք ընդհուպ մոտենում են երդումներին, բայց տակավին չեն փոխում իրենց ժանրային նկարագիրը, քանզի շարունակում են պահպանել էականը՝ ուրիշներին չարաբանելու հատկանիշը, մի բան, որ երդումներում հակառակ ձևով է դրսևորվում, այսինքն՝ երդվողն իր վրա է վերցնում, կրում անեծքի չար ազդեցությունը:

5. Հայկական անեծք-օրհնանքներում, թեպետ սակավադեպ, հանդիպում են այնպիսի բանաձևեր, որոնք դիմումի կամ աղերսանքի բնույթ ունեն: Դրանց մեջ անիծողը և օրհնողը կոչականով կամ անուղղակի դիմում են աստծուն, սրբերին կամ սուրբ համարված բնության երևույթներին, աղերսելով չարիք՝ անիծվողին, և բարիք՝ օրհնվողին:

Անեծքներ	Օրհնանքներ
1. «Աստվա՛ծ, դու էգուր (դրա) պատիժ տաս» (իմ հավաք.):	1. «Աստվա՛ծ, դու բարի բախտ տաս էս տղուն» (իմ հավաք.):
2. «Աստվա՛ծ, դու սրա հոգին առնես, ես ազատվեմ» (իմ հավաք):	2. «Սուրբ Գևո՛րգ, դու հասնես իմ բալին» (իմ հավաք.):
3. «Աստծուց դիլակ կանեմ՝ նաշդ գերեզմընքտեր դնեն» (ՏԱժԶ 310):	3. Աստվածանից կխնդրեմ, որ ամենիդ սրտի մուրազն էլ կատարի» (իմ հավաք.):

Դիմում կոչականով բանաձևերը (1 և 2 օրինակներ) իրենց աղերսական բնույթով խիստ անմիջական են, ազդեցիկ և օրհնանքների դեպքում՝ մոտենում են ժողովրդական աղոթքներին: Այդ կարգի օրհնաբանական բանաձևերից զարգանում է ժողովրդական պահպանական աղոթքների հակիրճ մի տեսակը, որ լայն կիրառություն ունի ժողովրդի առտնին և սովորութային կենցաղում, ինչպես, դիցուք, ծննդաբերության ժամանակ տատմոր արտաբերած հետևյալ բանաձևերը.

«Աստվա՛ծ, դու պահես էս երեխին, չարեն թափես, գեշից ազատես, ամեն փորձանքից դու պահես, պահպանես»:

«Սուրբ րեգնա՛կ (արեգակ), էս երեխի փայը տաս, երկնքից ցող ցողա, գետնից պտուղ ստանա, մենք էլ՝ մեղավորներս, սրա շվաքումը ուտենք, կերակրվենք» (ՀԱ IX 252):

Վերևի երրորդ օրինակների և նման բանաձևերի դեպքում, կոչականը ընկնում է, բայց դիմում-աղերսանքի հատկանիշը շարունակում է պահպանվել, թեպետ կոչականից զրկվելիս և որոշ պայմանականություն ստանալիս նման բանաձևերը կորցնում են նախորդների ազդեցիկ անմիջականությունը: Եվ, ի վերջո, այս կարգի բանաձևերը կարող են կորցնել դիմում-աղերսանքի հատկանիշը ևս և վերածվել անեծքի կամ օրհնանքի սովորական բանաձևերի, ուր արդեն դիմումի և աղերսանքի առարկան դառնում է անիծողի կամ օրհնողի չար կամ բարի ցանկության անմիջական հեղինակը, ինչպես, դիցուք. «Աստված պատիժդ տա» (իմ հավաք.),

«Աստված ձենդ լսե, խնդիրքդ կատարե» (ԷԱԺԱ 128) և հար ու նման բանաձևերում:

6. Հայ չարաբանական բանաձևերում ոխպաբանական մի խումբ կա, որ շատ բանահավաքների գրառումներում դասվում է անեծքների շարքը: Դրանք, այսպես կոչված, կոչական անեծքներն են, որոնց մեջ, առհասարակ, բացակայում է գործողությունը: Ոճաբանական նկարագրով այդ կարգի բանաձևերը բաժանվում են չորս ենթախմբի:

ա) Միայն մեկ կամ մի քանի գոյական-կոչականից բաղադրված բանաձևեր, գոյականներ, որոնք ունեն բացասական իմաստ:

«Գրո՛ղ» (ԱՀ XI 123), «Ցա՛վ» (իմ հավաք.), «Զո՛ռ» (ԱՀ IX 196), «Խոստո՛ւզ» («Բազմավեպ», 1902, № 9—10, 479), «Ջահրումա՛ր», «Ղառնա՛», «Ղառնազումի՛» (իմ հավաք.), «Ջահրումա՛ր ու զարդուզալա՛» (ԹՄԿ 189), «Զո՛ռ ու ցա՛վ», «Ցավ ու կրա՛կ», (իմ հավաք.) և այլն:

Այս ենթախմբի բանաձևերն ասվում են, սովորաբար, զիմացինի խոսքը կանխելու նպատակով և ունեն սաստիչ իմաստ: Կիրառությամբ սրանց են հարում նաև հիշյալ գոյականների վրա որոշ վերադիրների հավելումով բանաձևերը, որպիսիք են «Հորս ցա՛վ», «Աստծու կրա՛կ» (իմ հավաք.), «Սև գրո՛ղ» (ԷԱԺԶ 308) և նմանները:

բ) Մակդրավոր գոյական-կոչականով բանաձևեր, որոնք ընդհանրապես ունեն բացասական իմաստ: «Սև սի՛րտ» (ԷԱԺԶ 308), «Քյավթառ շո՛ւն» (ԷԱԺԶ 309), «Դժոխքի շո՛ւն», «Գարշելի գո՛ւշ» (ԷԱԺԶ 308), «Շան եթի՛մ» (ԷԱԺԶ 310), «Կարած պատա՛նք» (ԷԱԺԶ 308), «Սատանի խրեշտա՛կ», «Տիրամոր խե՛ղճ» (ԷԱԺԶ 311), «Քյոռ օճա՛խ», «Մութ խարապա՛» (ԲԳ 331), «Փուչ կենթանի՛» (ԹՄԿ 194), «Գրող արև՛» (ԷԱԺԶ 315), «Ջեճ սատանա՛» (ԷԱԺԶ 308) և այլն:

գ) Անվան (գոյական կամ ածական) և բայի (մեծ մասամբ հարակատար դերբայի) հարակցությամբ կազմված կոչական բանաձևեր. «Գրողի տարո՛ւկ» (ԷԱԺԶ 308), «Գրողի խեղդա՛ծ» (ԱՀ XI 123), «Շնոֆորի տարո՛ւկ» (ԷԱԺԶ 308), «Վարամ թալո՛ւկ», «Վարամ փախո՛ւկ» (ԷԱԺԶ 315), «Գետին մտա՛ծ» (ԹՄԿ 187), «Ծամ կտրո՛ւկ» (ԷԱԺԶ 308), «Սև կապա՛ծ», «Սև խակա՛ծ» (ԱՀ XIX 114), «Սև օրթնա՛ծ» (ԶԺԲ 67), «Գարշելի խափանո՛ւկ» (ԷԱԺԶ 308) և այլն:

Այս ենթախմբի բանաձևերը ածականական բառակապակցություններ են և արտահայտում են ընդհանուր ածականական իմաստ։ Բանաձևերի այս տիպերից էլ, ահա, բառաբարդության միջոցով զարգանում են հաջորդ՝ դ ենթախմբի բանաձևերը։

դ) Ածական-կոչականով բանաձևեր, որոնց ածականները բարդություններ են՝ կազմված ճնշող մեծամասնությամբ անվանական և բայական բաղադրիչներից. թեպետ սակավադեպ, հանդիպում են սոսկ անվանական կամ ածանցավոր և անվանական բաղադրիչներով բաղադրություններ ևս։

«Արևամե՛ռ» (ԷԱԺՁ 308), «Մեղամե՛ռ», «Խերամե՛ռ», «Ախպերամե՛ռ» (ԷԱԺՁ 310), «Ազիզամե՛ռ» (ՀԺՀ VII 115), «Որդամե՛ռ» (ԷԱԺՁ 317), «Ժուռումուռամե՛ռ» (ԷԱԺՁ 310), «Սրտամե՛ռ» (ԱՀ XI 125), «Ումուտախո՛ր» (ԷԱԺՁ 310), «Գետնամո՛ւտ» (ԲԳ 331), «Սևալաչա՛կ» (ԱՀ XI 124), «Հըլհլո՛ւկ» (ԷԱԺՁ 308), «Գոթեցո՛ւկ», «Անաստվա՛ծ», «Անհոգի» (ԷԱԺՁ 313) և այլն։

Երբեմն նման բանաձևերի դեպքում, սկզբից դրվում է մի կոչական բառ (տո՛, ծո՛, քա՛ և այլն), որով ավելի է սաստկացվում կոչական իմաստը. «Տո՛, տնակուլ» (իմ հավաք.), «Ծո՛, չկաննալու», «Քա՛, տնավեր», «Քա՛, չխնտալու» (ԽԱ 134) և այլն։

Քննարկվող բոլոր ենթախմբերի բանաձևերն էլ, անկախ իրենց դրսևորման ձևերի տարբերությունից, ունեն շեշտված ընդհանրություն. դա նրանց ընդհանուր մակդրային իմաստն է։ Թե՛ սոսկ գոյականից («Գրո՛ղ», «Ցա՛վ»), թե՛ մակդրավոր գոյականներից («Սև սի՛րտ», «Տիրամոր խե՛ղճ»), թե՛ ածականի, գոյականի և բայի հարակցությունից («Գրողի խեղդա՛ծ», «Սև խակա՛ծ») և թե սոսկ բարդ ածականներից («Արևամե՛ռ», «Սևալաչա՛կ») բաղադրված բանաձևերը փաստորեն կոչականով դրված, բացասական իմաստի պարզ կամ բաղադրյալ մակդիրներ են, առանց գործողության, առանց կոչական անձի վիճակը փոփոխելու միտումի, որ, սովորաբար, յուրահատուկ է անեծքներին։ Նման բանաձևերի նպատակը սոսկ դիմացինի անձը վիրավորելն է, որ առանձնահատուկ է միմիայն հայհոյանքներին և պարսավական խոսքերին։ Հետևաբար, կոչական մակդիրներն, իբրև այդպիսիք, անեծքներ չեն իսկական իմաստով, այլ ավելի մոտենում են պարսավական խոսքերին։ Այդ երևում է թեկուզ այն իրողությունից, որ կոչական բանաձևերի հակադրությունները ոչ թե օրհնանքներն են, ինչպես, դիցուք, անեծքների դեպքում, այլ փաղաքշական խոսքերը, որոնց հակադրություններն են պարսավանքի խոսքերն ու հի-

շոց-հայհոյանքները: Այսուհանդերձ, կոչական բանաձևերն իրենց մեջ կրում են անեծքի որոշ տարրեր, որ արտահայտվում է հատկապես այդ մակդիրների իմաստի մեջ: Երբ մեկին պատասխանում են «Գրո՛ղ» կամ դիմում են՝ «Կարած պատա՛նք», «Վարամ փըսխո՛ւկ», «Աղիղամե՛ռ» մակդիրներով, ապա, անկախ ըղձական գործողության բացակայությունից, փաստորեն լռելյայն ցանկություն է հայտնվում դիմացինին տեսնել մահվան (=գրողի ու կարած պատանքի) ենթարկված, ծանր հիվանդության արժանացած, կամ տեսնել նրա ամենամերձավոր հարազատի մահը («Աղիղամեռ»): Այսինքն, կոչական բանաձևերը ձևով ու բնույթով պարսավանքի խոսքեր են, բայց իմաստով մոտենում են անեծքներին: Թեպետ չեն դառնում այդպիսիք: Կոչական բանաձևերը մի տեսակ միջին տեղ են բռնում պարսավական խոսքերի և անեծքների միջև:

7. Հայ օրհնաբանական բանաձևերում կենցաղավարման բնույթով առանձին խումբ են կազմում դիմումի և պատասխանի մաղթանքները: Դրանք կենդանի երկխոսություններ են, որոնց դեպքում պարտադիր է բարեմաղթվողի ներկայությունը և նրա պատասխան մաղթանքը:

Դիմումի և պատասխանի տիպը ընդհանրապես առանձնահատուկ է ողջույնի և հրաժեշտի, մասամբ և կենաց ու շնորհավորանքի բարեմաղթություններին: Սրանք այն կիրառական խմբերն են, որտեղ անհրաժեշտաբար պահանջվում է բարեմաղթվող անձի կամ հասարակության ներկայությունն ու պատասխանը:

Ողջույնի մաղթանքներ		Հրաժեշտի մաղթանքներ	
դիմումի	պատասխանի	դիմումի	պատասխանի
—«Բարի լույս»: —«Բարի օր»: —«Բարի իրիկուն»:	«Բարով, հազար բարի»: «Բարին արևուդ» (իմ հավաք.):	—«Բարի գիշեր»:	—«Լույս բարի» (իմ հավաք.):
		—«Մնաս բարով»:	—«Գնաս բարով» (իմ հավաք.):
—«Օրհնյա՜լ է տեր»:	—Աստված օրհնե» (իմ հավաք.):	—«Բարին ձեզ մոտ»:	—«Բարու տեր ըլեք» (ԹՄԿ 210):
—«Ողորմի աստված»:	—«Ողորմի ծնողացդ» (ՊեժԱ, 175):		
—«Բարի աջողում»	-«Բարով եկար» (իմ հավաք.):		

Չենաց մաղթանքներ		Շնորհավորանքի մաղթանքներ	
դիմումի	պատասխանի	դիմումի	պատասխանի
—«Անուշ ըլլավ»:	—«Անուշ մնաս» (իմ հավաք.):	—«Աչքդ լուս»:	—«Աչիչ լուսով մնաս» (իմ հավաք.): —«Աչքդ լուսով» (Աչ IX 193):
—«Խմողաց անուշ»:	—«Ջխմողաց հազար անուշ» (ԺԱԲ 121):		
—«Անուշ խմեցիր»	—«Կյանքդ անուշ»: —«Բերանդ անուշ»: —«Լեզուդ անուշ» (իմ հավաք.):		—«Աչքի լուսով ըլիս» (ԹՄԿ 210):
		—«Բարով մաշես»:	—«Սաղ ըլիս» (իմ հավաք.):
—«Կենդանություն»:	—«Անուշ անմահություն» (ԺԱԲ 121):		
—«Սաղ ըլէք»:	—«Անուշ լինի» (իմ հավաք.):		

Պետք է նկատի առնել նաև, որ պատասխանի մաղթանքները, բացի ավանդական դարձած բանաձևերից, կարող են հանպատրաստից հորինվել և ուղղվել դիմողին՝ կախված պատասխանողի լեզվական ճարտարությունից ու մտավոր ունակությունից։

8. Անեծքները, սովորաբար, ունեն բացասական իմաստ, մինչդեռ օրհնանք-բարեմաղթությունները՝ դրական։ Ցանկության այդ բացասական ու դրական առումները դրսևորվում են բառային, դարձվածային և ոճա-արտահայտչական տարբեր ձևերով։

Բառա-դարձվածային միավորները, ինչպես նաև դրանց միջև առկա տրամաբանական հարաբերությունները իրենց արտահայտած իմաստների բնույթով անեծքներում և օրհնանքներում որոշակիորեն տարբերվում են։ Եթե անեծքներում նեցուկային արժեք ունեցող բառերն ու բառակապակցությունները հիմնականում բացասական հասկացություններ են, ապա օրհնանք-բարեմաղթություններում, ընդհակառակն, դրական են։ Բայց, միաժամանակ, անեծքներում հանդիպում են դրական, իսկ օրհնանք-բարեմաղթություններում բացասական իմաստի բառեր ու բառակապակցություններ, որոնք, սակայն, իրենց ժանրին բնորոշ դրական կամ

բացասական միտումը դրսևորում են տրամաբանական որոշակի հարաբերություններով:

Անեծքների և օրհնանքների բանաձևերում առկա դրական և բացասական բառերն ու դարձվածները բնույթով բաժանվում են երկու հիմնախմբի՝ **կայուն և ոչ կայուն** բառերի ու բառակապակցությունների:

Ա. բառա-դարձվածային կայուն միավորներ.—Անեծքների բացասական և օրհնանքների դրական իրագրությունների արտահայտության եղանակների մեջ որոշակի դեր է վերապահվում առաջին հերթին այն բառերին ու բառակապակցություններին, որոնք ծագումնաբանորեն աղերսվելով կրոնա-առասպելական հավատալիքների, վիպա-ավանդական, երբեմն էլ պատմական իրողությունների հետ, դարերի ընթացքում բանաձևվել են ժողովրդի բերանին, ձեռք բերել ավանդական կայուն դարձվածների կամ բառային սիմվոլների իմաստ: Դրանք ժողովրդական մտածողության մեջ ունեն բացարձակ դրական կամ բացասական նշանակություն և իմաստաբանորեն երբեք չեն կարող փոխարինել միմյանց:

Բառա-դարձվածային հիշյալ միավորներից անեծքներում երևան են գալիս միմիայն բացարձակ բացասական իմաստի սիմվոլային բառերն ու դարձվածները, պատկերավոր արտահայտելով ժանրին բնորոշ վատի, չարի, դժբախտության բաղձալի իրագրությունը:

Հայկական անեծքներում հանդես եկող բառա-դարձվածային կայուն միավորները, որ խորհրդանշում են որևէ բացասական հասկացություն կամ իրողություն, հետևյալներն են.

«Գրող», «Գրողի ջիգա», «Շնոֆոր» (մահ), «Գաբրելական սուր», «Հրեղեն սուր», «Աստծու կրակ», «Աստծու պեծ», «Քարե կարկուտ», «Բաբելական կրակ» (=մահ՝ չարաչար պատժով), «Ադամա պտուղ» (=մեղսագործություն), «Կայենի կոտոշ», «Կայենի ու Ուդի (Հուդայի) պատիժ» (=աստվածային խիստ պատիժ), «Ուդի դաս» (=մատնչություն), «Սատանի դաս», «Սատանի բաժին», «Սատանի սանդարամետ», «Դժոխքի փայ», «Դժոխքի վերի պուճախ» (=հոգու կորուստ և պատիժ), «Տիրամոր անկ», «Տիրամոր խեղճ», «Տիրամոր յարա» (=անբուժելի հիվանդություն), «Սևանա տիլ» (=անդարձ կորուստ) «Անիի ավերակ», «Ակոռի ավերակ» (=ավերածություն և ոչնչացում) և այլն:

Հիշյալ և նման բառերն ու դարձվածներն երբեք չեն հանդես գալիս օրհնանքներում, քանզի իրենց կայուն բացասական բնույթի պատճառով չեն կարող համաձուլվել օրհնանքների դրական, բարեբանական իմաստին:

Հայկական օրհնանք-բարեմաղթություններում, ճիշտ հակառակ ձևով, երևան են գալիս միմիայն բացարձակ դրական իմաստի սիմվոլային բառերն ու դարձվածները, խորհրդանշելով որևէ դրականի՝ լավի, բարու, երջանկության հասկացություն:

Նման բառա-դարձվածային կայուն միավորներից են. «Աստծու աջ ու խաչ» (=աստվածային հովանավորություն), «Աստծու հախ կշեռք» (=աստվածային արդարադատություն), «Աստծու ամանաթ» (=աստվածային խնամք, պահպանություն), «Գաբրելական փող» (=վերջին դատաստան), «Սրբերի դաս» (=արդարություն), «Հայր Աբրահամի սեղան» (=կենսամիջոցների հարակայություն), «Հայր Աբրահամի գոգ» (=հոգու փրկություն), «Հայր Աբրահամի մատաղ», «Սաքեկան մատաղ» (=ուխտի, ողհաբերության ընդունելություն), «Սիմավոն ծերունի» կամ «Սիմոն ծեր», «Էրգեն արև» (=երկայնակեցություն), «Քաղցր դատաստան», «Քաղցրիկ արքայություն», «Արքայության փայ», «Լափ բաժին», «Լույս ճռալ», «Լույս հոգի» (=հոգու արդարություն և փրկություն), «Մեռոնի օրհնություն», «Սահակա, Հակոբա օրհնություն», «Հայր Աբրահամի օրհնություն» (=զորավոր օրհնություն) և այլն:

Սիմվոլային արժեք ստացած ավանդական բառա-դարձվածային միավորներից զատ, բացասական և դրական ցանկությունները անեծքներում և օրհնանքներում դրսևորվում են նաև ուղղակի կամ այլաբանական իմաստ ունեցող բացասական և դրական բառերով ու բառակապակցություններով:

Անեծքներում նման բառերն ու բառակապակցությունները մարմնավորում են մահվան, հիվանդության, փորձանքի, մարմնական ու բարոյական տառապանքների հասկացություններ:

Դրանցից են. գյուլլախորով, գյուլլի բաժին, սև գյուլլա, ղուրղուն կամ սև ղուրղուն, սև խաբար կամ ղարախաբար, սև թուղթ, արնթաթախ, արընճապաղ, արենկոլոլ, գյարդանախուրդ, նաշ, սև դագաղ կամ կուբին, պատանք, գետին, գետնի յոթը ղաթ, սև հող կամ սև հողեր, յանի ղարա, յաման յարա, յարա-փարա, խժխժա յարա, գոթի յարա, սև քոթեշ, սև խոլեր, սև արուն, վարամ կամ

սև վարամ, կարմիր քամի, դեղին ջրեր, խառնախուռ կամ սև դառնա, բաշլու յարա, բրին, քոս, բոր, խոց, քարխեծ, օրթնալիցք, սև ցավ, աստծու կրակ, աստծու պեծ, արևու կրակ, սև աղու, աղու-աղջուր, աղ ու տաքդեղ, զրգուբրգ, զուբագոռ, քոքբռ, գիլանոց, շնանոց, շներու բաժին, շուն, գել կամ քոռ գել, գազան, օձ, կարիճ, օձու փուշ, գևափուշ, խարաբա, մութն ու խավար, սև քար, սև ագռավ, ժուռումուռ, բեմուրադ, բեհասրաթ, ղաֆիլ ղադա և այլն:

Սրանք և նմանները, իբրև կայուն բացասական հասկացություններ, հանդես են գալիս միմիայն անեծքներում և առանձնահատուկ են անեծքներին: Մինչդեռ օրհնանքներում հանդես եկող ժանրին բնորոշ կայուն բառերն ու բառակապակցությունները բնույթով ու իմաստով լիովին հակադիր են անեծքներին առանձնահատուկ բառային միավորներին:

Երկար կյանք, երկան արև, կենդանություն, առողջություն, ուրախություն, հաջողություն, լիություն, օրհնություն, շնորհք, խեր ու բարի, բախտավոր, շնորհավոր, շեն, շեն ու պայծառ, բարեխոս, օրհնյալ, հալալ, դրախտական, սեր-միաբան, ընդունելի, անփոշիմնելի, ձերմակերես, քաղցր, հորով-մորով, կյանքով կամ կենոք, լուռ-կատարող, ցամաք աչք, արքայության բաժին, ուրախության հաց, հնազանդ որդի, ղոչ որդի, բարի զավակ, բարեկի սեղան, բարի հիշատակ, բարի խորհուրդ, հալալ կաթնակեր կամ հալալ կաթ ծծած, փունջ մանիշակ, հոտով ծաղիկ, կանաչ մեռոնի շնորհք, խունկ ու մոմ, աջ ու խաչ, որդի ու փառք, ծիլ-ծիլ ոսկի և այլն,—ահա այն և նման բառերն ու բառակապակցությունները, որոնք արտահայտում են կյանքի, երկայնակեցության, երջանկության, լիության, հաջողության ու ապահովության գաղափարներ և բնորոշ են սոսկ օրհնանքներին:

Բառա-դարձվածային կայուն միավորների մի առանձին խումբ են կազմում նաև բացասական կամ դրական իմաստ ունեցող այն բայերը, որոնք բնորոշ են կամ սոսկ անեծքներին, կամ սոսկ օրհնանքներին և բնավ ժանրից-ժանր չեն փոխանցվում:

Նման բայերը, բանաձևերից առանձին վերառած, սոսկ բայիմաստով արդեն խոսում են անեծքին կամ օրհնանքին պատկանելու մասին:

Ստորև զուգադրվում են անեծքներում և օրհնանքներում հանդիպող կայուն բացասական և դրական իմաստով մի շարք բայեր՝ իրենց անորոշ ձևերով:

Անեծքներ		Օրհնանքներ	
սատկել	խորտակվել	ապրել	ավելանալ
խեղդել	փչանալ	ողջ լինել	լիանալ
թաղել	փլ՛ել	զորանալ	շենանալ
հողել	տակնուվրա լինել	ծլել	պայծառանալ
կրել	չքվել	ծաղկել	հաստատ մնալ
գժվել	չորանալ	փնջփնջոտել	վայելել
կատաղել	խավարել	մեծանալ	խերվել
ծակծկոտվել	մարել	բարձրանալ	մուրազի հասնել
քրքրվել	վառել	ծերանալ	համբուրել
ճլճլվել	խորովել	բաշխել	պարգևել
որդնել	խանձել	պահել	թեթևանալ
քոսանալ	խաշել	պահպանել	բախտավորվել
տնքալ	գլկվել	հասնել	փրկել
պառոկվել	զարկվել	օգնել	խնդացնել
քծծվել	խռովել	փրկել	խնամել
կրակվել	հաչել	ազատել	պատվել
պատպանձվել	կաղկանձել	արժանանալ	օրհնել
կոտրվել	փետրահանվել	լուսավորվել	ողորմել
փշրվել	պատժվել	զարդարվել	երկարել
կարվել	մուրալ	ուրախանալ	
ավերվել	կորավել		
քանդվել	տնքվել		
շրջվել	բաժանվել		

Հակադիր գաղափարներ մարմնավորող բառային ու դարձվածային կայուն միավորների քննարկված երեք խմբերը կազմում են անեծքի և օրհնանքի բանաձևերի հարակա, միմյանց մեջ չներթափանցվող բառամթերային ատաղձը։ Դրանք այն խոսուն նյութական միավորներն են, որոնք բանաձևերի համար ունեն նեցուկի արժեք և բանաձևերից դուրս իսկ վկայում են իրենց պատկանելությունը այս կամ այն ժանրին։

Բ. Բառա-դարձվածային ոչ կայուն միավորներ.—*Անեծքներում և օրհնանքներում հանդես եկող բառերն ու բառակապակցությունները, սակայն, սոսկ կայուն միավորներով չեն սահմանափակվում։ Նշված ժանրերի բանաձևերում առկա են բազմաթիվ բառեր, բառակապակցություններ, կրոնա-դիցաբանական անուններ, որոնք հավասարապես կիրառվում են թե՛ անեծքներում, թե՛ օրհնանքներում։ Այդ կարգի բառա-դարձվածային միավորներն ու անունները չունեն սոսկ անեծքին կամ սոսկ օրհնանքին յուրահատուկ այն որոշակիությունը, որ տեսանք բառա-դարձվածային կայուն միավորների դեպքում։*

Այսպես. «նեղություն», «փորձանք», «թշնամի», «դարդ ու ցավ», «չար աչք» և այլ բառեր ու բառակապակցություններ, որոնք

քնությամբ բացասական հասկացություններ են, թվում է, թե հանդես պիտի գային միայն անեծքներում: Մինչդեռ դրանք հավասարապես կիրառվում են թե՛ անեծքներում և թե՛ օրհնանքներում:

Անեծքներ	Օրհնանքներ
«Նեղությունից հեչ աչք չբանաս» (իմ հավաք.):	«Աստված էլ ձեզ ամեն փորձանքից, նեղությունից ազատի» (ՊԵԺԱ 89)
«Փորձանքը գլխիցդ անպակաս ըլի» (իմ հավաք.):	«Քու դուշմանի սրտով չի անես» (ՊԵԺԱ 269) :
«Քու դուշման մեռնի» (ԷԱԺԶ 325):	«Կյանքիդ մեջ դարդ ու ցավ չտեսնես» (իմ հավաք.):
«Դարդ ու ցավի գաս ու սածու կրակի գաս» (ԹՄԿ 188):	

Այդպես և դրական հասկացություններ արտահայտող բառերի ու բառակապակցությունների դեպքում:

Արև, կյանք, մուրազ, հաց, աղուհաց, օջախ, տուն, տուն ու տեղ, բերող մեր, կերած հաց, ծծած կաթ, ումբր ու արև, մարդու մարմնի բոլոր մասերը՝ գլուխ, աչք, լեզու, բերան, ձեռ, ոտ, ջան (մարմին), հոգի, սիրտ, հարազատները՝ մայր, հայր, եղբայր, որդի և այլ դրական իմաստի բառեր ու դարձվածներ հանդես են գալիս անեծքներում և օրհնանքներում հավասարապես:

Անեծքներ	Օրհնանքներ
«Արևդ թաղեմ»:	«Ապրի արևդ»:
«Կյանքդ մեռնի»:	«Կենոք մնաս»:
«Մուրազդ փորդ մնա»:	«Բարով մուրազիդ հասնես»:
«Կերած հացդ հարամ ըլի»:	«Հալալ ըլի կերած հացդ»:
«Կուռդ չորանա»:	«Կուռդ դալարի»:
«Ազիզ բալեդ մեռնի»:	«Որդիքդ ապրեն»:

Միևնույն երևույթն է նկատվում նաև գերընական հատկանիշներով օժտված կրոնա-առասպելական էակների՝ աստծո, Քրիստոսի, զանազան սրբերի ու հրեշտակների անունների առկայության դեպքում, էակներ, որոնցից հավասարապես աղերսվում են թե չար և թե բարի ցանկություններ:

Անեծքներ	Օրհնանքներ
«Աստված պատիժդ տա» (իմ հավաք.)։	«Աստված բարին կատարի» (ՊեԺԱ 211)։
«Սուրբ Կարապետի քյաղագ էղնիս» (Վեն. Սահակ. հավ.)։	«Սուրբ Կարապետը մուրազդ տա» (ՊեԺԱ 191)։
«Սուրբ Գևորգը գա հախեդ» (իմ հավաք.)։	«Սուրբ Գևորգը ձեր բոլոր խընդըրվածքը կատարի» (ՊեԺԱ 254)։

Անեծքների և օրհնանքների բայական բաղադրիչների մեջ ևս առկա է բայերի մի շարք, որ երկու ժանրերի դեպքում էլ հավասար չափով գործածվում է։

Դրանցից են. գալ, գնալ, մնալ, բերել, վերցնել, թափել, լինել, դառնալ, անել, լցնել, տալ, առնել, դնել, իմանալ, ուտել, մաշել, նայել, հանդիպել, ապրել, ընկնել, կարոտել և այլն։

Սրանց մի մասը ընդհանուր, վերացական իմաստի բայեր են, որոնք որոշարկվում են անվանական բաղադրիչների հետ հարադրվելով, իսկ մնացածները, թեպետ որոշակի իմաստ ունեն, սակայն իրենց չար կամ բարի ցանկությունները որոշարկում են բանաձևի այլ բառային միավորների հետ ունեցած հարաբերությամբ։

Պետք է նկատի ունենալ, որ այս կարգի բայերը, երբ անվանական բաղադրիչների հետ չեն հարադրվում, այսինքն հարադրական բայեր չեն դառնում, մեծ մասամբ հարաբերվում են բառադարձվածային կայուն միավորների հետ և դրանով իսկ որոշարկում իրենց արտահայտած ցանկությունը։ Այդ կարելի է տեսնել թեկուզև ներքոբերյալ մի քանի բայերի օրինակներով (տալ, լինել, ուտել, նստել), որոնք անեծքներում և օրհնանքներում զուգորդվում են բառա-դարձվածային կայուն միավորների հետ։

Անեծքներ	Օրհնանքներ
«Հացը պատիժդ տա» (ԷԱԺԱ 320)։	«Աստված բարի բախտ տա» (ԷԱԺԶ 324)։
«Ճամփեդ փուշ ու տատաշ ըլի» (ԹՄԿ 191)։	«Ասսու օխնիքը վըր ձըզի էղնի» (ԷԱԺԶ 325)։
«Գրող ուտես, ցավ ուտես» (իմ հավաք.)։	«Աստծու հացն ուտես» (ԺԱԲ 119)։
«Օձի բնին նստես» (Վեն. Սահակ. հավաք.)։	«Յոթը ողղով սեղան նստես» (ԷԱԺԶ 335)։

Գ. Իմաստային հարաբերություններ.— *Այժմ տեսնենք անեծքի և օրհնանքի բանաձևերի բառային բաղադրիչների միջև առկա իմաստային հարաբերությունների դրսևորման հիմնական ձևերը:*

Սոսկ բայական մեկ կամ մի քանի բաղադրիչներից կազմված անեծքների և օրհնանքների դեպքում ցանկության դրական և բացասական առումները, բնականաբար, արտահայտվում են միայն բայիմաստով:

Անեծքներ	Օրհնանքներ
«Քոռանաս»:	*«Փնչփնչնոտես»:*
«Մակես, ծակըռտվես, օրթնես, թափվես» (իմ հավաք.):	*«Ապրես, զորանաս, ծլես, ծաղկես» (իմ հավաք.):*

Ըստ որում սոսկ բայական բաղադրիչներից կազմված անեծքներում և օրհնանքներում բայերը պատկանում են բառային կայուն միավորների խմբին և երբեք մեկ ժանրից մյուսը չեն փոխանցվում:

Մինչդեռ բաղադրիչներով առավել զարգացած բանաձևերի դեպքում, երբ բայական բաղադրիչը կապվում է բառա-դարձվածային այլ միավորների հետ, դրականն ու բացասականն արտահայտվում են բառային բաղադրիչների բնույթով և կոնկրետ հարաբերություններով:

1) Պարզ տիպի (տե՛ս կառուցվածքային տիպերի աղյուսակները) անեծքներում՝ *բացասական, և* օրհնանքներում՝ *դրական, ցանկության դրսևորման եղանակները, ընդհանուր առմամբ, հանգում են հետևյալ տարբերակներին.*

ա) Բանաձևերի բոլոր բաղադրիչները բնույթյամբ լինում են բացասական կամ դրական: Այդ դեպքում բաղադրիչների միջև հարաբերությունը լինում է միասնական:

Անեծքներ	Օրհնանքներ
«Գրողն ու մահը քեզ խեղդի» (իմ հավաք.):	*«Աստված պահի արևդ» (իմ հավաք.):*
«Բորոտիս, քոսը, կրակը վառե քեզի» (ՀԱԺՁ 320):	*«Աստված փեսից էլ, աղջկանդ էլ քեզ բաշխի» (ՊԵԺԱ 280):*

բ) Դրական իմաստի բառային բաղադրիչը անեծքներում միշտ ենթադրում է բացասական բայիմաստ:

«Արևդ խավարի» (իմ հավաք.), «Աչիդ մեռնի» (ՀԺՀ VI 140):

Իսկ եթե բայիմաստը բնությամբ դրական է, նման բայերի վրա դրվում է որևէ ժխտական մասնիկ, և իմաստը դառնում է դարձյալ բացասական. «Ջխտերիդ խերը Ջտեսնես» (ԷԱԺՁ 138), «Ջանիցդ սաղությեն Ջտեսնաս», (ԷԱԺՁ 318)[12]:

Մինչդեռ օրհնանքներում, ընդհակառակն, դրական բառային բաղադրիչը միշտ ենթադրում է դրական բայիմաստ: Այսինքն, օրհնանքներն այս դեպքում նոր տարբերակ չեն տալիս և նույնանում են նախորդ տարբերակին: Բայց երբեմն այս կարգի օրհնական բանաձևերում բայիմաստը բնությամբ լինում է բացասական: Նման դեպքերում որևէ ժխտականի հավելումով բայը ձեռք է բերում դրական իմաստ և պահպանում բանաձևի իմաստային հավասարակշռությունը («Օրհնանքը տանիցդ ու գլխիցդ անպակաս ըլնի», ԷԱԺԱ 133, «Աստված ձեր ամակը չըկորցնե», իմ հավաք.):

գ) Բացասական իմաստ ունեցող բառային բաղադրիչներն անեծքներում հաճախ հարակցվում են դրական իմաստով բայերի հետ, իսկ օրհնանքներում, ընդհակառակն, այդ հարակցումը կատարվում է բացասական իմաստ ունեցող բայերի հետ:

Անեծքներ

«Քարեքար ապրես» (ՀԺԱ 8):
«Շալե շապիկ հագնիս, օլրտիս» (ԷԱԺՁ 313):

Օրհնանքներ

«Գել-գազանի բերան քու առեջ փակ էղի» (ԷԱԺՁ 330):
«Աստված չար աչքից հեռու պահի» (իմ հավաք.):

Այս խմբի անեծքներում՝ բայիմաստների բնությամբ բացասական լինելու դեպքում, բայերի վրա դրվում է որևէ ժխտական և դրանց հաղորդում դրական իմաստ՝ առավել զորացնելով բանաձևերի բացասական միտումը: Իսկ օրհնանքներում, ընդհակառակն, բնությամբ դրական իմաստ ունեցող բայերի վրա է ավելանում որևէ ժխտական՝ դրանց տալով բացասական իմաստ:

---

12 Այս կարգի անեծքների բացասական իմաստով բայերի վրա երբեմն ավելանում են դրական իմաստի բառեր ու բառակապակցություններ՝ սաստկացնելով բայիմաստի բացասականությունը («Մեկուճարդ բարով մեռնի, երեսը չտեսնես», ԷԱԺԱ 137, «Ազիզդ՝ ազիզ օր մեռնի», ՁԺԲ 65):

Անեծքներ	Օրհնանքներ
«Վրիդ քոռը չպակասի», (ԷԱԺՋ 318)։	«Գեշ օր չը տեսնաս» (ԷԱԺՋ 327)։
«Տուրուդմփոցն աստված գլխիցդ անպակաս անե» (ԷԱԺԱ 138)։	«Ոտքդ բարի շդիպչի, որդի» (իմ հավաք.)։

2) Մեկից ավելի բայեր պարունակող բաղադրյալ (տե՛ս կառուցվածքային տիպերի աղյուսակները) կամ անդամավոր կազմությամբ անեծքների և օրհնանքների դեպքում, բացասականն ու դրականը դրսևորվում են հետևյալ տարբերակներով.

ա) Բանաձևի բոլոր անդամներն արտահայտում են կամ բացասական, կամ դրական իմաստ։

Անեծքներ	Օրհնանքներ
«Հախմիան տերը քեզ փչացնե, հասրաթդ փորդ թողնե» (ԷԱԺԱ 136)։	«Կանչընաս, հոգով ուրախանաս»։
«Շոն տեռնաս, տռներն ընգնիս, հաչիս, կնձկոնձաս» (ՀԺՀ VII 113)։	«Մեծանաս, մենծ անուն ունենաս, փառքի տիրանաս»։

բ) Առաջին անդամը անեծքներում լինում է դրական, մնացածները՝ բացասական. օրհնանքներում, ընդհակառակն, առաջին անդամը լինում է բացասական, մնացածները՝ դրական։

Անեծքներ	Օրհնանքներ
«Էրթալդ էղնի, գալդ չէղնի» (իմ հավաք.)։	«Դադրած չեշմեն (աղբյուր) էրթաս՝ վաղե»։
«Շատ դատես՝ քիչ ուտես, քչիցն էլ մահրում (զուրկ) նստես»։	«Ջորն էրթաս՝ կանանչի, կանանչդ ծլի, ծաղկի»։

գ) Անդամները անեծքներում մեջընդմեջ դրական և բացասական են լինում. («Աչքդ ըլնի՝ լիս չըլնի, օլորդ ըլնի՝ միս չըլնի». «Նստես՝ տակդ էրի, երկենաս՝ կյուլոխդ էրի»)։

Օրհնանքներում այս տարբերակը բացակայում է։

9. Անեծքների և օրհնանքների բառա-դարձվածային կայուն և ոչ կայուն միավորների, դրանց միջև առկա իմաստային հարաբերությունների քննությունից պարզվում է, որ անեծքներն ու օրհնանքներն իրենց շեշտված տարբերությամբ հանդերձ, ունեն նաև որոշակի ընդհանրություններ։

Առաջին էական ընդհանրությունն այն է, որ բառերի ու դարձվածների մի ընդարձակ խումբ, անկախ իմաստի բնույթից, հանդես է գալիս անեծքներում և օրհնանքներում հավասարապես: Ընդհանրություններից մյուսը, որ հատուկ օրինակներով տեսանք վերևում, բայական ոչ կայուն միավորների պարտադիր հարակցումն է բացասական կամ դրական բառա-դարձվածային կայուն միավորների հետ:

Ահա այս երկու էական ընդհանրությունների հիմքի վրա անեծքների և օրհնանքների միջև կատարվում է մի ուշագրավ երևույթ, երբ ժանրերից մեկը փոխարկվում է *մյուսին:*

Ժանրային փոխարկումների երևույթը, որ առանձնահատուկ է բանահյուսական տեսակներին ընդհանրապես, ավելի հաճախ է երևան գալիս բանաձևային փոքր տեսակների՝ առած-ասացվածքների, հանելուկների, շուտասելուկների, այդ թվում նաև անեծքների և օրհնանքների միջև:

Ա. Բայիմաստի փոփոխությամբ.—*Անեծքների և օրհնանքների ժանրային փոխարկման նյութական հաստատուն հիմքը բանահյուսական այդ երկու տեսակների մեջ միևնույն բառերի ու դարձվածների առկայությունն է: Բառա-դարձվածային միևնույն միավորների երկուստեք գործածությամբ, սակայն, դեռևս չի որոշարկվում այդ երկու հակադիր ժանրերի տարբերությունը: Տարբերակումը սկսվում է այդ բառերին ու դարձվածներին հարած բայերի իմաստից: Նայած, թե ի՛նչ իմաստի բայերի են ստորադասվում այդ միևնույն բառա-դարձվածային միավորները, ըստ այդմ էլ որոշարկվում է բանաձևերի ժանրային պատկանելությունը:*

Այսպես. արև, կյանք, ձեռք, օջախ, աչք և այլ դրական իմաստի բառ-հասկացություններ, որոնք հավասարապես գործածական են անեծքներում և օրհնանքներում, անեծքի տարր են դառնում բացասական իմաստով բայերին ստորադասվելիս և, ընդհակառակն, օրհնանքի տարրերի են վերածվում, երբ ստորադասվում են դրական իմաստ ունեցող բայերին:

Արևդ———խավարի, կանաչի
Կյանքդ———մեռնի, ապրի
Ձեռդ———չորանա, դալարի
Օջախդ———քանդվի, շեն մնա
Աչքդ———քոռանա, լույս լինի

Տեսնում ենք, ուրեմն, որ անեծքների և օրհնանքների ժանրային տարբերակման մեջ տվյալ դեպքում վճռական նշանակություն ունի բայիմաստը: Բայիմաստի փոփոխությունը առաջ է բերում

ժանրային փոփոխություն, և անեծքը կարող է փոխարկվել օրհնանքի և, ընդհակառակը։ Ժանրից-ժանր փոխանցվող բառա-դարձվածային ու կայուն միավորները ժանրային փոխարկումների ժամանակ դառնում են կայուն՝ բայերի համեմատ. փոփոխվում են բայերը, իսկ բառա-դարձվածային միավորները մնում են անփոփոխ։

Բայիմաստով կատարվող ժանրային փոխարկումների ժամանակ վճռական դեր է վերապահվում «չը», «ոչ», «ան» ժխտականներին, որոնք դրվելով դրական իմաստով բայերի վրա, հակառակ իմաստ են տալիս նրանց և օրհնանքները վերաշրջում անեծքների։

«Իշալա՛, արևուդ խեր տեսնաս» → «Իշալա՛, արևուդ խեր
չըտեսնաս»։

«Մուրազ ստծուց առնես» → «Մուրազ աստծուց չառնես»
կամ՝ «Աստծուց մուրազդ չառնես»

Կատարվում է նաև հակառակ երևույթը. ժխտականներով վերագրված դրական բայերով անեծքները՝ ժխտականների անկումով, կարող են իմաստային վերաշրջման ենթարկվել և վերածվել օրհնանքների։

«Էրկեն արև չէլնես» → «Էրկեն արև էլնես»
«Մուրազիդ չը հասնիս» → «Մուրազիդ հասնիս»
«Վուչ բարով գա» → «Բարով գա»

Նույն կերպ՝ օրհնանքներում ժխտականով վերագրված բացասական իմաստ ունեցող բայերը, ժխտականի անկումով վերաշրջվում են անեծքների։

«Ձեռքդ չոր քարի տակ չմնա» → «Ձեռքդ չոր քարի տակ մնա»,
«Սև օր չի տեսնա» → «Սև օր տեսնա»

Բայիմաստի փոփոխություններով կատարվող վերաշրջումները, սակայն անեծքների և օրհնանքների ժանրային փոխարկումների մեջ միակ կենդանի երևույթը չեն։

Բ. Բառա-դարձվածային կայուն միավորների փոփոխությամբ.—Անեծքների և օրհնանքների ժանրային փոխարկումների մեջ նկատելի տեղ ունեն կայուն բառերի և դարձվածների այնպիսի փոփոխությունները, երբ անեծքներին առանձնահատուկ բացասական բառերն ու բառակապակցությունները փոխարինվում են օրհնանքներին բնորոշ դրական բառա-դարձվածային միավորներով և անեծքը վերածում օրհնանքի, կամ ընդհակառակը, օրհնանքներին յուրահատուկ դրական բառերն ու դարձվածները փոխարինվում են անեծքներին յուրահատուկ բացասական նույն կարգի իրակու-

թյուններով և օրհնանքը վերաշրջում անեծքի: Նման դեպքերում բայիմաստը, բառային ու կայուն միավոր լինելու պատճառով, մնում է անփոփոխ:

«Լավ օր չտեսնես» → «Վատ օր չտեսնես»
«Սատանի բաժին էղնիս» — «Արքայության բաժին ըլնես»
«Աստու օրհնանքը քե վրա ըլի» — «Աստու անեծքը քե վրա ըլի»
«Բարի հրեշտակի ռաստ գաս» → «Չար գրողի ռաստ գաս»

Միմյանց փոխարինող բառերն ու բառակապակցությունները, ինչպես տեսնում ենք օրինակներից, ներկայացնում են իրար լրիվ հակադիր հասկացություններ (լավ օր>վատ օր, սատանի բաժին>արքայության բաժին, աստու օրհնանք>աստու անեծք, բարի հրեշտակ>չար գրող): Հասկացությունների հակադիր լրիվությունն էլ դառնում է բավարար հիմք՝ հասկացությունների միմյանց փոխարկման:

Գ. Խոսվածքի առումներով.—Անեծքների և օրհնանքների ժանրային փոխարկումների մեջ կան դեպքեր, երբ բառային միավորներն այլևս դեր չեն խաղում: Միևնույն բանաձևը կարող է ընկալվել և՛ անեծք, և՛ օրհնանք, նույնիսկ փաղաքշական խոսք կամ կշտամբանք՝ կախված խոսքի ձայնային արտաբերության բնույթից, խոսվածքի ընդհանուր իմաստից, որի առնչությամբ արտաբերվել է բանաձևը: Այդ պատճառով էլ, երբեմն, կենդանի խոսվածքից դուրս, դժվար է որոշել նման բանաձևերի ժանրային պատկանելությունը: Այդ դեպքերում էական նշանակություն են ստանում ընդհանուր խոսվածքի բովանդակությունը և խոսողի վերաբերմունքը դեպի խոսքը, և փոխարկումը դառնում է զուտ հոգեբանական երևույթ:

Խոսվածքի ընդհանուր **բովանդակությամբ** պայմանավորված բանաձևերից են. «Աստված սրտիդ կորա (չափ) տա» («Բազմավեպ», 1902, № 9—10, 480), «Ասըծ էրածըդ դեմը տա» (ԱՌԻ 114), «Ինչ սրտով որ դուն ինձի կը հայիս, աստված ա քեզի ըմմպես հայի» («Բազմավեպ», 1902, № 9—10, 480), «Քու հոգուն դեմ գա քու արած լավությունը» (ԹՄԿ 184), «Էրեսդ ճերմակ կենա» (ԱՀ IX 193) և նմանները:

Այս բանաձևերից յուրաքանչյուրը, կենդանի խոսվածքից առանձին վերառած, ունի իմաստային երկդիմություն և դժվար է վերագրել որևէ ժանրի: Սրանք բոլորը կարող են ընկալվել օրհնանք-բարեմաղթություններ, եթե խոսվածքի ընդհանուր բովան-

դակությունը բարեբանական է, և խոսողի վերաբերմունքը կամ հոգեկան գրգիռը խոսակցի նկատմամբ՝ դրական։ Եվ, ընդհակառակն, եթե խոսվածքի բովանդակությունը չարաբանական է, խոսողի վերաբերմունքը խոսակցի նկատմամբ բացասական, բացառությամբ վերջին բանաձևի, մնացածներն ընկալվում են որպես անեծքներ, իսկ վերջինը՝ «Էրեսդ ճերմակ կենա», ընկալվում է իբրև պարսավական խոսք կամ՝ պարզապես հեգնանք։

Այս կարգի բանաձևերի իմաստային, հետևաբար և ժանրային որոշարկումը սերտորեն աղերսվում է հոգեբանական այն իրադրության ու դրա հիման վրա ծագած կենդանի խոսվածքի հետ, որի մեջ են մտնում նման բանաձևերը, իբրև խոսվածքի բաղկացուցիչ մասեր։

Անեծքների և օրհնանքների ժանրային փոխարկումների մեջ զգալի դեր է խաղում նաև խոսքի ձայնային արտաբերության բնույթը՝ ինտոնացիան։

Միևնույն բանաձևը, նայած ինչ տոնով է արտասանվում, կարող է ընկալվել թե՛ անեծք, թե՛ օրհնանք, անգամ՝ փաղաքշական խոսք, կամ պարսավանք, անշուշտ, կապված դարձյալ ընդհանուր խոսքի բովանդակության բնույթի հետ։ Այսպես.

«Քու տունն աստված շինի» հանրահայտ բանաձևը, էությամբ բարեմաղթություն է։ Սակայն ժողովրդական կենդանի խոսքի մեջ մեծ մասամբ դրվում է առոգանական այնպիսի շեշտերի տակ, որ կիրառվում է իբրև կշտամբանք կամ հանդիմանություն, դիմացինի որևէ անթույլատրելի կամ անցանկալի արարքի համար։ Ճիշտ նույն կիրառությունն ունի հիշյալ բանաձևի հակոտնյա՝ «Ձեր տունը քանդվի» անեծքը, որ հաճախ ձայնային շեշտերի ազդեցությամբ փոխարկվում է թեթև հանդիմանության կամ կշտամբանքի։ Այդ կերպ՝ ինտոնացիայով, հանդիմանություն են վերածվում «Աստված իրանց հետ», «Աստված Ձեզ հետ» (ՊԵԺԱ, 322, 332), «Օրհնըվիք դուք» (ՊԵԺԱ, 77), «Էս մեր խիզանոցն էլ աստված բարի տա» (ՊԵԺԱ, 56) օրհնանք-բարեմաղթությունները, ինչպես նաև «Քու մարիֆաթդ կտրվի», «Քու մերը մեռնի», «Մեղքը քու շլինքը», «Հողը հորդ գլխին» (ՊԵԺԱ, 305, 133, 263, 172), «Ցողը հալիդ» (ՀԺԱ 8), «Ջուրս քի տանի» (ԱՀ XI 124) անեծքները և նմանները։

Անեծքները հանդիմանությունների փոխարկվելիս նշանակալից դեր են խաղում նաև ժեստականները։ Վերջիններս դրվելով անեծքի բանաձևերի բայերի վրա, անեծքները փոխարկում են թեթև հանդիմանության։

«Շլինքդ կոտրվի վուշ» (ԹՄԿ 192), «Քու արևը շը մենի» (իմ հավաք.), «Սևերես շըլնիս դու», «Ա՛յ փչանաս ոչ դու» (ՊԵԺԱ 176, 209), «Կոտրվի ձեռդ վուշ» (ԹՄԿ 190) և այլն։

Այս կարգի հանդիմանություններ տալիս են, սովորաբար, հարազատներին, մեղմացնելով անեծքների չար ու դժնի տպավորությունը և անգամ բացասելով այն։

Անեծքի բանաձևերի մի տեսակ կա, որ ժողովրդական մտածողությամբ ընկալվում է որպես բարեմաղթություն։ Դրա ենթակա .առարկան ոչ թե խոսակիցն է, այլ վերջինիս չարակամ թշնամին։ Եվ քանի որ խոսակիցն հանդես է գալիս իբրև անիծողի բարեկամ՝ դրական անձնավորություն, և անեծքն ուղղվում է վերջինիս չար հակառակորդին, ի նպաստ խոսակցի, ուստի՝ հոգեբանորեն այն ընկալվում է խոսակցի համար իբրև յուրատեսակ բարեմաղթություն։ Այսպես, օրինակ.

«Ջրվին ու չորանան քո չարկամներդ» (ԷԱԺԱ 132), «Քու դուշմնի աչք քոռնա» (ԷԱԺԶ 325), «Պապանձվի քեզ անիծողի բերանն ու լեզուն»[13] (ԷԱԺԱ 132), «Դուշմնիդ էրիսը գետին քըսփի» (Բազմավեպ, 1902, № 9—10, 480), «Դուշմանդ քեզ տեսնելիս՝ վար աշե» (ԷԱԺԱ 129) և նմանները։

Որ այս կարգի անեծքներն ընկալվում են իբրև բարեբանություններ, վկայում են ոչ միայն բանահավաքներն ու ժողովրդական բանավոր ավանդությունը, այլև գոյությունը բանաձևերի այն յուրատեսակ խմբի, որտեղ նման անեծքներն հանդես են գալիս օրհնանքներին հարակցված, իբրև բանաձևային մեկ ամբողջություն։

«Դոստդ ուրախանա, դուշմանդ քոռանա» (ԷԱԺԱ 127), «Ձեր չարկամն կուրնա, ձեր ոտ քարին չդեպնի» (ՍՄ 103), «էն դովլաթն ունենաս, որ դուշմանդ տեսնելիս քոռանա» (ԷԱԺԱ 129) և այլն։

Բերված և նման բանաձևերում անեծքով բաղադրիչները թեպետ հակադրված են մաղթանքով բաղադրիչներին, այդուհանդերձ դրանք հոգեբանորեն համադոր են գիտակցվել միմյանց։ Եվ պատահական չէ, որ բանահավաքները այդ կարգի բանաձևերը տեղադրել են օրհնանք-բարեմաղթությունների շարքում[14]։

---

[13] Այս բանաձևը, թեպետ բանահավաքի կողմից դրված է օրհնանքների շարքում, բայց կարող է նաև որպես երդում գործածվել, կախված կենդանի խոսքի բնույթից, երբ, դիցուք, բանաձև արտաբերողը կամենում է դիմացինին անեծքի պայմանով հավաստիացնել իր անմեղսունակությունը։

[14] Անեծքներն ու օրհնանքները կենդանի խոսակցական լեզվում ոճաբանական փոփոխությունների ենթարկվելով, երբեմն ոճա-արտահայտչական տարբերությունն են ստանում, ձուլվում տվյալ կենդանի խոսքին և կորցնում իրենց առանձ-

Այսպես, ուրեմն, անեծքներն ու օրհնանքները լինելով երկու տարբեր, միմյանց հակադիր ցանկությունների արտահայտություններ, բանաձևվում են մի կողմից՝ ժանրերին համապատասխան ավանդականորեն անփոփոխ չար կամ բարի հասկացություններ մարմնավորող կայուն բառային ու դարձվածային միավորներով, մյուս կողմից, հակառակ դրանց՝ հարափոփոխ, փոխադարձաբար կիրառելի բառերով ու բառակապակցություններով: Վերջիններս ժանրային տեսակետից որոշարկվում են կոնկրետ բանաձևերում, բայական կամ անվանական բաղադրիչների հետ ունեցած որոշակի իմաստային-տրամաբանական հարաբերություններով:

Այդ երկու, տարբեր բնույթի բառա-դարձվածային միավորներն էլ կազմում են անեծքների և օրհնանքների լեզվա-ոճական ձևավորման էական տարրերը:

2. ՏԻՊԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

10. Անեծքները, օրհնանք-մաղթանքներն ու երդումները «ցանկության խոսքեր» են, որոնց մեջ անիծողն ու օրհնողը ցանկություն են հայտնում փոխել օրհնվողի և անիծվողի ներկա վիճակը մի լավացումով կամ վատթարացումով, իսկ երդվողը՝ ցանկանում է խոսակցին հավաստիացնել իր իրավացիությունը:

Ուստի անեծքների, օրհնանք-մաղթանքների և երդումների մեջ կարևոր դեր է վերապահված բային (գործողության կամ լինելության). այդ նկատառումով էլ դրանց տիպերը որոշելիս ելակետ է ընդունվել բայը, իբրև ժանրային-տիպաբանական կարևոր միավոր:

Անեծքների, օրհնանք-մաղթանքների, մասամբ և երդումների առաջին տարբերակիչ գիծը, որ ուշադիր քննելիս աչքի է զարնում՝ տարբերությունն է բայի դիմավոր ձևերի, որոնք տարբեր երանգ են հաղորդում անեծքին, օրհնանքին կամ երդմանը, դառնում դրանց տիպորոշման առաջին ելակետային հատկանիշը: Հետևաբար, հիշյալ ժանրերի տիպաբանական առաջին մեծ բա-

նահատուկ ժանրային նկարագիրը: Այսպես. «Արշավրին էլ ասված բարի խեր ու բյամալ տա» (ՊԵԺԱ 323), «Խոնչեն բաց արին, աչքդ բարին տեսնի» (ՊԵԺԱ 63), «Սրա կոխած հողը մեր մարդկերանց գլխին» (ՊԵԺԱ, 332), «Նա որ քարը գնա՝ կկանաչի, փուշ բռնի՝ ոսկի կդառնա» (ՊԵԺԱ 73) և նմանները արդեն դադարում են օրհնանք կամ անեծք լինելուց, այլ կիրառվում են իբրև խոսքի պատկերավոր արտահայտչաձևեր, որևէ դրական կամ բացասական վերաբերմունք արտահայտելու համար:

ժանումը կատարվել է ըստ բայի դիմավոր ձևերի: Եվ քանի որ ցանկության նշված խոսքերում բայերը հանդես են գալիս սոսկ մեկ եղանակով՝ ըղձականով, ուստի և տիպաբաժանումը կատարվել է ըստ ըղձական եղանակի բայերի դեմքերի:

Բայի յուրաքանչյուր դիմավոր ձևի տակ մտնող անեծքների, օրհնանք-մաղթանքների և երդումների յուրաքանչյուր խումբ կոչվել է հիմնատիպ: Ըստ այդմ, հմայական բանահյուսության նշված տեսակները համախմբվել են հետևյալ չորս հիմնատիպերի տակ:

I Հիմնատիպ—անիծողի, օրհնողի և երդվողի անմիջական գործողություն

(Բայական I դեմք)

Օրինակ. «Արևդ թաղեմ», «Բարով կանանչ-կարմիրդ կապեմ», «Մեռնիմ, թե սուտ կըսիմ»: Այս հիմնատիպի անեծքները, օրհնանքներն ու երդումներն աչքի են ընկնում անմիջական ակտիվությամբ, քանզի ենթական՝ գործող անձը, հենց ինքը անիծողն է, օրհնողը կամ երդվողը:

II Հիմնատիպ—անիծվողի, օրհնվողի կամ երդվողի ինքնակա գործողություն

(Բայական II դեմք)

Օրինակ. «Գետինը մտնիս», «Դալար մնաս», «Որձեղենի ձեն չլսես, թե սուտ ասես»:

Ընդգրկում է ըղձական եղանակի բայական երկրորդ դեմքով անեծքները, օրհնանքներն ու երդումները, որտեղ արտահայտված ցանկությունը անիծվողի, օրհնվողի կամ երդվողի որևէ մեկից չպարտադրված ինքնակա գործողությունն է կամ լինելությունը: Այս հիմնատիպի բանաձևերը անմիջապես ուղղված են անիծվող, օրհնվող կամ երդվող անձին, ուստի և ազդեցիկ են ու անմիջական:

III Հիմնատիպ—ուրիշ անձի կամ առարկայի գործողություն

(Բայական III դեմք)

Օրինակ. «Աստված պատիժդ տա», «Հոգիդ լիս դառնա», «Երկինքը վկա, թե տեսել եմ»:

Ընդգրկում է ըղձական եղանակի բայական երրորդ դեմքով անեծքները, օրհնանքներն ու երդումները, որոնց մեջ արտահայտված ցանկությունը դրսևորում է իբրև մի երրորդ անձի կամ ա-

ռարկայի գործողություն կամ լինելություն: Այս հիմնատիպի անեծքները, օրհնանքներն ու երդումները ուղղված են ոչ թե ուղղակի անիծվողի կամ երդվողի անձին, այլ նրա մարմնի որևէ մասին, բարոյա-հոգեկան հատկանիշներին, նրա նյութական միջոցներին: Այս հիմնատիպի բանաձևերի ցանկալի գործողության կատարումը ակնկալվում է որևէ առասպելական անձի, գերբնական ոգու կամ ըմբռնման, բնության իրերի և երևույթների կողմից: Եթե նախորդ հիմնատիպերում, քերականական առումով, ենթական մեծ մասամբ թողարկված էր լինում բայի դիմավոր ձևերի մեջ, ապա այս հիմնախմբում ենթական բացահայտ է հանդես գալիս: Իսկ դա՝ բառային բաղադրիչների տեսակետից փոխում է բանաձևերի տիպաբանական կառուցվածքը:

Հմմտ. «Մեռնես» և «Արևդ մեռնի», «Չար փորձանքի ռաստ գաս» և «Աստված չար փորձանքի բերի քեզ» անեծքները (մանրամասները տե՛ս ստորև):

IV Հիմնատիպ—տարբեր դիմավոր գործողություններ

(Բայական տարբեր դեմքեր)

Օրինակ. «Միսդ շունը ծամի՝ արինդ ես խմեմ», «Ջոր քարին գնաս՝ առաջդ կանաչի», երդում՝ չիք:

Այս հիմնատիպի բանաձևերը կազմված են նախորդ հիմնատիպերի բաղադրությունից և պարունակում են երկու և ավելի բայական գործողություններ, այսինքն՝ բաղկացած են ամբողջական բաղադրյալ տիպերից (դրանց մասին տե՛ս ստորև):

Երկրորդ *տարբերակիչ գիծը, որ երևան է գալիս անեծքներում, օրհնանք-մաղթանքներում և երդումներում՝ բայերի* **հաստատական և ժխտական** *ձևերն են, բոլոր հիմնատիպերին առանձնահատուկ:*

Օրինակ՝— «Մեռելիդ հացը ուտես» և «Արևից խեր չտեսնես»
— «Օխտը որդու հեր ըլես» և «Սև օր չտեսնես»
— «Քու մեղքն ունենամ, թե խաբար իմ» և «Որդու թուշ չպաչեմ, թե տեսել եմ» և այլն:

Ուստի յուրաքանչյուր հիմնատիպի ներսում, տիպաբանական հաջորդ ստորաբաժանումը կատարվել է ըստ բայերի **հաստատական և ժխտական** *ձևերի: Այսինքն, յուրաքանչյուր հիմնատիպում անեծքները, երդումներն ու օրհնանքները ենթաբաժանվել են հաստատական, ժխտական և հաստատական ու ժխտական խառը ձևերի:*

Անեծքներում, օրհնանքներում և երդումներում ժխտական ձևերը կազմվում են բայի ըղձական եղանակի վրա «չը» և «ոչ» ժխտական մասնիկների հավելումով (օրինակ. «Ոչ մեծնաս», «Աստված տա, չըլինայն», «Թե սուտ կըսիմ՝ հարի (մինչև) տուն չը հասնիմ»)։

Տիպաբանական հաջորդ ստորաբաժանումն արդեն հիմնատիպերի ներսում հաստատական, ժխտական և հաստատական ու ժխտական խառը ձևերի տակ անեծք-օրհնանք-երդումների տիպորոշումն է՝ դասակարգման այն աստիճանը, երբ որոշարկվում են բուն տիպերը։

Բուն տիպերը որոշելիս ելակետը դառնում է անեծք-օրհնանք-երդումների բառային բաղադրիչների քանակական հարաբերակցությունը, այն է՝ բայերի և բառային բաղադրիչների քանակը։

Ըստ բայերի քանակի՝ անեծք-օրհնանք-երդումները բաժանվում են երկու տիպաբանական խմբի.

1. Պարզ տիպերի, որոնք կառուցված են մեկ բայի վրա. օրինակ «Լաչակդ քամուն տամ», «Աչքի արևդ», «Լեզուս քաշվի թե...» և

2. Բաղադրյալ տիպերի, որոնք կառուցված են մեկից ավելի բայերի վրա կամ բաղադրվում են մեկից ավելի պարզ տիպերի հարակցումից։

Օրինակ՝ «Կաթիս՝ չոլերն ընկնիս», «Բարի ցավակ ընի, հոքով-մորով մեծանա», «Աստված գիտի, Քրիստոս գիտի, թե....»։

Տիպերի նշված երկու խմբերը որակով հակադրվում են միմյանց. երկուսն էլ թեպետ տիպաբանական առանձին ամբողջություն են կազմում, սակայն առաջինը երկրորդի մեջ հանդես է գալիս իբրև ամբողջի մաս։

Բաղադրյալ տիպերը ենթաբաժանվում են անդամավոր տիպերի՝ ըստ ընդգրկված բայերի քանակի։ Լինում են երկանդամ, եռանդամ, քառանդամ, հնգանդամ (և երբեմն էլ ավելի) անեծքներ, օրհնանք-մաղթանքներ և երդումներ։

Օրինակ. Երկանդամներ

1. «Խալիս, խափանիս», «Քըքըվիս, միտդ վըիցդ թափի», «Անեղ տնկես, հովին նստես»։
2. «Ալրիս, զորանաս», «Կանչընաս, հոգով ուրախանաս», «Մին ցանես, հազար վերցնես».

768—11

3. (Զեղչված գործածությամբ) «Ժամեր, պատարագներ», «Իմ արև, քու արև», «Էնա ճրագի լուս, էնա ժամ»:

Նռանդամներ

1. «Քոռանաս, կուրանաս, լուսդ խավարի», «Ումբրդ միջից կես ըլի, չքվես, չորանաս», «Մուլն երթաս՝ չորնա, պապակած մնաս»:
2. «Մաղդ ծլի, ծաղկի, փնջփնջնոտի», «Հացդ հայր Աբրամու հացը դառնա, որ ոչ հատնի, ոչ պակսի»:
3. «Խաչ, ժամ, պատարագ», «Երկինք, գետինք, աստված» և այլն:

Անեծք-օրհնանք-երդումների բառային բաղադրիչների և անդամների քանակը որոշելիս՝ նկատի են առնվել հետևյալ հանգամանքները.

ա) Հարադրական բարդությունները (տուն ու տեղ, օր ու արև, սև ու մութ և այլն) ու հարադրական բայերը (ռաստ գալ, վեր ընկնել, սև ըլել և այլն), որոնցով հարուստ է ժողովրդական խոսակցական լեզուն, դիտվել են իբրև բառային մեկ ամբողջություն.

բ) այն անձնական դերանունները (իմ, քո), որոնց փոխարինում են ստացական հոդերը (ս, դ), դիցուք՝ իմ ոտը, քո գլուխը > ոտս, գլուխդ, նկատի չեն առնվել իբրև անկախ բառային բաղադրիչներ. նկատի չեն առնվել նաև բայի դիմավոր ձևերին համատեղ գործածվող անձնական դերանունները (թաղեմ ես, կտրեմ ես, դնեմ ես և այլն):

Բառային բաղադրիչների մեջ, իբրև ոչ կառուցվածքային միավորներ, չեն ներառվում նախդիրները, կապերը, ինչպես նաև՝ այսպես կոչված «վերաբերական խոսքերը», որպիսիք են «իշալլահ», «բալքի», «չէ կըսիմ» և այլն, որոնք արտահայտում են սոսկ անիծողի վերաբերմունքը:

3. ԱՆԵԾՔՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՏԻՊԵՐԸ

11. Հայկական անեծքների կառուցվածքային տիպերը որոշարկված են վերը շարադրված սկզբունքներով: Դրանց բաժանումն ըստ հիմնատիպերի, տիպաբանական խմբերի, տիպերի տեսակների և բայերի հաստատական, ժխտական և խառը ձևերի, տրված է անեծքների տիպաբանական տախտակի վրա, համապատասխան օրինակներով (տե՛ս «Անեծքների կառուցվածքային տիպերը» կից վերլուծական տախտակը): Նշված տախտակը առավել

հատակ պատկերացնելու համար, հարկ է տալ որոշ մեկնաբանություններ և բացահայտել մի շարք մանրամասնություններ:

Պարզ տիպերի I հիմնատիպի անեծքները լինելով անիծողի անմիջական ցանկալի գործողություններ, ոճաբանորեն ընդհուպ մոտենում են հայհոյանքներին: Դրանք անեծքների ընդհանուր ժառանգության մեջ քանակով քիչ են և զիջում են հաջորդ՝ 2-րդ և 3-րդ հիմնատիպերին[15]:

1՝ միաբաղադրիչ տիպի անեծք՝ I և IV հիմնատիպերում բացակայում է:

Տիպաբանորեն, սակայն, նման անեծք գոյություն ունի և երևան է գալիս միայն երդումներում, իբրև երդման պայման. ընդ որում երդվողը դիմացինին իր իրավացիությունն հավաստիացնելու համար ինքնանիծման պայման է դնում ասելով՝ «Մեռնեմ, թե սուտ եմ ասում» կամ «Քոռանամ, թե տեսել եմ» և այլն:

I տիպի հաստատական ձևը III հիմնատիպում՝ հազվադեպ է: Տիպի տեղաբաշխման սխեման է. Ան AII+—III+—:

2՝ Երկբաղադրիչ տիպի անեծքների երկու բաղադրիչներն էլ կարող են արտահայտվել հարադիրներով, որոնք, ինչպես նշել ենք, էական արժեք չունեն անեծքի կառուցվածքի համար: Այս տիպում բառային բաղադրիչները կապակցվում են առարկայի և գործողության հարաբերությամբ, բայն նախադասվելու կամ վերջադասվելու սկզբունքով:

Այս 2 տիպը I հիմնատիպի տակ կարող է հանդես գալ նաև այնպիսի ձևով, երբ անեծքը դառնում է փաղաքշանք կամ թեթև հանդիմանություն («Բոյդ չթաղեմ»): Տիպի տեղաբաշխման սխեման է,ԱնA2 I+—II+III+—:

---

15 Այսուհետև համառոտագրություններով նշվելու են անեծքների հիմնատիպերը, տիպերի տեսակները, տիպերը, նրանց ձևերը և բայական դեմքերի հարակցումները: Ընդ որում, Ան հապավումով նշվելու են անեծքները, Օր-ով՝ օրհնանք-բարեմաղթությունները, Ե-ով՝ երդումները:

Հռոմեական I, II, III, IV թվանշաններով նշվելու են հիմնատիպերը, լատիներեն A և B գլխատառերով՝ տիպերի խմբերը (A—պարզ տիպեր, B—բաղադրյալ տիպեր) արաբական (1, 2, 3...) թվանշաններով նշվելու են տիպերը, +նշանով՝ հաստատական, —նշանով՝ ժխտական և ±նշաններով՝ խառը ձևերը. լատիներեն փոքրատառ a-ով նշվելու են բայական առաջին, b-ով՝ երկրորդ և c-ով՝ երրորդ դեմքերը, իսկ a+b, a+c և b+c գումարումներով՝ IV հիմնատիպի բայական համապատասխան դեմքերի հարակցումները:

Օրինակ՝ Ան. IV B 10+a+b բանաձևը նշանակում է՝ անեծք, որ պատկանում է տարբեր դիմավոր գործողություններով հիմնատիպի (IV) բաղադրյալ տիպերի խմբի (B) երկանդամ եռաբաղադրիչ տիպի (10) հաստատական ձևի (+) առաջին և երկրորդ դեմքերի բայերով հարակցված կազմությանը (a+b):

3՝ Եռաբաղադրիչ *տիպի անեծքներում՝ բաղադրիչների կապակցությունն արտահայտվում է. ա) վերադրով առարկա—գործողություն («Սև խաբարդ առնեմ»), բ) առարկա—վերադրով գործողություն («Տեղդ դարդակ տեսնեմ») և գ) երկու առարկա—գործողություն («Քիսումդ բարաքյաթ չնի»):*

Տիպի տեղաբաշխման սքեման է. ԱՆԱ 3I+—II+—III+—:

4, 6 և 8 **տիպերի** *անեծքներում՝ գործողությունը (բայ) զեղչված է. այն ըմբռնվում է մտքի զորությամբ: Զեղչման հետևանքով եռաբաղադրիչ անեծքը վերածվել է երկբաղադրիչի (4 տիպ), քառաբաղադրիչը՝ եռաբաղադրիչի (6 տիպ), հնգաբաղադրիչը՝ քառաբաղադրիչի (8 տիպ): Այս կարգի անեծքները կարող են ասվել նաև առանց գործողության զեղչման, ինչպես օրինակ՝ «Հող գլխուդ» նաև՝ «Հողն էղնի գլխուդ», «Քոռ մահը բուդդ» և «Քոռ մահը բռնի բուդդ» և այլն: Հետևաբար, գործողության զեղչումը տվյալ դեպքում ունի սոսկ ոճաբանական նշանակություն և խոսքը դարձնում է առավել սեղմ ու հակիրճ: Այդուհանդերձ, դրանք դիտվում են իբրև առանձին, բայց և գործողությամբ նույնաբաղադրիչ անեծքների հարակից տիպեր:*

Նշված երեք տիպերը հանդես են գալիս միայն III հիմնատիպի տակ, քանզի մյուս հիմնատիպերում զեղչված բայով անեծքների գոյությունը հնարավոր չէ: 4-րդ տիպի տեղաբաշխման սքեման է. ԱՆԱ4III+: 6-րդ տիպի տեղաբաշխումն է. ԱՆԱ6III+: Եվ վերջապես՝ 8-րդ տիպի տեղաբաշխումն է. ԱՆԱ8III+:

1—3 բառային բաղադրիչներով անեծքները կարելի է համարել ժողովրդական անեծքների դասական հակիրճ տիպերը: Չորս և ավելի բաղադրիչ ունեցող անեծքներն արդեն դուրս են գալիս անեծքների դասական բանաձևերի սահմաններից՝ նոր առարկաների ու վերադիրների հավելումով, որ պայմանավորված է, անշուշտ, անեծքների ընդարձակման ձգտումով, կամ, ավելի ճիշտ՝ անիծողի բացասական ցանկության առավել ծավալման հոգեբանական դրդումով:

5՝ Քառաբաղադրիչ տիպի *անեծքների բաղադրիչները շարադասվում են հետևյալ կապակցություններով.*

ա) առարկա—վերադրով առարկա-գործողություն («Բոյդ կոլոլ գերեզման անեմ»), բ) վերադրով առարկա-գործողություն—առարկա («Սև ջուրն իջնի աչկերդ»), գ) վերադրով առարկա-գործողություն-վերադրով առարկա («Քու կարմիր հինեն տամ հարավ քամուն»), դ) կրկնակի վերադրով առարկա-գործողություն («Տիրամոր քալաք յարեն հանիս»), ե) վերադրով առարկա-վերադրով գործողություն («Փորիդ ցավից բարով չազատվիս»), զ) ա-

ռարկա-գործողություն-վերադրով առարկա («Խըլլեկ հանիս նուասուզ իրեսիտ»), է) երեք առարկա-գործողություն («Գրողը տանի, ավահիդ քարուքանդ անե»):

Այս տիպի անեծքները ժխտական ձևերով հանդես են գալիս միայն II և III հիմնատիպերում: 5-րդ տիպի տեղաբաշխումն է. ԱնA5I+II+—III+—:

7՝ հինգ և ավելի բաղադրիչներով անեծքները քանակով քիչ են. անեծքների ընդարձակումը կատարվում է տակ վերադիրների հավելման հաշվին. անեծքների բաղադրիչները շարադասվում են հետևյալ կապակցություններով.

ա) կրկնակի վերադրով առարկա—վերադրով գործողություն («Օխտը սրբի դուռ չոքեչոք էրթաս»), բ) վերադրով առարկա—վերադրով առարկա-գործողություն («Մեկ փայտուճով յոթն էրիկ էրթաս»), գ) առարկա-գործողություն—կրկնակի վերադրով առարկա («Գողնքումն ուտիս ինձմեն փախցրած փուղիրը»), դ) կրկնակի վերադրով առարկա—առարկա-գործողություն («Ասածու բարեկան կրակը գլխից թափի»), ե) վերադրով առարկա—կրկնակի վերադրով գործողություն («Հավուր դատաստանին կալած-կապած, սևերես մնաս»), զ) կրկնակի վերադրով առարկա—վերադրով առարկա-գործողություն («Սև օձորքի տակին լավ օրդ անցկացնես»), է) եռակի վերադրով առարկա—առարկա գործողություն («Զինավոր սուրբ Գևորգի մզրախը սիրտդ խրի»):

Վեց բաղադրիչներով անեծքներն, առհասարակ, քանակով աննշան են, եղածներն էլ՝ վերադիրների կուտակումներով զարգացած ձևեր են:

7 տիպը I և III հիմնատիպերում ձեռքի տակ եղած նյութերով թեպետ առայժմ ժխտական ձևեր չի վկայել, բայց այդպիսիք միանգամայն հնարավոր են: Տիպի տեղաբաշխման սքեման է. ԱնA7I+II+—III+:

Հինգ և ավելի բաղադրիչներով անեծքների տիպով ավարտվում է անեծքների առաջին պարզ տիպաբանական խումբը: Վերջինիս մեջ ընդգրկված տիպերը, ինչպես ցույց է տալիս աղյուսակը, տեղաբաշխվում են միայն I, II և III հիմնատիպերի տակ: IV հիմնատիպում պարզ տիպի անեծքներ չեն կարող լինել, քանզի այդ հիմնատիպը ենթադրում է տարբեր դիմավոր գործողություններով հարակցված անեծքներ, որ միայն կարող է վկայել անեծքների հաջորդ՝ բաղադրյալ տիպաբանական խումբը:

12. Անեծքների վերաճման կամ ընդարձակման միտումը որքան էլ պայմանավորված է հոգեբանական դրդումով, այդուհան-

դերձ սահմանափակվում է քերականական որոշ ձևերում։ Մեկ գործողությամբ կամ մեկ բայով հնարավոր չէ այլևս բառային շատ բաղադրիչներ ընդգրկել, առանց կորցնելու անեծքի բանաձևային բնույթն ու դիպուկությունը, ուստի տիպաբանական զարգացման հաջորդ աստիճանում, անիծողի բացասական գաղափարի ընդլայնման ձգտումը, նեղվելով մեկ բայի ընձեռած իմաստային սահմանափակությունից, առաջադրում է մեկ կամ մի քանի այլ գործողության պահանջ ևս. անեծքի մեկ գործողությանը միանում է մեկ ուրիշը, և անեծքն ընդլայնվում է. առաջ են գալիս երկու և ավելի գործողությամբ անեծքներ, որոնք ի տարբերություն նախորդ տիպաբանական խմբի, ձևաբանորեն անդամատվում են։ Դրանք անեծքների անդամավոր կամ բաղադրյալ տիպերն են։

Այս խմբի անեծքները մեծ մասամբ բաղադրվում են պարզ տիպերի հարակցումից[16]։ Յուրաքանչյուր պարզ տիպ բաղադրյալ տիպի ներսում, մյուսից անջատվում է հատածով, որի հետևանքով էլ այդ բաղադրիչները վերածվում են տաղաչափական անդամների։ Վերջիններս միմյանց են աղերսվում ռիթմական շեշտով, ուստի

---

16 Սակայն պետք է նկատի ունենալ հետևյալը. բաղադրյալ տիպերի տիպային բաղադրիչներն առանձին վերցրած, միշտ չէ, որ անկախ անեծքներ են. դրանք, հաճախ ինքնին առած, դրական իմաստով խոսքեր են կամ սովորական բայեր, որ անեծքի են վերածվում միայն հաջորդ անդամների հետ ունեցած փոխադարձ կապի դեպքում։ Օրինակ. «Շատ դատիս՝ քիչ ուտիս», «Տաք պառկիս՝ պաղ ելլաս», «Ուրախությունով ֆինաս, տրտմությանով կյաս» և այլն, ուր ընդգծված անդամները առանձին վերառած անեծքի հետ ոչ մի կապ չունեն։ Հետևաբար, երբ բաղադրյալ տիպերի բաղադրիչները դիտում ենք իբրև անկախ տիպեր, ապա այդ ոչ թե բնույթի առումով, այլ սոսկ կառուցվածքի, այսինքն՝ հաշվի է առնվում բաղադրիչի տիպաբանական կառուցվածքը և ոչ թե նրա անեծք լինելու հանգամանքը։

Ասվա նաև. բաղադրյալ տիպերից պետք է խստորեն տարբերել սովորական կցումով միմյանց հարած տարբեր անեծքները, որոնք կենցաղավարելիս, հաճախ, հաջորդում են միմյանց, քանզի անիծողը միայն մեկ անեծքով չի բավարարվում։ Բանահյուսական ժողովածուներում ևս, բանահավաքները երբեմն, ինչպես լսել են, նույնությամբ իրար ետևից շարել են այդ տարբեր անեծքները։ Առաջին հայացքից դրանք թվում են միմյանց շարունակություն և նույնիսկ օրգանական մաս. իրականում, սակայն, այդպես չէ։ Մինչ նման կարգի անեծքներն իրարից անկախ, բայց երբեմն իմաստով մերձ, միմյանց են հարել սոսկ անիծողի հոգեբանական դրդումով միայն կամ բառերի սոսկ արտաքին նմանողությամբ, ապա բաղադրյալ անեծքները, թեպետ երբեմն տարբեր անեծքներից կազմված, միասնական ստեղծագործություն են։ Դրանք բազմիմաստ, բայց տրամաբանորեն միմյանց հաջորդող տարբեր ցանկությունների զուգորդում են, բոլորն էլ միևնույն ցանկության տարբեր կողմերն ու աստիճաններն արտահայտող։ Բաղադրյալ անեծքները կառուցվածքով բարդ, բայց միասնական ու ամբողջական գոյվածքներ են։

և դրվում են տաղաչափական որոշակի կշռույթի վրա, որն էլ հաճախ, հատկապես նույնահունչ կամ նմանահունչ վանկերով վերջացող դիմավոր բայերի դեպքում, առաջ է բերում հնչյունական ներդաշնակության՝ հանգակցություն, և անդամավոր անեծքներն ինքնին վերածվում են հանգավոր անեծքների:

Բաղադրյալ տիպերի բաժանումը կատարվել է միաժամանակ՝ թե՛ ըստ անդամների և թե՛ բառային բաղադրիչների քանակի:

9՝ Երկանդամ երկբաղադրիչ տիպը՝ *բաղադրյալ խմբի առաջին պարզագույն տիպն է, սոսկ երկու դիմավոր բայանեծքներից բաղադրված: Այս տիպը, առաջին պարզ տիպի նման, դարձյալ I հիմնատիպում բացակայում է և հանդես է գալիս միայն երգումներում, երբև երգման պայման («Քոռանամ ու կուրնամ, թե խաբար իմ»):*

Այս տիպն իր բոլոր ձևերն ունի II հիմնատիպում և միայն խառը ձևը՝ IV հիմնատիպում: 9 տիպի տեղաբաշխման բանաձևային պատկերն է. ԱնB9II±—±III±IV (a+b)±:

10՝ Երկանդամ եռաբաղադրիչ տիպը, *որ կազմված է լինում գործողություն+առարկա-գործողություն կամ՝ առարկա-գործողություն+առարկա՝ շարադասությամբ, առայժմ ձեռքի տակ եղած նյութերով վկայված է I հիմնատիպի հաստատական, II հիմնատիպի հաստատական և խառը, III հիմնատիպի հաստատական և IV հիմնատիպի խառը ձևերով: Այս իրագրությունը բանաձևի վերածելիս կստացվի՝ ԱնB10I+II+±III+IV (b+c)±:*

11՝ Երկանդամ քառաբաղադրիչ տիպը *հանդես է գալիս հետևյալ կապակցություններով. ա) առարկա-գործողություն±առարկա գործողություն («Քեզի սպանիմ, աչվիդ հանիմ»), բ) վերադրով գործողություն±վերադրով գործողություն («Շատ դատիս՝ քիչ ուտիս»), գ) վերադրով գործողություն+առարկա-գործողություն («Քիչ աշխատես՝ կաշիդ ուտես»), դ) գործողություն+վերադրով առարկա-գործողություն («Ընկնավորիս՝ թևիդ միսն ուտիս»), ե) առարկա-գործողություն+վերադրով գործողություն («Երեխա բերես՝ չըկնքած մեռնի»), զ) երկու առարկա-գործողություն+գործողություն («Գրողը բկիցդ կպչի, պոկ չգա»):*

Այս տիպը իր արտահայտությունն է գտել բոլոր հիմնատիպերում, բայց ոչ բոլոր ձևերով: 11 տիպի տեղաբաշխման բանաձևը հետևյալն է. ԱնBIII+II+—±III+±IV(a+b)+(b+c)+±:

12՝ Երկանդամ հնգաբաղադրիչ տիպը *բաղադրվում է հետևյալ կապակցություններով. ա) վերադրով առարկա-գործողություն+առարկա-գործողություն («Օձի բնին նստես՝ ձագ հանես»), բ) երկու առարկա-գործողություն+առարկա-գործողություն («Գլուխդ*

չանթա անցընես, դունդուռ իջնիս»), գ) վերադրով առարկա—առարկա-գործողություն+գործողություն («Էն աղուհացը աչքդ բռնի, քոռացնե»), դ) առարկա-գործողություն+երկու առարկա-գործողություն («Գետինը պատռի, քեզ մեջը առնի»), ե) առարկա-գործողություն+վերադրով առարկա-գործողություն («Տուն չգտնես, օձի բուն մտնես»), զ) առարկա—վերադրով առարկա+գործողություն («Բոյդ խամ թելով չափեմ՝ չը բանձրանաս»):

Տարբեր հիմնատիպերում տիպի տեղաբաշխման բանաձևային պատկերն է. ԱնB12I+II+−±III+±IV (a+b)+±(b+c)+±:

13՝ Երկանդամ վեց և ավելի բաղադրիչներով տիպը *հանդես է գալիս շարադասական հետևյալ սխեմաներով.*

ա) վերադրով առարկա-գործողություն+երկու առարկա-գործողություն («Աչքից լիսը հանեմ՝ տեղը փլփիլ (պղպեղ) ցանեմ»), բ) վերադրով առարկա-գործողություն+վերադրով առարկա-գործողություն («Լավ լարով մեռնիս, անբախտ ցավով մեռնիս»), գ) կրկնակի վերադրով առարկա-գործողություն+առարկա-գործողություն («Հորդ տան շեմքը շարվի, դուռը չփարվի»), դ) կրկնակի վերադրով առարկա—վերադրով գործողություն+վերադրով առարկա-գործողություն («Օխտը սրբի դուռ չոքեչոք երթաս՝ էլի մուրազդ չառնես»), ե) երկու առարկա-գործողություն+երկու առարկա-գործողություն («Աչքդ երգկին ըլնի, կռնակդ գետնին մաշի»), զ) երկու առարկա գործողություն+վերադրով առարկա-գործողություն («Փողդ հող դառնա՝ սատանի քամին տանի»), է) առարկա-գործողություն+երեք առարկա-գործողություն («Տոնտ էօրան տեռնա՝ կուկուն մաչին պյուն տինի»), ը) վերադրով առարկա — առարկա-գործողություն+երկու առարկա-գործողություն («Հախմխան տերը քեզ փչացնե, հասրաթդ փորդ թողնե»), թ) վերադրով առարկա-գործողություն+վերադրով առարկա—առարկա-գործողություն («Մեկ տուն նատիս՝ օխտը տուն ձանդ բռնե»), ժ) վերադրով առարկա—առարկա-գործողություն+վերադրով առարկա—առարկա-գործողություն («Կանանչ լուսդ էսօր-էգվան թափի, յարի ջրեր վրեչեդ էրթա»), ժա) վերադրով առարկա—վերադրով առարկա—գործողություն-առարկա+գործողություն-առարկա («Կոր բուեր, կոր անծեղներ՝ նստեն վերեդ, վա՜յ տան քե»):

Այս տիպի անեծքները կարող են ունենալ մինչև 8—9 բառային բաղադրիչներ. 10 և ավելի բաղադրիչներով անեծքներ հազվադեպ են:

Տարբեր հիմնատիպերում սույն 13 տիպի տեղաբաշխման

պատկերը հետևյալն է. ԱնB13I+II+−±III+±IV (a+b)+ +(b+c)+±։

14՝ մեկ գործողությամբ երկանդամ տիպի *անեծքները ծագել են միևնույն բայական գործողությունը կրկնող անեծքներից, անդամներից մեկի գործողության զեղչումով։ Այսպես. «Դարդ-ցավի գաս ու ասծու կրակի» անեծքն, ըստ երևույթին, ծագել է «Դարդ ցավի գաս ու աստծու կրակի գաս» ձևից, բայերի նույնության պատճառով՝ երկրորդ անդամի բայի զեղչումով։ Բայի զեղչմամբ, անեծքի իմաստը չի փոխվում. մեկ բայի զորությամբ շարունակում է ենթադրվել մյուսը. միաժամանակ շարունակում է պահպանվել նաև անեծքի անդամավոր կազմությունը։ Ուստի և առաջ են գալիս մեկ գործողությամբ երկանդամ անեծքներ։*

14 տիպը հանդես է գալիս հետևյալ կապակցություններով. ա) առարկա-գործողություն+առարկա («Քարեքար ըլիս ու սարեսար»), բ) վերադրով առարկա-գործողություն+վերադրով առարկա («Լավ լարանի գաս, հաստ պարանի»), գ) երկու առարկա-գործողություն+երկու առարկա («Խորհուրդդ փորդ մնա, մուրազդ՝ սիրտդ), դ) առարկա-վերադրով գործողություն+առարկա-վերադիր («Փորդ լիքը տեննես, կողքդ՝ դարդակ»), ե) առարկա-վերադիր+վերադրով առարկա-գործողություն («Կերածդ հարամ, առաջին ու վերջին թիքեն ըլնի»), զ) վերադրով գործողություն+վերադրով երկու առարկա («Օրումեջ ապրես, էն էլ՝ սև օրով ու դարդով»), է) վերադրով առարկա-վերադրով գործողություն+վերադրով առարկա-վերադիր («Մե ձեռ եռջև ըլնի, մե ձեռ՝ ետև), ը) առարկա-վերադրով առարկա+երեք առարկա-գործողություն («Օցը իրա պորտովը, հավքը թևովը սեյրիդ նստի»)։

14 տիպը՝ տարբեր հիմնատիպերում տեղաբաշխված է այսպես. Ան B14II+−III±IV (a+b)+։

15՝ զեղչված գործողությամբ երկանդամ տիպը *նախորդի զարգացումն է զեղչմամբ։ Եթե 14 տիպում միևնույն բայական գործողություններից մեկն էր միայն զեղչված, ապա այստեղ զեղչված է նաև մյուսը։ Այս տիպի անեծքների գործողությունները նախապես արտահայտվել են «լինել» վերացական բայով, որի զեղչմամբ, սակայն, գործողությունները շարունակել են մտքի զորությամբ ենթադրվել։ Այսպես. «Գլուխդ՝ քարին, երեսդ՝ պատին» զեղչված գործողությամբ անեծքն, հավանաբար, սկզբնապես ունեցել է «Գլուխդ քարին լինի, երեսդ պատին լինի» ձևը։ Այս ձևից, միանդամի գործողության զեղչմամբ կարող էր առաջանալ նախորդ՝ 14 տիպը («Գլուխդ քարին լինի, երեսդ՝ պատին»), իսկ երկանդամի գործո-*

ղությունների ղեղչմամբ՝ քննարկվող 15 տիպը («Գլուխդ՝ քարին, երեսդ՝ պատին»)։

15 տիպը շարադասվում է հետևյալ կապակցություններով. ա) երկու առարկա+երկու առարկա («Գրողը՝ բկիդ, մահն՝ երեսիդ»), բ) երկու առարկա+վերադրով առարկա—առարկա («Էն էլ քե, աստծու կրակն էլ քե»)։

15 տիպը, ըստ հիմնատիպերի, տեղաբաշխված է այսպես. ԱՆB15III+IV (a+b)+։

16՝ եռանդամ՝ երեք բաղադրիչով տիպը առկա է միայն II հիմնատիպի հաստատական ձևի տակ։ Մնացած հիմնատիպերում նրա գոյությունը բացառվում է։ I հիմնատիպում դարձյալ կարող է հանդես գալ միայն՝ իբրև երդման պայման («Քոռնամ, էփվիմ, էրնցիմ, թե խաբար իմ»)։

Տեղաբաշխման բանաձևն է. ԱՆB16II+։

17՝ եռանդամ չորս-հինգ բաղադրիչով տիպը շարադասվում է հետևյալ կապակցություններով. ա) գործողություն+գործողություն+առարկա-գործողություն («Գժվես, կատաղես, սար ու ձոր ընկնես»), բ) գործողություն+գործողություն+վերադրով առարկա-գործողություն («Ջըվես, չորանաս, չոր քարին պպզես»), գ). վերադրով գործողություն+գործողություն+գործողություն («Գիլլոփխարավ նստիս, ուշիս, տկըճըռվիս»), դ) առարկա-գործողություն+գործողություն+գործողություն («Բերանդ կախվի, չորանա ու չռռոտի»), ե) երկու առարկա-գործողություն+գործողություն+գործողություն («Տղաս թորենն ընգնե, խչըփանչի, կուտենա»), զ) գործողություն+առարկա-գործողություն+առարկա-գործողություն («Խելըռվիս, չոլեչոլ ընկնիս, մսերդ կրծիս»)։

17 տիպի տեղաբաշխման բանաձևն է. ԱՆB17II+III+IV (a+b)+(b+c)+։

18՝ եռանդամ վեց և ավելի բաղադրիչով տիպը շարադասվում է հետևյալ կապակցություններով. ա) երեք առարկա-գործողությունների հարակցում («Շորերդ սև անիմ, պոչերդ էրիմ, փրեստ քսիմ»), բ) երեք վերադրով գործողությունների հարակցում («Շատ դատես, քիչ ուտես, սովամահ մեռնես»), գ) վերադրով գործողություն+վերադրով գործողություն+առարկա-վերադրով գործողություն («Շատ աշխատես, քիչ ուտես, բչիցն էլ մահրում (զուրկ) նստես»), դ) առարկա-գործողություն + առարկա-գործողություն+վերադրով առարկա-գործողություն («Աստըծմեն գտնիս, գետինը մտնիս, սև հողը մտնիս»), ե) երկու առարկա-գործողություն+առարկա-գործողություն+առարկա-գործողություն («Ղա-

մատ (դաշույն) թոքտ ինի, տափավը կյաս, տափեն նհետ հվըսարվիս»), գ) վերադրով առարկա—առարկա-գործողություն+գործողություն+գործողություն («Մահի շալակը քեզ դնեմ, տանի, տանի»), է) վերադրով առարկա-գործողություն+առարկա-գործողություն+գործողություն («Սև օձ դառնայիր, պատը քաշվեիր, բհամ չգայիր»), ը) առարկա-գործողություն+վերադրով առարկա-գործողություն+գործողություն («Մրթակյուլ տեռնաս, ջանավարու նման մարդ կուխիս, ուտիս»), թ) երեք առարկա-գործողություն+առարկա—վերադրով առարկա-գործողություն+վերադրով առարկա-գործողություն («Արքայությունան քեզ վեչ փայ ինի, հոքիտ սև սատանան տանի, տյուժոխքեն ղարավուլչի չինի»)։

18 տիպը տեղաբաշխված է հետևյալ կերպ. ԱնB18I+II+±III+±IV (b+c)±։

19՝ Բառանդամ չորս բաղադրիչով տիպը *առկա է միայն II հիմնատիպի հաստատական և ժխտական ձևերի տակ։ Մնացած հիմնատիպերում նրա գոյությունը բացառվում է։ Միայն տեսականորեն կարող է հանդես գալ I հիմնատիպում, իբրև երդման պայման։ 19 տիպը շարադասվում է չորս բայանեծքների հարակցումով։ Տեղաբաշխման բանաձևն է.* ԱնB19II+—։

20՝ Բառանդամ հինգ և ավելի բաղադրիչներով տիպը *շարադասվում է հետևյալ կապակցություններով. ա) երկու գործողություն + առարկա-գործողություն + գործողություն («Անիծվես, չըչրկվես, ոսուցք աննես, ուռուցվորես»), բ) երկու գործողություն+երկու առարկա-գործողություն («Անիս, անխս, կետեն նստիս, ալեր մաղիս»), գ) երկառարկա-գործողություն+երկու գործողություն («Շուն տեռնաս, տանեըն ընգնիս, հաչիս, կնձկոնձաս»), դ) գործողություն+առարկա-գործողություն+նույնը («Նստիս՝ տակդ էրի, երկենաս՝ կյուլխտ էրի»), ե) գործողություն+առարկա-գործողություն+գործողություն+վերադրով առարկա-գործողություն («Մաշվես՝ մշմարանք դառնաս, հինվես՝ հին լախն դառնաս»), զ) վերադրով գործողություն+երեք գործողություն («Հուրն հավիտենից մաշես, իրիցես, մրրկես, մոխիր դառնաս»), է) չորս առարկա-գործողությունների հարակցում («Աչքդ ըլնի՝ չիս չըլնի, օլոքդ ըլնի՝ միս չըլնի»), ը) երկու վերադրով գործողություն+երկու առարկա-գործողություն («Քընց քարմաղ՝ քըքրիս, քընց ձարմաղ՝ ձարձրիս, տուներդի դնես, գլուխդ ի վերցուս»), թ) վերադրով առարկա—վերադրով առարկա-գործողություն + առարկա-գործողություն+վերադրով առարկա-գործողություն+վերադրով առարկա—վերադրով առարկա-գործողություն («Մի հատ քոշավ՝ օխտը*

տուն մտնես, թե տուն չգտնես՝ օձի բուն մտնես, օձի բնումն էլ ութ օր բուն մտնես»), ժ) երեք վերադրով գործողություն+առարկա-գործողություն («Ժուռ մնաս, խելքի չխասնես, խելքի չբարես, բար չի տաս»), ժա) երբ երկառարկա-գործողություն+առարկա-գործողություն («Ուրուշը հաց մուրա՝ դու ջուր մուրաս, ուրուշին դուռը մնաս, աչքդ չկշտանա»):

Այս կապակցություններից բացի, IV հիմնատիպի խառը ձևերի տակ, 20 տիպը կարող է հանդես գալ տարբեր կապակցություններով, որոնք արդեն որոշակի բանաձևումների ենթակա չեն և դուրս են գալիս անեծքների ավանդական բանաձևերի սահմաններից:

20 տիպի տեղաբաշխման պատկերն է. ԱնB20II+±III±IV (a+b)±(b+c)+±:

21՝ Երեք գործողությամբ եռանդամ տիպի անեծքներում, անդամներից մեկի գործողությունը, կից անդամի կամ նախորդ անդամներից մեկի գործողության հետ ունեցած նույնության պատճառով զեղչվում է և ենթադրվում է մտքի զորությամբ: 21 տիպի կապակցության ձևերից են. ա) գործողություն+առարկա-գործողություն+գործողություն+առարկա («Կանգնես՝ միսդ քրքրվի, նստես՝ ոսկորդ»), բ) առարկա-գործողություն—առարկա+առարկա+եռառարկա գործողություն+գործողություն («Նաշդ չէրթա ոչ տապան, ոչ գերեզման, խողը քեյ տեղ չիտա, չը սթրի»):

21 տիպը տեղաբաշխված է. ԱնB21III—IV (b+c)+:

22՝ զեղչված գործողությամբ եռանդամ տիպի անեծքներում, բացի («լինել») նույնության և վերացականության պատճառով, գործողությունն իսպառ զեղչված է և ենթադրվում է դարձյալ մտքի զորությամբ: Այս տիպը ի հայտ է գալիս միայն III հիմնատիպում: Հետևաբար, 22 տիպի տեղաբաշխման բանաձևն է. ԱնB22III+:

23՝ Հնգանդամ հինգ և ավելի բաղադրիչներով տիպը շարադասվում է հետևյալ կապակցություններով. ա) չորս գործողություն+առարկա-գործողություն («Հատիս, փթիս, քրքրվիս ու ծակծակվիս, ջրերդ էրթան»), բ) երկու գործողություն+երեք առարկա-գործողություն («Օրհնեմ՝ օղոճկես, ոտից-գլուխ պողոճկես, աչքդ տնկես, հոգին նստես»), գ) երկու երկառարկա գործողություն+առարկա-գործողություն+երկու գործողություն («Հացը ձի ըլլա, դուն շուն ըլլաս՝ ետևեն վազես, վազես՝ չհասնես»), դ) երեք երկառարկա գործողություն+առարկա-գործողություն+վերադիրով առարկա-գործողություն («Կուռդ գետին մաշի, աչքդ երկինքը մաշի, ոսկորներդ խուրդ ու խուրշկի ըլլի, «ախ» էնես՝ բուռմ հոգի հասրաթ մնաս»): Լինում են նաև նորանոր բաղադրիչներով մեծ անեծք-

ներ, որոնք դարձյալ շեղում են բուն ավանդական բանաձևերից և կառուցվածքի տեսակետից՝ էական արժեք չունեն։ 23 տիպի տեղաբաշխման պատկերն է. ԱնB 23 IV (a+b)+(b+c)+±։

24՝ հնգանդամ չորս գործողությամբ տիպի անեծքները քանակով շատ սակավ են. բաղադրվում են նույն եղանակով, ինչ նման տիպի անեծքներն առհասարակ (14, 21), այսինքն, կից անդամների բայերի նույնության դեպքում՝ մեկի զեղչմամբ։ Ձեռքի տակ եղած նյութերում, հիշյալ տիպն հանդես է գալիս միայն IV հիմնատիպում, հետևյալ կառուցվածքով. Երկառարկա գործողություն+երկու առարկա+առարկա-գործողություն+երկու գործողություն («Գետինը քուքուլթ դառնա, տոդ՝ կրակ, որդն գնես՝ էրի, փոթաթի»)։

24 տիպի տեղաբաշխման պատկերն է. ԱնB24IV (b+c)+։

25՝ վեց և ավելի անդամներով ու բաղադրիչներով տիպը շարադասությամբ հաճախ լույծ ամբողջություն է կազմում, որ հետևանք է տարբեր անեծքների հարակցման։ Կապակցման տեսակներից են. ա) առարկա-գործողություն+վերադրով առարկա-գործողություն+երեք առարկա-գործողություն+երկառարկա գործողություն («Աչքերդ սիվարկի, սև ջուր բռնի, պալեղդ խավարի, խավար մնա. մայրդ մնաս, ձեռներդ բռնող ման-կան տվող էլ չէղնի»), բ) եռակի վերադրով առարկա-գործողություն—առարկա+գործողություն+վերադրով առարկա-գործողություն—վերադրով առարկա+գործողություն+վերադրով գործողություն+երկու առարկա-գործողություն («Ականից էն մամուռ յարեն թափի վերեդ, բալաքվորես, աղան տեղ չմնա վեր լեշիդ սաղ. խըժխըժես, մնաս արան գյոխս, փիս-փիսլինգ ջանիցդ անպակաս էլնի»), գ) երեք գործողություն +առարկա-գործողություն + առարկա-գործողություն —վերադրով առարկա+առարկա-գործողություն—վերադրով առարկա («Օրշնեմ, օրշնեմ՝ օղոճկես, ոտնեն վեր պողոճկես, տակդ էցգիմ թանձր թաղիս, վրեն պառգիս քասուն ամիս»)։ Վերջին անեծքը զարգանալով նոր անդամներով ու բաղադրիչներով, հասնում է մինչև ութ անդամի։ Վեցից ավելի անդամներով անեծքներն, առհասարակ, հազվադեպ են. եղածները՝ միևնույն գաղափարի շուրջը պտտվող տարբեր անեծքների հարակցում են, թեպետ տրամաբանորեն աղերսված, բայց և խզման ենթակա։

25 տիպի տեղաբաշխումն ըստ հիմնատիպերի, հետևյալն է. ԱնB25 IV (a+b)+±(b+c)±։

Այս են հայկական անեծքների կառուցվածքային տիպերը, ըստ մեր մշակած տիպաբանական տախտակի։ Անեծքների տիպաբա-

նական տվյալներն առավել հստակ պատկերացնելու համար, ստորև գրվում են ամփոփիչ—համացուցային (սինոպտիկական) մի քանի աղյուսակներ։

13. Ա. Տիպաբանական միավորներ

Այս աղյուսակում ամփոփվում է անեծքների տիպաբանական միավորների քանակը։

1. Հիմնատիպեր 4
2. Տիպախմբեր 2 (A, B)
3. Տիպեր 25, որից
   A (պարզ տիպեր) 8
   B (բաղադրյալ տիպեր) 17
4. Ձևեր 3, որից
   A (պարզ տիպերն) ունեն միայն 2 (հաստատական, ժխտական)
   B (բաղադրյալ տիպերը) կարող են ունենալ 3 (հաստատական, ժխտական, խառը)
5. Բայերի դեմքերի հարակցումներ 2, որից
   I և II դեմքեր (a+b)
   II և III դեմքեր (b+c)

Բ. Տիպերի քանակն ըստ հիմնատիպերի[17]

I հիմնատիպն ունի	A 2.3.5.7	B 10.11.12.13.18
Ընդամենը՝	A 4 տիպ	B 5 տիպ A+B=9 տիպ
	A 50%	B 28,7% A+B=36%
II հիմնատիպն ունի.	A 1.2.3.5.7	B 9.10.11.12.13.14.16.17.18.19.20
Ընդամենը՝	A 5 տիպ	B 11 տիպ A+B=16 տիպ
	A 62,5%	B 64,7% A+B=64%
III հիմնատիպն ունի.	A 1.2.3.4.5.6.7.8	B 9.10.11.12.13.14.15.17.18.20.21.22
Ընդամենը՝	A 8 տիպ	B 12 տիպ A+B=20 տիպ
	A 100%	B 70 % A+B=80%

17 Վերոգրյալ «Տիպերի քանակն ըստ հիմնատիպերի» ամփոփիչ աղյուսակում, արաբական թվանշաններով գրված են տիպերի համարները, այսինքն, նշված են այն տիպերը, որոնք հանդես են գալիս տվյալ հիմնատիպի A և B խմբերում, անկախ իրենց բայական ձևերից։ Ընդհանուր հայտարարի են բերված տիպերի քանակը և նրանց տոկոսային արտահայտությունները, թե՛ առանձին խմբերում և թե՛ միասին վերառած։

Զերոյով (0) նշված է տիպի բացակայությունը տվյալ խմբում։ IV հիմնատիպի բայական I և II (a+b) և II և III (b+c) հարակցումներով ենթախմբերից յուրաքանչյուրը գրված է տիպահամարների առանձին շարքով։ Բայց դրանց ընդհանուր գումարի ժամանակ հաշվի չեն առնվել միևնույն տիպահամարի տակ ենթախմբերի զույգ դրսևորումները։

IV հիմնատիպն ունի. A 0 B (a+b) 9.10.11.12.13.14.15.17.18.20.23.24.25
(b+c) 10.11.12.13.17.20.21.23.24.25

Ընդամենը՝ A 0 B (a+b)=13 տիպ, (b+c)=10 տիպ } (a+b)+(b+c)=14 տիպ

A 0% B (a+b)=52%, (b+c)=40% } (a+b)+(b+c)=56%

Այս աղյուսակից պարզվում է, որ անեծքների տիպերի ամենաբարձր խտությունն ունի III հիմնատիպը (80%)[18], ամենացածրը՝ I հիմնատիպը (36%)։ Ըստ անեծքների տիպերի խտության աստիճանի, հիմնատիպերը դասավորվում են հետևյալ հերթականությամբ.

1. III հիմնատիպ = 80%
2. II հիմնատիպ = 64%
3. IV հիմնատիպ = 56%
4. I հիմնատիպ = 36%

Ըստ պարզ տիպերի խտության, բարձրագույն ցուցանիշը տալիս է դարձյալ III հիմնատիպը (100%), ցածրագույնը՝ IV հիմնատիպը (0%)։

Ըստ պարզ տիպերի խտության աստիճանի, հիմնատիպերի հերթականությունն է.

1. III հիմնատիպ = 100%
2. II հիմնատիպ = 62,5%
3. I հիմնատիպ = 50%
4. IV հիմնատիպ = 0%

---

18 *Այս և հաջորդ աղյուսակներում բերված թվերը (նույնը համապատասխանաբար վերաբերում է օրհնանքներին) որոշ չափով հարաբերական են և չեն կարող ունենալ լրիվ բացարձակ արժեք. Թեպետ տիպաբաժանումը կատարված է անեծքների մի քանի հազարի հասնող նմուշների հիման վրա, այդուհանդերձ չի բացառված մեր տիպաբանական տախտակում որոշ փոփոխություններ առաջ բերող անեծքների հայտնաբերման հնարավորությունը։ Տիպերի, ձևերի, բայական դեմքերի հարակցումների այն աղյուսակները, որոնք մեր տիպաբանական տախտակի վրա առայժմ մնում են բաց, դրանց մի մասը կարող են համալրվել անեծքների նորագյուտ նմուշներով։ Դրանք, հարկավ, վճռական փոփոխություն չեն կարող մտցնել անեծքների կառուցվածքային տիպաբանության ընդհանուր համակարգում, այդուհանդերձ մասնակի փոփոխությունների հնարավորությունն ինքնին զրկում է տիպաբանական միավորների թվական արտահայտությունները բացարձակ ճշմարտություններ լինելուց։*

Ըստ բաղադրյալ տիպերի խառնության, դարձյալ ամենաբարձր ցուցանիշը տալիս է III հիմնատիպը (70%), ամենացածրը՝ I հիմնատիպը (28,7%)։

Ըստ բաղադրյալ տիպերի խառնության աստիճանի, հիմնատիպերը դասավորվում են հետևյալ հերթականությամբ.

1. III հիմնատիպ = 70%
2. II հիմնատիպ = 64,7%
3. IV հիմնատիպ = 56%
4. I հիմնատիպ = 28,7%

Բերված աղյուսակից տեսնում ենք, ուրեմն, որ անեծքների տիպերի ճնշող մեծամասնությունը համախմբված է III և II հիմնատիպերում։ Ուրիշ կերպ ասած, հայկական անեծքները մեծ մասամբ անիծվողի՝ երրորդ անձի կողմից կամ էլ ինքնաբերաբար պատժվելու ցանկությունների արտահայտություններ են։ Եվ երբ նկատի ենք առնում, որ այդ երրորդ պատժիչ անձինք հիմնականում գերբնական էակներ են (աստված, հրեշտակներ, սրբեր, չար ոգիներ կամ էլ այդպիսիք մտածված կենդանիներ, առարկաներ ու բնության երևույթներ), ինչպես նաև այն, որ ինքնաբերաբար պատիժը ևս գերբնական հիմունք ունի, ապա մոտավորապես պարզվում է անեծքների՝ գլխավորապես այդ երկու հիմնախմբերում հանդես գալու պատճառը։

Ըստ երևույթին, բայական III և II դեմքերով անեծքները ծագումով ամենահինն են անեծքների տիպաբանական ընդհանուր համակարգում։ Այդ են վկայում Թեկուզ հին-արևելյան գրավոր հուշարձաններում, ինչպես նաև միջնադարյան վիմագիր արձանագրություններում և հին գրավոր այլ աղբյուրներում հաճախվող անեծքի բանաձևերը, որոնք իրենց տիպաբանական կառուցվածքով նույնանում են III հիմնատիպի անեծքներին։ Ճիշտ է, այդ հանգամանքը պայմանավորված է նաև նշված հուշարձաններում անեծքների կիրառությամբ, հետևաբար և ոճաբանական կառուցվածքի (պայմանով անեծքներ) բնույթով, այդուհանդերձ, փաստ է, որ անեծքի հնագույն օրինակները գալիս են հիմնավորելու արդի ժողովրդական անեծքների տիպաբանական մեծամասնության հնությունն ու ավանդականությունը։

Գ. Տիպերի քանակն ըստ ձևերի

1. Հաստատական ձև ունեն.

I A 2.3.5.7 B 10.11.12.13.18

II A 1.2.3.5.7 B 9.10.11.12.13.14.16.19.20

ԱՆ. ԱՆԵԾՔՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՏԻՊԵՐԸ

	ՏԻՊԵՐ	ՁԵՎԵՐ	ՀԻՄՆԱՏԻՊԵՐ: I ՀԻՄՆԱՏԻՊ Անիծողի անմիջական գործողություն	II ՀԻՄՆԱՏԻՊ Անիծվողի ինքնակա գործողություն	III ՀԻՄՆԱՏԻՊ Այլ անձի կամ առարկայի գործողություն	IV ՀԻՄՆԱՏԻՊ Տարբեր դիմավոր գործողություններ I և II դիմքերի համակցումներ (a+b)	II և III դիմքերի համակցումներ (b+c)
Ա. Պարզ տիպեր	Միաբաղադրիչ 1	Հաստատական Ժխտական		Չորնաս Չրճանչանաս	Փլանա Չըժրի		
	Երկբաղադրիչ 2	Հաստատական Ժխտական	Արևդ թաղեմ Բարըդ չուտեմ	Գյուլլաերով ըլիս Մուրազիդ չհասնիս	Արևդ մեռնի Մեռելդ չըհանգչի		
	Եռաբաղադրիչ 3	Հաստատական Ժխտական	Շորերդ տերտերին տամ Վուչ կապիմ կանաչ-կարմիրդ	Կպրն կարաս պատռիս Ձավակներուդ խեր չտեսնաս	Աչքիդ լուսը սիպտկի Քիսամդ բարաքյաթ չըլնի		
	Ընդլայնված գործողությամբ երկբաղադրիչ 4	Հաստատական Ժխտական			Հող գլխուդ		
	Քառաբաղադրիչ 5	Հաստատական Ժխտական	Պատանդ սև թելով կարեմ	Դատածդ բարձիդ տակն ուտես Սուրբ պսակի արժան չէղնիս	Կայինի կողոշ բուսի գլխուդ Պապուդ գանկը կողը չհանգչի		
	Ընդլայնված գործողությամբ եռաբաղադրիչ 6	Հաստատական Ժխտական			Քոռ մահը բուգդ		
	Հինգ և ավելի բաղադրիչներով 7	Հաստատական Ժխտական	Քու կարմիր հինեն տամ հարավ քամուն	Մեկ փապուճով չոթն էրիկ էրթաս Պատարագի ու ժամի սուրբ երես չտեսնես	Իգա արև տա դըրը պատիժ		
	Ընդլայնված գործողությամբ քառաբաղադրիչ 8	Հաստատական Ժխտական			Քու մուր՝ քու գլուխ		
Բ. Բաղադրյալ տիպեր	Երկանդամ երկբաղադրիչ 9	Հաստատական Ժխտական Խառը		Խալիս, խափանիս Չի հասնես ու չի պառըես Էրթաս՝ չիգաս Կատղիս՝ շրլերն ընկնիս Դու էլ չըլնես, անումդ էլ Ջնտաս ու սև խնտաս	Էրթալդ ըլի, գալդ չըլի Թև ու թիկունքդ խուրդ ըլի, թափի	Սատկիս՝ հըլլամ խավարեեր, ու ձեռքեդ խալսեմ	
	Երկանդամ եռաբաղադրիչ 10	Հաստատական Ժխտական Խառը	Միսդ խեվրիմ ուտիմ		Տունդ քանդվի, դուռդ շարվի	Անտեր մնաս՝ տերտերուն տամ	Ուտես՝ փորեդ դուս չգա Երեխա բերես՝ չհնցած մեռնի
	Երկանդամ քառաբաղադրիչ 11	Հաստատական Ժխտական Խառը	[illegible] հարեմ, ծոցդ դնեմ	Ընկնավորիս՝ քու [illegible] Սալըղլան չիթեա, սալըղլանյա չիգաս Բոր ունենաս՝ ղոնդ չունենաս Սև օձ էղնիս՝ պատերը քաշվիս	Գրողը բկիցդ կպչի՝ պոկ չգա Արևդ լորի պոչ դառնա, փչանա	Շնիֆորը վրեդ դնեմ՝ տակը մնաս	Սատկիս՝ ջուր տվող մի չըլլի Տայծեկվիս՝ անցուն որդ ինի չանդ Խեր չտեսնաս, փառաոդկ սատանին էղնի Դժոխքի փայ ըլնես, սատանեքը քեզ տանեն
	Երկանդամ հնգաբաղադրիչ 12	Հաստատական Ժխտական Խառը	Քեզ ջուրը քցեմ՝ ղարիդուս մոտ գամ	Աշխարհում լավ օր չտեսնես ու չլիանաս Ջոր քար էղնիս՝ պառդ չտաս	Տուն չկտնես, օձի բուն մտնես Հորդ տան շեմքը շարվի, դուռը չփարվի	Բոյդ խամ թելով չափեմ՝ չը բարձրանա Միսդ շունը ժամի, արինդ ես խմեմ	
	Երկանդամ վեց և ավելի բաղադրիչներով 13	Հաստատական Ժխտական Խառը	Աչքիդ լիսը հանեմ, տեղը կորեկ ցանեմ	Մենձ քնեն քնիս, պառի չըրն խմիս Բալքիմ վրա աթոռին նստես, քու փառաց պսակ չտեսնաս Քարեքար ապրիս՝ լավ օր երբեք չտեսնիս Խորհուրդդ փորդ մնա, մուրազդ՝ սիրտդ Ոչ բղաքիդ քինթը կապած հարսը տեսնաս, ոնց էլ՝ բեղը ըլլած որդի	Թունդիրդ տաք ըլնի, միջին բան չըլնի Սրտիդ միրեկանը, ջանիդ դուրեկանը մեռնի	Հացդ ձիավոր դառնա, դու՝ ոտավոր	Դեռնգուս մոն գաս, մի ճաթ հաց չճարես
	Մեկ գործողությամբ երկանդամ 14	Հաստատական Ժխտական Խառը			Գլուխդ՝ քարին, երեսդ՝ պատին	Դուն ոտաց, աղերդ ի գետին	
	Ընդլայնված գործողությամբ երկանդամ 15	Հաստատական Ժխտական Խառը		Կտրավիս, մանրավիս, փշրավիս			
	Եռանդամ երեք բաղադրիչով 16	Հաստատական Ժխտական Խառը			Բերանդ կռիվի, չորանա ու չառոտի	Պատանը մտնես, վեր տանենք, թաղենք	Քոռանաս ու կուրանաս, լուսդ խավարի
	Եռանդամ չորս-հինգ բաղադրիչով 17	Հաստատական Ժխտական Խառը		Դատես, դատես, մաղըում մնաս			Ուտես, ուտես՝ փորդ չի լցվը Ոտներդ կոտրի, անկյալ մնաս, դուս չգաս Նստես՝ տակդ էրի, երկնաս՝ կյալախտ էրի
	Եռանդամ վեց և ավելի բաղադրիչով 18	Հաստատական Ժխտական Խառը	Աղ անեմ, մրմուռ անեմ, աչքերդ ածեմ	Խավարիս ու քոռանաս՝ լույս չտեսնես Շատ դատես, քիչ ուտես, սովամահ մեռնես Սև օձ դառնայիր, պատը քաշվեիր, բնամ չգայիր Հալիս, օրթնիս, էրեցվիս, քըրըվիս Վեչ կնաչիս, վեչ ծլիս, վեչ ծաղկիս, վեչ պտկիս (պտղել)	Շատ դատին, քիչ ուտին, քչիցն էլ մահրում մնան Աբբայութեան քեզ վեչ փայ ինի, հոգիտ սև սատանան տանի, դյուժողքեն ղարավուլչի չինի քեզ		
	Քառանդամ չորս բաղադրիչով 19	Հաստատական Ժխտական Խառը				Պատանքդ կարեմ, պատանքդ շուլուլեմ շրեշտուն [illegible] բարև-բարիլոս չլսես ականջովդ	Ուրուշը հաց մուրա՝ դու ջուր մուրաս, [illegible]
	Քառանդամ հինգ և ավելի բաղադրիչներով 20	Հաստատական Ժխտական Խառը		Անիծվես, չըրչըրկվես, ուռույր առնես, ուռուցվորես [illegible]	Ա[illegible] ընի՝ [illegible], [illegible] ընի՝ [illegible]		
	Երեք գործողությամբ քառանդամ 21	Հաստատական Ժխտական Խառը			Նաշդ չէրթա ոչ տապան, ոչ գերեզման, խողը քեզ տեղ չիտա, չըաթրի		Կայնես՝ միսդ վեր թափի, Նստես՝ ոսկորներդ
	Ընդլայնված գործողությամբ քառանդամ 22	Հաստատական Ժխտական Խառը			Աճկիդ՝ չիրլերո, մատիդ՝ մատնաշուռ, մեճկիդ՝ ձիրձիգա (պալար), վուտիդ՝ քարխեճ	Օրհնեմ՝ օղտձկես, ոտից-գլուխ պղտձկես, տանըը տնկես, հավին նստես	Հոտիս, փթիս, քըըըվիս ու ծակծակվես, ջրերդ էրթան
	Հնգանդամ հինգ և ավելի բաղադրիչներով 23	Հաստատական Ժխտական Խառը					Հացը ձի ըլլա, դուն շուն ըլլաս՝ ետևեն վաղես-վաղես՝ չհասնես Գետինը բուրուրթ դառնա, ոտդ կրակ, որդն դնես՝ էրի, փաթաթի
	Հնգանդամ չորս գործողությամբ 24	Հաստատական Ժխտական Խառը					
	Վեց և ավելի անդամներով և բաղադրիչներով 25	Հաստատական Ժխտական Խառը				Օրշնեմ, օրշնեմ՝ օղտձկես, ոտնեն վեր պղտձկես, Տակդ էցվեմ թանձր թաղիս, վրեն պառդիս քառասուն ամիս Օրշնիմ, օրշնիմ՝ օղտձկես, Ոտնեն շուրի գլուխ պղտձկես, Ձեռիկ-մեռիկ ցավ առնես, Ուրբաթ օր ուտես, շաբաթ օր ըղկես, Կիրակմուտ՝ ժամ-պատարագին արժան չէղնես	Աչքերդ սիվտըկի, սև ջուր բռնի, Պարերդ խավարի, խավար մնա, Մայրիկ մնաս, ձեռներդ բռնող Ման-կան տվող էլ չէղնի

III A 1.2.3.4.5.6.7.8 — B 10.11.12.13.14.15.17.18.22
IV A 0 — B (a+b) 11.12.14.15.17.23.25
(b+c) 11.12.13.17.20.21.23.24

Ընդամենը՝ I A 4 *տիպ,* B 5 *տիպ,* A 50%, B 29,4%, A+B=36%
II A 5 *տիպ,* B 9 *տիպ,* A 62,5%, B 52,9%, A+B=56%
III A 8 *տիպ,* B 9 *տիպ,* A 100%, B 52,9%, A+B=68%
IV A 0 B (a+b)=7 *տիպ,* A 0%, B (a+b) 41,1%
(b+c)=8 *տիպ,* (b+c) 47%
B (a+b)+(b+c)=11 *տիպ* B (a+b)+(b+c)=64,7%

2. *Ժխտական ձև ունեն.*

I A 2.3 — B 0
II A 1.2.3.5.7 — B 9.11.12.13.14.19
III A 1.2.3.5 — B 21
IV A 0 — B (a+b) 0
(b+c) 0

Ընդամենը՝ I A 2 *տիպ,* B 0 *տիպ,* A 25%, B 0%, A+B=8%
II A 5 *տիպ,* B 6 *տիպ,* A 62,5% B 35,3%, A+B=44%
III A 4 *տիպ,* B 1 *տիպ,* A 50%, B 6%, A+B=20%
IV A 0 *տիպ,* B 0 *տիպ,* A 0%, B 0%, A+B=0%

3. *Խառը ձևեր ունեն*[19].

I A 0 — B 0
II A 0 — B 9.10.11.12.13.17.18.20
III A 0 — B 9.11.12.13.18.20
IV A 0 — B (a+b) 9.12.20.25
(b+c) 10.11.12.13.17.20.23.25

Ընդամենը՝ I A 0 *տիպ,* B 0 *տիպ,* A 0%, B 0%
II A 0 *տիպ,* B 8 *տիպ,* A 0%, B 47%
III A 0 *տիպ,* B 6 *տիպ,* A 0% B 35,3%
IV A 0 *տիպ,* B (a+b) 4 *տիպ,* A 0%, B (a+b) 23,5%
(b+c) 8 *տիպ,* (b+c) 47%
B (a+b)+(b+c)= 9 *տիպ,* B (a+b)+(b+c)=53%

Աղյուսակից պարզվում է, որ հիմնատիպերից տիպերի հաստատական ձևի ամենաբարձր ցուցանիշը տալիս է III հիմնատիպը (68%) և ամենացածրը՝ I հիմնատիպը (36%)։

Ըստ տիպերի հաստատական ձևի ցուցանիշների՝ հիմնատիպերը դասակարգվում են հետևյալ հերթականությամբ.

1. III հիմնատիպ = 68%
2. IV հիմնատիպ = 64,7%

19 *Այս աղյուսակի խառը ձևերի ընդհանուր հայտարարի մեջ չի նշվում պարզ և բաղադրյալ տիպերի (A+B) միասնական տոկոսը, որովհետև պարզ տիպերն առհասարակ չունեն խառը ձևեր։*

3. II հիմնատիպ = 56%
4. I հիմնատիպ = 36%

Տիպերի ժխտական ձևի ամենաբարձր ցուցանիշը տալիս է II հիմնատիպը (44%), իսկ ամենացածրը՝ IV հիմնատիպը (0%)։

Ըստ տիպերի ժխտական ձևերի ցուցանիշների, հիմնատիպերի հերթականությունն է.

1. II հիմնատիպ = 44%
2. III հիմնատիպ = 20%
3. I հիմնատիպ = 8%
4. IV հիմնատիպ = 0%

Խառը ձևեր չունեն պարզ տիպերը, իսկ բաղադրյալ տիպերի խառը ձևերն ըստ հիմնատիպերի՝ հետևյալ պատկերն են ներկայացնում.

1. IV հիմնատիպ = 53%
2. II հիմնատիպ = 47%
3. III հիմնատիպ = 35,3%
4. I հիմնատիպ = 0%

Ուրեմն, խառը ձևերից բարձրագույն ցուցանիշը տալիս է IV հիմնատիպը (53%). և դա հասկանալի է, քանզի բաղադրված է տարբեր բայական դեմքերի հարակցումից։ Ամենացածր ցուցանիշը (0%) տալիս է I հիմնատիպը։

4. ՕՐՀՆԱՆՔ-ՄԱՂԹԱՆՔՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՏԻՊԵՐԸ

14. Օրհնանքները բնույթով և իմաստով անեծքների հակապատկերն են։ Տիպաբանական կառուցվածքով, սակայն, գրեթե նույնանում են անեծքներին։

Բաժանվում են անեծքների նման՝ չորս հիմնատիպի։ Բոլոր հիմնատիպերն, անխտիր, ունեն հաստատական և ժխտական ձևեր. II և IV հիմնատիպերում կան նաև հաստատական և ժխտական խառը ձևերով մաղթանք-օրհնանքներ։ I և IV հիմնատիպերն ընդգրկում են քանակով շատ քիչ օրհնանք-մաղթանքներ. օրհնանքների հիմնական մասը մտնում է II և հատկապես III հիմնատիպի մեջ։ Եվ դա հասկանալի է. բայական առաջին դեմքով օրհնանք ներկայացնելն անգամ դժվար է այն պատճառով, որ օրհնությունները պատկանում են ցանկության այն խոսքերի թվին, որոնց կատարումը աղերսվում է գերբնական ուժերից ու ոգիներից (աստված, սուր-

ներ, զանազան ոգիներ և այլն) կամ էլ կամեցվում է դիմացինին (այսինքն օրհնվողին) ինքնըստինքյան կատարվելու համար, դարձյալ գերբնական ներքին ինչ-որ զորությամբ: Իսկ օրհնողը կամ բարեմաղթողը, ցանկության տվյալ խոսքի դեպքում, պասիվ դեր է ստանձնում. նա միայն կամեցող է (ասող), բայց ոչ կատարող: Ուստի և օրհնանք-մաղթանքների գերակշռող մասը բայական II և III դեմքերով գործողություններ են (մասամբ և խառը դեմքերով): Իսկ բայական առաջին դեմքով օրհնանքները, բնույթով մոտենում են փաղաքշական խոսքերին, բայական առաջին դեմքին անհարիր լինելու պատճառով:

Օրհնանք-բարեմաղթությունների տիպաբանական սքեմատիկ պատկերը տրված է «Օրհնանքների կառուցվածքային տիպերը» կից տախտակում, որի մեկնաբանության մանրամասները շարադրված են ստորև:

1՝ Միաբաղադրիչ տիպն *առկա է միայն II և III հիմնատիպերում: Տիպի տեղաբաշխման պատկերն է. Օր* A1*II+III+*:

2՝ Երկբաղադրիչ տիպը *հանդես է գալիս մեծ մասամբ առարկա-գործողություն, մեկ-մեկ էլ՝ գործողություն-առարկա կապակցություններով: Տիպի տեղաբաշխման պատկերն է. Օր.* A2*I+II+III+*:

Այս տիպը կարող է հանդես գալ II և III հիմնատիպերում նաև ժխտական ձևով. «Չմեռնես դու» կամ «Արևդ չմեռնի» բանաձևերով, որոնք ձևով թեպետ մաղթանքներ են, բայց ոճաբանական կիրառությամբ՝ առավելապես թեթև հանդիմանական կամ փաղաքշական երանգ ունեն, ուստի և չեն ներառվում օրհնանքների տիպաբանական տախտակի մեջ:

3՝ Եռաբաղադրիչ տիպը *հանդես է գալիս հետևյալ կապակցություններով. ա) առարկա-վերադիր-գործողություն («Ծառդ կանաչած տեսնեմ»), բ) վերադրով առարկա-գործողություն («Խոլով-խոնչով տունդ գամ»), գ) երկառարկա-գործողություն («Աստված արևդ երկարացնի»), դ) առարկա-գործողություն-առարկա («Աստված օղորմի հոգուն»):*

Թեպետ տիպաբանական տախտակի վրա չի նշված I հիմնատիպի ժխտական ձևով օրինակ, բայց տեսականորեն դրա գոյությունն հնարավոր է (դիցուք՝ «Քո վատ օրը չտեսնեմ» ձևով): Տիպի տեղաբաշխման պատկերն է. Օր A3*I+II+—III+—*:

4՝ Զեղչված գործողությամբ երկբաղադրիչ տիպը *գոյացել է բայի («լինել») զեղչմամբ՝ վերջինիս վերացական և հասկանալի լինելու պատճառով: Սա փաստորեն 3 տիպն է՝ գործողության զեղչմամբ:*

Բաղադրիչները շարադասվում են. ա) վերադիր—առարկա («Բարի ճանապարհ»), բ) առարկա—վերադիր («Օջախդ շեն»), և գ) առարկա—առարկա («Բերանդ տաճար») կապակցություններով:

Տիպի տեղաբաշխման սխեման է. Օր. A 4 III+:

5՝ Եռաբաղադրիչ տիպը շարադասվում է հետևյալ կապակցություններով. ա) վերադրով առարկա—առարկա-գործողություն («Օխտը որդով մեղան նստես»), բ) կրկնակի վերադրով առարկա-գործողություն («Որդկերանցդ արևի խերը տեսնաս»), գ) առարկա—վերադրով առարկա-գործողություն («Ցոգիդ սրբերի դասը դասվի»), դ) երկու առարկա—վերադիր-գործողություն («Աստված ճրագդ վառ պահի»), ե) առարկա—երկու վերադիր-գործողություն («Տուն ու դուռդ շեն ու կանաչած տեսնեմ»), զ) եռառարկա-գործողություն («Աստված քեզ արևշատություն տա»):

Տիպի տեղաբաշխման սխեման է. Օր A5I+II+—III+—:

6՝ Զեղչված գործողությամբ եռաբաղադրիչ տիպը գոյանում է նախորդ քառաբաղադրիչ տիպի վերացական և հասկանալի բայական բաղադրիչի զեղչումով և հանդես է գալիս միայն III հիմնատիպում: Շարադասվում է հետևյալ կապակցություններով. ա) վերադրով առարկա—առարկա («Աստծու ումիկը քեզ»), բ) երեք առարկա («Աջն ու խաչը քեզ պահապան»), գ) երկու առարկա—վերադիր («Աստված քե քաղցր»):

Տիպի տեղաբաշխման սխեման է. Օր A6 III+:

7՝ Հինգ բաղադրիչով տիպը շարադասվում է ներքոգրյալ կապակցություններով. ա) երկու առարկա—վերադրով առարկա-գործողություն («Աստված հոգին լսի բաժին էնե»), բ) առարկա—երկու վերադրով առարկա-գործողություն («Աստված ձեր կանանչ արև բաշխի»), գ) երկու վերադրով առարկա—առարկա-գործողություն («Օխտնմնում սուրբ Կարապետը մուրազդ տա»), դ) առարկա-գործողություն—կրկնակի վերադրով առարկա («Աստված ողորմի ճին ու նոր ննջեցելոց հոգուն»), ե) առարկա—վերադրով առարկա—առարկա-գործողություն («Աստված օխտն աթոռով քեզ օրհնե»), զ) երկու վերադիր—վերադրով առարկա-գործողություն («Բարով, ուրախությունով սիրտդ մուրազին խասնիս»), է) վերադրով առարկա-գործողություն—առարկա («Լուս աչոք տեսնենք զքու կանանչ ու կարմիր»), ը) վերադրով առարկա—վերադրով առարկա-գործողություն («Մեռնի օրհնությունը խիզնիդ արևին ընկի»), թ) երկու վերադրով առարկա—գործողություն-առարկա («Սուրբ կեսավոր հրեշտակներն հասնեն քեզ») և այլն:

ՕՐ. ՕՐՀՆԱՆՔՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՏԻՊԵՐԸ

ՏԻՊԵՐ	ՁԵՎԸ	ՀԻՄՆԱՏԻՊԵՐ					
		I ՀԻՄՆԱՏԻՊ Օրհնողի անմիջական գործողություն	II ՀԻՄՆԱՏԻՊ Օրհնվողի ինքնակա գործողություն	III ՀԻՄՆԱՏԻՊ Այլ անձի կամ առարկայի գործողություն	IV ՀԻՄՆԱՏԻՊ Տարբեր դիմային գործողություններ I և II դեմքերի հարակցում (a+b)	I և III դեմքերի հարակցում (a+c)	II և III դեմքերի հարակցում (b+c)
Ա. ՊԱՐԶ ՏԻՊԵՐ							
Միաբաղադրիչ 1	Հաստատական ժխտական		Զորանաս	Ապրի			
Երկբաղադրիչ 2	Հաստատական ժխտական	Բաղը համբուրեմ	Մուրազիդ հասնես Նեղութենն չտեսնաս	Ապրի տերդ Ասրոծ չի խըմըշը			
Եռաբաղադրիչ 3	Հաստատական ժխտական	Ծառդ կանաչած տեսնեմ	Ցամաք աչքով ծերանաս Դուշմընի սրտով ըլես	Աստված ողորմի հոգուն Ոտդ քարին չառնի			
Զեղչված գործողությամբ երկբաղադրիչ 4	Հաստատական ժխտական			Բարձդ բարի			
Քառաբաղադրիչ 5	Հաստատական ժխտական	Տուն ու դուռդ շեն ու կանաչած տեսնեմ	Օխտը որդու հեր ըլես Բարով սև օր չտեսնաք	Աստված ճրագդ վառ պահի Աստված երկնի ձեռքդ չկարճացնի			
Զեղչված գործողությամբ եռաբաղադրիչ 6	Հաստատական ժխտական			Հացի սուփրին լիություն			
Հինգ բաղադրիչներով 7	Հաստատական ժխտական	Լուս աչքդ տեսնինք քու կանանչ ու կարմիր	Հորդ օջախին բարի հիշատակ մնաս	Տուրքդ աստծու արդար գանձանակն ընկնի Քրիստոս բըղի վառ օր չիտա			
Զեղչված գործողությամբ քառաբաղադրիչ 8	Հաստատական ժխտական			Աղու ծիծը քեզ բարեխոս Քրիստոս աստվածը տուն ու տեղդ իր բերանով օրհնի			
Վեց բաղադրիչով 9	Հաստատական ժխտական			Աստուծ ըմ դուշմընին էլ էշանց տա իմ քաշած օրը			
Յոթ բաղադրիչով 10	Հաստատական ժխտական			Ավաղ սրը նշան ձեր չարն բարի դառցուցի			
Ութ և ավելի բաղադրիչներով 11	Հաստատական ժխտական			Աստված օղորմի էս գերդաստանի բոլոր հին ու նոր ննջեցյալների հոգուն			
Բ. ԲԱՂԱԴՐՅԱԼ ՏԻՊԵՐ							
Երկանդամ երկբաղադրիչ 12	Հաստատական ժխտական հարց		Ապրիս, զորանաս	Որդիքդ ապրին ու զորանան			
Երկանդամ եռաբաղադրիչ 13	Հաստատական ժխտական հարց		Ջըրանըս ու ապրըս Կանչընաս, հոգով ուրախանաս Մին ցանես՝ հազար վերցնես	Աստված տա՝ շըխնայե Զորդ զորանա, արեդ կանաչի		Ես պակսեցուցի՝ աստված ավելցունե	Դաշրած չեշմեն (աղբյուր) երթաս՝ վազե
Երկանդամ քառաբաղադրիչ 14	Հաստատական ժխտական հարց		Մարդամիջից չզրկվես, փառքամեջ ըլնես Մեկ բարձի ծերանաք, միասին ապրեք	Աստված չարը խափանե, բարին առաջնորդե		Խնդրեք աստծուց՝ վատ օրեր ցույց չտա	Ապրիս, աստծու օրհնությունը վրադ ըլլի Դիլօրն էթաս՝ ոտդ քարին չդիպնի
Երկանդամ հնգաբաղադրիչ 15	Հաստատական ժխտական հարց		Էնպես նստես-կանես, օր դուշմընին լեզվատեղ չէղնի Լավ բախտ ունենաս, լավ օրեր տեսնես	Կալիդ բամի ըլի, ջաղացիդ հերթ ըլի		Աստված իմ հոգին առնե, քու վատ օրը չտեսնամ	Վատ օրդ էս ըլնի, էլ ուրիշը չտեսնես
Երկանդամ վեց բաղադրիչներով 16	Հաստատական ժխտական հարց		Ում որ ձեռք մեկնես՝ դատարկ ետ չդառնաս	Գնացած ճանապարհդ բարի ըլի, դատաստանդ քաղցր ըլի			Շեն օջախդ շեն մնա՝ որքան դու կուզես
Երկանդամ յոթ բաղադրիչներով 17	Հաստատական ժխտական հարց		Անումով հարս դառնաս, բարով-խերով իմ տարը դառնաս	Աստուծ մինդ հազար անի, երկնի կուռդ չըկարճացնի Տեր աստուծը թուրդ կտրուկ անի, բախտդ երիցան անի Ձեր մեկ օր հազար անի, հոգուց, մարմնուց չհանի		Քեզ վրա արև ծագի, թող ես մթնումը մնամ	Սրտիդ մեջ ինչ ունիս՝ աստված լավ-կատարող ըլի
Երկանդամ ութ և ավելի բաղադրիչներով 18	Հաստատական ժխտական հարց		Սրտիդ մուրազին, հոգուդ սիրածին խասնիս	Աչքդ լիս՝ բախտավոր զավակ ըլի Թաչրիցդ ալյուր, տաշտիցդ հաց չըպակսի			
Մեկ գործողությամբ երկանդամ 19	Հաստատական ժխտական հարց			Մեղացդ՝ թողություն, հոգուդ՝ արքայություն			
Զեղչված գործողությամբ երկանդամ 20	Հաստատական ժխտական հարց			Սլի, ծաղկի, զորանա			
Եռանդամ երեք բաղադրիչով 21	Հաստատական ժխտական հարց		Սլիս, ծաղկիս, զորանաս	Ծառդ ծլի, ծաղկի ու փնչփնչոտի			
Եռանդամ չորս-հինգ բաղադրիչով 22	Հաստատական ժխտական հարց		Սլիս, ծաղկիս, վարդ բոլորիս	Աստված օխնե, շեն պահե, ձեր սեղանը շեն պահե			
Եռանդամ վեց և ավելի բաղադրիչներով 23	Հաստատական ժխտական հարց		Հալիվորես, ծերանաս, թոռան-ծոռան տեր դառնաս	Հացդ հայր Աբրահամու հացը դառնա, որ ոնչ հատնի, ոնչ պակասի			
Երկու գործողությամբ եռանդամ 24	Հաստատական ժխտական հարց			Աստոծ լավութին տա, առողջութին ու սաղ-սըլամաթ ջան տա			
Մեկ գործողությամբ եռանդամ 25	Հաստատական ժխտական հարց		Ամեն տարի բարով էս օր խասնիս՝ ուրախ սրտով, ցամաք աչքով				
Քառանդամ չորս բաղադրիչով 26	Հաստատական ժխտական հարց		Ապրիս, զորանաս, ծլիս, ծաղկիս	Ապրի, զորանա, ծլի, ծաղկի			
Քառանդամ հինգ և ավելի բաղադրիչներով 27	Հաստատական ժխտական հարց		Շատ դատես՝ շատ ուտես, քիչ դատես՝ էլի շատ ուտես	Աստուծ վարթիքա զորացնե, ծլին, ծաղկին, բարաաու ծառ ըլին			Ջուրն էրթաս՝ կանաչդ ծլի
Երեք գործողությամբ քառանդամ 28	Հաստատական ժխտական հարց						
Զեղչված գործողությամբ քառանդամ 29	Հաստատական ժխտական հարց						
Հնգանդամ հինգ և ավելի բաղադրիչներով 30	Հաստատական ժխտական հարց						
Հնգանդամ չորս գործողությամբ 31	Հաստատական ժխտական հարց						
Վեց և ավելի անդամներով և բաղադրիչներով 32	Հաստատական ժխտական հարց						

Տիպի տեղաբաշխման սքեման է. ՕրA7I+II+III+—:

8՝ զեղչված գործողությամբ քառաբաղադրիչ տիպը գոյանում է նախորդ տիպի բայի զեղչումով, երբ մտքի զորությամբ կռահվում է բայիմաստը: Հանդես է գալիս միայն III հիմնատիպում:

Տարածման սքեման է. ՕրA8III+:

9՝ վեց բաղադրիչով տիպը շարադասվում է հետևյալ կապակցություններով. ա) առարկա—վերադրով առարկա—վերադրով առարկա-գործողություն («Ասֆած խերիբներուտ բանին-գործին խելքի աջողուցին տա»), բ) վերադրով առարկա—երեք առարկա-գործողություն («Էնոր հողով աստված ձեզի կյանք տա»), գ) վերադրով առարկա—առարկա—վերադրով առարկա-գործողություն («Քրիստոս աստվածը տուն ու տեղդ իր բերանով օրհնե»), դ) վերադրով առարկա—կրկնակի վերադրով առարկա-գործողություն («Տված ողորմությունդ աստծու հախ կշեռքն ընկնի»), ե) կրկնակի վերադրով առարկա—առարկա—առարկա-գործողություն («Սուլթան սըբ Կարապետ ըլի օգնական-պահապան էղնի»), զ) երկու առարկա—կրկնակի վերադրով առարկա-գործողություն («Աստված քեզ մեկ բարի դուռ բանա»):

Այս տիպի տարածման սքեման է. ՕրA9III+—:

10՝ յոթ բաղադրիչով տիպը շարադասվում է հետևյալ կապակցություններով. ա) կրկնակի վերադրով առարկա—վերադրով առարկա-գործողություն («Ավագ սըբ Նշան՝ ձեր չարն բարին դարձուցի»), բ) երկու առարկա—վերադրով առարկա—վերադրով առարկա-գործողություն («Աստված նրանց չար աչքից, չար նիաթից ազատ պահի»), գ) երկու առարկա—կրկնակի վերադրով առարկա—առարկա-գործողություն («Աստված տղոցդ մին հափուռ վեզը իրեսետ արժան անե») և այլն:

Տիպի տեղաբաշխման սքեման է. ՕրA10III+:

11՝ ութ և ավելի բաղադրիչներով տիպը օրհնանքների պարզ խմբի տիպերից ամենաընդարձակն է: Ութից ավելի բաղադրիչ ունեցող օրհնանքները հազվադեպ են: Պետք է նկատել, որ օրհնանքի պարզ տիպերը առավել ընդարձակվելու միտում ունեն, քան համապատասխան տիպերի անեծքները:

Այս տիպը շարադասվում է հետևյալ կապակցություններով. ա) կրկնակի վերադրով առարկա—կրկնակի վերադրով առարկա—առարկա-գործողություն («Երկնային թագավոր աստված ուր յոթն աթոռով ձե օրհնի»), բ) կրկնակի վերադրով առարկա—առարկա—կրկնակի վերադրով առարկա—գործողություն («Էն սուրփ Ամենափրկիչը քեզ մին վըսկըքյաքյուլ տղա տա»), գ) առարկա-

գործողություն—հինգ վերադրով առարկա («Աստված օղորմի էս գերդաստանի բոլոր հին ու նոր ննջեցյալների հոգուն), գ) վերադրով առարկա—եռակի վերադրով առարկա—առարկա-գործողություն («Տիրամոր օրհնությեն, Տերական որդվո մեջ պատարագ բեչ գաթ ու մաղաթ կայնեն») և այլն:

Տիպի տեղաբաշխման սքեման է. 0րA11II+:

Այս տիպով ավարտվում է օրհնանք-մաղթանքների պարզ տիպաբանական խումբը. հաջորդ՝ 12 տիպից սկսվում են օրհնանքների բաղադրյալ տիպերը:

15. **12՝ Երկանդամ երկբաղադրիչ տիպը** հանդես է գալիս միայն երկրորդ հիմնատիպում, եզակի և հոգնակի դեմքերով, անդամների անմիջական կամ շաղկապով կապակցությամբ («Խնդաս, խիթարվես», «Մենծրնաք ու ծերանաք»):

Տեղաբաշխման սքեման է. 0րB12II+±:

13՝ Երկանդամ եռաբաղադրիչ տիպը շարադասվում է հետևյալ կապակցություններով. ա) գործողություն+առարկա-գործողություն («Կանչնաս, հոգով ուրախանաս»), բ) առարկա-գործողություն+գործողություն («Որդիքդ ապրին ու զորանան»), գ) գործողություն+վերադրով գործողություն («Զորանաս, շատ ապրես»):

Տեղաբաշխման սքեման է. 0րB13II+III+±:

14՝ Երկանդամ քառաբաղադրիչ տիպը շարադասվում է հետևյալ կապակցություններով. ա) առարկա-գործողություն+առարկա-գործողություն («Զորդ զորանա, արեդ կանանչի»), բ) վերադիր-գործողություն+վերադիր-գործողություն («Բարով էրթաս, բարով գաս»), գ) վերադիր-գործողություն+առարկա-գործողություն («Բարով մաշես, ջուրը քաշես»), դ) առարկա-գործողություն+վերադիր-գործողություն («Մարդամիջից չջոկվես, փառլամիշ ըլնես»), ե) վերադրով առարկա-գործողություն+գործողություն («Դադրած չեշմեն էրթաս՝ վազե»):

Տիպի տեղաբաշխման սքեման է. 0րB14II+±III+IV (a+c)+(b+c)+:

15՝ Երկանդամ հնգաբաղադրիչ տիպը շարադասվում է հետևյալ կապակցություններով. ա) վերադիր-գործողություն+երկու վերադիր-գործողություն («Շեն մնաս, շեն ու պայծառ մնաս»), բ) առարկա-գործողություն+վերադրով առարկա-գործողություն («Լիս դառնաս, լսի փայ դառնաս»), գ) վերադիր-գործողություն+երկու առարկա-գործողություն («Բարով մաշես, հինն ինձ բաշխես»), դ) վերադրով առարկա-գործողություն+վերադիր-գործողություն («Մեկ բարձի ծերանաք, միասին ապրեք»), ե) երկ-

առարկա-գործողություն+առարկա-գործողություն («Աստված ձենդ լսե, խնդիրքդ կատարե»), զ) վերադրով առարկա—առարկա-գործողություն+գործողություն («Ջոր գետնին ոտ դնես՝ կանանչի»), է) երկառարկա-գործողություն+վերադիր-գործողություն («Ոտդ քարի չգա՝ անքյատար մնաս») և այլն:

Տիպի տեղաբաշխման պատկերն է. ՕրB15II+±III+IV (a+c)±(b+c)+±:

16՝ Երկանդամ վեց բաղադրիչով տիպը շարադասվում է հետևյալ կապակցություններով. ա) վերադրով առարկա-գործողություն+վերադրով առարկա-գործողություն («Լավ բախտ ունենաս, լավ օրեր տեսնես»), բ) վերադրով առարկա—առարկա-գործողություն+առարկա-գործողություն («Փրկիչ տերը հավարիդ հասնի, քեզ օգնե»), գ) առարկա-գործողություն—վերադրով առարկա+առարկա-գործողություն («Լիս իջնա մերտ ու պապուտ հոգին՝ խունկ ու մոմ փուանի»), դ) երկառարկա-գործողություն+երկառարկա-գործողություն («Կալիդ քամի ըլի, ջաղացիդ հերթ ըլի»), ե) առարկա—վերադիր-գործողություն+առարկա վերադիր-գործողություն («Քարդ քաղած ըլի, հողդ մաղած ըլի»), զ) վերադրով առարկա—վերադիր գործողություն+վերադիր-գործողություն («Ցանածդ սերմն անհատնում ըլնի, բարով ուտես») և այլն:

Տիպի տեղաբաշխման սքեման է. ՕրB16II+±III+·IV (a+c)±(b+c)±:

17՝ Երկանդամ յոթ բաղադրիչով տիպը շարադասվում է հետևյալ կապակցություններով. ա) վերադրով առարկա-գործողություն+վերադիր—վերադրով առարկա-գործողություն («Անուշով հարս դառնաս, բարով-խերով իմ տարսը դառնաս»), բ) վերադրով առարկա—վերադիր-գործողություն+առարկա—վերադիր-գործողություն («Գնացած ճանապարհդ բարի ըլի, դատաստանդ քաղցր ըլի»), գ) վերադրով առարկա-գործողություն+առարկա—երկու վերադիր-գործողություն («Ինչքան որ մալ ունիս՝ աստված էնքան էլ էվել տա») և այլն:

Տիպի տեղաբաշխման պատկերն է. ՕրB17II+III+±IV (b+c)+:

18՝ Երկանդամ ութ և ավելի բաղադրիչով տիպը շարադասվում է հետևյալ կապակցություններով. ա) վերադրով առարկա—վերադիր-գործողություն + երկու առարկա—վերադիր-գործողություն («Թաքավորի թուրը կտրուկ ըլի, աչքը քիզ վրա քաղցր ըլի»), բ) երկու վերադրով առարկա—վերադիր-գործողություն+երկ-

առարկա գործողություն («Ձեր մեկ օր հազար անի, հոգուց, մարմնուց չհանի»), գ) վերադրով առարկա—առարկա-գործողություն+ վերադրով առարկա—առարկա-գործողություն («Քեզ վրա արև ծագի, թող ես մթնումը մնամ»), դ) առարկա—վերադրով առարկա-գործողություն+առարկա-վերադիր-գործողություն («Սրտիդ մեջ ինչ մուրատ ունիս՝ աստված լսող-կատարող ըլի»):

Տիպի տեղաբաշխման պատկերն է. ՕրB18III+±IV (a+c)+(b+c)+:

19՝ մեկ գործողությամբ երկանդամ օրհնանքները անեծքների նման գոյանում են նույն բայն ունեցող զույգ անդամներից մեկի բայի զեղչումով: Այս տիպի օրհնանքները վեց, յոթ, ութ և ավելի բաղադրիչներ ունեցող երկանդամ տիպերի (16, 17, 18) զարգացումն են, գործողություններից մեկի զեղչմամբ: Շարադասվում են նույն կապակցություններով, ինչ հիշյալ տիպերի օրհնանքներն առհասարակ:

Տիպի տեղաբաշխման սխեման է. ՕրB19II+III+—:

20՝ զեղչված գործողությամբ երկանդամ օրհնանքները՝ անեծքների նման գոյանում են զույգ անդամներում առկա միևնույն վերացական բայի զեղչումով, երբ այն սոսկ մտքի զորությամբ ենթադրվում է: Այս տիպի օրհնանքները երկանդամ վեց, յոթ, ութ և ավելի բաղադրիչներով (16, 17,18) տիպերի զարգացումն են, բայերի զեղչումով («Քունդ՝ անուշ, երազդ բարի», «Թասն ընծի, աստծու բարին՝ քեզի», «Բարին՝ բարև բերողին էլ, ղրգողին էլ»):

Տիպի տեղաբաշխման սխեման է. ՕրB20III+:

21՝ եռանդամ երեք բաղադրիչով տիպը առկա է հիմնականում II, մասամբ և III հիմնատիպում:

Տեղաբաշխման սխեման է. ՕրB21II+III+:

22՝ եռանդամ չորս-հինգ բաղադրիչներով տիպը շարադասվում է հետևյալ կապակցություններով. ա) գործողություն+գործողություն+առարկա-գործողություն («Ծլիս, ծաղկիս, վարդ բուրիս»), բ) գործողություն+գործողություն+վերադրով առարկա-գործողություն («Ծլիս, ծաղկիս, ծիրանի ծառ դառնաս»), գ) առարկա-գործողություն+գործողություն+գործողություն («Ծառդ ծլի, ծաղկի ու փնջփնջնոտի»):

Տիպի տեղաբաշխման պատկերն է. ՕրB22II+III+:

23՝ եռանդամ վեց և ավելի բաղադրիչներով տիպը շարադասվում է հետևյալ կապակցություններով. ա) երկու գործողություն+ կրկնակի վերադրով առարկա-գործողություն («Ծլես, ծաղկես, յոթ որդու սեղան նստես»), բ) գործողություն+վերադրով առարկա-

գործողություն+առարկա-գործողություն («Մեծանաս, մեծ անուն ունենաս, փառքի տիրանաս»), գ) գործողություն+վերադրով առարկա - գործողություն + վերադրով առարկա - գործողություն («Ապրիք, մե բարձի ծերանաք, ծերունի Սիմավոն դառնաք»), դ) երբ վերադիր-գործողությունների հարակցում («Մատ ըլիս, լավ ըլիս, ուրախ ըլիս»), ե) առարկա—վերադիր-գործողություն+առարկա — վերադիր-գործողություն + առարկա-գործողություն («Աստոծ մնացողն էնե, աստոծ խայըրլու էնե, աստոծ վերըըընե»), զ) առարկա-գործողություն + վերադիր-գործողություն + վերադրով առարկա—վերադիր-գործողություն («Աստված օխնե, շեն պահե, ձեր սեղանը շեն պահե»), է) առարկա—կրկնակի վերադրով առարկա-գործողություն+երկու գործողություն («Հացդ հայր Աբրահամու հացը դառնա, որ ոնչ հատնի, ոնչ պակսի»):

Տիպի տեղաբաշխման պատկերն է. ՕրB23II+III+±:

24՝ Երկու գործողությամբ եռանդամ տիպը բացակայում է անեծքների կառուցվածքում. այն բնորոշ է միայն օրհնանքներին: Գոյանում է եռանդամ վեց և ավելի բաղադրիչներ ունեցող տիպից (23), երկանդամում կամ եռանդամում բայի նույնության դեպքում՝ անդամներից մեկի բայի զեղչումով:

Տեղաբաշխման սքեման է. ՕրB24III+:

25՝ մեկ գործողությամբ եռանդամ տիպը դարձյալ բացակայում է անեծքներում, մինչդեռ օրհնանքներում այն ունի մի քանի նմուշ. գոյանում է նույն ճանապարհով, ինչ նախորդ տիպը, այսինքն, բայի նույնության պատճառով զեղչվում է վերջին երկանդամի գործողությունը, որն ընկալվում է առաջին անդամի գործությամբ («Ուրախությունի բաղնիս անես, ջանով, օխչընձով (ողջ անձով)»:

Տիպի տեղաբաշխման սքեման է. ՕրB25II+:

26՝ Եռանդամ չորս բաղադրիչով տիպը՝ 1 միաբաղադրիչ տիպի չորս տարբեր օրհնանքների զուգակցում է, որ հանդես է գալիս թե II և թե III հիմնատիպերում:

Տեղաբաշխման սքեման է. ՕրB26II+III+:

27՝ Եռանդամ հինգ և ավելի բաղադրիչներով տիպը շարադասվում է հետևյալ կապակցություններով. ա) երբ գործողություն+առարկա-գործողություն («Ապրիս, զորանաս, ծերանաս, սուս վերանաս»), բ) երբ գործողություն+վերադրով առարկա-գործողություն («Ծլես, ծաղկես, կանանչես, բարով յարիդ ճանանչես»), գ) չորս վերադիր-գործողության հարակցում («Շատ դատես, շատ ուտես, քիչ դատես՝ էլի շատ ուտես»), դ) երկու առար-

կա-գործողություն+երկու գործողություն+վերադրով առարկա-գործողություն («Աստուծ վուրթիքս զորացնէ, ծլին, ծաղկին, բարատու ծառ ըլին»), բ) վերադրով առարկա-գործողություն+նույնը+երկու առարկա-գործողություն+նույնը («Քու սուփրեն գցած ըլի, քու հացը դրած ըլի. գինին տակառով ըլի, խոսքդ շաքարով ըլի»), գ) առարկա-գործողություն+գործողություն+առարկա-գործողություն+գործողություն («Ջուրն էրթաս՝ կանանչի, կանանչդ ծլի, ծաղկի»)։

Տիպի տեղաբաշխման պատկերն է. 0րB27II+III+IV (b+c)+։

Ձեռքի տակ եղած նյութերով, առայժմ, օրհնանքների տիպերը սրանցով սպառվում են։ Մնացած (երեք գործողությամբ քառանդամ (28), զեղչված գործողությամբ քառանդամ (29), հնգանդամ հինգ և ավելի բաղադրիչներով (30), հնգանդամ չորս գործողությամբ (31), վեց և ավելի անդամներով ու բաղադրիչներով (32) տիպերը, որ առկա էին անեծքներում՝ օրհնանքներում առայժմ բացակայում են։ Հնարավոր է, որ նոր գրառվելիք նյութերում երևան գա նշված տիպերից մեկը կամ մյուսը։

Այժմ օրհնանքների տիպաբանական միավորների քանակական վերջնական հարաբերակցությունները տեսնենք ամփոփիչ աղյուսակներում։

16. Ա. Տիպաբանական միավորներ

1. Հիմնատիպեր 4 (I, II, III, IV)
2. Տիպախմբեր 2 (A, B)
3. Տիպեր 27, որից
   - A (պարզ տիպեր) 11
   - B (բաղադրյալ տիպեր) 16
4. Ձևեր 3, որից
   - A (պարզ տիպերն) ունեն միայն 2 (հաստատական, ժխտական)
   - B (բաղադրյալ տիպերը) կարող են ունենալ 3 (հաստատական, ժխտական, խառն)
5. Բայական դեմքերի հարակցումներ 3
   Դրանք են. I և II դեմքեր (a+b)
   I և III դեմքեր (a+c)
   II և III դեմքեր (b+c)

Ստորև գրվող ամփոփիչ աղյուսակներում, առաջին և թվային նշաններով նույն իմաստներն են արտահայտվում, ինչ անեծքների համապատասխան աղյուսակներում։

Բ. Տիպերի հաճախանք ըստ հիմնատիպերի

I հիմնատիպն ունի. A 2.3.5.7 B 0

Ընդամենը՝ A 4 տիպ, B 0 տիպ, A+B=4 տիպ

A 36,3%, B 0%, A+B=14,8%

II հիմնատիպն ունի. A 1.2.3.5.7 B 12.13.14.15.16.17.19.21.22.23.25.26.27

Ընդամենը՝ A 5 տիպ, B 13 տիպ, A+B=18 տիպ

A 45,4%, B 81,2%, A+B=66,6%

III հիմնատիպն ունի. A 1.2.3.4.5.6.7.8.9.10.11 B 13. 14. 15. 16. 17. 18. 19. 20. 21. 22. 23. 24. 26. 27

Ընդամենը՝ A 11 տիպ, B 14 տիպ, A+B=25 տիպ

A 100%, B 87,5%, A+B 92,9%

IV հիմնատիպն ունի. A 0 B (a+b) 0
(a+c) 14.15.16.18
(b+c) 14.15.16.17.18.27

Ընդամենը՝ A 0 տիպ, B (a+b) 0 տիպ, (a+c) 4 տիպ, (b+c) 6 տիպ; B(a+b)+(a+c)+(b+c)=6 տիպ

A 0%, B (a+b) 0%, (a+c) 25%, (b+c) 37,5%; B (a+b)+(a+c)+(b+c)=37,5%

Ինչպես երևում է այս աղյուսակից, օրհնանք-մաղթանքների տիպերի ամենաբարձր խտությունը տալիս է III հիմնատիպը (92,9%)[20], ամենացածրը՝ I հիմնատիպը (14,8%)։ Ըստ օրհնանքների տիպերի խտության աստիճանի, հիմնատիպերը դասակարգվում են հետևյալ հերթականությամբ.

1. *III հիմնատիպ = 92,9%*
2. *II հիմնատիպ = 66,6%*
3. *IV հիմնատիպ = 37,5%*
4. *I հիմնատիպ = 14,8%*

Ըստ պարզ տիպերի խտության, դարձյալ բարձրագույն ցուցանիշը տալիս է III հիմնատիպը (100%)։

Ըստ պարզ տիպերի խտության աստիճանի, հիմնատիպերի հերթականությունն է.

---

20 Այս և հաջորդ աղյուսակներում բերված թվերը, ինչպես տեսել ենք անեծքների տիպաբանության դեպքում, որոշ չափով հարաբերական են։ Ինչ ասվել է անեծքների համար, նույն վերապահությունը արվում է նաև օրհնանքների նկատմամբ (տե՛ս 175 էջի տողատակի ծանոթությունը)։

1. III հիմնատիպ = 100%
2. II հիմնատիպ = 45,4%
3. I հիմնատիպ = 36,3%
4. IV հիմնատիպ = 0%

Ըստ բաղադրյալ տիպերի խտության, դարձյալ լավագույն ցուցանիշը տալիս է III հիմնատիպը (87,5%)։

Հիմնատիպերն, ըստ բաղադրյալ տիպերի խտության աստիճանի, դասակարգվում են հետևյալ հերթականությամբ.

1. III հիմնատիպ = 87,5%
2. II հիմնատիպ = 81,2%
3. IV հիմնատիպ = 37,5%
4. I հիմնատիպ = 0%

Տեսնում ենք դարձյալ, որ օրհնանք-բարեմաղթությունների ճնշող մեծամասնությունը բաշխված է III և II հիմնատիպերում։

Գ. Տիպերի հաճախն ըստ ձևերի

1. Հաստատական ձև ունեն.

I A 2.3.5.7	B 0
II A 1.2.3.5.7	B 12.13.14.15.16.17.19.21.22.23.25.26.27
III A 1.2.3.4.5.6.7.8.9.10.11	B 13.14.15.16.17.18.19.20.21.22.23.24.26.27
IV A 0,	B (a+b) 0 (a+c) 14.18 (b+c) 14.15.17.18.27

Ընդամենը՝ I A 4 *տիպ*, B 0 *տիպ*, A 36,3%, B 0%, A+B=14,8%
II A 5 *տիպ*, B 13 *տիպ*, A 45,4%, B 81,2%, A+B=66,6%
III A 11 *տիպ*, B 14 *տիպ*, A 100%, B 87,5%, A+B=92,6%
IV A 0, B (a+b) 0 *տիպ*, A 0%, B (a+b) 0%
(a+c) 2 *տիպ*, (a+c) 12,5%
(b+c) 5 *տիպ*, (b+c) 31,2%
B (a+b)+(a+c)+(b+c)=31,2%

2. Ժխտական ձև ունեն.

I A 0,	B 0
II A 2. 3. 5,	B 0
III A 2. 3. 5. 7. 9,	B 19
IV A 0,	B (a+b) 0 (a+c) 0 (b+c) 0

Ընդամենը՝ I A 0 *տիպ*, B 0 *տիպ*, A 0%, B 0%, A+B=0%
II A 3 *տիպ*, B 0 *տիպ*, A 27,2%, B 0%, A+B=11,1%
III A 5 *տիպ*, B 1 *տիպ*, A 45,4%, B 6,2%, A+B=22,2%
IV A 0 *տիպ*, B 0 *տիպ*, A 0%, B 0%, A+B=0%

3. Խառը ձևեր ունեն[21].

I A 0, B 0

II A 0, B 12: 14. 15. 16

III A 0, B 13. 17. 18. 23.

IV A 0. B (a+b) 0

(a+c) 15. 16

(b+c) 15. 16

Ընդամենը՝ I A 0 տիպ, B 0 տիպ, A 0%, B 0%

II A 0 տիպ, B 4 տիպ, A 0%, B 25%

III A 0 տիպ, B 4 տիպ, A 0%, B 25%

IV A 0 տիպ, B (a+b) 0 տիպ, A 0%, B (a+b) 0%

(a+c) 2 տիպ (a+c) 12,5%

(b+c) 2 տիպ (b+c) 12,5%

B (a+b)+(a+c)+(b+c)=2 տիպ, 12,5%.

Այսպես, տեսնում ենք, որ ըստ տիպերի հաստատական *ձևի, բարձրագույն ցուցանիշը տալիս է III հիմնատիպը (92,6%), ամենացածրը՝ I հիմնատիպը (14,8%)։*

Ըստ տիպերի հաստատական ձևի ցուցանիշների, հիմնատիպերը դասակարգվում են հետևյալ հերթականությամբ.

1. *III հիմնատիպ = 92,6%*
2. *II հիմնատիպ = 66,6%*
3. *IV հիմնատիպ = 31,2%*
4. *I հիմնատիպ = 14,8%*

Տիպերի ժխտական *ձևի ամենաբարձր ցուցանիշը տալիս է դարձյալ III հիմնատիպը (22,2%), ամենացածրը՝ I և IV հիմնատիպերը (0%)։*

Ըստ ժխտական ձևի ցուցանիշների՝ հիմնատիպերի հերթականությունն է.

1. *III հիմնատիպ = 22,2%*
2. *II հիմնատիպ = 11,1%*
3. *I հիմնատիպ = 0%*
4. *IV հիմնատիպ = 0%*

Ըստ բաղադրյալ տիպերի խառը *ձևերի ցուցանիշների, հիմնատիպերի հերթականությունն է.*

---

21 *Աղյուսակի խառը ձևերի ընդհանուր հայտարարի մեջ չի նշվում պարզ և բաղադրյալ տիպերի (A+B) միասնական տոկոսը, որովհետև պարզ տիպերն առհասարակ չունեն խառը ձևեր։*

1. II հիմնատիպ = 25%
2. III հիմնատիպ = 25%
3. IV հիմնատիպ = 12,5%
4. I հիմնատիպ = 0%

Ուրեմն, ըստ խառը ձևերի ցուցանիշների, II և III հիմնատիպերը տալիս են միևնույն ամենաբարձր տոկոսը (25%), իսկ ամենացածրը տալիս է դարձյալ I հիմնատիպը (0%)։

Այս են անեծքների և օրհնանք-բարեմաղթությունների կառուցվածքային տիպաբանության վերլուծության հիմնական արդյունքները։

Խնդրի քննությունն առավել ամբողջացնելու համար, հարկ է կատարել անեծքների և օրհնանքների տիպաբանական համեմատությունը։

5. ԱՆԵԾՔՆԵՐԻ ԵՎ ՕՐՀՆԱՆՔՆԵՐԻ ՏԻՊԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅՈՒՆԸ

17. Անեծքների և օրհնանքների կառուցվածքային տիպերի տախտակները հիմնականում արտացոլում են բանահյուսական այդ երկու տեսակների կառուցվածքային յուրահատկությունները։ Ենթակա լինելով տիպաբաժանման միևնույն սկզբունքներին և հաճախ տիպաբանական հատկանիշներով համընկնելով միմյանց, անեծքներն ու օրհնանքները, սակայն, միաժամանակ ի հայտ են բերում տիպաբանական տարբերություններ։ Այդ նմանություններն ու տարբերությունները տեսնելու համար, հարկ է ամփոփիչ աղյուսակներով կատարել անեծքների և օրհնանքների տիպաբանական միավորների, տիպերի, հիմնատիպերի և ձևերի համեմատությունը և հանգել որոշակի հետևությունների։

Ա. Տիպաբանական միավորներ

Միավորի անունը	Անեծքներ	Օրհնանքներ
1. Հիմնատիպեր	4	4
2. Տիպախմբեր	2	2
3. Տիպեր	25	27
A Պարզ տիպեր	8	11
B Բաղադրյալ տիպեր	17	16
4. Ձևեր	3	3
5. Բայական դեմքերի հարակցումներ	2	3
I և II դեմքեր (a+b)	1	1
I և III " (a+c)	0	1
II և III " (b+c)	1	1

Աղյուսակից պարզվում է, որ ըստ տիպաբանական միավորների, օրհնանքներն առավել բազմազանություն են ցուցաբերում, քան անեծքները: Հիմնատիպերով, տիպախմբերով և ձևերով համապատասխանելով միմյանց, տիպերի քանակով (մասնավորապես պարզ տիպերով) և բայական դեմքերի հարակցումներով, օրհնանքները գերազանցում են անեծքներին: Անեծքների մեջ իսպառ բացակայում է I և III դեմքերով բայերի հարակցումը (a+c), մինչդեռ օրհնանքներում այն կարևոր տիպաբանական միավոր է:

Բ. Տիպեր

Տիպախմբեր	Տիպեր	Անեծքներ	Օրհնանքներ
Պարզ տիպեր	1. Միաբաղադրիչ	1	1
	2. Երկբաղադրիչ	1	1
	3. Եռաբաղադրիչ	1	1
	4. Զեղչված գործողությամբ երկբաղադրիչ	1	1
	5. Քառաբաղադրիչ	1	1
	6. Զեղչված գործողությամբ եռաբաղադրիչ	1	1
	7. Հինգ բաղադրիչներով	1	1
	8. Զեղչված գործողությամբ քառաբաղադրիչ	1	1
	9. Վեց բաղադրիչով	0	1
	10. Յոթ բաղադրիչով	0	1
	11. Ութ և ավելի բաղադրիչով	0	1
Բաղադրյալ տիպեր	12. Երկանդամ երկբաղադրիչ	1	1
	13. Երկանդամ եռաբաղադրիչ	1	1
	14. Երկանդամ քառաբաղադրիչ	1	1
	15. Երկանդամ հնգաբաղադրիչ	1	1
	16. Երկանդամ վեց բաղադրիչով	1	1
	17. Երկանդամ յոթ բաղադրիչով	0	1
	18. Երկանդամ ութ և ավելի բաղադրիչով	0	1
	19. Մեկ գործողությամբ երկանդամ	1	1
	20 Զեղչված գործողությամբ երկանդամ	1	1
	21. Եռանդամ երեք բաղադրիչով	1	1
	22. Եռանդամ 4—5 բաղադրիչով	1	1
	23. Եռանդամ 6 և ավելի բաղադրիչով	1	1
	24. Երկու գործողությամբ եռանդամ	0	1
	25. Մեկ գործողությամբ եռանդամ	0	1
	26. Քառանդամ չորս բաղադրիչով	1	1
	27. Քառանդամ 5 և ավելի բաղադրիչով	1	1
	28. Երեք գործողությամբ քառանդամ	1	0
	29. Զեղչված գործողությամբ քառանդամ	1	0
	30. Հնգանդամ հինգ և ավելի բաղադրիչով	1	0
	31. Հնգանդամ չորս գործողությամբ	1	0
	32. Վեց և ավելի անդամներով և բաղադրիչով	1	0

Տիպերի համեմատական աղյուսակից պարզվում է, որ անեծքներում բացակայում են վեց, յոթ և ութ ու ավելի բաղադրիչներով պարզ տիպերը (9, 10, 11), երկանդամ յոթ բաղադրիչով, երկանդամ ութ բաղադրիչով (17, 18), երկու գործողությամբ եռանդամ (24) և մեկ գործողությամբ եռանդամ (25) բաղադրյալ տիպերը, իսկ օրհնանքները չունեն երեք գործողությամբ քառանդամ, զեղչված գործողությամբ քառանդամ, հնգանդամ հինգ և ավելի բաղադրիչով, հնգանդամ չորս գործողությամբ և վեց և ավելի անդամներով ու բաղադրիչներով բաղադրյալ տիպերը (28, 29, 30, 31, 32): Այլ կերպ ասած, անեծքներում բացակայում է 3 պարզ և 4 բաղադրյալ տիպ, իսկ օրհնանքներում՝ 5 բաղադրյալ տիպ: Այսինքն, օրհնանքները անեծքներին գերազանցում են երկու տիպի առավելությամբ: Սակայն հարկ է նկատի ունենալ հետևյալը. օրհնանքների 9, 10 և 11 պարզ տիպերը, որոնք բացակայում են անեծքներում, գոյանում են միայն բաղադրիչների աճումով: Օրհնանքներում վեց, յոթ և ութ բաղադրիչներով պարզ տիպերը հաճախ են հանդիպում, մինչդեռ անեծքներում հինգից ավելի բաղադրիչներով տիպեր հազվադեպ են, բայց բացառված չեն (հատկապես վեց և յոթ բաղադրիչներով): Այնպես որ, պարզ տիպերի տեսակետից անեծքների նկատմամբ օրհնանքների ունեցած գերազանցությունը փոքր-ինչ պայմանական է: Ապա, բաղադրիչների աճումով (պարզ տիպերի դեպքում) օրհնանքները ընդարձակվելու միտում ունեն և գերազանցում են անեծքներին, մինչդեռ անդամների աճումով (բաղադրյալ տիպերի դեպքում), ընդհակառակը, անեծքները ցուցաբերում են բացահայտ առավելություն, և օրհնանքներն այդ առումով, զիջում են անեծքներին: Այդ է ապացուցում վերջին հինգ բազմանդամ տիպերի (28, 29, 30, 31, 32) բացակայությունն օրհնանքներում:

Այս տիպաբանական տարբերությունն հավանաբար ունի իր հոգեբանական հիմունքները: Օրհնանքները օրհնողի բարի և մեղմ տրամադրության արգասիքներ լինելով, նորանոր ցանկալի գործողությունների կուտակումով խոսքը սաստկական դարձնելու միտում չունեն, ուստի օրհնողը մեծ մասամբ բավարարվում է մեկ բայական գործողությամբ, բայց բառային բաղադրիչներով ընդարձակված օրհնաբանություններով (պարզ տիպեր): Մինչդեռ անիծողը, գտնվելով ջղագրգիռ վիճակում, կամենում է իր աճող զայրույթն ու ատելությունը շիջեցնել նորանոր չարաբանական ցանկալի գործողությունների կուտակված արտաբերությամբ, որով

առավել սաստկանում է խոսքի ներգործությունը։ Այստեղից էլ առաջանում են անեծքների բազմանդամ տիպերը (բաղադրյալ տիպեր) և տարբեր անեծքների շարքերը, որ հարում են իմաստով միմյանց, շնորհիվ անիծողի։

Գ. Տիպերի քանակն ըստ հիմնատիպերի

Այս համեմատության դեպքում զուգադրվում են միայն տիպերի քանակը և տոկոսային արտահայտությունը՝ թե՛ ըստ տիպաբանական առանձին և թե՛ միասնական խմբերի։

Անեծքներ	Օրհնանքներ
I A 4 տիպ 50%, B 5 տիպ 28,7% A+B 9 տիպ 36%	I A 4 տիպ 36,3%, B 0 տիպ 0% A+B=4 տիպ 14,8%
II A 5 տիպ 62,5%, B 11 տիպ 64,7% A+B=16 տիպ 64%	II A 5 տիպ 45,4%, B 13 տիպ 81,2% A+B=18 տիպ 66,6%
III A 8 տիպ 100%, B 12 տիպ 70% A+B 20 տիպ 80%	III A 11 տիպ 100%, B 14 տիպ 87,5% A+B=25 տիպ 92,9%
IV A 0 տիպ 0%, B (a+b) 12 տիպ 48% (b+c) 10 տիպ 40% (a+b)+(b+c)=13 տիպ 52%	IV A 0 տիպ 0%, B (a+b) 0 տիպ 0% (b+c) 6 տիպ 37,5% (a+c) 4 տիպ 25% (a+b)+(b+c)+(a+c)=10 տիպ, 37,5%

Համեմատությունից պարզվում է նախ, որ բոլոր հիմնատիպերը, անկախ իրենց որոշ տարբերություններից, ըստ տիպերի խտության, թե՛ անեծքներում և թե՛ օրհնանքներում համամիտվում են միմյանց։ Դրանում կարելի է համոզվել ըստ տիպերի խտության աստիճանի անեծքների և օրհնանքների հիմնատիպերի հերթականության աղյուսակները համեմատելիս։ Այսպես.

Անեծքներ	Օրհնանքներ
1. III հիմնատիպ = 80%	1. III հիմնատիպ = 92,9%
2. II հիմնատիպ = 64%	2. II հիմնատիպ = 66,6%
3. IV հիմնատիպ = 52%	3. IV հիմնատիպ = 37,5%
4. I հիմնատիպ = 36%	4. I հիմնատիպ = 14,8%

Տեսնում ենք, ուրեմն, անկախ տոկոսների տարբերությունից, ըստ տիպերի խտության աստիճանի, հիմնատիպերի հերթականությունը թե՛ անեծքներում և թե՛ օրհնանքներում նույնն է։

Ըստ տիպերի տեսակների խտության աստիճանի, դարձյալ անեծքներն ու օրհնանքները նույնանում են միմյանց։ Այսպես. ըստ

768—13

պարզ տիպերի խառնության աստիճանի՝ հիմնատիպերի հերթականությունն է.

Ա ն ե ծ ք ն ե ր	Օ ր հ ն ա ն ք ն ե ր
1. III հիմնատիպ = 100%	1. III հիմնատիպ = 100%
2. II հիմնատիպ = 62,5%	2. II հիմնատիպ = 45,4%
3. I հիմնատիպ = 50%	3. I հիմնատիպ = 36,3%
4. IV հիմնատիպ = 0%	4. IV հիմնատիպ = 0%

Ուրեմն, պարզ տիպերի խառնության աստիճանի դեպքում՝ անեծքներում և օրհնանքներում ոչ միայն հիմնատիպերի հերթականությունն է նույնը, այլև ծայրանդամների (1 և 4 տեղեր) տոկոսային արտահայտություններն անգամ (100 և 0%)։

Ըստ բաղադրյալ *տիպերի խառնության աստիճանի, հիմնատիպերի հերթականության համեմատական աղյուսակն է.*

Ա ն ե ծ ք ն ե ր	Օ ր հ ն ա ն ք ն ե ր
1. III հիմնատիպ = 70%	1. III հիմնատիպ = 87,5%
2. II հիմնատիպ = 64,7%	2. II հիմնատիպ = 81,2%
3. IV հիմնատիպ = 52%	3. IV հիմնատիպ = 37,5%
4. I հիմնատիպ = 28,7%	4. I հիմնատիպ = 0%

Այս համեմատություններից պարզվում է, որ հայկական անեծքների և օրհնանքների ճնշող մեծամասնությունը համախմբված է III և II հիմնատիպերում։ Այս երկու հիմնատիպերը և մանավանդ III հիմնատիպը, ինչպես արդեն նշել ենք անեծքների տիպաբանությունը քննելիս, ծագումով հին են և ավանդական։ Հին գրավոր հուշարձաններում (սկսած հին-արևելյան սեպագիր արձանագրություններից, վերջացրած ուշ-հայկական ձեռագրերի հիշատակարաններով, կաթողիկոսական օրհնության և նզովքի թղթերով), որ աչքի են ընկնում բանահյուսական քննարկվող երկու տեսակների հնագույն հիշատակություններով, և՛ անեծքները, և՛ օրհնանքները իրենց տիպաբանական կառուցվածքով պատկանում են III հիմնատիպին։ Ապա. ամենացածր ցուցանիշը տալիս է I հիմնատիպը, որը հիմնատիպերի հերթակարգում միշտ գրավում է վերջին՝ 4-րդ տեղը։ Եվ դա հասկանալի է, քանզի բայական առաջին դեմքով անեծքները և օրհնանքները քանակով շատ սահմանափակ են։ Լինելով գերբնականի հավատալիքի վրա հիմնված հմայական բանաձևեր և չար ու բարի ցանկությունների արտահայտություններ, անեծքների և օրհնանքների իրականացումը հիմնականում ակնկալվել է գերբնական էակներից ու ոգիներից, իբրև այդպիսիք

ընկալված կենդանիներից, բնության երևույթներից ու առարկանեերից (բայական III դեմքով բանաձևեր), ինչպես նաև ինքնաբերաբար, բայց դարձյալ գերբնական-միստիկականի միջնորդությամբ իրականացող իրադրություններից (բայական II դեմքով բանաձևեր):

Անիծող կամ օրհնող անձը հազվադեպ է հանդես գալիս իբրև գործողություն կատարող, քանզի իրեն իբրև գործող անձի, հմայական մեծ զորություն չի վերագրել: Եվ որովհետև բայական առաջին դեմքով խոսքերը միշտ էլ արդյունք են հոգեկան անմիջական ու ակտիվ մղումների, ուստի և դրանցով կազմված են հիմնականում հայհոյանքները, սպառնական և փաղաքշական խոսքերը, որոնք բնավ չունեն հմայական իմաստ, երկրորդաբար նաև՝ անեծքները և շատ սակավ՝ օրհնանք-բարեմաղթությունները: I հիմնատիպում, օրինակ, անեծքների տիպերը կազմում են 36%, մինչդեռ օրհնանքները միայն 14,8%, այսինքն, անեծքների կեսից էլ պակաս: Եվ եթե նկատի ունենանք նաև, որ օրհնանքներն այս հիմնատիպում մասամբ ունեն փաղաքշական բնույթ, մասամբ էլ զուրկ են գործող անձի ակտիվությունից («Մատդ կանանչած տեսնեմ», «Ձեռիդ հողին արժանիկ ըլիմ» և այլն), ապա պարզ կդառնա՝ օրհնող անձի հմայական դերի խիստ պասիվությունն այս հիմնատիպի օրհնանքներում: Իսկ անեծքների համեմատաբար դերակշռությունն I հիմնատիպում՝ պետք է բացատրել անիծող անձի հոգեկան գրգռվածության սաստկությամբ, երբ «սիրտը հովացնելու» համար ինքն իրեն է առաջադրում իբրև չար ցանկության իրագործող («Սև հողը դնեմ քեզ», «Արյունդ խմեմ» և այլն):

Դ. Տիպերի քանակն ըստ ձևերի

1. Հաստատական ձև ունեն.

Անեծքներ	Օրհնանքներ
I A 4 տիպ 50%. B 5 տիպ 29,4% A+B=9 տիպ 36%	I A 4 տիպ 36,3%. B 0 տիպ 0% A+B=4 տիպ 14,8%
II A 5 տիպ 62,5%. B 9 տիպ 52,9% A+B=14 տիպ 56%	II A 5 տիպ 45,4%. B 13 տիպ 81,2% A+B=18 տիպ 66,6%
III A 8 տիպ 100%. B 9 տիպ 52,9% A+B=17 տիպ 68%	III A 11 տիպ 100%. B 14 տիպ 87,5% A+B=25 տիպ 92,6%
IV A 0 տիպ 0%. B (a+b) 7 տիպ 41,1% (b+c) 8 տիպ 47% B (a+b)+(b+c)=11 տիպ 64,7%	IV A 0 տիպ 0%. B (a+b) 0 տիպ 0% (b+c) 5 տիպ 31,2% (a+c) 2 տիպ 12,5% B(a+b)+(b+c)+(a+c)=5 տիպ 31,2%

2. Միջակ ձև ունեն.

I A 2 տիպ 25 %, B 0 տիպ 0% A+B=2 տիպ 8%	I A 0 տիպ 0%, B 0 տիպ 0% A+B=0 տիպ 0%
II A 5 տիպ 62,5%, B 6 տիպ 35,3% A+B=11 տիպ 44%	II A 3 տիպ 27,2%, B 0 տիպ 0% A+B=3 տիպ 11,1%
III A 4 տիպ 50%, B 1 տիպ 6% A+B=5 տիպ 20%	III A 5 տիպ 45,4%, B 1 տիպ 6,2% A+B=6 տիպ 22,2%
IV A 0 տիպ 0%, B 0 տիպ 0% A+B=0 տիպ 0%	IV A 0 տիպ 0%, B 0 տիպ 0% A+B=0 տիպ 0%

3. Խառն ձև ունեն.

I A 0 տիպ 0%, B 0 տիպ 0%	I A 0 տիպ 0%, B 0 տիպ 0%
II A 0 տիպ 0%, B 8 տիպ 47%	II A 0 տիպ 0%, B 4 տիպ 25%
III A 0 տիպ 0%, B 6 տիպ 35,3%	III A 0 տիպ 0%, B 4 տիպ 25%
IV A 0 տիպ 0%, B(a+b) 4 տիպ 23,5% (b+c) 8 տիպ 47%	IV A 0 տիպ 0%, B (a+b) 0 տիպ 0% (b+c) 2 տիպ 12,5% (a+c) 2 տիպ 12,5%
B (a+b)+(b+c)=9 տիպ 53%	B(a+b)+(b+c)+(a+c)=2 տիպ 12,5%

Այս համեմատական աղյուսակները ցույց են տալիս, որ տիպերի հաստատական ձևի բարձրագույն ցուցանիշը թե՛ անեծքներում և թե՛ օրհնանքներում վկայում է III հիմնատիպը (68% և 92,6%), իսկ ամենացածրը՝ I հիմնատիպը (36% և 14,8%)։

Այժմ տեսնենք հիմնատիպերի համեմատական հերթականությունը՝ ըստ տիպերի հաստատական ձևի ցուցանիշների։

Անեծքներ	Օրհնանքներ
1. III հիմնատիպ = 68%	1. III հիմնատիպ = 92,6%
2. IV հիմնատիպ = 64,7%	2. II հիմնատիպ = 66,6%
3. II հիմնատիպ = 56%	3. IV հիմնատիպ = 31,2%
4. I հիմնատիպ = 36%	4. I հիմնատիպ = 14,8%

Ուրեմն, անեծքների և օրհնանքների համեմատական հերթականությունը խախտվում է 2 և 3 տեղերում՝ II և IV հիմնատիպերի միջև։ Եթե տոկոսային հարաբերությամբ II հիմնատիպը անեծքներում՝ օրհնանքների համեմատությամբ ունի 10,6%-ի տարբերություն, ապա IV հիմնատիպը օրհնանքներում՝ անեծքների համեմատությամբ, տալիս է 33,5%-ի տարբերություն։ Սա ցույց է տալիս, որ հաստատական ձևի տիպերի քանակական տարբերությունը II հիմնատիպի անեծքներում և օրհնանքներում էական չէ։ Մինչդեռ IV հիմնատիպի անեծքներում և օրհնանքներում այդ տարբերությունը էական է և ունի առավել խոր արմատներ։ Ինչպես

արդեն նշել ենք, օրհնանքները իրենց ժանրային բնույթով բաղադրյալ տիպերի նկատմամբ զարգացման միտում չեն ցուցաբերում, իսկ անեծքներն, ընդհակառակը, առավել միտվում են զարգացման՝ բաղադրյալ տիպերում: Եվ որովհետև IV հիմնատիպն ընդգրկում է միմիայն բաղադրյալ տիպեր, ուստի և օրհնանքներն այդ հիմնատիպում առհասարակ (և ոչ միայն հաստատական ձևի դեպքում) սակավ են:

Ըստ տիպերի ժխտական ձևի քանակի, հիմնատիպերի համեմատական հերթականությունն է.

ԱՆԵԾՔՆԵՐ	ՕՐՀՆԱՆՔՆԵՐ
1. II հիմնատիպ = 44%	1. III հիմնատիպ = 22,2%
2. III հիմնատիպ = 20%	2. II հիմնատիպ = 11,1%
3. I հիմնատիպ = 8%	3. I հիմնատիպ = 0%
4. IV հիմնատիպ = 0%	4. IV հիմնատիպ = 0%

Աղյուսակը ցույց է տալիս, որ ժխտական ձևով օրհնանքները՝ անեծքների համեմատությամբ սակավ են ընդհանրապե՛ս. և դա հասկանալի է: Օրհնանքները, լինելով բարեբանություններ, հիմնականում հաստատական ձևերով են դրսևորում բարի բաղձանքները: Ժխտական ձևերով բարեբանությունները ոճաբանորեն սահմանափակ դրսևորում ունեն և հիմնականում գոյանում են անեծքներից՝ հաստատական ձևի վրա «ոչ» և «չը» ժխտականների վերադրումով («Աստծու դիվան-դարգյահից զրկվես» > «Աստծու դիվան դարգահիցը չը զրկվես», «Նամարդի մուխթեջ էլնես»>«Նամարդի մուխթեջ չէլնես» և այլն): Անեծքներից օրհնանք-մաղթանքների վերածվելու ոճաբանական ուղիներից մեկն էլ՝ անեծքների վրա ժխտականների վերադրումն է, որ արդեն տեսել ենք վերևում:

Վերևի աղյուսակից երևում է, որ 3 և 4 տեղերը անեծքներում և օրհնանքներում՝ նույնանում են. տարբերությունը 1 և 2 տեղերում II և III հիմնատիպերի գրավման հարցն է: Անեծքներում՝ երկրորդ տեղը գրավում է II հիմնատիպը, իսկ օրհնանքներում՝ III-ը: Օրհնանքների III հիմնատիպը ժխտական ձևի տոկոսային արտահայտությամբ գրեթե նույնանում է անեծքների III հիմնատիպին (22,2:20 հարաբերությամբ): Մինչդեռ անեծքների ժխտական ձևի II հիմնատիպը՝ քառապատիկ անգամ գերազանցում է օրհնանքների միևնույն հիմնատիպին (44:11,1 հարաբերությամբ): Անեծքների և օրհնանքների ժխտական ձևերի գլխավոր տարբերու-

թյունը բաժին է ընկնում II հիմնատիպին։ Թեպետ 3 տեղում անեծքներում և օրհնանքներում հանդես է գալիս միևնույն հիմնատիպը (I), այդուամենայնիվ, ժխտական ձևը անեծքների I հիմնատիպում կազմում է 8%, մինչդեռ օրհնանքների համապատասխան հիմնատիպում իսպառ բացակայում է։ Սա նշանակում է դարձյալ, որ էական տարբերություն կա այդ տեսակետից անեծքների և օրհնանքների I հիմնատիպերի միջև։

Վերևի համեմատական աղյուսակից երևում է դարձյալ՝ անեծքների խառը ձևեր ունեցող տիպերի քանակական գերազանցությունը օրհնանքներից։ Եվ դա նույնպես բացատրվում է օրհնանքների բաղադրյալ տիպերի բնական սակավությամբ, քանզի խառը ձևեր ունեն միմիայն բաղադրյալ տիպերը։

Այժմ տեսնենք, ըստ խառը ձևերի ցուցանիշների՝ հիմնատիպերի հերթականության համեմատությունը անեծքներում և օրհնանքներում։

Անեծքներ	Օրհնանքներ
1. IV հիմնատիպ = 53%	1. II հիմնատիպ = 25%
2. II հիմնատիպ = 47%	2. III հիմնատիպ = 25%
3. III հիմնատիպ = 35,3%	3. IV հիմնատիպ = 12,5%
4. I հիմնատիպ = 0%	4. I հիմնատիպ = 0%

Ինչպես տեսնում ենք, բացի վերջին՝ 4 տեղից, մնացած տեղերի հիմնատիպերը չեն համապատասխանում միմյանց։ Եթե անեծքների խառը ձևերում IV հիմնատիպը տոկոսային ցուցանիշներով բռնում է առաջին տեղը, ապա օրհնանքներում այդ նույն հիմնատիպը՝ նախավերջին տեղը։ Սա դարձյալ բացատրվում է անեծքների նկատմամբ օրհնանքների ունեցած բաղադրյալ տիպերի բնական սակավությամբ, քանզի IV հիմնատիպը կազմված է միմիայն բաղադրյալ տիպերից։

Ավարտելով անեծքների և օրհնանքների տիպաբանության ընդհանուր համեմատությունը, հարկ է դիտել, որ իրենց ժանրային հատկանիշների նկատելի տարբերություններով հանդերձ, անեծքներն ու օրհնանքներն իրենց կառուցվածքային հատկություններով շատ դեպքերում համապատասխան են միմյանց և ունեն սերտ ընդհանրություններ։

6. ՊԱՏԺԻ ՑԱՆԿՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ ԿԱՄ ԱՆԵԾՔՆԵՐԻ ԻՄԱՍՏԱՅԻՆ ՏԻՊԵՐԸ

18. Անեծքներն, ըստ էության լինելով պատժի ցանկություններ, իմաստային տիպաբաժանման դեպքում վերածվում են պատժի ցանկության տեսակների։

Հայ ժողովրդական անեծքներն, ըստ իմաստի, տիպաբաժանվում են չորս գլխավոր խմբերի.

1. Մարմնական պատիժների ցանկության,

2. Սոցիալ-քաղաքացիական պատիժների ցանկության,

3. Բարոյա-մարմնական պատիժների ցանկության և

4. Հոգեկան պատիժների ցանկության։

Այս չորս հիմնախմբերում երևան են գալիս հայկական անեծքների իմաստային գրեթե բոլոր էական արտահայտությունները։

19. **Մարմնական պատիժների ցանկություն.**— Այս հիմնախմբի անեծքներն ուղղված են գլխավորապես անիծվողին մահվամբ, հիվանդությամբ, մարմնական զանազան տառապանքներով կամ փորձանքներով պատժելու չար ու դժնի ցանկությանը։ Ըստ այսմ, սույն հիմնախմբի բանաձևերը բաժանվում են չորս իմաստային տիպերի։

1. Ամենախիստ պատիժը, որ սովորաբար ենթադրում է մարդկային միտքը և սահմանափակված է իրավաբանական օրենքներով՝ **մահվան դատապարտումն** է։ Այս պատժով մարդու կենդանի գոյությունն ընդմիշտ դադարում է, որ և կազմում է մարդկության մեծագույն ողբերգությունների հիմքը՝ սկզբից մինչև վերջ։

Մահվան ցանկությունը, իր ամենատարբեր դրսևորումներով, ընկած է անեծքների մեծ մասի հիմքում։

Երբ անիծողն իր զայրույթը հարուցողին կամենում է ամենախիստ ձևով պատժված տեսնել, ապա նրան կամ նրա հարազատներին ուղղում է ամենադաժան եղանակներով մեռնելու անեծքներ։ Ըստ **անիծվող անձանց և մահվան տեսակների** ցանկության, անեծքները բաժանվում են մի շարք ենթատիպերի։

ա) **անիծվողի բնական մահով մեռնելու** ցանկությամբ անեծքները՝ զգալի թիվ են կազմում հայ բանահյուսության մեջ։ Դրանց մեջ այլաբանությամբ, փոխաբերությամբ, հաճախ էլ ուղղակիորեն արտահայտվում է անիծողի ձգտումը՝ մեռած տեսնել իր հակառակորդին։

«Մինծ քունը քնանոս» (ԱՈՒ 125), «Աստուծ հոգիդ առնո» (ԲԳ 331), «Գլուխդ գլխափոսերը մնի» (ՀԺԱ 7), «Բոյըդ գետինը մնի» (ՀԺԱ 4), «Ըսօր թաղումդ ըլլի, էգուց յիգնահողդ» (ՀԺՀ VI 141), «Մահին բերանը երթաս» (ՀԺՀ VIII 105), «Խողը դրվիս» (ԲԳ 331), «Գեդին բշտեցնիս դուն» (ԹՄԿ 188), «Սև քարը գցեմ վրեդ» (ԱՀ XI 124), «Բոյըդ հողը դնեմ» (ՋԺԲ 66), «Բոյըդ կաման վրա լվանամ» (ԱՀ XI 122), «Ծակոտիտ մեռած տեսնիմ» (ԱՈՒ 124), «Խըվարվես տյու» (Վեն. Սահակ. հավ.), «Քու նաշ վերցուն» (ԷԱԺՁ 309), «Ումրդ մեռնի» (ԷԱԺՁ 317), «Արևածագին դիակըդ վերցնեմ» (իմ հավաք.), «Էն մեռնողի հաց ու ջրեն ուտես» (իմ հավաք.), «Կետնին տակն անցնիս» («Հիշատ. Էվերեկ-Ֆեննեսի», 886), «Արեդ խըվարի» (ԱՀ XI 122), «Իրեքանիդ (երեքիդ) մի պատանում դինեմ» (իմ հավ.), «Արեդ թաղեմ» (ՀԺՀ VI 139), «Ցխեմ գլուխդ» (ՀԺԱ 6), «Տաք-տաք քնես՝ սառած վեր կենաս» (իմ հավաք.), «Թաղեմ գլուխդ ու արեդ» (ԷԱԺԱ 135), «Հողն ու մոխիրը գլխիդ տամ, բաթմիշ ըլնիս» (ԷԱԺԱ 136), «Ուռուքու պես կռանաս, բարդքու պես չորանաս» (ՀԺՀ VI 140), «Իրկուն պառկիս՝ կննուխ չելլաս» (ԲԲ 546), «Տեղըտ տերտակ տեսնամ ես» (ՀԺՀ VII 114), «Գլուխդ մեռնի՝ ջանդակտ դընջանա» (ԹՄԿ 187), «Մահը բգիցդ կպչի» (ԱՀ XI 124) և այլն, և այլն:

Բայց անեծողը չի բավարարվում սովական մահվան ցանկությամբ. նա իր վրդովմունքն ու վրեժխնդրությունը հագեցնելու համար բաղձում է ամենատանջալից մահով մեռած տեսնել դիմացինին: Այս տեսակետից անեծքներում մեծ տեղ է գրավում

բ) Սպանությամբ, որևէ փորձանքով կամ տառապագին հիվանդությամբ *անիծվողին մեռած տեսնելու ցանկությունը:*

«Գյուլլան ջիգյարըդ կենա» (իմ հավաք.), «Գիլլյոխարավ նստիս, ուշիս, տկըճվիս» (ՀԺՀ VII 113), «Քեզ տեսնամ՝ ղարայի (սև) գյուլլեն սրտիդ նի կյա» (իմ հավաք.), «Տասներկու պատրիկ բանի ջանիդ վրեն» (ԷԱԺՁ 319), «Բարձիդ վրան ղարկվիս» (ԲԳ 330), «Սև ճալատներ (դահիճներ) քե պրտեն» (ԷԱԺՁ 311), «Արենկոլոլ ըլնես» (ՀԺԱ 5), «Ալ արիններուդ մեջե փթվիս» (ԲԲ 545), «Ծակծակ լեշիդ նստեմ», «Արնոտ շապիկդ գա» (ՀԺՀ VI 140), «Խեղդվիս» (ԷԱԺՁ 315), «Ջրի տակից սև խաբարդ գա» (ԷԱԺԱ 138), «Մաշինի տակին ճըխճխված ճարեմ քեզ» (իմ հավաք.), «Միսըդ մանգյանեն ընգնի» (Վեն. Սահակ. հավաք.), «Փարա-փարչա ըլլաս» (ԱՀ IX 196), «Քաան կտուր ըլիս» (ԹՄԿ 195), «Սև սրի գաս, արին թրի» (ԱՀ XI 124), «Լավ լարանի գաս,

հասս պարանի» (ԱՀ XI 123), «Քեզ տեսնամ՝ մեծ կտորըդ՝ ականջըդ մնա» (իմ հավաք.), «Գլուխդ խուրջնումը դա» (ՀԺԱ 6), «Իսանի (մարդու) կերպարանքից ընկնես, բնաշինչ ըլես» (ԷԱԺԱ 136), «Քեզ տեսնամ՝ էփվիս ու թափվես» (ՀԺԱ 7), «Ըղանձվես (խանձվել) տյու», «Կրակը ձեր վրա էր դառնա», «Կրակ իյնիս» (Վեն. Սահակ. հավ.), «Կեծակը քըեզ տանի» (իմ հավաք.), «Կարկուտը զարգա քեզի» (իմ հավաք.), «Վիզդ տակդ մնա» (իմ հավաք.), «Ջրով ու կրակով էրթաս» (ԷԱԺՁ 314), «էրթաս՝ չիգաս» (ԲԲ 545), «Կյուլու (գայլի) ճյանգ ընգնիս, փըրչըփարա (կտոր-կտոր) տեռնաս» (ՀԺՀ VII 114), «Սև օցը կծի քի» (ԱՀ XI 124), «Հանկարծակի մահը քեզ ափսխոսի անե», «Գետնի օխտը ղաթն անցնիս՝ դուս չգաս», «Իզ ու թոզդ աշխարհքում չերևա» (ԷԱԺԱ 137, 135, 136), «Ոչ հասնիս ձեր տունը» (ՀԺՀ VI 141), «Գիլանուց ու շնանուց դառնաս» (ԹՄԿ 187), «Ջրի միջու ջանավարներու փայ էղնիս» (ԷԱԺՁ 314), «Մխեծ քոր (քար) ընկնը գագաթիտ» (ԱՌԻ 125), «Սև խապարտ առնիմ» («Բազմավեպ», 1902, № 9—10), «Գրողը կողբիցդ բռնե, քեզ խեղդե» (ԷԱԺԱ 135), «Ջխոթկան քեզ տանի» (իմ հավաք.), «Մախմուռը (սև ծաղիկ) տանի» (իմ հավաք.) և այլն:

Անիծվողին ուղղված փափագվող մահվան ցանկությունն ողբերգականության ու դրամատիզմի շեշտված երանգներ է ստանում, երբ առանձնապես ընդգծվում է անիծվողի տարիքային ու սոցիալ-քաղաքացիական որոշ հատկանիշներ:

Այսպես. երբ մահվան անեծքը ուղղվում է երեխային, երիտասարդին, հատկապես ամուսնության փափագ ունեցողին, ինչպես նաև անտերունչ մեկին, ապա բաղձալի պատժի անողոք խստությունը առավել է ընդգծվում, որ և կազմում է անիծողի բուն նպատակը:

դ) **Մանուկ կամ երիտասարդ հասակում մեռնելու ցանկությամբ** անեծքներում, բուսական սիմվոլիկայով կամ ուղղակի, շեշտվում է անհաս ու անպտուղ մեռնելու, չաճելու և ժամանակից շուտ չորանալու գաղափարները:

«Ժուռ ու մուռ մեռնես» (ԷԱԺՁ 319), «Կանճ, ճիվան (երիտասարդ) էրթաս», «Խոկ (խակ) մեռնիս, խոկ սատկիս» (ԲԳ 331), «Կանաչ ու կարմիր օրդ թաղեմ» (ԱՀ XI 122), «Կանաչ օրդ կտրի» (ԱՀ XI 123), «Տղամարդ մեռնես» (ՀԺԱ 4), «Վեչ մըծանաս, օր-ումբըր տեսնաս», «Վեչ կնանչիս, վեչ ծըլիս, վեչ ծաղկիս, վեչ պըտկիս (պտղել)» (ՀԺՀ VII 113, 114), «Ծաղկես, ծըղկաթափես, կոճղուզես, չըր տառնաս (պտուղը չհասած թափվել)» (Վեն. Սահակ. հավ.),

«Բարըդ չուտեմ» (ԷԱԺՁ 310), «Պոչըդ վեր չելլա» (ԱՀ IX 196), «Անճդ չվերնա» (ՀԺՀ VII 105), «Ջհասնիս, չհասկրկիս» («Հիշատակ. Էվերեկ-Ցենեսեի» 886), «Ջհասնիս կենճութոն (երիտասարդության)» (ԲԳ 331), «Ոչ կըկոնես», «Կըկոմած, կըկոռնած թաղեմ քեզ» (ԱՀ XI 122), «Ջի ջայրես (աճել)» (ԷԱԺՁ 310) և այլն։

Այս ենթատիպին են գաղափարապես համամիտվում

դ) **Անփափագ կամ կիսափափագ մեռնելու ցանկություն** *արտահայտող անեծքները։ Դրանք նույնպես, մեծ մասամբ, ուղղված են մանուկներին ու երիտասարդներին և արտահայտում են գլխավորապես ամուսնության փափագին չհասած՝ մեռած տեսնելու գաղափարը։*

«Բեմուրատ-բեհասրաթ մեռնիս» (ԷԱԺԱ 134), «Թախտիդ նըստած մեռնես» (ԱՀ XI 122), «Թախտիդ նստած մեռնիս, ոչ թագավոր դառնաս» (ՀԺՀ VI 142)։ «Քողրած քուշուշկի (հարսանեկան քող և գլխանոց) հասրաթ մեռնես» (ԱՀ XI 121), «Ոչ գլուխ էթաս, չը ջաանիս» (իմ հավաք.) և այլն։

ե) **Հարազատների մահվան ցանկություն** *արտահայտող անեծքներում հատկապես ընդգծվում է սպանությամբ կամ որևէ փորձանքով անիծվողի զավակներին, եղբայրներին, ծնողներին կամ որևէ այլ մերձավորի մահվան ամենասոսկալի տեսարանների ենթարկված տեսնել։ Դրանով դարձյալ անիծողը փափագում է ջստագույն ձևով հոգեկան տառապանքի պատժի ենթարկել իր հակառակորդին։ «Մինուճարդ մեռնի», «Դարդակ նստիս քու էգ մեկուճար վուրթումեն» (ԹՄԿ 188), «Աղիզ բալեդ մեռնի» «Բալեդ աղաքիդ (առջևդ) թարտորիկ գա», «Բալեդ թունդիրն ընկնի» (ՀԺԱ 6, 5, 4), «Տղատ թոփենն ընգնե, խշփանչի (խաշվել), կուտ տեռնա» (ՀԺՀ VII 114), «Տըղըտ իրխը մեռած տեսնես» (ԱՈԻ 128), «Ջավաներիդ խերը չտեսնես, մի օր մեռնեն» (ԷԱԺԱ 138), «Մորըդ բալալարը (երեխաներ) կըտորվի» (իմ հավաք.), «Տանողի բալեքը կըտորվեն, սև հաքնի» (իմ հավաք.), «Երեխա բերես՝ չը կնքած մեռնի» (ՀԺԱ 6), «Բալատ ըռնըճիճիդ (արյունաշաղախ) տառնա», «Բալատ մաշարավ (սղոց) մորթեմ» (իմ հավաք.)[22]։*

---

22 Գաղափարով այս խմբին են մոտենում մոր՝ սեփական զավակներին ուղղված անեծքները։ Օրինակ. «Որդի, ավաղ-թավաղ մեռնես» (ԷԱԺՁ 315), «Ջունենամ քեզ պես անառակ զավակը» (ԷԱԺԱ 137), «Արուն անցնեիր, չըլլայիր» (ԷԱԺՁ 312), «Վուչ էիր բահամ էկի (գոյանալ) էսօրվա համա» (ԹՄԿ 194), «Վրադ լամ» (ԱՀ IX 196) և այլն, թեպետ բնույթով սրանք վերաբերում են սույն հիմնատիպի Ա և Բ ենթատիպի անեծքներին։

«Քու օխտը ախպերը մի պատանքմ դնեմ» (ԱՀ XI 125), «Հերն ու մերդ մեռնին, բարով ևթում մնաս», «Քու մոր մարթը մըեռնի» (իմ հավաք.), «Քու հար թաղիմ, ձեր բաղը քաղիմ» (ՀԺՀ VII 115), «Սրտիդ սիրեկանը, ջանիդ դուրեկանը մեռնի» (ԷԱԺԱ 136, 138), «Քու աղիզ մեռնի» (ԷԱԺՁ 309), «Աղդ ու ավլադը (զավակներ) տակին հավասարվի», «Տափերը թումբ-թումբ աներս» (իմ հավաք.) և այլն:

2. Մահվան բաղձանքից հետո անեծքներում, երկրորդաբար, կարևոր տեղ է գրավում անիծվողին **ծանր ու տևական հիվանդությամբ** պատժված տեսնելու փափագը: Այս տիպի անեծքների միտումն է՝ անիծվողի առողջ վիճակը փոխարինված տեսնել զանազան ծանր ու անբուժելի համարված հիվանդություններով:

ա) Առաջին ընդհանուր գաղափարը, որ ընկած է այս ենթախմբի անեծքներում, **հիվանդության սոսկական ցանկությունն է**, առանց որոշակի հիվանդության անվան:

«Հենց հիվանդանաս, վուր բամբըկով ջուր կաթեցնեն բիզ», «Հենց հիվընդանաս, վուր մե բըշմիշին օխտը գամ (անգամ) կծիս» (ԹՄԿ 191), «Դարդ-ցավի գաս ու սածու կրակի գաս», «Դարդ ու բալի (պատիժ) գաս» (ԹՄԿ 188), «Տուշոկ (անկողին) ընկնես, պելեքյար (երանի թե)» (ԱՈՒ 128), «Տամլաններու (ցավեր) կաս» (ԱՀ IX 196), «Դըրդոտվես, ծըկծըկոտվես», «Աստոծ քեզ դարդ տա, դարմանը (բուժումը) ինձանում ինի», «Յամանի (հիվանդություն) կյաս» (Վեն. Սահակ. հավաք.), «Ջաղամիշ ըլնիս, չոռ կպած» (իմ հավաք.), «Մաղիդ հըմբարքովը մին տնքաս» (ԱՀ XI 124), «Քու ջանից մահրում կենաս (զրկվել)», (ԷԱԺՁ 316), «Լոքմանի հեքիմ գա վրեդ», «Ջմեռնես շոտ. տեղդ մեջ տախտին ինկած մնա կեղտ ու ավելուցքի մեջ, աղփ ու աղփի խոտ քթիցդ պակաս չէլնի. ասեղը յոթ թիվովդ շալկես, ուժ ու զորութնից ինես» (ՎՍԲ 159) և այլն:

Սակայն, անեծքներին առավել բնորոշ է **որոշակի** հիվանդությունների ցանկությունը: Դրանց մեջ առաջին տեղը կարելի է դասել

բ) **մարմնական ցավերի** ցանկությունը, որ ուղղված լինելով ամբողջ մարմինը կամ նրա որևէ մասը ցավով բռնված տեսնելուն, առավել որոշակի է դարձնում հիվանդության բնույթը: «Ջոռ ու ցավը, դարդ ու բալեն կողքիդ դիպչի», «Ցավը կողքիդ դիպնի՝ լերդ ու թոքդ դուրս թափի», «Փորիդ ցավից բարով չազատվես», «Օխտը տարի մեկ կողքի տքաս՝ իլլաճ (հնար) չգտնես» (ԷԱԺԱ 137,

138, 139), «Ջանիդ սաղութեն չըտխնաս» (ԷԱԺՁ 310), «Ջանիդ վրեն տրորվես», «Լերդ ու թոքդ փորումդ տրորվի» (ՀԺԱ 8), «Միսըդ օսկըռիդ ձեն տա» (Վեն. Սահակ. հավ.), «Իմ մաղոքը տնքաս էնդադա» (ԹՄԿ 190), «Ու՜յ, թիվից կըտըը՝ չի կանըս կըպցընի» (ԱՈԻ 126), «Լիզոտ կապվը՝ չը կանըս խոսը» (ԱՈԻ 122), «Աղիքներդ կտրտի՝ դուրս թափի» (ԷԱԺԱ 134), «Քամին միջքադ (մեջքիդ) պըռնի» (Վեն. Սահակ. հավ.), «Տնքաս ու վըռչաս» (ԹՄԿ 194), «Ուշթըփըս ու թընաթըփըս (թոնաթափվել—մեռնել)» (ԱՈԻ 126), «Անիծվես, չըրչըրկվես, ուռուցք առնես, ուռուցվորես» (ՎՍԲ 159), «Քընց քարմաղ քըքըխս, քընց ցարմաղ՝ ձարձըրխս. տոնիրդի դնես, գլոխդի վերցուս» (ԷԱԺՁ 307), «Աճկիտ՝ ջիբլիբո (գարուկ), մատիտ՝ մատնաշունչ, մեճկիտ՝ ձիրձիդա (պալար), վուտիտ քարխեչ (կոշտ վերք)» (ԹՄԿ 185) և այլն:

դ) Մարմնական ցավերի ցանկությունն արտահայտող անեծքներում առավել հաճախակի և շեշտված է հանդես գալիս մարմնի վիրապատման՝ տարբեր, ծանր ու անբուժելի վերքերով ծածկվելու բաղձանքը:

«Ծակծկիս՝ դեղին ջրերդ էրթա» (ԷԱԺԱ 136), «Ծայծեյվիս՝ անքուն որդ խնի (ընկնել) ջանդ» (ԱՀ XIX 114), «Քըքըվիս՝ միսն ուկոռից ջոկվի», «Ծիծդ ծոցիդ մեջ ծակծըկվի, քըքըրի» (ԷԱԺԱ 139, 136), «Տիրամեր քեղի քըքըրի, քե անի կուտ» (ԷԱԺՁ 315), «Տիրամոր բալաք (խատուտիկ) յարեն հանիս» (ԷԱԺՁ 309), «Տիրամոր յարեն առնես, ինես, փնկըվնես» (ԷԱԺՁ 311), «Մուղնու յարեն վրեդ թափի, քըքըրվես» (ԷԱԺԱ 137), «Գոթու սև յարեն յընգնի քու ջան» (ԷԱԺՁ 308), «Յաման յարա հանես» (ՀԺՀ VI 142), «Ականեց յարեն առնես» (ԷԱԺՁ 310), «Ականից էն մոմուռ յարեն թափի վերեդ: բալաքվորես, ասղան տեղ չմնա վեր լեշիդ սաղ. խըժխըժես, մնաս արուն գյոլոխ, փխ-փխալինգ ջանիցդ անպակաս էլնի» (ՎՍԲ 159), «Վրեդ յանի ղարա դուրս գա, քըքըրվես» (ԷԱԺԱ 138), «Խըժխըժա յարեն ինի վրեդ» (ԷԱԺՁ 310). «Յոթ թուլու (տեսակ) խոց հանիս» (ԷԱԺՁ 319), «Ջանիդ վրա ծակ-ծակ դարդ հանես» (ՁԺԲ 67), «Ծայծըկիս» (ԲԳ 73), «Հըլըլիս՝ ջըրջըրանդ կըյրիս» («Բազմավեպ» 1902, 479), «Լաշիցդ արին ջուր գցես, փաշիդ վրեդ շուռ գցես» (ԱՀ XI 123), «Սև յարի (վերք) ջրեր վրեջեդ էրթա» (ԷԱԺՁ 320), «Ջանիցդ դեղին ջյուր էրթա» (ԱՀ XIX 114), «Քըքըվիս ու քծծվիս» (ԹՄԿ 195), «Եիլմա (որդ) ընգնի ջանըդ» (Վեն. Սահակ. հավ.), «Հըլըսխս (քըքըրվել), թափխս» (ԲԳ 331), «Ցնկցնկնոտես

(մանր վերքով պատվել), շան պես սատկիս՝ վերջանաս» (ԷԱԺԱ 138), «Նստես՝ միսդ թափի, կանգնես՝ ոսկորդ իրարից չըկչըկվի» (Վեն. Սահակ. հավ.), «Վրիցդ քոսը չըպակսի» (ԷԱԺԶ 318), «Բորոտիս, բոցը կրակը վառե քեզի» (ԷԱԺԶ 320), «Հեռամըրմընջակ (քոս) ընկնես տյու» (Վեն. Սահակ. հավ.), «Աստոծ քեզ քոս տա՝ ըղենդ չտա» (Վեն. Սահակ. հավ.) «Ջանիդ վրեն տրորվիս՝ յաման յարա ընկնես» (ԷԱԺԱ 138), «Բիվլիտ չուպոն նը (ուռուցք լինի)», (ԱՈԻ 121), «Լիզուդ յարա-փարա ընկնի» (ՀԺԱ 7), «Ծիծդ ծըկծըկոտվի» (ԱՀ XI 123), «Կեր ինի (ծակծկվել) քյու քիթ ու բերան» (ԷԱԺԶ 315) և այլն։

Հայկական անեծքներում առավել որոշարկված աչքի են ընկնում հատկապես կուրացման, խելագարության, անդամալուծության, ինչպես նաև մի քանի անվանական հիվանդությունների ցանկությունները։

դ) Կուրանալու ցանկությունն արտահայտող բանաձևերում, հիմնական գաղափարը՝ անիծվողին կուրացած տեսնելն է կամ կուրացման հետևանքով ֆիզիկական դժվարություններ կրելը։

«Քոռանաս ու կուրանաս» (ԹՄԿ 195), «Էչքըդ քեորնա» («Հիշատ. Էվերեկ-Ֆենեսեի», 886), «Էկու աչքիտ կուրնա» (ԲԳ 331), «Էչոցըդ (աչքերից) լըսը խավարը» (ԱՈԻ 120), «Աչիչ լուսդ քյաղվի» (ԷԱԺԶ 310), «Աչիչդ լուսը թափի» (ԷԱԺԶ 320), «Մաղբուն (կարոտ) նստես աչքիդ լսիցը» (ՀԺԱ 4), «Սէ յիգա՝ յաչքերդի» (ԷԱԺԶ 308), «Էչվետ (աչքերդ) պեող ընկնը (սպիտակել)» (ԱՈԻ 120), «Քեզ տեսնամ՝ ջուխտ աչքդ սիպտակի» (ՀԺԱ 3), «Աչքդ բնահան ընի» (ՀԺԱ 8), «Աչկիդ լյուսին հեռը (ցավ) տա» (իմ հավաք.), «Էսօր-էգվան կանանչ լուսդ թափի, յարի (վերք) ջրեր վրեջեդ էրթա» (ԷԱԺԶ 320), «Քոռնա՛ս, քոռ ապրիս» («Բազմավեպ», 1902, 479), «Քոռ էղնաս՝ դեմիս ընկնիս» (ԲԲ 546), «Յոթ տարի քոռ նստիս, կուշտ ու բոլորդ չտեսնաս...» (ԷԱԺԶ 313), «Աչքերդ սիվտկի, սև ջուր բռնի, պապեղդ (բիբ) խավարի, խավար մնա, մայիֆ (ավերված) մնաս. ձեռներդ բռնող, ման կածող էլ չէլնի» (ՎՍԲ 159), «Կռնիցդ բռնեմ՝ ման ածեմ» (ՀԺՀ VI 140), «Պատեպատ ման գաս» (ՀԺԱ 9) և այլն։

ե) Խելագարության ցանկություն դրսևորող անեծքներում անիծողի միտումն է անիծվողին տեսնել խելագարված կամ դրա ամենադաժան հետևանքներին ենթարկված։

«Գժվես, կատաղես, սար ու ձոր ընկնես» (ՀԺԱ 6), «Գժվես,

հանդերն ընկնես» (ՀԺՀ VI 142), «Խելըռիս՝ չոլեչոլ ընկնիս, մսերդ կրծես» (ԷԱԺԱ 136), «Կատղիս՝ թևերուդ միսը կրծես» (իմ հավաք.), «Կրատղես՝ միսդ ուտես» (Վեն. Մահակ. հավ.), «Ընկնավորես՝ գառցով սուրբ Գևորգա դուռն էթաս» (ՀԺԱ 8) և այլն։

զ) **Անդամալուծության բաղձանք** արտահայտող բանաձևերում, անիծողը կամենում է անիծվողին տեսնել անդամալուծված կամ դրա պատճառած տառապանքներին ենթարկված։

«Գոթենաս ու բրբրիս» (ԷԱԺԶ 308), «Սուրբ Կիրակին գունդ ու կծիկ ածի քեզ» (ՀԺՀ VI 141), «Քուխռում տըստըս (անդամալույծ նստես)» (ԱՈՒ 129), «Ձեռներդ քաշվի՝ չոնթ ու չոլախ մնաս», «Ոտներդ կոտրի՝ անկյալ մնաս, դուս չգաս» (ԷԱԺԱ 137), «Քու թևերը թուլանա» (ԷԱԺԶ 309), «Ցեռգլիտ տամարը չորնա» («Բազմավեպ», 1902, 479), «Քաշվի սիրտիդ դամարը» (ՀԺՀ VIII 105), «Գոթենաս, լեզուդ թութ (վերք) էղնի» (ԷԱԺԶ 308), «Լեզուդ լալկի, ձեռներդ չոնթանա» (ՀԺՀ VI 141), «Էչքիդ կուրնո, թևիտ թուլնո» (ԱԱ 50), «Քեզ տեսնամ՝ չոքըչոք ման գյաս» (իմ հավաք.), «Փորսող ման գաս» (ԷԱԺԶ 319), «Թոնդրա շրթեն չէլնիս» (ԷԱԺԶ 308), «Ջոր գետնին գերի ապրես, չոր կոճ դառնաս» (ԷԱԺԱ 137) և այլն։

է) Եվ, վերջապես, հայկական անեծքներում երևան են գալիս անիծվողին ուղղված **տարբեր կոնկրետ հիվանդություններով տառապելու** ցանկություններ։ Դրանցից են, օրինակ, թոքախտով հիվանդանալու բաղձանքը. «Վարամը (թարախ) բերնեդ գա՝ սիրտդ լցվի», «Վարամ բերես՝ է՛լ գեշ օրի մեռնես» (ԷԱԺԱ 138), «Վարամ գյա քյու բիթ-բերնեն» (ԷԱԺԶ 315), «Արին դարձնիս» (ԲԲ 545), «Արուն փխսիս» (ԷԱԺԶ 308). կարմիր քամով հիվանդանալու ցանկությունը. «Կարմիր քամին առնես» (ԷԱԺԶ 315), «Կարմիր քամին քաշա քզի» (ԷԱԺԶ 308). կոկորդացավով և քութեշով հիվանդանալու ցանկությունը. «Բուգուռուց դարդի գաս» (ՁԺԲ 66), «Ղըլչեն (քութեշ) քեզ տանի» (ՀԺԱ 6). ծաղիկով հիվանդանալու ցանկությունը. «Ծաղիկը քեզ տանի» (ՀԺԱ 6). ժանտախտով բռնվելու ցանկությունը. «Սիվ ցավն անե քու էրեսը» (ԹՄԿ 193), «Սիվ տեարտ (ցավ) իգո գագոթիտ» (ԱՈՒ 128). քաղցկեղով և վեներական ախտով հիվանդանալու ցանկությունը. «Կերցավ ընկնիս, խըլխըլոտիս» (ՀԺՀ VI 140), «Ֆրանկ ղաժմաթի (սիֆիլիս) հանիս» (ԲԳ 331). խժխժուկով հիվանդանալու ցանկությունը. «Խժխժեն ինի (ընկնի) վրեդ» (ԷԱԺԶ 310), «Խժխըժու ցավ առնիս» (ԷԱԺԶ 315) և զանազան այլ հիվանդությունների ցանկություններ։

3. Մարմնական տանջանքների ցանկություն: *Այս ենթախմբի անեծքները գաղափարապես համամիտվում են նախորդ ենթախմբի բանաձևերին, այն տարբերությամբ միայն, որ եթե նախորդում անիծվողին ուղղված մարմնական տառապանքների ցանկությունը դրսևորվում էր պանազան հիվանդությունների տեսքով, ապա այստեղ, հիվանդությունների փոխարեն առկա է մարմնական սոսկական տանջանքների բաղձանքը:*

Տանջանքների հարուցումը մի դեպքում կամեցվում է իբրև ինքնին իրագործվող գերբնական պատիժ, մի այլ դեպքում՝ իբրև անիծողի կողմից կատարվող անմիջական գործողություն, որով ավելի ազդեցիկ է դառնում անեծքը:

Այսպես, երբ պատժի հեղինակ է հանդես գալիս անիծողը. *«Ականջներդ ղուրղուշուն (արճիճ) հալեմ» (ՀԺՀ VI 141), «Աղ անեմ, մրմունջ անեմ՝ աչքերդ ածեմ» (ԱՀ XI 122), «Աչքիդ լիսը հանեմ՝ տեղը փլփիլ (պղպեղ) ցանեմ» (ԱՀ XI 122), «Պէպէկդ (բիբ) հանեմ» (ՀԺԱ 5), «Քու պտուղը (բիբ) կարիմ ոսի կանեփով» (ԹՄԿ 195), «Ճիկնարիտ ազընծիմ» (ԱՈՒ 124), «Միսդ շունը ծամի, արինդ ես խմեմ» (ԱՀ XI 124) «Վարամ բերեմ քու բերնեն» (ԷԱԺՋ 309), «Դոշիդ կրակ անեմ» (ԱՀ XI 123) և այլն:*

Երբ պատիժը կամեցվում է իբրև ինքնին իրականացվող գործողություն.

«Լեզուդ ծարծարակովդ դուրս գա» (ՀԺՀ VI 141), «Միսդ չապկահան ըլնի» (ՀԺԱ 7), «Սև օձը ականջիցդ ճոլոլակ ըլլի» (ՀԺՀ VI 139), «Սև քար վզեդ կախ էղնի» (ժմ հավաք.), «Ճղիկ-ճղիկ էլլաս (ջարդոտվել)» (ԱՀ IX 195), «Քեզ տեսնամ՝ գունդ ու պծիկ գաս» (ՀԺԱ 6), «Քըքըրվես դյու» (ԷԱԺՋ 316), «Լեզուդ օձը կծի» (ՀԺՀ VI 140), «Օձու գլուխ ուտես» (ԷԱԺՋ 316), «Արևիդ մեջ թալլտես» «ԷԱԺՋ 308), «Քյաֆուրի (դաժան, տմարդի) ճանկն ընկնես» (ՀԺՀ VI 142), «Ծծերըմդ փիլթա (պատրույգ) բանի» (ԱՀ XI 123), «Ծծերդ չանկլին» (ԷԱԺՋ 317), «Աչկըմըդ քոռամես վեր տան» (ԱՀ XI 122), «Յերեսդի յխուպի դառնա» (ԷԱԺՋ 308), «Ջիգյարդ սրեծին ընգնի» (ԱՀ XI 124), «Կրակն անծդ ընկնի» (ԵԱ 134), «Ջանիդ միսն ուտես» (ԷԱԺՋ 310), «Կաշիդ կրծես» («Բազմավեպ», 1902, 479), «Քեզ տեսնամ՝ եղովդ տապակվես» (ՀԺԱ 9), «Կռնակիդ վիյան (վրա) խշտոս (գնաս)» (ԱԱ 50), «Կրակ թափի վրադ» (ԲԳ 330), «Բերանտ կրակ նոգնի» (ԹՄԿ 187), «Բերոնըդ (բերան) խափանը»

(ԱՈՒ 119), «Լեզուդ սև շներն ու թրթուրները կրծեն» (ԷԱԺԱ 136), «Լիզուդ պապանձվի» (ՀԺԱ 8), «Բերանդ կարատվի» (ԶԺԲ 65), «Ձեռդ կոտրվի» (ԶԺԲ 66), «Թևդ թափի» (ԷԱԺԶ 317), «Թիվիդ խանձի» (ԲԳ 331), «Բեղ ու միրուքդ թափի» (ԷԱԺԶ 318), «Հերդ ու ջիգյարդ խաշվի» (ՀԺԱ 6), «Տասը մատեդ՝ մատ մը մնա» (ԷԱԺԶ 314), «Շունը երեսդ կրծե, որ էլ մարդ չաշե» (ԷԱԺԱ 137), «Դոն զքու ճիկյարը ուտիս» (ԱՈՒ 120), «Մուր ու լեղի ուտես» (ԶԺԲ 67), «Քիթեդ-բերնեդ գա» (ԱՀ IX 196), «Շատ ուտես՝ փորեդ չելնի» (ԷԱԺԶ 320), «Նստես՝ տակըդ էրի, ելը կենաս՝ կլոխդ էրի» (իմ հավաք.), «Օձի ծակին նստես, կարճի բնին կըլվընճաս (ոռնալ)» (իմ հավ.), «Տուր ու դմբոցն աստված գլխիցդ անպակաս անե» (ԷԱԺԱ 138), «Քուն չունցնաս (չունենաս)» (ԱՈՒ 129), «Ջոքեշոք խաչի դուռը գնաս» (ԱՀ XI 124), «Յոթ տարի սըբ Կարապետու դռներ քյադադ (ընկնավոր) էղնիս» (Վեն. Սահակ. հավ.) և այլն:

4. Եվ, վերջապես, այս հիմնախմբի մեջ են մտնում **փորձանք-պատահարի ցանկություններն** արտահայտող անեծքները, որոնք այլ բան չեն, քան մեծ մասամբ անիծվողին կամեցվող անակնկալ մարմնական պատիժներ: «Փորձանքից բարով-խերով աչք չբանաս» (ԷԱԺԱ 138), «Փուրձոնքը գոլխոտ պակաս չինը» (ԱՈՒ 129), «Պեթոր (վատթար) ու անօրեն փուրձոնք իգո գագոթիտ» (ԱՈՒ 127), «Բեխաֆիլ (անակնկալ) չարի ռաստ գաս՝ չաղատվիս» (ԷԱԺԱ 134), «Դվորը (որտեղ) գնաս՝ ոտդ քարին գա» (ՀԺՀ VI 141), «Հանկարծակի գաս» (ՀԺՀ VI 140), «Քար ընկնի գլխիդ» (ԱՀ XI 125), «Մասխոն ընկնի գլխիդ» (ՀԺԱ 8), «Տունիտ գագոթիտ փըլչի» (ԱՈՒ 128), «Կայծակ իջնի գլխուդ» (ԷԱԺԶ 312), «Ղաֆիլ ղադի (անակնկալ փորձանք) գաս» (ՀԺՀ VI 140), «Գաղաններու բերանը էրթաս» (ԲԲ 546), «Կանաչ խլեզ (մողես) մտնու անդաճդ» (ԱՀ XI 123), «Տուշմնիս (թշնամի) գլուխը չեկածը՝ գլուխտ գա» («Բազմավեպ», 1902, 479) և այլն:

20. **Սոցիալ-քաղաքացիական պատիժներ**.— Մարմնական պատժի ցանկություններից հետո, հայկական անեծքներում երկրորդաբար կարևոր տեղ է բռնում **սոցիալական** ու **քաղաքացիական** պատիժների բաղձանքը:

Ա. **Սոցիալական** պատժի ցանկությունների միտումն է զրկել, փոխել անիծվող անձի նյութական տվյալ վիճակը սոցիալական ծանր ու ողբալի կացությամբ:

1. Առաջին էական գաղափարը, որ աչքի է ընկնում այս են-

թախմբի բանաձևերում՝ անեծքի ենթակա անձին ապրուստի միջոցներից զրկված տեսնելու ցանկությունն է:

«Աստոծ հացդ կտրի» (ԱՀ XI 122), «Հաց չընկնա քու ձեռ» (ԷԱԺՁ 313), «Պելեքիր (փցիվ թե) տոնիտ (տանդ) հօց (հաց) չի գըտվը» (ԱՈԻ 126), «Մի կուճուր (փշուր) հացին կարոտ մնաս» (իմ հավաք.), «Խաց էն ծոց դնես՝ էն ծոցեդ ինի (ընկնել)», (ԷԱԺՁ 310), «Դուան փշրանք ձեռդ չինի» (ԷԱԺՁ 310), «Ջրի կարոտով մնաս» (ԲԲ 545), «Տանդ խերն ու պերեքեթը (շահն ու աճը) կըլյրի» («Բազմավեպ», 1902, 479), «Ըռզակետ (վաստակ) խերը չուտիս» (ԱՈԻ 121), «Քիսումդ (քսակ) բարաքյաթ չըլնի» (ՀԺԱ 6), «Տանտ նեսիբ խըսմեդն (բախտի բաժին) էրդա» («Բազմավեպ», 1902, 479) և այլն:

2. *Հաջորդը՝* անիծվողի ունեցվածքի ոչնչացման բաղձանքն *է, որ ուզում է իրականացված տեսնել անիծողը:*

«Մյուլքիտ (ունեցվածքդ) կըշնըվը (կորսվի)», (ԱՈԻ 125), «Ըրածդ գետի փայ դառնա» (Վեն. Սահակ. հավ.), «Փողդ հող դառնա՝ սատանի քամին տանի» (ԷԱԺԱ 138), «Աշխատանքդ շնեբաց, գելերաց ըլնի» (ԷԱԺՁ 318), «Մորու թերի (թուփ) տակին շվաք անես» (ԱՀ XI 124), «Գյաբեն (կարպետ) փռած, ասեղը վրեն տնկած մնաս» (իմ հավաք.) և այլն:

3. *Գաղափարով նախորդ տիպին են համամիտվում՝* տան ավերման և ոչնչացման ցանկությունն *արտահայտող անեծքները, որոնք վերջին հաշվով տանից բացի, խորհրդանշում են և՛ ինչքի, և՛ սերնդի ոչնչացման գաղափարները:*

«Տունդ ավրի» (ԲԳ 331), «Տունդ հրեղեն սուր մնի» (ՀԺԱ 7), «Տունդ վրեդ քանդվի» (ԷԱԺՁ 320), «Տունտ բըրըշակ (ավերակ) մնա, պըլամ» («Բազմավեպ», 1902, 479), «Տանտ սունդ դուս գա» (ԹՄԿ 194), «Տանդ կուկուն բուն դնի» (Վեն. Սահակ. հավաք.), «Յուրդ ու յուվեդ քամին տանի» (ԷԱԺՁ 318), «Անտեր ու բրիշակ (ավերակ) ըլի քու օջախը» (ԹՄԿ 186), «Ուճոխիտ (օջախդ) մյուրտնը (ոչնչանա)» (ԱՈԻ 125), «Օջախտ քանդվի» (ԹՄԿ 196)», «Տունդ կրակ ընկնի, բալեքդ քուլ (մոխիր) դառնա» (ՀԺԱ 6), «Տներդ սըթերա կյոմերը տառնա (ավերվել)» (իմ հավաք.), «Օջաղտ քոռնա» («Բազմավեպ», 1902, 479), «Օճախդ մարի» (ԺԱԲ 123), «Դոնիդ (դուռդ) փակվի» (ԲԳ 330), «Շեմդ շարվի» (ՀԺԱ 6), «Մուխդ մարի» (ՀԺՀ VIII 105), «Քու դուս էկած օջախը բըրընկավերվի (շրջվել)» (ԱՀ XI 122), «Դուռդ սև քարով շարվի» (ԷԱԺԱ 135), «Տունդ քանդվի, դուռդ շարվի» (ԷԱԺԱ 138), «Տուն ու տեղդ մոխիր

դառնա՝ քամին տանի», «Օճաղից ծուխը կտրվի, վերանա (ամայի) մնա» (ԷԱԺԱ 138, 139), «Տոնտ էօրան (ավերակ) տեռնա, կուկուն մաշին (մեջ) պյուն տէնի» (ՀԺՀ VII 113), «Տունդ վերանա (ամայի) ըլնի, բրիշակ (ավերակ) դառնա» (ԷԱԺԱ 138), «Տունդ հրեղեն սուրը մանի, տակնուվրա անե» (ԷԱԺԱ 138), «Քու հոր տան շեմքը չարվի, դուռը չըփարվի (ցանկապատվել)» (ԱՀ XI 122), «Գյրողը տունդ ավահիդ (շենք, շինություն) քարուքանդ անի» (ՎԱԲ 158), «Տանդ տեղը պոստան ցանեն» (ԺԱԲ 123), «Տունիդ պայխուշ (բու) խոսա» (ԲԳ 331), «Ճիրաքդ հյանգի, օճաղդ քյանդվի» (ՀԺՀ VII 116), «Հորդի տուն ավերի» (ԷԱԺՁ 308), «Քու հորդ օճաղը քանդվեր՝ դու միջից դուրս չգայիր» (ԷԱԺԱ 139) և այլն։

4. **Տնանկության ցանկությունն** արտահայտող բանաձևերում անիծողի նպատակն է հակառակորդին տեսնել տնանկ, անօթևան և թափառական։ «Տոն ու տեղ չինըս (չունենալ)» (ԱՈՒ 128), «Մի տեղ՝ մի տուն չունենաս» (ՀԺՀ VI 142), «Պատին տակը մնաս» (ԲԳ 331), «Քարեքար ապրիս, լավ օր երբեք չտեսնես» (ԷԱԺԱ 139), «Քարեքար ըլիս ու սարեսար» (ԹՄԿ 195), «Էրեբյուն էլնես» (ԷԱԺՁ 310), «Սուրգուն (հալածական, թափառական) ըլնես» (ՋԺԲ 67), «Անջուր քարեքար ընկնիս» (ՀԺՀ VI 140), «Քարեքար ապրես» (ՀԺԱ 8) և այլն։

5. **Դատելու և արդյունքը չվայելելու ցանկությունն** արտահայտող անեծքներն աչքի են ընկնում շեշտված դրամատիզմով և ունեն սոցիալական ընդգծված երանգ։ Դրանց մեջ անիծողը կամենում է հակառակորդին տեսնել հանապազօրյա չարչարվողի, տքնողի և աշխատանքի արդյունքը չվայելողի կամ նվազ վայելողի դերում, մի սոցիալական չարիք, որի մեջ ի հայտ է գալիս նաև դասակարգային դաժան շահագործման իրողության ժողովրդական ըմբռնումը։

«Տարին տասներկու ամիս դատիս, դատիս՝ մաղմուն (տխուր) նստես» (ԷԱԺՁ 319), «Շատ աշխատես, քիչ ուտես, քչից էլ մահրում (զուրկ) նստես» (ԷԱԺՁ 318), «Շատ դատես՝ քիչ ուտես, սովամահ մեռնես» (ԷԱԺԱ 137), «Մե արտ երկինք ցանես, մեկ՝ գետին, քեզի կուշտ չուտես» (ԷԱԺՁ 315), «Տարեն տասներկու ամիս աշխատես՝ ձեռդ կուշտ փորի չգնես» (ԷԱԺՁ 318), «Դատիս, բանիս՝ մեկ յախաղ (օձիք) էրկուս չըլլա» (ԷԱԺՁ 312), «Բանըս, բանըս՝ կիրակոծ մոխըրը (կրակ եղած մոխրում) թապըլտըս» (ԱՈՒ 118), «Դուն վաստըկիս՝ ուրիշները ուտեն» (ԷԱԺՁ 312), «Շատ դատիս՝ քիչ ուտես» (ԺԱԲ 123), «Դառը դատես՝ մահրում (զուրկ)

նստես» (ԷԱԺՁ 318), «Քեզ տեսնամ՝ բուբուն ածի, կուկուն տանի» (ՀԺԱ 6), «Խեր չտեսնաս՝ վաստակդ սատանին էնի» (ԱՀ XIX 114), «Դեր տա՝ սատանեն տանի» (ԷԱԺՁ 318) և այլն:

6. Սոցիալական չարաբանության արտահայտություններ են **ունեցվածքը հիվանդ վիճակում վայելելու** ցանկությունը վերարտադրող անեծքները, որոնք ուղղված լինելով հիմնականում անիծվող անձի կողմից ուրիշի ունեցվածքը ապօրինի յուրացնելու երևույթի դեմ, փաստորեն միտում են ունեցվածքը տանջանքով վայելելու գաղափարին, իբրև ծանր պատժի:

«Գողնքումն ուտիս ինձմեն փախցրած փուղիրը» (ԹՄԿ 187), «Ունցոծիդ (ունեցվածքդ) բարձր վիրո ուտիս» (ԱՈՒ 126), «Դատածդ բարձիդ տակն ուտես» (ԷԱԺԱ 135), «Քյու հախն (վարձ) տաս դեղի, դարմնի (բուժում), քեշի վրեն պառկես» (ԷԱԺՁ 316), «Ժանգը ծոցդ թափի, եսի օրդ հաց չգտնես» (ԷԱԺԱ 136) և այլն:

Սոցիալական չարաբանությունն իր բարձրակետին է հասնում ծայր աղքատացման, սովահարության և մուրացկանության ցանկություններն արտահայտող անեծքներում, որոնց մեջ անիծվողն առմիշտ դատապարտվում է սոցիալական ամենածանր պատժին՝ սովահարությանն ու աղքատությանը:

7. **Ծայր աղքատության** ցանկությունը վերարտադրող անեծքներից են.

«Ծաքած ջրնի հասրաթ (կարոտ) մնաս» (ԱՀ XI 124), «Շըղակե (վաստակ) խրիս չը տեսնուս (չտեսնես)» (ԱՈՒ 121), «Թունտիրդ տաք ըլնի՝ միջին բան չըլնի» (ԷԱԺՁ 318), «Շատ տարի սառն թունդրի վրա նստես» (ԷԱԺՁ 318), «Վատ օրից հեչ աչք չբանաս» (ԷԱԺԱ 138), «Աշխարհքում լավ օր չտեսնես ու չխանաս» (ԷԱԺԱ 134), «Օր-արև չտեսնաս» (ԲԳ 331), «Ոչ լավ օր տեսնես կյանքիդ մեջը» (ԷԱԺԱ 137), «Ոչ շեն տուն ընկնիս» (ՀԺՀ VI 140), «Բմբլահան ըլես՝ յախեդ (օձիք) ծամես» (ԱՀ XI 122), «Մեռիլետ անպատունք մոնո (մնա)» (ԱՈՒ 125), «Պատանքդ շուլուլեն սև-սև մաղեբով՝ խնոր (դրան) էլ արժանի չէլնես» (ՎՍԲ 159) և այլն:

8. **Մուրացկանության ցանկությունն** արտահայտող բանաձևերում անիծողը փափագում է անիծվողին տեսնել անտեր ու թափառական, մի բրդուջ հացի կարոտ մուրացկան:

«Մուրող մուրացկոն նըս (լինես)» (ԱՈՒ 124), «Ժամուն դուռները մուրաս» (ԱՀ IX 195), «Յոթ տարի ճարիս, մուրիս՝ տոպրըկիդ մեջ հաց չը տեսնիս» (ԷԱԺՁ 313), «Դռնեդուռ ման գաս՝ մի ճոթ (պատառ) հաց չը ճարես» (ԷԱԺԱ 135), «Կոր-մադուռ (կուրա-

ցած) ֆինես (ընկնել) փողնեփողան, գանեգուռ խաց մուրաս, ըսկուն-ըսկուն (նույնպես) ճաթռտվես (քրչոտվել), որ ծոցդ խաց դնելու տեղ չէլնի» (ՎՍԲ 159), «Փեճիդ (ուս) տոպրակ մը ձգիս՝ գանեգուռ մուրաս» (ԲԳ 331), «Տանեքան հաց հըվաքիս, բալամ, խըրգուխուր նիստիս» (ՀԺՀ VII 113), «Դանեգուռ ընկնես՝ ամեն տեղից մաղքուն (տխուր) դուս գաս» (ՀԺԱ 4), «Ուրուշը հաց մուրա՝ դու ջուր մուրաս. ուրուշին դուռը մնաս, աչքդ չը կշտանա» (ԺԱԲ 123) և այլն:

9. Եվ ի վերջո, այս ենթախմբի չարաբանություններում աչքի են զարնում **սովահարության ցանկություններ** մարմնավորող անեծքի բանաձևերը, ուր անիծողը կամենում է իր հակառակորդին տեսնել ընչազուրկ, միշտ քաղցած ու անհագուրդ: «Փորդ կշտանա ոչ» (ԱՀ XI 125), «Քու ձեռ կուշտ փորիդ չղնիս» (ԷԱԺԶ 314), «Կուշտ պառեկի վրա չպառկիս» (ԷԱԺԶ 313), «Գիշեր-ցերեկ քե կուշտ ուտել չըլնի» (ԷԱԺԶ 315), «Քու կուշտ կերած օր՝ Զատկի փրիկուն էղնի» (ԷԱԺԶ 309), «Ա՛խ» անես՝ կարոտ մնաս մի կտոր խացի, մի ումպ ջրի. կերի խոտ (հոտ) առնես՝ կերի նմուշ չտեսնաս, տեղնուտեղ ցամքես» (ՎՍԲ 159), «Աշխարհի երեսին ոչ լիանաս» (ՀԺԱ 7), «Ուտիս, ուտիս՝ փյուրիտ (փոր) չի լըցվը» (ԱՈԻ 126), «Կերածդ ֆող (հող) ըլնի, էն էլ սակավ ըլնի» (ԷԱԺԶ 319), «Ինչըղդա (որչափ) ուտիս՝ չը կշտանաս» (ԹՄԿ 190), «Օձի պես հողը լիզես» (իմ հավաք.), «Մեռլի միս ծամես» («Բազմավեպ», 1902, 479), «Օցի օսկոռ ուտես» (ԶԺԲ 68), «Քիչ աշխատես՝ կաշիդ ուտես» (ԷԱԺԶ 318) և այլն:

Բ. **Քաղաքացիական պատիժներ**.—Այս ենթախմբի բանաձևերի հիմնական իմաստը՝ անիծվող անձի ընտանեկան-քաղաքացիական նորմալ վիճակը վատթարացնելով փոխարինված տեսնելու ցանկությունն է, որ արտահայտվում է հիմնականում որբանալու, այրիանալու, ընտանիքի քայքայման և ամուսնալուծության, անընտանիք, անզավակ մնալու և սերնդի ոչնչացման վերաբերյալ չարաբանություններով:

10. **Անտերանալու** ցանկությունը վերարտադրող բանաձևերում անիծողը կամենում է անիծվողին տեսնել անինչք, անտեր և որբացած:

«Անտեր մնաս» (ԲԲ 546), «Անտեր մնաս ու մունդռեկ» (ԹՄԿ 185), «Անտեր մնաս՝ տերտըրուն տամ» («Բազմավեպ», 1902, 479), «Անտեր ու պոթոմպոլ (անինչք) մոնոս (մնաս)» (ԱՈԻ 117), «Անտեր մոնոս քո տյուրյուշը (տիրոջ) գըլխուն» (ԱՈԻ 117), «Ան-

պրոպ ու անմեռ (անհայր ու անմայր) մոնոս» (ԱՈՒ 118), «Դունեդուռը նոգնիս» (ԲՄԿ 188), «Տըռներին մնաս» (իմ հավաք.), «Եթիմ մնաս» (իմ հավաք.), «Տան տեր անեմ քեզ» (Վեն. Սահակ. հավ.) և այլն:

11. Այրիանալու ցանկությունն արտահայտող անեծքներն, իբրև խստագույն պատիժ, ուղղված են գլխավորապես անիծվող կանանց:

«Օրփեվերնաս» (ՁԺԲ 68), «Մարդամեռ մնաս» (իմ հավաք.), «Էրկընըկ (այրի) մոնոս» (ԱՈՒ 121), «Լաչակըս գլխիդ, դու էլ իմ հաց ու ջրես ուտես» (իմ հավաք.),—ասում է այրի կինը անիծվողին և այլն:

12. Ամուսնալուծության և ամուսինների ճանախակի փոփոխման ցանկությամբ բանաձևերը ուղղված են հիմնականում մատաղահաս աղջիկներին, իբրև նրանց մերձավոր բաղձալի ապագան կործանող խստագույն պատիժ:

«Էրկոց-էրիկ (ամուսնուց-ամուսին) երթաս» (ԲԳ 331), «Օխտը էրիկ անցնես» (ԷԱԺՁ 312), «Մե թայ (հատ) մաշկով օխտը դուռ էրթաս» (ՁԺԲ 67), «Մի ջուխտ մաշկով օխտը դուռ մտնես՝ օխտիցն էլ մահրում (զուրկ) մնաս» (ԷԱԺՁ 318), «Մի հատ քոշով օխտը տուն մտնես, թե տուն չգտնես՝ օձի բուն մտնես, օձի բնումն էլ ութ օր քուն մտնես» (ԱՀ XI 121), «Օխտը տեղաշոր պանաս» (Վեն. Սահակ. հավ.) և այլն:

13. Ընտանիք չկազմելու և անզավակ մնալու ցանկությունը վերարտադրող բանաձևերում անիծողի միտումն է հակառակորդին տեսնել անընտանիք և անժառանգ, իբրև ասավածային մեծագույն պատիժ:

«Օղուլ-ուշաղի (կին-երեխա) տեր չըննաս» (ԲԳ 331), «Խիզանի (կին-երեխա) երես չտեսնես իսկի ժուկ ու ժամանակ» (ՁԺԲ 66), «Որդու երես չտեսնես» (ԷԱԺՁ 318), «Ոչ տղի թոշա (այտ) պաչես» (Վեն. Սահակ. հավ.), «Տղե հարսոթ (կարոտ) իրթիս» (ԱՈՒ 128), «Ոչ խոխի (երեխա) ճկատը պաչես» (Վեն. Սահակ. հավ.), «Ճերմակ թաթլիգի երես չտեսնես» (ՁԺԲ 66), «Մեր Մայրամու ծնունդ չկանգնես» (ՁԺԲ 67), «Ղուզամեռ (երեխամեռ) մնաս» (իմ հավաք.), «Ժառանգիդ կարճ ըլլա» (ԲԳ 331), «Էրեխեքիդ խերը ոչ տըսնաս» (իմ հավաք.), «Փորդ լեքը տեհնես՝ կողքդ դարդակ» (ԱՀ XI 125), «Անորդի մեռ ըլնես, որդու ձեն չիմանաս» (ԷԱԺԱ 134):

14. Գաղափարով նախորդ խմբին են հարում նաև սերնդի ոչնչացման ցանկությունն արտահայտող բանաձևերը, որոնց նպա-

տակն է առհասարակ ոչնչացած տեսնել անիծվողի տոհմն ու նրա սերնդավորման ամեն մի հնարավորություն:

«Քոքդ աղանձվի» (ՀԺԱ 7), «Քոքտ չորնա» («Բազմավեպ». 1902 479), «Սոյդ (սերունդ) անցնի» (ԶԺԲ 67), «Սերմդ չորանա» (ՀԺԱ 7), «Տարպոտազտ (թոփ ու տերև) չորնա» («Բազմավեպ». 1902 479), «Օխտը պոստդ կրակվի» (ԶԺԲ 68), «Ես քեզ տեսա՝ դու ժառանգ չտեսնիս» (ԷԱԺԶ 313), «Չխերես, չբարես, չբդրես, չպտկես ու չծաղկես. թե ծաղկես, թե կանաչես էլ՝ իշվանք կուծեն ծիլ ու ծաղիկդ...» (ՎՍԲ 159), «Կեննաչ տիրև չունցնոս» (ԱՈՒ 123), «Ջոր քար էղնիս՝ պտուղ չտաս» (ԷԱԺԶ 314), «Տակռիքդ (արմատ) չորանա» (իմ հավաք.), «Արմատդ ծառի տակին չորանա» (իմ. հավաք.), «Ռիշեդ (արմատ) մուխ ընի» (ԶԺԲ 67), «Օզգիտ (ազգ) ու տոկիտ չիրնի (չորանալ), (ԱՈՒ 129), «Տըմաըլըղահան ըլեք (սերնդազրկվել)» (ԱՀ XI 125) և այլն:

Այսպես, ուրեմն, սոցիալ-քաղաքացիական բովանդակությամբ անեծքների մեջ չարամաղթությունները իրենց տարբեր արտահայտություններով հանգում են. ա) **ունեզրկման ու ծայրահեղ աղքատացման**, և բ) **անտեր, անընտանիք ու անսերունդ** մնալու գաղափարներին, որոնք մարդկային ցեղի գոյատևման համար (ապրուստի և բնական աճի իմաստով) առաջնակարգ նշանակություն ունեն: Հետևաբար, մարմնական պատիժներից հետո, խստության իմաստով, անեծքներում էական նշանակություն են ձեռք բերում սոցիալ-քաղաքացիական պատիժների ցանկությունները, որոնց նպատակն է ևս այլ եղանակներով արգելել ու ոչնչացնել մարդկային կյանքի աճն ու զարգացումը:

21. **Բարոյա-մարմնական պատիժներ.**— Այս հիմնախմբի անեծքների միտումն է՝ բարոյական և մարմնական պատժի ենթարկել անիծվողին: Ընդ որում, բարոյական պատիժն այստեղ ունի բացահայտ կրոնա-միստիկական երանգ: Այդ պատճառով էլ, եթե նախորդ հիմնախմբի անեծքներում գերիշխում էր իրական՝ բնական ու հասարակական պատիժների ցանկությունները, ապա այս հիմնախմբում առաջնակարգ տեղ է գրավում գերբնական՝ աստվածային ու կրոնա-բարոյական պատժի բաղձանքը: Ուստի և որպես պատժի հեղինակներ հանդես են գալիս աստված, սրբեր և զանազան միստիկական զորություններ:

1. Առաջին էական գաղափարը, որ երևան է գալիս այս հիմնախմբի անեծքներում՝ ցանկությունն է **աստվածային պատժի և խռովության**, որին կամենում են ենթարկված տեսնել անիծվողին:

«Աստված գա հախեդ» (ԲԳ 73), «Աստծու խաղեպին (պատիժ) գյաս» (ԱՀ IX 195), «Դիվան դատաստանդ աստված անի» (ԷԱԺԱ 135), «Աստծեն գնաս (պատժվել)» (ԲԲ 546), «Անֆած պելետ (աղետ, վնաս) տա» («Բազմավեպ», 1902, 479), «Խանի խարաբի (ավերակ) գաս, ասծու ղազաբի (պատիժ)» (ԹՄԿ 190), «Աստու հուր ու կրակը վրեդ թափի» (ՀԺԱ 8), «Աստուծու բարեկական կրակը թափի գլխիդ» (ԷԱԺԶ 318), «Կեծակը կրակ դառնա՝ գլխիդ թափի» (ԷԱԺԱ 136), «Կայենի օխտն անեծքն ու պատիժը վրեդ թափի» (ԷԱԺԱ 136), «Աստծու կեծակին ուստ գաս» (ԷԱԺԱ 134), «Աստծու կրակին գաս» (ՀԺՀ VI 140), «Հուր ու սուր թափը գագոթիտ» (ԱՈՒ 124), «Աստուծու սրին գաս» (ԲԳ 331), «Ձի էլած ճամփեդ աստոծ անըծի» (ԱՀ XI 124), «Սուրբ Թորոսը օլորքդ (ոլոք) քակե» (ՀԺՀ VIII 105), «Խաչ քե բըքրի» (ԷԱԺԶ 310), «Խաչը քեզ քոռացնե՝ գլխիդ խռով կենա» (ԷԱԺԱ 136), «Վերջին ճաշակին չարժանանաս» (ԺԱԲ 122), «Պատարագի ու ժամի սուրբ երես չտեսնես» (ԷԱԺԱ 138), «Քահանի պտուղին արժանի չըլլաս» (ԷԱԺԶ 312), «Աստված գլխուդ խռով կենա» (իմ հավաք.), «Էն «աւեր-կերեքի» զորությինը խռով կենա քու գլխին» (ԹՄԿ 188), «Էս լիսաթաթախ օրը քի (քեզ) խռով կենա» (ԱՀ XI 123), «Փառքդ երկնքից ու գետնից կտրվի» (ԷԱԺԱ 139), «Փայդ Ուռներին կալիցը կտրվի» (ԱՀ XI 125), «Կայենի կոտոշ հանիս» (ԵԱԺԶ 313), «Սև տարերք ջիգա քու արևուն» (ԷԱԺԶ 309), «Իղա արև տա ըքու պատիժ» (ԱՀԶ 31) և այլն:

2. Սեփական մեղքից պատժվելու ցանկությունն արտահայտող անեծքների հիմքում ընկած է մեղսագործության և նրանից պատուհասվելու կրոնա-բարոյական ըմբռնումը, մի պատիժ, որին անիծողը կամենում է ենթարկված տեսնել հանցապարտ անիծվողին:

«Քու մուր՝ քու գլոխ» (իմ հավաք.), «Քու արածը՝ քու առջիվը դեմ գա» (ԹՄԿ 439), «Բան չեմ ասի. բալքիմ (երանի) քյու ուֆնի (ընկնել) քյու կոտոշ» (ԷԱԺԶ 315), «Քու ոտք՝ քու ձիու գանկուն (ապանդակ) մնա» (ԷԱԺԶ 314) և այլն:

3) Փոքրաթիվ, բայց բարոյապես ազդու գաղափար են շոշափում աստծու նկատմամբ չարագործ դառնալու ցանկությունն արծարծող անեծքները:

«Քյուրուստոյուս (Քրիստոս) մեստնեող Ուդեան նըս (լինես)» (ԱՈՒ 129), «Քզի բան չըմ ըսի, լաո՛, Քրիստոսի մըխ (բևեռ) զարկող էղնիս» (ԷԱԺԶ 314) և այլն:

4. Վարձքի ոչնչացման և երախտիքի պատճառած պատժի

կրոնա-բարոյական գաղափարներն արժարժող անեծքներում կամեցվում է անիծվողի նկատմամբ այդ գաղափարներն իրականացված տեսնել:

«Վարձկդ շունը տանի» (ԱՀ XI 125), «Էն աղուհացը աչքդ բռնի, քոռացնե» (ԷԱԺԱ 135), «Իմ աղուհացը քնթեմեա դուս գա» (ԹՄԿ 190), «Հարամ նի (պղծվել) կիրոծ հոցիտ (հաց)» (ԱՈՒ 124), «Ամագս (երախտիք) աչկերդ քոռացնի» (ԱՀ XI 122), «Իմ ամաղն ու աշխատանքը քիզ հառամ ըլի» (ԹՄԿ 189) և այլն:

5. Իբրև բարոյական խստագույն պատիժ՝ անեծքներում երևան է գալիս անճիշատակ մնալու գաղափարը, որ ցանկանում է հակառակորդի նկատմամբ իրագործված տեսնել անիծողը:

«Անհիշատակ վեր ննգնիս» (ԹՄԿ 186), «Անունդ մարի» (ԱՀ IX 194), «Անումդ աստծանե կտրի» (ԱՀ XI 122), «Անունդ աշխարհքից վերանա» (ԷԱԺԱ 134) և այլն:

6. Բայց այս հիմնախմբում մեծ տեղ են բռնում փափագի չկատարման ցանկություններ արտահայտող անեծքները, որոնք հաճախ տարբեր սեռի ու տարիքի մարդկանց կողմից ուղղվում են իրենց հակառակորդներին: Դրանց մեջ երևան են գալիս ընդհանրապես փափագի չիրականացման և մասնավորապես ամուսնության, երիտասարդ դառնալու, զավակներով ուրախանալու փափագի և զանազան իղձերի խափանման ցանկությունները:

«Մուրազդի փորդի մնա» (ԷԱԺՋ 308), «Մուրազախափան ըլես» (իմ հավաք.), «Բեմուրազ ըլիս» (ԹՄԿ 187), «Կիս ու կատար (կիսակատար) մնաս» (ԱՈՒ 123), «Մուրատ քյու սիրտ չառնես» (ԷԱԺՋ 315), «Խորհուրդըդ փորդ մնա, մուրատդ՝ սիրտդ» (ԺԱԲ 122), «Վեչ մուրազիտ հըսնիս, վեչ դիլակետ (նպատակ, իղձ) հըսնիս» (ՀԺՀ VII 114), «Չոքեչոք օխտը սրբի դուռ էրթաս՝ էլի մուրազդ չառնես» (ԷԱԺԱ 137), «Չոր քարին նստես՝ անմուրազ մնաս» (ԷԱԺԱ 137), «Մտածածդ չկատարվի» (ԷԱԺՋ 320), «Ոչ թագ տնես գլխիդ» (Վեն. Սահակ. հավ.), «Կարմիրդ կապած մնա» (Վեն. Սահակ. հավ.), «Քու վիզ թագն ու պսակի խաչփոկ չկապիս» (ԷԱԺՋ 314), «Բալքիմ (երանի) վըր աթոռին չնստես, քյու փառաց պսակ չտըսնաս» (ԷԱԺՋ 315), «Թագդ մարին գցեմ» (ԱՀ XI 122), «Քեզ տենամ՝ կանաչ ու կյարմիրից կարոտ մնաս» (իմ հավ.), «Գլուխ գլխու չիտաս» («Բազմավեպ», 1902, 479), «Ուսպանքդ փշին տամ» (ՀԺՀ VI 139), «Ոչ թագի ու պսակի արժանի ըլես» (ԱՀ XI 122), «Տղա լաո՛, կարմիր թուսպան քու գլխու վերև չտեսնիս» (ԷԱԺՋ 314), «Հինեդ քամուն տամ» (ՀԺՀ VII 116), «Հինեդ

սև քամին տանի, հողերին խառնե» (ԷԱԺԱ 136), «Լաչակդ քամուն տամ» (ՀԺՀ VI 139), «Պեժինքդ (օժիտ) կապած մնա» (Վեն. Սահակ. հավ.), «Քու կանանչ-կարմիր արևուց խեր չտեսնիս» (ԷԱԺՋ 314), «Կենձուխյանդ (երիտասարդություն) խերը չտեսնաս» (ԲԳ 331), «Աշխըրքեն մահրում (զուրկ) մնաս» (ԱՀ IX 196), «Ջհանեիր, չկատարեիր ըլլալու» (ԱՀ IX 196)։

«Ոչ ըղաքիդ (տղեկ) քինթը կալած հարսը տեսնաս, ոնչ էլ բեխը ըլորած որդի» (ԱՀ XI 124), «Մահրում (զուրկ) կենաս քյու տղից» (ԷԱԺՋ 315), «Օխտը որդով սեղան չնստես» (ԷԱԺՋ 318), «Տղուցիտ խերը չուտես» (ԱՈՒ 128), «Հախմիան (արդարադատ) տերը քեզ փչացնե, հասրաթը (կարոտ) փորդ թողնի» (ԷԱԺԱ 136), «Աշըրտ ճամբան մնա» («Բազմավեպ», 1902, 479), «Արժանի չըլլաս տոնիդ» (ՀԺՀ VIII 105), «Քեզ տեսնամ՝ ուսումդ թերի մնա» (իմ հավաք.), «Էդ շենքը քեզ հարամ ըլնի, որ շինում ես, չվայլես» (իմ հավաք.) և այլն։

7. Այս հիմնախմբի անեծքների շարքն են դասվում նախնիների վիրավորանքի, գերեզմանի պղծության և անթաղ մնալու ցանկություններ արտահայտող բանաձևերը, որոնք ուղղվելով անիծվողին, դիպչում են նրա ժողովրդական ծիսակարգով ու հավատալիքներով սրբագործված նվիրական զգացումներին։

«Հերդ շուն տանա» (Վեն. Սահակ. հավ.), «Ա՛յ, հերդ շունը տանի» (Վեն. Սահակ. հավ.), «Յոթ հերդի շուն դառնա» (իմ հավաք.)։ «Շան փայ դառնաս» (իմ հավաք.), «Գյոռդ (գերեզման) շունը ք...» (Վեն. Սահակ. հավաք.), «Գյոռքադյոռ ըլնես տյու» (Վեն. Սահակ. հավաք.), «Պատանքը վիզդ ման գաս՝ տեղ գչտնես դադարելու» (ԷԱԺԱ 138), «Գյոռդ չդադարիս, խուլխուպա (տեղահան) ըլնես» (ԷԱԺԱ 135), «Գոռ չգտնես» (ՁԺԲ 66), «Խաչած գերեզման չմգնես» (ՁԺԲ 66), «Պառկելու տեղ չգտնաս» (ԲԲ 546), «Լուս գերեզման տեսնելու չարժանանաս» (ԷԱԺԱ 136), «Նաշդ չէրթա ոչ տապան, ոչ գերեզման, խողը քեյ տեղ չիտա, չաթրի (չտեղավորել)» (ՎՍԲ 158), «Սև հողի չարժանանաս, սև սիրտ մնաս» (ԷԱԺԱ 138), «Արժանի չըլիս խուղին» (ԲՄԿ 186)։

«Ագռավներ աչքդ հանին» (ԷԱԺՋ 317), «Անծղներ աչքերդ ուտին» (ԷԱԺՋ 313), «Երեսդ անապակավոր շները լփեն» (ԷԱԺԱ 135), «Օցը իրա պորտովը, հավքը թևովը՝ սեյրիդ (հանդիսատես) նստեն» (ԱՀ XI 125), «Կոր (կույր) բուեր, կոր անծեղներ նստեն վերեդ, վա՛յ տան քեյ» (ՎՍԲ 158) և այլն։

8. Գաղափարով այս հիմնախմբում են դարձյալ դասվում կեր-

պարանափոխության ցանկություններ արծարծող անեծքները, որոնց նպատակն է, իբրև պատիժ՝ անիծվողին տեսնել կերպարանափոխված զանազան պիղծ կենդանիների, ոգիների, առարկաների տեսքով։ Այս կարգի բանաձևերի հիմքում ընկած է անեծքի հետևանքով կերպարանափոխության ենթարկվելու նախնական հավատալիքը։

«Սև օձ էղնիս, պատեր քաշվիս» (ԷԱԺԶ 309), «Սև օձ դառնայիր, պատը քաշվեիր, բհամ չգայիր (չծնվել)» (ՀԺՀ VI 141), «Մըրթակյուլ (մարդագայլ) տեռնաս, ջանավարու (գազան) նման մարթ կոխիս, ուտիս» (ՀԺՀ VII 116), «Գել դառնաս, հանդն ընկնիս» (ՀԺՀ VI 139), «Շռն տեռնաս, տռներն ընդնիս, հաչիս, կընձկոնձաս» (ՀԺՀ VII 113), «Ճանչ դառնաս, պատին կփչիս» (ԹՄԿ 191), «Տիզ դառնաս, պատին կփչիս» (ԹՄԿ 194), «Խորթլոխ նըս» (ուրվական դառնաս) (ԱՈՒ 122), «Քար կտրիս» (ԷԱԺԶ 309), «Ջուր կտրես» (ԱՀ XI 124) և այլն։

9. Անեծքների մի փոքրիկ խումբ կա, որը արտահայտում է խռովության և անմիաբանության ցանկություն, ուղղված հատկապես անիծվող ամուսիններին։

«Դու, քու կնիկ գինձ ու միս էղնիք՝ իրար ուտիք» (ԷԱԺԶ 313), «Օձ ու լակլակ (արագիլ) դառնաք, իրար խեղդիք» (ԷԱԺԶ 314) և այլն։

10. Թվով համեմատաբար շատ են անիծվողին ուղղված անպատվության, խայտառակության և արհամարհանքի ցանկություններ արտահայտող անեծքները, որոնց մեջ պատկերավորման տարբեր միջոցներով դրսևորված են անպատվության և խայտառակության ազգագրական տարբեր իրողություններ և ըմբռնումներ։

«Թուք ու նալլաթը (անեծք) երեսիդ, աստծու կրակն էլ հետը» (ԷԱԺԱ 135), «Թուլը (թուք) մուրն ի վերատ» (ԱՈՒ 121), «Մուրն ի վրեատ, մորջուրն ի վրեատ» (ԱՈՒ 124), «Ծամդ կտրվի» (ՋԺԲ 66), «Պոչակուտուր (ծամերը կտրած) մնաս» (իմ հավաք.), «Վարսըդ վեր գա» (ԱՀ XI 122), «Հողն ու մոխիրը գլխուդ» (ԺԱԲ 123), «Էրեսդ սիվնա» (ԹՄԿ 188), «Անունդ սևնա» (ԵԱ 134), «Իշին նըստիս, կուդին (պոչ) բռնիս» (ԹՄԿ 189), «Ջյուրս հոգո բեճ ըլլիս» (ԱՈՒ 126), «Մարդու իրիս չո կանըս հեյի (նայել)» (ԱՈՒ 124), «Էրեսիդ հայող չնինա» (ԲԳ 331) և այլն։

11. Եվ ի վերջո, այս հիմնախմբում են դասվում անհաջողու-

թյան. դժբախտության և տառապանքի ցանկություններ արտահայտող անեծքները, որոնց նպատակն է անիծվողին կյանքում ենթարկել անհաջողության, դժբախտության և բարոյական, նյութական ու մարմնական տառապանքների։

«Խեր չի տեսնաս» (ԷԱԺՋ 310), «Ճամփեդ փուշ ու տատասկ բանի» (ՀԺՀ VI 140), «Ինայուր (որտեղ) իրթաս՝ բանտ օստտ չի գա (բանդ չհաջողվի)» (ԱՈՒ 121), «Չարչարանքով ապրիս քու օրը» (ԹՄԿ 192), «Ախուվախով ապրես» (ՀԺԱ 5), «Օրերդ միշտ ախուվախով անցկացնես» (ԷԱԺԱ 139), «Քանի ապրիս՝ վատ օր շատ տեսնես» (ԷԱԺԱ 139), «Ոչ լավ օր քաշես. թեաթափ ըլլիս» (ՀԺՀ VI 141), «Օրդ սև ու մութ ըլլի» (ԺԱԲ 122), «Սև օձորքի տակին սևաբախտ մնաս» (ԷԱԺԱ 138), «Ուրախ օր չտեսնես» (ԷԱԺՋ 318), «Շալե շապիկ հագնիս, ցլտիս (թափառել)» (ԷԱԺՋ 313), «Օրերդ մթան անցնես» (ՆԱ 134), «Եսիր մնաս» (իմ հավաք.) և այլն։

22. Հոգեկան պատիժներ.—Այս հիմնախմբի բանաձևերն ընդգրկում են անիծվողին կամեցվող, կրոնական պատկերացմամբ, հոգու տանջանքների, ինչպես նաև մարդկային հոգեկան տառապանքների՝ սգո, տխրության և վշտի ցանկությունները։

1. Հոգու կորստյան և տանջանքի ցանկություններ արտահայտող անեծքներում երևան են գալիս հոգու և հանդերձյալ կյանքի մասին ժողովրդի ունեցած կրոնական պատկերացումները, որոնց համաձայն անիծողը կամենում է իր հակառակորդի հոգին տեսնել սատանային և դժոխքին հանձնված, դժոխային տանջանքներին ենթարկված։

«Դոժոխաց բեժին նըս (դժոխքի բաժին դառնաս)» (ԱՈՒ 120), «Էպըլթը (դժոխքի եռացրած ձյութ) ժառանգիս» (ԱՈՒ 121), «Ջաըը (սանդարամետ) գնաս ու ջանդամը (դժոխք)» (ԹՄԿ 193), «Ջահանդամի էնթի պուճախը (անկյուն) գնաս» (ԹՄԿ 193), «Ջարի դավթարըմը գրվես» (ԱՀ XI 124), «Սատանի դաս դասվիս» (ԷԱԺՋ 308), «Դրախտի էրես չտեսնիս» (ԷԱԺՋ 313), «Քրիստոսի փայ չէգնիս» (ԷԱԺՋ 314), «Դատաստանեն զրկվիս» (ԷԱԺՋ 308), «Դատաստանըն պարտկոն նըս (պարտական լինել)» (ԱՈՒ 119), «Ջաըըս տանիս» (ԱՀ IX 196), «Հոքուտ դեմ գա քու արարմունքը» (ԹՄԿ 191), «Հուգատ խերը չըտեսնիս» (ԱՈՒ 123), «Հոգուդի տունե փլի» (ԲԲ 546), «Հոգուդ վրան խշխշաս» (ԲԲ 545), «Հիգե (հոգի) չը կանըսաս (չկարողանաս տալ)» (ԱՈՒ 124), «Ֆոքիդ ֆոքու ոչ խառնվի» (ԱՀ XI 125), «Ասրոծ (աստված) կըսբե (խանձել) հիգեա (հոգի)» (ԱՈՒ 118), «Հեգգիդ խանձի» (ԲԳ 331), «Դատաեմ քոքուրդ (ծծումբ)

դնեմ հոգուդ» (ԷԱԺՁ 320), «Քու հոգին սատանին էղնի» (ԷԱԺՁ 309), «Հոգիդ սատանին տանի» (ԷԱԺՁ 318), «Հոգիդ սաղանեքը տանեն, լաշդ՝ մոլլեքը» (ՁԺԲ 66), «Սատանեն հոգիդ առնի, տանի դժոխքը» (ԷԱԺԱ 138), «Ցոքիդ հուրը մաշի» (ԱՀ XI 125), «Կարեկարաս պատիս» (ԷԱԺՁ 308), «Հուրն-հավիտենից մաշես, իրիցես, մրրկես, մոխիր դառնաս» (ՎՍԲ 159) և այլն:

2. **Տխրության և վշտի** *ցանկությունները արտահայտող անեծքներում կամեցվում է անիծվողին տեսնել ծանր ու անելանելի վըշտի և տրտմության ենթարկված:*

«Օր տեսնես՝ արև չտեսնես ու չուրախանաս» (ԷԱԺԱ 139), «Էնքան ապրես, որ դարդ ու ղամի (ցավ ու վիշտ) մեջ մնաս» (ԷԱԺԱ 135), «Օխտը պորտավըդ դըրդոտվես» (իմ հավաք.), «Օր ու մեջ ապրես, էն էլ սև օրով ու դարդով» (ԷԱԺԱ 139), «Մաղբու (մենակ, դժբախտ) մնաս» (իմ հավաք.), «Մուխըդ մոլըրիս» (Վեն. Սահակ. հավ.), «Վուչ խնդաս դուն», «Վուչ խնդաս ու խիթարվիս» (ԹՄԿ 194), «Ըսկի ուրախուտեն չտեսնիս» (ԷԱԺԱ 308) և այլն:

3. **Սգո և սգավորության** *ցանկության անեծքների միտումն է՝ անիծվողին տեսնել սգի ու շիվանի մեջ կամ էլ սևով սգավորված: «Տունդ շիվան (սուգ) ըլնի» («Բազմավեպ», 1902, 479), «Մինչև մըն շաբաթը՝ շվանավ (սուգ) ընկնես» (Վեն. Սահակ. հավ.), «Զըխնտաս ու սև խնտաս» (ԵԱ 134), «Սև կապես, սև խաղնես, մըճմըճվո՛ր» (ԷԱԺՁ 315), «Սև իգա քզի» (ԲԲ 546), «Աստո՛ծ, տեսնամ՝ կնեկըդ պոշերը (մազեր) քանդի» (իմ հավաք.), «Շորերտ սև անիմ, պոչերտ (ծամ) էրիմ, իրեստ քսիմ» (ՀԺՀ VII 114), «Քյուլըս (մոխիր) գլխիդ» (իմ հավաք.), «Սիրտդ մեռնի, սևալաչակ նստես» (ԷԱԺԱ 138), «Սև-մութ կապես» (ԷԱԺՁ 320), «Սևակոլոլ ըլնես» (ՀԺԱ 5), «Սևալաչակ ըլես» (ԱՀ XI 122), «Մոխրվիս, ցեխվիս տու, հա՜...» (ՀԺՀ VII 113) և այլն:*

Սրանք են հայ ժողովրդական անեծքների իմաստային հիմնական խմբերը, որոնց մեջ ի հայտ են գալիս անեծքներում արտահայտված բաղձալի պատժի տեսակները: Դրանք ընդհանրացված ձևով հետևյալ պատկերն են ներկայացնում:

1. Մահ, 2. հիվանդություն, 3. մարմնական տանջանք, 4. փորձանք-պատահար, 5. ունեզրկում և աղքատություն, 6. որբություն, ընտանիքազրկում և սերնդի ոչնչացում, 7. աստվածային խռովություն և պատիժ, 8. փափագի չիրականացում, 9. անպատվություն և խայտառակություն, 10. անհաջողություն և դժբախտություն, 11. հոգու կորուստ և տանջանք, 12. սուգ և վիշտ:

7. ՕՐՀՆԱԿԱՆ ԲԱՆԱՁԵՎԵՐԻ ԿԻՐԱՌԱԿԱՆ ԽՄԲԵՐԸ

23. Բարեմաղթությունները օրհնանքներից տարբերվելով հանդերձ, ենթակա են նաև ներքին տարբերաբաժանման, ըստ իրենց կիրառական նշանակության: Մաղթանքների յուրաքանչյուր խումբ կապվում է կյանքի որոշակի բնագավառի հետ և կիրառվում է միմիայն տվյալ երևույթի առնչությամբ: Կյանքի այն կողմերը, որոնք աղերսվում են մաղթական բանաձևերին և հատկանշվում են մաղթանքների ամբողջական համակարգով, անհատների և հասարակության կենցաղում կարևոր և վճռական նշանակություն ունեցող բնամարզեր են ներկայացրել: Դրանք կամ հասարակության նյութա-արտադրական կյանքի բնագավառներն են, կամ էլ բարոյա-ֆիզիկական կյանքի ամենատարբեր երևույթները:

Եթե մաղթանքների կիրառումների ստորաբաժանման հիմքում դնենք մարդկային կյանքի կենսական զարգացման սկզբունքը, ապա հնարավոր կլինի վերականգնել մաղթական բանաձևերի կիրառման պատկերն իր տրամաբանական զարգացման ամբողջության մեջ:

24. Այս տեսակետից մաղթանքների առաջին բնականոն կիրառությունը՝ երեխայի ծննդյան հանգամանքի հետ առնչվելն է:

Ծննդաբերությունը ժողովրդի հնագույն ավանդական հայացքով ընկալվում էր խորհրդավոր ու միստիկական կերպարանքով, իբրև գերբնական աներևույթ ուժերի զորությամբ կատարվող իրողություն: Ուստի և առաջ են եկել ծիսա-կրոնական մի շարք արարողություններ՝ ծննդաբերության բարեհաջողությունը, ծննդկանի և նորածնի առողջությունը արտաքին չար ուժերից պաշտպանելու և ձեռնազերծելու համար: Այս միևնույն նպատակով են կիրառվել նաև օրհնանք-բարեմաղթությունները և հատկապես այն մաղթանքները, որոնք բնույթով անմիջապես աղերսվում են ծննդաբերության հանգամանքներին:

Մաղթանքների այս տիպն անվանում ենք **ծննդաբերության մաղթանքներ**: *Դրանց բնորոշ առանձնահատկությունն այն է, որ ուղղվում են ծննդաբերությանն անմիջապես աղերսվող երկու գլխավոր անձանց՝ ծննդկանին և նորածնին, և ըստ այդմ էլ բաժանվում են երկու խմբի:*

Ծննդականին ուղղված մաղթանքներ*ը բովանդակությամբ երեք գլխավոր խնդիր են շոշափում.*

1. Ծննդկանի առողջության պահպանությունը. «Բարով էտ նեղ

տեղից ազատվես» (ԱՀ XVI 33), «Բարով ու խերով կայնիս» (ԷԱԺՋ 324), «Աստծու աջողությունը վրեդ ըլի» (ԱՀ IX 252), «Աստծու աչքը վրեդ բաղցր ըլի» (ԱՀ XI 120) և այլն:

2. Չար ազդեցությունից զերծ ու ապահով պահելու ձգտումը. «Բարձդ բարի ըլնի» (ՋԺԲ 64), «Ուրախուտենով քառասունք բանիս» (ԷԱԺՋ 325) և նմանները:

3. Նորածնի կյանքի, առողջության ու երջանկության ապահովության ցանկությունը. «Նորամանուկիդ աստված պահե, զորացնե» (ԷԱԺԱ 131), «Աստված հորով-մորով պահի» (ԱՀ XVI 38), «Աստված հոր ու մոր համար պինդ ձեռքով պահի» (ԱՀ XIV 141), «Հորով-մորով վենձանա» (ԱՀ XI 120), «Մնացական զավակ ըլի (ԱՀ XI 120), «Ասբոծ մնացական էնե» (ԱՈԻ 110), «Բարի զավակ ըլի, հորով-մորով մինձանա» (ԹՄԿ 181), «Բախտավոր մանուկ ըլնի նորածինդ» (ԷԱԺԱ 128), «Աշխարքին պետքական, ամենքին սիրեկան-ղիրեկան ըլնի» (ԱՀ XI 119), «Աստված օխտը ձեռով քեզ բաշխի» (ԱՀ XI 119) և այլն:

Եթե ծննդկանին ուղղված մաղթանքները ծիսական արարողություններին քիչ են աղերսվում և մեծ մասամբ ասվում են ծննդկանին՝ այցելուների կողմից, իբրև նպատակային բարեբանություններ, ապա ծննդաբերության մաղթանքների մյուս խումբը՝ նորածնին ուղղված բարեմաղթությունները, առավել նեղ ու սահմանափակ կիրառություն ունեն. դրանք մեծ մասամբ ասվում են տատմոր կողմից ծիսա-կենցաղային որոշակի արարողությունների, հատկապես նորածնի ծիսական լվացումների ժամանակ: Ուրիշ կերպ չէր էլ կարող լինել, քանզի նորածնի հետ ծննդկանից հետո անմիջական շփում կարող էր ունենալ տատմայրը կամ նրան փոխարինող մեկը միայն, այն էլ ծիսա-առողջապահական որոշակի արարողություններ կատարելիս: Իսկ վերջիններս ուղեկցվում էին պարտադիր բարեբանություններով, որոնց նպատակն էր խոսքի հմայական զորությամբ ապահովել նորածնի առողջությունը, կյանքի տևողությունն ու երջանկությունը: Այնթապում, օրինակ, երեխայի ծննդից անմիջապես հետո, դայակը վերցնում էր մի հաց, դնում իր գլխին, որպեսզի մանկան «բախտը առատ լինի», նորածնի պորտը մկրատով կտրում էր՝ շշնջալով հետևյալ ծավալուն բարեմաղթությունը.

Վշտերու դարման,
Ցավերու առողջություն,
Հիվանդաց բժշկություն,

Տրտմելոց մխիթարություն,
Վաստակոց լիություն,
Պարտականաց ազատություն,
Փորձանաց անհետացում,
Ո՛վ տե՛ր, շնորհեա չունեցողաց ես։

(ԱԱ 51)։

Գանձակում մկրտության երրորդ օրը, երբ երեխայի «մեռոնը վեր էին առնում», հացի տաշտը դնում էին թոնրին, մի քիչ յուղ կամ ձվի դեղնուց էին քսում երեխայի մարմնի մեռոնով օծված մասերին, ապա կնունքի ժամանակ գործածված զույգ մոմերը վառելով տաշտի երկու կողմը, լողացնում էին երեխային և ասում հետևյալ մաղթանքը.

Հորով ըլես,
Մորով ըլես,
Կարմիր օրավ ըլես,
Ումրդ (կյանք) էրկան ըլի,
Քու հորն ու մորը հնազանդ ըլես։

(ԱՀՋ 282)։

Բորչալուում տատմայրը նորածնին լողացնելիս բարեմաղթում էր. «Մատ ըլիս, լավ ըլիս, ուրախ ըլիս» (ԱՀ IX 252) և այլն։

Բերած առաջին երկու օրինակները և նորածնի ծիսական մաղթանքներն առհասարակ, ծավալով ու բնույթով հիշեցնում են հմայական աղոթքներ և մասամբ մոտենում դրանց։ Դա պայմանավորված է մաղթանքների ծիսական արարողություններին ուղեկցելու հանգամանքով, երբ արարողությունների ներգործությունն առավել զորացնելու համար, հարկ է զգացվում հմայական ծավալուն բարեմաղթությունների։

25. Բարեմաղթությունների հաջորդ կիրառական խումբը՝ մանուկներին ուղղված մաղթանքներն են, որոնք ծիսա-կենցաղային որոշակի սովորույթի կամ իրադրության հետ չեն աղերսվում։ Դրանք որոշարկվում են սոսկ մանուկներին ուղղված լինելու հանգամանքով։ Եթե նախորդ՝ նորածնին վերաբերող մաղթանքներում հոգ էր տարվում մեծ մասամբ նորամանուկի կյանքի ու առողջության մասին, քանզի հին հավատալիքներով նորածինը ենթակա էր զանազան չար ազդեցությունների, ապա մանուկներին ուղղված մաղթանքներում գլխավոր գաղափարը մանուկների աճման ու բարգավաճման ցանկությունն է. «Ապրիս, զորանաս» (ԱՀ IX 193), «Զորանաս, վուրթի՛, իմ տարսը դառնաս» (ԹՄԿ 182), «Մլիս,

ծաղկիս» (ԱՀ XI 119), «Մառի պես ծաղկիս, ծաղկի պես ֆոտտաս» (ԱՀ XI 119), «Մառի պես էրգենանաս, ծառի պես ճղկնիրք ճարիս» (ԲՄԿ 182), «Մըես, ծախկես, հարուր տարեկան ըլնես» (ԶԺԲ 64) և այլն: Այստեղ արդեն հոգ է տարվում մանկան աճի ու զարգացման վրա. հասուն ու ջլապինդ, վազող ու խոսող երեխան հակառակ նորածնի, զերծ է այլևս չար ազդեցություններից. նրան պետք է մեծանալ, աճել ու հասունանալ: Եվ բնավ էլ պատահական չէ, որ աճի ու զորացման գաղափարը շատ տեղերում հանգեցնում է երեխայի կյանքի ապահովության ու ամուսնության գաղափարին, որ դրսևորված ենք գտնում «Տերը պահե, տերտերը փակե» (ԲՄԿ 184) տարածված մաղթանքում:

Մանուկներին ուղղված բարեմաղթությունների մյուս գաղափարը ազնիվ, պատվական ու մարդասեր մարդ դառնալու բարոյափիլիսոփայական ցանկությունն է, որ տարբեր ձևերով արձագանքվում է մաղթանքներում:

«Ծուշնաս, խորըդ-մորըդ պատիվ կիդնաս» (ԷԱԺԶ 326), «Հատով ծաղիկ դառնաս աշխարհքի համար» (ԷԱԺԱ 145), «Սաղ աշխարհքի համար արև ու լուսին դառնաս» (ԷԱԺԱ 146) և այլն: Տարիքային հատկանիշները շեշտող մաղթանքների մեջ երիտասարդներին ուղղած բարեմաղթություններ քիչ են հանդիպում. եղածն էլ հիմնականում արտահայտում է ամուսնության գաղափարը: Արդեն հասունացած երիտասարդի կամ տակավին պատանու համար, ժողովրդական ըմբռնումով, գալիք ամենաառաջնահերթ երջանկությունը ամուսնությունն է համարվում, ուստի և պատանիներին կամ երիտասարդներին բարեբանելիս մեծ մասամբ բարի և երջանիկ ամուսնություն են ցանկանում:

«Բարով կանաչ կարմիրըդ կապենք» (ԱՀ XVI 25) տարածված մաղթանքով՝ երիտասարդներին ամենուրեք ցանկանում են երջանիկ ամուսնություն:

26. Ամուսնությունը՝ մարդու սոցիալական ու բարոյական կյանքում կարևոր դեր խաղացող այդ իրողությունը, բնականաբար, պետք է հիմք ծառայեր զանազան բարեբանությունների, քանզի հարկ է զգացվում հմայական ներգործության տարբեր միջոցներով ապահովել նրա անխափան իրագործումը: Այդ պատճառով էլ առաջ են գալիս ամուսնությունը իրականացնող ու վավերացնող ծիսական տարբեր արարողություններ (հարսնախոսություն, նշանդրեք, թաշտադրեք, պսակ, հարսանիք և այլն), որոնց ուղեկցում են ծիսական զանազան մաղթանքներ: Բարեմաղթու-

թյուններն այս տեսակն անվանում ենք հարսանեկան մաղթանքներ: Նայած թե բարեմաղթությունը ամուսնության հետ առնչվող ո՞ր անձնավորությանն է ուղղված, ըստ այդմ էլ դրանք բաժանվում են տարբեր խմբերի։ Հարսանեկան մաղթանքների մեջ կարևոր տեղ են բռնում ամուսնության գլխավոր անձանց՝ նորահարսին ու նորափեսային ուղղված բարեմաղթությունները։ Նախ նկատենք, որ նորահարսին կամ նորափեսային ուղղված բարեմաղթությունները միատարր չեն. դրանք ասվել են հարսանեկան արարողությունների մասնակիցների կողմից՝ հարսին ու փեսային միասին, կամ սոսկ փեսային. հատուկ մաղթանքներ են ասվել աները կամ զոքանչը փեսային, սկեսուրը՝ հարսին, հարսի մայրը՝ նորահարսին և այլն, որով յուրաքանչյուր բարեմաղթող արտահայտել է բարեմաղթվող անձի նկատմամբ ունեցած սոցիալ-բարոյական և ազգակցական յուրատեսակ հարաբերություններն ու ըմբռնումները։ Հարսին ու փեսային ուղղված միասնական մաղթանքների մեջ գերիշխող գաղափարը նորապսակների սերը, միաբանության և միասին ծերանալու ցանկությունն է. «Մի բարձի ծերանաք» (ԷԱԺՁ 335), «Մեկ բարձի ծերանաք, միասին ապրեք» (ԷԱԺԱ 131) «Ապրիք, մե բարձի ծերանաք, ծերունի Սիմավոն դառնաք» (ԺԱԲ 120), «Իրար հետ հալիվորեք, պառավեք» (ԷԱԺՁ 335), «Աստված սեր ու միաբանություն տա» («Մեղու Հայաստանի», 1885, № 73), «Աստուծ անփոշիմնելի անե» (ԹՄԿ 180) և այլն։ Այսինքն՝ պահպանվում է ամուսնության մեջ ամենաէականը՝ միության անքակտելիությունն ու միաբանությունը։ Միևնույն գաղափարին է հարում նաև ամուսնական երջանկության ցանկությունը, որ դրսևորված ենք գտնում «Աստված բարի բախտ տա» (ԷԱԺՁ 334) մաղթանքում։ Սրանց համահնչուն է նաև «Թագ ու պարծանք ըլիք» (ԱՀ XI 119) մաղթանքը, ուր արտահայտվել է հատկապես հարազատների բարոյա-խրախուսական բաղձանքը՝ նորապսակների փառավոր ու պանծալի ապագայի նկատմամբ։

Մյուս էական գաղափարը, որ գտնում ենք հարս ու փեսային ուղղված բարեմաղթություններում, ամուսնության գլխավոր նպատակներից մեկի՝ ժառանգ ունենալու, սերնդավորման ցանկությունն է։ Դրա սիմվոլային դրսևորումներից մեկն է «Փնջփնջնոտիք» (ԱՀ XI 119) մաղթանքը, ուր բուսական սիմվոլիկայի միջոցով արտահայտվել է բազմանալու, սերնդավորման բաղձանքը։ «Ձեր առջնեկը տղա ըլի» (ԱՀ XI 119) բարեմաղթությամբ հոգ է

768—15

տարվում նորապսակների սերնդի, հատկապես հայրական ճյուղի հարատևման մասին:

Մաղթանքների առանձին փունջ են կազմում հարսանքի հանդիսականներից, աներից և զոքանչից սոսկ փեսային ուղղված բարեբանությունները:

Հանդիսականներից փեսային ուղղված մաղթանքներում առաջնային գաղափարը **ամուսնական միության հաստատ ու հավատարիմ** մնալու բաղձանքն է, որ տեսնում ենք, «Թախտիդ ու թաչիդ հաստատ մնաս» (ԷԱԺԱ 130), «Թագդ ջուխտ ձեռով պահե ասված» (ԷԱԺԱ 129) և այլ մաղթանքներում:

Մյուս էական գաղափարը՝ ամուսնության **բարի ու երջանիկ** վայելքն է, որ կամենում են հանդիսականները նորափեսային. «Բարով վայելես թագ ու պսակդ» (ԷԱԺԱ 129), «Պսակովդ ծերանաս» (ՀԺՀ VII 119), «Թագավո՛ր, մամալեդ[22] բարով վայելես» (ԷԱԺԱ 129), «Մուրազիդ հասնես» (ԱՀ XI 119) և այլն:

Աներից՝ փեսային ուղղված մաղթանքներում գլխավոր բաղձանքը փեսայի գործնական-սոցիալական կյանքի հաջողությունն է. «Կալիդ քամի ըլի, ջաղացիդ հերթ ըլի» (ԱՀ IX 239), «Դվոըը գնաս՝ աստուծ քու բանելու գործին հաջողություն տա» (ԱՀ IX 239), «Տեր աստուծը թուրդ կտրուկ անի, բախտըդ երիցան անի» (ԱՀ IX 239) և այլն. այսինքն այն, ինչ կարող է ցանկանալ ընտանիքի կարիքները հոգացող տղամարդը իր նմանին:

Մինչդեռ զոքանչից նորափեսային ուղղված բարեմաղթություններում գլխավոր նպատակը՝ ամուսնության բարոյական կողմի ապահովումն է, այն է՝ բարությամբ, փառքով ու երջանկությամբ վայելել ամուսնության պտուղները: «Աստուծ ձեր չարը բարի անի», «Քու իմ օջախից վեր առած մի բուռը մոխիրը անհատնում ոսկի դառնա քեզ համար», «Որդով ու փառքով լիանաք աշխարումը» (ԱՀ IX 240) և այլն:

Հարսանեկան մաղթանքներում առանձին խումբ են կազմում **նորահարսին** ուղղված բարեբանությունները: Ուշագրավն այն է, որ նորահարսին բարեմաղթում են կանայք և մեծ մասամբ՝ ազգականները: Առանձնակի ծիսա-ազգակցական բովանդակություն ունեն խնամիական հարաբերությունների մեջ կարևոր դեր խաղացող կանանց՝ հարսամոր և սկեսրոջ, նորահարսին ուղղված մաղթանքները: Առաջինը իր դստերը օտար տուն հարս ուղարկելով, ցանկա-

22 Ունեցվածք, բաժին, որի տակ նորահարսն է նկատի առնվել:

նում է նրան աճ ու որդեծնություն, ամուսնու հետ հավերժական միություն ու համերաշխություն. «Մլիս ու ծաղկիս, քու տիրոջ հետ մի բարձի ծերանաք» (ԱՀ IX 240):

Հարսամոր ցանկություններին համահնչում է սկեսրոջ բաղձանքները նորահարսին: Նա ևս ցանկանում է, որ հարսը պտղավորվի և ժառանգ ունենա. «Բար ու նուբարը արևներեդ» (ԱՀ XI 119), որ իր զավակն ու հարսը միշտ անբաժան լինեն. «Քու տերդ գըլխիցդ անպակաս ըլի», «Քու տերդ ապրի», «Քու գլխի տիրոջ հետ երգարիս» (ԱՀ XI 119): Ապա, սկեսուրն հոգում է իր նորահարսի ֆիզիկական ու բարոյական երջանկության ու անվտանգության մասին. «Աչքի լուսով, ցամաք աչքով ապրիք», «Քու աչքը քի էրնեկ տա», «Անումով հարս դառնաս, բարով-խերով իմ տարսը դառնաս», «Աղու (մայր) ծիծը քեզ բարեխոս», «Ջախու ծիծս քեզ պահապան» (ԱՀ XI 119) և այլն:

Ծիսական առանձնակի բնավորություն ունեն հատկապես փեսացուի մորն ուղղված մաղթանքները հարսանիքի նախօրեին՝ տաշտադրեք կոչված ծիսական արարողության ժամանակ: Վերջինիս էությունն այն էր, որ ազգական կանայք հավաքվելով փեսացուի տանը՝ նախաճաշում էին, բարեմաղթում ապագա սկեսրոջը, ապա բերում էին մի տաշտ և մի պարկ ալյուր, հրավիրում մի բեղմնավոր, որդու և ամուսնու կսկիծ չտեսած կնոջ՝ հիշյալ ալյուրը մաղելու: Վերջինս՝ վերցնելով մաղը, մի քիչ ալյուր էր մաղում և բարեմաղթում. «Հանդին պտղաբերություն, աշխարհին առատություն, հիվանդին առողջություն, փեսային ու հարսին բախտավորություն և երկար կյանք»: Ապա ներկաները չորս կողմից բացականչում էին. «Աստված շնորհավոր անե, բախտավոր ըլեն, արդար հոգու տեր ըլեն» (ԱՀ IX 226): Նշված բարեմաղթությունների հմայական նշանակությունը բացահայտ է. մաղթանքներն ուղեկցում են ծիսա-հմայական մի արարողության, որի նպատակն է նմանական գործողությամբ նորահարսի մոտ առաջ բերել պտղաբերություն, անկսկիծ ամուսնություն, կենսամիջոցների առատություն: Նույն ցանկությունը տեսնում ենք արտահայտված արարողությանն ուղեկցող մաղթական բանաձևերում: Վերոհիշյալ գաղափարները նորերով համալրված երևան են գալիս նաև տաշտադրեքի հավաքույթի ժամանակ փեսացուի մորն ուղղված բարեմաղթություններում: Վերջիններս, որ ուղեկցում էին տաշտադրեքի նախաճաշային կերուխումին, առատ ուտելիքի ու խմիչքի հետ միասին, գործնական ու գաղափարական յուրակերպ նախապատրաստություններ

են տաշտադրեքի բուն հմայության: Նախաճաշը ուտելիքներով ու խմիչքով խորհրդանշում է, հավանաբար, նորապսակներին ու նրանց ընտանիքին ցանկացվող կենսամթերքների առատությունը, պտղաբերությունն ու երջանկությունը, որ բառացի արտահայտված ենք գտնում փեսամորն հղած մաղթանքներում:

«Քու օջախի հացն ու բարին շատ ըլի: Քու հացը հայր Աբրահամու հացը դառնա, որ ոնչ հատնի, ոնչ պակասի: Քու տերը քու գլխիցը անպակաս ըլի: Բարով ու խերով մին տարեն վրա տղա թոռան թուշը պաչես: Աստված էլ մեր նորահարսի ոտը բարելի անի հանդի ու հանդաստանի համար, մեր շեկլիկ ու արար աշխարքի համար» (ԱՀ IX 226):

Վերջին մաղթանքում շեշտվում է հատկապես նորի, առաջինի հմայական ներգործության զորությունը ամբողջ ընտանիքի տնտեսական ու բարոյական կյանքի բարգավաճման վրա: Այդ պատճառով էլ հավաքվածները ցանկանում են նորապսակների կյանքին ապահովություն և ամենայն չար ազդեցությունից ազատություն. «Աստված ջուխտ ծաղիկդ օջախիդ բախշի: Աստված նրանց չար աչքից, չար նիաթից ազատ պահի» (ԱՀ IX 226): Սրանց և ծիսական այլ կարգի մաղթանքների մեջ, որ հետո կտեսնենք, առավել բացահայտ է դրսևորվում մաղթանքների հմայական իմաստը, նրանց հմայական ներգործության հավատալիքը:

Ի վերջո, հարսանեկան մաղթանքների մեջ մի փունջ էլ կա, որ ուղղված է միմիայն հարսանեկան հանդեսի, նրա արարողությունների հաջողությանը, նրա երջանկացնող և ուրախացնող խորհրդի կայունությանը («Շնորհավոր, ուրախ հարսանիք ըլնի», «Ուզուրով ու ղադամով հարսնիք ըլնի» ԷԱԺԱ 132, «Տունիդ շեն, խայլու (բազում, շատ) նը հարսնըք տե» ԱՈԻ 86 և այլն):

27. Մաղթանքների հաջորդ խումբը, որ ձևով մասամբ մոտենում է հարսանեկան հանդեսի կերուխումին ուղեկցող բարեբանություններին՝ **սեղանի մաղթանքներն են:**

Առատ ու լի սեղանը միշտ էլ ժողովրդի աչքում եղել է լիության ու առատության խորհրդանշան. նրա և հատկապես ծիսական սեղանի հետ են աղերսվել գալիք օրվա լիառատ կյանքի ակնկալիքներն ու պատկերացումները: Այստեղից էլ ամեն մի նոր սկսվող սոցիալ-կենցաղային ու բարոյա-ծիսական երևույթի (ծնունդ, կնունք, ամուսնություն, զանազան տոներ) վավերացման սովորույթը առատ սեղանով և կերուխումով: Դրանով լիառատ սեղանին և, հատկապես, ծիսականին վերագրվում էր հմայական նշանակու-

թյուն, գալիքի վրա ներազդելու հմայական կարողություն: Այսպիսի ըմբռնումն ու պատկերացումը նկատի առնելով է միայն հասկանալի դառնում սեղանին ուղեկցող այն բազմաթիվ օրհնաբանությունների նշանակությունը իր տարբեր արտահայտություններով:

Առաջին էական գաղափարը, որ ընդգծվում է սեղանի մաղթանքներում, սեղանի լիության ու առատության ցանկությունն է: Իսկ քանի որ լի սեղանը արտահայտությունն ու խորհրդանիշն է շեն ու ապահով կյանքի (որ որոշակի արտահայտված ենք գտնում «Ձեր սեղան փռուկ էղնի» (ԷԱԺՁ 325) մաղթանքում) ապա վերջին հաշվով լի սեղանի ցանկությունը դառնում է սեղանատիրոջն ուղղված սոցիալական բարեկի կյանքի մի բաղձանք:

«Սեղանդ բարեկի ըլնի ու ամեն բարությունով լցվի» (ԷԱԺԱ 139), «Էս բարիքը սեղանիցդ անպակաս ըլնին» (ԷԱԺԱ 129), «Սեղանդ անպակաս ու լիառատ մնա» (ԷԱԺԱ 132), «Համաշա ձեր սուփրեն ացած ըլի, գավով գինին դրած ըլի» (ԱՀ XI 120), «Աստոծ սուֆրիտ փոշոնքը (փշրանք) պակաս չենե» (ԱՈԻ 113), «Ինչ որ մենք պակասցրինք՝ աստված փոխարենը լցնե» (ԷԱԺԱ 130), «Ես պակսեցուցի՝ աստված ավելցունե» (ՀԺՀ VII 120), «Հայր Աբրահամի բերեքեթը մեջն ըլա» (ՀԺՀ VII 120) և այլն: Բերած մաղթանքները շեն ու լիառատ կյանքի ակնկալություններ են, որ սեղանակիցները ցանկանում են սեղանատիրոջը: Այս գաղափարը առավել ընդհանրանալով ու վերաճելով՝ սեղանից տարածվում է ընդհանրապես տվյալ տան, օջախի, գերդաստանի, այսինքն՝ տվյալ հասարակական բջջի շենության ու **կանգունության** ըմբռնման վրա: Եվ այդ մենք տեսնում ենք սեղանի մաղթանքների գաղափարական մյուս փնջում, որի արտահայտություններն են հետևյալները.

«Աստված օրհնե; շեն պահե» (ՀԺՀ VII 120), «Օջախդ շեն» (ԱՀ XI 120), «Աստված օխնե, շեն պահե, ձեր սեղանը շեն պահե» (ԱՀ XI 120), «Ձեր տունը շեն ըլի, ձեր սուփրեն էրգար ըլի» (ԹՄԿ 183), «Ձեր տունը հայր Աբրահամու օջախը դառնա» (ԱՀ XI 120), «Աստծու տան հետ շեն կենաք. շեն ու շհար (քաղաք) ըլեք, բահր (բերք) ու բհար (գարուն) ըլեք» (ԱՀ XI 120) և այլն:

Տեսնում ենք, ուրեմն, որ սեղանի մաղթանքներում սեղանը սոսկ այդպիսին չի ընկալվում, այլ դառնում է սոցիալական շեն ու լի կյանքի մի խորհրդանիշ:

Սեղանի մաղթանքների մեջ մի ուրույն բաժին են կազմում **կենացները** կամ **բաժակի մաղթանքները**: Սրանք, անմիջապես ա-

զերսվելով սեղանին, վերաբերում են միայն այն անձին կամ անձանց, ում կենացը որ ավյալ պահին խմում են: Կենաց մաղթանքներում, հարկավ, կենաց խմողի ցանկությամբ, կենացի տիրոջն ուղղվում են բազմաթիվ բարեբանություններ, որոնք ունեն ընդհանուր օրհնաբանական բնույթ և առանձին տիպական գծերով չեն հատկանշվում: Դրանցից առանձնանում են դիմումի մի շարք ավանդական բանաձևեր, որոնք բնորոշ են միմիայն կենացներին և համընդհանուր տարածում ունեն: Դրանք էլ հենց անվանում ենք կենաց կամ բաժակի մաղթանքներ:

Կենաց մաղթանքները քանակով շատ չեն և սահմանափակ են բովանդակությամբ: Դրանց մեջ իշխող գաղափարը, ինչպես ցույց է տալիս հենց անունը (կենաց), դիմացինի կյանքի և առողջության պահպանման ցանկությունն է, որ դրսևորված ենք գտնում «Սաղ ըլես», «Ողջ լինեք», «Ձեր հրամանուց պոյծառ կինացը» (ԲՄԿ 222, և հար ու նման այլ բանաձևերում: Այս գաղափարն արտահայտող կենացները, սովորաբար, ուղղվում են կենացի ենթակա անձին՝ նրա պատվին նվիրված բաժակը ըմպելուց առաջ. այլ կերպ ասած՝ նախորդում են խմելուն: Մինչդեռ բաժակի մաղթանքների մի խումբ կա, որ խմած կենացի դիմաց պատասխանում է կենացի ենթակա անձը՝ կենացը խմողին, և հաջորդում է խմելուն: Այդ պատասխանի մաղթանքները միմիայն մեկ գաղափար են արտահայտում՝ խմիչքը կենաց խմողին հաճելի ու բաղցր լինելու ցանկություն: «Անուշ ըլլա» (ՍՀ IX 193), «Անուշ, աբոծ անուշ էնե» (ԱՈՒ 86), «Խմողաց անուշ լինի», «Անուշ խմողաց» և այլն:

Կենացի առաջարկության, խմիչքն ըմպելու և դրա դիմաց պատասխան մաղթանքների արտաբերման ամբողջ սովորույթը, կարծում ենք, հնամյա ծիսական վերապրուկ է սրբագործված կամ սուրբ համարվող ըմպելիքների նախնական զոհաբերության, դրանից ակնկալվող բարի հետևանքի և զոհաբերությունն ընդունելի լինելու ցանկության[23]: Հիշյալ ծեսի առավել ուշ կրոնական արտահայտությունն ենք գտնում քրիստոնեական եկեղեցու պատարագի խորհրդավոր արարողության միջուկը կազմող հացի ճաշակման և գինին ըմպելու ծիսական գործողության մեջ:

Պատարագի (իմա՝ զոհաբերության) ողջ էությունը կազմում է Քրիստոսի մարմինն ու արյունը սիմվոլացնող հացի և գինու ճաշա-

23 Մանրամասները տե՛ս С. Б. Арутюнян, Реликты благословений при общественном жертвопоедании, «Պատմա-բանասիրական հանդես», № 3, 1971, էջ 256—262:

կումը, որը դիտվում է իբրև Քրիստոս-աստծու զոհաբերություն մարդկությանը, նրան երկար կյանք պարգևելու և մեղքերին թողություն տալու ակնկալիքով: «Որպէս խոստացաւ և ասաց Տէրն մեր Յիսուս Քրիստոս թէ՝ ամենայն որ ուտէ զՄարմին իմ և ըմպէ զԱրիւն իմ կեցցէ ի յաւիտեան»[24]:

Աստծու մարմին ու արյուն դիտակցվող սրբազան հացն ու գինին, կամ եկեղեցական լեզվով ասած՝ սուրբ հաղորդություն ճաշակողը ազգագրական մի համընդհանուր հայացքով հաղորդակից է դառնում ճաշակվող էության, տվյալ դեպքում՝ Քրիստոս-աստծու հատկանիշներին: Եվ պատարագի սրբազան ճաշակի՝ ս. հաղորդության անվան մեջ իսկ ճշտությամբ պահպանված ենք գտնում ազգագրական այդ հինավուրց ըմբռնումը, միայն նոր քրիստոնեական գաղափարախոսությամբ տոգորված: Զոհաբերվող Քրիստոս-աստծու մարմնի ու արյան ճաշակումը դիտվել է իբրև մեղանչող մարդկության մեղքերի քավության և թողության մի սրբազան միջոց ու նպատակ, որ և կազմում էր Քրիստոսի աստվածային բուն էությունն ու կրոնա-բարոյախոսական գլխավոր պատգամը. «Առէք կերէք այս է մարմինն իմ՝ որ վասն ձեր և բազմաց բաշխի ի քաւութիւն և ի թողութիւն մեղաց... Արբէք ի սմանէ ամենեքեան. Այս է արիւն իմ՝ նորոյ ուխտի, որ յաղագս ձեր և բազմաց հեղանի ի քաւութիւն և ի թողութիւն մեղաց»[25]:

Ուրիշ բան չէր էլ կարելի սպասել, ըստ քրիստոնեական հավատալիքների, մարդկության մեղքերի համար աշխարհ եկած, տառապած ու զոհաբերված մի աստծուց:

Քրիստոնեական եկեղեցու այս սիմվոլային սրբազան արարողության հիմքում դժվար չէ նշմարել նախնական բնապաշտական միջուկը. դա հացի և գինու վաղեմի պաշտամունքն է, որ նախնադարյան մարդու պարզ հայացքով ըմբռնվել է ըստ էության, իբրև մարդկային մարմնի, կյանքի կեցուցիչ ու սնուցիչ: Հացի և գինու (խմիչքի) կենսատու զորության, կյանք պարգևողի այս նախնական բնապաշտական ըմբռնումը պատարագի արարողության մեջ զուգորդվել է մեղքի քավության և թողության սիմվոլիկ-կրոնական գաղափարին և ըստ այդմ էլ վերաիմաստավորվել: Այդ տեսնում ենք պատարագիչ քահանայի ճաշակը ցուցադրելիս արտաբերած հետևյալ բանաձևում. «Սա է կեանք, յոյս, յարութիւն, քաւութիւն և

24 «Խորհրդատետր սրբազան պատարագի ըստ արարողութեան Հայաստանեայց առաքելական սուրբ եկեղեցւոյ», Երուսաղեմ, 1927, էջ 34:

25 Անդ, էջ 25:

թութիւն մեղաց»: Թեպետ այստեղ կյանքը, հույժ ու հարությունը հոգևոր-կրոնական առումով են ընկալվել, սակայն դրանք հացի և գինու իրական-բնական հատկանիշների վաղնջական ըմբռնման հետքեր են, որ գտնում ենք պահպանված պատարագի այլ բանաձևերում ևս[26]:

Հացի և գինու այս պաշտամունքը, որ աներկբայորեն ենթադրում է զարգացած երկրագործական մշակույթի առկայություն, իր արմատներով աղերսվում է երկրագործական պաշտամունքին: Հացի և գինու իրական մարմնավոր և հոգևոր սնուցիչ լինելու հատկանիշների սրբացնացումը, հետևաբար, կապվում է կրոնի առավել զարգացած ձևերի ու աշխարհայացքի հետ: Այս իսկ առումով հացի և գինու նախնական բնապաշտական ըմբռնումներն աղերսվել են երկրագործության արդյունքները պարգևող և հովանավորող ոգիներին և աստվածությանը և, ըստ երևույթին, նույնացվել նրանց: Նման ըմբռնման մի արձագանք է մեր նոր ժողովրդական վեպում հերոսների կողմից հաճախ վկայակոչվող «Հացն ու գինին, տեր կենդանին» բանաձևը, որ արտաբերում են վեպի հերոսները որևէ նախաձեռնություն սկսելուց առաջ, ապավինելով բանաձևի սրբազան զորությանը: Հացի և գինու կենդանության կամ կենդանացնող Տիրոջ (խմա՝ աստծու) հետ այս նույնացումը, հարկավ, առաջին հայացքից կարող է քրիստոնեաբար ըմբռնվել, ինչպես պատարագի արարողության մեջ է ընդունված, սովորաբար: Բայց հացին ու գինուն նախապատվություն տալն ու այն կենդանություն պարգևող ոգի ըմբռնելը վկայում է բանաձևի գաղափարախոսության հեթանոսական-տոտեմիստական բնույթը: Ուշագրավն այն է, որ հերոսները, որևէ գործ ձեռնարկելուց առաջ, դիմում են հացի և գինու սրբազան զորությանը, իբրև կենդանի աստվածության, նրանից հայցելով իրենց գործի հաջողությունը: Եվ սա ոչ թե սեղանի վրա, կերուխումի առնչությամբ, այլ դրանից առանձնացված ու կտրված, որ վկայում է, թե հացն ու գինին դիտվել են իբրև մի

---

[26] 11-րդ դարի մի մաշտոցում հացի և գինու մասին կա հետևյալ օրհնությունը. «Աւհրնեալ ես Տէր Աստուած, արարիչ ամենայն արարածոց, առաքեա զշնորհս հոգւոյդ սրբոյ ի վերայ սեղանոյս այսորիկ, որ առաջի եդեալս կայ, աւհրնեա զհացս զայս և զգինիս, զի **որք կերիցեն և արբցեն ի սմանէ, եղիցի նոցա ի սրբութիւն և ի քաւութիւն մեղաց, ի կենդանութիւն և ի փրկութիւն անձանց. բարեխաւսութեամբ ամենայն սրբոց վկայից քոց**»: Նուպար Մաքսուտյան, Հին Հայաստանի տոհմային սովորությունները ու աստվածները ըոհը, «Էջմիածին», 1945, հունվար-փետրվար, էջ 31 (ընդգծումն իմն է—Ս. Հ.):

մեծ ու անկախ գերբնական զորության մարմնացում, իբրև աստված: Հացի և գինու այս աստվածացումը, որն, անշուշտ, երկրագործական ժողովրդի պաշտամունքի մի հնագույն արտահայտություն է, իր ծիսա-հմայական մարմնավորումն է գտել, ահա, սեղանի կերուխումի հանդիսավոր արարողություններում: Կենացները գլխավորապես հանդիսավոր ճաշկերույթներին ուղեկցելու փաստը թույլ է տալիս ենթադրելու, որ անկախ հանդեսի ծիսական բնույթից, սկզբնապես կերուխումի բոլոր հանդիսավոր արարողությունները դիտվել են իբրև երկրագործ աստվածության պատվին կատարվող մի սրբազան զոհաբերություն, ուր հացի և գինու ճաշակումն իր կենդանություն պարգևող իրական զորությամբ, տոտեմիստական աշխարհընկալումով, գիտակցվել է որպես պահող ու կենդանացնող, ուժ ու ավյուն հաղորդող սրբազան ոգու կամ աստվածության մարմնի ու արյան ճաշակում: Եվ ինչպես յուրաքանչյուր սրբազան զոհաբերության մասունքի ճաշակումը, այդ նույն աշխարհհայացքով, ճաշակողին օժտում է զոհաբերության տարրերի կամ զոհն ընդունող ոգու հատկություններով, ապա, բնականաբար, կերուխումի հանդիսավոր բոլոր արարողությունների ժամանակ հացի և գինու ճաշակումը դիտվել է իբրև «Տեր կենդանուն», այսինքն՝ կենդանություն պարգևող, կյանք տվող տիրոջ հետ հաղորդակցվելու, հմայական շփման մեջ մտնելու արարողություն: Այդ մենք տեսնում ենք թեկուզև կենաց հետևյալ մաղթանքի ու դիմացը ստացվող պատասխանի մեջ. «Կենդանություն».— ասում է կենաց խմողը կենացի տիրոջը. «Անուշ անմահություն» պատասխանում է կենացի տերը (ԺԱԲ 121): Նշանակում է, թե կենացի տիրոջն ուղղված գինու զոհաբերությունից ակնկալվել է կյանքի հարատևություն կենաց տիրոջ հասցեին, իսկ վերջինս անուշ անմահություն է ցանկացել խմողին, որն անշուշտ կրոնական իմաստ ունի: Այսինքն, հացի և գինու կենսապարգև բնական հատկանիշները սրբագործվում են, աստիճանաբար աստվածացվում և մարդկանց գիտակցության մեջ վերածվում կրոնա-հմայական իրակությունների:

Կերուխումի այդ ծիսա-հմայական արարողությունները, ահա, ուղեկցվել են որոշակի հմայական բանաձևերով, որոնց նպատակն է եղել նպաստել հացի և գինու սրբազան աստվածային զորության յուրացմանը, նրան անմիջապես հաղորդակցվելուն, որի հետ կապվել են մարդու գոյության, կենդանության, հարատևելու ակնկալիքը: Այդ բանաձևերը, որ պարտադիր ուղեկցում են կերուխումի

ծիսական արարողություններին, դառնում են յուրատեսակ մաղթանքներ, որոնց մերօրյա վերապրուկներն են կենացները կամ բաժակի բարեմաղթությունները։ Իսկ երբ այդ միևնույն ծեսի ու բնապաշտական հավատալիքի հիման վրա, հետագայում հենվում ու զարգանում է քրիստոնեական եկեղեցու պատարագի արարողությունը, ապա կենաց բարեմաղթություններն էլ համապատասխանաբար վերածվում են կրոնական մաղթանքների ու աղոթքների։

Չպետք է մոռանալ նաև այն, որ Քրիստոսն իբրև աստվածություն, իր մեջ խտացնում է Հին Արևելքի բուսականության ու երկրագործական աստվածությունների շատ հատկանիշներ, և Քրիստոսն իր նախնական ծագումնաբանական արմատներով աղերսվում է հենց բուսական ու երկրագործական աստվածացած պաշտամունքներին[27]։

Հարկ է նկատել նաև, որ գինու և հացի սրբազան զոհաբերության արարողությունը եղել է կոլեկտիվ-հասարակական ծիսակատարություն և վերաբերել է տվյալ հանդեսի բոլոր մասնակիցներին։ Դրա հավաստումը գտնում ենք թե՛ ժողովրդական կերուխումի հանդեսներում և թե՛ եկեղեցական պատարագի արարողություններում։ Ժողովրդական խնջույքներում սեղանապետը, որ հանդես է գալիս իբրև զոհաբերության ղեկավար, մեկ առ մեկ առաջարկում է բոլոր սեղանակիցների կենացը, և բոլորը միասին կամ առանձին խմում են միմյանց կյանքի համար։ Ճիշտ այնպես, ինչպես պատարագի ժամանակ պատարագիչ քահանան սկզբից ինքն է ճաշակում ս. հաղորդությունը, ապա նրանով օրհնում ու խաչակնքում է ամբողջ ժողովրդին։ Դրանով սրբազան զորության հետ հաղորդակից է դառնում, հետևաբար և, կյանքով ու ավյունով է լցվում ներկա ամբողջ հասարակությունը, որի համար հենց կազմակերպվել են այդ հանդիսավոր զոհաբերությունները։

Զոհաբերության այդ կոլեկտիվ-հասարակական բնույթը երևան է գալիս նաև կենաց մաղթական բանաձևերում։ Երբ սեղանակիցներից մեկը խմում է մյուսի կենացը, բոլոր մասնակիցները միաձայն «անուշ» են ասում, այսինքն գինու զոհաբերության ընդունելի լինելն են ցանկանում դիմացինին։ Այդպես և պատարագի արարողության ժամանակ, երբ պատարագիչը ճաշակում է ս. հաղորդությունն ու ըմպում գինին, դպիրները միաձայն երգով օրհնաբանում և գովաբանում են։

---

27 *Տե՛ս Թեկուզ И. А. Стучевский,* Восточные корни мифа о Христе, М., Изд. «Восточная литература», 1958.

28. Կենցաղային մաղթանքներում մի շատ ուշագրավ խումբ են կազմում նորի, սկզբնականի մասին արտահայտված ու շատ տարածված բարեմաղթությունները: Դրանց մեջ յուրաքանչյուր նոր բան (նոր տուն, նոր հագուստ, նոր գործ և այլն) արժանանում է մաղթական հատուկ բանաձևերի, որոնց նպատակն է ապահովել յուրաքանչյուր սկսված նորի ապագա բարեհաջողությունն ու վայելքը:

Ա. Նոր շինած տան բարեմաղթությունները, որ ուղղվում են տան տիրոջը, բովանդակությամբ մի քանի նպատակ են հետապնդում: Ինչպես ամեն մի նոր ունեցվածքի կամ իրադրության առիթով է լինում, սովորաբար առաջին ցանկության խումբը, որ ուղղվում է այդ նորի տիրոջը՝ շնորհաւորանքն է, այսինքն նոր ունեցվածքի կամ իրադրության շնորհավոր, լավ, բարեկի լինելու մաղթանքը: Այդպիսին է օրինակ, «Շնորհավոր ըլի ձեր նոր շինութինը» (ԱՀ XI 121), որին իմաստով շատ են մոտենում նաև «Աստծու շենքն ու շնորքը վրեն» (ԱՀ XI 121), «Ավուր շնորհքը տանիդ անպակաս ըլնի», «Կանանչ մեռոնի շնորհքը տան ու տեղիդ վրա ըլնի» (ԷԱԺԱ 128, 130) բարեմաղթությունները: Վերջիններս թեպետ անմիջապես շնորհավորանքներ չեն, սակայն իրենց բարոյական գաղափարով, իբրև տան շնորհալի լինելու ցանկություն, ընդհուպ մոտենում են շնորհավորանքի բանաձևերին:

Հաջորդ արտահայտիչ գաղափարը՝ նոր տան բարի վայելքի բաղձանքն է, որ գտնում ենք «Բարով վայելեք» (ՀԺՀ VII 119, ԷԱԺՁ 327, ԱՀ XI 121), «Մեջը ծերանաք» (ՀԺՀ VII 119) և այլ մաղթանքներում:

Նման ցանկությունները տրամաբանորեն պետք է հանգեցնեին գլխավորին՝ նոր տան շեն ու հաստատուն մնալու գաղափարին

«Շեն մնա էս տունը» (ԱՀ XI 121), «Տուներդ շեն ըլլա» (ՀԺՀ VII 119), «Աստված տունդ շեն պահե» (ԱՀ IX 193), «Տունդ աստված շեն ու հաստատ պահե» (ԷԱԺԱ 133), «Էս տան հիմքը հաստատ ըլի» (ԱՀ XI 121) և այլն:

Նոր կերտվածքի նյութական կայունությանը մեծապես նպաստում է աստվածային բարոյական հովանավորությունը, մի կրոնական հայացք, որ արտահայտություն է գտել հետևյալ մաղթական բանաձևերում.

«Տան բարի հրեշտակը անխռով ըլի», «Դովլաթբաշին աղոթող ըլի» (ԱՀ XI 121), «Հայր Աբրահամի օխնությինն ըլի քու տան վրա» (ԹՄԿ 183) և այլն:

Հարկ է նկատի ունենալ, որ նոր տուն կառուցողին ուղղված բարեմաղթությունները մեծ մասամբ ասվել են տան դռնբացի առիթով կազմակերպված կերուխումների ժամանակ, դարձել են նպատակային սեղանի յուրօրինակ մաղթանքներ և դրանով իսկ, որոշ իմաստով, ձեռք են բերել ծիսական բնույթ։

Բ. **Նոր հանդերձ հագնելու** բարեբանությունների մեջ ևս առաջին բնորոշ գաղափարը նոր հագած հագուստի շնորհավորանքն է («Շնորհավոր էղնի» ԷԱԺՁ 325, ԱՀ XI 121), այսինքն՝ նոր հանդերձների մեջ շնորհունակ, շնորհով լի լինելու բարեբանությունը։ Դրան հաջորդում է գլխավորը՝ նոր հագուստը **բարիքի, առատության ու ուրախության** մեջ մաշելու ցանկությունը, որի բնորոշ նմուշներն են հետևյալները.

«Բարով մաշես» (ԷԱԺՁ 334), «Բարով մաշիս, ուրախությենով» (ԹՄԿ 181), «Ուրախ օրով, կուշտ փորով մաշես» (ԱՀ XI 121), «Բարով հագնիս, վրան նայիս» (ՀԺՀ 120) և այլն։

Ապա, երկրորդաբար, հագուստը բարով մաշելու հետ մաղթվում է նաև բազմաթիվ նոր հանդերձների հագուստ, որը վերջին հաշվով հանգում է **երկայնակեցության, ապահով կյանքով երկար ապրելու** շատ կենսունակ գաղափարին։

«Բարով մաշես, հազարը մաշես» (ԱՀ XI 121), «Բարով մաշես չորերդ. նորին արժանանաս» (ԷԱԺԱ 129), «Հազար ըմալ (այդպիսիք) կըտըրտիս» (ԷԱԺՁ 324), «Յոթ ըսկուն կըտըրտես» (ԷԱԺՁ 326), «Շատերն էգպես մաշես» (ԷԱԺՁ 334)։ Հիշյալ գաղափարին համահնչուն է ու զուգակից **նյութական բարիքներով** մշտապես **ապահովված լինելու** բաղձանքը, որ գտնում ենք հետևյալ մաղթանքներում. «Մեկըդ հին ըլլի, հազարդ՝ նոր» (ԺԱԲ 120), «Էաս հին, հազոր՝ նոր» (ԱՈՒ 114) և այլն։

Նոր հանդերձ հագնելու մեջ տեսել են նաև **առողջության ու երջանկության նախանշաններ**, ուստի բարեմաղթել են նոր զգեստ հագածին, որ նա նոր հանդերձների մեջ առողջ մնա և երջանկանա։

«Առողջության ըլա» (ՀԺՀ VII 120), «Ջանսաղութենի ըլի» (ԱՀ XI 121), «Փեսայության ըլա» (ՀԺՀ VII 120), «Փեսայութինի, հարսնութինի ըլի» (ԱՀ XI 121)։

Գ. **Նոր գործ ձեռնարկողին** ուղղված բարեբանություններում ամենից առաջ ցանկություն է հայտնվում բարի ժամին սկսել նախաձեռնությունը, որպեսզի ապահովվի նրա գալիք հաջողությունը («Բարի սահաթի ըլի» ԹՄԿ 181)։ Այս խմբի մաղթանքները վերաբերում են տնտեսական կյանքի ամենատարբեր բնագավառնե-

րին և դրանց մեջ արտահայտված ամենասևեռուն գաղափարը ձեռնարկված գործից մեծ եկամուտ ստանալն ու դրա բարի վայելումն է:

Ահա գյուղատնտեսական աշխատանքներից վար ու ցանք և կալ ու կուտ սկսողներին վերաբերող մի քանի մաղթանքներ.

«Ցանած սերմդ անհատնում ըլնի, բարով ուտես» (ԷԱԺԱ 133), «Մեկ ցանես, հազար վերցնես» (ԷԱԺԶ 325), «Բարով աշխատանքիդ պտուղը ուտես» (ԷԱԺԶ 335), «Բարաքյավոր ըլնի կալդ ու կուտդ» (ԷԱԺԱ 129) և այլն: Ահա և առևտրական որևէ գործարք սկսողին ուղղած բարեմաղթություններ.

«Բազարիդ խերը բարով տեսնես» (ԷԱԺԱ 128), «Մեկ տաս՝ հազար առնես» (ԷԱԺԶ 327), «Ասանից մեկին հազար առնես» (ԷԱԺԶ 335), «Բեստա (բսակ) պերեքետլի ըլլի» («Բազմավեպ», 1902, 480) և այլն:

Պետք է նկատի ունենալ, որ նորի ու սկզբնականի մասին ասվող մաղթանքների մեջ են մտնում բոլոր կարգի շնորհավորանքները, կամ աչքալուսանքները, որոնք յուրահատուկ բարեմաղթություններ են նոր, օգտակար և հաճելի որևէ բանի (տոնի, ապրանքի, ծննդյան, ամուսնության, հարազատի գալստյան, հաջող սկսված գործի և այլն) առիթով ասվող: Տոնական շնորհավորանքներ են, օրինակ, հետևյալները. «Շնորհավոր Նոր տարի ըլնի քեզ համար» (ԷԱԺԱ 132), «Տարիներդ շնորհավոր լինի», «Մեծ օրդ շնորհավոր ըլա» (ՀԺՀ VII 119) և այլն:

Շնորհավորում են հարսնացուին, նշանդրեքի ժամանակ նշանը հանձնելիս («Աստված շնորհավոր անե» ԱՀ IX 218): Շնորհավորում են հարսանքատիրոջը կամ հարսի ու փեսայի ծնողներին ու ազգականներին, հարսանքի հանդիսականներին և այլն՝ ամուսնության փաստի առիթով:

«Աչքներդ լիս ըլի» («Մեղու Հայաստանի», 1885, № 73), «Ձեր բարեկամաց աչքը լուս» (ՀԺՀ VII 119) և այլն, որոնց սովորաբար պատասխանում են (Յաճկի լուսով կենաս» (ՁԺԲ 64), «Աճկի լսով պառվիս» (ԲՄԿ 179) և այլ մաղթանքներով:

Բացառությամբ շնորհավորանքների, նորի, սկզբնականի, նախնականի մնացած բոլոր բարեմաղթությունները ունեն չեշտված սոցիալական բովանդակություն: Դրանք բոլորն էլ նպատակ են հետապնդում խոսքի հմայական ներգործության միջոցով ապահովել մարդու նյութական կյանքի բարեկեցությունը:

29. Նախորդ տիպի երրորդ ենթախմբի հետ են գաղափարով սերտորեն առնչվում աշխատանքի, բռնած գործի, սոցիալական ունեցվածքի վերաբերյալ բարեմաղթությունները։

Սրանց մեջ առաջին հերթին ժողովրդի մարդիկ ցանկանում են ապահովված տեսնել բարեմաղթվող անձի բռնած գործի, աշխատանքի հաջողությունը։ «Աստուծ բանիտ, գուրծկիտ աջողութին տա» (ԹՄԿ 181), «Պանիդ, կյուռծիդ աճողուբեն էլնի» (ԷԱԺԶ 327)։

Ապա, մաղթանքների հիշյալ խմբի հաջորդ կարևոր գաղափարը՝ սոցիալական ունեցվածքի աճի ու հավելման բաղձանքն է, որ արտահայտված ենք գտնում «Աստված է՛լ ավելցու» (ԷԱԺԶ 324), «Ոսկին ծիլ-ծիլ, սարեսար ունենաս» (ԷԱԺԱ 132), «Քրիստոս տերն օրհնե հանդ ու հանդաստանդ» (ԷԱԺԱ 133) և այլ բարեմաղթություններում։

30. Սոցիալական բովանդակությամբ մաղթանքների մեջ կարևոր տեղ են գրավում ճանապարհ կամ օտարություն գնացողներին ուղղված բարեբանությունները։ Վերջիններս իրենց դրդապատճառներով ևս որոշ չափով աղերսվում են նորի, սկզբնականի խրախուսություններին, քանզի ճանապարհ կամ օտարություն մեկնողի համար առաջիկայում ամեն ինչ նոր է լինելու և սկզբնական։ Ահա թե ինչու այս խմբի բարեբանությունները գաղափարով մասամբ առնչվում են նորի, սկզբնականի մաղթանքներին և հիմնականում նպատակ ունեն ապահովելու ճանապարհ մեկնողի կամ պանդխտողի առաջիկա հաջողությունը։

Այս խմբի մաղթանքները բովանդակությամբ երկու մասի կարելի է բաժանել.

ա) Ճանապարհորդին ուղղված մաղթանքներ և բ) պանդխտին ուղղված մաղթանքներ։

Պետք է նկատի ունենալ, որ ճամփորդին ուղղված մաղթանքները նույնությամբասվում և կարող են ասվել նաև պանդխտին, քանզի երկուսն էլ ճանապարհորդ են, երկուսն էլ ճանապարհ են գնալու։ Մինչդեռ պանդխտին ուղղված մաղթանքները միշտ չէ, որ կարող են ասվել նաև ճանապարհորդին։ Վերջինս իր նպատակն ավարտում է մեկնելիք ճանապարհով, մինչդեռ ճանապարհը պանդխտի համար լոկ գործի պարտադիր սկիզբն է, իսկ բուն նպատակը աշխատանքն է տակավին։ Ով այստեղից էլ տարբերվում են պանդխտին ուղղված մաղթանքները ճանապարհորդին ուղղվածներից։ Պանդխտի հարազատները բարեբանություններով նպատակ

են հետապնդում ապահովել պանդխտության մեկնողի գործի հաջողությունը և առողջությունը օտարության մեջ, մի բան, որ բացակայում է սովորական ճամփորդին ասվող մաղթանքներում:

Ճանապարհորդին, ինչպես նաև պանդխտին ուղղված բարեբանություններում առաջնահերթ գաղափարը բարեհաջող ճանապարհի ցանկությունն է: Ճանապարհը միշտ էլ հղի է եղել զանազան իրական ու գերբնական վտանգների հնարավորությամբ: Ուստի և ամենից առաջ հոգ է տարվել հմայական տարբեր միջոցներով ապահովել ճանապարհորդի ֆիզիկական անվտանգությունը: Այդ նպատակն են հետապնդում ճամփորդին ուղղված ներքոբերյալ մաղթանքները:

«Բարի ճանապարհ» (ՀԺՀ VII 120), «Աստված բարի ճանապարհ տա» (ԲՄԿ 179), «Ճամփեդ փունջ մանիշակ դառնա» (ԱՀ XI 121), «Աստված հաջողի» (ՀԺՀ VII 120) և այլն:

Ճամփորդին և պանդխտին ուղղված մաղթանքների մյուս էական գաղափարը բարի դարձի կամ բարի երթի և դարձի ցանկությունն է: Ճանապարհորդը, եթե օտար չէ, այլ հարազատ, բարի ճանապարհի հետ մեկտեղ նրան անպայման ցանկանում են բարի վերադարձ, համապատասխան մաղթանքներով: «Աստված խուլալի (հեշտությամբ) բերե», «Տեսություններս բարի» (ՀԺՀ VII 120), «Բարով էրթաս, բարով գյաս» (ԷԱԺՋ 331), «Բարի ճամփա, բարով գնաս, բարով գաս» (ԱՀ XI 121) և այլն:

Գրեթե այս երկու հիմնական ցանկությամբ էլ ավարտվում է ճանապարհորդին ուղղված մաղթանքների բովանդակությունը:

Պանդխտին ուղղված բարեմաղթություններում, բացի վերոհիշյալ գաղափարներից, միաժամանակ հոգ է տարվում նրա ֆիզիկական ու բարոյական անվտանգության մասին, այսինքն ցանկություն է արտահայտվում պանդխտին տեսնել ողջ ու առողջ և հեռու ամենայն փորձանքից:

«Դվորն էթաս՝ ոտդ քարին չդիպնի» (ՀԺԱ 11), «Ոտդ քարի չգա, անքյատար (անփորձ) մնաս» (ԷԱԺԱ 132), «Էրթաս՝ սաղ-սալամաթ գյաս քու ճժերու վերեն, լա՛ո»» (ԷԱԺԱ 330), «Աստված քեզի գողուց-բողուց ազատե», «Աստված քեզի քուրդ ու քոփդ (սարի քուրդ) ազատա» (ԷԱԺԱ 330), «Աստված զքու կանանչ-կարմիր արև պահե» (ԷԱԺՋ 329):

Այս միևնույն ցանկությանը համահնչուն է պանդխտի գերբնական-աստվածային հովանավորության գաղափարը, որ վերջին հաշվով ենթադրում է և՛ ֆիզիկական, և՛ բարոյական, և՛ գործնական կյանքի անվտանգության և հաջողության ապահովություն:

«Աստըծու օրշնիթ վըր քե եղի, լա՛ո» (ԷԱԺԶ 331), «Աստված քու հետ էղնի» (ԷԱԺԶ 330), «Աստված խսկի մտահան չենե քեզի» (ԷԱԺԶ 333), «Մայր Ասվածածին բարեխոս էղնի, Քրիստոս քզի վատ օր չտա» (ԷԱԺԶ 328), «Սուրբ Սարգիս հասնի քզի» (ԷԱԺԶ 329), «Ջիավոր սուրբ Սարգիս քեզ օգնական ու պահապան եղնի» («Արձագանք», 1893, № 22), «Մշու սուլթան սըփ Կարապետ քեզի քոմակ եղի» (ԷԱԺԶ 330) և այլն։

Եվ վերջապես կան մի շարք մաղթանքներ էլ, ուր պանդուխտին ուղղակի բարեմաղթում են իր նպատակի կենսագործման հաջողություն, որի համար նա դիմել է պանդխտության։

«Աստված տա քե հաջողություն, ուժ, կարողութեն» (ԷԱԺԶ 330), «Դեպի ուր գնաս՝ աստված բանդ աջողե» (ԷԱԺԱ 129), «յաչ էրթաս՝ յաչ ըլնի, ձախ էլ էրթաս՝ յաչ ըլնի» (ԶԺԲ 64) և այլն։

31. Մաղթանքների մի փոքր խումբ են կազմում նաև տոնական բարեմաղթությունները, որոնք, սովորաբար լինում են ընդհանուր բնավորությամբ, դիցուք, օրինակ, «Տոներովդ ծերանաս» (ՀԺՀ VII 119), «Ամեն տարի բարով էս օր խասնիս, ուրախ սրտով, ցամաք աչքով» (ԱՀ XIX 114) և այլն։ Լինում են նաև որոշակի բնավորությամբ մեկ որևէ տոնի առիթով ասվող, ինչպես օրինակ՝ նոր տարվա շնորհավորանքները («Շնորհավոր նոր տարի», «Ուրախության տարի լինի», «Բախտավոր տարի լինի»), զատկական մաղթանքները («Ուրախուտենով զատիկ էղնի» ԷԱԺԶ 325, «Բարի զատիկ լինի») և տարբեր տոներ շնորհավորող այլ բարեմաղթություններ։ Սրանք հիմնականում արտահայտում են տոնին հաջորդող պարբերաշրջանում մարդու սոցիալական, ֆիզիկական ու բարոյական կյանքի ապահովության գաղափարը։

32. Մաղթանքների մի առանձին բաժին են կազմում կրոնական բովանդակությամբ բարեմաղթությունները, որոնք լինելով կրոնական հավատալիքների արգասիք, նպատակ ունեն խոսքի հմայական զորության միջոցով ներգործել կրոնական-հավատալիքային իրակությունների վրա։

Սրանք իրենց բովանդակության բնույթով բաժանվում են մի քանի թեմատիկ խմբերի. դրանք են ա) ուխտավորին, բ) մատաղ անողին, գ) նաշակ ընդունողին ու ծոմ ու պաս պահողին, դ) քահանային ուղղված մաղթական բանաձևերի փնջերը։

Ա. Ուխտավորին ուղղված մաղթանքները հիմնականում հետապնդում են ուխտը աստծու կամ սրբերի կողմից ընդունելի լինելու

և նրա փափագը իրականացնելու նպատակը. «Ուխտիդ ղալուլ նը» (ԱՈՒ 115), «Ուխտատունթունելի ըլի, մուրազտ կատարվի» (ԹՄԿ 213):

Բ. Մատաղ անողին ուղղված մաղթանքները ևս նախորդ փնջի բարեմաղթությունների նման ցանկություններ են՝ ուղղված կրոնածիսական տվյալ գործողության գլխավոր նպատակին՝ մատաղն աստծուց կամ տվյալ սրբից ընդունելի լինելուն և դրա հետևանքով էլ մատաղատիրոջ փափագը կատարելուն:

«Մատաղդ ընդունելի ըլի» (ԱՀ XI 121), «Ընթունելի ըլի» (ԹՄԿ 213), «Արածդ ընդունելի ըլա աստուծու դիմաց» (ՀԺՀ VII 120), «Առ աստոծ հասնու» (ԱՀ XI 121), «Հայր Աբրահամու մատաղն ըլնի ձեր արածը» (ԷԱԺԱ 131), «Աբելի մատաղն ըլի» (ԷԱԺՋ 335), «Սաթեկան (Սաքեկա) ոչխարն ըլի» (ԱՀ XI 121), «Սրտիդ մուրազին հասնիս» (ԱՀ XI 121), «Վարձքդ կատար ըլա» (ՀԺՀ VII 120) և այլն:

Գ. Այս միևնույն գաղափարներն են առկա նաև ծոմ ու պաս պահողին ու նաշակ ընդունողին ուղղված մաղթանքներում. «Ծոմ ու պասդ հաճո ըլնի աստծու մոտ, ԷԱԺԱ 130, «Ասբոծ խու ճաշոկեր մահրոմ չի հանը (չըրկել) (ԱՈՒ 110): Գաղափարների ընդհանրության պատճառն այն է, որ թե՛ ուխտագնացությունը, թե՛ մատաղը և թե՛ ծոմ ու պասը բոլորն էլ զոհաբերություններ են՝ ուղղված աստծուն ու սրբերին և, հետևաբար, բոլորն էլ միևնույն ակնկալիքներով են կատարվել: Բացառություն է կազմում, թերևս, ճաշակը կամ ս. հաղորդությունը, որը, սակայն, լինելով զոհաբերված աստվածության մասունքի ճաշակում՝ աստվածությանը հաղորդակցվելու նպատակով, նրան առնչվող մաղթանքներն էլ վերջին հաշվով պետք է նպաստեին այդ սրբազան հաղորդակցմանը, ցանկություն արտահայտելով ընդունելի ու կատարելի տեսնել զոհաբերված աստծու մասունքի նպատակային ճաշակումը:

Դ. Քահանային ուղղված մաղթանքները գաղափարապես նախորդ փնջերի հետ չեն աղերսվում: Դրանք կրոնական պաշտոնյային ուղղված բարեբանություններ են, ուր բաղձանք է հայտնվում քահանային իր կարգի կամ պաշտոնի մեջ հաստատուն մնալու և իր պաշտոնը անխափան կատարելու: «Աստոծ կարգիդ հաստատ պահի», «Կարգիդ հետ երգարիս» (ԱՀ XI 120), «Փառավորիս ու կարգիդ հաստատ մնաս» (ԷԱԺԱ 133), «Փառոց կենաս», «Պաշտըմ

պատարագի ըլիս», «Ժամ-պատարագի ըլիս» (ԱՀ XI 120): Չհաշված ծիսա-պաշտոնական արտաքին իրադրությունները, քահանային ուղղված մաղթանքները կրոնա-գաղափարախոսական տարրեր չունեն իրենց մեջ և առավելապես մոտենում են տարբեր անձանց ուղղված մաղթանքների տեսակին:

33. Մաղթանքների մի խումբ կա, որ ասվում է հատկապես ծերունիներին: Ուշագրավն այն է, որ տարիքային առանձնահատկությունները շեշտող մաղթանքներում մարդկային երեք հասակների հատկանիշները մարմնավորող բոլոր անձինք (մանուկներ, երիտասարդներ, ծերունիներ) իրենց հատուկ տեղն են գրավել: Եվ եթե մանուկներին ուղղված մաղթանքներում հոգ էր տարվում նրանց աճման ու բարգավաճման, երիտասարդներին ուղղված բարեմաղթություններում՝ նրանց ամուսնության ու սերնդավորման մասին, ապա ծերունիներին ուղղված բարեմաղթություններում ողջ կյանքը ետևում թողած ու գերեզմանի եզրին կանգնած ծերունիներին նյութական ոչինչ չէր ցանկացվում, քան սոսկ հոգևոր-բարոյականը: Եվ այդ հոգևոր-բարոյականն, հարկավ, մեծ մասամբ քրիստոնեական կրոնի հավատալիքներով ու ըմբռնումներով տոգորված: Մահվան շեմին կանգնած ծեր մարդու համար միակ մխիթարանքն էր մնում մեռնելիս անտիրական չմնալու, սեփական գերեզման ունենալու և զավակների ձեռքով հող դրվելու ու օրհնած հողին արժանի լինելու փափագը: Այս բարոյա-ազգակցական ու մասամբ կրոնական ըմբռնումներով էին առաջնորդվում ծեր մարդկանց բարին ցանկացողները, երբ ասում էին. «Որդկերանցդ մի բուռը հողին արժանի ըլիս» (ԱՀ XI 120), «Օրհնած ֆողին արժանանաս» (ԷԱԺՁ 335) և այլն:

Կրոնա-բարոյագիտական մի այլ ըմբռնում է մարմնավորում «Արածդ որդկերանցդ աղաքը գա» (ԱՀ XI 120) ծերունիներին ուղղված մաղթանքը, ուր նախնիների պաշտամունքի հիման վրա հոգ էր տարվում ապրող սերունդների գոյության մասին, ի մխիթարություն և ի հավերժություն աշխարհից հեռացող նախնու:

Ամենամեծ բարիքը, որ ցանկանում էին ծեր մարդկանց՝ գալիք հանդերձյալ կյանքում նրանց ունենալիք երջանկությունն էր, կրոնական բովանդակությամբ ըմբռնված: Դա հոգու լույս դառնալու հեթանոսական շրջանից եկող ցանկությունն է և անմահության դրախտին արժանանալը:

«Լիս դառնաս, լսի փայ ըլիս» (ԱՀ XI 120), «Հոքիտ լուս դառնա» (ԹՄԿ 212), «Քի (քեզ) արքայութին» (ԱՀ XI 120), «Հոգիդ

դրախտը էթա» (ԷԱԺՋ 335) և այլն, որոնց մեծ մասն ասվում է նաև մեռածներին վերհիշելիս:

34. Մաղթանքների հաջորդ խումբը՝ **հիվանդներին ուղղված** բարեմաղթություններն են, որոնց մեջ իշխող գաղափարը առողջության ցանկությունն է: Քանի որ ժողովրդի հայացքով հիվանդությունը գերբնական ուժերի չար ազդեցության հետևանք է գիտակցվել, ուստի և նրա բուժումը աղերսվել է մեծ մասամբ աստծու հետ: «Աստված առողջություն տա», «Աստված ճար անի» (ՀԺՀ VII 120), «Աստված ինքը ճար անի քու անճար ցավին» (ԱՀ XI 120), «Աստված հիվանդին լավություն տա» (ԷԱԺԱ 127), «Աստոծ լավութին տա, առողջութին ու սաղ սալամաթ ջան տա» (ԱՀ XI 120), «Աստված ուժ ու կարողություն տա» (ԷԱԺԱ 128), «Ցավերդ թեթվընա» (ԷԱԺՋ 325) և այլն:

35. Ծիսա-կենցաղային մաղթանքների մեջ մի մեծ խումբ են կազմում **սգո և թաղման** ծիսական արարողությունների հետ առնչվող բարեմաղթությունները:

Մահը, որ ծննդից հետո մարդու ֆիզիկական կյանքում կատարվող ամենացնցող երևույթներից է, վաղնջական ժամանակներից իսկ հիմք ու աղբյուր է ծառայել սնոտի ու առասպելական հարուստ ու բազմազան հավատալիքների: Վերջիններիս վրա աստիճանաբար զարգացել են պաշտամունքային զանազան ծիսակատարություններ, որոնք հարատևելով տարբեր դարաշրջաններում ու կրոնական տարբեր պատկերացումներից փոխակերպվելով, հասել են մինչև մեր օրերը: Մեր ժամանակներում գոյատևող մեռելապաշտության արարողություններից են դիալվացումը, հոգեճաշը, սգո և թաղման, յոթի, քառասունքի, տարվա, մեռելոցների նշման ծիսակատարությունները, որոնք միշտ և ամենուրեք ուղեկցվել են մխիթարության ու բարի ցանկությունների զանազան խոսքերով: Դրանց մեջ արտահայտություն են գտել մահվան, ննջեցյալի և հանդերձյալ կյանքի մասին հին ու նոր տարբեր հավատալիքներ:

Մեռելի և սգավորի մաղթանքները բնորոշվում են ոչ այնքան ուղեկցող ծիսական արարողություններով, որքան բարեմաղթվող անձով: Միևնույն մաղթանքը կարող է ասվել ծիսական տարբեր արարողությունների, դիցուք, թաղումից անմիջապես հետո գերեզմանի վրա, հոգեճաշի, այգնահողի, յոթի, քառասունքի ժամանակ կամ դիալվացման, հրաժեշտի, թաղման արարողությունների ընթացքում: Ուստի և նպատակահարմար է ծիսական այս մաղթանքները խմբավորել ըստ բարեմաղթվող անձանց: Ըստ այսմ հիշյալ

խմբի մաղթանքները բաժանվում են երկու մեծ ենթախմբի. ա) մեռելին ուղղված մաղթանքներ և բ) սգավորներին ուղղված մաղթանքներ:

Ա) Մեռելին ուղղված մաղթանքները ասվում են դիակվացման, հրաժեշտի կամ թաղումից անմիջապես հետո գերեզմանի վրա խոնարհվելիս: Այս ենթախմբի մաղթանքների հիմնական գաղափարն է՝ մեռելի բարի ու դյուրին ճանապարհի և հոգու փրկության կամ լուսավորության ցանկությունը:

«Քարըդ քաղած ըլի, հողըդ մաղած ըլի», «Գնացած ճանապարհդ բարի ըլի, դատաստանդ քաղցր ըլի» (ԱՀ X 169, 170), «Աստոծ մեղքիտ թողութըն, հոգոտ արքայութըն տո» (ԱՈՒ 112), «Աստոծ դատաստանիդ քաղձըր էնե» (ԱՈՒ 110), «Աստված քու հոգին լուսավորե» (ԱՀ XXVI 190), «Հոգիդ սրբերի դասը դասվի» (ԱՀ XI 119) և այլն:

Բ. Սգավորներին ուղղված մաղթանքները իրենց հերթին ստորաբաժանվում են և երկու ենթախմբի. 1) հանգուցյալին վերաբերող և 2) սգավորներին վերաբերող մաղթանքների: Այս երկու ենթախմբի բարեմաղթությունների էլ ասվել են տարբեր ծիսական արարողությունների, հատկապես հոգեհացի, յոթի, քառասունքի սեղաններին կամ էլ թաղումից առաջ և հետո՝ հարազատներին մխիթարելիս:

1. Հանգուցյալին վերաբերող մաղթանքներում, նախորդի նման դարձյալ, հիմնական գաղափարը ննջեցյալի հոգու փրկության, արդարության, լույսին և արքայությանն արժանանալու բաղձանքն է, որ ուղղակի խոսքի ձևով ուղղում են սգակիցները մեռնողի հարազատներին:

«Աստված հոգին լուսավորե» (ԱՀ X 178), «Աստոծ նրա դատաստանը քաղցր անե» (ԱՀ XI 120), «Ձեր մեռելը լսի փայ ըլնի» (ԷԱԺԱ 131), «Աստված հոգին լսի բաժին էնե» (ԺԱԲ 121), «Լուսը գրկե պառկի» (ԺԱԲ 121), «Աստոծ արքայութոնըն չի զըրկը» (ԱՈՒ 110), «Աստոծ նրա մեղագիրը ջնջե, կենաց դավթարին գրե» (ԱՀ XI 120), «Ողորմի հոգուն» (ՀԺՀ VII 120), «Արքայութենի փայ ըլի» (ԱՀ XI 120):

Նոր հանգուցյալի հետ սգակիցները հաճախ մաղթում են տվյալ գերդաստանի բոլոր հին ու նոր մեռելներին հոգու փրկություն. «Աստված օղորմի էս գերդաստանի բոլոր հին ու նոր

ննջեցյալների հոգուն» (ԱՀ X 176), «Աստուծ ողորմի ձիր հին ու նոր ննջեցելոց» (ԲՄԿ 180):

2. Սգավորներին վերաբերող մաղթանքներում առաջին գերիշխող գաղափարը՝ սգավորի մխիթարությունն է.

«Աստոծ ձեր սիրտը մխիթարե» (ԱՀ XI 120), «Աստուծանա մըխըթարվիս» (ՀԺՀ VII 117), «Հոգով սրբով մխիթարվիք» (ԱՀ XI 120) և այլն:

Հաջորդ նույնքան կարևոր գաղափարը սգավորների ողջության ու կյանքի հարատևության բաղձանքն է, ի հատուցումն նրանց կրած կորստի և քաշած վշտի:

«Տուն օխճ կենաս» (ԱՀ IX 194), «Դուք ըլեք ողջ» (ԱՀ XI 120), «Գլուխդ ողջ ըլա» (ՀԺՀ VII 120), «Ձեր գլուխն ապրի» (ԱՀ XI 120), «Աստված ետ մնացողներին ամուր ձեռք պահե» (ԺԱԲ 120), «Էնոր հոգով աստված ձեզի կյանք տա» (ԺԱԲ 121), «Աստված ձեր կանանչ արև բաշխի» (ՍՄ 103) և այլն: Այս միևնույն գաղափարին խիստ համահնչյուն է նաև հանգուցյալի սգավոր զավակներին ուղղված մեռած ծնողին կենդանի հիշատակ մնալու բարեբանությունը, որ վերջին հաշվով հանգում է սգավոր զավակների կյանքի հարատևության ցանկությանը:

«Բարի հիշատակ մնաք» (ԺԱԲ 120), «Աստոծ բարը հիշատակ պահե» (ԱՈՒ 112), «Բարի հիշատակ մնաս հորդ օջախի վրա» (ԷԱԺԱ 129), «Աստոծ հիշատակնին օխնի» (ԱՀ XI 120), «Նրա ֆոգին բարեխոս ըլի իր հիշատակներին» (ԱՀ XI 120) և այլն:

36. Ժողովրդական բարեբանություններում առհասարակ և մասնավորապես հայ ժողովրդական մաղթանքներում մի առանձին խումբ են կազմում բոլոր կարգի ողջույնները, որ ուղղել են մարդիկ իրար հանդիպելիս և բաժանվելիս, ամենատարբեր պարագաներում: Ողջույնները սեղմ ու հակիրճ ավանդական բանաձևեր են, երբեմն մեկ բառային միավորի հասնող, ուր զանազան բարեբանություններով բարի է ցանկացվում եկողին, գնացողին կամ ներկա գտնվողներին:

Ողջույնները ոճաբանորեն և տրամաբանորեն երկու պարտադիր կողմերի՝ ողջունողի և ողջունվողի միջև մեկական պարզ նախադասություններով կատարվող երկխոսություններ են, ուր միշտ և ամենուրեք առաջնությունը պատկանում է ողջունողին, որին իբրև պատասխան ուղղվում է ողջունվողի բարեմաղթությունը: Այս առանձնահատկությամբ օժտված են, բացի ողջույններից, նաև կենացներն ու շնորհավորանքները: Բարեմաղթությունների մնացած

տեսակներից և ոչ մեկում պատասխան մաղթանքի պարտադիր բանաձևեր գրեթե չկան, թեպետ յուրաքանչյուր բարեմաղթության դեպքում շնորհակալության ձևով ինչ-որ պատասխան հնարավոր է և ենթադրելի:

Ողջույնի մաղթանքները կիրառման բնույթով բաժանվում են երկու հիմնախմբի. ա) գալստյան և բ) հրաժեշտի ողջույնների:

Ա. Գալստյան ողջույնները՝ եկվորի բարեմաղթություններն են ներկա եղող մեկին կամ ներկաներին ուղղված: Դրանց մեջ են մտնում օտար և հարազատ հյուրերի, անցորդների, այցելուների, ճանապարհորդների և այլոց ողջույնները, որոնք փաստորեն եկվորների գալուստը կամ հանդիպումն ավետող մաղթանքներ են: Գալստյան ողջույնները խարսխվում են գլխավորապես նորեկի, նոր հանդիպողի՝ իր գալստյամբ ու ներկայությամբ ներկա իրադրության ու դեպքերի վրա թողած հմայական ներգործության հավատալիքի վրա: Վերջինիս արդյունքն է նաև «բարի կամ չար ոտք» ունեցողի հավատալիքը, որ մինչև այժմ էլ գոյատևում է մեր և այլ ժողովուրդների տարբեր խավերում:

Եվ որպեսզի եկվորը իր գալստյամբ կամ հանդիպումով բարի ազդեցություն թողնի ներկա անձի կամ նրա գործի վրա, ապա նա բարի է մաղթում, բարիք է ցանկանում դիմացինին: Եվ ընդհակառակը, երբ եկվորը վատ է տրամադրված ներկա եղող անձի նկատմամբ, ապա նա չար ներգործության դիտավորությամբ չի ողջունում, չի բարեբանում դիմացինին, այլ լռում և անցնում է: Այդ հավատալիքի վերապրուկ պետք է համարել մինչև օրս էլ հարատևող թշնամացած կամ իրարից խռոված մարդկանց միմյանց չողջունելը, ինչպես նաև այն, երբ եկվորը մոռացմամբ չի ողջունում ներկաներին, ապա արժանանում է նրանց խիստ դիտողությանը («Բարև աստծու բարին չկա՞», իմ հավաք. և այլն):

Ողջույնի, իբրև բարեբանության, հմայական զորության հավատալիքի մասին է վկայում այն մեծ հարգալից նշանակությունը, որ ժողովրդի մարդիկ տալիս են սովորաբար մեկի կողմից հեռվից բերած ողջույնին: Այդ են վկայում ներքոհիշյալ բարեմաղթությունները, որ ուղղվում են բարև բերողներին:

«Ապրի խրկող լև, բերող լև» (իմ հավաք.), «Տանող-բերող օխճ ըլլա» (ԱՀ IX 194), «Բարին՝ բարև բերողին ալ, ղրկողին ալ» (ՀԺՀ VII 121), «Բարին արևիդ» «Բարում կենաս, սաղ ըլիս», «Բարու նուբարը վրեդ» (ԱՀ XI 121): Սրանք լավագույն վկայություններն են ողջույններին տված հմայական մեծ արժեքի:

Հիշյալ հավատալիքի տարբեր դրսևորումներն ենք գտնում գալստյան տարբեր ողջույն-բարեմաղթություններում։ Այսպես. աշխատանքով կամ որևէ գործով զբաղված մեկին հանդիպելիս, ողջունում են «Բարի հաջողում». դրան պատասխանում են «Բա՜րով, հազա՛ր բարի դու էկար» կամ «Բարով էկար» (իմ հավաք.)։ Դրանցով՝ եկվորը իր գալստյան բարի ազդեցությունն է մաղթում աշխատողի գործի հաջողությանը, իսկ աշխատողը ի պատասխան, դարձյալ նրա բարի գալուստն է մաղթում, մի տեսակ ձայնակցելով ու աջակցելով եկվորի մտադրությանը։ Նորեկին ուղղված ողջույններում առավել շեշտուն և ընդգծված է երևան գալիս հիշյալ գաղափարը. «Բարով, հազար բարի խս էկի», «Գալտ բարի ըլի», «Վուտտ բարի ըլի» (ԹՄԿ 210, 211, 183) և այլն, բարեմաղթություններ, որոնց նպատակն է ապահովել օտարությունից կամ ճանապարհից նոր վերադարձած մարդու հմայական բարի ազդեցությունը։

Գալստյան ողջույնների մեջ մի առանձին ենթաբաժին են կազմում առօրյա բոլոր այն ողջույն-բարեմաղթությունները, որոնց մեջ առաջնություն է տրվում օրվա ժամի բարեբանությանը։ Դրանք նվիրված են օրվա երեք կարևոր ժամանակներին՝ առավոտյան, ցերեկվա և երեկոյան պահերին, որոնց մեջ եկվորը կամ հանդիպողը բարեմաղթում է առավոտյան լույսը («Բարի լույս»), օրը կամ ցերեկը («Բարի օր») և երեկոն («Բարի իրիկուն»)։ Բոլորի պատասխաններն էլ գրեթե նույնն է՝ «Աստծու բարին» կամ «Աստծու խերն ու բարին»։ Ողջույնների այս ենթախմբի մեջ արդեն երևան է գալիս «բարի ժամի» հավատալիքը։ Ըստ այդմ, օրն ունի բարի ու չար ժամեր և նայած թե ո՛ր ժամին ո՛վ ինչ գործ կձեռնարկի, ըստ այդմ էլ կընթանա նրա գործը։ Այստեղից էլ անեծքներ և օրհնանքներ այդ մասին. «Չար սըհաթի ռաստ գաս», «Բարի սըհաթի հանդիպիս» և այլն։ Եվ ահա, օրվա տարբեր ժամերին մեկը մյուսին հանդիպողը կամ այցելողը ամենից առաջ հոգ է տանում ապահովել տվյալ ժամի բարությունը կամ լավությունը, որպեսզի իր հանդիպման հմայական ազդեցությունը ևս բարի լինի։

Մաղթանք-ողջույնների այս խմբի մեջ են մտնում նաև եկեղեցի գնացողին կամ եկողին ուղղված ողջույններն ու դրանց դիմաց տվող պատասխանները, որոնք ունեն կրոնական բովանդակություն։ Դրանց մեջ փաստորեն աստծու ողորմածությունն է հայցվում դիմացինին կամ նրա հարազատներին։ Այսպես. եկեղեցի գնացողը կամ եկողը, երբ հանդիպում է մեկին, ողջունում է աս-

լով. «Ողորմի աստված»։ «Ողորմի ծնողացդ» (ՀԺՀ VII 120, ԹՄԿ 213).—իսկույն պատասխանում է ողջունվող անձը։ Այս կարգի ողջույններն, հարկավ, շատ մասնակի կիրառություն ունեն և անմիջապես առնչվում են քրիստոնեական կրոնական հավատալիքներին։

բ) Հրաժեշտի ողջույնները գնացողի, հեռացողի մաղթանքներն են ուղղված տվյալ վայրում մնացողներին։ Դրանց մեջ գնացողը կամ հեռացողը հոգ է տանում մնացողների բարեկեցության մասին, իսկ վերջիններս էլ, ի պատասխան, ողջույնի բարեմաղթությամբ ապահովում են գնացողին կամ նրա գնալիք ճանապարհն ու ձեռնարկելիք գործը։

Այսպես. տվյալ վայրից ճանապարհ կամ օտարություն գնացողի հրաժեշտի ողջույններն են. «Մնաք բարով» կամ «Բարով մնաս», «Ողջ մնաք»։ Դրան մնացողները պատասխանում են «Երթաս բարով» կամ «Գնաս բարով», «Հաջողություն քեզ», «Բարի ճանապարհ» և այլն։

Բացի ճանապարհ կամ օտարություն գնացողների հրաժեշտի ողջույններից կան նաև այնպիսիք, որոնք սոսկ տեղական հրաժեշտի արտահայտություն են։ Այսինքն, հեռացողը ոչ թե ճանապարհ կամ օտարություն է գնում, այլ միևնույն բնակավայրում մի տեղից մյուսը, դիցուք, մեկ թաղից մյուսը, մեկ տանից մյուսը և այլն։ Եվ ուշագրավն այն է, որ ցերեկվա ժամերին, սովորաբար, տեղական հրաժեշտի ողջույններ չեն տալիս, այլ մեծ մասամբ գիշերը հեռանալիս։

«Բարի գիշեր» կամ «Գիշեր բարի» մաղթում է հեռացողը, որին հաջորդում է մնացողների պատասխանը՝ «Լույս բարի»։ Սա նշանակում է, թե հեռացողը մնացողներին իր խոսքի հմայական զորությամբ վնասազերծում է, հին հավատալիքներով, գիշերվա չար խավարի ազդեցությունը, իսկ մնացողները հեռացողին բարի լույս են ցանկանում, այսինքն՝ կրկին բարի առավոտյան, լուսաբացի արժանանալու բաղձանք։

Սրանք են մոտավորապես հայ ժողովրդական մաղթանքների հիմնական կիրառական խմբերը, որոնց գործածության ոլորտներում էլ դրսևորվում է մաղթանքների կիրառական նշանակությունը։ Կիրառական արտաքին նշանակությունից բացի, հայկական օրհնանք-բարեմաղթություններն առհասարակ տարբերակվում են միմյանցից նաև իրենց արտահայտած գաղափարների բնույթով, այսինքն՝ իրենց ներքին նպատակներով։

Ց. ՕՐՀՆԱԿԱՆ ԲԱՆԱՁԵՎԵՐԻ ԻՄԱՍՏԱՅԻՆ ՏԻՊԵՐԸ

37. Օրհնանքներն ու բարեմաղթությունները իրենց արծարծած գաղափարներով բաժանվում են երկու հիմնախմբի՝ 1. ապահովության և 2. պահպանության բանաձևերի:

Ապահովության օրհնական բանաձևերում գլխավոր գաղափարը օրհնվողին կամեցվող նյութական, մարմնական կամ բարոյական լավագույն վիճակի ապահովումն է:

Իսկ պահպանության օրհնական բանաձևերում՝ հիմնականը օրհնվող անձի կամ նրա հարազատների տվյալ վիճակի ապահովության գաղափարն է: Եթե առաջին խմբում գերիշխողը օրհնվող անձի վիճակը մեկ այլ լավագույնով փոփոխելու ապահովության բաղձանքն է, ապա երկրորդում՝ տվյալ վիճակի պահպանության ապահովությունը: Այսինքն, երկու խմբի օրհնանք-մաղթանքներն էլ, ընդհանրապես, ապահովություն են (պահպանությունն ինքն էլ ապահովություն է, առավել ակտիվ ձևով), բայց միմյանցից տարբերվում են օրհնվող անձի վիճակի նկատմամբ ունեցած վերաբերմունքով. մեկը վիճակի փոփոխությունն է ապահովում, մյուսը՝ հովանավորությունը[28]*:*

Ապահովության օրհնանք-մաղթանքները պահպանության բանաձևերի համեմատ և՛ քանակով են շատ, և՛ ենթատեսակներով՝ բազմազան: Հայ ժողովրդական օրհնանք-մաղթանքների ճնշող և որոշիչ մեծամասնությունը ապահովության բանաձևեր են:

Ա. ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ՕՐՀՆԱՆՔ-ՄԱՂԹԱՆՔՆԵՐ

Այս հիմնախմբի բանաձևերը իրենց արտահայտած իմաստներով բաժանվում են մի շարք տիպերի ու ենթատիպերի: Գլխավորներն են.

1. Կյանքի և երկարակեցության, 2. նյութական կյանքի պայմանների բարելավման ու կենսամիջոցների առատության, 3. Ու-

---

28 *Ապահովության օրհնական բանաձևերի մեջ են մտնում այն սակավաթիվ մաղթանքները, որոնք ըստ էության անեծքներ են՝ ուղղված օրհնվող անձի թշնամիներին: Օրինակ՝ «Ցավն ու չարը դուշմանիդ փորին ըլնի» (ՀԱԺԱ 133), «Քու դուշման մեռնի» (ՀԱԺԶ 325), «Ասրոծ (աստված) տուշմընըտ էշվեն (աչքեր) կուրցընե» (ԱՈԻ 113) և այլն: Սրանք անեծքներ լինելով հանդերձ, դրությամբ դարձել են մաղթանքներ, քանզի ուղղվել են օրհնվող անձի չարակամներին, և նախկին չարաբանությունը վերածվել է մի յուրատեսակ բարեբանության, որի նպատակն է օրհնվող անձի անվտանգության ապահովությունը: Այստեղ արդեն ոչ թե օրհնվող անձի վիճակի փոփոխությունն է նպատակը, այլ մի երրորդ անձի, որն սպառնում է օրհնվողի անվտանգությանը:*

նեցվածքի բարի վայելքի, 4. Հաջողության և հաջակի, 5. Փափագի կատարման, 6. Ամուսնության, սերնդի հարատևման ու բարօրության, 7. Երջանկության, ուրախության և սիրո, 8. Բարոյական ձիրքի, շնորհքի, ազնվության և արդարության, 9. Բարության, օրհնության և ողորմածության, 10. Հոգեկան հանգստի, 11. Հոգու փրկության ապահովությանն արտահայտող գաղափարները: Բացի հիշատակվածներից, կա օրհնական բանաձևերի մի խումբ ևս, որը ձևով բաղադրյալ տիպերից կազմված լինելով, ներկայանում է տարբեր գաղափարների հարակցություն: Դրանք անվանում ենք՝ **տարբեր ցանկալի գաղափարների ապահովության** *օրհնանք-մաղթանքներ*:

38. **Կյանք և երկարակեցություն ապահովող** *բանաձևերի գլխավոր նպատակը օրհնվող անձի կամ նրա հարազատների կյանքի տևողությունը երկարաձգված, աճած ու բարգավաճված, նրանց առողջությունը անսասան և ամենայն փորձանքից ապահով տեսնելն է, գաղափարներ, որոնք կարելի է բաժանել մի քանի ենթատիպերի:*

ա) **Կյանք ապահովող** *օրհնական բանաձևերի իմաստը՝ օրհնվողին կյանք, կեցություն ցանկանալն է: «Ապրիս» (ՀԺՀ VII 119), «Ապրի արեդ» (ԱՀՁ 344), «Քեզ ումբր արև» (ՀԺԱ 10), «Աստվածարև տա» (ԷԱԺՁ 324), «Աստուծ կինոք պահե» (ԹՄԿ 179), «Ըմբրով (կյանքով) կշտանաս» (ԹՄԿ 182), «Արեգակով կշտանաս» (ԹՄԿ 180):*

Կյանքով ապահովված տեսնելու այս բաղձանքը առավել խորանում և իմաստավորվում է

բ) **Կենաց աճը և բարգավաճումն ապահովող** *մաղթական բանաձևերում, ուր մասնավորապես բուսական սիմվոլիկայի միջոցով դրսևորվել է օրհնողի՝ օրհնվող անձի կամ նրա հարազատների նկատմամբ ունեցած մարմնական ու ժառանգական աճի բուռն ցանկությունը:*

«Զորանաս» (ՀԺՀ VII 119), «Զոշընաս» (ԷԱԺՁ 325), «Ծաղկիս» (ՀԺՀ VII 119), «էն ծաղկանց նման ծաղկիս, ո՛րդի» («Արձագանք», 1893, № 22), «Կընանչես տու» (իմ հավաք.), «էճիս ու դեճիս» (ԱՈԻ 114), «Զորանաս, ճըղըքճըղընուտես» (ՀԺԱ 10), «Թըփրիս, խերրիս» (ԷԱԺՁ 324), «Կանանչ արևի դառնաս» («Մշակ», 1881, № 53), «Կանչնա քու արև» (ԱՀՁ 31), «Ծառդ միշտ ծաղկած պահեաստված» (ԷԱԺԱ 130), «Քանց չինարի երգարես» (իմ հավաք.), «Ծլես, ծաղկես, յոթ որդու սեղան նստես» (ԱՀ XIX 114), «Ծաղ-

կես՝ ծերանաս, կյանքի տիրանաս» (իմ հավաք.), «Ծաղիկներով փնջփնջատես ու գալարես», «Վարդի կոկոնի պես բացվիս, փընջփընջատիս» (ԷԱԺԱ 130, 146), «Ծլիս, ծաղկիս՝ վարթ բոլորիս» (ԹՄԿ 182), «Ծլիս, ծաղկիս, բարի ավուր պտուղ էղնաս» (ԲԲ 546), «Ծլիս, ծաղկիս՝ ծիրանի ծառ դառնաս» (ԺԱԲ 119), «Ծլես, ծաղկես, կանանչես, բարով յարիդ ճանանչես» (ՀԺԱ 11), «Քանց բարձի բարձրանաս, քանց փշատի կռանաս» (ԷԱԺՋ 334), «Մենձրնաք ու ծերանաք» (ՋԺԲ 64), «Աստուած վուրթիքտ զորացնե. ծլին, ծաղկին, բարատու ծառ ըլին» (ԹՄԿ 179):

Այս ենթատիպի օրհնանք-մաղթանքներից գաղափարական անցում է կատարվում հաջորդ ենթատիպին՝

գ) **Կյանքի երկարություն ապահովող** օրհնանք-մաղթանքներին: Վերջիններիս գլխավոր նպատակն է օրհնվող անձի կյանքի երկարատևությունը, որ արտահայտվել է կա՛մ ուղղակի, կա՛մ էլ ժողովրդական բանարվեստին յուրահատուկ տարբեր արտահայտչաձևերով՝ փոխանունությամբ, սիմվոլիկայով, համեմատությամբ և փոխաբերությամբ:

Այսպես. «Էրկեն արև էլնես» (ԱՀ XIX 114), «Հըզար տարեկան ըլնես» (ՋԺԲ 64), «Փիր էխտիյար (ծերունի) ըլլաս» (ԱՀ IX 194), «Շատ տարիների արժանանաս» (ԷԱԺՋ 334), «Աստված քե շատ արև տա» (ԱՀ XIX 114), «Աստված քեզ երկար կյանք տա» (ԷԱԺԱ 127), «Քու մե օրը հազար անե» (ԹՄԿ 184), «Ջրի պես էրկեն արև էղնիս» (ԷԱԺՋ 329), «Շատ ապրիս» (ԷԱԺՋ 325), «Ումբրդ երկար ըլնի» (ՀԺԱ 10), «Աստված արևդ երկարացնի» (ԷԱԺՋ 334), «Սիմոն ծեր էլնես» (ԷԱԺՋ 327), «Սիմոն ծերունու տարսը դառնաս» (ԹՄԿ 183), «Ջիվան ումբր ու արևդ երկարի» (ԷԱԺԱ 132), «Մտնե ննգնիս Գաբրիել հըրեհանին» (ԹՄԿ 183), «Հալիվորես, ծերանաս, թոռան, ծռան տեր դառնաս» (ՀԺԱ 10), «Ջորանաս, երկար ու շատ ապրես» (ԷԱԺԱ 129), «Մազերիդ համբըրքին երգար ամբըրդ ըլի» (իմ հավաք.), «Թոռան թոռդ տեսնաս» (ԷԱԺՋ 326), «Շատ դարիկնիր տեսնիս» (ԷԱԺՋ 325), «Երկար կյանքով ու արևով ապրես» (ԷԱԺԱ 129):

Երկար տարիների կյանք է կամեցվել ոչ միայն օրհնվողին, այլև նրա հարազատներին:

«Աստված քու հորն ու մորն ու ախպըրտանցդ շատ պահի» (ՋԺԲ 63), «Աստված աղբորդ էրկեն յարև տա» (ԷԱԺՋ 333), «Աստված հորդ, մորդ էրկեն արև տա» (ԷԱԺՋ 333):

Գաղափարապես երկարակեցության հետ է սերտորեն առնչվում օրհնվողի և նրա հարազատների

դ) Առողջություն ապահովող *օրհնանք-բարեմաղթությունները:*

«Քեզ սաղ ջան ըլնի» (ՀԺԱ 10), «Սաղ ջանով պառվես» (ԹՄԿ 183), «Աստված առողջություն տա» (ՀԺՀ VII 120), «Կըլոխներդ ողջ ըլլա» («Հիշատ. Էվերեկ-Ֆեներեի» 248), «Դուն սաղ ըլիս» (ԹՄԿ 181), «Կռնակըդ գետին չի գա» («Բազմավեպ», 1902, 480), «Ասբոծ (աստված) ձիռոց-ուտոց (ձեռից-ոտից) չը ձգե» (ԱՈՒ 110). «Ցավ չտեսնուս» («Հիշատ. Էվերեկ-Ֆեներեի» 886), «Ախ-վախ չըսես» (անդ), «Աստոծ լավութին տա, առողջութին ու սաղ-սլամաթ ջան տա» (ԱՀ XI 120), «Առողջութինի ըլի» (ԱՀ XI 121), «Աստված ուժ ու կարողություն տա» (ԷԱԺԱ 128), «Ցավերդի թեթըվնա» (ԷԱԺՋ 325), «Աստված սաղ պահի» («Մեղու Հայաստանի», 1885, № 73), «Ասբոծ էշոցիտ (աչքեր) լըս տու» (ԱՈՒ 112), «Ցարա-փարա չըտեսնաս» (ԷԱԺՋ 326), «Աստված հիվանդիդ լավություն տա» (ԷԱԺԱ 127), «Սիրեկաններդ ողջ ըլան» (ՀԺՀ VII 120): Երկարակեցության գաղափարին են մերձենում նաև օրհնվողին կամ նրա հարազատներին ուղղված

ե) Անփորձության ապահովության *մաղթանքները, ուր հոգ է տարվում դիմացինի անձն ու առողջությունը գալիք փորձանքներից հեռու պահելու մասին:*

«Ծիվըդ քարուն չը կպնա» (ԲԲ 546), «Ըշտեղ (ինչ տեղ) քինաս՝ առաչըդ պարին կա, ոտըդ քարին չը կա» (իմ հավաք.), «Աստված կրակեմեն ու ջրեմեն թափե ու ազատե» (ԹՄԿ 181), «Ասբոծ (աստված) կյանճ էօլյում (երիտասարդ մահ) չի ցըցընե» (ԱՈՒ 112), «Աստոծ ղուրբեաթ (օտար) տեղ էօլյում (մահ) չի տու» (ԱՈՒ 114), «Երկուսդ՝ աստուծով մեկ չը դառնա» (ԷԱԺԱ 129):

39. Նյութական կյանքի պայմանների բարելավումն ու կենսամիջոցների առատությունն ապահովող *բարեբանությունները տրամաբանորեն հաջորդում են կյանքի և երկարակեցության ապահովության բանաձևերին:*

Այս տիպի օրհնանք-մաղթանքների հիմնական նպատակը օրհնվող անձի կամ նրա հարազատների սոցիալական վիճակի բարելավումն է: Օրհնանք-մաղթանքների այս տիպը իմաստային տեսակետից բաժանվում է մի քանի մերձիմաստ ենթատիպերի. *ա)* կենսամիջոցների մշտական գոյության, *բ)* ունեցվածքի ավելացման, *գ)* ունեցվածքի առատության և *դ)* ունեցվածքի հարատևության ապահովության *բանաձևերի:*

ա) Կենսամիջոցների մշտական գոյությունն *ապահովող բարե-*

բանությունների էական նպատակը օրհնվողի գոյության պահպանությունն է, նրա «հացի» մշտական առկայությունը: Սրանց մեջ արտահայտություն է գտել ժողովրդի ամենօրյա հոգսը՝ գոյության ապահովությունը:

«Հացդ անպակաս ըլնի» (ԷԱԺՁ 304), «Ջեռքիցդ միշտ անպակաս ըլնի» (ԷԱԺԱ 131), «Անհատնում հաց ուտես» (իմ հավաք.), «Աստված հացդ տանիցդ անպակաս անե» (ԷԱԺԱ 127), «Ջեռքեդ անհատ էղնի» (ԷԱԺՁ 324), «Աստոծ քու փայը տա» (Վեն. Սահակ. Հավաք.), «Աստված իրա առատ սեղանից պարգևե» (ԷԱԺԱ 128), «Աստոծ լանգին (արաֆիլ) պունան (բնից) քեզ պաժին տա» (Վեն. Սահակ. հավաք.), «Փչուրիտ հացն լըցվը» (ԱՈՒ 116), «Հացդ թաժա ինի, ջուրդ՝ սառը» (Վեն. Սահակ. հավաք.), «Նեղութեն չտեսնաս» (ԷԱԺՁ 327), «Անես էլ՝ ուտես, անես էլ ոչ՝ ուտես» (Վեն. Սահակ. հավաք.) և այլն:

բ) **Ունեցվածքի** *ավելացումն ապահովող օրհնանք-մաղթանքների նպատակն է մարդու գոյամիջոցների և ինչքի դյուրությամբ աճումն ու հավելումը: Սա ևս նախորդի նման մարդկության փայփայած դարավոր սոցիալական գաղափարներից է:*

«Աստված է՛լ չէվելցու» (ԷԱԺՁ 324), «Մեկի փոխարեն հազար առնես», «Մեկդ հազար ըլնի, հազարդ՝ անհամար» (ԷԱԺԱ 131), «Մեկ ցանեք՝ հազար վերցնեք» (ԷԱԺՁ 325), «Աստված մեկին տեղը տասը տա» (ՀԺՀ VII 120), «Ինչքան օր մալ ունիս՝ աստված էնքան էլ էվել տա» (ԷԱԺՁ 333), «Վըրածետ (վարածիդ) մինը հըզեր տենա» (ՀԺՀ VII 117), «Մեկ տաս՝ հազար գտնես» (ԷԱԺՁ 325), «Քիչ ուտես, շատ խնայես» (ԷԱԺՁ 327), «Գդլով ցրվիս՝ չերեփով ժողվիս» (ԷԱԺՁ 324), «Աստոծ իրկու ղոթ (անգամ, շերտ) ղըսմաթիտ տո» (ԱՈՒ 110), «Փայըդ շատ ինի աստուծանա» (Վեն. Սահակ. հավաք.), «Մեր պակսեցուցածը աստված էվելցունե քսենչիտ (քսակ)» («Հիշատ. Էվերեկ-Ֆենեսեի» 774), «Տարբե-տարի ավելնաս» (ԷԱԺՁ 327), «Աստոծ էալ ըվըլե (ավելացնել) հարստութընիտ» (ԱՈՒ 113): Այս ենթատիպի բարեմաղթությունները մոտիկ են ու համահնչյուն

գ) **Ունեցվածքի** *առատության ապահովության օրհնանք-մաղթանքները: Սրանց ամբողջ իմաստը մարդու նյութական միջոցների աճի ու բազմացման բաղձանքն է:*

«Աստված քու կալ ու կտին բարաքաթ տա» (ՁԺԲ 63), «Հայր Աբրահամին պերեքեթը մեջը ըլլա» («Հիշատ. Էվերեկ-Ֆենեսեի», 886), «Աստուծ բարաքաթ տա առնողին էլ, ծախողին էլ» (ԹՄԿ

180), «Աստծու բարաքյաթը ունեցածիդ մեջն ըլնի» (ԷԱԺԱ 128), «Աստուծ քիսիտ (քսակ) բարաքեն չըկտրե» (ԹՄԿ 181), «Բարաքյաթով ըլի» (իմ հավաք.), «Յանածդ սերմը անհատնում ըլնի, բարով ուտես» (ԷԱԺԱ 133), «Աստուծ ծեր տունավը, հյուրթավը (դրունով-երդքով) նի ածե (լցնել)» (ՀԺՀ VII 117), «Ըստըծանուց լիանաս» (իմ հավաք.), «Աստծու բարութենով լցվի տունդ ու տեղդ» (ԷԱԺԱ 128), «Դըռվընատ (դռնիդ) մուրացկոնը պակաս չինը» (ԱՈՒ 114):

Վերջին երկուսը ունեն նաև սոցիալ-բարոյական իմաստ: Դրանց մեջ առկա է հաջողության, աստվածային հովանավորության և աղքատասիրության ու ողորմածության գաղափարներ:

Ի վերջո այս երեք ենթատիպերի տրամաբանական հաջորդ աստիճանն են կազմում՝

դ) **Ունեցվածքի հարատևություն** ապահովող բարեբանությունները: Սրանց մեջ բարեմաղթվում է արդեն եղած ինչքի, հարստության մշտակայությունը:

«Շեն կենաս» (ԹՄԿ 183), «Շեն մնաս, շեն և պայծառ մնաս» (ԱՀ IX 194), «Տունդ շեն մնա», «Օջախդ հաստատ մնա» (ԷԱԺՁ 333), «Աստուծ քու օջախը հաստատ պահե» (ԹՄԿ 180), «Օջախիդ վառի» (ԱԱ, 50), «Աստված շեն ու լեն պայյա» (ԷԱԺՁ 324), «Շեն ես ու շեն մնաս, քանի աշխարհք կա» (ԷԱԺԱ 131), «Շեն օճաղդ շեն մնա, որքան դու կուզես», «Օճաղիդ մուխն ու ծուխը անպակաս ըլնի» (ԷԱԺԱ 132, 133), «Աստըծ (աստված) ուճախըտ պաղըշլամըշ (նվիրել, պահպանել) էնե» (ԱՈՒ 111), «Միշտ դուռդ բաց ըլնի, օջաղդ բարղարար (հաստատուն) ըլնի» (ՁԺԲ 64), «Աստըծ (աստված) յոխսուլութըն (չքավորություն, կարիք) չի տա» (ԱՈՒ 111) և այլն:

Այս ենթատիպի օրհնանք-մաղթանքների մի մասն ունի նաև բարոյա-ընտանեկան իմաստ, հատկապես տան և օջախի մասին ասվող բարեբանությունները, ուր ակնարկվում են նաև ընտանիքի հաստատության և ձեռնառատության գաղափարներ:

Այսպես, այս տիպի տակ համախմբված օրհնանք-մաղթանքներում արտահայտվել են ժողովրդի դարերով փայփայած սոցիալական իղձերը՝ ապրուստի միջոցների ապահովության, առատության, ունեցվածքի աճի, ավելացման ու մշտատևության վերաբերյալ գաղափարներ, որոնք եղել են բոլոր հասարակարգերում ապրող մարդկանց աշխատանքային գործունեության էական նպատակը:

Այս, ինչպես նաև նախորդ՝ կյանքի ու երկարակեցության տիպի բարեբանությունները, լինելով մարդու մարմնական գոյության և դրա համար անհրաժեշտ նյութական միջոցների ձեռքբերման ու մշտատևության ապահովության գաղափարների արտահայտություններ, իրենց հարակա կենսունակության պատճառով շարունակում են գոյատևել ժողովրդի լայն շրջաններում և կազմում են ժողովրդական բարեբանությունների ամենակենսունակ մասը:

40. **Ունեցվածքի բարի վայելքն ապահովող** *օրհնանք-բարեմաղթություններն իմաստով շատ են մերձենում նախորդ տիպին: Եթե այնտեղ բաղձանքով ապահովվում էր ապրուստի և նյութական այլ միջոցների ձեռք բերումը, ավելացումն ու պահպանումը, ապա այստեղ արդեն ապահովվում է նույն այդ նյութա-կենսական միջոցների բարի վայելումը:*

«Բարով վայելեք» (իմ հավաք.) «Մեջը ծերանաք» (ԱՀ XI 121), «Բարով խարճես» (ԱՀ IX 193), «Բարով մաշես» (իմ հավաք.), «Բարով-խերով ուտես ձեռիդ աշխատանքը» (ԷԱԺԱ 129), «Բարով աշխատանքիդ պտուղը ուտես» (ԷԱԺԶ 335), «Ինչ վեր ըշխատում ըս՝ ուրախությունավ ղսմաթ ինի քեզ» (ՀԺՀ VII 118), «Շատ տեսնես, շատ ունենաս ու վայելես» (ԷԱԺԱ 132), «Բերնի համով ուտեք» («Հիշատակ. Էվերեկ-Ֆենեսեի», 886):

Եթե նախորդ երեք տիպի բարեբանությունները վերաբերում էին մարդու կյանքի ու գոյության միջոցների ապահովությանը և ունեին առավելապես նյութական-առարկայական իմաստ, ապա այս չորրորդ տիպից սկսած, օրհնանք-մաղթանքները արտահայտում են հիմնականում բարոյական կարգի գաղափարներ:

41. **Հաջողության և հուշակի** *ապահովության բարեբանությունները նպատակ ունեն օրհնվող անձի ձեռնարկած գործի հաջողությունը և անձնական հուշակը ապահոված տեսնել. բաժանվում են հիմնականում երկու ենթատիպի՝ ա)* **հաջողության** *և բ)* **հուշակի**:

ա) **Հաջողության** *ապահովության բարեբանություններից են.*

«Աստված պանիդ-գործիդ աջողութեն տա» (ԱՀ IX 193), «Հաջողության մեջ լինիք» (Վեն. Սահակ. հավաք.), «Ուր որ էրթաս՝ գործդ աջողակ ըլլի» (ԺԱԲ 119), «Աստվոծ բոնըտ ըռաստ բիրե (հաջողել)» (ԱԱ 50), «Ասֆած խերիպներուտ բանին-գործին խեյըլէ (բավական) աջողուցին տա» («Բազմավեպ», 1902, 480), «Ինչ բանի ձեռք զարկես՝ տեր աստված աջողե» (ԷԱԺԱ 130), «Աստված տա քե հաջողություն, ուժ, կարողութեն» (ԷԱԺԶ 330), «Աստծու աջողությունը վրեդ ըլի» (ԱՀ IX 252), «Յաչ էրթասյաչ ըլնի, ձախ էլ

էրթաս՝ յաշ ըլնի» (ՁԺԲ 64), «Աստված դուռդի բաց էնա» (ԷԱԺՋ 324), «Թուրդ կըյրուկ ըլլի» («Բազմավեպ», 1902, 479)։

Այս ենթատիպի մեջ է մտնում օրհնանք-մաղթանքների մի փունջ, որ նախորդ փնջի համեմատ ունի առարկայական նկարագիր և ակնարկում է առավելապես ունեցվածք ձեռք բերելու հաջողությունը։

«Ժողված հողդ՝ ծիլ-ծիլ ոսկի դառնա» (ԷԱԺԱ 130), «Ցող բռնես՝ ոսկի դառնա» (ՀԺԱ 11), «Փուշ ցանես՝ ոսկի քաղես» (ԺԱԲ 120), «Քար տեյի (իբրև քար) ճանկածդ՝ ոսկի, մարգարիտ ընա» («Հիշատակ. Էվերեկ-Ֆենեսեի», 886), «Փուշ բռնես՝ վարդ դառնա» (ՀԺԱ 11), «Չոր քարի վրա գնաս՝ առաջդ կանաչի» (ԷԱԺՋ 335), «Ինչ բանի ձեռ թալեք՝ կանանչի» (ՍՄ 103), «Չոր քյինըմ ես՝ կանաչ կյաս» (Վեն. Սահակ. հավաք.), «Ցամաքը գնաս՝ ջուր դառնա» (ԹՄԿ 184), «Դադրած չեշմեն (աղբյուր) էրթաս՝ վազե» (ՀԺՀ VII 120), «Ուր որ գնաս՝ ճամբեքիդ ծաղիկ բուսնի», «Գրկումդ վարդ-մանիշակ բուսնի» (ԷԱԺԱ 132, 144), «Տարտակ քյինըմ ես՝ լեցինը (լիք) կյաս», «Ուր քինաս՝ առաջիդ պարին կյա» (Վեն. Սահակ. հավաք.), «Կալիդ քամի ըլի, ջաղացիդ՝ հերթ ըլի» (ԱՀ IX 239)։

բ) **Հռչակի ապահովության** բարեբանություններ են.

«Մեծանաս, մեծ անուն ունենաս, փառքի տիրանաս», «Օրհնությունով ու փառքով տուն ու դուռդ լցվի», «Մարդկանց միջին սար ու սարդար ըլնես» (ԷԱԺԱ 131, 133), «Ձենդ էրկրե-էրկիր փռվի» (ԷԱԺՋ 326), «Տուշկի (պաշտոնի բարձ) վերո ապրես» (ԱՈՒ 116) և այլն։

42. **Փափագի կատարումն** ապահովող բարեբանությունները բնույթով կարելի է բաժանել երկու ենթատիպի. ա) **ընդհանուր փափագի** և բ) **ամուսնության և այլ ցանկալի իրադարձությունների** կատարումն ապահովող օրհնանք-մաղթանքների։

ա) **Ընդհանուր փափագի կատարումն** ապահովող բարեբանություններում փափագի կատարման հեղինակներ են հանդես գալիս աստված և զանազան սրբեր։

«Աստուծ քու սրտի մուրազին արժանացնե» (ԹՄԿ 180), «Մուրազ աստծուց առնես» (ԷԱԺՋ 327), «Ինչ խորհրդի ես՝ աստված բարին առաջնորդե» (ԷԱԺԱ 130), «Աստված սրտովդի տա» (ԷԱԺՋ 333), «Աստոծ խորհուրդիդ կատարե», «Աստոծ հասրաթըդ հասցընե» (ԱՈՒ 114, 110), «Սրտիդ մեջ ինչ մուրատ որ ունիս՝ աստված լսող, կատարող ըլլի» (ԺԱԲ 119), «Ինչ պարին կամենաս՝

ասածով կատարվի» (ԷԱժԶ 326), «Աստված կես ու կատար չի թողու» (ԱՈՒ 114), «Զինավոր սուրբ Գևորգը մուրազդ տա», «Օխտն անուն Ս. Կարապետը մուրազդ տա» (ԷՍժԱ 129, 133), «Սուրբ Սարգիս հասնի քզի» (ԷԱժԶ 329)։

Կան նաև օրհնանք-մաղթանքներ, ուր փափագի կատարման հեղինակ չի մատնանշվում, կատարումը ցանկացվում է ինքնաբերաբար։

«Բարով-խերով սրտիդ մուրազին հասնես» (ԷԱժԱ 129), «Սրտիդ մուրատին, հոգուդ սիրածին հասնիս» (ԷԱժԶ 327), «Մուրազետ, դիլակետ հըսնիս» (ՀժՀ VII 117)։

բ) Ամուսնության և այլ ցանկալի իրադարձությունների կատարումն ապահովող օրհնանք-մաղթանքներում, փափագի կատարումը ձևոք է բերում շատ որոշակի իմաստ։ Դրանց մեջ, առաջին հերթին, ամուսնության իրականացումը դառնում է օրհնվող երիտասարդ անձի կամ նրա ծնողների ու հարազատների փափագի կատարումը, ապա, երկրորդաբար, նաև որդիների ձեռով ծերացած ծնողների թաղումը, նրուսադեմ ուխտ գնալը և այլն։

«Բարով-խերով անթառամ պսակ ելնես» («Արձագանք», 1893, № 22), «Թըագ ու պսակիդ խասնես» (ԷԱժԶ 326), «Բարի պսակին արժանանաս» (ՀժՀ VII 120), «Կանաչ ու կարմիր թագավոր մընես (դառնաս)» (ԱԱ 50), «Բարով կանաչ-կարմիր կապես» (ԷԱժԶ 335), «Կընըչ-կըրմըրըմ կենաս» (Վեն. Սահակ հավ.), «Սուրբ պըսակին արժանացնե» (ժԱԲ 120), «Ասված քիզի աղկեկ նշանած մի տա» («Բազմավեպ», 1902, 479), «Սրտիդ սիրածին՝ բարով արժանի ըլնիս» (ԷԱժԱ 132), «Տղիդ կանանչ-կարմիրին արժանանաս» (ԷԱժԶ 334), «Քու վուրթու թագին արժանի ըլիս» (ԹՄԿ 184), «Որդոցդ ալ ու եշիլը տեսնես» (ԷԱժԱ 132), «Բարով կապես խիզանիդ կարմիր-կանանչը» (ԶժԲ 64), «Որդկանցդ ձեռով հող մտնես» (ԷԱժԶ 335), «Լոս կերեզման խամբյուրես» (ԷԱժԶ 326) և այլն։

43. Ամուսնության, սերնդի հարատևման ու բարօրության ապահովման օրհնանք-մաղթանքները գաղափարով շատ են մոտենում նախորդ տիպի բանաձևերին։ Այս՝ վեցերորդ տիպի բարեբանություններում օրհնվողներին մաղթվում է ամուսնության հաստատություն, վայելք, սերնդաճում, սերնդի աճ ու բարօրություն։ Ըստ այսմ էլ դրանք բաժանվում են երկու ենթատիպի. ա) ամուսնության հաստատություն ու վայելք և բ) սերնդաճում, սերնդի աճն ու բարօրությունն ապահովող բարեբանություններ։

ա) **Ամուսնության հաստատունության ու վայելքի ապահովության** օրհնանք-մաղթանքներ են.

«Աստուծ սեր ու միաբան պահե ձեզ», «Աստուծ անփոշիմնելի անե» (ԹՄԿ 180), «Թագդ չուխտ ձեռով պահե աստված», «Թախտիդ ու թաչիդ հաստատ մնաս» (ԷԱԺԱ 129, 130), «Հելալ կալի ծծածի արժանի ըլաս» (ՀԺՀ VII 119), «Քու տերդ գլխիցդ անպակաս ըլի», «Տերդ ապրի» (ԱՀ XI 119), «Գլխավորեդ խերիս» (ԷԱԺԶ 324), «Պսակովդ ծերանաս» (ՀԺՀ VII 119), «Մեկ բարձը վերո վըլեք (վայելել)» (ԱՈՒ 115), «Մի բարձի ծերանաք» (ԷԱԺԶ 335)։

բ) **Սերնդավորման, սերնդի աճի ու բարօրության ապահովության** օրհնական բանաձևեր են.

«Օխտը որդու հեր ըլիս» (ԱՀ XI 120), «Բարով ու խերով մին տարեն վրա՝ տղա թոռան թուշը պաչես» (ԱՀ IX 226), «Խնազանդ որդյու տեր էլնես» (ԷԱԺԶ 326), «Աստուծ տղոցդ բարը քեզ արժան անե» (ՀԺՀ VII 118), «Բար ու նուբարը արևներդ» (ԱՀ XI 119), «Օխտը որդով սեղան նստես» (ՀԺԱ 10), «Յոթը տղի պապ նաս (պապ դառնաս)» (ԱԱ 50), «Որդով ու թոռնով զարդարվես» (ՁԺԲ 64), «Որդով, զավակով ուրախնաս» (ԷԱԺԶ 335), «Լաճ տղի տեր էլնես» (ԷԱԺԶ 326), «Ղադր (արժեք) իմացող որդիք շատ ունենաս» (ԷԱԺԱ 131), «Բարեկի սեղան նստես որդկերանցով» (ԷԱԺԱ 128), «Բարի զավակ ըլի, հորով-մորով մինձանա» (ԹՄԿ 181), «Աստուծ բարը հիշատակ պեհե» (ԱՈՒ 112), «Որդով ու փառքով լիանաք աշխարումը» (ԱՀ IX 240)։

44. **Ուրախության և երջանկության ապահովության** բարեբանությունների մեջ օրհնվող անձին մաղթվում է ուրախ, անտրտում օրեր, երջանիկ բախտ ու կյանք։ Սրանք ևս կարելի է բաժանել երկու ենթատիպի. ա) **ուրախության** և բ) **երջանկության** ապահովության բանաձևերի, թեպետ մի գաղափարը երբեմն հանդես է գալիս մյուսի հետ հարակցված։

ա) **Ուրախության ապահովության** օրհնանք-մաղթանքներ են.

«Խնդաս» (ՀԺՀ VII 119), «Խնդում, ուրախ օր տըսնաս» (ԲԲ 546), «Ուրախ սրտով պառվիս» (ԹՄԿ 184), «Շեն սիրտով ապրիք» (ՀԺՀ VII 120), «Ուրախ օրեր տեսնիս» (ԷԱԺԶ 325), «Կյանքիդ մեջ իսկի ախ ու վախ չանես» (ԷԱԺԱ 130), «Աչքի լըսով, ցամաք աչքով ապրիք» (ԱՀ XI 119), «Վատ օրդ աստված միշտ ուրախությունով անցկացնե» (ԷԱԺԱ 133), «Շիվանի (ողբ) երես չիտիյաս (չտեսնել)» («Բազմավեպ» 1902, 479), «Ցամաք աչքով, ուրախ սրտով ծերանաս», «Ծիծաղերես ու միշտ ուրախ մնաս» (ԷԱԺԱ

133, 130), «Ուրախ տանտիկին պատվիս», «Ցամաք աչքով պատվիս» (ԹՄԿ 184), «Խնդաս, մխիթարվիս» (ԹՄԿ 182), «Ահ ու վոխ չի քաշիս» (ԱՈՒ 111), «Սաղ ջանով, ուրախ սրտով ապրես» (ԷԱԺԱ 132), «Աստոծ ուրախցընե զըսբիդ» (ԱՈՒ 110), «Բարով, ուրախութենով տեղերդ հավաքես» (ԷԱԺՁ 334), «Ուրախութենի հաց ըլի» (իմ հավաք.), «Ճերմագ լվացք էղնի» (իմ հավաք.), «Սև օր չի տիյաս» («Բազմավեպ», 1902, 479), «Վեչ տանոթյուն տեսնաս» (ՀԺՀ VII 118), «Շեն սիրտով, ցամաք աչքով ըլուք» (ՀԺՀ VII 119)։

բ) **Երջանկության ապահովության** բարեբանություններ են.

«Կարմիր ու կանաչ օրերում շատ ապրես», «Լավ օրեր ու արև շատ տեսնես» (ԷԱԺԱ 130), «Ես քեզ տեսա՝ դուն շատ աղեկ օրեր տեսնիս» (ՀԺՀ VII 119), «Ղամաթդ աստծուց առնես ու վայելես» (ԷԱԺԱ 131), «Գեշ օր չը տեսնիս» (ԷԱԺՁ 333), «Լավ բախտ ունենաս, լավ օրեր տեսնես» (ԷԱԺԱ 130), «Աստված բարի բախտ տա» (ԷԱԺՁ 334), «Շանքըը (շաքարի) մեջ կինաս» (ԱՈՒ 115), «Էնենց դառնաս, վուր քո աճկը քիզ էրնեկ տա» (ԹՄԿ 182), «Դու իմ երկու աչից լուսն ես, լուսով ու արևով մնաս («Արձագանք», 1893, № 22), «Աղեկ բախտի ռաստ գաս» (ՀԺՀ VII 119), «Կարմիր խարս էրթաս» (իմ հավաք.), «Տարոցը մյուս որդուդ ըլի» (ՄՀԴ), «Երկնային տեր թագավորը թող կյանքդ էապես բաղդրացնի» (Քր. Թափ. «Պատերազմ» III, 258), «Ոտնի կյալերդ լավ ընի» (Վեն. Սահակ. հավաք.), «Մեղրը մեջ կինաս» (ԱՈՒ 115), «Աղեկության տառոսը ճակատիդ» (ՀԺՀ VII 119), «Ասղըխիկդ (աստղդ) բանուկ ըլլա» («Բազմավեպ», 1902, 480), «Բարի լուսը ճղճղնուտած վրեդ բացվի» (ԷԱԺԱ 129)։

45. **Բարոյական ձիրքի, շնորհքի, ազնվության և արդարության** ապահովության բարեբանություններում ցանկություն է հայտնվում օրհնվող անձին, նրա հարազատներին, նրա ունեցվածքը կամ տունը տեսնել ներքին բարոյական ձիրքով, շնորհքով ու ազնվությամբ օժտված, աստվածային օրհնությամբ ու բարությամբ լցված։ Ըստ այդմ՝ բաժանվում են երկու ենթատիպի. ա) **ձիրքի ու շնորհքի** և բ) **ազնվության ու արդարության** ապահովության բարեմաղթությունների։

ա) **Բարոյական ձիրքի ու շնորհքի ապահովության** բարեբանություններ են.

«Շենքով (շնորհք) մարդ ըլլաս» (ՀԺՀ VII 119), «Շնորհքի մեջ մնաս, շնորհալի դառնաս» (ԷԱԺԱ 132), «Շնորհքով ինիս, պարի մըթկատար տեռնաս» (ՀԺՀ VII 118), «Յոթնականի շնոխքն

մեյն քն էլնի» (ԷԱԺԶ 326), «Աստծու շնորհքը վրեդ անպակաս ըլնի», «Ավուր շնորհքը տանեդ անպակաս ըլնի» (ԷԱԺԱ 128), «Աստծու շենքն ու շնորհքը տան ու տեղիդ վրա ըլնի» (ԷԱԺԱ 130), «Մարդ ապրես, մարդ մեռնես» (ԷԱԺԶ 327), «Էնպես ըլնես, որ աշխարհքին լուս տաս», «Ժամումը աստղի ու ճրագի պես լուս տաս», «Սաղ աշխարհքի համար արև ու լուսին դառնաս», «Հոտով ծաղիկ դառնաս աշխարհքի համար», «Թագ ու պսակ ըլնես իմ գլխին վրա» (ԷԱԺԱ 144, 146, 145), «Թագ ու պարծանք ըլնես» (ՀԺԱ 11), «Պըտուղ մի խունք էլնես» (ԷԱԺԶ 327), «Աստծու ամանաթ (ավանդ) ըլիս» (ԹՄԿ 180), «Աստծու գառն էղնիս» (ԷԱԺԶ 333), «Աստված հուգոտ (հոգուտ) էշվեն (աչք) բանա», «Աստված խիլք, իմաստութըն տա», «Աստծու միտքը կինոս (կենալ)» (ԱՌԻ 112, 110, 111), «Ճանաչներիդ սրտին սուն դառնաս» (ԷԱԺԱ 131), «Օջաղիդ անկոտրում սուն դառնաս», «Հորդ օջաղին ոսկե սուն դառնաս» (ԷԱԺԱ 133), «Օջաղիդ հաստատ ըլնես, որդի» (ՀԺԱ 10), «Թքես վեր օձու՝ օձ խալի» (ԷԱԺԶ 326), «Տուշմընիտ (թշնամուդ) գլուխը ոտքյիտ տակն ըլլի» («Բազմավեպ», 1902, 479) և այլն: Ինչպես նշեցինք, սրանք ուղղված են մեծ մասամբ օրհնվող անձին, նրա ունեցվածքին, տոներին և ամենատարբեր ձևերով արտահայտում են շնորհալիության, ձիրքի պահպանման գաղափար: Մինչդեռ,

բ) **Ազնվության և արդարության** պահպանության բարեմաղթությունները միմիայն օրհնվող անձին են ուղղված: Դրանց մեջ միակ մտահոգությունը՝ օրհնվողին բարոյապես ազնիվ ու արդար տեսնելու գաղափարն է:

«Աստված սիվիրիս չի հոնե» (ԱՌԻ 112), «Էրեստ սպիտակ (սպիտակ) ըլլի» («Բազմավեպ», 1902, 479), «Ծուրին պես ազիզ ըլլաս» (ԱՀ IX 194), «Բերնիտ շաքար ըլլի» (ԹՄԿ 181), «Նամարտի (տմարդ) մուհթեճ չէղնիս (կարիքին չընկնես)» (ԷԱԺԶ 325), «Դուշմընի սրտով չըլիս» (ԹՄԿ 181), «Մուխենեթին (տմարդ) դուռը չի տանը զքիզ աստված» (ԱՌԻ 115), «Սատանի խաղալիք չէլնես» (ԷԱԺԶ 327), «Էնպես նստես-կանես, օ (որ) դուշմընին լեզվատեղ չնղիս» (ԷԱԺԶ 330), «Պյուզին (պռնիկ) կերի (գերի) չը տառնաս» (ԷԱԺԶ 327), «Հալալ հաց ուտես», «Հալալ կաթ ուտիս», «Անմեղ խոխշտակ տըառնաս» (ԷԱԺԶ 334, 324, 326),՝ «Պարզերես ինիս» (ՀԺՀ VII 118) և այլն:

Այս նմանատիպի «չը» ժխտականով կազմված բարեմաղթությունները՝ բնույթով խրատներ են, որոնք մաղթական հատկանիշներից զատ՝ ունեն նաև բարոյա-խրատական իմաստ:

46. **Բարության, օրհնության և ողորմության** *ապահովության բարեբանությունները նպատակ են հետամտում ապահովել օրհնվող անձի, նրա հարազատների, նրանց ձեռնարկելիք գործերի բարի հատկությունները, բարի ընթացքն ու բարի վախճանը, նրանց նկատմամբ՝ սրբազան օրհնությունն ու աստվածային ողորմածությունը։ Ըստ իմաստային տարբերությունների, այս խմբի բարեմաղթությունները բաժանվում են երեք ենթատիպի. ա)* **բարության**, *բ)* **օրհնության** *և գ)* **ողորմության**։

ա) **Բարության** *ապահովության օրհնանք-մաղթանքների մեջ են մտնում մասնավորապես՝ ողջույնի և հրաժեշտի մաղթանքները։*

«Բարին քեզ մոտ» (ԱՀ XI 119), «Բարով, հազար բարի իմ էկի» (ԹՄԿ 210), «Բարի աշողում» (ԹՄԿ 211), «Վուտդ բարի ըլի» (ԹՄԿ 183), «Գալդ բարի ըլի» (ԹՄԿ 211), «Բարին բարև բերողին ալ, ղրկողին ալ» (ՀԺՀ VII 121), «Բարում կենաս» (ԱՀ XI 121), «Աստուծ դիփունանցը բարի տա» (ԹՄԿ 181) «Վերջդ բարի ըլնի» (ՀԺԱ 10), «Բարին արևոդ» (ՀԺՀ VII 120), «Բարձդ ի բարին» (ԷԱԺՁ 324), «Բարի բացվա հըմենիդ վրեն» (իմ հավաք.), «Բարի սահաթի ըլի» (ԹՄԿ 211), «Բարի սհաթի ու հրեշտակի ոտով գա» (ԷԱԺԱ 129), «Պարի մարդի ոտով կյաս» (Վեն. Սահակ. հավաք.), «Պըարի կյարուն տիսնաս», «Պըարութնով մեռնես» (ԷԱԺՁ 327)։

բ) **Օրհնության ապահովության** *բարեբանություններում նպատակ է հետապնդվում աստվածային օրհնությամբ ու բարեխոսությամբ ապահովել օրհնվողի ու նրա հարազատների կյանքը, գործն ու ունեցվածքը։ Սրանց մեջ երևան է գալիս բարեբանությունների հմայական զորության ինքնագիտակցության փաստը։*

«Քրիստոս աստվածը տուն ու տեղդ իր բերանով օրհնե», «Աստծու օրհնենքը գլխիդ, արևիդ թափի», «Աստված օխտն աթոռով քեզ օրհնե», «Խաչը քեզ ու տանդ բարեխոս ըլնի», «Զնգզնգան ժամերը բարեխոս ըլնին քեզ» (ԷԱԺԱ 133, 128, 130, 129), «Տոնին սուրբը քեզի բարեխոս ըլլա» (ՀԺՀ VII 119), «Հեր Աբրահամի օրհնությունը վրեդ ըլնի» (ՀԺԱ 10), «Մեռոնի օրհնությունը խիզնիդ (ընտանիք) յարխլին ըլնի» (ԶԺԲ 64), «Աստոծ հրեշտակնին օխնի» (ԱՀ XI 120), «Օրհնյալ լինես» (իմ հավաք.), «Ոտներդ չում (մինչև) կըլեոխ՝ օխնիթքով լըցվես», «Մայր աստվածածնա օխնիտք առնես» (ԷԱԺՁ 327, 326), «Պապիդ օրհնենքին արժանա-

նաս», «Մեր օխնանքն էլ ձեր յերա (վրա) իջնի» (Վեն. Սահակ. հավաք.), «Աստուծո բերնով օրհնըվիս» (ԷԱԺՁ 333):

գ) **Ողորմության** ապահովության բարեբանություններում ցանկություն է հայտնվում ապահովել օրհնվող անձի կամ նրա հարազատների կյանքի, ինչքի գոյությունը և հոգու փրկությունը՝ աստվածային ողորմածությամբ: Սրանց մեջ են մտնում, ամենից առաջ, սգավոր մեռելատիրոջն ուղղված ողորմության մաղթանքները:

«Ողորմի իրան», «Ըղորմի քո հոր» (իմ հավաք.), «Ողորմի ծնողացդ», «Ողորմի աստված» (ՀԺՀ VII 120), «Օղորմած կենա» (ԹՄԿ 213), «Աստուծու ուղուրմութընը հասնը քիզ» (ԱՈԻ 111), «Աստծու մեծ ողորմությունով ապրես», «Աստված անհատ ու անպակաս անե իր օղորմութինը» (ԹՄԿ 179), «Աստծու դիվանգարգյահիցը չը զրկվիս» (ԷԱԺԱ 128), «Ասբոծ խայլու (ողորմածության) դուռ մը բանու» (ԱՈԻ 113), «Ասբոծ տա վորձքիդ (վարձքըդ)» (ԱՈԻ 111), «Ումուդդ (հույս) աստծուց չը կըտրես» (ԷԱԺՁ 327):

47. Հոգեկան հանգստի ապահովության բարեբանությունների գլխավոր իմաստը ցավ ու տառապանք տեսած օրհնվող անձին հոգեկան մխիթարություն, համբերություն ու հանգստություն կամենալն է, որ սովորաբար ուղղված է լինում սգավորներին:

«Աստծով մխիթարվիս», «Հոքով խիթարվիս» (ԹՄԿ 210, 212), «Աստոծ ձեր սիրտը մխիթարե» (ԱՀ XI 120), «Վերջին տխրությունըդ ըլի» (իմ հավաք.), «Ասբոծ սրտըդ կակուղութըն տա» (ԱՈԻ 112), «Աստված համբերություն տա» (ԱՀ IX 193) և այլն:

Իմաստով այս տիպի օրհնանք-մաղթանքներին համահնչյուն են՝

48. Հոգու փրկության ապահովության բարեբանությունները: Սրանք ևս հիմնականում հանգուցյալի սգավոր հարազատներին են ուղղված, ուր հոգ է տարվում, ըստ կրոնական ու ժողովրդական հոգեպաշտության՝ հանգուցյալի հոգու փրկության մասին:

«Լուս դառնա նրա հոքին» (ԹՄԿ 182), «Ասբոծ արքայութոնընե չի զըրկը» (ԱՈԻ 110), «Աստված իրան տեսությանն արժանացնե» (ԷԱԺԱ 128), «Աստված քե քյաղցրիկ արքավութեն տա» (ԷԱԺՁ 326), «Քրիստոս աստծու ձենին արժանանաս» (ԷԱԺՁ 335), «Սբը Քեղարթա շնոհքով (շնորհք) փրկվես» (ԷԱԺՁ 327) և այլն:

Այս 11 (§ 38—48) գլխավոր տիպերից զատ, ինչպես նշել ենք, կա բարեբանությունների մի խումբ ևս, որի տակ են համախմբ-

վում տարբեր գաղափարների ապահովության օրհնանք-մաղթանքները: Դրանցից են, օրինակ, «Երկնն արև, սիպտակ իրես լինեք» (ՍՄ 103) մաղթանքը, ուր ապահովվում է օրհնվողի երկարակեցությունն ու արդարացիությունը. «Համաշա (միշտ) ուրախ ըլեք, ծլեք, ծաղկեք, զորանաք» (իմ հավաք.) մաղթանքում արտահայտվել են ուրախության և աճի ու բարգավաճման ապահովության գաղափարները. «Տեր աստուծը թուրդ կտրուկ անի, բախտըդ երիցան անի» (ԱՀ IX 239) մաղթանքում, համադրվել են հաջողության և երջանկության ապահովության գաղափարները. «Էրգենյա կյանք ըլես, ծաղկյես. ուրախ ըլյես» (իմ հավաք.) մաղթանքում, արտահայտություն են գտել երկարակեցության, աճի և ուրախության ապահովության գաղափարները և այլն:

Բացի նշված տիպերից, կան նաև այնպիսի օրհնանք-մաղթանքներ, որոնք իրենց արտահայտած գաղափարներով չեն մըտնում բերված տիպերից և ոչ մեկի տակ. դրանք քանակով քիչ են, չեն համախմբվում մեկ միասնական գաղափարի շուրջ, մասնակի բնույթ են կրում, հետևաբար և իմաստային տիպաբաժանման չեն ենթարկվում: Օրինակ. «Աստուծ քու լավ ուզողին տա» (ԹՄԿ 180), «Աստծու հացն ուտես» (ԺԱԲ 119), «Փայ ու բաժինդ աստծու մոտ շատ ըլնի», «Աղբրրութենե անպակաս ըլլիս» (ԺԱԲ 119) և այլն:

Սրանք անհատների ցանկացած գաղափարների արտահայտություններ են, որոնք իմաստային առանձին խմբերի չեն վերածվել:

Բ. ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՕՐՀՆԱՆՔ-ՄԱՂԹԱՆՔՆԵՐ

49. Այս հիմնախմբի բարեբանությունները գաղափարով պատկանում են միևնույն տիպին, որը բաժանվում է երեք ենթատիպի. ա) պահպանության, բ) օգնության և գ) չարից ու փորձանքից ազատելու բարեմաղթությունների:

ա) Պահպանության բարեմաղթությունների նպատակն է՝ օրհնվող անձի կամ նրա հարազատների կյանքի, ինչքի ու գործի պահպանության գաղափարը: Այս ենթատիպում, իբրև պահապան, հանդես են գալիս աստված, Քրիստոս, հրեշտակներ կամ սրբազան տարբեր առարկաներ, իսկ մնացած ենթատիպերում, դրանց զուգահեռ՝ նաև քրիստոնեական սրբերը:

«Աստված պահի» (ԱՀ IX 193), «Աստված արևդ պահի», «Աստված ջուխտիկներդի պայա» (ԷԱԺՋ 327, 324), «Հանուն հոր

քեզ պահե, պահպանե» (ԷԱԺԱ 131), «Քյուրուստյուս պեհե զքեզ», «Քյուրուստյուս պեհն մեկ հատիկկիտ» (ԱՈՒ 116), «Աստծու հրեշտակներ քզի պահապան էղնին» (ԷԱԺՁ 328), «Աստծու աջն ու խաչը վրեդ պահապան ըլնի» (ԷԱԺԱ 128), «Վարագա սբբ նիշան քե պախի» (ԷԱԺՁ 327), «Նորամանուկիդ աստված պահե, զորացնե» (ԷԱԺԱ 131), «Աստված ետ մնացողներին ամուր ձեռքը պահե» (ԺԱԲ 120), «Գիշեր-ցերեկ Քյուրուստյուս պերձի (պահապան) նը քըզ» (ԱՈՒ 114), «Աստված խոխեքըտ (երեխաներ) պահի» (իմ հավաք.), «Ժամը պահե գյանջ ու բուրջ (երիտասարդ) արեզ» (ԷԱԺԱ 130), «Աստու աջն ու խաչը մեր տան ու դռան վրա էղնի» (ԷԱԺԱ 196), «Աստված քեզի փեշին տակ առնե» (ԲԲ 546), «Աստծու աչք, ձեռ վիրեդ էլնի» (ԱՀ XIX 114), «Խըդըվյուրիտ (հեռավորիդ) պահե ասբոծ» (ԱՈՒ 115), «Աստված ուր (իր) ձեռ քեզնից չը վերուցի» (ԷԱԺՁ 326), «Մենձ աղեն (սուրբ) կռանդ կաղնի» (ԷԱԺՁ 325), «Ասբոծ տերիտ (տերդ, պաշտպանդ) կռանոկիտ (կնակ) պակաս չենե» (ԱՈՒ 110), «Ասբոծ չիտա թարկիտ (չլքել)» (ԱՈՒ 111), «Աստուծու աչքը վրեդ էղնի ամեն հաղ (անգամ)» (ԷԱԺՁ 333), «Ասբոծ խիխս չի դառցնե» (ԱՈՒ 111) և այլն:

բ) Օգնության բարեմաղթությունների նպատակն է՝ օրհնվող անձին ապահովել սրբերի, հրեշտակների, աստծու, Քրիստոսի, սուրբ հոգու և աղոթքի գերբնական օգնությամբ ու պաշտպանությամբ: Այս ենթախմբի մաղթանքներում, հատկապես, մեծ դեր են կատարում սրբերը:

«Խաթուն տիրամեր կյա քե էօզ (օգնության)», «Փյութկի սբբ Կեվորք քե խասնի», «Սուրբ Հակոբ ու ձիավոր յարոմճիդ (օգնականդ) ըլլա» (ԷԱԺՁ 326, 327), «Հոգին սուրբ քեզ օգնական լինի», «Ըմբրիդ սուրբ Կարապետ քոմակ ըլնի», «Խաչը քեզ պահապան-օգնական ըլնի» (ԷԱԺԱ 131, 129, 130), «Քյուրուստյուս օգնական-պահապան նը քըզ» (ԱՈՒ 116), «Գաբրել հրեշտակը հավարիդ հասնե» (ԷԱԺԱ 129), «Սուրբ կիսավոր հրեշտակնըն հասնըն քըզ» (ԱՈՒ 116), «Աշխարհը էաղեոթք (աղոթք) հասնը քըզ» (ԱՈՒ 111), «Կամարկատարն (աստվածածին) ըլի քու քոմագը (օգնական)» (ԹՄԿ 182), «Ինը դաս հրեշտակը քեզ քոմակ ըլնի» (ԷԱԺԱ 130), «Մշու սուլթան սբփ Կարապետ քեզի քոմակ էղի», «Դարալագյազա սուրբ խաչը օգնական-պահապան ըլնի ողջոցդ», (ԷԱԺՁ 330, 335), «Ձիավոր սուրբ Սարգիս քեզ օգնական ու պահապան էղնի» («Արձագանք», 1893, № 23), «Սուրբ խնտիրկացկոց (ընդ երեկոյան) հրեշտակը հասնը քըզ», «Բարի հրեշտակնըն հասնըն քըզ», «Ասբոծ հաս-

նը քիզ» (ԱՈՒ 116, 114), «Փրկիչ տերը հավարիդ հասնի, քեզ օգնե», «Աստըծու խնամքը քեզ հասնի ու աչքը վրեդ ըլնի» (ԷԱԺԱ 133, 128), «Աստված քու հետ էղնի» (ԷԱԺՋ 328)։

գ) **Չարից ու փորձանքից** ազատելու բարեմաղթություններում հոգ է տարվում օրհնվող անձին հեռու պահել ու պահպանել գերբնական չար վտանգներից և իրական փորձանքներից։ Որպես գերբնական գլխավոր պահապան, հանդես է գալիս աստված։

«Աստված քեզի չարից փրգի» (ՋԺԲ 63), «Աստըծ սատանի շերե (զրպարտանք, փորձանք) փրկե ու ազատե», «Ջոր (չար) մորդե (մարդուց) խըլասե (ազատվել)» (ԱՈՒ 112, 116), «Դուն պրծնիս ամեն չարեմեն, ցավեմեն ու կարիքեմեն» (ԹՄԿ 181), «Աստված չար աչքից, չար նիաթից (հայացք) ազատ պահի» (ԱՀ IX 226), «Աստված որդիքդ չար աչքից պահե» (ԷԱԺԱ 128), «Աստուծ չարը խափանե, բարին առաջարկե» (ԹՄԿ 180), «Տերը փրկե ու ազատե ամեն չարից ու փորձանքից» (ԷԱԺԱ 133), «Աստված փորձանքից հեռու պահե» (ԷԱԺԱ 127), «Աստըծ անկրծոկե (հանկարծակի) փուրձանքե ազատե» (ԱՈՒ 112), «Ամեն չառից, ամեն կըատիցպըալից (փորձանք) ազատ մնաս» (ԷԱԺՋ 326), «Աստըծ հուրե ու սուրե խըլասե (ազատել)» (ԱՈՒ 112), «Աստված քեզի քուրդ ու քուից (սարի քրդից) ազատա» (ԷԱԺՋ 330), «Աստված փրգե ու ազատե ամեն ցավեմեն, ամեն չառեմեն», «Աստուծ ազատե կնիկարմատի շառեմեն, մինձի՝ ղազաբեմեն (պատիժ)» (ԹՄԿ 179), «Աստված քեզ դուշման պուչաղիեն (թշնամու ձանակից) պահե» (ԷԱԺՋ 327), «Յավըըմ (տղաս), աստըծ նենգյավյուրե, թյունավյուրե խըլասե», «Աստըծ բարիկոմ տուշմոնէ (թշնամի) խըլասե», «Գյուրծիտ (գործդ) զըիզ ազոտե» (ԱՈՒ 114, 112), «Քյինալիս ոտըդ քարի չը կպչի» (իմ հավաք.), «Անփորձ, անքյատար (անհոգս) մնաս աշխարհում» (ԷԱԺԱ 127) և այլն։

Ահա հայ ժողովրդական օրհնանք-բարեմաղթությունների գրեթե բոլոր իմաստային հիմնատեսակներն ու տիպերը։ Բերած գաղափարների շուրջն են հիմնականում պտտվում մեր օրհնանք-մաղթանքները։

50. Այսպես, ուրեմն, օրհնանք-մաղթանքները ոչ այլ ինչ են, քան եթե՝ բարի հմայության ապահովության և պահպանության բանաձևեր, որոնք նպատակ ունեն խոսքի ուժով ապահովել ու պահպանել օրհնվող անձի և նրա հարազատների իրական ու երևակայական կյանքի գրեթե բոլոր էական կողմերը։

Գաղափարախոսությամբ՝ պահպանության բարեբանությունների 9—12 տիպերը և պահպանության գրեթե բոլոր բարեբանությունները, ունեն կրոնա-միստիկական իմաստ. դրանց մեջ ցանկությունների ու վերջիններիս իրագործողները կապվում են կրոնական զանազան պատկերացումների, հավատալիքների և սրբազան էակների, անձանց ու առարկաների (աստված, Քրիստոս, հրեշտակներ, սրբեր, խաչ, վանք, պատարագ և այլն) հետ և ունեն առավելապես քրիստոնեական բնավորություն: Մինչդեռ ապահովության բարեբանությունների 1—8 տիպերը, թեպետ զերծ չեն քրիստոնեական կրոնի զորեղ շեշտերից, սակայն հիմնականում ունեն իրապաշտական, մասամբ և՝ բնապաշտական բնավորություն: Նշված տիպերի օրհնանք-մաղթանքներում առաջադրված ցանկությունները ունեն իրական բովանդակություն. դրանք, կամ ուղղակի ցանկություններ են («Ապրիս», «Զորանաս», «Քեզ սաղ ջան ըլնի», «Սիրեկաններդ ողջ ըլլան», «Հացդ անպակաս ըլնի», «Շեն կենաս» և այլն), կա՛մ էլ իրական լինելով հանդերձ, ունեն բնապաշտական երանգ և արտահայտվում են առավելաբար բուսական, երկնային լուսատուների և սոցիալական սիմվոլիկայի միջոցով («Էրկեն արև էլնես», «Ապրի արևդ», «Ծլես, ծաղկես», «Կանչնա քու արև», «Զորանաս, ճղքճղքնոտես», «Կանանչ-կարմիրդ կապեմ», «Օջախդ վառի», «Օջախիդ մուխն ու ծուխը անպակաս ըլնի», «Կանաչ ու կարմիր թագավոր դառնաս» և այլն):

Թեպետ գաղափարախոսությամբ հայկական օրհնանք-մաղթանքները բաժանվում են երկու տարբեր խմբերի, այդուամենայնիվ, գերբնականի և միստիկականի հավատալիքն ընկած է այդ տարբեր խմբերի հիմքում. դա խոսքի հմայական զորության հավատալիքն է, որ, եթե մի դեպքում դրսևորվում է բացահայտ կրոնա-միստիկական տեսքով, ապա մյուս դեպքում՝ թեպետ այդ ձևը բացակայում է, բայց առկա է օրհնողի բարի ցանկության իրականացման ձգտումը, որ ինքնին ենթադրում է ցանկության բառինքյան գերբնականորեն կատարվելու հավատք: Հենց այդ էլ բարեբանությունների և, առհասարակ, բոլոր հմայական բանաձևերի հիմքն ու էությունն է կազմում: Գաղափարախոսական տարբերություններից անկախ, օրհնանք-մաղթանքներում բացահայտ և անմիջականորեն, արտահայտություն են գտել ժողովրդի փայփայած դարավոր իղձերի ու երազանքների իրականացման ձգտումը՝ նրա նյութական ու հոգևոր կյանքի ամենատարբեր կողմերի վերաբերյալ:

Այդ խղձերի հիմնական նպատակը կյանքի, առողջության, նյութական միջոցների բարելավման և բարոյական ու հոգեկան բարձր հատկանիշների, հանդերձյալ երջանիկ կյանքի ու հոգու փրկության ապահովությունն է, որ կազմել է առհասարակ մարդկանց, և մասնավորապես կրոնների տիրապետության պայմաններում ապրող մարդու, ամենակենսական բաղձանքը։ Այս տեսակետից օրհնանք-բարեմաղթությունները ժողովրդական բաղձանքների ամենաուղղակի ու ամենաիրական մարմնացումներն են, քան բանահյուսական մյուս ժանրերը (հեքիաթ և այլն), որ այդ ձգտումներն ու ցանկությունները ընդունում են անիրական, ֆանտաստիկական ձևեր։ Բացի այդ, ժողովրդի խղձերն ու ակնկալությունները բարեբանություններում սոսկ պասիվ ցանկություններ չեն, այլ ունեն ակտիվ դեր, այսինքն, հետապնդում են հմայական ներգործության նպատակներ, ուստի և օրհնանք-մաղթանքները ձեռք են բերում նաև գործնական-կիրառական արժեք։

ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱԱ — «Արարս» ամսագիր, գիրք Ա, Մոսկվա, 1889։

ԱԲՐ., ԿԱԼՎԱԾԱԳՐԵՐ — «Կալվածագրեր և տնտեսական այլ գործարքների վերաբերյալ արխիվային վավերագրեր», պրակ I, կազմեց Հար. Աբրահամյան, Երևան, 1941։

ԱՀ IX — «Ազգագրական հանդես», յոթներորդ տարի, գիրք IX, Թիֆլիս, 1902։

ԱՀ X — Նույնը, ութերորդ տարի, գիրք X, Թիֆլիս, 1903։

ԱՀ XI — Նույնը, իններորդ տարի, գիրք XI, Թիֆլիս, 1904։

ԱՀ XIV — Նույնը, տասներորդ տարի, գիրք XIV, № 2, Թիֆլիս, 1906։

ԱՀ XVI — Նույնը, տասներորդ տարի, գիրք XVI, Թիֆլիս, 1907։

ԱՀ XIX — Նույնը, տասներկուերորդ տարի, գիրք XIX, № 1, Թիֆլիս, 1910։

ԱՀ XXVI — Նույնը, քսանվեցերորդ տարի, գիրք XXVI, Թիֆլիս, 1916։

ԱՀՁ — Նույնը, հինգերորդ տարի, Ձ գիրք, Թիֆլիս, 1900։

ԱՈՒ — Հ. Այվազյան, Ուլնիա կամ Զեյթուն, Կ. Պոլիս, 1884։

ԲԲ — «Բյուրակն» շաբաթաթերթ, Կ. Պոլիս, 1899։

ԲԳ — Նույնը, Կ. Պոլիս, 1900։

ԳԱԹ, ՔԱՄ. II—89 — ՀՍՍՀ կուլտուրայի մինիստրության Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան, Ս. Քամալյանի ֆոնդ, II բաժին, գործ № 89։

ԳԱՐ. ԿԱԹ., ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆՔ — Գարեգին Ա. Կաթողիկոս, Յիշատակարանք ձեռագրաց, հատոր Ա. (Ե. դարից մինչև 1250 թ.), Անթիլիաս, 1951։

ԴԻՎԱՆ Է — «Դիվան հայոց պատմության», գիրք Է, հրատ. Գյուտ ք. Աղանյանց, Թիֆլիս, 1908։

ԵԱ — Հ. Գավառացի, Երգեր, առակներ, հանելուկներ, թերահավատություններ... Խոտրջուր, Տփխիս, 1903։

ԷԱԺԱ — «Էմինյան ազգագրական ժողովածու», հ. Ա, Մոսկվա—Ալեքսանդրապոլ, 1901։

ԷԱԺՁ — Նույնը, հ. Ձ., Մոսկվա—Վաղարշապատ, 1906։

ԹՄԿ — Գ. Տեր-Աղեքսանդրյան, Թիֆլիսեցոց մտավոր կյանքը, մասն Ա, Թիֆլիս, 1885։

ԺԱԲ — «Ժողովրդական անգիր բանաստեղծություններ», ժողովեց Տիգրան Վարդանյանց, Թիֆլիս, 1900։

ԻՄ ՀԱՎԱՔ. — Սարգիս Հարությունյան, Հավաքածո հայ ժողովրդական բանահյուսության (անձնական արխիվ)։

ԽԱՁ., ԺԴ ՀԻՇԱՏԱԿ.—«ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», կազմեց Լ. Խաչիկյան, Երևան, 1950։

ԽԱՁ., ԺԵԱ ՀԻՇԱՏԱԿ.— «ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», մասն առաջին (1401—1450 թթ.), կազմեց Լ. Խաչիկյան, Երևան, 1955։

ԽԱՁ., ԺԵԲ ՀԻՇԱՏԱԿ.—«ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», մասն երկրորդ (1451—1480 թթ.). կազմեց Լ. Խաչիկյան, Երևան, 1958։

ՀԱ — Հ. Ճանիկեան, Հնութիւնք Ակնայ, Թիֆլիս, 1895։

ՀԺԱ — «Հայ ժողովրդական ավանդություններ», ժողովածու Տիգրանա Նավասարդյանց, գիրք առաջին, Երևան, 1883։

ՀԺՀ VI — «Հայ ժողովրդական հեքիաթներ», ժողովածու Տ. Նավասարդյանցի, գիրք VI, Թիֆլիս, 1890։

ՀԺՀ VII — Նույնը, գիրք VII, Թիֆլիս, 1891։

ՀԺՀ VIII — Նույնը, գիրք VIII, Թիֆլիս, 1894։

ՀԻՇԱՏ. ԷՎԵՐԵԿ-ՖԵՆԵՍԵԻ—«Հիշատակարան Էվերեկ-Ֆենեսեի», հավաքեց Ալեքս Գրիգորյան, աշխատասիրեց Սեդրակ Կարագյոզյան, Փարիզ, 1963։

ՂԱՖ., ՀՈՎՀԱՆՆԱՎԱՆՔ — Կարո Ղաֆադարյան, Հովհաննավանքը և նրա արձանագրությունները, Երևան, 1948 ։

ՂԱՖ., ՍԱՆԱՀԻՆ — Կարո Ղաֆադարյան, Սանահինի վանքը և նրա արձանագրությունները, Երևան, 1957։

ՂԱՖ., ՀԱՂԲԱՏ — Կարո Ղաֆադարյան, Հաղբատ, Երևան, 1963։

ՄԱՏ., ՁԵՌ. № 3031 — Երևանի Մ. Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռագիր № 3031 (Սանահնի քոթուկ)։

Մ. ԲԱՐԽ., ԱՐՑԱԽ — Մակար եպ. Բարխուդարյանց, Արցախ, Բաքու, 1895։

ՋԺԲ — Ա. Երեմյան, Ջահարմահալի հայ ժողովրդական բանահյուսությունը, Վիեննա, 1923։

ՊԵԺԱ — Պերճ Պռոշյան, Երկերի ժողովածու, Հատ. I, Երևան, 1962։

Ս. ԲԱՐԽ., ԴԻՎԱՆ 2 — «Դիվան հայ վիմագրության», պրակ II, Գորիսի, Սիսիանի և Ղափանի շրջաններ, կազմեց Ս. Գ. Բարխուդարյան, Երևան, 1960։

ՍՄ — «Մանանայ», ժողովեաց և ի լոյս էած Գ. վ. Սրուանձտեանց, Կ. Պոլիս, 1876։

ՎԵՆ. ՍԱՀԱԿ. ՀԱՎԱՔ.— Վեներա (Արուսյակ) Սահակյան, Հայ ժողովրդական բանահյուսության նյութերի անձնական հավաքածո (ձեռագիր)։

ՎՍԲ— «Վանա սազ», մաս Բ, ժողովեց Գևորգ Գ. Շերենց, Թիֆլիս, 1899։

ՔՐ. ԹԱՓ. ՊԱՏԵՐԱԶՄ, III — Քր. Թափալցյան, Պատերազմ, հատոր III, Երևան, 1959։

ՕՐԲԵԼԻ, ԴԻՎԱՆ 1 — «Դիվան հայ վիմագրության», պրակ I. Անի քաղաք, կազմեց Հ. Ա. Օրբելի, Երևան, 1966։

ՕՐԲԵԼՅԱՆ, ՊԱՏՄ., Բ — «Պատմութիւն նահանգին Սիսական», արարեալ Ստեփաննոսի Օրբէլեան արքեպիսկոպոսի Սիւնեաց, հատ. Բ, Փարիզ, 1859։

ARAB I—Ancient records of Assyria and Babylonia. D. D. Luckenbill, vol. I, Chicago, 1926.

ARAB II—Նույնը, Vol. II, Chicago, 1927.

SPIEGEL.—Die altpersischen Keilinschriften, im Grundtexte und Uebersetzung, Grammatik und Glossar, von Fr. Spiegel, Leipzig, 1862.

УКН.—Г. А. Меликишвили, Урартские клинообразные надписи, Москва, 1960.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն 5

ԱՌԱՋԻՆ ԳԼՈՒԽ

ԱՎԱՆԴԱԿԱՆ ԸՄԲՌՆՈՒՄՆԵՐՆ ՈՒ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Անեծքների և օրհնանքների հմայական զորության հավատը . . 10
2. Գրավոր կիրառությունները հնում 25
   Ա. Սեպագիր արձանագրություններ 25
   Բ. Վիմագիր արձանագրություններ 40
   Գ. Անեծքների, օրհնանքների և սեպագիր ու վիմագիր արձանագրությունների կառուցվածքը 43
   Դ. Ձեռագրերի հիշատակարաններ 86
   Ե. Առուծախի գործարքներ 101
   Զ. Օրհնության և բանադրանքի թղթեր 105
3. Անեծք-օրհնանքների կապը հմայություններին և նրանց կիրառական նշանակությունը 114

ԵՐԿՐՈՐԴ ԳԼՈՒԽ

ԱՆԵԾՔՆԵՐԻ ԵՎ ՕՐՀՆԱՆՔՆԵՐԻ ՏԻՊԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

1. Հայկական անեծք-օրհնանքների բնույթն ու ոճաբանական հատկանիշները 123
2. Տիպաբանության սկզբունքները 158
3. Անեծքների կառուցվածքային տիպերը 162
4. Օրհնանք-մաղթանքների կառուցվածքային տիպերը 178
5. Անեծքների և օրհնանքների տիպաբանական համեմատությունը . . 190
6. Պատժի ցանկության տեսակները կամ անեծքների իմաստային տիպերը 199
7. Օրհնական բանաձևերի կիրառական խմբերը 221
8. Օրհնական բանաձևերի իմաստային տիպերը 249
   Ա. Ապահովության օրհնանք-մաղթանքներ 249
   Բ. Պաշտպանության օրհնանք-մաղթանքներ 263

Աղբյուրների համառոտագրություններ 268

ՀԱՅԿ. ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՖՈՒՆԴԱՄԵՆՏԱԼ ԳՐԱԴԱՐԱՆ
ԱԿԱԴԵՄԻԱՅԻ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՍԱՐԳԻՍ ԲԱՐԴՈՒՂԻՄԵՈՍԻ
АРУТЮНЯН САРКИС БАРДУГИМЕОСОВИЧ

ԱՆԵԾՔԻ ԵՎ ՕՐՀՆԱՆՔԻ ԺԱՆՐԸ ՀԱՅ ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Տպագրվում է Հայկական ՍՍՀ ԳԱ
հնագիտության և ազգագրության ինստիտուտի
գիտական խորհրդի որոշմամբ

Պատասխանատու խմբագիր Ա. Մ. ՆԱԶԻՆՅԱՆ
Հրատարակչական խմբագիր Ժ. Մ. ԱԴՈՆՑ
Նկարիչ Լ. Ա. ՍԱԴՈՅԱՆ
Տեխնիկական խմբագիր Ս. Կ. ԶԱՔԱՐՅԱՆ
Սրբագրիչ Ա. Վ. ՀՈՎԱԿԻՄՅԱՆ

ՎՖ 04122 Պատվեր 768 Հրատ. 4117 Տպաքանակ 5000

Հանձնված է արտադրության 5/VIII 1974 թ., ստորագրված է տպագրության 1/IX 1975 թ., տպագրական 17,0 մամուլ +2 ներդիր, հրատ. 14,2 մամուլ։
Թուղթ № 1, 60×90 1/16, գինը 1 ռ. 14 կ.։

Հայկական ՍՍՀ ԳԱ Հրատարակչություն, Երևան 19, Բարեկամության 24։
Издательство АН Арм. ССР, Ереван 19, Барекамутян 24.
Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչության տպարան, Երևան, Բարեկամության 24։

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
220054981